Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 84

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց

ՄԱՍՆ Ա.

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Շարաձէ եւ ընկ. || *Типогр. М. Шарадзе и К°.*

1895

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառւում են Ընկերութեան գրասենեակում եւ Կենտրոնական գրավաճառանոցում։

			Ր.	Կ.
1	Թուտմաց մեղու (սպառ.)	թարգմ. օր. Ն.	—	40
2	Կարմիր լապտեր	Տէր Մարկոսեան	—	30
3	Մանկական երգեր, Գամառ Քաթիպայի		—	15
4	Թովմաս եղբօր տնակը	թարգմ. օր. Ն.	—	45
	Նոյնը կազմած	Տէր-Մարկոսեանի	—	60
5	Մարեխ եւ նրա ջնջելու հնարները, աշխ. Հ. Տ.-Բարսեղեանի		—	10
6	Նեղ եւ խոնաւ բնակարանների մասին, Հ. Առաքելեանի		—	10
7	Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց		—	80
8	Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մօրիս Բլօքի		—	50
9	Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւններ, (սպառ.)		—	50
10	Ռօբինզօնի պատմութիւն, թարգմ. Գիւտ ք. Աղանեանի		—	60
11	Ուխտաւորք, գործ Վիլհէլմ Հաուֆի, աշ. Ռ. Պատկանեանի		—	75
12	Գառնուկ եւ Լուսատտիկ, Շմիդտի, թարգմ. Նուարդի		—	25
13	Սայեաթ-Նովա, ազգային երգիչ		—	5
14	Ծննդեան պատմութիւնը		—	10
15	Ագաթանգեղեայ պատմութիւն		1	—
16	Գիւղական խալիֆայ, Ա. Արարատեան		—	50
17	Վանայ սազ, Գ. Շերենցի		—	75
18	Փնջիկ, գրեց Աղէքս. Արարատեան		—	20
19	Նամուս, վէպ, գրեց Շիրվանզադէ		1	—
20	Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմ. տիեզերական		2	—
21	Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը	Տէր Աղէքս-	1	50
	Նոյնը ընտիր թղթի վերայ	սանդրեանի	2	—
22	Ղեւոնդ պատմագիր		2	—
23	Սրբազան պատմութիւն (սպառ.)	Ս. քահ. Սա-	—	30
24	Նոյնը ուսուցիչների համար	հակեանի	1	75
25	Սոկրատէս, թարգմ. օր. Թ. Ստեփոյեան		—	10
26	Պատմութիւն Հայոց, Պալասանեանի (սպառ)		1	50
27	Ուղեցոյց գործնական շերամապահութեան, Կ. Մել.-Շահն.		—	40
28	Ժամանակագրութիւն Հայոց Յ. Դարդելի		1	25
29	Վարդ Ռէսլին Սալիրի, թարգմ. Ի. Յ.		—	10
30	Նալ եւ Դամայեանթի, Ֆ. Շմիդտի		—	20
31	Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, Կոմս Լ. Տօլստոյի		—	7

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 84

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական
եւ բանասիրական տեղեկութեանց

662

ՄԱՍՆ Ա.

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Շարաձէ եւ ընկ. || Типогр. М. Шарадзе и К°.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Октября 1894 года.

ՄԱՍՆ Ա․

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ:

Ա. Մ. Գարագաշեանի «Քննական պատմութիւն Հայոց» աշխատասիրութեան առաջին մասը (Նախնական ժամանակ) Կոստանդնուպոլսում՝ տպագրուեցաւ 1880-ին եւ մեծ հետաքրքրութեամբ ընդունուեցաւ բանասէրներից: Այնուհետեւ 15 տարի անցաւ, բայց սորա շարունակութիւնը լոյս չտեսաւ, հեղինակից անկախ զանազան պատճառներով:

Հրատարակչական Ընկերութիւնս, կամենալով նպաստել ազգային պատմութեան ուսումնասիրութեան գործին՝ դիմեց յարգելի հեղինակին եւ առաջարկեց իւր ծառայութիւնը՝ լոյս ընծայելու նորա Պատմութեան յաջորդ մասերն եւս: Հեղինակը համաձայնեցաւ Ընկերութեանս առաջարկութեանը, եւ ահա լոյս է տեսնում՝ նորա Քննական Պատմութիւնն ամբողջապէս:

Ինչպէս ընթերցողը կտեսնէ՝ այս պատմութիւնը հասցրած է մինչեւ հինգերորդ դարի վերջը եւ կանգ է առնում այնտեղ, որտեղ եւ Ղազար Փարպեցին: Պատմական այս նիւթը բաժանուած է չորս մասերի.—Ա. մասը պարունակում՝ է Հայոց նախնական ժամանակը (մինչեւ պատմական ժամանակի սկիզբը). Բ. մասը պարունակում՝ է Արշակունիների պատմութիւնը հեթանոսութեան ժամանակ. Գ. մասը՝ Արշակունիների պատմութիւնը քրիստոնէութեան ժամանակ, մինչեւ նոցա բարձումը, եւ Դ. մասը՝ Ե. դարի գրական շարժումը եւ կրօնական պատերազմները:

Հրատարակչական Ընկերութիւնս, ի նկատի ունենալով, որ Կ. Պոլսում՝ տպագրուած Ա. մասը շատերին մատչելի չէ, միեւնոյն ժամանակ ցանկալով, որ իւր հրատարակութիւնն ամբողջական լինի՝ հարկ համարեց այս Ա. մասը երկրորդ անգամ տպագրել, հեղինակի համաձայնութեամբ:

Յարգելով մեծապատիւ հեղինակի ցանկութիւնը՝ Ընկերո թիւնս ոչ մի փոփոխութիւն չարաւ բնագրի մէջ, ո՛չ լեզուի ոչ բովանդակութեան կողմից, թողնելով քննադատութեան՝ որ շել գրուածքի արժանաւորութիւններն ու թերութիւնները:

Ընկերութիւնս իւր կողմից ջանք չխնայեց, որ այս լուրջ ստուար աշխատասիրութեան տպագրութիւնը ըստ կարելւո խնամքով կատարուի եւ զերծ լինի տպագրական թերութիւններից

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նոր Հայոց պատմութիւն մը գրելու ձեռն արկաք, գործ արդարեւ դժուարին եւ խափուկ, երկար աշխատութեան եւ զգուշաւոր քննութեան կարօտ։ Հայոց պատմութիւն ըը գրել Թերեւս դիւրին էր մեզ, եւ ոչ այնչափ աշխատութեան եւ զգուշութեան կա- րօտ՝ եթէ բաւական համարէաք, երկայն կամ համառօտ, քաղել կարգաւ՝ որ ինչ կայ կարծեցեալ աղբիւրս պատմութեան մերոյ, որպէս արարին բազումք մինչեւ ցարդ։ Բայց եղինակ օրինակել է այս մանաւանդ քան պատմութիւն գրել։

Ազգի մը պատմութիւնը գրելու համար ընտրութիւն եւ կարգ պիտոյ են, այսինքն՝ պատմագիրն պարտի բուն աղբիւրներն ընտրել, եւ զդէպս եւ զգործս յիշեալս ի նոսա ի մէջ երել այնպիսի կարգաւ, զի ընթերցողն տեսցէ նախ՝ ի սկզբանէ մինչեւ ցվախճան, պատ- մական երեւոյթներուն պատճառներն եւ կապակցութիւնը. երկրորդ՝ տեսցէ մանաւանդ մէն առիթ, որ գործել տուած է ազգին, ի ներքոյ եւ արտաքոյ, խորհրդիւ եւ կամ ազդ- մամբ իմն, այսինքն դիտմամբ եւ կամ յանդէտս. տեսցէ, երրորդ՝ ամէն արդիւնք որ արկաւ եւ ի բնէ յառաջ պիտի գար եւ եկած է այն գործողութիւններէն իբրեւ ի պատճա- ռաց։ Այսպէս ազգը կը ցուցուի կենդանի բարոյապէս եւ քաղաքականապէս միանգամայն ւ ոչ նիւթապէս միայն, իբրեւ անշարժ դիակ կամ իբրեւ լոկ պատկեր անմասն ի կե- նաց եւ ի շարժմանէ։

Որովհետեւ ազգ կամ ժողովուրդ մը, թէեւ ինքնիշխան, ցորչափ կենդանի եւ գործող է՝ չկարէ լինել այն աստիճան զատուցեալ եւ առանձին, մինչեւ բոլորովին դուրս նալ որեւիցէ արտաքին ազդեցութենէ, այլ միշտ ուրիշ գոնէ զօրաւոր ազգերէ, ինչպէս եւ իւր աշխարհագրական որպիսութենէն աւելի կամ նուազ ազդում ընդունելու յար- ար է՝ հարկ է պատմութիւնը, թէեւ մասնաւոր եւ ազգային՝ յառաջ տանել նկատելով ամանակին ընդհանուր եւ մանաւանդ տիրող պատմութիւնը. չէ պարտ մոռանալ նաեւ րկրին եւ դրացի երկիրներուն աշխարհագրական փոփոխումն, որ զհետ գայ ներքին եւ րտաքին քաղաքական փոփոխմանց։

Բանիւ եւ խորհրդով, ոչ թէ լոկ նիւթապէս պատմութիւն գրողն, այսինքն այն, որ նգօրինակող չէ, այլ ճշմարիտ պատմագիր՝ մեծ եւ կարեւոր եւ շատ անգամ դարերով նայուն վճիռներու ձեռնագիր կը դնէ՝ ամեն անգամ որ դէպք մը կը հաստատէ եւ կամ րծի մը բարոյական յատկութիւնը կ՚որոշէ։ Միթէ պարտի՞ առնել զայս առանց կան- ւ գիտնականապէս համոզուելու, թէ իրաւացի է վճիռը։ Ասա պատմագրի մը առաջին ւ գլխաւոր պարտուց մին պարտի լինել աղբերն, յորմէ առնու՝ վաւերականութիւնը, եւ հեղի- ակին, որում ձայնակից լինի՝ ոգին եւ լոյսն անաչառապէս ճանչնալ։ Քննադատութիւնը պատմագրին մի միայն միջոցն է աւանդութեանց խառնիխուռն կուտակութեան մէջէն ճա- պարհ բանալ դէպ ի ճշմարտութիւնն, որ է՛ կէտ նպատակի պատմագրին։ Որ միանգամ ննադատելու արտօնութիւնը կը զլանայ պատմագրին եւ կամ կը դժգմնի պարտօնութիւնն յն ի կիր արկեալ տեսանելով՝ ցուցանէ թէ կամ ոչ հաւատայ, թէ գոյ սաւթիւն յաշ-

խարհի, եւ կամ, որ աւելի ճիշդն է՝ ոչ խառէ ի մէջ ճշմարտութեան եւ ստութե
Սակայն ուղիղ բանն եւ փոքր շատ տարբեր կը վկայեն։ Ընդհանրապէս պատմութեա
մանաւանդ հին պատմութեանց մէջ յանձնական, յազգային եւ ի կրօնական նախապաշ
մանց եւ կրից ծագեալ կամաւոր կամ ակամայ այլայլութիւններ եւ ի հայրենասիրակա
նա մանաւանդ ի փառասիրական թիւր զգացմանց թելադրեալ խարդախութիւններ սպրդ
կը գտնուին։ Այս եւ սոյին նման ապականեալ տարրներէ պատմութիւնը մաքրելով տա
համար նմա իւր ճշմարիտ գինը՝ պահանջի ի պատմագրէն ունել ոչ միայն գիտնակ
ընտրողութիւն, այլ եւ բաւական քաջութիւն զդէմ ունելոյ յարձակմանց՝ որ կարեն
ազգային անապարծութիւնը փաղաքշող նախապաշարումներէ, եւ չտալոյ տեղի ազգայ
անդէպ զգացումներ վիրաւորելու երկչոտութեան։ Սուտին ճակատագիրն այս է, որ կանո
կամ անագան, թէպէտ ոչ ամենեցուն՝ կիրթ եւ կրթիչ մտաց անշուշտ կը յայտնուի,
ընդհանուր խայտառակութիւնն այնուհետեւ հարկ իմն է։

Վնասակար, միանգամայն ծաղրելի է նաեւ զզուելի պարծենկոտութեամբ պատմ
թիւնը փծուն գովեստներով փայլուն երեւցուցանել ջանալ։ Զի ինչ որ այնպէս նուաստ
ցուցանէ դիւցազնական գործոց անգամ բուն յարգը՝ ինչպէս սին եւ պարծուկ վերադիրն
Իրք պարտին խօսել ի պատմութեան, ոչ թէ ներբողն։ Ազգային անապարծութիւնը շո
քորթողներուն մեծագոյն վնասակարութիւնը սա է, որ կ'ապականեն հասարակաց ու
բանը եւ խուլ գործեն զժողովրդն ձայնի քննադատութեան։

Յառաջելոց աստի կ'իմացուի, թէ մեր այս պատմութեան յիւրաքանչիւր բաժանմ
պիտի գտնուի համառօտ տեղեկութիւն ինչ աշխարհագրական որպիսութեան երկրին, հա
դերծ ժամանակակից, մանաւանդ տիրող պատմութեամբ։ Արդարեւ ամէն ժամանակա
առոյգ պատմութիւն պարտի պատասխանել միշտ ճշդիւ երկուց այսոցիկ—երկրին աշխա
հագրական որպիսութեան, եւ արտաքին տիրող պատմութեան պարագաներուն։ Այս կե
պով, աշխարհացոյց տախտակ մը գծագրելու պէս պատմական գծագրին ցանցը ու
րուագրելով կարեմք դիւրաւ զետեղել զդէպս, ժամանակագրական կարգաւ իւրեանց։

Յետ դնելոյ զայսոսիկ սկզբունս, որոց պիտի ջանամք ըստ մարթելոյ հաւատար
գտանել՝ զանք պատմութեան։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՄՈՒՏՔ

1. Բաժանումն Հայոց պատմութեան։ 2. Աղբիւրք Հայոց պատմութեան նախնական ժամանակի։ 3. Ազգային վէպք։ 4. Յոյն պատմիչք եւ Հրէից մատեանք։ 5. Բեւեռագիրք։

1. Պատշաճ թուեցաւ մեզ Հայոց պատմութիւնը երկու գլխաւոր ժամանակ բաժանել. Ա. նախնական և Բ. պատմական։ Նախնական անուանեմք զմիջոցն, որ է ի սկզբանէ մինչև Տիգրան մեծ (արշակունի), կամ մինչև 90 նախ քան զՔրիստոս։ Պատմական անուանեմք զմիջոցն ի Տիգրանայ և այսր, կամ 90-էն նախ քան զՔր. մինչև մեր ժամանակը։ Զայս վերջին միջոց պատմական կոչելոյ պատճառ ըստ մեր սա է, զի ի մեծէն Տիգրանայ և այսր սկսանի պատմութիւն մեր լինել վաւերական և գրեթէ անընդհատ։

Այս յայտնի է մեր պատմութեան աղբիւրներէն։

2. Հայոց պատմութեան նախնական ժամանակին համար վաւերական աղբիւր չունինք ոչ ընդհանուր և ոչ մասնաւոր։ Այս դարաւոր ժամանակին վերաբերեալ ինչ որ կայ իբրև սոյգ՝ քաղուած է օտար պատմութեանց մէջ ուրեք ուրեք և իբրև ըստ պատահման գտնուած յիշատակութիւններէ և կամ պատմական ակնարկութիւններէ։ Ինչպէս ուրիշ ազգաց շատերուն, նոյնպէս մեր պատմութեան մէջ, որչափ յառաջ կ'երթանք դէպ ի սկիզբն ազգին՝ այնչափ կ'անօսրանան և կ'աղօտանան դէպք։ Անհատներու պէս նաև ազգեր շատ քիչ բան կարեն յիշել իւրեանց տղայութեան ժամանակէն։ Բայց այս արդիւնք է մանաւանդ՝ մարդկային ազգին այն որոցի դարերուն մէջ, պակասութեան և անկատարութեան միջոցաց աւանդելոյ յետնոց զյիշատակս երևելի գործոց և դիպաց։

3. Այս միջոցաց հնագոյնն էին, որպէս յայտ է, բերանացի աւանդեալ վէպք։ Այսպիսի վէպեր կամ երգեր ունէին և Հայք ոչ

սակաւ, և այն՝ բաւական հին ժամանակներ։ Որփէոսք, նա մանաւանդ Եսիոդոսք և Հոմերոսք չեղեն պակաս և առ մեզ։ Կը թուի մանաւանդ, թէ Հայոց վիպասանք ժառանգական տոհմ էին, եթէ ոչ քուրմք իբր զՏրուիդս՝ գոնէ Տրուպատուրներու պէս երգեցիկ խումբեր։ Խորենացին իբրև 13 դար առաջ կը վկայէ, թէ այսպիսի երգիչներ ի հնումն կ'երգէին երևելի արանց վարքը և բարքը։ «Զորմէ (զՏիգրանայ) ասէին ի հինսն մեր որք բամբռամբն երգէին՝ լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր» (Խոր. Ա. ԻԳ.)։ Ոչ ի հինս միայն, այլ և առ նովին իսկ Խորենացւով էին ծանօթ այսպիսի երգեր։ Խորենացին յետ ի մէջ բերելոյ զՆրկնէր երկինն՝ ասէ. «Զայս երգելով ոմանց բամբռամբ՝ լուաք իսկ ականջօք մերովք։ Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգն կռուել նմա (Վահագնի) և յաղթել, և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանցն նմա երգէին» (Խոր. Ա. ԼԱ.)։ Յառաջ քան զԽորենացին Բուզանդ կը վկայէ, թէ կը սիրէին Հայք զերգս վիպասանաց իւրեանց և միշտ ի բերան ունէին զնոսա.—«Զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատացեալք, և ի նոյն հանապազորդեալք» (Բուզ. Գ. ԺԳ.)։ Զիարդ և իցէ՝ այն հին վէպերէն և երգերէն հազիւ թէ հատակտորք կան այժմ։

4. Մեր նախնական ժամանակի պատմութեան աղբիւրք, եթէ արժան իցէ աղբիւր կոչել՝ են առ այժմ ոմանք ի հին յոյն պատմագրաց, և Հրէից մատեանք։ Ինչ որ Հերոդոտոս և Քսենոփոն, և Չորրորդ գիրք Թագաւորաց և մարգարէութիւնք Եսայեայ և Երեմիայ կը յիշեն զՀայոց յառաջ քան զԱղեքսանդր մեծ, և Պողիբիոս, Ստրաբոն և Պլուտարքոս՝ յետ Աղեքսանդրի մինչև Տիգրան մեծ՝ են արդարև մեծաւ մասամբ ստոյգ, բայց այնպէս անօսր, որ չեն արժանի կոչելոյ աղբիւրք պատմութեան Հայոց։

5. Աղբիւր անունը տալ թերևս աւելի յարմար էր բևեռագիրներուն, բայց այս կնճռոտ արձանագրութիւնները կարդալու եղանակները դեռ ոչ այլ ինչ են եթէ ոչ հանճարեղ փորձեր հին աւեղծուած մը լուծելու։ Այս և այսպիսի են աւասիկ մեր պատմութեան աղբիւրք մինչև Տիգրան մեծ, յետ որոյ սկսանին առատանալ աղբիւրք, այնպէս որ օտար և ազգային պատմիչներով գրեթէ անընդհատ կուգայ առ մեզ պատմութիւնը, թէպէտ ոչ միշտ մաքուր և անխառն։

ՄԱՍՆ Ա.

ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

ԾԱԳՈՒՄՆ ՀԱՅ ԱԶԳԻՆ

1. Ի՞նչ պատմական տեղեկութիւն կայ զծագմանէ Հայ ազգին: 2. Կարծիք նախնեաց մերոց յետ ընդունելոյ զքրիստոնէութիւն զծագ'մանէ ազգին: 3. Խորենացին՝ զծագմանէ Հայոց: 4. Անտղութիւն զՀայկայ յառաջ քան զԽորենացին. Հայկ. Օրիոն: 5. ծագումն բառից «Հայկական», «Հայկազեան»: 6. Հայերէն լեզուն՝ աղբիւր զծագմանէ Հայոց: 7. Արղի հնաբանք՝ զծագմանէ Հայոց. Րոլինսոն, Լընորման, Լուի տը Րոպէր: 8. Հին քաղաքակիրթ ցեղ, Քուշեանք և Քամեանք: 9. Քուշեանք, Սեմականք և Հնդեւրոպական ցեղք ի Հայաստան: 10. ծագումն և թուական զաղթականութեան Հնդեւրոպականաց ի Հայս:

1. Հայոց պատմութեան նախնական ժամանակին մէջ առաջին փնտռուելու բանն է Հայոց ազգին ծագումը։ Զծագմանէ Հայոց ստոյգ ինչ ոչ պատմութիւն և ոչ աւանդութիւն ունիմք։ Չէ յայտ, թէ Հայք յառաջ քան զընդունելն զքրիստոնէութիւն ինչ աւանդութիւն ունէին զծագմանէ իւրեանց։

2. Յետ ընդունելոյ զքրիստոնէութիւնն, նախնիք մեր, յառաջ քան զԽորենացին, Ծննդոց գրոց ազգաբանութեան նայելով զՀայս Նոյի որդւոյն Յաբեթի թոռանէն, ի Թորգոմայ սերեալ համարեցան, քանզի հին քրիստոնեայ մեկնիչներէն ոմանք Հրէից գրոց մէջ յիշուած «Թոգարմա» (Թորգոմ) անուամբ իմանային զՀայաստան կամ զմասն մի նորա. ուստի և մեր նախնի մատենագիրներէն ոմանք այս մեկնութեան նայելով՝ երբեմն «Տուն Թորգոմայ», «Թորգոմեան ազգ», կամ «Որդիք Թորգոմայ» կոչէին զՀայս։ «Քանզի յԱրարա-

տեան գաւառին, ի Թագաւորանիստ կայեանսն ըղխեցին Հայոց *տանն Թորգոմայ* շնորհք քարոզութեան աւետարանին պատուիրանացն Աստուծոյ» (Ագաթ. ԺԷ.)։ «Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի *տանն Թորգոմայ*» (Անդ. ՃԺԲ)։ «Ընթերցեալ զ*Թորգոմեան ազգիս*, զՀայաստան աշխարհիս զաստուածապարգեւ աւետեաց աւետարանին քարոզելոյ» (Անդ. Յուջըն)։ «Սգայլն (զՆերսէս) ամենայն ազատք և շինականք, ամենայն բնակիչք *տանն Թորգոմայ*» (Բուզ. Ե. Լ.)։ «Մատեանք, յիշեցուցիչք պատմութեան Հայաստան աշխարհին *որդւոց Թորգոմայ*» (Անդ. Յուջըն)։

3. Խորենացին է առաջին, որ զՀայս համարի սերեալ ի Հայկայ ումեմնէ, զոր չորրորդ դնէ յետ Յաբեթի այսպէս. Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ։

4. Առ նախնի մատենագիրս մեր, յառաջ քան զԽորենացին, Հայկ կը յիշուի միայն իբրեւ հսկայ աղեղնաւոր, Յունաց Օրիոնի նման։ Այսպէս ի հայերէն թարգմանութեան Յոբայ և Եսայեայ՝ Օրիոն համաստեղութիւնն Հայկ թարգմանուած է. «Խելամո՞ւտ իցես կարգի բազմաստեղաց, և քո բացեա՞լ իցէ զպատրուակ Հայկին» (Յոբ ԼԸ. 31)։ «Աստեղք երկնից Հայկիւն հանդերձ և ամենայն զարդուն երկնից լոյս մի՛ տացեն» (Ես. ԺԳ. 10)։ Օրիոն, յն. Ὠρίων, գեղեցիկ կամ ընտրեալ, ըստ առասպելաց Յունաց էր որսորդ քաջ և յանդուգն։ Համարձակեցաւ, ասեն, ի վէգ գալ ընդ Արտեմեայ, կամ, ըստ այլոց, չեդ ունկն Արտեմեայ, որ հարեալ էր ի սէր նորա։ Ընդ այս զայրացեալ դիցուհւոյն՝ ետ խայթել զնա կարճի. յետոյ ստրջացեալ ընդ մահ գեղեցիկ երիտասարդին՝ փոխեաց զնա յերկինս, ուր Օրիոն եղև մին ի պայծառագոյն համաստեղութեանց։ Մեր նախնիք փոխանակ Օրիոնի դրած են զՀայկ, իբրեւ հսկայ որսորդ, բայց պատմութիւնն Օրիոնի նմանութիւն ունի մանաւանդ ընդ պատմութեան Արայի, զորմէ տեսցուք յետոյ։ ԶՀայկ յիշուած գտանեմք նաև ի պատմութեան Ագաթանգեղոսի, ուր զՏրդատայ ասի, թէ ութ մեծամեծ քարեր «հայկաբար» շալկելով բերաւ Մասեաց լեռներէն։ «Սկայազօրն (Տրդատ) *հայկաբար* զութ արձանսն ի վերայ իւրոց թիկանց ստանձնեալ բերէր ի վկայարան տաճարացն» (Ագաթ. ՃՁ.)։

5. ԶՀայկ, իբրեւ Հայոց ազգին նահապետ՝ յառաջ քան զԽորենացին ոչ ուրեք յիշեալ գտանեմք առ նախնիս մեր, և ոչ Հայոց լեզուն կամ ազգը յառաջ քան զԽորենացին երբէք յանուն Հայկայ *հայկական* կամ *հայկազեան* կոչուած է ուրեք. այս բառերն առաջին անգամ գործածողն է Խորենացին։ Ագաթանգեղոս և Բուզանդ

«Հայաստան» կամ «Հայ» բառը կը գործածեն իբրև վերադիր.—«Զիւր վիճակն, զՀայաստան երկիրն, պայծառացուցեալ զամենայն աւուրս կենաց իւրոց լուսաւորէր» (Ագ. ՃԻԵ)։ «Նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւն թագաւորութեանն Հայաստան երկրին» (Բուզ. Գ. Բ.)։ «Վասակ իւրով Հայաստան գնդաւն Հարկանէր զզօրսն Պարսից» (Անդ. Դ. ԼԹ.)։ «Եւ յաղթահարէր զզօրս Պարսից գունդն Հայաստան» (Անդ. Դ. ԽԱ.), «Սգային զՆերսէս ծագէ ի ծագ ամենայն սահմանք երկրին Հայոց, Հայ լեզուն առհասարակ (Անդ. Ե. Լ.)։ Այսպէս անթիւ տեղեր։ Հայկական կամ հայկազեան բառերն ևս գործածէին անշուշտ, եթէ գտնուէր աւանդութիւն յազգին, թէ Հայք ի Հայկայ սերին։

6. Հայոց ծագման վրայ մեր գիտութեան ստուգագոյն և միակ աղբիւրն է առ այժմ հայերէն լեզուն։ Որովհետև հայերէնն հնդեւրոպական կամ արիական կոչուած լեզուաց կարգէն է, որպէս վկայեն մեր լեզուն քննող գիտունք՝ կարեմք հետևցնել, թէ նաև Հայք են մարդկային ազգին հնդեւրոպական կամ արիական կոչուած ցեղէն, որմէ են և բազումք ի հին և ի նոր երևելի ազգաց, զորօրինակ Հնդիկք, Արիք, Յոյնք, Լատինք, գերմանական և սլաւեան ցեղեր, այսինքն այժմու եւրոպական ազգաց գրեթէ բոլորը։

7. Ոմանք յարդի հնաբանից զՀայս համարին ծագմամբ Փռիւգացի։ «Ուրարդւոյ, (այսինքն Արարատայ, քանզի զԱրարատ Ուրարդի կամ Արարդի կոչուած կը գտնեն Ասորեստանի սեպագիր արձանագրութեանց մէջ Օբերդ և այլք, որ, ինչպէս կը կարծուի, կը կարդան այն արձանագրութիւնները), լեզուն, ասէ Ռօլինսոն, չունէր ամենևին խնամութիւն ընդ այժմու Հայերէնին։ Այս լեզուն խօսող ցեղն թուի գաղթեալ ի Փռիւգիոյ, և առ սակաւ սակաւ գրաւեալ զլերինս արևելեան մասին Արմենիոյ, վանելով կամ ընդ իւր միացնելով զհին Ուրարդիս, և փոխանակ նոցա դնելով զանուն, զլեզու, զկրօնս և զաւանդութիւնս իւր» (Գ. Ռօլինս. Թարգմ. Հերոդոտ.)։

Լընորման, ուրիշ հնաբան մը, երկու տարբեր գաղթականութիւններ եկած կը դնէ յԱրմենիա այլևայլ ժամանակ։ Զառաջին գաղթականութիւնն նոյնացնելով ընդ Հայկայ Խորենացւոյն՝ կը համարի Տիգրիսի և Եփրատայ ստորին հովիտը (Բաբելոն) բնակող հին Քուշեաններէն ցեղ մը, ի Հերոդոտոսէ Ալարոտ կոչուած, զոր Ասորեստանցւոց Ուրարդին և Երբայեցւոց Արարատը կը համարի։ Այս քուշեան ցեղէն մնացած կարծէ Լընորման Արմենական կոչուած սեպագիր արձանագրութիւններն որ ի Վան։ Զերկրորդ գաղթականութիւնն կոչէ Լըմորման Արմենական յանուանէ Արմենակայ, զոր Հա-

մարի ոչ իբր պատմական անձն, այլ իբր անուն ազգին՝ անձնաւորեալ։ «Քան զառաջին գաղթականութիւնն նշանաւոր է, ասէ, երկրորդս այս արմենական գաղթականութիւն, զոր ազգային աւանդութիւնն անձնաւորեալ է յԱրմենակ, իբրեւ ազգական Հայկայ» (Լընորմ. Առձեռն Հնախօս. արեւել. Բ. հատ. էջ 364)։

Լուի տը Րոպէր կ'ենթադրէ քան զառաջին գաղթականութիւնն Լընորմանի աւելի հին քուշեան գաղթականութիւններ յԱրմենիա. իսկ զհայկեան գաղթականութիւնն համարի սեմական, որ հալածելով զՔուշեանս անդր քան զԿուր դէպ ի հիւսիս՝ ինքն կալաւ զհարաւային մասն, զհովիտն Երասխայ յարեւմտից Մասեաց, մինչեւ ի լերինս Կորդուաց։ Այս սեմական գաղթականութենէն մնացած կը համարի Տը Րոպէր արմենական կոչուած սեպագիր արձանագրութիւնս Վանայ։ Յետ Հայկեան կամ Սեմական գաղթականութեան, իբր ի միջոցի Զ. դարուն նախ քան զՔր. կը դնէ վերջին հնդեւրոպական արմենական գաղթականութիւն մի ի Փռիւգիոյ, եւ այս վերջին գաղթականութենէն եկած կը համարի զՀայս եւ զհայերէն լեզուն։

8. Այս ենթադրութիւնք արդարեւ գեղեցիկ են, կը ցուցնեն խորին պատմական հմտութիւն, արժանի համբաւոյ այն երեւելի հնաբանից, զորոց զանուանս յիշեցաք, եւ չեն ամենեւին առանց պատմական հիման։ Տարակոյս չկայ, թէ հին նախապատմական ժամանակ յառաջագոյն իսկ քան զվերջին հարստութիւնն Ասորեստանի կամ Նինուէի՝ միջին եւ արեւմտեան Ասիոյ ինչպէս ուրիշ կողմերուն, նոյնպէս Հայոց, մանաւանդ հարաւային (Վանայ) կողման բնակիչք էին մարդկային ազգին այն հին քաղաքականացեալ ցեղէն, զոր գիտունք Քամեան եւ Քուշեան կ'անուանեն։ «Թուի սոյնդ, ասէ Լընորման, թէ ի սկզբան Քամեանք ունէին զմեծագոյն մասն արեւմտեան Ասիոյ յառաջ քան զՍեմականս, որ վանեցին զնոսա անտի». եւ այլուր. «Ամենայն գիտունք միաբան ընդունին այժմ, թէ ժողովուրդք բնակեալք յափունս Տիգրիս գետոյ, ի հարաւային Պարսկաստան, նաեւ ի մասին ինչ Հնդկաստանի՝ էին ի քուշեան ցեղէ, մինչեւ եկեալ էր Սեմականաց եւ Արեաց ունել զտեղի նոցա» (Լընորմ. Առձեռն Հնախօս. արեւել. հատ. Ա. էջ 98)։ «Հին քաղաքակիրթ ազգաց մէջ Քուշեանք եւ Քամեանք այնպիսի որոշ յատկութիւն մը կը ցուցնեն եւ այնչափ դարերով յառաջ են քան զՍեմականս եւ զԱրիականս, որ կ'ստիպուինք ընդունել, թէ սոքա եղեն առաջին քաղաքակիրթ ցեղ յարեւմտեան Ասիա եւ յարեւելս հիւսիսոյ Ափրիկէի յառաջ քան զերեւել Սեմականաց եւ Արիականաց» (Էրն. Րընան, Պատմ. Սեմ. լեզ. էջ 489). եւ սակաւ ինչ ի ստորեւ, յետ ա-

սելով, թէ «առաջին քաղաքակիրթ ցեղ եղեն Քուշեանք և Քամեանք յարևմտեան Ասիա և յԱփրիկէ», ցուցնելով զքաղաքական և զընկերական տարբերութիւն նոցա ի Սեմականաց և յԱրեաց՝ յաւելու. «Այս առաջին քաղաքակիրթ ցեղ տեղի տուաւ Սեմականաց և Արիականաց ճիւղերուն: Ի Չինաստան միայն մնաց այն հին (նախապատմական) քաղաքակրթութեան տիպը և եհաս մինչև առ մեզ»:

9. Քուշեանց ի Հայաստան բնակութեանն ապացոյց՝ Վանայ մօտ Շամիրամայ գործ համարուած քարափոր շէնքն է, ինչպէս նաև արմենական կոչուած սեպագիր արձանագրութիւնք այն կողմանց: (Տես Վան քաղքին նկարագիրն ի ստորև): Հաւանական է, թէ նաև Սեմականք բնակած են ի Հայս յետ Քուշեանց, նախապատմական ժամանակ: Բայց նաև Հնդեւրոպական ցեղք՝ հին, նախապատմական ժամանակ եկած էին Հայաստան, յառաջ իսկ քան զվերջին հարստութիւնն Ասորեստանի:

10. Այլ թէ այս Հնդեւրոպական ցեղք փռիւգացի գաղթականութիւն էին, որ եկան ի Հայս ի Զ. դարուն նախ քան զՔր., և թէ Արմէնք, այսինքն Հայք, այս փռիւգացի գաղթականութեան սերունդ են՝ այս կարծիքն, ըստ մեզ, պատմական հիմ չունի: Ոչ առ Հերոդոտոսի և Քսենոփոնի, որ ժամանակաւ շատ հեռի չէին այս գաղթականութեան ենթադրեալ ժամանակէն, այն է Զ. դարէն նախ քան զՔր., և ոչ այլուր կը գտնենք այսպիսի գաղթականութեան յիշատակութիւն: Հրէից մատեանք Բաբելոնի առման ժամանակ առ Կիաքսարաւ որդւով Աժդահակայ և առ Կիւրոսիւ, այն է 538-ին նախ քան զՔր.՝ յիշեն Արարատեան թագաւորութիւն մը.—«Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գընդին» (Եր. ԾԱ. 27), ընդ որում, ըստ Քսենոփոնի, վաղուց դաշնակից էին Մարք: Վարդան, Տիգրան, Շաւարշ յատուկ անուանք, որ արիական բառեր են և ոչ քուշեան կամ քամեան կամ սեմական՝ Զ. դարուն և աւելի առաջ իբրև անուանք արքայից և արքայորդւոց Արարատայ թագաւորութեան՝ կը յիշուին հին յոյն պատմիչներէ (Դիոդ. Սիկ. Բ, Գլ. Ա: Քսեն. Խր. Կիւր. Գ. Գիրք, Գլ. Ա.):

Արդարև հայերէն լեզուն հնդեւրոպական լեզուաց արևմտեան ճիւղին կը վերաբերի մանաւանդ քան արևելեան արիականին, թէպէտ ի վերջնոյ ատի առած է յետոյ դրացութեամբ զմեծ մասն հարստութեան իւրոյ: Մեր հնագոյն բառերը և քերականական ձևք շատ մօտ ազգականութիւն կը ցուցնեն յունարէնի, լատիներէնի և գերմանական ճիւղին հետ. բայց այս բաւական չէ հաստատելու Ռոլինսոնի և Տը Րոպէրի ենթադրութիւնը, և այս երևելի հնաբանք

ոչ այնչափ լեզուաբանական պատճառներէ, որչափ հին յոյն պատմչաց ոմանց խօսքէն առաջնորդուած կը թուին փռիւգացի ծագումն տալ Հայոց։ Հերոդոտոս զՓռիւգացիս և զԱրմէնս համարի եղբարս, այսինքն համացեղս (Հերոդոտ. Ա. 171). և Դիոնեսիոս աղիկառնացի կոչէ զԱրմէնս համալեզուս, ὁμόγλωσσοι, ընդ Փռիւգացւոց, և ի յիշելն զպատերազմն Քսերքսի ընդդէմ Յունաց՝ ըստ օրինակին Փռիւգացւոց վառեալս և զգեցեալս պատմէ զԱրմէնս ի բանակին Արեաց։ Նաեւ Եւդոքսիոս, ուրիշ յոյն հեղինակ, հաւանականապէս առ Պտղոմեամբք, նմանաձայն յոյժ ասէ լինել զհայերէնն փռիւգերէնի, τῆ φωνῆ πολλὰ φρυγίζουσιν (Եւդոք. առ Ստեփ. Բիւզ. Ե. Արմենիա)։ Գիտել պարտ է սակայն, զի հին պատմիչք փռիւգացի անուամբ իմանային Փոքուն Ասիոյ հնդեւրոպական կամ արիական ցեղերը (Լանկլ. Յիշ. Ճեմ. արձանագր. և գեղար. Հտ. ԺԹ. էջ 339). և շատ հաւանական է, թէ Արմենիոյ արեւմտեան մասին ժողովուրդք, իբրեւ սահմանակիցք Փոքուն Ասիոյ՝ համացեղ և համալեզու էին այն երկրին հնդեւրոպական ցեղին։ Յոյն պատմիչք, հնագոյնք անգամ ի նոցանէ, ինչպէս Հերոդոտոս և Քսենոփոն, որ յետոյ են քան զԴարեհ Վշտասպեայ,—առ որով ոչ միայն Արմենիոյ արեւելեան մասն, Մեծ Հայք, այլև արեւմտեանն, այն է Փոքր Հայք, սահմանակից Փոքուն Ասիոյ, կոչեցան Արմնիք կամ Արմենիա՝—ընդհանուր անուամբ կը կոչեն Արմէն Մեծին և Փոքուն Արմենիոյ բոլոր ժողովուրդները։ Ուստի յոյն պատմչաց խօսքը, թէ Արմէնք համացեղ և համալեզու էին Փռիւգացւոց՝ պէտք չէ բոլոր Արմենիոյ ժողովրդոց վրայ առնուլ և հետեւցնել, թէ Հայք փռիւգացի գաղթականներ էին, և թէ հայերէն լեզուն, որ Մեծ Հայոց և բուն Արարատեան ցեղին լեզուն էր՝ փռիւգական է։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ։

1. Հայաստան լեռնային երկիր է: 2. Բարձրութիւնն ի ծովէ: 3. Տաւրոսի երկճիւղ զօտին: 4. Մասունք նորա: 5. Գետք. Եփրատ, Տիգրիս, Երասխ: 6. Քաղաքական հանգամանք նախնական ժամանակի Հայոց: 7. Երբայեցւոց Արարատը մեր Այրարատն է: 8. Այլեւայլ թագաւորութիւնք ի Հայս: 9. Հայաստան միացեալ, Արմնիք. բաժանումն ի մեծ եւ ի փոքր Հայս: 10. Արարատեան թագաւորութիւն: 11. Ազգք սահմանակիցք Արարատայ: 12. Քաղաքք ի Հայս ի նախնական ժամանակի. Երիզա, Աշտիշատ, Արմաւիր: 13. Քաղաքք ի Հայս ըստ բեւեռագրաց: 14. Վանայ քարաբլուրը. բեւեռագիրք Վանայ: 15. Վան քաղաք: 16. Շինութիւն նորա՝ ըստ Խորենացւոյն: 17. Վանայ բերդն՝ ըստ Խորենացւոյն: 18. Խորենացւոյն աւանդութեան պատմական յարգը: 19. Նկարագիր Վանայ բերդին ըստ Շուլցայ: 20. Թէ ընդէ՞ր Շամիրամայ ընծայի շինութիւն բերդին Վանայ: 21. Վանայ բերդին, ինչպէս նաեւ բեւեռագրաց հնութիւնն:

1. Զհայաստան կամ զԱրմենիա կրնանք կոչել անհուն բարձրաւանդակ կամ լեռնադաշտ, սակաւ ինչ հակեալ յարեւելս կոյս։

2. Կեդրոնական մասն նորա, որ է նահանգն Արարատեան՝ ըստ Րիդդէրայ իբր 2,740 ոտք ի վեր է ծովուն երեսէն։ Անոր դէպ ի հիւսիս երթալով, ասէ նոյն աշխարհագիր, ի մէջ Կուր գետոյ եւ Կովկասեան գօտւոյն կը գտնենք լերանց շղթայ մը, որ Կովկասեան գօտւոյն հետ գրեթէ հաւասար ուղղութեամբ՝ կ՚ընթանայ յարեւելից յարեւմուտս, եւ է Սարին Կովկասն Հայոց, կամ «Լեառն մթին» ըստ Խորենացւոյն (Խորենացի Բ. Ը.)։ Այս լեռներէն ասդին անդին անհնար էր՝ բայց եթէ մեր պատմութեան մէջ «Կապան» կամ «Դուռն» կոչուած նեղ կիրճերէ, որպիսի էին Կապանն Ճորայ՝ Վրաց ձեռքը, եւ Դուռն Ալանաց կամ Կասպից՝ Ազուանից ձեռքը — հաւանականապէս երկու Դուրանո—արխական ցեղեր, որ ի վաղուց հետէ կը բնակէին ի հովտին որ ի մէջ յիշեալ լերանց եւ Կուր գետոյ, եւ որ 1,100 ոտք միայն բարձր է ծովուն երեսէն։ Այսպէս հովիտն Երասխայ իբր 1,640 ոտք աւելի բարձր է քան զհովիտն Կուր գե-

տոյ, որ է հիւսիսային սահման նորա: Գրեթէ նոյն բարձրութիւնը կը պահէ Հայաստան մինչեւ ի հարաւային սահման իւր Մասիոս, կամ ըստ Հայոց Կորդուաց գօտին: Դէպ արեւելք միայն, որպէս ասացաք, կը հակի տակաւ մինչեւ իւր արեւելեան սահմանն Ատրպատական. իսկ դէպ յարեւմուտս, ընդհակառակն, մեղմով կը բարձրանայ մինչեւ իւր արեւմտեան սահմանն ի Փոքրն Հայս, կամ Տաւրոսի այն ճիւղը, որ կ'երթայ ի հարաւոյ ի հիւսիս, Մոսքեկան անուամբ ծանօթ առ հինս:

3. Տաւրոսի այս ճիւղէն, ըստ Րիդդէրայ, երկճիւղ շղթայ մը գալով առնէ զԱրմենիոյ անհուն լեռնադաշտն, իբրեւ արդարեւ Ալպեան երկիր մը, այնպէս որ աշխարհի հնագոյն աւանդութեանց մին, Եբրայեցւոց գիրքը, ոչ այլազգ ճանաչէ զԱրմենիա, կամ նոյն իսկ Գրքին բառով զԱրարատ՝ եթէ ոչ կատարեալ լեռնային երկիր. հոն կ'իջեցնէ Նոյայ տապանը, հոն ապաստանել կու տայ Սենեքերիմայ հայրասպան որդւոց: «Նւ նստաւ տապանն ի լերինս Արարատայ» (Ծննդ. Ը. 4.): «Ադրամելէք եւ Սարասար որդիք նորա (Սենեքերիմայ) հարին զնա սրով, եւ ինքեանք զերծան յերկիրն Արարատայ» (Դ. Թագ. ԺԹ. 27):

4. Յիշեալ երկճիւղ լերանց մասերն են—Նպատ, սաստկասառոյցն, rigidum Niphaten, ըստ Ովրատեայ (Ովր. գիրք Բ. երգ Թ.), լեառնն Ծաղկէոյ, բազմերէ (Խոր. Գ. ԻԳ.), եւ մանաւանդ Մասիք, Ազատն ըստ վիպասանաց (Խոր. Բ. ԿԱ.) եւ Արագած, ալխակափառն ըստ Խորենացւոյն (Խոր. Ա. ԺԲ.): Սոքա՝ ի հիւսիսային մասին. իսկ ի հարաւային մասին՝ լերինք Սասնոյ կամ Հայոց Տաւրոսն ըստ Բուզանդայ, Ընձաքիարս եւ այլք, որք կը կազմեն Արմենիոյ անհուն լեռնադաշտին վրայ անթիւ զուարճալի հովիտներ, ջրարբի ձորեր, պտղաբեր դաշտեր եւ ոչ սակաւ մեծ եւ փոքր ծովակներ, որոց երեւելիքն են ծովն Գեղամայ եւ մանաւանդ Բզնունեացն, որ եւ ծով Վանայ, լի պատմական յիշատակօք:

5. Արմենիոյ անհուն լեռնադաշտն ունենալով այսչափ լեռներ՝ է նաեւ փազուն ջրերու անսպառ աւազան: Գրեթէ չկայ հոն նահանգ եւ գաւառ որ չունի իւր գետերն ու գետակները, որք մերթ առանձին եւ մերթ միացեալ թափին ի ծոց միոյն յերից մայր գետոց, որ են Եփրատ, Տիգրիս եւ Երասխ: Եփրատ եւ Տիգրիս բղխելով ի մի եւ ի նոյն աւազանէ, յորմէ Երասխ, այն է Կարնոյ ջրաւէտ գաւառէն՝ շուտով կը թողուն զիւրեանց ծննդեան երկիր, գծելու համար Արմենիոյ, մին՝ արեւմտեան եւ միւսն՝ հարաւային սահմանը, բաց յարեւելեան բազկէն Եփրատայ, այն է յԱրածանւոյ, որ կը թափի յԵփրատ, առանց ելլելու Հայաստանի հողէն, ոռոգելով հարա-

ւայլն նահանգաց մեծ մասը։ Բայց բուն ազգային գետ է Երասխ, անմահացեալն յերգս Վիրգիլեայ իբրև խորտակիչ կամրջաց, pontem indignatus (Վիրգ. Են.), որով կ'իմանայ բանաստեղծն զՀայաստան, որ արդարև խորտակած էր Հռոմէական լուծն առ Անտոնեաւ։

Երասխ, որպէս ասացաք, բղխելով ի Բարձր Հայոց՝ կ'ընթանայ դէպ արևելք, ստէպ ման առնելով, որպէս թէ չուզեր թողուլ իւր ծննդեան երկիրը, մինչև կը խառնի ի Կուր, յետ ընդունելոյ ի ծոց իւր յաջմէ և յահեկէ անթիւ գետակներ, թողլով զկնի իւր մայրաքաղաքաց շար մը, յորոց ոմանց աւերակները միայն հազիւ կը նշմարենք այսօր, իսկ անունները պիտի յիշեմք մեր պատմութեան երկրորդ, այն է պատմական ժամանակին մէջ։ ԶԵրասխ երգեց առ մեօք սրտառուչ իւր գողտր արարատեան գաւառալեզուով Հայ բանաստեղծ մը ի Մայր Արաքսին, որ այնպէս ախորժելով կ'երգուի Հայ ընկերութեանց մէջ։ Արմենիոյ բնական աշխարհագրութեան վրայ այսչափ բաւական համարելով՝ գանք քաղաքականին։

6. Չէ պարտ կարծել, թէ Արմենիա կոչուած երկիրն, մեր պատմութեան նախնական ժամանակին մէջ, այն է առ Ասորեստանեօք և առ մարապարսկական իշխանութեամբ, էր մի միայն թագաւորութիւն, որպէս եղև յետոյ առ Արշակունեօք։ Հրէից գիրքերէն (Երեմ. ԾԱ. 27) գիտենք Արարատեան թագաւորութիւն մը, զորմէ առանց երկբայելոյ կարեմք ասել, թէ մեր Արարատեան նահանգն էր առ Երասխայ, նոյնչափ կամ աւելի ընդարձակ, որ և կարծի լինել Հերոդոտոսի Ալարոտն (Արարատ), և ըստ ոմանց արդի եւրոպացի գիտնոց՝ Ասորեստանի սեպագիր արձանագրութեանց մէջ կարդացուած Ուրարդին կամ Արարդին։

7. Թէ Եբրայեցւոց Արարատը մեր Այրարատն է, ընդարձակ նշանակութեամբ փոխանակ բոլոր Հայաստանի՝ բաց յԵրեմիայի վերոյիշեալ համարէն կը հաստատուի նաև Ծննդոց Ը. 4 համարէն, ուր ասի զտապանէն, թէ «Նստաւ ի լերինս Արարատայ»։ Նոյնպէս ունի նաև Սամարացին, որ ոչինչ ընդհատ հին է քան զԵբրայեցին. մինչ Ասորերէնը և Վուլկաթայն, թէպէտ հին, բայց յետոյ քան զԴարեհ՝ փոխանակ հին անուան Արարատայ ունին Արմենիա։ Ոնքեղոս և Արաբացին ասեն «Ի լերինս Կորդուաց», յանուն բնակչաց լերանց Հայաստանի, քանզի Կորդուք կամ Խաղտիք ըստ Հայոց, և Քաղդէացիք ըստ Յունաց (Քսեն. Խրտ. Կիւր. Գ. դպր.), էին ցեղ ինչ արիական (Բիւրոք), և որպէս տեսանի ի լեզուէ նոցա՝ ազգակից Մարաց։ Նաև ի Հարց եկեղեցւոյ բազումք Արարատաւ կ'իմանան Հայոց Մասեաց կամ Կորդուաց լեռները։ Եւսեբիոս Կեսարացի Գ. դարու եկեղեցական պատմիչը, կը յիշէ նաև քաղդէական աւան-

դուլթիւն մը ի Բերոսոսէ, որ խօսելով զջրհեղեղէն՝ Հայաստան կը համարի տեղին ուր իջաւ տապանն։ Այն նաւէն, ասէ Բերոսոս, մաս մը դեռ կայ Հայաստանի Կորդուաց լեռները, և ոմանք նաւին վրայ ծեփուած նաւթէն քերելով կը բերեն իբրև դեղ բժշկութեան ցաւոց։ «Եւ ի նաւէն որ չոգաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ սակաւ ինչ մասն ի Կորդուացւոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ նշխար ասեն, և ոմանց քերել բերել ի ծեփածոյ նաւին նաւթոյ ի բժշկութիւն և ի ջնջոց ցաւոց ինչ բժժանաց» (Եւս. Քր.)։ Նոյն Եւսեբիոս սմին նման հատուած մը կը բերէ Աբիւդենոսէ, որ Քսիսուժթրեայ (Նոյի) տապանին համար ասէ, թէ նստաւ Հայաստան, և թէ փայտը դեղ է բնակչաց երկրին.—«Եւ նաւն երթեալ յաշխարհին Հայոց դադարէր, և ի փայտից դեղ օգնականութեան բնակչաց աշխարհին պարգևէր» (Անդ)։ Թերևս այս պատմութենէն յորդորուելով Յակոբ Մծբնայ հայրապետ, ինչպէս կը պատմէ մեր միամիտ պատմիչը Բուզանդ՝ փափաքեցաւ անձամբ տեսնել տապանը, և հրաշիւք ընկալաւ անտի մասն ինչ ի ձեռն հրեշտակի։ Այն նախնի դարուն պարզամիտ հաւատքը ցուցնելու համար մանաւանդ, քան իբրև պատմութիւն, կը դնենք հոս Բուզանդայ այն յօդուածը։ «Զայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ հայրապետն Մծբնացւոց Յակոբ ի լերինս Հայոց, ի լեառնն Սարարադայ, ի սահմանս Արարատեան տէրութեանն, ի գաւառն Կորդուաց, տեսանել զփըր-կական տապանն Նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանգեաւ նա ի ջրհեղեղէն։ Մինչդեռ ելանէր (Յակոբ) ընդ դժուարին ափափայսն սարարատեան լերինն, խոնջեալ մօտ ի կատարն՝ ննջեաց։ Եւ եկն հրեշտակ Աստուծոյ և ասէ ցնա. Յակոբ, Յակոբ, ահա կատարեաց Տէր զխնդրուածս քո. այդ որ կայ ընդ սնարս քո՝ է ի փայտից տապանակին։ Եւ մեծաւ խնդութեամբ յոտն կացեալ Յակոբայ՝ տեսանէր զտախտակն, իբրև զի կացնաւ հատեալ հանեալ ի մեծ ինչ փայտէ, և դառնայր անտի Յակոբ, առեալ զփայտն ապրեցուցիչ, զնշանակ նոյեան տապանին, որ մինչև ցայսօր կայ պահեալ» (Բուզ. Գ. Ժ.)։ Ոչ այս պատմութիւնը և ոչ վկայութիւն Բերոսոսայ և Աբիւդենայ կրնան իբրև վաւերական ընդունիլ, կը ցուցնեն սակայն, թէ Ծննդոց Արարատն քրիստոնէութեան նախկին դարուց մէջ գրեթէ առհասարակ կ'առնուէր փոխանակ Արմենիոյ. և մեր նպատակն է ցուցանել զայս, ոչ թէ տապանին Հայաստանի լերանց վրայ հանգչելը։

Ց. Երեմիայի վերոյիշեալ համարն՝ Արարատեան թագաւորութեան հետ կը յիշէ, ըստ Եբրայական բնագրին, նաև Միննւոյ և Աքանազայ թագաւորութիւններ իբրև սահմանակիցս Արարատայ,

և հաւանականապէս բուն իսկ Հայաստանի մէջ.—«Կոչեցէք ի վերայ նորա (Բաբելոնի) զթագաւորութիւնս Արարատայ, Մինիոյ և Ասքանազայ» (Եր. ԾԱ. 27, ըստ Եբր. բն.)։ Եթէ պարտ է հաւատալ Ասորեստանի բեւեռագիրները կարդացողներուն՝ այս արձանագրութեանց մէջ կը յիշուին, իբրև սահմանակից և դրացի Ուրարդուոյ՝ նաև Վան, Մուսասիր և Նայիրի, իբրև ուրոյն թագաւորութիւնք։ Բայց թողունք բեւեռագիրներուն վկայութիւնը. ուրիշ երկիրներէ, զորս ի սկզբան մանր մանր իշխանութեանց կամ անկախ ցեղերու բաժնեալ և տակաւ միացեալ կը գտնենք, հետեւցնելով, և մանաւանդ Հրէից գրոց, գլխաւորապէս Երեմիայի յիշեալ գլխէն, որոյ հեղինակն չէ յետոյ քան զԶ. դար նախ քան զՔ.՝ կրնանք ստուգութեամբ ասել, թէ, գէթ այն դարուն մէջ՝ Արմենիա կոչուած երկիրն, նոյն իսկ Մեծ Արմենիա, կը բաժնուէր այլ և այլ թագաւորութեանց։ Թագաւոր բառն ի հնումն միշտ չէր նշանակեր իշխան մեծազօր և տէր մեծամեծ երկիրներու։ Թագաւոր անունը կը տրուէր շատ անգամ՝ առանձին քաղաքներու կամ սակաւ գիւղից և աւանաց միայն տիրող քաղաքներու իշխանաց, զորս պարտ էր մանաւանդ առաջնորդս կամ գլխաւորս կոչել։ Քանանու պէս փոքր երկրի մը մէջ կային երեսուն և մի թագաւորք, զորս նուաճեց Յեսու (Յես. ԺԲ. 9—24), թող զայլ բազումս որ անտարակոյս զերծան ի զինուց Յեսուայ։ Նոյն իսկ Ադոնիբեզեկ որ հզօր թագաւոր չէր՝ կը յիշէ եօթանասուն թագաւոր որոց յաղթած էր, և զորոյ ձեռաց և ոտից բոյթ մատերը կտրած էր (Դատ. Ա. 4—7)։

9. Արմենիոյ թագաւորութիւնք յետ մնալոյ դարերով բոլորովին կամ ըստ մասին ազատ առ Ասորեստանեօք և Մարօք՝ իսպառ կորուսին ինքնօրէնութիւնն առ Դարեհիւ Վշտասպեայ, և երկիրը միացաւ, իբրև նահանգ Պարսից; Արմնիք, կամ ըստ Յունաց Արմենիա անուամբ։ Յետ Աղեքսանդրի, Սելեւկեանք երկու բաժնելով զԱրմնին Պարսից՝ կոչեցին Մեծ և Փոքր Արմենիա (Հերոդ.։ Արձանագր. Պլինդունի։ Կլյմէն, Հնախօս. արեւել.)։

10. Բայց Արմենիոյ այլ եւ այլ թագաւորութեանց մէջ ծանօթագոյնն առ մեզ է Արարատեան թագաւորութիւնն։ Ըստ մեզ այս Արարատեան թագաւորութեան ժողովուրդն է ազգային անուամբ Հայ կոչուած ցեղը, որոյ լեզուն յետ ժամանակաց, ի մէջ այլ գաւառական բարբառոց հնդեւրոպական լեզուաց արմենական ճիւղին՝ ընտրեցաւ լինել հասարակաց կամ արքունի լեզու առ Արշակունեօք, որք ի սկզբան տիրելով Արարատեան նահանգին՝ առ սակաւ սակաւ ընդարձակեցին զիշխանութիւն իւրեանց ի վերայ բովանդակ Մեծին Հայոց։ Դիտողութեան արժանի է, զի Բուզանդ ի Դ. դարուն

Արարատեան տէրութիւն կ'անուանէ Հայոց թագաւորութիւնը. «Գնաց մեծ հայրապետն Մծբնացւոց Յակոբ ի լերինս Հայոց, ի սահմանս Արարատեան տէրութեանն, ի գաւառն Կորդուաց» (Բուզ. Գ. Ժ.)։

11. Արարատայ սահմանակից ազգերն էին — ի հիւսիսոյ, անդր քան զԿուր մինչեւ Կովկաս՝ Դուրանեան կամ Արիօ—դուրանեան ցեղեր, զորօրինակ Վիրք, Աղուանք եւ ուրիշ Կովկասեան ազգեր, Հրէից Գոգ եւ Մագոգը. յարեւելից՝ Զանդիկ ցեղեր, Արիք, այսինքն Մարք եւ Պարսք. ի հարաւոյ արեւելից՝ Արիօ—քուշեանք, Ասորեստան. ի հարաւոյ՝ Արամ, այսինքն Սեմականք՝ Միջագետք եւ Ասորիք, եւ յարեւմտից՝ այլ եւ այլ թագաւորութիւնք հնդեւրոպական ցեղից, ըստ Հրէից՝ տուն Թորգոմայ։ Հնդեւրոպական ինքնագլուխ ցեղեր էին մանաւանդ Խաղտիք կամ Կորդուք՝ ըստ Հայոց, ըստ Յունաց՝ Քաղդէացիք, մեծաւ մասամբ յելուզակաբարոյ եւ լեռնաբնակ։ Ի սոցանէ թուին լինել Նինուէի եւ Բաբելոնի վերջին հարստութեան թագաւորք (տես ի ստորեւ)։ Սոցա սերունդէն են նաեւ այժմու Քիւրտք։

12. Թէ ինչ քաղաքներ կային նախնական ժամանակին մէջ ի Հայս՝ չիք ուրեք յիշեալ ի հին պատմագիրս։ Հերոդոտոս եւ Քսենոփոն եւ այլք ի յոյն պատմագրաց, որ այլ եւ այլ առթիւ կը խօսին զնախնական ժամանակէ Հայոց՝ կը յիշեն հայեցի անուանս ինչ հայ արքայից եւ արքայորդւոց, ինչպէս Վարդան, Տիգրան, Շաւարշ, բայց քաղաք ամենեւին չեն յիշեր։ Զոմանց ի հին քաղաքաց կամ գիւղից, ինչպէս զԵրիզայ, զԱրմաւրէ եւ զԱշտիշատայ՝ կան պատճառներ ենթադրելոյ, թէ էին նախնական ժամանակի քաղաքներ, քանզի այս վայրք իբրեւ ազգային պաշտօնատեղիք կային յառաջ քան զՏիգրան մեծ։ Այս տեղերը նախնական ժամանակին մէջ եղած համարելու գլխաւոր պատճառ սա է, որ Վահագն, Անահիտ եւ Աստղիկ, իբրեւ հին դիք Հայոց, կը պաշտուէին այն տեղերը, եւ տեղիքն, մանաւանդ Աշտիշատ՝ էին ընդ իշխանութեամբ Վահունեաց, որ էին ընիկ քրմական ցեղ ի Հայս յանծանօթ ժամանակաց հետէ։ Սակայն եւ այնպէս այս անուններն — Արմաւիր, Աշտիշատ եւ այլք՝ առ մեծաւ Տիգրանաւ կ'սկսին յիշուիլ պատմութեան մէջ, եւ յայտնի պատմական յիշատակութիւն չունինք թէ ստուգիւ կային ի նախնական ժամանակին։ Արդարեւ Խորենացին Արմաւրի համար, Մարիբասեան աղբիւրէ մը առնելով ասէ, թէ էր մայրաքաղաք հին ինչ հարստութեան զոր Հայկազեան կ'անուանէ, եւ ստուգաբանէ եւ իբրեւ ծագեալ յանուանէ Արմայիսայ ուրումն, թոռին Հայկայ. — «Իսկ որդի նորա (Արմենակայ, որդւոյ Հայկայ) Արմայիս շինէ իւր

տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր» (Խոր. Ա. ԺԲ.)։ Բայց ինչպէս յետոյ պիտի տեսնենք՝ ոչ Մարիբասայ վկայութիւնը և ոչ ստուգաբանութիւնք Խորենացւոյն կարեն պատմական ստուգութիւն տալ մեզ՝ զԱրմաւիր նախնական ժամանակի մայրաքաղաք համարելոյ։ Սա միայն ստոյգ է, որ Արմաւիր, ինչպէս նաև Աշտիշատ, Երէզն, Անի (բերդաքաղաք), թէև թուականը և շինիչն անյայտ՝ Հայոց հին քաղաքներ և աւաններ էին, և ոչ Արտաշատայ, Վաղարշապատու, Դրընոյ և այլոց պէս, որոց ոչ միայն ժամանակն, այլ և շինողն ծանօթ է։

13. Ի բևեռագիրս Ասորեստանի թագաւորաց, ինչպէս կը վկայեն արդի հնագէտներէն Օբերդ և այլք՝ Ուրարդիի (Արարատոյ) և Վանայ թագաւորութեանց համար ասի, թէ ունէին շատ քաղաքներ, յորոց ոմանք պարսպաւոր էին։ Վանայ թագաւորութեան քաղաքներէն ոմանք յանուանէ յիշուած են ի միում յարձանագրութեանց Սարեւուքինի։ «Իլլուսուն վանեցին, ասէ Սարեւուքին, իմ արշաւանացս մօտենալը լսելով՝ եղ արտաքս զօրօք իւրովք, և բարձըր լերանց հովիտներուն մէջ ամուր տեղեր կեցաւ։ Աոի և ի մախիր դարձուցի զքաղաք թագաւորութեան նորա զԻզիրդի, և զքաղաքսն զԻզիպխա և զԱրմիդ, ահագին ամրոցներ... Յարքունի տանէ նորա կալայ 250 հոգի, գրաւեցի 55 պարսպաւոր քաղաք, յորոց ութն հասարակ քաղաք էին, և մեասանն՝ անմատոյց բերդեր։ Իլլուսունի 22 քաղաքներն, զորս Ուրսա (Ուրարդիի թագաւորն) առած էր՝ Ասորեստանի հետ միացուցի»։ Այս արձանագրութենէն, եթէ շիտակ է ընթերցուածը՝ սաչափ միայն կը սորվինք, որ այն հին ժամանակին մէջ կային երևելի ամուր քաղաքներ ի Հայս։ Իզիրդի, Իզիպխա և Արմիդ անուանք բոլորովին անծանօթ են։ Վերջինոյն, այն է Արմիդի համար կընայինք ասել, թէ կը մօտենայ Վարդգէսի երգին մէջ յիշուած Արտիմէդ քաղաքին. «Հատուած գըրեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստեալ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի» (Խոր. Բ. ԿԵ.). բայց այս Արտիմէդ էր յԱրարատեան նահանգին, ուր Արմիդի համար ասէ
Վանայ թագաւորութեան։
արձանագրութիւնը, թէ էր քաղաք

14. Եթէ հին շինուած մը կայ Հայաստանի մէջ՝ այն անտարակոյս Վանայ քարաբլրոյն վիմափոր անձաւներն են, որոց սկիզբը կորսուած է նախապատմական ժամանակին մէջ. և այսմ ապացոյց ոչ Խորենացւոյն պատմութիւնն է զշինութենէ Վանայ, և ոչ Ասորեստանի բևեռագիրներուն վկայութիւնը, այլ նոյն իսկ բերդին

շինուածոյն անօրինակ ոճը, և բեւեռագիրներուն նշանաւոր տարբերութիւնը, որ քան զբեւեռագիրս Ասորեստանի և Բաբելոնի աւելի մեծ հնութեան դրոշմը կը կրեն յինքեանս։ Լընորման, թէպէտ արմենական կոչուած բեւեռագիրներն Ասորեստանի բեւեռագիրներէն առնուած, ուստի և քան զնոսա նոր կը համարի՝ կ'ընդունի սակայն, թէ ի մէջ այս երկու կերպ բեւեռագրութեան, այն է քաղդէականին և արմենականին՝ երեւելի տարբերութիւն կայ։ «Արմենական բեւեռագրաց մեծ մասը գաղափարաց նշաններ են, ասէ, այսինքն այնպիսի նշաններ զորս ամէն ազգ, գիտնալով այն նշանաց զօրութիւնը՝ կրնայ իւր լեզուաւ կարդալ, ինչպէս մեր այժմու արաբացի կոչուած թուանշաններն։ Մինչ, կը յաւելու, Ասորեստանեայց և Բաբելացւոց բեւեռագիրներէն փոխ առնող արիական ազգեր՝ ձայնի նշաններ, այսինքն տառեր միայն առին, և կը գրէին այս նշաններով միայն, առանց գործածելու ամենեւին գաղափարի նը-շան. Արմենիոյ բնակիչք, ընդհակառակն, առին մանաւանդ գաղափարի նշանները. նա մանաւանդ յարձանագրութիւնս իւրեանց քան զԱսորեստանցիս անգամ աւելի գործածած են գաղափարաց նշաններ. Վերջապէս արմենական արձանագրութեանց մէջ գրուածին կէսը գաղափարաց նշաններով է»։ Լընորմանի այս դիտողութիւնը բաւական է ցուցնել, թէ թէպէտ ինք այլազգ կը կարծէ՝ արմենական բեւեռագրութիւնն աւելի հին է քան զասորեստանեայն, վասն զի գաղափարաց նշանք աւելի են արմենական գրութեան քան ասորեստանւոյն մէջ. այնպէս որ եթէ այս երկու գրութեանց մին ի միւսէն առնուած է՝ զասորեստանեան գրութենէն ի դէպ է ասել զայս մանաւանդ քան զարմենականէն։

15. Վան էր հին քաղաք Հայոց ի Տոսպ գաւառի Վասպուրական նահանգին։ Ըստ Խորենացւոյն՝ Ասորեստանի հռչակաւոր թագուհին Շամիրամ շինեց զայս քաղաք, ուստի և երկու տեղ քաղաք Շամիրամայ կ'անուանէ զՎան նոյն Խորենացին։ «Հրաման տայ (Վաղարշակ) զքաղաքն Շամիրամայ նորոգել» (Խոր. Բ. Ը.), և Տիգրանայ համար ասէ (Բ. ԺԹ.). «Հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զգերին Հրէից որ ի Մարխացւոց՝ ի քաղաքն Շամիրամայ», զոր այլուր կը կոչէ Վան Տոսպայ. «Եւ զայն Հրեայսն որ նոյն հրէութեան օրինօք կային ի Վան Տոսպայ, զոր ածեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ յաւուրս Տիգրանայ՝ բնակեցոյց Շապուհ յԱսպահան» (Խոր. Գ. ԼԵ.)։ Ըստ Խորենացւոյն Շամիրամ այս քաղաքը շինեց իբրեւ ամարանոց, ուստի և նոյն պատմիչը կը կոչէ զՎան «քաղաք ամարաստանի».—«Սա (Շամիրամ) հանապազ յամառնայինսն, ի խաղալն իւր ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի զոր շինեաց ի

Հայս՝ կողմնապետ Ասորեստանի և Նինուէի թողու զԶրադաշտ մոգ
և նահապետ Մարաց» (Խոր. Ա. ԺԷ.)։ Ահա Խորենացւոյ պատմու-
թիւնն զշինութենէ Վանայ.

16. «Այս գործէն (Արայի պատերազմէն) ետքը Շամիրամ
կը կենայ աւուրս ինչ ի դաշտին, որ յանուն Արայի կը կոչուի Այրա-
րատ, և յետոյ կ'երթայ դէպի հարաւ զբօսնուլ ծաղկաւէտ հովիտ-
ներու և դաշտերու մէջ, քանզի ժամանակն ամառնային էր։ Եւ
տեսնելով երկիրը գեղեցիկ, օդը մաքուր, յստակ աղբիւրներ և
կարկաջասահ գետեր՝ ասէ. Այսպիսի հովասուն և ջրարբի տեղ
վայել է մեզ քաղաք և արքունիք շինել բնակութեան համար, որ-
պէս զի չորս եղանակաց մին (զամառն) անցունենք ի Հայս, իսկ
մնացեալ երեք զով եղանակներն՝ ի Նինուէ։ Եւ շատ տեղերէ անց-
նելով կու գայ աղի ծովակին արևելեան կողմը, և կը տեսնէ առ
եզերբ ծովուն լեռնադաշտ, որոյ երկայնութիւնն էր յարևելս կոյս
և ի հիւսիսոյ ունէր զառ ի վայր, իսկ ի հարաւոյ բլուր, որ սեպ և
ուղղորդ կը բարձրանար դէպ երկինք։ Բլրոյն հարաւային կողմը
կար հովիտ դաշտաձև, ձիգ յարևելս կոյս, իսկ յարևմտից հիւ-
սիսոյ՝ ձորաձև մինչև յեզր ծովուն։ Ի միջոցին բլրոյն և հովտին
կը հոսէին քաղցր ջրոյ առուք, որ լեռներէն իջնելով և ծործոր-
ներէ ու հովիտներէ անցնելով, ոմանք նաև լերանց ստորոտէն
բխելով՝ գային միանային և լինէին գետ։ Կային նաև ոչ սակաւ
շէնք ի հովտին, յաջմէ և ի ձախմէ գետոյն. իսկ յիշեալ բլրոյն ա-
րևելից կողմանէ էր լեռան փոքրագոյն։—«Զկնի այսպիսի իրաց
աջողութեան դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշ-
տին, որ անուանեալ կոչի յանուն Արայի Այրարատ՝ ելանէ ի լեռ-
նակողմանս երկրի հարաւակողմանն, քանզի ժամանակ ամառնային
էր, զբօսնուլ կամելով ի հովիտս և ի դաշտս ծաղկաւէտս։ Եւ տե-
սեալ զգեղեցկութիւն երկրին և զօդոյն մաքրութիւն և զաղբերացն
յստակագոյն բխմունս և զկարկաջասահութիւն գետոց բարեգնա-
ցից՝ Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օդոց
և մաքրութեան ջուրց և երկրի քաղաք և արքունիս շինել բնակու-
թեան, որպէս զի զչորրորդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ա-
մառնայինն եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցա-
նեմք ի Հայս, և զայլն ևս երիս որոշմունս օդոյն զովութեան տա-
ծիցեմք ի Նինուէ։ Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հա-
սանէ յարևելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ, և տեսեալ առ
եզերբ ծովուն երկայնաձև բլուր մի, որոյ նիստ երկայնութեանն
ի մուտս կոյս արեգական սակաւ ինչ առ ի կող լեալ ի հիւսիսոյ,
իսկ ի միջօրէ կողմանէ դէպ ուղիղ առ երկին հայելով, քարանձաւ

կանգուն անշէղ, և ի սմանէ զհարաւով բացագոյն հովիտ իմն գաշտաձև երկայնաձիգ յարևելից կողմանէ լերինն, իջանելով յեզր ծովուն՝ ընդարձակ և գեղեցիկ ձորաձև. որոց (բլրոյն և հովտին) ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց ի լեռնէն իջանելով, ի ծործորոց և ի հովտաց ծորեալք և ի հիմանց փեղկեց լերանց մխեալք՝ ի ծաւալումն գետոց պերճանալին. և չէնք ոչ սակաւք ի հովտաձև ձորակին յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք. յարևելից կողմանէ հաճեցեալ բլրոյն՝ լեառն մի փոքրագոյն»:

Այս տեղւոյն վրայ, յաւելու Խորենացին, հիանալով Շամիրամ՝ հրամայեց շինել քաղաք և բերդ. և իսկոյն երկոտասան հազար գործաւորք, ասորեստանցի և հնլատակ, և իւր ընտիր արուեստաւորներէն վեց հազար հոգի, հմուտ գործոյ փայտի, քարի, պղնձոյ և երկաթոյ՝ կատարեցին փութով հրամանը: Նախ շինեցաւ գետոյն լայն և բարձր ամբարտակը (երկու քովի բարձրութիւնները) մեծամեծ քարերով, և շաղախը որ գործածուեցաւ՝ էր աւազախառն կիր, որ մածնլով այնպէս հաստատուն եղած է, որ եթէ պարսպի համար անգամ քար մը խլել փորձէ ոք՝ չէ կարող. իսկ ամբարտակին ծեփն այնպէս ողորկ է, որ թուի թէ հալած ճարպ թափուած է: Այսպէս շինեցաւ ամբարտակ գետոյն մինչև ի տեղին, ուր սահմանեալ էր շինել քաղաքը: Այս ամբարտակին պատաուածներուն մէջ, վասն ամրութեանն, ինչպէս կը լսենք, ասէ Խորենացին, աւազակներ և փախստականներ կ'ապաւինին:—«Ասա իմն ականկառոյց լեալ պլրասիրտն այն և կաթոտն Շամիրամ՝ հրաման տայ բերուց և երկու հազար որանց անպրուեստից գործաւորաց յԱսորեստանեայց և յայլոց իշխեըոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենքին կատարեալք էին յարուեստգիտութեան՝ ածել անխափան ի փափագեալ տեղին. և գործն հաւասար հրամանին առնլը զկատարումն: Եւ վաղվաղակի ածեալ լինէին բազմութիւն խառնիճաղանճ գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց իմաստնոցն: Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալս, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ, որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի: Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի գաղթականս փախստեամբ ամրանան, իբր ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք: Եւ թէ զփորձ առնուլ դէպ ումեք լինիցի՝ և ոչ իբր պարսպակաց քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խլել ոք զօրեսցէ, թէև մեծաւ աշ-

խատութեամբ ջանայցէ։ Եւ ի հեղուածս արուեստին որ զքարամբք՝ հայեցեալ ուրուք՝ որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երեւցուցանէ կարծիս։ Եւ այսպէս ընդ բազում ասպարէզս անցուցեալ զամբարտակն՝ հաստուցանէ ի նկատեալ տեղի քաղաքին»։

Հոն Հրամայեց Շամիրամ, ասէ Խորենացին, գործաւորները դաս դաս բաժնել, և իւրաքանչիւր դասուն վրայ քաջ արուեստաւորներէն վարդապետներ (վարպետներ) կարգելով սկսանել քաղքին շինութիւնը։ Այսպէս մեծ աշխատութեամբ և ջանիւ յետ սակաւ ամաց շինեցաւ նաև քաղաքն, ամուր պարսպօք և պղնձի դրամբք։ Քաղաքին մէջ շինուեցան հօյակապ տուներ կրկնայարկ և եռայարկ, այլևայլ տեսակ և այլևայլ գոյն քարերէ։ Իւրաքանչիւր թաղ տարբեր գունով կ'որոշուէր, և փողոցներն էին լայն և լուսաւոր։ Նաև չքնաղ և զարմանալի բաղանիս շինել տուաւ քաղքին գլխաւոր տեղերը։ Գետոյն ջրոյն մէկ մասը բաշխեց քաղաքին մէջ, ուր որ կարօտութիւն կար ջրոյ, և յոռոգումն պարտիզաց և բուրաստանաց, իսկ մնացեալ մասը՝ ծովին երկու կողմը յաջ և յահեակ, յոռոգումն շրջակայ տեղեաց։ Քաղքին արևելեան, հիւսիսային և հարաւային կողմերը զարդարեց դաստակերտօք, գեղեցիկ պարտէզներով և այգեստանօք, և յետ յարդարելոյ զամենայն այսպէս հօյակապ և հռչակաւոր՝ գաղթականաց բազմութիւն բերելով բնակեցոյց հոն։—«Անդ հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել, և ի վերայ իւրաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել, և այնպէս ի սաստիկ ճգնութեան պահեալ՝ յետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին, ամրագունիւք պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիւք։ Շինէ և ընտիր ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէսպէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս, գեղեցիկ գունիւք և ընդարձակ փողոցիւք զկողմանս քաղաքին որոշելով։ Շինէ զչքնաղս ոմանս և զզարմանալոյ արժանաւորս բաղանիս ի միջոցաց քաղաքին լուալիս։ Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ՝ գնացուցանէ ի պէտս ամենայն պիտոյից և յոռոգումունս բուրաստանաց և ծաղկոցաց, և զայլն զեզերբ ծովակին յաջմէ և յահեկէ, քաղաքին և բովանդակ շրջակային յոռոգումն։ Եւ զամենայն արևելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս և ի տերևս, և բազումս բազմաբերս և գինեբերս ի նմա տնկեաց այգիս։ Եւ ամենայնիւ հօյակապ և հռչակաւոր զպարսպեալն յօրինէր, և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ»։

17. Բուն Վանայ բերդին կամ քարաբլրոյն գալով Խորենացին

կը խօսի այսպէս. Իսկ ինչ որ անձաւին (այսպէս կ՚անուանէ Խորենացին քարաբլուրը) վրայ, որ քաղքին (արևելեան) ծայրն է, յօրինեց՝ այնպէս հրաշալի են, որ ամեն մարդոյ հնար չէ հասկնալ և պատմել։ Նախ բլրոյն գագաթը պարսպելով՝ շինեց ի նմա թագաւորական շինուածներ ծածուկ և ահագին ճամբաներով, ընդ որս ելնել և իջնել սովալի է։ Թէ որպիսի շինուածներ էին սոքա՝ մեզ անծանօթ է, ուստի չենք կարող նկարագրել. սաչափ միայն ասեմք, թէ բոլոր թագաւորական շինուածոց մէջ առաջին է այս և շքեղագոյն։ Իսկ անձաւին (քարաբլրոյն) արևելեան կողմն, ուր կարծրութիւն ապառաժին այնպիսի է, մինչև հազիւ կարել ումեք երկաթով գծել ինչ՝ պէս պէս սրահներ և սենեակներ և գանձատուներ և երկար վիհեր բանալ տուած է, բայց թէ որպիսի հնարիւք՝ չէ յայտ։ Նաև քարերուն վրայ, որպէս թէ մոմոյ վրայ՝ քանդակել տուած է գիրեր, որոց տեսիլն միայն կը հիացնէ զտեսողս։—«Իսկ գծայր քաղաքին և որ ինչ ի նմանէ գործոյ հրաշակերտութիւնք՝ բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն։ Զորոյ (քարաբլրոյն) պարսպեալ զգագաթն՝ դժուարամուտս մանս և դժուարելանելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս, և ծածուկ իմն ահագին։ Որոյ որպիսութիւն դրուածեանն յօրինուածոյ ոչ ի լսելիս մեր հասեալ ճշմարտութեամբ յումեքէ, և ոչ մեք ի պատմութիւնս հիւսել հաւանիմք. այլ ասեմք միայն, թէ ամենայն թագաւորական գործոց, որպէս լուաք՝ առաջին և վեհագոյն համարեալ։ Իսկ զընդդէմ արեգական կողմն անձաւին, ուր և ոչ գիծ մի երկաթոյ այժմ վերագրել ոք կարէ՝ զայսպիսի կարծրութիւն նիւթոյ պէսպէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց։ Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթել՝ բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ» (Խոր. Ա. ԺԶ.)։

18. Այս է ահա անուանեալ Շամիրամակերտի նկարագիրը. այլ թէ ուստի առած է Խորենացին այս պատմութիւնն՝ յայտնի չէ։ Խորենացին չի խօսիր իբրև ականատես, և ոչ իսկ ի Մարիբասայ առած կը պատմէ։ Զիարդ և իցէ՝ Խորենացւոյն նկարագրին պատմական պարագաները, զորօրինակ Շամիրամայ Հայաստանի մէջ շրջիլը, ապա Վանայ կողմերը գալով հաճիլը տեղւոյն գեղեցկութեանը, հուսկ յետոյ հազարներով գործաւորներ և արուեստագէտներ բերել տալով, ոչ միայն քարաբլրոյն վրայ այն վիմափոր սենեակներն, այլ և քաղաքը պալատներով, բուրաստաններով և ջրմուղներով իբրև ամարանոց շինել տալը՝ շինծու են։ ԶՇամիրամ պատմական անձ

ենթադրելով առ Նինոսիւ՝ քարաբլրոյն վրայ քան զՆինոս հնագոյն շինուածներն անգամ, որպիսի են վիմափոր սենեակներն անոր ընծայել՝ պատմական հիմ չունին։ Քարաբլուրը շատ հին ժամանակներէ հետէ կոչուելով յանուն Շամիրամայ՝ պատճառ տուած է յետնոց կարծել, թէ Շամիրամ էր շինիչ այն հրաշակերտին, ուստի և վերոյիշեալ պատմութիւնը ստեղծել· բայց թէ ինչ պատճառաւ այն բերդն ի վաղուց հետէ կոչուած է յանուն Շամիրամայ՝ գայսմանէ ի սորէ։

19. Արդի ճանապարհորդներէն գերմանացին Շուլց, որ քան զայլս աւելի ճշդիւ քննած և մանր նկարագրած է զՎան և մանաւանդ քարաբլուրը՝ Վանայ մէջ կամ մօտ ոչ ամբարտակ գտաւ և ոչ հին շէնք, այլ միայն հին ջրմղի մը մնացորդները, որոյ պատերը կային ուրեք ուրեք առանց շաղախի իւրեանց ծանրութեամբ միայն զիրար բռնող մեծամեծ քարերէ։ Շուլց այս ջրմղին մէջ կըրցաւ կանգուն երթալ իբր քսան քայլ։ Քարաբլրոյն գալով՝ Շուլց Խորխոռ կոչուած հարաւային արեւելեան կատարին ստորոտէն,—քանզի քարաբլուրը մին քան զմիւսն բարձր երեք կատար ունի,—գտաւ դէպ ի վեր բերդը կիսափուլ աստիճանաւոր ուղի մը, որ կը հանէր ի ձև ամփիթէատրոնի շինուած հարթ տեղեր, թերեւս նստելով դիտելու համար սքանչելի տեսարանը, որ բլրէն նայողներուն առջև կը բացուի ամբաւ տարածութեամբ։ Շուլց գտաւ նաև քայքայեալ շինուածոց մնացորդներ 4 կամ 5 ոտք երկայն, 3 կամ 4 ոտք լայն քառակուսի քարերէ առանց շաղախի յեց իրարու վրայ, յորոց ոմանց վրայ կան բևեռագիրք։ Բայց քան զամենայն հիանալին, զոր տեսաւ Շուլց քարաբլրոյն վրայ՝ էին ապառաժին մէջ փորուած մէջէ մէջ սենեակները, ծեփեալ կամ բռեալ ողորկ և կարծր նիւթով մը։ Շուլց բոլոր այս սենեակներուն մէջ չգտաւ ամենեւին նկար կամ պատկեր, որ Ասորեստանեայց հին շինուածներուն, ինչպէս Խորսապատու և Գուչունճուգի պալատանց մէջ յաճախ են։ Այս սենեակներուն մէջ դիտողութեան արժանի բանն էր պատերուն փայլուն և անհնարին կարծր ծեփը և խորշերը, յորոց ոմանք ունէին ի միջոցի շատ խոր ծակեր։ Միով բանիւ, Վանայ քարաբլրոյն վիմափոր սենեակները, թէպէտ հին և մեծագործ՝ չունին Ասորեստանցւոց շինուածներուն ոճը, և ոչ իսկ Շամիրամայ են։

20. Շամիրամաւ, որ դիցաբանական անուն է՝ կը հասկցուի նախապատմական ժամանակ։ Հին արեւելեան ազգեր սովոր էին Շամիրամայ ընծայել հին մեծամեծ շէնքեր՝ որոց ոչ թուականը և ոչ շինողը ծանօթ էր։ Բայց Վանայ բերդին շինութեան Շամիրամայ ընծայուելուն պատճառն այս է։ Շամիրամ, ըստ Ասորեստանցւոց

Մելիգդա և ըստ Ասորւոց Աստարտ, ըստ Յունաց Արտեմիս, ըստ Հռոմայեցւոց Տիանա և ըստ Հայոց Անահիտ՝ էր հին արևելեան աստուածուհի, և կը պաշտուէր Քուշեան և Քամեան ազգերէ իբրև գիջութեան կամ խոնաւութեան միջոցաւ յառաջ բերող ծննդական զօրութիւն։ Ի բնէ կամ արուեստիւ ջրարբի և լեռներէ պաշարեալ պտղաբեր և զուարճալի հովիտներ նուիրական կը համարուէին այն հին ազգերէն այս աստուածուհւոյն։ Այս նախապատմական Անահիտ չունէր ամենևին արձան. պաշտօնատեղիք նորա էին բարձր և անմատոյց տեղեր շինուած ամրոցներ, որ միանգամայն բանտ էին պատերազմի գերիներու, որ հաւանականապէս կը զոհուէին աստուածուհւոյն։ Մալադիոյ, Տօշայ մօտ և ուրիշ տեղեր կային ի հնումն այսպիսի ամրոցք, որ Շամիրամայ գործ կը համարուէին (Րիդդ. Արևմտ. Աս. Գ. 2)։ Նաև առ Քանանացիս, որ Քուշեան ցեղին երևելի ճիւղն էին, զոր գիտունք Քամեան կ'անուանեն՝ անտառախիտ ջրարբի բարձունք նուիրական էին Աստարտայ, որ Քանանացւոց Շամիրամն, այսինքն Անահիտն էր։ Նոյնպէս առ Իսրայէլացիս իբրև Աստուծոյ հետ հաղորդակցութեան յատուկ տեղեր նուիրական համարուած էին բարձր լերինք։ Սինա լեռը ելաւ Մովսէս՝ Եհովայի հետ խօսելու։ Նոյնպէս մեծամեծ յայտնութիւնք և տեսիլք լեալ կը պատմուին ի Գիրս ի Քորեբ, ի Կարմեղոս և ի Թաբոր։ Սամարացւոց տաճարը Գարիզին լերան վրայ էր։ Իսրայէլացիք սովոր էին զոհել բարձր տեղեր ոչ միայն օտար աստուածոց, այլ և աստուծոյն իւրեանց Եհովայի, և զայս առնէին ոչ միայն այն թագաւորք, զորոց ասեն Գիրք, թէ «արարին չար առաջի տեառն», այլ և սրբազոյնք և սիրելիք Եհովայի, ինչպէս Սամուէլ, Դաւիթ և Սողոմոն։ Սամուէլ Սիփ եկած էր, հոն մօտ նուիրական բարձր տեղ մը զոհ մատուցանելու, երբ Սաւուղ էշերուն համար հարցունելու եկաւ։ «Վասն ուրուրս եկեալ է ի քաղաքս,—ըսին աղջկունք ջրուորք, որոց հանդիպեցաւ Սաւուղ քաղքէն դուրս,—զի զոհ է այսօր ժողովրդեանն ի բարձունս. յորժամ մտանիցէք ի քաղաքդ՝ գտանիցէք զնա ի քաղաքիդ, մինչչև երթեալ իցէ նորա ի բարձունսն» (Ա. Թագ. Թ. 12). և Սողոմոնի համար գրուած է, թէ «Սիրեաց Սողոմոն զՏէր՝ գնալ ըստ հրամանաց Դաւթի հօր իւրոյ բայց ի բարձունս և նա (իբրև զհայր իւր) զոհէր և արկանէր խունկս։ Եւ յարեաւ գնաց արքայ ի Գաբաւոն զոհել անդ, զի նա առաւել բարձրագոյն էր» (Գ. Թագ. Գ. 4)։ Շամիրամայ անունն իբրև նախապատմական Անահիտ, զարմանալի արուեստը և անօրինակ ոճը, որով շինուած են վիմափոր սենեակներն յղկեալ և ողորկեալ որմովք, բևեռագիրներուն կերպը և լեզուն, բոլորովին տարբեր Ասորես-

տանի և Քաղդէացւոց բևեռագիրներէն, կը ցուցնեն, թէ այս Հրաշակերտը քան զԱսորեստանի և Քաղդէացւոց հարստութիւնն հին է, Քուշեան ճարտարապետութեան մնացորդ, ուստի և նախապատմական. միով բանիւ այնպէս հին, որ թերևս Հայ ցեղն անգամ դեռ եկած չէր իւր գաղթականութեան վերջին տեղին, Արարատ։ Ուստի, ըստ մեզ, ի զուր է ջանալ հայերէնով քակել Վանայ բևեռագիրները. այսպիսի ջանքեր չյաջողեցան ցարդ, և նոքա, որ յոգնեցան այս գաղափարով՝ ոչ այլ ինչ տուին մեզ, եթէ ոչ երևակայեալ հայերէն մը։

ԳԼՈՒԽ Գ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԳԱՑ Ի ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅՈՑ։

1. Այլ աղբիւր պատմութեան Հայոց՝ նախնական ժամանակի.—

Ա. ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՑՔ։

2. Աշխարհագրական դիրք Ասորեստանի. Աղխաբեն։ 3. Ասորեստանեայք ըստ յոյն պատմագրաց։ 4. Ասորեստանի թագաւորք ըստ Նաւբեայ։ 5. Արդի հնաքանք՝ զԱսորեստանեայց. Մ՚ասբերոյ։ 6. Բևեռագիրք։ 7. Ասորեստանի թագաւորք ըստ բևեռագրաց։ 8. Ասորեստանի պատմութիւնն ըստ բևեռագրաց։ 9. Թէ ի՛նչ հաւատք կրնայ ընծայուիլ բևեռագրաց։ 10. Ասորեստանի պատմութիւնն ըստ Հրէից գրոց. ծննդոց գիրք. Դ. գիրք թագաւորաց։ 11. Անկումն Ասորեստանի ապացուցեալ ի Հրէից գրոց։ 12. Հրէից գրոց վկայութեան վաւերականութիւնը զԱսորեստանէ։ 13. Ասորեստանցիք արտաքոյ Ասորւոց և Պաղեստինու։ 14. Արմենիա առ Ասորեստանեօք. Արարատ՝ յանման Բաբելոնի. Յառաջ քան զառումն Բաբելոնի առ Սենեքերիմաւ. Բնիկ աւանդութիւն մը։ 15. Յիշատակութիւն մի ի Դիոդորոսէ. Բարզանէս անունը։ 16. Հայք առ Ասորեստանեօք՝ ըստ Խորենացւոյն։ 17. Արմենիա առ Ասորեստանեօք ըստ արդի հնաքանից. Սարեուքինի արձանագրութիւնը։ 18. Բևեռագիրներէն հանուած պատմութեան վրայ դիտողութիւն։ 19. Ասորեստանի անկումն ըստ հասարակ աւանդութեան, և ըստ Հրէից գրոց։ 20. Բաբելացիք յետ անկման Ասորեստանի։

1. Որովհետև, որպէս ասացաւ, մասնաւոր ազգային պատմութիւն չունինք զնախնական ժամանակի Հայոց՝ այս պակասը լեցնելու համար հարկ է դիմել այն ազգերուն պատմութեանը, որ

իբր տիրող՝ ընդհանուր ազդեցութիւն ունեցան գրեթէ բոլոր Ասիոյ վրայ։ Այս տիրող ազգերն են—Ա. Ասորեստանցիք մինչև ի սկիզբն Ե. դարուն նախ քան զՔր., յետոյ Բ. Մարք և Պարսք մինչև ի սկիզբն Գ. դարուն, և անտի ապա Գ. Յոյնք, այսինքն Մակեդոնացիք և Սելևկեանք մինչև Տիգրան մեծ։

Ա. ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՑՔ։

2. Հինն կամ բուն Ասորեստան ունէր իւր սահմանակից ի հիւսիսոյ զլեռնայինն Արմենիա, յարևելից՝ զՄարս, ի հարաւոյ՝ զՊարսս և յարևմտից՝ զԲաբելոն և զՄիջագետս, յորմէ կը բաժնուէր ըստ Սեմականաց Դիգլաթ և ըստ Հնդեւրոպականաց Տիգրիս կոչուած գետով։ Այսպէս Ասորեստան յերից կողմանց պաշարեալ էր Հնդեւրոպական կամ արիական ցեղերէ. յարևմտից միայն, այն է յայնկոյս Տիգրիսի բնակեալ ազգերն էին սեմական կամ արամէական, ուստի և համացեղ, եթէ ոչ տիրող ցեղին՝ գէթ ժողովրդեան երևելի մասին։

Ասորեստանի գլխաւոր մասն էր ի Յունաց Ադիաբեն կոչուած հիւսիսային գաւառն, որ բուն սահմանակից էր ի հիւսիսոյ Հայոց Մոկաց, Կորճէից, և Հեր և Զարևանդ (Պարսկահայք) կոչուած գաւառներուն, և մեր հնագոյն մատենագիրք, Ագաթանգեղոս, Բուզանդ և Խորենացին՝ Ասորեստանիւ կ'իմանան այս հիւսիսային մասը, զԱդիաբեն միայն։ Արդարև այս մասին մէջ էին գլխաւոր քաղաքք Ասորեստանի, Քաղա, Ռոբովթ և Ռեսէն (Ծննդ. Ժ, 11), հանդերձ հզօր և անուանի մայրաքաղաքաւ Նինուէիւ։ Ըստ հին աւանդութեան իրիք, որ յիշուած է ի գիրս Ծննդոց (Ժ. 11, ըստ Եբր. բնագր.) Նեբրովթ շինեց այս քաղաքները. աւանդութիւն մը, որ որչափ և աղօտ է՝ կը ցուցնէ սակայն, թէ Քուշեան երկիր էր նախապէս Ասորեստան, քանզի ի Գրոց իբրև անձ յիշուած քուշեան Նեբրովթ՝ արևելեան աւանդութեան մէջ (Ռիտտէր, Արևմտ. Աս. Գ. 1.) Քուշեան ցեղին յատուկ անուն էր։

3. Ըստ Կտեսեայ, Դիոդորոսի և այլոց՝ Ասորեստանի վրայ մինչև մեր ժամանակն ընդհանրապէս կը կարծուէր, թէ Բէլ ոմն եղաւ հիմնադիր Ասորեստանի տէրութեան իբր 2,000 ամօք յառաջ քան զՔր., թէ Բելայ որդին և յաջորդը Նինոս և կինը Շամիրամ ընդարձակեցին Ասորեստանի տէրութիւնը, նուաճելով զՀայս, զՄարս, զՀնդիկս և զայլ բազում ազգս, և մեծամեծ շէնքեր թողին, մանաւանդ Շամիրամ, Ասիոյ այլևայլ կողմերը, և թէ յետ Նինուասայ, որդւոյն Նինոսի և Շամիրամայ՝ տիրեցին ծոյլ և թուլամորթ

թագաւորներ մինչև Սարդանաբաղ կամ Թոնոս Կոնկողեռոս, որ պաշարուելով ի միացեալ զօրութենէ Մարաց և Բաբելացւոց՝ այրեց զինք հանդերձ ընտանեօք յարքունիս իւր, և այնպէս վերջացաւ Ասորեստանի կամ Նինուէի թագաւորութիւնն իբր 759-ին նախ քան զՔր.։

4. Եւսեբիոս Կեսարացի, Դ. դարու եկեղեցական պատմիչն, ի Բելայ մինչև Սարդանաբաղոս, այսինքն 1,993-էն մինչև 759, կուտայ Ասորեստանի թագաւորաց անուններն որ ի ներքոյ, առնլով ի Կտեսեայ յոյն պատմչէն, որ ծաղկեցաւ Ե. դարուն առաջին կիսուն նախ քան զՔր., և յորմէ կ'առնու նաև Դիոդորոս Սիկեղացի, ուրիշ յոյն պատմիչ Կեսարու և Օգոստեայ ժամանակ.

Բեղոս	Մանսկիալիոս	Պանիաս
Նինոս	Սփերոս	Սոսարմոս
Շամիրամ	Մամիւղոս Բ.	Միտրէոս
Նինուաս	Սպարեթոս	Տևտամոս Ա.
Արիոս	Ասկատադէս	Տևտէոս
Արալիոս	Ամիւնտէս	Արաբեղոս
Քսերքսէս	Բեղոքոս Բ.	Կաղաւոս
Արմամիդրիտէս	Ատոսսաս	Անաբոս
Բեղոքոս Ա.	Բեղատորէս	Բաբիոս
Բաղէոս	Լամպրիդէս	Տևտամոս Բ.
Սեթոս	Սոսարէս	Դերկիւղոս կամ
Մամիւղոս Ա.	Լամպարէս	Սարդանաբաղ

5. Արդի հնաբանք, իբրև անվաւեր՝ չեն ընդունիր ո՛չ այս անունները, և ոչ Նինոսի և Շամիրամայ պատմութիւնը, զոր առասպել կը համարին։

Արդի հնաբանք, որոց գլխաւորն է Օբերդ, ի բևեռագիրս որ ցարդ գտնուած են՝ Նինոսի և Շամիրամայ ընծայուած աշխարհակալութեանց յիշատակութիւնը չեն գտներ։ Միայն Նինիբալ- հակալութեանց յիշատակութիւնը չեն գտներ։ Միայն Նինիբալլուքին անուն թագաւորի մը համար կը գտնեն գրուած, թէ Ասորեստանի տէրութիւնը կազմեց և առաջին եղաւ որ հաստատեց հզօր բանակ մը։ Օբերդ բևեռագիրներուն Նինիբալլուքինը կը համարի Յունաց Նինոսը, որոյ թագաւորութեան սկիզբը, համաձայն Հերոդոտոսի, կը դնէ ԺԴ. դարուն, այն է իբր 1,300-ին սկիզբը, և Կտեսեայ Շամիրամն առասպելեալ անձ համարելով՝ պատմական Շամիրամայ անունը կը գտնէ ուրիշ արձանագրութեան մէջ, իբրև կին Բեղոքոսի Բ-ի, ի վախճանի Թ. դարուն, այն է 800-ին նախ քան զՔր., համաձայն Հերոդոտոսի, որ Շամիրամայ համար ասէ, թէ էր

հինգ ազգ յառաջ քան զՆիտոկրիս, կին Նաբուպաղասարայ, երբ 800-ին նախ քան զՔր.։ (Կիլմէն, Հնախօս. արևել. Գլ. Գ.)։

Մասբերոյ «Պատմութիւն հին ազգաց արևելից» կոչուած գիրքին մէջ, բևեռագիրներ կարդացող գիտնոց, գլխաւորապէս Օբերդի, Րօլինսոնի, Լընորմանայ, Մենանդի և այլոց գրուածներէն քաղելով կ'առնու Ասորեստանեայց վրայ բոլորովին նոր պատմութիւն մը։

6. Բևեռագիր կամ սեպագիր կը կոչուին սեպի կամ բևեռի նման տեսակ մը նշանագրօք քարի և աղիւսոյ վրայ գրուածներ։ Այսպիսի արձանագրութիւնք գտանին մանաւանդ ի կողմանս Նինուէի և Բաբելոնի, Պերսեպոլիս և Վան։ Բևեռագիրք քանի մը տեսակ են. դժուարագոյնը Բաբելական կամ Քաղդէականն է. յետ սորա գայ Ասորեստանի կամ Նինուէինը, հուսկ յետոյ Պարսկականը։ Բաբելացւոց և Ասորեստանեայց սեպագրութիւնն ունի երբ 600, ըստ ոմանց ևս աւելի նշանագիր։ Պարսկականն ունի 33 նշանագիր, որ գրեթէ ամբողջ այբուբենն են այն տեսակին։ Ասի թէ Պուրնուֆ և Լասէն հնչումը գտան պարսկական բևեռագրաց, և թէ Րօլինսոն անգղիացին կարդաց շատ պարսիկ բևեռագիրներ, որոց երևելին է Պիսիդունի Դարեհեան արձանագրութիւնը։ Օբերդ և այլք, որպէս ասի՝ կարդացին նաև միւս տեսակներն, այն է Բաբելոնին և Ասորեստանինը. և այսպէս ելաւ Ասորեստանի նոր պատմութիւնը, որ հետևեալն է.

7. Ասորեստանի հնագոյն իշխանք էին, ըստ բևեռագրաց՝ քուրմ թագաւորք։ Այս թագաւորներէն էին, 1800-էն մինչև 1500 նախ քան զՔր.՝ Իսմի-դայան, Սամսի-բին և Իրի-ամուաք, հարկատուք Եգիպտոսի թագաւորաց, որ գայնու ժամանակաւ իշխէին բոլոր առաջակողման Ասիոյ մինչև Տիգրիս։ 1500-էն ետքը կու գան թագաւորք Ասորեստանի, որոց անուանք և թուականներն են.

1. Ասուր-Նարարա և Նաբուդագան (1500)
2. Ասուր-բէլ նիսիսու (1400)
3. Բուսուր-ասուր (1390)
4. Ասուրու-բաղատ (1370)
5. Բէլ-Նիրարի (1350)
6. Պուդիէլ (1330)
7. Բին-նիրարի Ա. (1310)
8. Սաղման-ասար Ա. (1290)
9. Թուկղաթ-ադար Ա. (1270)
10. Բէլ-կուդուր-ուսուր (1260)
11. Ադար-աբաղ-ասար (1250)
12. Ասուր-դայան (1190)
13. Մուտակիլ-նաբու (1150)
14. Ասուր-րիս-իսի (1140)
15. Թուկղաթ - աբաղ - ասար Ա. (1130)
16. Ասուր-բէլ-կաղա (1090)
17. Սամսի-բին Բ. (1070)
18. Ասուր-բաղ-ամար (1060)
19. Բէլ-կատ-իրասսու (1060)
20. Սաղման-ասար Բ. (1010)
21. Իրիբ-բին (990—950)
22. Ասուր-իդին--աքէ (950—930)

23. Ասուր-դան-իլ Ա. (930-...)
24. Բին-նիրարի Բ. (...—889)
25. Թուկղաթ-ադար Բ. (889-882)
26. Ասուր·նազիր-աբաղ (882-857)
27. Սաղման-ասար Գ. (857-822)
28. Սամսի-ըին Գ. (822—809)
29. Բին-նիրարի Գ. (809—780)
30. Ասուր-դան-իլ Բ. (780—752)
31. Ասուր-նիրարի (752—745)
32. Թուկղաթ-աբաղ-ասար Բ. (745—726)
33. Սաղման-ասար Դ. (726—721)
34. Սարեուքին (721—704)
35. Սին-աքէ-իրիբ (704—681)
36. Ասուր-աքէ-իդին 681—667)
37. Ասուր-պան-աբաղ (667—6..)
38. Բէլ-զաքիր-իսքուն (...-...)
39. Ասուր-էդիլ-իլանի (...-625)

8. Գնենք համառօտիւ Ասորեստանի պատմութիւնն ըստ բեւեռագրաց:

Բուսուր-ասուր (1390) առաջին անգամ սկսաւ հաղորդութիւն առնել ընդ թագաւորս Բաբելոնի:

Ա. Ասուրու-բաղատաւ որդւով Բուսուր ասուրայ (1370) եղև խնամութիւն ի մէջ երկուց թագաւորութեանց Ասորեստանի և Բաբելոնի: Բուրնաբուրիաս Ա. Բաբելոնի թագաւորն՝ առաւ Ասուրու-բաղատայ դուստրը: Այսպէս Ասորեստանի թագաւորք սկսան ազդեցութիւն ունել ի վերայ Բաբելոնի, այնպէս որ երբ հարիւր տարի ետքը Ասորեստանի թագաւորն Թուկղաթ-ադար Ա. (1270) կուգայ Բաբելոն, ոչ իբրև բարեկամ, այլ իբրև տիրող, և Բաբելոն այնուհետև կը համարուի իբրև ընդ իշխանութեամբ Ասորեստանի:

Բայց Ասորեստանի թագաւորութեան մեծութիւնը կ'սկսի առ Ադար-աբաղ-ասարաւ (1250):

Ա. Թուկղաթ-աբաղ-ասարաւ (1130) արդէն հարկատու էին Ասորեստանի, բաց ի Բաբելոնէ՝ Նաիրի, այսինքն վերին կողմանք Եփրատ և Տիգրիս գետոց, ի հարաւոյ Կորդուաց լերանց և ի հիւսիսոյ Միջագետաց, Ասորւոց երկրին և Պաղեստինու, կամ այժմու Քիւրտիստան, մինչև ի սահմանս Կապադովկիոյ և Կիլիկիոյ: Թուկղաթ-աբաղայ մէկ արձանագրութիւնը կ'սկսի այսպէս. «Ես Թուկղաթ-աբաղ-ասար, մեծազօր թագաւոր, որ կորուսանեմ զանզգամս և խորտակեմ զգունդս զօրաց թշնամեաց»: Թուկղաթ-աբաղ-ասար արշաւած կը թուի աւելի դէպ ի հիւսիս մինչև Կովկաս և ապա Ասորւոց վրայ:

Բայց Թուկղաթ-աբաղ-ասարայ թոռնորդին Ասուր-րապ-ամար (1060) կորոյս բոլոր երկիրները, որոց տիրեալ էին նախնիք նորա:

Յետ Ասուր-րապ-ամարայ թագաւորք Ասորեստանի իբր հարիւր յիսուն տարի մտադիր էին զօրացնել զտէրութիւն իւրեանց, մինչ թագաւորք Իսրայէլի և Ասորւոց անօգուտ կռիւներով կ'անցունէին իրենց ժամանակը:

Առ Թուկլաթ-ադարաւ Բ-իւ (889) կ'սկսի միւսանգամ Հին աշխարհակալութեան վայրագ ոգին։ Այս թագաւորին համար կը կարդացուի ի բևեռագիրս, թէ «զմարմինս պարտելոց հանէր ի ցից»։ Առ Ասուր-նազիր-աբալաւ յաջորդաւ Թուկլաթ-ադարայ (886), նորոգուելով Քաղա, հին քաղաք ի տեղւոջ, ուր Զապ խառնի ի Տիգրիս՝ լինի մայրաքաղաք, և սկսանի Ասորեստանի բուն աշխարհակալութիւնը։ Բոլոր այն երկիրներն, զորս Ասուր-րապ-ամար կորուսած էր՝ նորէն կը նուաճին։ Լինին արշաւանք դէպ ի հիւսիս ի վերայ Մարաց, ի հարաւ և յարևմուտս, նա մանաւանդ մինչև յԵգիպտոս։ Մեմփիս գրաւի դէթ առ ժամանակ մի և մեհեանք կողոպտին ի Թեբէ։

Առ Սաղման-ասարաւ Գ. (857), յաջորդաւ Ասուր-նազիրաբալայ՝ սկսանի պատերազմն ընդ Դամասկոսի առ Բենադադաւ Բ. և առ Ազայելիւ։ Միջին Ասորիք և Կիլիկիա նուաճին։

Սամսի-բին Գ. (822) յաջորդ Սաղման-ասարայ կ'երթայ մինչև Կասպից կողմերը։

Առ յաջորդօք Սամսի-բինի՝ ժամանակ մը կը թուլնայ Ասորեստանեայց աշխարհակալութեան եռանդը․ մինչև որ ապստամբութիւն մը ի Քաղա՝ կը հանէ ի գահ զԹուկլաթ-աբալ-ասար Բ. (745)։ Մասբերոյ ընդ Թուկլաթ-աբալ-ասարայ Բ-ի նոյն կը համարի Հրէից Փուղայն և Թակլաթփաղասարը։ Զիարդ և իցէ՝ Թուկլաթ-աբալ-ասար է արդարև ըստ բևեռագրաց մեծագոյն աշխարհակալ Ասորեստանի։ Գրեթէ ամբողջ Ասիա, յարևելից մինչև Ինդոս, ի հարաւոյ մինչև ի Պարսկային ծոց, յարևմտից մինչև Միջերկրական և Սեաւ ծովերը և ի Փոքրն Ասիա, ի հիւսիսոյ մինչև ի Կուր կամ ի ծովն Կասպից՝ չեղև ազգ կամ երկիր, որ չզգայ Ասորեստանի զինուց զօրութիւնը։ Թուկլաթ-աբալ-ասարայ յաջորդին Սաղման-ասարայ Դ-ի (726), որ անորդի մեռաւ՝ յաջորդեց Սարեուքին (721), վերակացու պալատան։ Սարեուքին իւր թագաւորութեան առաջին տարին, Եղամայ Կումբանիգաս թագաւորին յաղթելէն ետքը՝ խաղաց ի վերայ Եթովպացւոց թագաւորին Սաբակայ, որ եկած էր յօգնութիւն Պաղեստինացւոց։ Ասորիք, Պաղեստին, Փիւնիկէ և բոլոր Ասիա չկրցան խլրտիլ յահէ Սարեուքինի։ Մասբերոյ զՍարեուքին նոյն կը համարի ընդ Սարկոնի Հրէից (Ես. Ի. 1—3)։ Սարեուքինի որդին և յաջորդը Սին-աքէ-իրիպ (Սենեքերիմ) (704), յետ կոտորածին զոր կրեց բանակ նորա յԵգիպտոս ի սրածութենէ՝ իւր ժամանակն անցուց Բաբելոնի և Մարաց կողմերն ապստամբներու դէմ և մեհեաններ ու պալատներ շինելով, զոր երկայն կը նկարագրէ Րօլինսոն «Հինգ մեծ տէրութիւնք» կոչուած գիրքին մէջ (Հա.

Բ. էջ 181—183։ Տես և Օբերդ, «Սարկոնեանք» էջ 51)։ Սին-աքէրիբ սպանուաւ յերկուց որդւոց իւրոց։ Ադրամելէք, ըստ Սմիթայ, փորձեց թագաւորել, բայց մերժուեցաւ, և տիրեց միւս որդին Ասուր-աքէ-խոյն (681) օգնութեամբ Արմէն զօրաց, որոց կը հրամայէր։ Ասուր-աքէ-խոյն ընդարձակեց Ասորեստանի տէրութիւնը մինչև Սեաւ ծովուն հիւսիսային արևելեան եզերքը, մինչև Կովկաս և մինչև Արաբիա, և այնպէս դիւրին եղաւ նմա տիրել Եգիպտոսի (672) առ Թարակաւ։ Ասուր-աքէ-խոյնի որդին և յաջորդն Ասուր-բան-աբալ (667) ոչ միայն պահեց իւր հօրմէն նուաճեալ երկիրներն, այլ և Լիւդացւոց թագաւորը Գիւգէս հպատակեցնելով տիրած եղաւ գրեթէ բովանդակ Փոքուն Ասիոյ։ Այսպէս Ասորեստանի թագաւորութիւնը կը հասնէր, գէթ անուամբ՝ մինչև Եգէական ծով (Սմիթ, Պատմ. Ասուրբանիբաղայ, էջ 84—99), մինչ հիւսիսէն և հարաւէն բրդաւ մըրիկն տապալիչ այն հսկայ շինուածին, որ նոյն իսկ հսկայութեան պատճառաւ խարխուլ և անհաստատ էր։

Գ. Բայց թէ ինչ հաւատք կրնայ ընծայուիլ գիտնականապէս բևեռագիրներէն հանուած պատմութեան՝ առ այս չունիմք այլ ապացոյց բաց ի համբաւոյ արանց, որ այն արձանագրութեանց ընթերցուածը կու տան մեզ։ Թերևս աւելի վստահութիւն կրնայինք ընծայել այն ընթերցուածոց՝ եթէ քան զմեզ գիտնագոյնք չէին ցուցեալ միևնոյն երկբայութիւնը զոր մեք։ Ռընան ի գիրսն, որ կոչի «Պատմութիւն սեմական լեզուաց», առարկելով այն կարծեաց դէմ, որ արձանագրութեանց լեզուն սեմական կը համարի՝ ասէ. «Ընթերցողք բևեռագրաց ենթադրեն, թէ այն արձանագրութեանց լեզուն, մանաւանդ միոյ տեսակին՝ սեմական է, եւ կը կարծեն գըտանել ի նոսա ձևեր և բառեր, որ բնաւ տեսնուած չեն լեզուաց այն ցեղին մէջ։ Շամբոլիոն առ ի կարող լինելոյ մեկնել եգիպտական մեհենագիրները՝ կ'առեղծէր բառեր, որոց հետք անգամ չկան ի խպտերէնի, և այսու արար անընդունելի զկերպն՝ որով կը կարդար մեհենագիրները. մինչ Պուրնուֆ չհնարեց երբէք քերականական ձև մը, զորոյ ճիշդ նմանութիւնը չէր տեսներ ի համացեղ լեզուս այնր լեզուին, զոր կը կարդար։ Օբերդ կ'ենթադրէ, թէ արձանագրութեանց երկրորդ տեսակին լեզուն մօտ է էհքիլերէնի, մահրիերէնի, միով բանիւ լեզուաց այն ճիւղին, զոր քուշեան կոչել սովորել են գիտունք։ Եթէ արձանագրութեանց լեզուն այսպիսի է՝ չկարէ բուն սեմական լինել . . . ։ Ո՛չ ապաքէն ներելի է մեզ կասկածել, երբ կը տեսնենք Ասորեստանի ուսման հմտագոյն անձ մը, որպիսի է Ռոլինսոն, որ իւր ընթերցուածներն արդարացնելու համար՝ կը պնդէ, թէ Ասորեստանցւոց յատուկ անուանք որոշ բառեր չեն, այլ

այլևայլ հոմանուն բառերէն մերթ մին և մերթ միւսը կը գործած-
ուի միևնոյն յատուկ անունը ցուցնելու. զորօրինակ Թագաւորի
մը անուան համար գործածուած են բոլոր հոմանուանք, որ գրեթէ
միևնոյն գաղափարը կու տան. Թէ միևնոյն աստուծոյ համար այլ-
ևայլ նշաններ կը գործածուին ըստ հաճոյս. Թէ միևնոյն նշա-
նագիրն այլևայլ կերպով կը կարդացուի և կրնայ առնուիլ Թէ իբ-
րև գաղափարի և Թէ իբրև ձայնի նշան, Թէ իբրև գիր և Թէ իբրև
վանկ, ըստ յարմարութեան իմաստին, և կը խոստովանի, Թէ այսպէս
գիրերուն և նշաններուն այս կամ այն նշանակութիւնը տալով՝
հանած է շատ բան, և շատ անգամ գիրերուն և նշաններուն տուած
է այն ձևը, զոր յարմարագոյն տեսած է այս ինչ իմաստն հանելու։
Այսպիսի տկար ենԹադրութիւններով ստեղծած է Ասորեստանի ժա-
մանակագրութիւն և դիցաբանութիւն մը։ Իսկ մարական կոչուած
արձանագրութեանց համար ասէ, Թէ գրեալ են այնպիսի լեզուով,
որոյ հոլովումն դուրանեան կամ Թուրքերէն է, շարադրութեան
կարգը՝ հնդեւրոպական, դերանուանք՝ սեմական, խոնարհումը՝ Թա-
Թարերէն կամ կեղտերէն, բառերը՝ Թուքերէն հանդերձ պարսկերէնի
և սեմական արմատներով։ Ճշմարիտ բանասէր մը չի կրնար հաւա-
տալ, Թէ գրասեղանին վրայ քանի մը բառարան ունենալով՝ կարէ
մարդ լուծել մեծաւ մասամբ անծանօԹ գիրերով գրուած անծանօԹ
լեզուի մը եԹէ ոչ բոլորովին անլուծանելի՝ գոնէ շատ փափուկ
խնդիրը։ Թէև ստուգիւ գիտնանք, Թէ ինչ է արձանագրութեանց լե-
զուն՝ հարկ է տակաւին լինել քաջ հմուտ բոլոր դրացի լեզուաց
այն լեզուին, զոր պիտի կարդանք, առ ի կարող լինելոյ տալ ճիշտ
և քերականական մեկնութիւն այն մութ գրուածոց»։ «Ուստի, յա-
ւելու Բրնան, բևեռագրաց երկրորդ և երրորդ տեսակին ընԹերց-
ուածներն՝ իբրև պատմական ճանչնալով պատմութեանս մէջ առ-
նուլ չեմ համարձակիր։ Արդարև եԹէ այն ընԹերցուածք ժամանա-
կաւ իբրև ճիշդ ապացուցուին՝ իմ գրուածս ուրեք ուրեք Թերի
պիտի գտնուի, և պիտի մեղադրուիմ, Թէ ընդէր հաւատք
չընծայեցի այնպիսի աշխատութեանց, որ եԹէ արդարև գիտնա-
կան յարգ ունին՝ կրնային մեծ լոյս տալ իմ պատմութեանս։ Բայց
իմ կասկածս այնչափ անպատեհ չի Թուիր ինձ, որչափ մուտ տալ
պատմութեանս մէջ այնպիսի տեղեկութեանց, որ դեռ արտաքին ա-
նաչառ դատողութենէ անցած չեն։ ԵԹէ ի միոջէ կողմանէ պարտք
են շնորհակալ լինել այն անձանց, որ այսպիսի դժուարին աշխատու-
Թեան կուտան զանձինս, խաբուելու և չյաջողելու բիւր վտանգօք՝
այլուստ խոհեմութիւնն պահանջէ դիւր..հաւանութեամբ չգրկել տե-
ղեկութիւններ, յորս հակասութիւններ կը տեսնուին և որ ձեռք

բերուած են անստոյգ միջոցներով․ և առանց ապացուցի կը նետուին մեր առջև» (Րընան, Պատմ. Սեմ, լեզ. Գիրք. Ա, Գլ. Բ)։ Մենք ոտք մը աւելի յառաջ երթալով քան զՐընան՝ բևեռագրաց ընթերցուածներէն առնումք ինչ ինչ ի պատմութիւնս մեր, թէպէտ ոչ առանց կասկածանաց ընդ վաւերականութիւն նոցա։ Եթէ մեր կասկածը կը ջրի՝ թերութիւն չէ մեզ այն․ իսկ եթէ իրաւացի է մեր երկբայութիւնը՝ չեմք գտնուիր ոչ խաբող և ոչ խաբեալ։

10. Անտարակոյս քան զՑունացն և զբևեռագրաց՝ ճշմարտագոյն է պատմութիւնն, զոր տան մեզ զԱսորեստանեայց Հրէից մատեանք, ոչ միայն պատմականներն, այլև մարգարէականք։ Մարգարէական գրուածք տեսակ մը քերթուած են վարդապետական, խառն դիւցազնականաւ և քնարականաւ, կ'երգեն անցեալ և ժամանակակից դէպքեր մարգարէական կամ ապառնի ոճով, իբրև Եհովայի նախախնամական կարգադրութիւններ, մերթ ի խրատ և մերթ ի մխիթարութիւն և ի քաջալերութիւն Եհովայի ժողովրդեան։ Բայց զինչ և իցէ բնութիւն մարգարէական գրոց՝ սա ստոյգ է, որ այն մատեանք կը պարունակեն պատմական ակնարկութիւններ և կրնան իբրև ապացոյց ծառայել պատմութեան։

Ըստ Եբրայական բնագրին Ծննդոց (Ժ. 11)՝ Նեբրովթ Քուշեան յետ հիմնելոյ զԲաբելոն՝ եկաւ յԱսուր, այսինքն Ասորեստան, և շինեց զՆինուէ իբր 2500-ին նախ քան զՔր.—«Յերկրէ աստի (ի Բաբելոնէ) ել Նեբրովթ և շինեաց զՆինուէ և զՌոբովթ քաղաք և զՔաղա»։ Բայց թողունք Ծննդոց այս մութ համարը, որ չէ ինչ աւելի քան հարևանցի իմն և աղօտ ակնարկութիւն հին քուշեան հալստութեան մը, մանաւանդ որ Եօթանասնից բնագիրը տարբեր ունի այս թարգմանութիւնը, զԱսուր ոչ իբրև երկիր, այլ իբրև անձ կը համարի հիմնիչ Ասորեստանի տէրութեան և Նինուէի.—«Յերկրէն յայնմանէ ել Ասուր և շինեաց զՆինուէ և զՌաբովթ քաղաք և զՔաղա»։

Իբրև արդարև պատմական և ժամանակակից կամ շատ մօտ ժամանակաւ՝ կարևոր և յարգի են յիշատակութիւնք զԱսորեստանեայց որ ի Չորրորդ գիրս Թագաւորաց։ Այս գիրքէն կը տեսնուի, որ ի վախճանի Թ. դարուն, այն է 800-ին նախ քան զՔր., կար Ասորեստանի թագաւորութիւն մը, մեծ և հզօրագոյն քան զամենայն ծանօթ թագաւորութիւնս այնր ժամանակի։ Արդարև Ը. դարուն սկիզբն էր, որ Իսրայէլի Մանայէմ թագաւորն (770—761) օգնութեան կանչեց Ասորեստանի թագաւորը Փուա, կամ ըստ Եբրայական բնագրին՝ Փուղա.—‹Եւ ել Փուա արքայ Ասորեստանեայց ի վերայ երկրին, և Մանայէմ ետ Փուայ հազար տաղանդս արծաթոյ՝

լինել ձեռին նորա ընդ նմա, հաստատել զթագաւորութիւնն ի ձեռըն նորա։ . . . Եւ դարձաւ արքայն Ասորեստանեայց և ոչ եկաց յերկրին» (Դ. Թագ. ԺԵ. 19)։ Առ Փակէէիւ (740—738) Փուղայի յաջորդը Թագղաթփաղասար եկաւ Իսրայէլի վերայ և շատ քաղաքներ առնելով տասն ցեղերուն մէկ մասը գերի տարաւ Ասորեստան.—«Յաւուրս Փակէէի արքայի Իսրայէլի եկն Թագղաթփաղասար արքայ Ասորեստանեայց, և առ զԻովն և զԱբելբեթմաաքա և զՅանովէ և զԿադէս և զՀասովր և զԳաղաադ և զԳալիլեա և զամենայն երկիրն Նեփթաղիմայ, և խաղացոյց զնոսա յԱսորեստան» (Դ. Թագ. ԺԵ. 29)։ Յուդայի թագաւորն Աքազ (742—726) Իսրայէլի թագաւորին Փակէէի և Դամասկոսի թագաւորին Ռասինի դէմ օգնութեան կանչեց զԹագղաթփաղասար, որ առաւ Դամասկոս և բնակիչները գերի տարաւ.—«Եւ առաքեաց Աքազ հրեշտակս առ Թագղաթփաղասար արքայ Ասորեստանեայց և ասէ. Ծառայ քո և որդի քո եմ ես. ե՛լ և փրկեա զիս ի ձեռաց արքային Ասորւոց և ի ձեռաց արքային Իսրայէլի յարուցելոց ի վերայ իմ։ Եւ առ Աքազ զարծաթ և զոսկի զգըտեալս ի գանձ տան Տեառն և տան թագաւորին, և առաքեաց արքային Ասորեստանեայց պատարագս։ Եւ լուաւ նմա արքայն Ասորեստանեայց, և ել ի Դամասկոս և առ զնա, և վարեաց զբնակիչս նորա ի գերութիւն ի Կիր, և զՌասին սպան։ Եւ չոքաւ արքայ Աքազ ընդ առաջ Թագղաթփաղասարայ ի Դամասկոս» (Դ. Թագ. ԺԶ. 7-10)։ Յաջորդ Թագղաթփաղասարայ Սաղմանասար խաղաց Իսրայէլի թագաւորին Ովսէէի վրայ (736—721), և առնելով զՍամարիա, Իսրայէլի մայրաքաղաքը՝ ջնջեց Իսրայէլի թագաւորութիւնը և գերի տարաւ տասն ցեղերը.—«Յամի երկոտասաներորդի Աքազու արքայի Յուդայ թագաւորեաց Ովսէէ։ . . . Ի վերայ նորա ել Սաղմանասար արքայ Ասորեստանեայց, և եղև նորա Ովսէէ ծառայ։ . . . Եւ ել արքայ Ասորեստանեայց . . . ի Սամարիա . . . և յամին իններորդի Ովսեայ առ արքայն Ասորեստանեայց զՍամարիա և խաղացոյց զԻսրայէլ յԱսորեստանեայս և բնակեցոյց զնոսա ի Քաղա և Քաբովր, զգետովն Գովզանայ, ի քաղաքս Մարաց» (Դ. Թագ. ԺԷ. 1-3. 5,6)։ Յետ Սաղմանասարայ Սենեքերիմ եկաւ Յուդայի Եզեկիա թագաւորին վրայ (726—697) երկիցս, և երկրորդ անգամուն զօրքը ջարդուեցաւ հիւանդութենէ, և Սենեքերիմ ետ դարձաւ.—«Եւ յամի չորեքտասաներորդի արքայի Եզեկիայ՝ ել Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց ի վերայ ամուր ամուր քաղաքացն Յուդայ, և առ զնոսա։ . . . Եւ եղև զի ի գիշերին յայնմիկ հրեշտակ Տեառն եհար ի բանակէ անտի Ասորեստանւոյն արս հարիւր ութսուն և հինգ հազար . . . . և խաղաց գնաց Սենեքերիմ արքայ Ասորեստանի, և դարձեալ նը-

տաւ ի Նինուէ (Դ. Թագ. ԺԲ. 13, ԺԹ. 35, 36)։ Եսայի (Գլ. Ի.) կը յիշէ Ասորեստանի ուրիշ թագաւոր մը Սարգոն, ըստ Հայերէն թարգմանութեան՝ Առան անուն, զորոյ մեծամեծ յաղթութիւնները կ՚ակնարկէ յԵգիպտոս և ի Փիւնիկէ։ Կը թողունք յիշել Յուդթայ գիրքին Նաբուգոդոնոսորը, քանզի այս գիրքը ոչ միայն արժանահաւատ չէ նիւթոյն կողմանէ, այլ և շատ ետք է ժամանակաւ, այսինքն ոչ յառաջ քան զառաջին դար յետ քրիստոնէութեան։

11. Ասորեստանի թագաւորութիւնը կործանեցաւ 625-ին ի ձեռն Կիաքսարայ Ա-ոյ թագաւորին Մարաց, ընդ որում նիզակակից էին Բաբելացիք։ Հրէից պատմութիւնն յայտնապէս չի յիշեր Ասորեստանի թագաւորութեան կործանումը, կ՚ենթադրէ սակայն քաղաքական մեծ փոփոխութիւն մը յարևելս գայնու ժամանակաւ։ Ասորեստանի տէրութեան կործանման ակնարկութիւն մը ի գիրս Հրէից՝ կրօնական այն մեծ փոփոխութիւնն է, որ եղև առ Յովսեաւ, թոռամբ Մանասէի։ Գիտենք թէ առ Եզեկիաւ զօրացած էր յԵրուսաղէմ ազգային կամ Եհովայեան կուսակցութիւնը, որ հակառակ էր Ասորեստանի և մէտ յԵգիպտացիս։ Եզեկիա գլխուածով ազատեցաւ Սենեքերիմայ բարկութենէն։ Առ Մանասէիւ զօրացաւ հեթանոս կուսակցութիւնն, որ միտեալ էր յԱսորեստանեայս։ Մուծան կամ վերստին հաստատուեցան սեմական ազգաց կռապաշտ սովորութիւնները, զորս վերցուցած էր Եզեկիա։ Բահաղ և Աստարտ սկսան պաշտուիլ, բագիններ կանգնեցան երկնից զօրութիւններուն՝ նոյն իսկ տաճարին մէջ։ Մանասէ նորոգեց նաև Ամմոնացւոց աստուծոյն Մեղքոմայ պաշտօնը՝ կրակէ անցունելով զորդին, որպէս արարեալ էր հաւ նորա Աքազ։ «Հմայէր—ասէ Գիրք վասն Մանասէի—և հաւահարց լինէր, և արար վհուկս և գէտս»։ Այնչափ աստուածներ կային, ասէ Երեմիա, որչափ քաղաքք. «Ըստ թուոյ քաղաքացն քոց էին քեզ աստուածքն քո, Յուդա» (Երեմ. Բ. 28)։ Մանասէ նաև շատ անմեղ արիւն թափեց. «Նաև արիւն անպարտ եհեղ Մանասէ բազում յոյժ, մինչև ելից զԵրուսաղէմ ծայր ի ծայր» (Դ. Թագ. ԻԱ. 16)։ Ըստ աւանդութեան Հրէից՝ այս հալածանաց ժամանակ սպանուեցաւ նաև Եսայի, Եհովայեանց գլուխը։ Ժողովրդեան եթէ ոչ բոլորին՝ գէթ մեծագոյն մասին հաճոյ թուեցաւ Մանասէի այս քաղաքականութիւնը, որ թուի լեալ մի միայն միջոց հաշտ առնելոյ ընդ նոսա զԱսորեստանեայս, Արդարև այնպիսի թագաւորէ մը, ասէ Մասբերոյ, վախ չկար Ասորեստանի համար, և Մանասէ ցորչափ կենդանի էր՝ մնաց հաւատարիմ Ասորեստանեայց, ուստի և թոյլ տրուեցաւ նմա խաղաղութեամբ մեռնիլ իւր աթոռին վրայ, ինչպէս յայտնի կը տեսնուի Թագաւորաց գիրքէն։ Ըստ գրոց Մնացորդաց

Մանասէ գերի տարուեցաւ Բաբելոն և զղջալով դարձաւ աթոռը.— «Եւ ած Տէր ի վերայ նորա զիշխանս զօրուն արքային Ասորեստանեայց. կալան զնա և կապեցին կապանօք և տարան ի Բաբելոն։ Եւ իբրև վտանգեցաւ՝ խնդրեաց զերեսս տեառն Աստուծոյ իւրոյ, և խոնարհեցաւ յոյժ յերեսաց Աստուծոյ հարցն իւրոց, և դարձոյց զնա Տէր յԵրուսաղէմ ի թագաւորութիւնն իւր» (Բ. Մնաց. ԼԳ. 11—13)։ Բայց Մնացորդաց գիրքը յետին ժամանակի գործ է և ոչ արժանահաւատ։ Մնացորդաց հեղինակը տեսնելով, որ Մանասէ, ամբարշտագոյնն ի թագաւորս Յուդայ, կ'ապրի երկար քան զայլ թագաւորս Յուդայ, առանց ամենևին նեղուելու թշնամիներէ, մինչ բարեպաշտ թագաւորք, Եզեկիա, Յովսիա և այլք թագաւորեցին զկէս ժամանակի միայն թագաւորութեան նորա, և այն՝ մեծ նեղութիւններով՝ ըստ սովորութեան իւրում կ'այլայլէ պատմութիւնը։ Յաւելուած մը մուծանելով՝ գերի տանել կու տայ զՄանասէ զօրապետաց Ասորեստանի թագաւորի մը, զորոյ անունը չի տար, և ապա ապաշխարել տալով դարձունել կու տայ իւր աթոռը։ Մանասէ մեռաւ 640-ին նախ քան զՔր.։ Մանասէի գնացից հետևեցաւ որդին Ամոն որ թագաւորեց երկոտասան ամ։ 628-ին նստաւ Յուդայի գահը Յովսիա, և իսկ և իսկ փոխուեցաւ քաղաքականութիւնը։ Եհովայեանք, կուսակիցք ազգային կրօնից՝ միւսանգամ զօրացան, և հաստատուեցաւ ըստ ամենայնի ազգային աստուծոյն Եհովայի պաշտօնը։ Առ Յովսեաւ չի յիշուիր Ասորեստանի անունը, և Յովսիա կը թագաւորէ հանդարտ, մինչ յանկարծ Փարաւոն Նեքաւով, Եգիպտացի թագաւորը, կ'ելլէ Ասորեստանի երկիրներուն վրայ մինչև Եփրատ։ Յովսիա կ'երթայ դիմաւորել զՆեքաւով, և կ'սպանուի, անտարակոյս ի պատճառս հպատակութեանն, զոր ցուցեալ էին նախորդք նորա Մանասէ և Ամոն՝ Ասորեստանի թագաւորաց, ոխերիմ թշնամեաց Եգիպտոսի։ Յովսիայի քաղաքականութեան փոփոխութիւնը, ինչպէս նաև նուաճեալ Եգիպտացւոց համարձակութիւն առնելով յարձակիլն Ասորեստանի երկիրներուն վրայ՝ կը ցուցնեն թէ այս վերջիններուն զօրութիւնը բեկեալ էր։ Եւ արդարև ճիշդ այն տարին որ Յովսիա թագաւորեց՝ Մարք և Բաբելացիք ելած էին Նինուէի վրայ, որ, որպէս ասացաք՝ 625-ին առնուեցաւ, և բարձաւ Ասորեստանի թագաւորութիւնը։ Բայց Եգիպտոս չյաջողեցաւ ձեռք բերել իւր առաջին իշխանութիւնն Ասիոյ վրայ, քանզի Բաբելացիք առին սեմական միապետութիւնը։ Ուստի անմիջապէս յետ մահուան Յովսեայ յանկարծ կ'երևան Բաբելացիք.—«Յաւուրս նորա (Յովակիմայ, յաջորդին Յովսեայ) ել Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացւոց, և եղև նորա ծառայ Յովակիմ»։ «Եւ ոչ ևս յաւել—

կը յարէ պատմութիւնը—արքայն Եգիպտացւոց ելանել յերկրէն իւրմէ, քանզի առ արքայն Բաբելոնի ի հեղեղատէն Եգիպտացւոց մինչև ցգետըն Եփրատ զամենայն ինչ, որ էր արքային Եգիպտացւոց» (Դ. Թագ. ԻԴ. 1, 7), Այսպէս, թէպէտ յայտնապէս չի յիշուիր Հրէից գրոց մէջ Ասորեստանի կործանումը՝ սակայն բոլոր այս պարագաները կը ցուցնեն այս նշանաւոր դէպքը. որոյ բնական հետևանքն էին վերոյիշեալ փոփոխութիւնները։ Ուստի կարեմք ասել, թէ Հրէից ժամանակակից պատմութիւնը կը հաստատէ այն աւանդութիւնը, թէ նախ քան զՔր. 600-էն իբր 25 կամ 30 տարի առաջ վերցաւ Ասորեստանի ինքնակալութիւնը և անցաւ Բաբելացւոց։

12. Այսպէս ի Չորրորդ գրոց Թագաւորաց, որ գրեթէ ժամանակակից է՝ ծանօթ են մեզ Ասորեստանի թագաւորաց անունները և գործերն յԱսորիս և ի Պաղեստին, 769-էն մինչև ի սպառ անհետանալ նոյա ի պատմութենէ։ Հրէից գրոց այս վկայութիւնը կրնանք առանց երկբայութեան իբրև պատմական ընդունել, քանզի ոչ միայն աղբիւրն, այն է Չորրորդ գիրք Թագաւորաց, պատմուած դիպաց ժամանակաւ շատ մօտ է, այսինքն խմբագրեալ առ գերութեամբ՝ այլ և ազգին նախընթաց և յետագայ պատմութիւնն այնպէս կապուած գերկընդխառն է ընդ պատմութեան Ասորեստանեայց՝ որ ամենևին տեղի չի թողուր երկբայութեան։

13. Եսայեայ անուամբ ծանօթ մարգարէութեան առաջին երեսուն և հինգ գլուխներէն, որ մեծաւ մասամբ Եսայեայ են, ուստի և Ը. դարուն առաջին կէսուն գործ՝ կը տեսնուի, թէ բաց յԱսորւոց երկրէն և ի Պաղեստինէ՝ Ասորեստանի թագաւորք տիրած էին ուրիշ շատ երկիրներու։ Եսայի Ժ. գլխոյն մէջ ըստ Եբրայական բնագրին՝ Ասորեստանի թագաւորը կ'անուանէ գաւազան բարկութեան Եհովայի, զոր այսպէս խօսել կու տայ. «Ցուպն որ ի ձեռին նորա՝ սրտմտութիւն իմ է. առաքեցի զնա յազգ նենգաւոր, և ետու նմա իշխանութիւն ի վերայ ժողովրդոց, ընդ որս ցասուցեալ է իմ, ժողովել զաւար և յափշտակել, և առնել զնոսա կոխան իբրև զկաւ գռեհաց։ Եւ նա... եդ ի մտի իւրում սատակել ջնջել զազգս ոչ սակաւս... և ասէ. Զօրութեամբ բազկի իմոյ և իմաստութեամբ իմով արարի, քանզի իմ է հանճար, և բարձի զսահմանս ազգաց, և առի յաւար զմեծութիւնս նոցա, և իբրև հզօր նուաճեցի զբնակիչս նոցա և եգիտ ձեռն իմ զստացուածս ժողովրդոց իբրև զբոյն, և ժողովեցի զամենայն երկիր, որպէս որ ժողովիցէ զձուս թողեալս, և չէր որ շարժէր զթև իւր կամ բանայր զբերան իւր և ճիկ հանէր»։ Ասորեստանի մեծութիւնը կը նկարագրէ նաև Եզեկիէլ ժամանակակից և ականատես՝ այլաբանօրէն, Լիբանանու նոճւոյ նմանութեամբ

իւր բառացարդ ոճով.—«Ասուր եբրև նոճ մի ի Լիբանան, գեղեցիկ շառաւիղօք և խիտ ոստովք և բարձր մեծութեամբ։ Ի մէջ ամպոց եղև գլուխ նորա, և ջուր սնոյց զնա, և անդունդք բարձրացուցին զնա. և զգետս իւր ած շուրջ զտնկովք իւրովք, և զանտառախիտս իւր արձակեաց ընդ ամենայն փայտս դաշտին։ Վասն այնորիկ բարձրացաւ մեծութիւն նորա քան զամենայն ծառոց դաշտին, և տարածեցան ոստք նորա, և բարձրացան շառաւիղք նորա ի ջուրց բազմաց։ Ի տարածանել իւրում՝ ի շառաւիղս նորա բնակեցին ամենայն թռչունք երկնից, և ի ներքոյ ոստոց նորա ծնան ամենայն գազանք դաշտի, և ընդ հովանեաւ նորա բնակեցին ամենայն բազմութիւնք ազգաց, և եղև գեղեցիկ բարձրութեամբ իւրով, վասն երկայնութեան ոստոց իւրոց, զի եղեն արմատք նորա ի ջուրս բազումս։ Սարդն և սարոյն և նոճ ի դրախտին Աստուծոյ ոչ հաւասարեցին շառաւիղաց նորա, մայրքն և սօսիք ոչ նմանեցին ոստոց նորա. ամենայն փայտ ի դրախտին Աստուծոյ ոչ նմանեցին նմա գեղեցկութեամբ վասն անտառախիտ ոստոց նորա, և նախանձեցան նմա ամենայն ծառք դրախտին փափկութեան Աստուծոյ» (Եզեկ. ԼԱ. 3—9)։ Եսայի Է. և Ը. գլուխներուն մէջ կը ցուցնէ, թէ յառաջ քան զնուաճումն Իսրայէլի և Ասորեստանի թագաւորք տիրած էին Միջագետաց մինչև Եփրատ, զոր գետ կոչել սովոր են Եբրայեցւոց գիրք.—«Ածցէ Տէր ի վերայ քո (Իսրայէլի թագաւորին) և ի վերայ ժողովրդեան քո և ի վերայ տան հօր քո աւուրս, որ ոչ եկին յօրէ յորմէ զատաւ Եփրեմ ի Յուդայէ, այսինքն զարքայն Ասորեստանեայց։ ...Յաւուր յայնմիկ գերծցէ Տէր ածելեաւ վարձելով, այսինքն ի ձեռն արքային Ասորեստանեայց որ յայնկոյս գետոյն՝ զգլուխ և զմազ ոտից, զմօրուս ևս վերացէ»։ «Փոխանակ զի արհամարհեաց ժողովուրդս այս զջուրն Սելովայ որ գնայ խաղաղ, և հաճեցաւ ընդ Ռասին և ընդ որդին Ռոմելայ՝ վասն այսորիկ ահա հանցէ Տէր ի վերայ նոցա զջուր գետոյն, զհզօրն և զյորդ, զարքայն Ասորեստանեայց և զամենայն զօրութիւն նորա»։ ԺԱ. գլխոյն մէջ կը յիշուի Եգիպտոս ընդ իշխանութեամբ Ասորեստանի.—«Յաւուր յայնմիկ եղիցի ճանապարհ Եգիպտացւոցն առ Ասորեստանեայս, և մտցեն Ասորեստանեայքն յԵգիպտոս, և Եգիպտացիքն երթիցեն առ Ասորեստանեայս, և ծառայեսցեն Եգիպտացիքն Ասորեստանեայցն»։ Ի. և ԻԳ. գլուխներուն մէջ կը յիշուի Եթովպացւոց նուաճումը.—«Եւ տարցի արքայն Ասորեստանեայց զԵթովպացիսն յաքսոր, զերիտասարդս և զծերս նոցա մերկս և բոկս, խայտառակեալ զամօթ նոցա ի նախատինս Եգիպտացւոց։ Եւ սոսկումն ունիցի զնոսա (զՓղշտացիս) և ամաչեսցեն վասն Եթովպացւոցն որ ապաւէն էին նոցա, և վասն Եգիպտացւոցն որ էին

փառք նոցա։ Եւ ասասցեն յաւուր յայնմիկ բնակիչք երկրիս այսորիկ որ առ ծովեզերըն (Փղշտացիք). Ահա այսպէս եղև ապաւէն մեր, առ որ փախուցեալ էաք ապրեցուցանել զանձինս մեր յերեսաց արքային Ասորեստանեայց և գտանել օգնութիւն ի նոցանէ. արդ մեք զիա՞րդ ապրեսցուք» (Ես. Ի. 4—6)։ ԻԳ. գլուխը կը նկարագրէ Փիւնիկեցւոց նուաճումը, և զԲաբելոն կը ցուցնէ ընդ իշխանութեամբ Ասորեստանի. «Յամօթ լեր, Սիդոն, ասէ ծով... Յորժամ լուր լիցի յերկրին Եգիպտացւոց՝ ցաւք կալցեն զնա վասն Տիւրոսի... վարեսցի նա յոտից իւրոց ի պանդխտութիւն հեռաւոր։ Տէր զօրութեանց հրամայեաց վասն Քանանու՝ կորուսանել զզօրութիւն նորա։ Յոտն կաց և անց ընդ ծով, և թէպէտ գնասցես ի Կիտիիս՝ և ոչ անդ լիցի քեզ հանգիստ. և եթէ յերկիրն Քաղդէացւոց՝ սակայն և այն աւերեալ է յԱսորեստանեայց և անդ դուլ և դադար քեզ ոչ գտանիցի»։ Իսրայէլի գերիներուն համար կը պատմուի, թէ Թագղաթփաղասար և ապա Սաղմանասար տարին զնոսա Մարաց և Կասպից կողմերը, զորս պատմութիւնն Ասորեստան կ'անուանէ, ուստի յայտնի է, թէ Ասորեստանցւոց կը վերաբերէին այն երկիրները.— «Եւ խաղացոյց (Թագղաթփաղասար) զԻսրայէլ յԱսորեստանեայս, և բնակեցոյց զնոսա ի Քաղա և ի Քաբովր և առ գետովն Գովզանայ ի քաղաքս Մարաց (Դ. Թագ. ԺԷ. 6)։ Նոյնը կը պատմուի նաև այն գերեաց համար, զորս յետոյ Սաղմանասար տարաւ Ասորեստան։ Գովզան Մարաց երկրին մէջ գետ է, որ կը թափի Կասպից ծովը։ Նոյնպէս յետ գերութեան Իսրայէլի ի Սաղմանասարայ՝ Պաղեստին ղրկուած գաղթական ազգաց անուններէն կը տեսնուի, թէ բուն Ասորեստանէ դուրս շատ երկիրներ էին ընդ իշխանութեամբ Ասորեստանի թագաւորաց.—«Եւ ած արքայն Ասորեստանեայց ի Բաբելոնէ և ի Քութայ և յԱւայ և յԵմաթայ և ի Սեփարուիմայ, և բընակեցոյց զնոսա ի քաղաքս Սամարեայ փոխանակ որդւոցն Իսրայելի...։ Եւ արք Բաբելոնի արարին զՍոքքովթ-Բանովթ, և արք Քութայ արարին զՆերգաղ (Հայերէն թարգմանութիւնն ունի Անգեղ), և արք Եմաթայ արարին զԱսիմաթ, և Աւացիք արարին զՆեբաս և զԹարթակ, և Սեփարուիմացիքն այրէին զորդիս իւրեանց ի հուր Ադրամելեքայ և Անամելեքայ աստուածոց Սեփարուիմայ» (Դ. Թագ. ԺԷ. 24, 30, 31)։ Բաբելոն ծանօթ է. իսկ Քութ, Աւա, Եմաթ և Սեփարուիմ՝ երկիրներ էին հեռի յԱսորեստանէ, ի հիւսիսակողման Միջագետաց, Ասորւոց երկրին և Փիւնիկէի, մինչև Իսոսի կամ Հայոց ծոցը, կամ աւելի բացայայտ՝ Կիլիկիոյ և Կապադովկիոյ սահմանները։ Նշանաւոր է նաև Սենեքերիմայ պատգամաւորին Ռափսակայ խօսքն առ Եզեկիա. «Ահա դու քեզէն իսկ լուար զամենայն ինչ

զոր արարին թագաւորք Ասորեստանեայց ընդ ամենայն աշխարհս սատակել զնոսա, և դու փրկիցիս: Միթէ փրկեցին զնոսա աստուածք ազգաց, զորս սատականեցին հարք իմ, զԳովզան և զՔառան և զՌափաթ և զորդիսն Եդեմայ առ ծովեզերբն: Ո՞ւր է արքայն Եմաթայ և արքայն Արփաթայ, և արքայն քաղաքին Սեփարուիմայ, Անայ և Աւայ» (Դ. Թագ. ԺԹ. 11—13): Յայտնի է ուրեմն, թէ առ նախորդօք Սենեքերիմայ, թերևս յառաջ իսկ քան զԸ. դար նախ քան զՔր.՝ նուաճեալ էին շատ երկիրներ յարևելից, ի հիւսիսոյ, ի հարաւոյ և յարևմտից Հրէաստանի: Նոյն ինքն Եզեկիա կը վկայէ, թէ Ասորեստանի թագաւորք տիրած էին շատ երկիրներու.—«Արդարև, տէր, աւերեցին թագաւորք Ասորեստանեայց զազգս և զերկիր նոցա, և ետուն զաստուածս նոցա հրոյ» (Դ. Թագ. ԺԹ. 17): Հօն արժան կը համարինք յիշել հին յունական աւանդութիւն մը, որ զԱսորեստանեայս առ Տրովական պատերազմաւ, այն է 1200-ին ն. ք. զՔր.՝ տէր կը դնէ մեծի մասին Փոքուն Ասիոյ, քանզի ըստ Համերոսի Տևտամոս արքայ Ասորեստանեայց, իբրև դրացի Տրովացւոց՝ զՄեմնոն բիւր մը զօրօք կը ղրկէ յօգնութիւն Պրիամու. աւանդութիւն մը որ չկրնար յետոյ լինել քան զԹ. դար նախ քան զՔր., այսինքն քան զՊիսիստրատոս, առ որով խմբագրեցաւ Համերոս:

14. Արմենիա մանաւանդ, իբրև սահմանակից Ասորեստանի ի հարաւոյ արևելից՝ չկրնէր մնալ ազատ յազդեցութենէ զինուց թագաւորաց Ասորեստանի, բայց ստոյգ պատմական վկայութիւն չունինք առ այս: Բաց յԵգիպտացւոց և ի Մարաց՝ միւս ազգերը զորս վերագոյն յիշեցաք Հրէից գիրքերէն իբրև հպատակ Ասորեստանի՝ կը վերաբերէին սեմական կամ արամէական ցեղին, այնպէս որ մարթ է ասել, թէ Ասորեստանի թագաւորաց դիտաւորութիւնը և ջանքն էր մանաւանդ բոլոր արամէական ազգերը միացնել և առնել մի հզօր պետութիւն ընդ գաւազանաւ իւրեանց, որպէս և արարին իսկ: Զիարդ և իցէ՝ յայտնի չէ ի պատմութենէ, թէ Ասորեստանի թագաւորք ջանացին կամ մանաւանդ յաջողեցան անցնիլ անդր քան զգօտին Կորդուաց և նուաճել Արմենիոյ ազգերը: Երեմիայէ յիշուած թագաւորութիւնք, Արարատ, Մինի, Աքանազ, որք, մանաւանդ առաջինը, Արմենիոյ թագաւորութիւններ էին՝ կային հարկաւ յառաջ քան զկործանումն Բաբելոնի, այն է իբր 100 ամօք յետոյ քան զկործանումն Ասորեստանեայց, և էին բաւական երևելի, մինչև լինել գործակից Մարաց և Պարսից՝ յիսպառ բարձումն արամէական միապետութեան ի Բաբելացւոց, առ որս անցած էր այն միապետութիւնն յետ կործանման Նինուէի, և առ մամբ Բաբելոնի անցաւ արիական կամ հնդեւրոպական ցեղին:

Բայց ոչ միայն յառաջ Բաբելոնի, այն է 538-ին, այլ և երբ դար ու կէս յառաջ քան զայն թուական, այսինքն 707-ին նախ քան զՔր. առ Սենեքերիմաւ՝ ի գիրս Հրէից կը յիշուի Երեմիայի երեք թագաւորութեանց մին, Արարատ, իբրև ազատ երկիր։ Ըստ Չորրորդ Գրոց Թագաւորաց (Գլ. ԺԹ. 37), երկու որդիք Սենեքերիմայ յետ սպանանելոյ զհայրն իւրեանց փախան Արարատայ երկիրը.—«Եւ եղև մինչդեռ երկիր պագանէր (Սենեքերիմ) ի տան Նեսրաքայ աստուածոյ իւրում՝ Ադրամելէք և Սարասար որդիք նորա հարին զնա սրով, և ինքեանք զերծան յերկիրն Արարատայ»։ Յայտնի է թէ Արարատ չէր, դէթ յայնժամ, ընդ իշխանութեամբ կամ ընդ ազդեցութեամբ Ասորեստանի, ապա թէ ոչ հայրասպանքն չէին համարձակիր փախչել հոն։ Մանաւանդ որ ըստ Խորենացւոյն՝ յայնժամու Հայոց թագաւորն, որ Սկայորդի կը կոչուէր՝ պատուով ընկալաւ զնոսա, և ի նոցանէ սերեցան երկու երևելի ցեղք Հայոց, Արծրունիք և Գնունիք.—«Յորոց զմին յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այսինքն զՍանասարն... իսկ Արգամոզանն (Ադրամելէք) յարևելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ։ Ի սմանէ ասէ պատմագիրն (Մարիբաս) լինել զԱրծրունիս և զԳնունիս» (Խոր. Ա. ԻԳ.)։ Քան զվկայութիւն Խորենացւոյն զօրաւոր է նոյն իսկ Արծրունեաց ազգին աւանդութիւնը, որ դեռ կենդանի էր ի սկզբան Դ. դարուն։ Երբ Յազկերտի որդին Շապուհ ի մականախաղուն զարկաւ մականաւ Տաւասպայ Արծրունւոյ, ասելով, «Ծանիր զքեզ»՝ Տաւասպ պատասխանեց. «Այո, ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո զբարձն արքայի համբուրել» (Խոր. Գ. ԾԵ.)։

15. Արդարև Դիոդորոս Սիկեղացի յԱսորեստանեայց պատմութեան, զոր ի Կտեսեայ առած է՝ կը յիշէ Բարզանէս անուն Արմէն թագաւոր մը յաղթուած ի Նինոսէ և նորէն հաստատուած ի թագաւորութեան իւրում (Դիոդ. Սիկ. Բ. Ա.)։ Հաւանական է թէ Ասորեստանի աշխարհակալներէն մին բռնեց կամ ի նեղ արկ Արմենիոյ թագաւոր մը, և խորագէտ Հայը զիջանելով քան զինքն հզօրագունին՝ հաստատուեցաւ ի թագաւորութեան։ Բայց հաւանականութիւնը պատմութիւն չէ, և Դիոդորոսի յիշեալ պատմութիւնը չունի պատմական երաշխաւորութիւն, քանզի ո՛չ Դիոդորոս ժամանակակից է, և ոչ աղբիւրն, ուստի առած է՝ ծանօթ։

Դիտողութեան արժանի է սակայն Բարզանէս անունն, որ Հայոց սովորական Վարզանէս կամ Վարդան անուան յունարէն թարգմանութիւնն է։ Եթէ ապացուցուի այս պատմութիւնը՝ կ'ապացուցուի նաև թէ ազգը որոյ թագաւոր էր Վարդան՝ հնդեւրոպական էր.

քանզի Վարդան՝ հնդեւրոպական բառ է և կը նշանակէ աճեալ, որոյ արմատը վարդ, լծորդ ընդ վարժ բառին՝ կը գտնուի մեր վարդապետ, վարդապետել, վարդապետութիւն բառերուն մէջ։

16. Խորենացին անուամբ ի Մարիբասայ, բայց իրօք ի Կտեսեայ առնլով՝ կը յիշէ նոյն պատմութիւնը պարագաներու փոփոխմամբ։ Ըստ Խորենացւոյն Նինոս ոչ թէ կը յաղթէ Հայոց թագաւորին, այլ առ երկիւղի հրաման տայ նմա վարել զիւր իշխանութիւն, համարձակութիւն տալով՝ ըստ օրինի թագաւորաց Ասորեստանի վարսակալ կապել մարգարտէ, և երկրորդ նորա կոչիլ.—«Նինոս թագաւորեալ ի Նինուէ . . . խորհէր բառնալ ջնջել զամենայն ճետ սերմանեալ յարանց քաջին Հայկայ. այլ երկիւղ կասկածանաց խարդաւանակ լինելոյ իւրոյ թագաւորութեան զայսպիսի համարեալ իրագործութիւն՝ ծածկէ զչարութիւնն, և հրամայէ նմա (Արամայ) զայն իշխանութիւն անկասկածաբար ունել, և համարձակութիւն տայ նմա վարսակալ ածել մարգարտէ և երկրորդ նորա կոչել» (Խոր. Ա. ԺԴ.)։ Խորենացւոյն աղբիւրը, որպէս զի մեկնէ Արմէն անունը, ինչպէս նաև Մեծ, Փոքր, Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք կոչումները՝ հայ թագաւորին Բարզանէս անունը կը փոխէ յԱրամ, տիրել կու տայ նմա Հայաստանի արևմտեան կողման և յանուն նորա կոչել կու տայ զՀայս՝ Արմէն։ Բայց ո՛չ Արմէն անունը, և ոչ Մեծ և Փոքր, Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմենիա կոչումները կրնան Արամէն գալ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։ Խորենացին յետ դնելոյ զՀայս առ Արամաւ բարեկամ Ասորեստանեայց՝ յաջորդ տալով Արամայ զԱրա՝ կը թշնամացնէ զՀայս ընդ Ասորեստանեայս առ փառաշուռն Շամիրամաւ, և ապա առ յաջորդօք նորա, մինչև ի կործանումն Նինուէի, կը դնէ զՀայս հպատակս կամ հարկատուս Ասորեստանի։ Բայց ոչ այս պատմութեան միայն, այլ և նոյն իսկ մարիբասեան աղբեր վրայ տեսցուք ի ստորև։

17. Արդի հնարանք, որպէս թէ բևեռագիրներէն առնլով՝ բաւական երկայն և բոլորովին նոր պատմութիւն մը կու տան մեզ զԱրմենիոյ առ Ասորեստանեօք։

«Մինչև Սարեուքին (721—704)—ասէ Մասբերոյ, (Պատմ. Արև. ազգ. Գիրք Դ. Գլ. Բ.)—Ասորեստան մեծացած էր կորստեամբ այնպիսի ցեղից և թագաւորութեանց, որ հզօր տէրութեան մը առջև երկար դիմանալու չէին բաւական։ Այն ցեղք և թագաւորութիւնք վերջապէս բարձան ի միջոյ, բայց կային տէրութիւնք պնդակազմք իբրև զԱսորեստան, որք կարող էին ոչ միայն զդէմ ունել, այլ և հարուած ևս տալ հզօր տէրութեան։ Երբ Սարեուքին թագաւորեց՝ Ասորեստան ունէր սահմանակից ինքեան երիս այսպիսի տէրութիւնս,

այն է զԵգիպտոս յարեւմտից Հարաւոյ, զթագաւորութիւնն Ուրարդւոյ (Արարատայ) ի հիւսիսոյ և զհին թագաւորութիւնն Եղամայ յարևելից Հարաւոյ։ Եգիպտոս, Ուրարդի և Եղամ էին թումբք ընդէմ Ասորեստանի և իբրև միջնորմ ի մէջ նորա և մնացեալ աշխարհի։ Արդարև Սարեուքին և յաջորդք նորա իբրև զամս յիսուն տարին յաղթութիւն ի վերայ յաղթութեան այն երեք ազգաց դէմ. առին զքաղաքս նոցա, եդին ի նոսա կուսակալներ, հարկատու իշխաններ, պահակապաններ. դիւրին չէր սակայն Եգիպտոսի պէս երկիր մը ընկճել ի սպառ, ինչպէս ընկճեցին զԱսորիս և զՀրէաստան. ուստի և յաջողանք Ասորեստանեայց առ Նեղոսի, Երասխայ և Ուլայի՝ առօրեայ միայն էին, և այն յաջողանաց արագ կը յաջորդէին ձախողանք։ Բանակք նոցա, հզօրագոյնք անգամ, այն ինչ կը կարծէին լինել յակատանի՝ յանկարծ կը գտնէին զինքեանս վանեալ և վկանդեալ։ Ստէպ յաղթութիւններով մաշեցուցին թշնամին, բայց մաշեցան միանգամայն ինքեանք։ Մինչ զԵգիպտոս և զԵղամ նուաճեցին՝ կը կարծէին թէ աշխատեցան վասն իւրեանց, բայց շուտով տեսնուեցաւ թէ Պարսից համար աշխատած էին»։

Սարեուքին, ըստ բևեռագրաց, անդէն յառաջնում ամի թագաւորութեան իւրոյ ել ախոյեան իւր տէրութեան այն երեք թըշնամեաց դէմ։ Յետ հարկանելոյ 721-ին Եղամայ թագաւորը Գումպանիկաս՝ յաջորդ ամին յարձակեցաւ ի վերայ Սաբակայ արքային Եգիպտացւոց, որ յաղթուելով փախաւ ի վերին Եգիպտոս ուր մեռաւ։ Յետ պարտութեանն Եգիպտոսի՝ կարգն Ուրարդւոյ էր։ Զայնու ժամանակաւ, ըստ Մասբերոյի, Արմենիոյ լեռնային երկիրն, ուր կը բխեն Եփրատ և Տիգրիս՝ կը բնակէր Վրաց և ուրիշ Կովկասեան ազգաց հետ համազգի ցեղ մը, տարբեր յայժմու Հայոց։ Արմենիա կը բաժնուէր մանր մանր տէրութեանց, որոց անուանք, ասէ Մասբերոյ, ծանօթ են մեզ, բայց տեղերը միշտ դիւրաւ չենք կրնար որոշել աշխարհացուցին վրայ։ Այն մանր մանր տէրութեանց գլխաւորներն էին,— Նաիրի (Արմենիոյ հարաւային արևմտեան մասը, Աղձնիք, Ծոփք) յակունս Եփրատայ և Տիգրիսի, Մաննա (Վան) յարևելից հարաւոյ, և Մուսասիր (Մուշ) ի հիւսիսոյ Վանայ ծովուն, Մեղտիս լերանց (այժմ գաւառ Կարնոյ) և Միլիտի (Մալաթիոյ) իշխանութիւններն հանդերձ Ուրարդւոյ (Արարատայ) թագաւորութեամբ, որում յաջողած էր բոլոր այն դրացի ցեղերը կամ թագաւորութիւններն առնել ինքեան դաշնակից։ Մինչև Սարեուքին Ասորեստանի թագաւորք չկրցան այնպէս ստէպ և ազատ արշաւել յԱրմենիա, ինչպէս կ'արշաւէին ի Միջագետս, յԱսորիս և ի Պաղեստին, թէ վասն ամրութեան երկրին,— քանզի իբրև ամբարտակ կային

առաջի նոցա լերինք Արմենիոյ դժուարամատոյցք, ուր բաց ի դըժ-
ուարութենէ ուրիշ օգուտ պիտի չկրնային քաղել, — և թէ վասն քա-
ջութեան բնակչացն։ Բայց և այնպէս Թուկղաթ-աբաղ-ասար Ա.
(1130) յարձակած էր Նաիրիի վրայ, զոր յաջորդք նորա նուաճեցին
մեծաւ մասամբ, այնպէս որ յԹ. դարուն նախ քան զՔր. Տիգրիսի
վերնագաւառը գրեթէ ամբողջ հարկատու կամ հպատակ էր Ասորես-
տանցւոց։ Ասուր-նազիր աբաղ (883—857) սկսաւ Մաննայի դէմ կռ-
ուիլ։ Սաղմանասար Գ. գնաց աւելի յառաջ և յարձակեցաւ Ուրար-
դւոյ վրայ։ Զարկաւ 841-ին զթագաւոր ևլկրին զԱրամէ, 832-էն
զյաջորդ նորա Սատուրի, 830-ին՝ Մաննայի թագաւորին զօրքը, յա-
ջորդ ամին՝ Ուրարդւոյ զօրքը. բայց այսու ամենայնիւ ոչինչ օգտե-
ցաւ, քանզի այն ինչ կը յաղթուէր թշնամին՝ անդէն գլուխ կը
վերցնէր նորէն։ Բին-նիրարի Գ. 813-էն մինչև 810 երկիցս, և
Սաղմանասար Գ. 787-էն մինչև 784 չորիցս արշաւեց ի վերայ
Մաննայի, և ապա երկիցս, այսինքն 782-ին և 780-ին՝ ի վերայ Ու-
րարդւոյ։ Ուրարդի չնուաճեցաւ, նա մանաւանդ օգտեցաւ։ Ի հա-
ղորդակցութենէ ասոր ընդ Ասորեստանեայս ծաղկեցաւ երկիրը կըր-
թութեամբ և արուեստիւք. նա փոխ առաւ Ասորեստանցւոց գրե-
լոյ եղանակն անգամ, բևեռագրութիւնը։ Մին ի թագաւորաց եր-
կրին Պէլիտուրիս Ա. որդի Լուտիպրեայ՝ ետ բերել ի Նինուէէ դպիրս
որ իւրեանց (Ասորեստանի) լեզուաւ յօրինեցին պաշտօնական արձա-
նագրութիւններ, Ասորեստանի թագաւորաց փառաւոր տիտղոսները
տալով Ուրարդւոյ թագաւորին։ Նինուէի լեզուն եղաւ ժամանակ մը
Ուրարդւոյ գիտնոց լեզուն, յետոյ առ Իսպուինաւ Ա.-ով, որդւով
Պէլիտուրիսի՝ Ասորեստանեայց գիրն իւիք իւիք փոփոխութեամբ
արկաւ ի կիր բնիկ լեզուաւ գրելու։ Բայց առ Թուկղաթ-աբաղ-ասա-
րաւ Բ-իւ Ասորեստանցիք զօրացան միւսանգամ։ Ուրարդւոյ թագա-
ւորը Սարտա չարաչար յաղթուեցաւ նախ 742-ին, ապա 734-ին, այն-
պէս որ ստիպուեցաւ հաշտութիւն խնդրել։

Սարտայի յաջորդը Մինուաս Ա. յիշուելու արժանի գործ մը
չունի. բայց Մինուասայ երէց որդին Ուրսա եղև ահեղ թշնամի
Սարեուքինի։ Ուրսա խորհեցաւ ազատել զինք և զդրացիս իւր յազ-
դեցութենէ Ասորեստանեայց, և ամէն միջոց գործածեց այս նպա-
տակին հասնելու։ Նախ ջանաց Մաննայի թագաւորն Իրանզու զա-
տել Ասորեստանի հետ դաշնակցութենէն, և երբ Իրանզու չհաճե-
ցաւ՝ Ուրսա Զիզարդուի թագաւորին Միտդայի հետ միաբանելով
ապստամբեցոյց այն երկրին (Մաննայի) ժողովուրդն Իրանզուի դէմ։
Սարեուքին փութաց յօգնութիւն դաշնակցին իւրոյ. առաւ յարձակ-
մամբ Մաննայի երկու քաղաքները, Սուանտաքուլ և Ծուրտուքա-

որ յարած էին ի Միգադդի, Հրձիգ արար զնոսա, և զբնակիչս Նո-
ցա տարաւ յԱսորիս (719)։ Մեծամեծ ապստամբութիւններ, որ Սարե-
ուքինի տէրութեան մէջ բրթան՝ արգելին զնա յառաջ տանել պա-
տերազմն ընդդէմ Ուրսայի և դաշնաւորաց նորա։ Սարեուքին
յետ իբր երկու տարի կռուելոյ յերկրին Սինուքդայի (718) և ըն-
կենլոյ յաթոռոյ զարքայն Քարքեմիսի զՓիսիրիս (717), երբ նորէն
եկաւ յԱրմենիա՝ Մաննայի թագաւորն Իրանզու մեռած, որդին Ազա
յապստամբութեան ուրեք սպանուած, և յաջորդած էր նմա Ուլլու-
սուն, իւր բերդաքաղաքներէն քսան և երկու բերդաքաղաք իբրև
գրաւ հաւատարմութեան տալով Ուրսայի։ Սարեուքին աճապարեց
զարկաւ զՈւլլուսուն և զՄիգադդի և ապականեց երկիրը որ ի մէջ
Ուրմիոյ և Վանայ ծովերուն. բռնեց նաև զՊակատադդի, Միլտիս
լերանց թագաւորը, մորթել տուաւ զնա կենդանւոյն անդ՝ ուր Ազա
սպանուած էր։ Ուլլուսուն առ երկիւղի, թէ գուցէ նոյն չարիք ին-
քեան ևս պատահէին՝ «փութաց իբրև թռչուն», եկաւ և ինկաւ
յաղթողին (Սարեուքինի) ոտքը։ Սարեուքին ներեց նմա և ետ նմա
միւսանգամ զթագաւորութիւն նորա։ Փոքր միւս ևս՝ և ձեռք պիտի
ինկնար նաև Ուրսա, եթէ Սարեուքին չստիպուէր ապստամբութեան մը
պատճառաւ երթալ իւր տէրութեան հարաւային կողմը (716)։ Յաջորդ
ամին (715) Ուլլուսունի ապստամբութիւնը կոչեց դարձեալ ի հիւսիս
զՍարեուքին, որոյ երևելը միայն բաւական եղաւ ցածուցանել ապստամ-
բութիւնը։ Նոյն տարին արշաւեց Սարեուքին հիւսիսային կամ փոքր
Մարաց վրայ և անդուստ մտաւ յՈւրարդի (714)։ Ուրսա յաղթուե-
ցաւ չարաչար, և լքեալ թողեալ յամենեցունց՝ խոյս ետ ի լերինս,
ուր առանց գտնելու ամուր ապաստան՝ շրջեցաւ աստանդական իբ-
րև հինգ ամիս։ Այս միջոցին Սարեուքին աւերեց զՈւրարդի. Ուր-
սայի քաղաքներէն շատք տրուեցան Ուլլուսունի։ Յաղթուեցաւ նաև
Մուսասիրի թագաւորն Ուրզանայ, Ուրսայի վերջին դաշնակիցը։ Ուր-
սա այս ձախորդութեանց լուրն առնելով՝ առ յուսահատութեան
չոքաւ զիւրովի։

Բայց մահուամբ Ուրսայի իսպառ չնուաճուեցաւ Ուրարդի։ Եղ-
բայր և յաջորդ Ուրսայի Արգիշտիս՝ վանեց զԱսորեստանեայս։ Սա-
րեուքին այնուհետև դարձոյց իւր զօրութիւնը Մարաց և ուրիշ ազ-
գաց վրայ։

Օրերդի թարգմանութենէն առնլով կու տանք հոս հետաքր-
քիր ընթերցողաց հատուած մը Սարեուքինի արձանագրութիւններէն
որ ի Խորսապատ։ «Ամրիս, Խուլուգգուի թագաւորն՝ գրժեց ուխ-
տին որ ընդ իս։ Յղեց զդեսպան իւր առ Ուրսա արքայ Ուրարդւոյ,
և առ Միտա արքայ Մասաքայ։ Վանայ թագաւորն Իրանզու, զոր-

չափ կենդանի էր՝ էր հնազանդ և հաւատարիմ իշխանութեան իմում. բայց բախտն երարձ զնա (մեռաւ)։ Հպատակք նորա զորդին զԱզա նստուցին գահը։ Ուրարդեցին Ուրսա Միդաս, Զիգարդու և Միսիանդի լերանց ժողովուրդներու հետ դաւաճանութիւն նիւթեց և ձգեց յապստամբութիւն զՎանեցիս։ Սոքա զմարմին տեառն իրեանց Ազայի թողին լերանց գլուխները։ Ազայի եղբայրն Ուլլուսուն Վանեցին, որ եղաւ յաթոռ նորա՝ միտեցաւ յՈւրարդեցին Ուրսա և ետ նմա 22 ամուր տեղիս հանդերձ պահանորդօքն որ ի նոսա։ Սրտմտեալ իմ մեծաւ բարկութեամբ՝ հանդէս արարի ամենայն զօրաց աստուածոյն Ասուր. ուխտ եդի ի սրտի իմում և խաղացի յառաջ այն երկիրներուն վրայ։ Ուլլուսուն Վանեցին իմ արշաւանացս մօտենալը լսելով՝ ել արտաքս զօրօք իւրովք և կեցաւ ամուր տեղեր ի հովիտս լերանց բարձանց։ Առի և ի մոխիր դարձուցի զքաղաքս թագաւորութեան նորա զԻզիրդի և զքաղաքսն զԻզիպիա և զԱրմիդ և ամրոցս աչագինս։ Սպանի՝ ով որ Ուրարդեցւոյն Ուրսայի կը վերաբերէր ի լերինս նոցա բարձունս։ Կալայ յարքունի տանէ նորա ոգիս 250. դրաւեցի 55 պարսպաւոր քաղաք, յորոց ութն հասարակ քաղաք էր, և մեսասանն՝ անմատոյց բերդեր։ Ուլլուսունի 22 քաղաքները զորս Ուրսա առած էր՝ Ասորեստանի հետ միացուցի։ Յայնժամ Ուլլուսուն իւր բարձր լեռներէն ելաւ արագ իբրև զթռչուն և եկն առ իս աղաչելով։ Զանթիւ յանցանս նորա ներեցի, անօրէնութիւնք նորա ջնջեցան։ Զերկիր նորա ետու նմա, և հաստատեցի զնա միւսանգամ իւր թագաւորութեան աթոռին վրայ։ Երկու ամրոցներն և 22 մեծամեծ քաղաքները զորս առած էր Ուրսա՝ առի Ուլլուսունի, աշխատ եղէ բազումս վասն խաղաղութեան երկրի նորա։ Ուրզանա, Մուսասիր քաղաքին թագաւորը, Ուրարդեցի Ուրսային ապաւինելով՝ հպատակութիւնը գլացած էր ինձ։ Ուժով զօրութեան իմոյ և խորագիտութեամբ տիրեցի Մուսասիր քաղաքին. և նա (թագաւորը) կեանքն ազատելու համար փախաւ մազապուր և անկաւ ի լերինս։ Տիրաբար վարուեցայ ընդդէմ Մուսասիրի։ Զկին Ուրզանայի, զուստերս և զդստերս նորա, զանասունս և զամենայն զգանձն և որ ինչ էր յարքունիս նորա՝ առի, և 2,100 մարդ վարեցի ի գերութիւն, և զՀալդիա և զՊակպարդու զաստուածս Ուրսայի, նոյնպէս զաստուածս Ուրզանայի և զնուիրական անօթս նոցա առի։ Իբրև լուաւ Ուրսա արքայն Ուրարդւոյ զառն Մուսասիրի և զյափշտակութիւն աստուածոյն իւրոյ Հալդիայի՝ հար զանձն դաշունիւ և փչեաց զոգին ի մէջ բազկաց մեծամեծաց իւրոց»։

18. Ահա, ըստ արդի հնութենից ոմանց՝ բևեռագիրներէն հանուած Հայոց կամ Հայաստանի պատմութիւն մը բոլորովին նոր։

Ընդունինք թէ Ուրարդին Արարատ է, Մաննա՝ թերևս Վան
կամ Երրայեցւոց Միննին. բայց Նաիրի, Մուսասիր, Միզտա, Մի-
սիանդի՝ բոլորովին անլուր անուններ են. ոչինչ ընդհատ անլուր
և անծանօթ են թագաւորաց անունք—Սատուրի, Լուտիպրի,
Պելիտուրիս, Իսպուին, Սարտա, Մինուաս, Ուրսա, Արգիշտիս, Իրան-
զու, Ագա, Ուլլուսուն, և քաղաքներ՝ Սանտաքուլ, Տուրտուքա, Ի-
գիրդի, Իզիպլա, ինչպէս նաև Հալտիա, Պակապարդու աստուածներ։
Չենք կրնար երբե նոր գիտ ճանչնալ և երբե նոր ստոյգ ընդու-
նել պատմութիւն մը, որոյ աղբիւրը, բևեռագիրք՝ բոլորովին ան-
մատչելի են մեզ։ Ուստի Նինուէի բևեռագիրներէն հանուած այս
պատմութիւնը գնելով իբր երկու հազար տարի առաջ նոյն Նին-
ուէի դիւաններէն հանուած Մարիբասեան պատմութեան քով տես-
նենք Ասորեստանի տէրութեան վախճանը։

19. Ըստ հասարակ աւանդութեան՝ Մարաց թագաւորը Կի-
աքսար օգնականութեամբ Բաբելոնի կուսակալին Նաբոպոլասարայ՝
յարձակելով առաւ զՆինուէ (625), և այնպէս բարձաւ Ասորես-
տանի տէրութիւնը։

Հրէից մատեանք, մանաւանդ մարգարէականք, ի յիշելն զկոր-
ծանումն ազգաց՝ գրեթէ միշտ ցուցանեն զայն լեալ ձեռամբ ազ-
գի կամ աշխարհակալի ուրուք, ի վրէժ մեղաց պարտեալ ազգին և
կամ ի վարձ աշխատութեան աշխարհակալին։ Այսպէս Ասորեստան՝
բարկութեան գաւազան էր ի ձեռին Եհովայի ի պատուհասել զազ-
գս (Ես. Ժ. 5, 6)։ Նոյն Եհովա կու տայ զԵգիպտոս Նաբուգոդոնո-
սորայ ի վարձ աշխատութեան նորա յառնուլ զՏիւրոս (Եզեկ. ԻԹ.
19, 20)։ Նոյն մատեանք ի յիշել զկործանումն Ասորեստանի՝ ամե-
նևին ազգի անուն չեն տար։ Թագաւորաց չորրորդ գիրքն, առանց
ամենևին յիշելու զանկումն Ասորեստանի՝ յետ Ասորդանայ որդւոյ
Սենեքերիմայ կ'սկսի պատմել Նաբուգոդոնոսորայ Բաբելացւոց թա-
գաւորին արշաւանքն (606) ի Պաղեստին, իմացնելով լռելեայն, թէ
Ասորեստանի տէրութիւնն անցած էր առ Բաբելացիս։ Եսայի (Ժ.
12, 13, 15, 16, ԺԳ. 25) և Սոփոնիա (Բ. 13) կ'ակնարկեն զանկու-
մըն Ասորեստանի, և Նաւումայ մարգարէութեան Բ. և Գ. գլուխք
թուին նկարագրել զառումն Նինուէի, բայց և այնպէս և ոչ մին կը
յիշէ Մարաց և Բաբելացւոց անունը։ Անտարակոյս մեծ մաս ունեցան
Բաբելացիք և Մարք յանկման Ասորեստանի. բայց այս գործը կա-
տարուած կ'երևի մանաւանդ շատ ազգերու միացեալ զօրութեամբ։
Եզեկիէլ որ ժամանակակից էր՝ թերևս զայս կամի ակնարկել ի վերջ-
նում մասի ԼԲ. գլխոյն, ուր կը խօսի զԱսորեստանէ և զորոյ սկիզ-
բը բերինք ի վերոյ.—«Մեծացաւ մեծութեամբ (Ասորեստան), և հա-

սին ծայրք նորա յամպս։ Տեսի զհպարտութիւն նորա և մատնեցի զնա ի ձեռս իշխանաց ազգաց։ Արարին զնա ի կորուստ, և հանին սատակեցին զնա օտարք ժանտագործք ազգաց, և տապալեցին ըզնա ի վերայ լերանց։ Յամենայն ձորս անկան ոստք նորա, և խորտակեցաւ ոստեղն նորա ընդ ամենայն դաշտս երկրի, և իջին ի հովանւոյ նորա ամենայն ազգք ազանց, և յատակեցին զնա, և ի գլորել նորա հանգիստ եղև ամենայն թռչնոց երկնից, և ի ոստեղն նորա հասին ամենայն գազանք վայրի»։

Եզեկիելի այս այլաբանական յօդուածը եթէ իմաստ մը ունի՝ այս է։ Եզեկիէլ ԼԱ. գլխոյն առաջին մասին մէջ խօսելով զԱսորեստանէ՝ ինչպէս տեսանք, նմանեցոյց այս մեծ և հզօր պետութիւնը Լիբանանու նոճւոյ մը, որ բարձրացեալ և տարածեալ բռնած էր բոլոր երկիր։ Հիմա այս երկրորդ մասին մէջ կը ցուցնէ, թէ այս մեծ նոճին կործանեցին ոստք նորա, ժանտագործ ազգեր, զորս Եզեկիէլ կը նմանեցնէ վայրենի թռչնոց և գազանաց երկրի, որ ընդ հովանեաւ, այսինքն ընդ իշխանութեամբ նորա էին, և ի գլորել նորա գտան հանգիստ, այսինքն զազատութիւն իւրեանց։ Եթէ Եզեկիելի միտքն այս է՝ ճշմարիտ է։ Արդարև առ կենդանութեամբ Եզեկիելի, այն է Ասորեստանի կործանման սկիզբը՝ ազատութիւն գտան ազգերը։ Բայց այս ազատութիւնը երկար չը տևեց։ Ասորեստանի աշխարհակալութեան ոգին անցաւ Բաբելացւոց և Մարաց, ուստի և Ասիոյ աշխարհավարութիւնը նոր և աւելի որոշ կերպարանք առաւ, զոր գիտել կարևոր է ոչ միայն ընդհանուր, այլ և մեր ազգային պատմութեան համար։

20. Նաբուգոդոնոսոր յառաջ տարաւ և կատարեց սեմական կամ արամէական ազգաց միութեան գործը։ Պատերազմն 604-ին ն. քան զՔր. առ Եփրատ գետով ի Քարքամիս (Երեմ. ԽԶ. 1,2), ուր յաղթուեցաւ Նեքաւով Եգիպտոսի թագաւորը,—որ յետ անկման Ասորեստանի եկած էր յԱսիա, միւսանգամ առնուլ եգիպտական իշխանութիւնը եփրատական երկիրներուն վրայ՝—ամեն արգելք վերցուց Բաբելացի աշխարհակալին առջև։ Ոչ միայն Հրէաստան, Փիւնիկէ, Եգիպտոս, այլ և մանր մանր թագաւորութիւնք կամ իշխանութիւնք սեմական ցեղից որ ի Պաղեստին և ի շրջակայս, ինչպէս Եդոմ, Մովաբ, Ամմոն,—Արաբացի ցեղեր, զորս թերևս իբրև աննշան թողած էին Ասորեստանցիք՝—նուաճեցան հետզհետէ։ Թագաւորաց չորրորդ գիրքը կը յիշէ նախ համառօտիւ Նեքաւովայ յարձակումն Ասորեստանցւոց երկիրներուն վրայ յայնկոյս Եփրատայ.— «Յաւուրսն յայնոսիկ ել Փարաւոն Նեքաւով արքայ Եգիպտացւոց ի վերայ թագաւորին Ասորեստանեայց առ Եփրատ գետով» (Դ.

Թագ. ԻԴ. 29). և ապա յաջորդ գլխոյն մէջ կ'ակնարկէ զպարտութիւն և զկորուստ նորա.—«Եւ ոչ ևս, ասէ, յաւել արքային Եգիպտացւոց ելանել յերկրէ իւրմէ, քանզի առ արքայն Բաբելոնի ի հեղեղատէն Եգիպտացւոց մինչև ցգետն Եփրատ զամենայն ինչ, որ էր արքային Եգիպտացւոց» (Դ. Թագ. ԻԴ. 7) Պաղեստինու ազգաց նուաճումն յայտնի է մարգարէական գիրքերէն։ Եհովա պատուէր կու տայ Երեմիայի՝ կապանք և անուր զրկել Պաղեստինու թագաւորաց, իմացնելով թէ պիտի մատնուէին Նաբուգոդոնոսորայ ձեռքը.—«Արա դու քեզ կապանս և անուրս, և առաքեսցես զայն առ թագաւորն Եդովմայեցւոց, և առ թագաւորն Մովաբացւոց, և առ թագաւոր որդւոցն Ամմոնայ, և առ թագաւորն Տիւրոսի, և առ թագաւորն Սիդոնացւոց, ի ձեռն հրեշտակաց նոցա, որ գան յԵրուսաղէմ առ Սեդեկիա արքայ Յուդայ. և պատուիրեսցես նոցա ասել ցտեարս իւրեանց. Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ես արարի զերկիր և որ ինչ ի վերայ երեսաց երկրի, զօրութեամբ իմով և բազկաւ իմով բարձու, և տաց զնա ում և կամ իցէ առաջի աչաց իմոց. և արդ ես եմ որ ետու զամենայն երկիր ի ձեռս Նաբուգոդոնոսորայ արքային Բաբելացւոց, ծառայի իմոյ, և ծառայեսցեն նմա ամենայն ազգք. և եղիցի ազգ և թագաւորութիւն, որ ոչ ծառայեսցեն Նաբուգոդոնոսորայ արքայի Բաբելացւոց և որք միանգամ ոչ մուծցեն զպարանոցս իւրեանց ընդ լծով արքային Բաբելացւոց՝ սրով և սովով և մահուամբ արարից այցելութիւն ի վերայ ազգին այնորիկ, մինչև սատակեսցին ի ձեռաց նորա» (Երեմ. ԻԷ. 2—8)։ Եգիպտացւոց պարտութենէն ետքը դիւրին էր տեսնել, թէ Պաղեստին պիտի չկրնար դիմանալ Բաբելացւոց զօրութեանը. ուստի հաւանական է, թէ Երեմիա Յուդայի օգնութիւնը խնդրելու եկող պատգամաւորաց տուաւ միևնոյն խրատը, զոր կու տար հեռատեսութեամբ իւր ազգին, յորդորելով զնոսա լինել անձնատուր Նաբուգոդոնոսորայ՝ ազատելու համար ի սպառ կործանելէ։ Արդարև բոլոր երկիրը չըրունեցաւ Նաբուգոդոնոսորայ, և ոչ ամէն ազգ և թագաւորութիւն ծառայեցին գոռոզ աշխարհակալին. բայց Պաղեստինու ազգաց համար կատարուեցաւ Երեմիայի գուշակութիւնը։ Յուդայի նուաճումը կը պատմեն Թագաւորաց գիրք (Դ. Թագ. ԻԴ. ԻԵ.). իսկ Փիւնիկեցւոց կամ Տիւրոսի համար Եզեկիէլ ժամանակակից արդէն առնուած կը դնէ ի Նաբուգոդոնոսորայ յառաջ քան զմտանել Բաբելացւոց յԵգիպտոս. – «Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացւոց աշխատեցոյց զզօրս իւր աշխատութեամբ մեծաւ ի վերայ Տիւրոսի... վասն այնորիկ այսպէս ասէ Տէր. Ահաւասիկ տաց Նաբուգոդոնոսորայ արքայի Բաբելացւոց զերկիրն Եգիպտացւոց, և առցէ զբազմութիւն նորա, և

աւարեսցէ զաւար նորա, և կողոպտեսցէ զկողոպուտ նորա, և եղիցի այս վարձ զօրաց նորա. փոխանակ հարկին յորում ծառայեաց ինձ ի Տիւրոս՝ ետու նմա զերկիրն Եգիպտացւոց» (Եզեկ. ԻԹ. 18—20)։ Եգիպտոս, Յուդա և Փիւնիկէ իյնալէն ետքը՝ հաւանական չէ թէ Եդոմայ, Մովաբու և Ամմոնացւոց պէս տկար զօրութիւններ կրցան դիմանալ հզօր հակառակորդին։ Նաբուգոդոնոսոր յետ ի գլուխ հանելոյ, գէթ անուամբ, Սեմական ազգաց միութիւնը՝ դարձաւ ի Բաբելոն զբաղիլ մեծամեծ շինութիւններով։ Միջին Ասիոյ վիճակն այսպէս տեւեց առ յաջորդօք Նաբուգոդոնոսորայ մինչև ցանկումն Բաբելոնի։ Ուստի թողլով որ ինչ զՆաբուգոդոնոսորայ և զյաջորդաց նորա պատմին ի գիրսն Դանիելի, որ իբրև վերջին ժամանակի գործ և մէտ ի պատմել հրաշալիս չունի պատմական յարգ՝ գանք առ Մարս և Պարսս։

Բ. ՄԱՐՔ ԵՒ ՊԱՐՍՔ.

1. Աշխարհագրական դիրք Մարաց եւ Պարսից: 2. Մարք նախ քան զանկումն Ասորեստանի՝ ըստ Յունաց: 3. Մարք յետ անկման Ասորեստանի՝ ըստ Յունաց. Աժդահակ եւ Կիւրոս. Վետայի այլաբանութիւնը: 4. Մարք՝ ըստ Հրէից գրոց: 5. Հայք առ Մարօք՝ ըստ Հրէից գրոց: 6. Հայոց յարաբերութիւնն ընդ Մարս. Քսենոփոն, Խրատք Կիւրոսի: 7. Հայք՝ դրացի Մարաց. Հայոց Մարաստանն ըստ վիպասանաց: 8. Պատմութիւն մը ի Քսենոփոնէ: 9. Քսենոփոնի պատմութեան յարգը: 10. Պատճառք անկման Բաբելոնի՝ ըստ Հրէից գրոց: 11. Պատճառք անկման Բաբելոնի՝ ըստ յոյն պատմագրաց: 12. Միացեալ տէրութիւն Մարաց եւ Պարսից՝ ըստ Հրէից գրոց. Կիւրոս: 13. Վարչական դրութիւն արեւելեան միապետութեանց. Կիւրոս, Կամբիւս, Դարեհ Վշտասպեան: 14. Պատմական համառօտութիւն մը զՀայոց: 15. Հայք ի Կիւրոսէ մինչեւ Դարեհ Վշտասպեան. Թէ ի՛նչ կը պատմէ Խորենացին: 16. Դարեհի նոր վարչական դրութեան հետեւանքը. Հայոց դէմ պատերազմ. Պիսիդունի արձանագրութիւնը: 17. Արարատեան թագաւորութեան վախճանը. Արմենիա՝ նահանգ Պարսից: 18. Անուանք «Արմենիա, Հայք»: 19. Պատմական դիտողութիւն զՀայ ցեղէն եւ զԱրարատայ: 20. Արմենիա յետ Դարեհի մինչեւ Աղեքսանդր մեծ: 21. Սատրապք Արմենիոյ: 22. Գլխաւոր յատկութիւն Արմենիոյ ժողովրդոց ըստ Հերոդոտոսի եւ Քսենոփոնի: 23. Հայք՝ հովիւ եւ երկրագործ. Մշեցիք. Չիպռուծութիւնք: 24. Վկայութիւն մը ի Քսենոփոնէ: 25. Հայք ընդ վաճառաշահ ազգս: 26. Ուշադրութեան արժանի յօղուած մը ի Քսենոփոնէ:

1. Մարք և Պարսք, երեւելիքն ի մէջ արիական ցեղից՝ կը բնակէին յայնկոյս Տիգրիսի և էին քան զայլ արիական ցեղս մօտագոյնք երկրաւ Ասորեստանեայց. լերանց գօտի մը միայն կը բաժնէր զնոսա Տիգրիսի արեւելեան հովտէն յորում էր Ասորեստան: Պարսք բռնած էին այն լեռներէն անդին հարաւային մասն առ ծոցովն, որ յորդ յանուն նոցա կը կոչուի «Ծոց Պարսից»: Ի հիւսիսոյ Պարսից էր Մարաց երկիրը, որ կը ձգուէր մինչև Կասպից ծով: Մարաց այս ընդարձակ երկիրը երկու բաժնելով աշխարհագիրք՝ սորին (հարաւային) մասը կ'անուանեն Մեծ Մարք, որ երկրորդական գօտւով մը

կը բաժնուէր վերին (Հիւսիսային) մասէն որ Փոքր Մարք կը կոչուի։ Հրէից մատեանք առ Սաղմանասարաւ և առ Նախորդաւ նորա յայտնապէս Մարաց կ՚ընծայեն այս վերին մասն, ինչպէս յայտնի է յանուանէ Գովզան գետոյն, առ որով բնակեցոյց Սաղմանասար Իսրայելի գերիները.—«Եւ բնակեցոյց առ Գովզան գետով ի Քաղա և ի Քաբովր և ի քաղաքս Մարաց» (Դ. Թագ. ԺԷ. 6)։ Գովզան, որպէս արդէն ասացաւ՝ էր մին ի գետոց որ ի Հարաւոյ ի Հիւսիս հոսելով կը թափին Կասպից ծովը։

2. Մարաց, ինչպէս նաև Պարսից և ուրիշ արիական ազգաց հին պատմութիւնը շատ մութ և անստոյգ է։ Ըստ լեզուաբանական և ազգաբանական հետազօտութեանց իբր ապացուցեալ կրնայ համարուիլ, թէ Արմենիոյ, Փոքուն Ասիոյ և ուրիշ երկիրներու հնդեւրոպական ազգաց պէս՝ Մարք ևս ուրիշ արիական ցեղերու հետ եկած էին յերկիր իւրեանց նախապատմական ժամանակ, քան զինքեանս հնագոյն ազգերն, զՏուրանեանս և զՔուշեանս վանելով կամ ընկղմելով յիւրեանս (Մասբեր. Գլ. ԺԲ.)։ Ըստ Հերոդոտոսի որ յոյն պատմիչներուն հնագոյնն է՝ Մարք ի սկզբան այլ և այլ ազատ ցեղերու բաժնուած էին։ Իբր 708-ին նախ քան զՔր. Դիովկէս եղաւ, որ զառաջինն միացնելով այն ցեղերն՝ օրէնք և կարգ դրաւ։ Հերոդոտոս զԴիովկ կը համարի նաև շինիչ եօթնպարսպեան Եկբատանայ, մայրաքաղաք մեծ և ամուր, ուր ժողովեց Դիովկէս Մարաց երևելիներն և զօրաւորները։ Դիովկէսի յաջորդեց, ըստ նոյն Հերոդոտեայ, Փրաւորտ (655—638), որ յետ հնազանդեցուցանելոյ զՊարսս՝ սպանաւ ի կռուի ուրեք ընդդէմ Նինուէի։ Բայց Մարաց տէրութեան բուն հիմնադիր կը համարուի Կիաքսար Ա. (638—595) ըստ Հերոդոտեայ որդի Փրաւորտի։ Մինչ Կիաքսար Նինուէի դէմ յարձակուելու կը պատրաստուէր՝ Սկիւթացիք մեծ բազմութեամբ եկան (615) ի հիւսիսոյ ոչ միայն Մարաց, այլ և գրեթէ բոլոր Ասիոյ վրայ։ Յետ իբր եօթն ամաց Կիաքսար դաւով սպաննելով Սկիւթացւոց գլխաւորներն ի խնջոյս՝ վանեց այս յելուզակները և օգնական գտնելով իւր զԲաբելացիս՝ առաւ զՆինուէ և կործանեց Ասորեստանի տէրութիւնը։

3. Յունաց պատմիչները, Հերոդոտոս, Կտեսիաս, Քսենոփոն, ինչպէս նաև մեր Խորենացին՝ բազում ինչ հակառակ միմեանց կը պատմեն զՄարաց յետ անկման Ասորեստանի։ Ըստ Հերոդոտոսի իբր տասն ամօք յետոյ քան զառն Նինուէի, Կիաքսար Ա. յետ նուաճելոյ զՊարսս և զայլ արիական ցեղսն որ յայնկոյս Տիգրիսի՝ արշաւեց ի Փոքր Ասիա, ուր քան զայլ հնդեւրոպական ցեղս հզօրագոյն էին յայնժամ Լիւդացիք, որոց կը թագաւորէր Ալիատտէս

(625—565)։ Վեցամեայ պատերազմէ մը ետքը, օր մը ի ճակատել
երկուց կողմանց ի մարտ՝ եղև խաւարումն արեգական։ Երկուս-
տեք չարագուշակ համարուած այս բնական երևոյթին հետևանքը
եղաւ հաշտութիւն (610) և խնամութիւն ի մէջ երկուց թագաւո-
րաց, որ, եթէ պարտ իցէ հաւատալ Հերոդոտեայ՝ իրարու բազուկ
ցտելով, յարենէն հոսելոյ ի վերայ անտի կնքեցին դաշինքը։ Աղիւս
գետ եղաւ սահման ի մէջ երկուց ազգաց, և Կիաքսար դառնալով
յԵկբատանս մեռաւ 595-ին, թողլով զթագաւորութիւնն որդւոյ իւ-
րում Աժդահակայ, յետ որոյ տէրութիւնն Մարաց անցաւ ի Կիւրոս
Պարսիկ, թոռն Աժդահակայ ի դստերէ նորա Մանդանեայ։
Հերոդոտոսի պատմութիւնն զծննդենէ և զմնդենէ Կիւրոսի
նշանաւոր է իւր ծագմանը կողմանէ։ Աժդահակ ըստ Հերոդոտոսի
երազ կը տեսնէ, թէ որդին որ ի Մանդանեայ ծնանելոց էր՝ պիտի
թագաւորէր փոխանակ հաւուն իւրոյ, ուստի ի ծնանել մանկանն
պատուիրեց Աժդահակ Արբակ անուն նախարարի մը՝ տանել և ըս-
պաննանել զնա գաղտ։ Արբակ չկատարեց հրամանը, և Կիւրոս սնա-
նելով Աժդահակայ հովուին քով, երբ տասնամեայ էր՝ ճանչցուեցաւ
և ղրկուեցաւ առ հայր իւր ի Պարսս։ Կիւրոս ի չափ հասեալ կ'ա-
պստամբեցնէ զՊարսս ընդդէմ Մարաց. Աժդահակ կը բռնուի, և Կիւ-
րոս կ'առնու թագաւորութիւնը։
Հերոդոտոսի պատմութիւնը զԱժդահակայ և զԿիւրոսէ յառաջ
եկած է հին կրօնական այլաբանութենէ մը, որ կը գտնուի Հնդկաց
նուիրական գրոց միոյն, Վետայի մէջ։ Ժամանակաւ Աժի-տահագա
կապած էր երկինքը պտտող կովերը, որոնց կաթը կ'ոռոգէր գերկիր։
Թրիդա աստուածութիւնը սպաննելով զԱժի-տահագա՝ արձակեց կո-
վերը, և կաթն սկսաւ տեղալ յերկիր։ *Աժի* և *տաՆագա*, ըստ Պար-
սից զոհակ՝ հին սանսքրիտ բառեր են, որոց կը պատասխանեն Հայ-
երէն *առՃ* (օձ) կամ *իժ* և *զոՆել* (սպաննել) բառերը. ուստի Աժի-
տահագայն այլաբանական անուն է չար ոգւոյն որ է օձ սպանող։
Իսկ Թրիդա, ըստ Պարսից *ֆրիտուՆ*, հայերէն *փրկող*՝ էր Եանա,
Թրիդա և Քրիշասպա կոչուած երից աստուածային զօրութեանց մին։
Աժդահակայ անուան նմանութիւնն ընդ Աժի-տահագայի՝ այն կրօ-
նական այլաբանութիւնն Աժդահակայ և Կիւրոսի վրայ դարձնելու
առիթ տուած էր Պարսից, յորոց առաւ Հերոդոտոս։ Աժդահակ կ'ու-
զէ սպանանել զԿիւրոս. Կիւրոս Արբակայ հնարիւք կ'ազատուի մահ-
ուանէ և սպանանելով զԱժդահակ՝ կ'ազատէ զՊարսս որ ծառայ
էին Մարաց։ Ըստ Հայոց՝ Աժդահակ կ'ուզէ դաւով սպաննել զՏիգրան.
Տիգրան կ'ազատի դաւէն խորագիտութեամբ Տիգրանուհւոյ և ըս-
պանանելով զԱժդահակ՝ կ'ոչնչացնէ Աժդահակայ նպատակը, որ

էր տիրել Հայոց։ Ահա Վետայի այլաբանութիւնը, որ պատմական ձև առած է։ Զարմանք չէ որ Հնդկաց կրօնական այլաբանութիւնն այսպէս փոխուելով երկու ազգաց մէջ կ՚առնու պատմական կերպարանք։ Եթէ փնտռենք՝ պիտի գտնենք թերևս արևելեան աստուածաբանութեան այս այլաբանութիւնն ուրիշ ազգի կամ աղանդի մը մէջ ուրիշ ձև առած։

Ըստ Կտեսեայ՝ Կիւրոս ոչ թոռն էր և ոչ ազգական Աժդահակայ, այլ բոլորովին օտար, և ապստամբելով կալաւ զԱժդահակ և թագաւորութիւնը դարձոյց առ Պարսս։ Ըստ Խորենացւոյն՝ Հայոց թագաւորը Տիգրան սպաննելով զԱժդահակ որ կամէր դաւով սպաննել զնա՝ եբարձ զտէրութիւնն ՝Մարաց։ Ըստ Քսենոփոնի՝ Աժդահակ (595—560) խաղաղութեամբ կը մեռնի ի թագաւորութեան իւրում, և կը յաջորդէ նմա որդին Կիաքսար Բ. (560—536), առ որով առնուեցաւ (538) Բաբելոն, և որովհետև անորդի էր Կիաքսար՝ յաջորդեց նմա քեռորդին Կիւրոս։ Ուստի ըստ Քսենոփոնի՝ հարստութեան կամ տիրող ազգատոհմի փոփոխութիւն էր այս, քան նուաճումն յօտարէ։

Ի յոյն պատմագրաց որ յաւանդութենէ առեալ կու տան այս տեղեկութիւններն զՄարաց և զՊարսից՝ և ոչ մին ժամանակակից է։ Ժամանակակից կամ գէթ մօտագոյն ժամանակաւ են Հրէից մատեանք, յորս Մարաց վրայ սաչափ միայն գրուած կը գտնենք.—

4. Մարք, ըստ Հրէից գրոց, ինչպէս տեսանք՝ առ Ասորեստանեօք հպատակ էին նոցա, և յանկման Ասորեստանի չեն յիշուիր յանուանէ։ Ի գիրս Հրէից Մարք իբրև ազատ թագաւորութիւններ կ՚սկսին յիշուիլ յառման Բաբելոնի.—«Ահաւասիկ յարուցից ի վերայ նոցա (Բաբելացւոց) զՄարս, որ առ ոչինչ համարին զարծաթ և ընդ ոսկի ոչ ախորժեն» (Ես. ԺԳ. 17)։ «Զարթոյց Տէր զոգի թագաւորացն Մարաց, զի բարկութիւն նորա ի վերայ Բաբելոնի» (Երեմ. ԾԱ. 17)։ «Առէք նշան ի վերայ երկրիդ, փող հարէք ընդ ազգս ամենայն, կազմեցէք ի վերայ դորա գունդս . . . կոչեցէք ի վերայ նորա զազգս և զթագաւորս Մարաց և զկուսակալս նոցա և զամենայն երկիր իշխանութեան նոցա» (Երեմ. ԾԱ. 27, 28)։ Այս վկայութիւններէն, որ շատ ետքը գրուած չեն քան զանկումն Բաբելոնի՝ կը տեսնուի նախ՝ թէ Մարք այլ և այլ թագաւորութեանց կը բաժնուէին, ինչպէս յայտնի է յոգնակի թիւէն վերի օրինակներուն մէջ ըստ եբրայեցերէն բնագրին.—«Զարթոյց Տէր զոգի *թագաւորացն* Մարաց». «Կոչեցէք ի վերայ նորա *զազգս* և *զթագաւորս* Մարաց». «Եւ առի զբաժակն ի ձեռանէ Տեառն և արբուցի ամենայն ազգաց առ որս առաքեաց զիս Տէր.., Փարաւոնի արքային Եգիպտացւոց...և

ամենայն *թագաւորացն* Մարաց» (Երեմ. ԻԵ. 17, 19, 25)։ Դիտել պարտ է, զի Հրէից մատեանք Մարօք կ'իմանան բոլոր արիական ցեղերը։ Երկրորդ՝ կը տեսնուի թէ Մարաց դրացի ազգերը պահած էին զանկախութիւն իւրեանց. քանզի յառաջ Բաբելոնի իբրև Մարաց գործակից ազատ թագաւորութիւններ կը յիշուին յանուանէ նաև Արմենիոյ հնտեւրոպական թագաւորութիւնք.—«Հրաւիրեցէք ի վերայ նորա զթագաւորութիւնս Արարատայ, Միննւոյ և Ասքանասայ» (Երեմ. ԾԱ. 27)։ Այսպէս ըստ Հրէից գրոց՝ արիական ազգեր, որոց մէջ գլխաւոր էին Մարք՝ յետ անկման Նինուէի եղան ազատ և զօրացան, մինչև կարող լինել ուրիշ համացեղ, գլխաւորապէս Արմենիոյ ազգաց հետ գալով առնուլ զԲաբելոն և բառնալ ի սպառ բաբելական կամ քաղդէական պետութիւնը։

5. Յետ այսչափ լոյս առնլոյ զարիական ազգաց, մանաւանդ զՄարաց, յանկմանէ Ասորեստանեայց մինչև ցանկումն Բաբելոնի՝ տեսցուք համառօտիւ զԱրմենիա։ Դ. Թագաւորաց ԺԹ. 37 համարէն գէթ ընդհանրապէս ցուցուեցաւ, թէ Արմենիա, մանաւանդ Արարատ, ազատ երկիր և թագաւորութիւն էր առ Ասորեստանեօք, գէթ Ը. դարուն սկիզբը նախ քան զՔր. (Տես էջ 39)։ Արարատեան ազգին յարաբերութիւնն ընդ Ասորեստանեայս բարեկամակա՛ն էր թէ թըշնամական՝ յայտնի չէ։ Թէ՛ ի Խորենացւոյն և թէ բևեռագիրներէն բերուած վկայութիւնք առ այս, ինչպէս տեսանք (էջ 40-45)՝ գէթ առ այժմ հաւատարմութեան արժանի պատմութիւններ չեն։ Իբրև պատմականապէս ապացուցեալ կրնանք համարել սակայն, թէ Արմենիոյ թագաւորութիւնք, յանուանէ Արարատեանն, մնացին ազատ յետ անկման Ասորեստանի առ Մարօք, մինչև կարել գործակից գըտնել Մարաց յառաջն Բաբելոնի։ Այսչափ միայն կը մակաբերուի Հրէից գիրքերէն զհայոց։

6. Ոչինչ ընդհատ ստուգութեամբ կրնայ մակաբերուիլ ի Քսենոփոնէ, թէ Հայոց յարաբերութիւնն ընդ Մարս բարեկամական կամ գէթ դաշնակցական էր։ Այս վկայութիւնն արդարև Քսենոփոնի «Խրատք Կիւրոսի» (*Քիրոպետիա*) կոչուած գիրքէն է, որ տեսակ մը վիպասանութիւն կրնայ համարուիլ, բայց չէ անման ի պատմական ստուգութենէ։ Տարակոյս չկայ, թէ այս խրատական վէպին մէջ Աժդահակայ, Կիաքսարայ, Կիւրոսի և այլոց բերանը դրուած բանք՝ ըստ ձևոյն վիպասանական են. բայց արիական դաստիարակութեան սկզբունքը, յորոց վերայ կը հիմնէ Քսենոփոն իւր խրատները, ինչպէս նաև պատմական դէպք՝ չկարեն լինել կեղծ, քանզի Քսենոփոն կը գրէր այս խրատն առ կրտսերն Կիւրոս, որ 100 ամօք միայն յետոյ էր քան զիւր նախնին Կիւրոս մեծ։ Քսենոփոն ոչ միայն, հա-

մաձայն Հրէից գրոց, զՀայս ի վաղուց ազատ թագաւորութիւն կը գնէ առ Կիաքսարաւ, այլ և դաշնակից և ընտանի Մարաց և Պարսից։ Հայոց այս յարաբերութիւնը շատ բնական կ'երևի, եթէ նկատենք այս երկու ազգաց աշխարհագրական դիրքը։ Մարայ երևելի մէկ մասն այնպէս գիրկընդխառն էր ընդ երկրին Հայոց՝ մինչև Մարք կամ Մարաստան անուամբ կազմել յետ ժամանակաց Արմենիոյ միացեալ թագաւորութեան մէկ գաւառն առ Արշակունեօք։

7. Վերագոյն ցուցաւ, թէ Մարաց երկիրն երկու կը բաժնուէր, Հարաւային կամ Մեծ Մարք, և Հիւսիսային կամ Փոքր Մարք, որ կը ձգուէր մինչև Կասպից ծով, և առ Մասեօք՝ մինչև յԵրասխ և անդր ևս։ Յայսմ Կասպիական մասին, այն է ի Փոքր Մարս՝ դրացի էին Հայք (Արարատեան թագաւորութիւնը) Մարաց։ Երասխ և Մասիք հասարակաց էին այս երկու ազգաց, այնպէս որ Ծննդոց Եբրայական բնագրին խօսքն զտապանէն, թէ նստաւ «ի լերինս Արարատայ»՝ ի թարգմանութիւնս ինչ է «ի լերինս Կորդուաց» կամ «Մարաց»։ Թէ Մասեաց արևելեան մասն ի հնումն Մարաստան էր և յետ անցանելոյ նորա ի Հայս առ Արշակունեօք տակաւին կը կոչուէր Մարք՝ յայտնի է Հայոց հին երգերէն, ուր ասի զԱրտաւազդայ որդւոյ Արտաշիսի, թէ «Անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ» (Խոր. Ա. Լ.)։ Խորենացին կը վկայէ թէ Մարակերտ էր ի դաշտին Շուրարայ, որ Մասեաց արևելեան դին կ'իյնար։ Մարակերտ «է ի դաշտին որ անուանեալ կոչի Շարուրայ» (Խոր. անդ)։ Այս Մարք էին ի սկզբան առ Արշակունեօք հզօր նախարարութիւն, Մուրացան կոչուած։ Խորենացին Հայոց երգերէն առնլով՝ այս նախարարութեան սահմանը կը ցուցնէ հին աշխարհագրական անուններով, և նախարարութիւնը կը համարի սերեալ Աժդահակայ Մարաց թագաւորին ընտանիքէն, զորս գերեալ կը պատմէ ի Տիգրանայ առաջնոյ, որ ըստ Մարբեասեան պատմութեան՝ Աժդահակայ հետ կռուելով յաղթեց, և ջնջեց Մարաց տէրութիւնը.—«Իսկ զԱնոյշ զառաջին կինն Աժդահակայ և զբազումս ի սերմանէ Աժդահակայ աղջկունս հանդերձ պատանեկօք և այլ բազում գերեօք, որչափ թէ աւելի քան զբիւր մի՝ բնակեցուցանէ յարևելեայ ուստի մեծի լերինն, մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք և որ այլք առ եզերբ գետոյն (Երասխայ) դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախջուանու, և զերիս աւանսն զԽրամ և զՋուղայ և զԽոշակունիս։ Իսկ ի միւս կողմանէ գետոյն զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքըն ամուրն Նախճաւանոյ։ Բայց զնախասացեալ կինն Անոյշ բնակեցուցանէ որդւովքն իւրովք յանդորրութեան ապառուածի փլածի

մեծի լերինն, զորմէ լեալ ասեն յաՀագին իմն շարժմանէ։ Իսկ պաշտօնեայս տալ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ոտամբ լերինն բնակեցան» (Խոր. Ա. Լ.)։ Բայց ինչպէս արդէն տեսանք՝ Տիգրանայ և Աժդահակայ պատերազմը Վէպայէն առնուած վէպ է, որուն պատմական կերպարանք տուած է Խորենացւոյն աղբիւրը։ Մուրացան նախարարութիւնը ջնջուեցաւ առ Արտաշխիւ (Խոր. Բ. ԾԱ.), բայց Մասեաց արևելեան կողման Համար Մարք անունը մնաց մինչև չորրորդ դար։ Առ Բուզանդայ ստէպ այսպէս կոչուած կը գտնենք Հայոց այն մասը։ Այս պատմիչն յիշելով Շապհոյ զօրաց արշաւելն ի Հայս առ Արշակաւ, որ այն արշաւանաց ժամանակ Ատրպատականի կողմը կը գտնուէր՝ ասէ. «Գուժկան Հասանէր առ Թագաւորն Արշակ, և ասեն նմա. դու աւադիկ առաջոյ սպասես Թշնամեացն, նստիս յԱտրպատականի, իսկ Թշնամին զԹիկամբ անկեալ կոտորեցին զաշխարՀս։ . . . Ապա Վասակ սպարապետ. . . Թողոյր զԹագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն *յերկրին Մարաց* Հանդերձ սպասաւորօքն, ինքն գայր Հասանէր ի միջնաշխարՀն Հայոց, ի գաւառն Այրարատու» (Բուզ. Դ. ԻԴ.)։ Բուզանդ առ նովին Արշակաւ և ապա առ Պապաւ ուրիշ նաՀանգաց Հետ երկիցս ապստամբեալ կը յիշէ ի Հայոց Մարաց աշխարՀ մը, որով վերոյիշեալ երկիրը կ՚իմացուի.— «Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Տմորեաց և ամուր աշխարՀն Կորդեաց։ Յետ այսորիկ ապստամբեաց ի Թագաւորէն Հայոց տունն Հայոց Թագաւորին, որ էր զԱտրպատական աշխարՀաւն, յետս եկաց ի Թագաւորէն Հայոց ամուր *աշխարՀն Մարաց*, յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարՀն Կազբից» (Բուզ. Դ.Ծ.)։ «Սպարապետն Հայոց Մուշեղ (առ Պապաւ) Հարկանէր զայնոսիկ որք ապստամբ եղեն ի Թագաւորութենէն Արշակունեաց։ Նախ Հարկանէր զտունն Թագաւորին Հայոց որ յԱտրպատականին էր, . . . և զայլ գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս և զԿորդիս և զՏմորիս . . . *և զկողմանն Մարաց*, քանզի և նոքա ապստամբեցին յարքայէն Հայոց. . . . Հարկանէր և զերկիրն Արձախայ»։

8. Քսենոփոն յայտնի կը ցուցնէ Հայոց բարեկամական կամ դաշնակցական յարաբերութիւնն ընդ Մարս Հետևեալ պատմութեամբ, որ եթէ ոչ ըստ ձևոյն՝ գէթ ըստ էութեան պատմական է։ Կիւրոս, որ ինչպէս վերագոյն յիշուեցաւ, սպարապետ կարգեալ էր ի Կիաքսարայ ի պատերազմին Մարաց ընդդէմ Բաբելոնի՝ յետ տեղեկանալոյ Մարաց զօրութեան՝ կը Հարցունէ զԿիաքսար. «Ասէիր Թէ Թագաւորն Հայոց արՀամարՀեց զքեզ. և այժմ լսելով զգալ Թշնամւոյն ի վերայ մեր՝ ոչ զօրք կու տայ և ոչ սակ»։ «Այնպէս է, ասէ Կիաքսար. ուստի վարանեալ եմ. չեմ գիտեր Թէ երԹամ Հայ-

ոչ վրայ ի պատերազմ, թէ լաւ է առ այժմ թողուլ, գուցէ ուրիշ թշնամեաց վրայ յաւելունք նաև զՀայս»։ Կիւրոս ասէ. «Հայոց քաղաքներն ամո՞ւր տեղեր են թէ ի դիւրի»։ «Ամուր տեղեր չեն, ասէ Կիաքսար, ունին սակայն լեռներ յորս կարեն ամրանալ վաղվաղակի, և դիւրին չէ առնուլ զնոսա՝ բայց եթէ երկար պաշարմամբ, որպէս արար Հայր իմ»։ «Եթէ զրկես զիս բաւական հեծելովք՝ ասէ Կիւրոս, աստուածոց օգնութեամբ կարեմ առնել այնպէս, զի թէ զօրք տան Հայք և թէ սակ. և յուսամ թէ աւելի բարեկամ լինին մեզ քան զոր էին երբեմն»։ Ուրախ եղաւ Կիաքսար և կը յուսար, թէ Կիւրոս կարող էր առանց պատերազմի վճարել այս գործը, մանաւանդ գիտէր, թէ Կիւրոս ծանօթ էր արքայորդւոյն Հայոց իբրև որսակից նմա ի մանկութեան։ Կիւրոս ըստ նախկին սովորութեան իւրում՝ հեծեալ և հետևակ զօրօք և որսոյ պառականօք անկաւ յուղի, յետ մատուցանելոյ զոհս Արամազդայ վասն յաջողութեան գործոյն։ Մինչ կ՚երթային՝ նապաստակ մը ելաւ, և արծուի մը խոյանալով առաւ նապաստակը և տարաւ ի բլուր ինչ մօտակայ։ Կիւրոս բարենշան համարեցաւ այս դէպքը, որպէս թէ յաջողելոց էր որսին նպատակը։ Կիւրոսեանք մօտեցան Հայոց սահմանը։ Ազդ եղև թագաւորին Հայոց, թէ Կիւրոս Պարսիկ ելած է յորս. և արդարև Կիւրոս և որ ընդ նմայն էին՝ կ՚որսային կինճ, եղջերու, այծեամ և ցիռ որ շատ էին այն կողմերը (Խոր. Գ. ԾԵ.)։ Այս միջոցին երէց որդի թագաւորին Տիգրան բացակայ էր, և թագաւորը լսելով Կիւրոսի գալը խռովեցաւ, քանզի ամրոցներ կը շինէր հակառակ դաշանց։ Իսկոյն պատգամաւոր եկաւ թագաւորին, թէ Կիւրոս կու գայ զօրօք, և ոչ այլ ինչ խնդրէ ի քէն՝ բայց ըստ նախկին դաշանց տալ զօրս և արծաթ։ Հասկցաւ թագաւորը Կիւրոսի գալստեան նպատակը, և իսկ և իսկ կրտսեր որդին Շաւասպ հանդերձ կանամբք և մանկտւով և գանձուն զրկեց լեռները, և ինք կ՚աճապարէր զօրքը կանչել՝ մինչ դուժկան հասաւ, թէ կանայք և մանկտին անկան գերի, քանզի Քրիսանտաս զօրապետ Կիւրոսի գաղտնի ճամբով բռնած էր լերանց ճամբան։ Վարանեցաւ թագաւորը, և խոյս տալով հազիւ կարաց ամրանալ բլուր մի, զոր Կիւրոս վաղ հասնելով պաշարեց և պատգամ զրկեց թագաւորին. «Ի՞նչ է, ասէ, միտքդ. մնալով անդ մեռնի՞լ ի սովոյ, թէ իջնել և կռուել ընդ մեզ ի դիւրի»։ «Միտքս կռուել չէ», ասէ թագաւորն։ Նորէն եկաւ պատգամաւորը, թէ «Ընդէր ուրեմն չես իջներ»։ «Կ՚իջնեմ, ասէ թագաւորն, բայց ո՞վ լիցի դատաւոր ի մէջ մեր»։ «Զով որ դիք կու տան», պատասխանեց Կիւրոս։ Իջաւ թագաւորը, մինչ Կիւրոս կը կենար բակ առեալ ի զօրաց։ Այն միջոցին դարձաւ յուղեգնացութենէ երէց որդի թագաւո-

րին Տիգրան, որ որպէս ասացաք՝ որսակից լեալ էր ժամանակաւ Կիւրոսի, և տեսնելով հայրը և մայրը և զկին իւր բռնուած՝ լացաւ։ «Ի դէպ ժամու հասար, ասէ ցնա Կիւրոս. լուր ուրեմն հօրդ դատը»։ Կիւրոս կոչեց Պարսից և Մարաց զօրավարներն որ առ իւր էին և Հայոց մեծամեծներէն՝ զորս մօտ գտնուեցան, նաև կանանւոյն Թոյլ տուաւ լինել ունկնդիր։

Կիւրոս հարցուց նախ Թագաւորին, Թէ ինչ պատճառաւ դրժեց ուխտին ընդ Մարաց, նաև պատերազմի պատրաստութիւն կը տեսնէր։ «Դու խոստացար, ասէ, հաւուն իմում Աժդահակայ՝ լինել նմա օգնական նիզակակից զօրօք և արծաթով ի հարկի և ամրութիւններ չշինել. բայց սոցա հակառակը գործեցիր»։ «Այո, ասէ Թագաւորն, քանզի ազատութեան ցանկացայ, և լաւ համարիմ ազատութիւն Թողուլ որդւոցս»։ «Բարւոք է, ասէ Կիւրոս, ազատութեան համար կռուել. բայց ա՛ղէ, ասա, եթէ դաշնակիցներէդ մին դրժէր ուխտին և ձեռք իյնար, զի՞նչ առնէիր նմա»։ «Ճշմարիտն ասելով՝ կը հանէի զնա իշխանութենէն, ասէ Թագաւորն. ինչ որ ունէր կ'առնուի, և եթէ ընդդէմ դառնայր՝ կը սպաննէի»։ Երբ զայս լսեց Տիգրան՝ հանեց խոյրը գլխէն և փողփողեալ վերջաւորները քակեց նետեց, և կանայք կու լային, կը ճչէին, որպէս Թէ կորեաւ Թագաւորը, կորեան և ինքեանք։ Կիւրոս հրամայեց լռել, և դառնալով առ Թագաւորն ասէ. «Որովհետև այս են իրաւունք քո, կը հարցունեմ. ի՞նչպէս արժան է մեզ վարիլ ընդ քեզ»։ Թագաւորը լռեց, և որդին Տիգրան աճապարելով խօսեցաւ երկար։ «Որովհետև զարժանն խնդրես, ասէ, ո՛վ Կիւրէ, ես խրատ տամ քեզ ներել հօրս որ արգահատելի է, զի առ սէր ազատութեան արար. բայց փոխանակ մեծ ես ազատութեան՝ գտաւ ինչ որ չէր յուսար. ահա կայ ի ձեռս քո. ուստի եթէ կրկին Թողուս նմա զազատութիւնն, ո՞չ ապաքէն երկիցս բարեկամ արասցես զնա քեզ»։ Կիւրոս որ խնդայր ի միտս իւր, զի կատարեցաւ ինչ որ խոստացած էր Կիաքսարայ—կըրկին քան զառաջինն բարեկամ առնել զհայս՝ ասէ. «Բարւոք է, միւսանգամ հաստատենք բարեկամութիւնը, բայց ինչ օգնութիւն պիտի տաք մեզ զօրաց և արծաթոյ»։ «Ցուցնեմ քեզ, ասէ Թագաւորն, բոլոր զօրութիւնս և գանձս, և առ՝ որչափ ինչ պատշաճ կը դատես առնուլ»։ Կիւրոս ասէ. «Ո՞րչափ զօրք ունիք և ո՞րչափ արծաթ»։ «Ութ հազար հեծեալ և չորս բիւր հետևակ», ասէ Թագաւորն. իսկ արծաթ, հանդերձ այնու զոր եթող հայր իմ՝ աւելի է քան երեք հազար տաղանդ»։ Կիւրոս առաջիկայ պատերազմին համար բաւական համարեցաւ զօրաց կէսն առնուլ. «Զանզի միւս կէսն, ասէ, պիտոյ է ձեզ Կորդուաց համար, ընդ որս միշտ ի կռուի էք»։ Իսկ

արծաթոյ հարիւր տաղանդ միայն խնդրեց. հարիւր տաղանդ ևս փոխ վասն իւր, հատուցանելոյ պայմանաւ: «Մի այդպէս խօսիր, ո՛վ Կիւրէ, ասէ Թագաւորն, ապա թէ ոչ չտաս ինձ համարձակութիւն. գիտցիր որ բոլորը քո են»: «Իսկ որպէս զի կինդ առնուս, ի՞նչ կու տաս», ասէ Կիւրոս ընդ խաղ: «Որչափ տալ կարող եմ», ասէ Թագաւորն: «Հապա մանկտւո՞յդ համար», կրկնեց Կիւրոս: «Դարձեալ որչափ կարող եմ», ասէ Թագաւորն: «Ուրեմն, ասէ Կիւրոս, բոլոր ստացուածոցդ կրկինը տալու ես»: Յետոյ դառնալով առ Տիգրան՝ «Եւ դու, ասէ, ո՛վ Տիգրան, ի՞նչ փրկանք կու տաս կնոջդ համար»: Տիգրան որ նորոգ ամուսնացեալ էր և մեծ գութ ունէր առ կինն՝ ասէ. «Զանձն իմ գլխովին տամ, եթէ հարկ լիցի, առ ազատել կինս յաղախնութենէ»: «Դու Տիգրան, ասէ Կիւրոս, առ կինդ. ես չեմ համարիր զնա գերի, զի դու մենէ ես. դու ևս, ո՛վ Թագաւոր, առ կինդ և մանկտիդ, փրկանք չեմ պահանջեր վասն նոցա»: Կիւրոս հրաւիրեց զամենեսին յընթրիս, և յետ ընթրեացն ասէ. «Գնացէք իւրաքանչիւր յիւր տեղի». և մեկնեցան Թագաւորը և բոլոր ընտանիքը դեսպակօք: «Մինչ կ'երթային, ասէ Քսենոփոն, ոմն կը գովէր Կիւրոսի իմաստութիւնը, այլ ոմն՝ ժուժկալութիւնը, ոմանք ևս գեղեցկութիւնը և հասակին վայելչութիւնը: Տիգրան հարցուց կնոջը. «Քեզ ևս գեղեցիկ թուեցա՞ւ Կիւրոս»: «Ես չնայեցայ ընդ նա», ասէ կինն: «Հապա ընդ ո՞ նայեցար», ասէ Տիգրան: «Ընդ այն, ասէ կինն, որ ասաց թէ զանձն իմ գլխովին տամ, եթէ հարկ է, զի մի լինիցի կինս իմ աղախին»:

Ի վաղիւն Թագաւորն ընծաներ ղրկեց Կիւրոսի և զօրավարներուն. պատրաստեց նաև զօրքը և արծաթը: Կիւրոս հարցուց թէ ո՛վ պիտի երթար զօրավար Հայոց գնդին, Թագաւո՞րը թէ որդին. և որոշուեցաւ Տիգրան, որ չը կամէր բաժնուիլ ի Կիւրոսէ: Կիւրոս և Տիգրան ընտիր ընտիր հեծելովք Մարաց և Հայոց ելին շրջել ընդ երկիրն, և յարմար տեղ կը փնտռէին վասն պահակի, քանզի Տիգրան առաջարկած էր Կիւրոսի՝ բերդ շինել և յանձնել մար կամ պարսիկ պահանորդաց յերաշխաւորութիւն: Կիւրոս տեսնելով Հայոց շատ տեղերն անմշակ և ամայի՝ հարցուց պատճառը: «Կը տեսնես սա լեռներն, ասէ Տիգրան. Կորդուացիք կը բնակին հոն, և ժամանակ ժամանակ իջնելով կը կողոպտեն մեր թշուառ գիւղացիներն. այս պատճառաւ այն կողմերը թողուած են ամայի»: Կիւրոս խորհեցաւ այն լեռներուն ամուր կողմը շինել պահակն ի մէջ Հայոց և Կորդուաց, իբր երաշխաւորութիւն Հայոց կողմանէ, միանգամայն իբրև պատուար ընդդէմ յելուզակութեան Կորդուաց: Հետևեալ օրը երբ Տիգրան եկաւ չորս հազար հեծելով և բիւր մի աղեղնաւորօք և նոյն-

չափ շերտաւորօք՝ Կիւրոս յայտնեց նմա զիւր խորհուրդը, ընդ որ հաճեցան Հայք։ Կիւրոսի և Տիգրանայ առաջին գործն եղաւ սաստկութեամբ յարձակել ի վերայ Կորդուաց, որ չկրցան երկար դիմանալ։ Կիւրոս բռնելով Կորդուաց գլխաւորներէն զոմանս՝ համոզեց զնոսա, թէ օգուտ լինելոց էր վասն Կորդուաց և Հայոց՝ պահակ և բերդապահ զօրք ունենալ հոն Մարաց և Պարսից։ «Դուք, ասէ Կիւրոս, աղքատ էք և յելուզակութեամբ կ'ապրիք, քանզի մշակելի երկիր և հողագործութիւն չունիք. ահա Հայոց դաշտերն բաց են առաջի ձեր. գացէք, պարապեցէք մշակութեան. և դուք, Հայք, փոխանակ այսր՝ արածեցէք ձեր հօտերն յարօտս Կորդուաց»։ Զայս լսելով երկոքին կողմանք՝ գովեցին. «Այսպէս միայն, ասէին, մարթի լինել հաստատ խաղաղութիւն»։ Պատանդ տուին իրարու, և ի մէջ երկոցունց կռեցան դաշինք ազատութեան և ամուսնութեան, մշակութեան և ճարակի, և փոխադարձ օգնութեան՝ եթէ վտանգ հասնէր միում ի կողմանց։ «Ցարդ կայ, ասէ Քսենոփոն, այն ուխտը որ եղև յանժամ ի մէջ Հայոց և Կորդուաց»։ Երբ ամենայն ինչ այսպէս յարդարեցաւ՝ Տիգրան իմացուց հօրը, և իսկոյն եկան հիւսունք և գաղատոսք ի Հայոց, և շինեցաւ պահակը։

Յետ ոչ բազում աւուրց մեկնեցաւ Կիւրոս հանդերձ իւրայովքն և հայական զօրօք։ Յուղարկաւոր կ'երթային թագաւորը, նաև դշխոյն Հայոց և դստերք և կրտսեր որդին և օրիորդք թագաւորազունք և բազումք յերևելեաց հանդերձ զօրուն, մինչև հրաժարել ի միմեանց։ Բայց Տիգրան մնաց առ Կիւրոսի, և էր նիզակակից նմա յամենայն պատերազմունս նորա։ Յառման Բաբելոնի յանուանէ յիշէ առ Քսենոփոնեայ՝ Տիգրան զօրավար այրուձիոյն Հայոց, և Եմբաս հետևակազօրուն։

Գ. Այս պատմութիւնը բոլոր պարագայիւք իբր պատմական չէ կրնար առնուլ. բայց թէ չէ առանց ամենևին պատմական հիման՝ առ այս բաւական ապացոյց են խիտ առ խիտ պատմական ակնարկութիւնք, հեղինակին մերձաւորութիւնը ժամանակաւ,—քանզի Քսենոփոն իբր ութսուն ամօք միայն յետոյ է քան զԿիւրոս,—հրաշալեաց մուտ չտալը պատմութեան մէջ և մանաւանդ միաբանութիւնն ընդ Հրէից գրոց. զորօրինակ, թէ խնամութեամբ և ոչ պատերազմաւ անցաւ Մարաց տէրութիւնն ի Պարսս, թէ եղաւ ուրիշ թագաւոր ի մէջ Աժդահակայ և Կիւրոսի, թէ Կիւրոս էր գլխաւոր գործող յառման Բաբելոնի, թէ քաղաքն առնուեցաւ դարձմամբ գետոյն, և թէ այն պատերազմին մէջ գործակից էին Մարաց ուրիշ հնդեւրոպական ազգեր, յանուանէ Հայք։ Այս ամենայն պատմական դէպքեր են, զորս Քսենոփոն կը յիշէ միաբան ընդ Հրէից գրոց։

10. Մարգարէից մատեանք, յորս ինչպէս տեսանք կ'ակնարկուի Բաբելոնի անկումն ի ձեռն Մարաց կամ արիական ազգաց՝ չեն ցուցներ թէ ինչ էր այս անկման պատճառը։ Եհովա առ ի խընդրել զվրէժ ժողովրդեան իւրոյ Իսրայէլի ի Բաբելացւոց՝ յարոյց ընդդէմ նոցա զՄարս։ Երեմիա Ծ. և ԾԱ. գլուխներուն մէջ յիշելով Բաբելոնի անկումը՝ ստէպ կը կրկնէ վրէժխնդրութիւն բառը.—«Ճակատեցարուք շուրջ զԲաբելոնիւ, զի վրէժխնդրութիւն յԱստուծոյ է. խընդրեցէք վրէժս ի դմանէ. որպէս արարն՝ արարէք դմա»։ «Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. Ահաւասիկ ես խնդրեցից վրէժ յարքայէն Բաբելացւոց և յերկրէ նորա, որպէս խնդրեցի վրէժ յարքայէն Ասորեստանեայց»։ «Կազմեցէք աղեղունս, լցէք ըզկապարճս, զի զարթոյց Տէր զոգի թագաւորացն Մարաց, զի բարկութիւն նորա ի վերայ Բաբելոնի, և ջնջեսցէ զնա, զի վրէժխընդրութիւն Տեառն է, վրէժխնդրութիւն տաճարի նորա»։ Եհովա, իբրև բացարձակ տէր, դատաւոր և վրէժխնդիր, ինչպէս պատժեց իւր ժողովուրդն ի ձեռն Բաբելացւոց՝ նոյնպէս կը պատժէ զԲաբելացիս ի ձեռն Մարաց։ Մարգարէ մը, իբրև պաշտօնեայ Եհովայի՝ քան զայս ուրիշ պատճառ չէր կրնար տալ դիպաց։

11. Բայց ըստ Հերոդոտոսի և ըստ Քսենոփոնի՝ Մարաց պատերազմին առիթ տուաւ դաշնակցութիւն մը, որ եղաւ ի մէջ Լիւդացւոց և Բաբելացւոց ընդդէմ Մարաց։ Մինչ Նաբուգոդոնոսոր սեմական ազգաց միութիւնն ի գլուխ կը հանէր, թագաւորութիւններ ջնջելով, քաղաքներ աւերելով և ազգեր խախտելով՝ հնդեւրոպական ազգաց մէջ այս միութիւնը կը կատարուէր դաշնակցութեամբ և խնամութեամբ։ Ըստ Քսենոփոնի՝ յառաջ քան զԿիաքսար Բ. պաշտպանողական և յարձակողական դաշինք կար ի մէջ Մարաց մէկ կողմանէ, Պարսից և Հայոց՝ միւս կողմանէ։ Բարեկամական դաշնադրութիւն մը ըստ Հերոդոտոսի (տես. էջ 51), հաստատուեցաւ ի մէջ Կիաքսարայ և Լիւդացւոց։ Խնամութեան գալով՝ Աժդահակ իւր դուստրը տուաւ Պարսից իշխանին Կամբիւսեայ, Ալիադդէս արքայ Լիւդացւոց զդուստր իւր զԱրիենիս՝ (Հերոդ. Ա.) Աժդահակայ, և Տիգրան զքոյր իւր Տիգրանուհի՝ Աժդահակայ։ Թէպէտ այս վերջին երկու խնամութիւնք, մանաւանդ վերջինը, կատարեալ պատմական ստուգութիւն չունին՝ կը ցուցնեն սակայն, թէ այն ատենուան արիական կամ հնդեւրոպական ազգաց մէջ խնամութիւնը սովորական էր։ Լիւդացիք եղան ըստ Հերոդոտոսի առաջին՝ որ խորհեցան միացնել բոլոր հնդեւրոպական ճիւղն, ինչպէս Բաբելացիք միացուցած էին արամէականը։ Առ ի գլուխ հանել զայս գործ՝ հարկ էր նախ խորտակել Մարաց զօրութիւնը, և

այս պատճառաւ շահեցան զԲաբելացիս և զԵգիպտոս։ Ըստ Քսենոփոնի՝ Բաբելացիք գրգռեցին զՄարս։ Կիաքսար տեսնելով մեծ զօրութիւն յարուցեալ յիւր վերայ՝ սկսաւ պատրաստել զդէմ ունել, ուստի և կանչեց գալ Պարսից զօրօք զիւր քեռորդին զԿիւրոս, որում և յանձնեց սպարապետութիւնը։ Այսպէս ըստ Յունաց։

12. Հրէից մատեանք յառման Բաբելոնի յանուանէ չեն յիշեր զԿիւրոս, կու տան սակայն մակաբերել, թէ Կիւրոս միջամուխ և գըլխաւոր էր ի կատարման այնր գործոյ։ Եհովա, ըստ Եսայեայ, բռնելով զձեռանէ Կիւրոսի՝ կը հնազանդեցնէ նմա ազգերը. լեռները կը հարթուին, պղնձէ դրունք կը խորտակին, քաղաքներ կը բացուին, այլովքն հանդերձ.—«Այսպէս ասէ Տէր Աստուած ցօծեալն իւր ցԿիւրոս. Կալայ զաջոյ ձեռանէ նորա՝ հնազանդեցուցանել առաջի նորա զազգս, և քաղաքք մի փակեսցին։ Ես երթայց առաջի քո, զլերինս հարթեցից, զդրունս պղնձիս խորտակեցից, և զնիգս երկաթիս փըշրեցից. և տաց զքեզ զգանձս խաւարինս, և զաւանդս աներևոյթս բացից քեզ» (Ես. ԽԵ. 1—3)։

Հրէից գիրքերն առանց յիշելոյ Մարաց տէրութեան անցնելն ի Պարսս, յետ անկման Բաբելոնի իսկ և իսկ յիշելով զԿիւրոս և նոր հարստութիւնը կոչելով յանուն Մարաց և Պարսից՝ կու տան մակաբերել թէ այս անցումը եղաւ խաղաղութեամբ, և թէ փոփոխութիւնն այն՝ էր հարստութեան կամ տիրող ազգատոհմի փոփոխութիւն, զորոյ մասնաւոր պարագաները կ'աւանդէ մեզ Քսենոփոն, այսինքն թէ ինչպէս առ ի չգոյէ արու մանկան, իգական ճիւղին անցաւ տէրութիւնն, ի Կիւրոս պարսիկ, մար ի մօրէ։

Արդարև Եզր և Նէեմիա որ ժամանակակից են Պարսից՝ Մարք և Պարսք անունները միանգամայն չեն գործածեր. այլ ի գիրս Դանիէլի և Եսթերայ միայն, որ յետ անկման Պարսից տէրութեան գրուած են՝ կը գտնենք Պարսից տէրութիւնն այսպէս կոչուած. բայց որովհետև Եսթերայ գիրքն ըստ մասին պատմական աղբերէ մը առնուած կը թուի՝ կրնանք այն կրկին կոչումն իբրև հաստատութիւն համարել Քսենոփոնի պատմութեան զանցմանէ պետութեան Մարաց ի Պարսս։

Զիարդ և իցէ՝ տարակոյս չկայ, թէ յետ անկման Բաբելոնի Կիւրոս եղաւ միահեծան տէր բոլոր արևմտեան Ասիոյ, և քաղդէական տիրապետութեան յաջորդեց մեղմ և արդար իշխանութիւն մը, ընդ որով բոլորովին անկեալ ազգեր անգամ առին գէթ ինքնօրէնութիւնը մը, ինչպէս յայտնի է Հրէից գերութեան դարձէն։ Կիւրոսի այս ազնուական գործը կը վարձատրէ Եսայեայ ԽԵ. գլուխը փառաւոր գովեստով մը նոյն իսկ Եհովայի բերնէն.—«Ես յարուցի

զնա—ասէ Եհովա—արդարութեամբ թագաւոր, և ամենայն ճանապարհք նորա ուղիղ են» (Ես. ԽԵ. 13)։ Բայց Կիւրոսի ազնուականութեանն աւելի անաչառ վկայ է, ըստ աւանդութեան Հերոդոտոսի՝ նոյն իսկ Պարսից ազգը, որ զԿիւրոս կ'անուանէր հայր, զԿամբիւս՝ բռնակալ, զԴարեհ՝ հարկահան։ Δαρεῖος μὲν κάπηλος, Καμβύσης δὲ δεσπότης, Κῦρος δὲ πατήρ (Հերոդոտ, Գ. 39)։

13. Ասիոյ հին աշխարհակալաց վարչութեան սկզբունքն էր՝ առնել հարկատու ազգերը, և եթէ կ'ապստամբէին՝ ջնջել։ Այսպէս արարին Ասորեստանցիք և յաջորդք նոցա Բաբելացիք Եղամայ, Միջագետաց, Ասորւոց և Պաղեստինու ազգերուն։ Այս դրութիւնն արդարև տեղի կու տար ստէպ ապստամբութեանց. բայց առ Կիւրոսիւ և առ յաջորդաւ նորա Կամբիւսեաւ (529—522), որ իւր թագաւորութեան գրեթէ բոլոր ժամանակն անցուց Եգիպտոս նուաճելու՝ դադրած էին ապստամբութեան ձայները։ Առ այս նպաստած կ'երևի ոչ միայն Կիւրոսի մեղմ և զգօն կառավարութիւնը, այլ և համբաւ զինուց նորա։ Արդարև յետ խորտակելոյ Կիւրոսի զարմանալի արագութեամբ երկու մեծ տէրութեանց, Լիւդացւոց և Բաբելացւոց զօրութիւնը՝ դժուարին էր գոնէ ժամանակ մը խլրտել մանր մանր ազգաց։ Կիւրոսի զինուց ազդեցութիւնը համառօտ բայց ազդու կը նկարագրէ Եսայեայ ԽԱ. գլուխը (համար 2, 3). «Զարհուրեցուցէ զթագաւորս, և տացէ հողոյ զսուրս նոցա, և իբրև զխիւ մերժեսցէ զնետս նոցա, և արասցէ զնոսա փախստականս, և անցցէ խաղաղութեամբ զճանապարհս ոտից իւրոց»։ Յետ Կամբիւսեայ առ Սմերդիւ կորաւ Պարսից զօրութեան ահը, և սկսան ապստամբութիւնք, ուստի և Դարեհ Վշտասպեայ (522—486) փոխելով վարչութեան սկզբունքը՝ ինքնօրէն իշխանութիւններն արար նահանգ. վարչութեան կերպ մը, որուն հետևեցան յետոյ Հռոմայեցիք։ Այսպէս Դարեհ եղև գտակ սատրապական դրութեան, որ տևեց մինչև Աղեքսանդր մեծ։

14. Յասացելոց աստի մինչև ցարդ զհայոց առ Ասորեստանեօք և Մարօք իբրև արդարև պատմութիւն՝ կը հետևի, թէ ի վերջ կոյս Ը. դարուն նախ քան զՔր. կամ առ Սենեքերիմաւ՝ Հայաստան ազատ երկիր էր, որ կը կոչուէր Արարատ ի Հրէից, և եթէ պարտ է հաւատալ բևեռագիրները կարդացողներուն՝ Ուրարդի կամ Արարդի՝ յԱսորեստանեայց. թէ այս երկրին մէջ կար բնիկ թագաւորութիւն մը, ի Հրէից Արարատեան թագաւորութիւն կոչուած, թէպէտ յայտնի չէ, թէ այս թագաւորութիւնը մեր Արարատեան նահանգը միայն կը պարունակէր թէ աւելի ընդարձակ մաս մը, և թէ թէպէտ այս թագաւորութեան յարաբերութիւնն ստուգիւ յայտնի

չէ, թէ ինչպէս էր ընդ Ասորեստանեայս՝ բաւական յայտնի է սակայն, թէ Արարատեան ազգն, իբրեւ մերձաւոր ծագմամբ, թերեւս նաեւ կրօնիւք, Մարաց՝ էր բարեկամ նոցա, մինչեւ լինել մին ի նիզակակցաց Մարաց յառման Բաբելոնի։ Այսպէս այն ժամանակուան Ասիոյ աղօտ եւ շփոթ պատմութեան մէջ կը գտնենք մեր ազգային գոյութեան թել մը, որոյ ծայրը թէպէտ անտեսանելի է մեզ նախապատմական ժամանակին մէջ՝ յայտ գալով սակայն յԸ. դարուն՝ կու գայ մինչեւ նախ քան զՔր. 518, որ է Թուական պատերազմին Դարեհի ընդ Հայս։

15. Առ Կիւրոսիւ տեսաք զՀայս իբրեւ առանձին թագաւորութիւն, միջամուխ յառման Բաբելոնի. անտի մինչեւ Դարեհ Վշտասպեայ (522—486) ստոյգ ինչ եւ ուրոյն յիշատակութիւն չունիմք զՀայոց։

Խորենացին յետ դնելոյ զՏիգրան բարեկամ եւ գործակից Կիւրոսի եւ կարգելոյ զնա ի համարի մեծամեծ աշխարհակալաց, մինչեւ տալ նմա հնազանդեցուցանել զՅոյնս ընդ իւրով իշխանութեամբ զամս ոչ սակաւ, եւ օգնականութեամբ Կիւրոսի յինքն յափշտակել զտէրութիւնն Մարաց եւ Պարսից՝ կու տայ նմա, մինչեւ յԱղեքսանդր մեծ, յաջորդս ութ, որոց վերջինն, Վահէ՝ որպէս թէ հակառակելով Աղեքսանդրի կը մեռնի.—«Սա (Տիգրան) ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն (հզօր) եւ խոհեմագոյն... որ եւ զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեւ նուաճեալ հնազանդէր. եւ զատհման մերոյ բնակութեանս ընդարձակեալ ի հինսն մեր հասուցանէ յեզերս ծայրից բնակութեանց» (Խոր. Ա. ԻԴ.)։ Եւ այլուր (Ա., Գլ. ԼԱ.) ասէ. «Բազումք անուանեալ Տիգրանք, մի է եւ միայնակ ի Հայկազանցս, որ զԱժդահակ սպան, եւ զտուն նորա ի գերութիւն վարեաց, եւ զԱնոյշ մայրն վիշապաց. օժանդակ կամօք եւ յօժարութեամբ զԿիւրոս ունելով՝ զիշխանութիւնն Մարաց եւ Պարսից յինքն յափշտակեաց»։ Թողլով առ այժմ զայս պատմութիւն, զորմէ պիտի խօսինք ի ստորեւ՝ գանք յիշել ինչ որ պատմի զՀայոց ի ժամանակակից աղբիւրս, որ համեմատութեամբ առատագոյն են ի Դարեհէ եւ այսր, քան անտի յառաջ։

16. Դարեհի նոր վարչական դրութիւնը, ո՞ր էր, որպէս աստ-ցաք, պարսկական մեծ միապետութեան այլ եւ այլ մասերն, որ ինքնօրէն թագաւորութիւններ կամ իշխանութիւններ էին, ստորա-պութեանց փոխել, կամ ուրիշ բառերով, աւատականութիւնը (féodalité) ջնջելով՝ վերին իշխանութիւնը կեդրոնացուցանել ընդ իւրով ձեռամբ՝—ի սկզբան առիթ տուաւ ծանր դժգոհութեանց։ Նոր կարգադրութեան գլխաւոր դիմադարձներէն մին եղաւ Արմե-

նիա, յորոյ վերայ Դարեհ հնգիցս բանակ զրկեց ընդ հրամանատարութեամբ երկուց զօրավարաց, յորոց մին էր արմէն ազգաւ։ Օբերդ 518-ին նախ քան զՔր. կը դնէ Դարեհի Հայոց դէմ պատերազմն, որ բաւական երկար յիշուած է ի Դարեհեան արձանագրութեան որ ի Պիսիդուն։

Պիսիդուն 556 մէդր բարձրութեամբ ապառաժ է ի հիւսիսոյ Քիրմանշահի, ի վերայ ճանապարհին որ ի մէջ Պաղտատու և Համատանայ (Եկբատան)։ Այս ապառաժին կողերուն վրայ քանդակուած է Դարեհեան արձանագրութիւնը, յորմէ լատիներէն թարգմանութիւն մը տուած է Րօլինսոն (Լրգր. Ասիակ. Ընկ. հատ. Ժ), և Օբերդ նոր գաղղիերէն թարգմանութիւն մը (Հանդ. Հնաբ. Դեկտ. 1846)։ Ի վերջնոյ աստի առնումք հետևեալ կտորը. «Յետոյ, ասէ Դարեհ, յղեցի ի Հայս զծառայ իմ Դատարսէս հայ։ Խօսեցայ առ նա այսպէս. Գնա, զարկ զայս ապստամբ ժողովուրդ, որ ոչ հնազանդի ինձ։ Խաղաց գնաց Դատարսէս նուաճել զՀայս։ Ապստամբք կռուեցան ընդ նմա։ Արամազդ շնորհեց ինձ զիւր օգնութիւն. զօրք իմ սպանին զբազումս ի բանակէ թշնամւոյն։ Երկրորդ անգամ յարձակեցան ապստամբք ի վերայ Դատարսեսի. Արամազդ շնորհեց ինձ զիւր օգնութիւն, և զօրքս սաստկութեամբ զարկաւ ապստամբաց բանակը։ Ապստամբք երրորդ անգամ յարձակեցան ի վերայ Դատարսեսի. Արամազդ շնորհեց ինձ զիւր օգնութիւն, և զօրք իմ դարձեալ սպանին զբազումս ի զօրաց թշնամւոյն։ Յետ այնորիկ Դատարսէս սպասեց ինձ՝ մինչև չոգայ ի Մարս»։

«Այս երեքին ճակատք, որ չէին երեք յաղթութիւնք, ասէ Կիլլմէն, չկրցան նուաճել զՀայս, քանզի հարկ եղև Դարեհի նոր զօրավար եւ նոր բանակ զրկել ի վերայ նոցա. նա մանաւանդ թուի թէ Հայք վանեցին զՊարսս արտաքոյ սահմանաց իւրեանց յԱսորեստան, ուր սպասեց Դատարսէս նոր հրամանաց Դարեհի յետ պարտութեան իւրոյ. պարտութիւն արդարև ծանր, քանզի չև ևս նուաճեալ էր Մարաց ապստամբութիւնը»։

Հայոց վրայ Դարեհի երկրորդ արշաւանաց զօրավար էր Ոմիսէս։ «Ոմիսէս, ասէ արձանագիրն, էր ի ծառայից իմոց. յղեցի զնա ի Հայս և խօսեցայ առ նա այսպէս. Խաղա, գնա, ջնջէ այն ապստամբ զօրքը, որ ոչ հնազանդի ինձ։ Յետոյ Ոմիսէս գնաց նուաճել զՀայս։ Ապստամբք խաղացին ի վերայ Ոմիսէսի տալ ընդ նմա պատերազմ։ Ասորեստանի մէջ կայ երկիր մը... անուն. հոն եղաւ կռիւը։ Արամազդ շնորհեց ինձ զիւր օգնութիւն. զօրք իմ սպանին զբազումս ի զօրաց ապստամբաց։ Երկրորդ անգամ խաղացին թշնամիք ի վերայ Ոմիսեայ տալ ճակատ։ Ի Հայս գոյ տեղի ինչ անուանեալ Անրայ

տիգարա (.՞). Հոն եղաւ կռիւը։ Արամազդ շնորհեց ինձ զիւր օգ-
նութիւն. զօրք իմ սպանին զբազումս ի թշնամեաց։ Յետոյ Ոմխետ
սպանեց ինձ ի Հայս մինչև ցգալուստ իմ ի Մարս»։

17. Կ'երևի թէ Արարատեան թագաւորութիւնն վերջապէս
չկրցաւ դիմանալ զօրութեան Դարեհի, որ անդր քան զլերինս Կոր-
դուաց ի հիւսիս կոյս մինչև ի Կուր, և ի Մարաց մինչև ի Կապա-
դովկիա միացնելով իբրև ուրոյն նահանգ՝ կոչեց Արմին։

18. Ոմանք Արմին կամ Արմենիա բառին այլևայլ մեկնու-
թիւններ տուած են։ Խորենացին յԱրամայ կը հանէ Արմէն անունը
(Խոր. Ա.. ԺԲ.)։ Արդի հնաբաններէն ոմանք (տես էջ 5—6.)՝ յԱր-
մենակայ։ Բայց Արմին կամ Արմնիք անունն ըստ Պարսից (Խոր. Ա.
ԺԲ.), յորմէ Արմենիայն ըստ Յունաց՝ առաջին անգամ կը գըտ-
նենք գործածուած յարձանագրութիւնս Դարեհի Վշտասպեայ, իբր
500-ին նախ քան զՔր.։ Յառաջ քան զԴարեհ՝ զՀայաստան Արմնիք
կամ Արմենիա կոչուած չենք գտներ ուրեք։ Յետ Դարեհի այն երկ-
րին համար սովորական եղաւ այս անունը, և այս է պատճառը որ
յոյն պատմիչք որ յետ Դարեհի են, հնագոյնն անգամ ի նոցանէ
Հերոդոտոս՝ Արմենիա բառը կը գործածեն, մինչ Սեմականք ոչ
այլ անուն գիտէին մեր երկրին համար եթէ ոչ Արարատ։ Թէ ինչ
կը նշանակեն այս անուանք, ինչպէս նաև Հայք անունն՝ առ այժմ
ստոյգ ինչ ասել չէ մարթ. սա միայն յայտնի է, թէ ինչպէս որ
Արարատ Սեմականաց կողմէն տրուած անուն է, և Արմնին Հընդ-
եւրոպականաց կամ յԱրեաց՝ նոյնպէս վերջին անունն Հայ բոլոր-
վին ազգային է և բնտանի։

19. Բայց զինչ և իցէ նշանակութիւն Հայ բառին՝ ըստ մեզ
անտարակուսելի է, թէ Հայք էին ազնուագոյնն ի ցեղից Արմենիոյ,
որպէս և երկիր նոցա Արարատ, մինչև Սեմականաց Արարատու
իմանալ շատ անգամ բոլոր Արմենիոյ երկիրը։ Պատմութեան հակա-
ռակ չենք խօսիր, եթէ ընդ Փարպեցւոյն կոչենք զԱրարատ «գլուխ
աշխարհիս Հայոց», ոչ միայն վասն բնական դրիցն իբրև «միջոց
աշխարհին», այլև վասն բարոյական ազդեցութեանն. քանզի հոն
եղաւ միշտ նիստ թագաւորաց մերոց. գրեթէ ամենայն երևելի
դէպք պատմութեան մերոյ կը յիշեցնեն մեզ զԱրարատ. հոն սկսաւ
և անտի տարածեցաւ Քրիստոնէութիւնն, ընդ նմին և հայ դըպ-
րութիւն և քաղաքակրթութիւն ընդ բոլոր Արմենիա։ «Քանզի
յԱյրարատեան գաւառին ի թագաւորանիստ կայեանսն բղխեցին
Հայոց տանն Թորգոմայ շնորհք քարոզութեան Աւետարանին պա-
տուիրանացն Աստուծոյ» (Ագաթ. ծէ.).

Հին Արարատեան թագաւորութիւնն ինկաւ առ Դարեհիւ,

բայց յիշատակ նորա մնաց, այնպէս որ յետ իբր երկերիւր և յիսուն կամ երեք հարիւր ամաց՝ դարձեալ ի նմին նահանգի, առ Երասխաւ, սկսաւ Հայոց երկրորդ հարստութիւնն այն է Արշակունեաց, որպէս տեսցուք ի ստորև, ոչ առանց պահելոյ նոյն Արարատեան անունը (Բուզ. Գ. ժ.)

20. Թէ Արմենիա առ Դարեհիւ եղաւ նահանգ Պարսից և այնպէս տևեց բաւեց մինչև Աղեքսանդր մեծ՝ յայտնի է յաջորդ ժամանակակից պատմութենէ։ Առ Քսերքսիւ յաջորդաւ Դարեհի (486), Հերոդոտոս ժամանակակից յանուանէ կը յիշէ զԱրմենիա ի կարգս հարկատու ազգաց տէրութեանն Պարսից։ Հերոդոտոս կը յիշէ զՀայս ի մեծասաներորդ բաժնին, որ ձգէր ի Պակտիացւոց (ազգ ինչ սահմանակից Հնդկաց) մինչև ի Սեաւ ծով, և կու տար 400 տաղանդ արծաթոյ ի բովուց.—«Պակտիացիք, Հայք և սահմանակիցք նոցա մինչև Եւքսինոս (Սեաւ) ծով կու տան տաղանդս չորեքհարիւր» (Հերոդ. Գ. 92)։ Բայց ունիմք զնորին իսկ Դարեհի վկայութիւնը։ Յարձանագրութիւնս Պերսեպոլեայ, որ են Դարեհի և Քսերքսի՝ Հայք Արմին անուամբ կը յիշուին իբրև եօթներորդ նահանգ արևմտեան ի կարգս հարկատու ազգաց գանդիկ կրօնիւք։ (Լասսէն. Րիդդէր, Իրան. առ Գաթըրճ. Տիեզ. պատ. հա. Ա.. էջ 341 և 351)։

Յետ Դարեհի մինչև Աղեքսանդր մեծ կացին թագաւորք վեց Պարսից. Քսերքսէս (486—465), Արտաշէս երկայնաբազուկ (465—424), Դարեհ Հարճորդի (423—404), Արտաշէս ուշեղ (404—358), Արտաշէս Ովքոս (358—337) և Դարեհ վերջին Կոդոմանոս (337—334)։ Բոլոր այս թագաւորաց ժամանակ Հայք կամ Արմէնք մնացին հաւատարիմ Պարսից, մանաւանդ, որպէս վկայէ Քսենոփոն ականատես՝ առ Դարեհիւ Հարճորդւով և առ ուշեղն Արտաշիսիւ, յարևմտեան մասին Արմենիոյ։ Բայց կային և ազատ ցեղեր ի կողմանս Տայոց և Բասենոյ, նա մանաւանդ Կորդուաց, որ ապստամբ էին Պարսից թագաւորներէն, և երբ յարձակում կրէին՝ իսկոյն կ'ապաստանէին ի լերինս իւրեանց կանամբք և որդւովք և աղխիւք, և քարինս մեծամեծս գլորելով ի վերուստ՝ չտային թոյլ թշնամւոյն մերձենալ։ Ըստ պատմութեան պարսիկ առաջնորդին Յունաց բիւրուն՝ Պարսից թագաւորն անգամ մը հանած էր Կորդուաց վրայ իբր երկոտասան հազարէ կազմեալ բանակ, և ոչ ոք ի նոցանէ դարձաւ ողջ առ դժուարութեան երկրին։ Բայց այս ցեղերը մինչ խաղաղութեամբ էին ընդ սատրապին՝ զօրք անգամ կու տային։ Զիարդ և իցէ՝ Հայք ի Դարեհէ և այսր գրեթէ յամենայն պատերազմունս Պարսից կը յիշուին Արմէն անուամբ ընդ ձեռամբ պարսիկ զօրավարաց։ Ի պատերազմին Քսերքսի ընդդէմ Յունաց (483)՝ յիշին ի Հե-

րոգոտեայ ընդ այլ ազգս և Արմէնք «վառեալ զինուք ըստ Փռիւգացւոց, ընդ զօրավարութեամբ Արտաքմեայ, որ զԴարեհի Վշտասպեայ դուստրն ունէր կին» (Հերոդ. Է.)։ Յապստամբութեան Կիւրոսի կրտսերոյ ընդդէմ աւագին Արտաշիսի (401)՝ Արմէնք, թէպէտ դրացիք Կապադովկացւոց որոց նախարար էր Կիւրոս՝ մնացին հաւատարիմ Արտաշիսի, որպէս պատմէ Քսենոփոն (Արշաւ. Կիւր. Դպր. Դ. գլ. Դ.)։ Ի պատերազմին Դարեհի վերջնոյ ընդ Աղեքսանդրի կը յիշուին դարձեալ Արմէնք.—«Հայք քառասուն հազար հետևակաց յղեցին, յաւելլին ի նոյնս և եօթն հազար Հեծելոց» (Կ. Կուրտ. պտմ. Աղեքս. հտ. Ա. էջ 272. թրգմ. Հ. Յ. Գաթըրճ.)։ Այս ամենայն մեծաւ մասամբ ժամանակակից վկայութիւնք բաւական են ցուցանել, թէ Արմենիա էր նահանգ Պարսից ընդ իշխանութեամբ պարսիկ սատրապներու։ Առ Քսենոփոնիւ պարսկերէնը տիրող լեզուն եղած էր Արմենիոյ ժողովրդոց։ Զօրավարք Յունաց բիւրուն ջրուոր կանանց հետ անգամ որոց հանդիպեցան ի յանցանել իւրեանց ընդ Արմենիա՝ խօսեցան պարսիկ թարգմանաւ։

21. Արմենիոյ սատրապք ընդհանրապէս էին ազգականք կամ խնամիք թագաւորաց Պարսից։ Առ Քսենոփոնիւ Արմենիոյ արևելեան մասին սատրապն էր Որոնդաս անուն ոմն, փեսայ աւագին Արտաշիսի, իսկ արևմտեան մասին՝ Տերիբազ, ի ցեղէն Հիդառնեայ, միոյն յեօթն նախարարաց, որոց նստուցեալ էր զԴարեհ ի գահ։ Տերիբազայ հետ դաշնադրութեան անգամ մտին զօրավարք բիւրուն Յունաց։ Մին ի զօրավարաց ասոր էր Քսենոփոն, առաջնորդ վերջապահաց բիւրուն, որ և պատմէ զայսոսիկ։ Տերիբազայ էր առանձինն պալատ առ Եփրատայ, և իշխանութիւն ըմպելոյ արծաթի բաժակաւ. ունէր նա յատուկ հացարար, տակառապետ և այլ պաշտօնեայս. արտօնութիւնք որ թագաւորազանց յատուկ էին յայնժամ։

22. Հերոդոտոս և Քսենոփոն ժամանակակիցք, մանաւանդ վերջինն որ ականատես ևս էր՝ կը նկարագրեն Արմենիոյ ժողովուրդն իբրև խաղաղ և երկասէր. երկու փառաւոր յատկութիւնք որ և առ մեօք ճանչցուեցան Հայոց վրայ։ Պարտ է խոստովանել սակայն, թէ Արմենիոյ ժողովրդոց երկասիրութիւնն արուեստներու և ձեռագիտութեան մէջ չէր։ Մեր լեզուին բառերէն սաչափ միայն կրնանք հետևցնել, թէ առ Հայս ի վաղուց կային հասարակ արուեստք, որպիսի են շինողութիւն, դարբնութիւն, ոստայնանկութիւն, հացարարութիւն և այլ նոյնպիսիք, քանզի կը գտնուին հայերէն այս արուեստներու վերաբերեալ անթիւ հին և բնիկ արմատ բառեր։ Բայց լոկ բանասիրական գիտողութիւն մը բաւական չէ պատմութիւն մը հաստատել։

23. Արմենոյ ժողովրդոց երկասիրութիւնը մանաւանդ հովուութեան, մշակութեան և տուրևառի կողմանէ էր։ Հերոդոտոս յատկապէս *հովիւ* կ'անուանէ զՀայս. «Հայք հովիւք ի վերոյ քան զԱսորեստանեայս բնակին» (Հերոդ. Ա.)։ Քսենոփոն Արմենիոյ ժողովրդեան գետնափոր տուներուն մէջ տեսաւ հովիւ և երկրագործ ժողովրդեան մը բոլոր հարստութիւնը։ Ամէն տեսակ ընտանի անասուն ի խաշանց և յարջառոց, զորօրինակ այծ և ուլ, ոչխար և գառն, եզն և կով և որթ պահելու համար՝ մեծամեծ գոմեր կային այն գետնափորաց մէջ։ Հայք այս անասունները կը սնուցանէին գալար խոտով։ Կային նաև այն գետնափորներուն մէջ համբարանոցք լի ցորենով և գարւով և արմտեօք։ Եթէ բանասիրութիւնը կարէ օգնել մեզ յայսմիկ՝ «մշակ» բառին նայելով պիտի համարձակինք ասել, թէ Մշոյ ժողովուրդը մանաւանդ նշանաւոր էր յերկրագործութեան, մինչև հայերէն երկրագործը կոչել *մշակ*, որ մշեցի կը նշանակէ։

Եթէ Մշոյ ընդարձակ և գեղեցիկ դաշտն յարմար էր հողագործութեան՝ անասուն և մանաւանդ ձի բուծանելու յարմար էր Արմենիոյ արևմտեան մասն, երկիր ջրաւէտ, ճարակաշատ, ուր էր գաւառն Կարնոյ ‹արգաւանդահող և շատաջուր,› ըստ Խորենացւոյն, և ուր դաշտք ունէին «զթանձրութիւն խոտոց» և բազմացուցանէին «զանասուն պաճարս, մեծահասակս, քաջամարմինս... համակեալս ի գիրութեան» (Խոր. Գ. ԾԹ.)։ Արդարև Արմենիոյ այն մասին ձիերն, գէթ յայնժամ, ընտիր էին քան զՊարսից և զՄարաց ձիս. հոն կը դարմանուէին և անկէ կ'երթային Պարսից թագաւորին ձիերն ընդ խնամով սատրապին, որ և տարին 20,000 մտրուկ երիվար կը ղրկէր թագաւորին ի պաշտօն Միհր աստուծոյն։ Թերևս այս որբազան նուիրին շնորհն էր, որ Արմենիոյ այն մասին սատրապն ունէր արտօնութիւն ձի հեծցնելու թագաւորն, երբ առաջիկայ կը գտնուէր։ Արմենիոյ այս մասին ժողովրդոց առևտրոյ յատուկ ճիւղ լեալ թուի ի վաղուց ձի և ջորի տանել երևելի վաճառաշահ քաղաքներ։ Եզեկիէլ, իբր 600-ին նախ քան զՔր., յողբսն որ ի վերայ Տիւրոսի՝ ի թիւս վաճառական ազգաց թուի ակնարկել զՀայս յասելն. ‹Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք և ջորւովք լցին զվաճառս քո» (Եզեկ. Իէ. 14)։

24. Այսպէս մեծաւ մասամբ հովուութեամբ և մշակութեամբ պարապեալ ժողովուրդ մը հարկաւ ամէն տեսակ առատութիւն կը վայելէր։ Ցոյնք յետ եօթնօրեայ ճանապարհորդութեան ընդ ափափայս Կորդուաց գրեթէ նօթի՝ հիացան, լիմարեցան, երբ հասնելով ի Հայս՝ գտան ամբաւ առատութիւն ուտելեաց և ըմպե-

լեաց. Հաց ի ցորենոյ և ի գարւոյ. միս ամեն տեսակ անասնոց,
գառին, ուլու, որթու, խոզի և հաւուց. ըմպելիս՝ ընտիր և զօրա-
ւոր գարւոյ գինի, զոր երկայն և բարակ եղեգամբ ծծելով կ'ըմ-
պէին։ Յոյնք շատ տեղ գիւղերու մէջ գտան նաև հին և անուշա-
հոտ գինի, տեսակ տեսակ իւղեր, ինչպէս խոզի ճարպ, կնճիթ,
ի դառն նշոյ և ի բևեկնոյ մզեալ իւղեր, նաև իւղս անուշունս
վասն օծանելեաց։ Եթէ ճշմարիտ է այս նկարագիր Քսենոփոնի (որ
իբրև ականատես կը խօսի ի գիրսն որ կոչի Արշաւանք Կիւրոսի և
Նահանջ Յունաց բիւրուն, Դ. դպրութիւն, Գլ. 1—6)՝ չիք տարա-
կոյս, թէ եթէ ոչ յառաջ՝ գէթ յերկերիւրամեայ միջոցին իշխանու-
թեան Պարսից՝ էր «դար ոսկի անդէորդութեան և մշակութեան
Հայոց աշխարհին» (Հ. Յ. Գթրճ. Տեղգ. պտմ. Հտ. Ա. էջ 343)։
25. Այսպիսի և այսչափ բերովք առատ երկիր մը, մեծամեծ
ջրոյ ճանապարհօք յարևմուտս, ի հարաւ և յարևելս, որպիսի
էին Տիգրիս, Եփրատ և Երասխ՝ չկարէր մնալ առանց տուրևառիկ
փոփոխման ընդ երևելի վաճառաշահ երկիրս, որպիսի էին Փիւնիկէ,
Բաբելոն և Մարաստան, յորոց պաշարեալ էր Արմենիա։ Հայոց վա-
ճառականութեան Եփրատաւ ի Բաբելոն վկայէ Հերոդոտոս։ Նաւք
Հայոց, որ ըստ նոյն պատմագրի կ'երթային ընդ Եփրատ ի Բա-
բելոն՝ էին այլ և այլ մեծութեամբ. յիւրաքանչիւր նաւի կային մի
կամ աւելի իշեան։ Հայք կը շինէին այս նաւերը ծառի կոճղներէ
բոլորակ, և կը պատէին մորթով։ Այս նաւերուն մեծերը կը տա-
նէին մինչև 1,000 տաղանդ բեռ։ Հայ նաւավարք յետ հասնելոյ
ի Բաբելոն, թափելով (պարպելով) զբեռինսն՝ նաւերուն փայտը
և յարդը կը վաճառէին, և մորթերը բառնալով էշերուն վրայ՝
կը տանէին ցամաքաւ յերկիր իւրեանց, քանզի գետոյն սրընթացու-
թեան աղագաւ դէպ ի վեր նաւարկել անհնար էր։ «Նաւք նոցա
որ երթան ընդ գետ անդր ի Բաբելոն՝ բոլոր բոլորակք և ի մաշկէ
են, զորս Հայքն հովիւք որ ի վերոյ քան զԱսորեստանեայս բնակեալ
են՝ յօրինեալ կազմեն ի ծառոցն կտրելոց և պատեն մորթովք. . .
ոչ յետին կողմն նաւին յայտնի և առաջին կողմն սուր, այլ մանա-
ւանդ ի կերպարանս վահանի է բոլորակ շուրջանակի։ . . . Այսց
նաւուց և մեծամեծք գոն և մանունք. ամենևին իսկ մեծամեծքն
տանին բեռն իբրև հազար տաղանդ. իւրաքանչիւր նաւ ի նաւացն
ունի յինքեան էշ մի. որ մեծամեծքն են՝ աւելի ևս։ Իբրև ի Բա-
բելոն նաւավարք հասանիցեն և զբեռնն թափիցեն՝ զփայտն և
զյարդն ամենայն տան գնոց, և զմորթն հանեալ յէշսն՝ վարեալ
տանին ի կողմանս Հայոց աշխարհին, քանզի ի վեր կոյս գետոյն
չմարթի նաւարկել վասն ուժգնութեանն, և յայն սակս իսկ ոչ

ի փայտից այլ ի մորթոյ նաւքն գործին» (Հերոդոտ. Ա. թրգմ. Հ. Յ. Գաթըրճ.)։

Ինչպէս Կորդուացիք վարձկանութեամբ՝ նոյնպէս Հայք վաճառականութեամբ, ինչպէս կ'երևի, Կուր գետով ընդ ծովն Կասպից և ընդ Ովքոս կ'երթային սեէպ ի Հնդիկս։ Ըստ Քսենոփոնի, երբ Կիւրոս կամեցաւ պատգամաւոր ղրկել ի Հնդիկս՝ ի Կորդուաց և ի Հայոց միանգամայն խնդրեց առաջնորդ։ «Ով Հայաստանեայք, և դուք, Քաղդէացիք (Կորդուք), ասէ Կիւրոս, ասացէք ցիս, եթէ առաքիցեմ ես զոմն յիմոց աստի առ արքայն Հնդկաց, առաքիցէք և ի ձերոց այտի առաջնորդս ի ճանապարհին։ . . Ի փոխանդր առաքէր Կիւրոս զպատգամաւորն. իսկ թագաւորն Հայոց և Քաղդէացիքն յղէին ընդ նմա՝ զորս բաւականս իսկ համարէին գործակիցս լինել և զպատշաճսն զԿիւրոսէ խօսել» (Քսեն. Խր. Կիւր. թրգմ. Հ. Յ. Գաթրճ. էջ 169, 171)։

26. Արդէն յիշեցինք (էջ 69) թէ ինչպէս Քսենոփոն, մին ի զօրավարաց Յունաց բիւրուն, որ եկած էին յօգնութիւն կրտսերոյն Կիւրոսի յաղթելու՝ գրեց այն արշաւանաց և Յունաց դարձին պատմութիւնը, ուր կը գտնուին ակնարկութիւնք զանազան կենաց ժողովրդոց Արմենիոյ այնր ժամանակի։ Յերթալն ի պատերազմ ընդ Կիւրոսի՝ սաչափ միայն կը յիշէ Քսենոփոն, թէ հասնելով յափունս Եփրատայ գտան անթիւ գիւղեր լի ցորենով և գինւով, և յետ մնալոյ այն կողմերն երեք օր՝ առատ պաշարով մեկնեցան։ Ի դարձին իւրեանց զկնի պարտութեանն և մահուան Կիւրոսի, յետ անհնարին վտանգաց և տառապանաց, զորս կրեցին ի Պարսից՝ որոշեցաւ երթալ ընդ Հայս։ Յոյնք ունէին առաջնորդս ճանապարհի և թարգման պարսիկ ի բնակաց երկրին։ Բայց հարկ էր անցնիլ ընդ լերինս Կորդուաց, անց արդարև դժուարին և վտանգաւոր։ Կորդուաց գիւղերն էին լերանց հովիտներուն մէջ, ընդ որս էր ճանապարհն։ Կորդուացիք սովոր էին ի մերձենալ թշնամւոյ թողուլ զշէնս իւրեանց և ելանել լերանց գլուխները, քանզի գիտէին «յանդգնագոյնս արշաւել ընդ խորտաբորտս և ընդ վիմուտ տեղիս», որպէս ասէ Խորենացին զՄակաց (Խոր. Գ. ԾԵ.), որ էին գրեթէ համացեղք ընդ Կորդուաց։ Կորդուացիք գիտէին նաև մեծ դիւրութեամբ քարեր տեղալ, և զի աղեղնաւոր էին կորովի՝ կը գործածէին աղեղունս և նետս անհեդեդ մեծութեամբ։ Նետերուն երկայնութիւնն էր իբր երկու կանգուն, այնպէս որ Յոյնք սկսան այն նետերն իբրև տէգ գործածել։ Նոյնպէս վկայէ և Դիոդորոս Սիկեղացի (Դպր. ԺԴ.), թերևս առեալ ի Քսենոփոնէ։ Ի սկզբան Կորդուացիք մեծ վնաս տուին Յունաց լերանց գլուխներէն։ Ի Յունաց մեռան գլաջարդ և

նետահար ոչ սակաւք, յորոց յանուանէ յիշէ Քսենոփոն զքաջն Կղէարքոս լակեդեմոնացի և զԿեփիսոդորոս և զԱմփիկրատէս աթենացիս, որ մեծ ցաւ տուին Յունաց։ Այնուհետև հարկ եղև Յունաց, յառաջ քան զմերձենալն ի շէնս Կորդուաց՝ զօրաբաժին զրկելով կանխել բռնել բարձունքը։ Այսպէս զօրն ապահովութեամբ կը բնակէր գիւղերն՝ ուր կը գտնէր առատ պաշար։ Իսկ գինին, ասէ Քսենոփոն, այնչափ առատ էր, որ բռեալ գուբեր գտնուեցան լի այսու ըմպելեաւ։ Յոյնք նաև շատ պղնձի անօթներ կամ զարդեր գտան ի տունս Կորդուաց։ Յետ իբր չորեքհարիւր ամաց Ղուկուղլոս հռոմայեցին գտաւ նաև ոսկւոյ և արծաթոյ մեծ գանձ առ Կորդուացիս, իսկ ցորեան, եթէ պարտ է հաւատալ Պլուտարքոսի՝ իբր երեք միլիոն քոռ։

Յոյնք յետ եօթն օր ճանապարհորդելոյ ընդ Կորդուս անհնարին դժուարութեամբ՝ եկան ի գետ մի, որ զԿորդուս բաժանէր ի Հայոց։ Բազմահմուտն Անուիլ կը համարի, թէ Քովբար էր այս գետը, Տիգրիսի ճիւղերէն մին, առ որով Եզեկիէլ տեսաւ Եհովայի փառքը։ ԶՔովբար չէ պարտ շփոթել ընդ Քաբօրասայ կամ Քաբուրայ Միջագետաց որ թափի յԵփրատ։ Յունաց այս օթևանը շատ հեշտ թուեցաւ անցեալ տառապանաց յիշատակաւ, որ քաղցր քուն շնորհեց զօրուն։ Բայց առաւօտուն փոխուեցաւ տեսիլը։ Յայնկոյս գետոյն տեսնուեցան հեծեալք սպառազէն, որ կը թուէր թէ կամէին արգելուլ Յունաց անցքը։ Ի վերոյ քան զայրուձին կար հետևակաց գունդ մը ի Հայոց և ի Խաղտեաց ճակատեալ ի պատերազմ։ Խաղտեաց համար կը պատմուի, ասէ Քսենոփոն, թէ են ազատ և պատերազմող. զէնք նոցա են ասպարք մեծամեծք յուռեաց և գեղարդունք։ Յոյնք զինուորական հնարիւք խաբելով թշնամին՝ անցան գետը քարուտ և ծանծաղ տեղէ մը։ Թշնամիք, որ էին վարձկան զօրք Որոնդասայ սատրապին արևելեան Արմենիոյ, տեսնելով Յունաց յառաջապահներն յայնկոյս գետոյն՝ քաշուեցան։

Ի պատճառս ստէպ պատերազմաց ընդ Կորդուս՝ Հայոց գիւղերն իբր հինգ փարսախ հեռու էին գետէն։ Առաջին գիւղն ուր եկան Յոյնք՝ էր մեծ, լի պաշարով։ Սատրապն ունէր հոն պալատ, և տուներէն շատերն ունէին աշտարակ։ Այս երկիրն էր արևմտեան Արմենիա ընդ իշխանութեամբ Տերիբազայ, որ էր բարեկամ Թագաւորին։ Թագաւորը ձի հեծցնող ի պաշտօնէ այս սատրապն էր։ Տերիբազ սպայիւք ոմամբք եկն շտապաւ, կամէր խօսել թարգմանաւ։ Կը խոստանար բարեկամութիւն ցուցնել Յունաց՝ եթէ Յոյնք հաճէին գիւղեր չայրել, այլ պարէնիւ միայն շատանալ։ Յոյնք յանձն

տալն, և այնպէս կռեցաւ դաշն։ Այս Տերիբազ է, սատրապ արևմտեան Արմենիոյ՝ որում յանձնեց յետոյ Արտաշէս Պարսից նաւատորմիղն ի պատերազմին ընդդէմ Կիպրոսի (366), մինչ Որոնդաս սատրապ արևելեան Արմենիոյ, փեսայ Թագաւորին՝ էր հրամանատար ցամաքային զօրուն։ Յոյնք իբր հնգետասան փարսախ երթալով յարևմուտս կոյս հիւսիսոյ՝ ամենայն ուրեք կը գտնէին գիւղեր լի պաշարօք, ուրեք ուրեք նաև պալատներ։ Բերոց ընտիրը կը գտնուէր այս գիւղերուն մէջ. պախրէ, ցորեան, գինի հին անուշահոտ, չամիչ, ընդեղէն ամեն տեսակ, ազգի ազգի իւղեր բազում յոյժ, զորս բնակիչք կը գործածէին փոխանակ ձիթոյ, զոր օրինակ հալած ճարպ խոզի, կնճիթ, ի դառն նշոյ և ի բեւեկնոյ մզեալ իւղեր, նաև նոյն տունկերէն հանուած օղիներ։ Մինչ Յոյնք կը պատրաստուէին խաղալ յառաջ՝ Տերիբազու բանակէն պարսիկ մը պատմեց, թէ Տերիբազ կը խորհէր յարձակել ի վերայ Յունաց լերան մը կիրճը ընդ որ միայն էր անց։ Արդարև Տերիբազայ զօրքը փորձեցին արգելուլ Յունաց անցքը, բայց չկարացեալ զդէմ ունել յարձակման նոցա՝ փախան։ Իբր քսան երիվար, Տերիբազայ վրանը, արծաթի գահոյք և ստոմանք, նաև հացարարք և մատռուակք սատրապին անկան ի ձեռս Յունաց։ Թուի թէ ճանապարհն Յունաց էր ընդ Տարօն և ընդ Բարձր Հայս (Անգեղ տուն), ուր մօտ ի Կարին անցան Յոյնք զԵփրատ, քանզի ասէ Քսենոփոն, թէ չէին անտի հեռի ակունք Եփրատայ և թէ պատահեցան ջերմուկներու։ Աստի յառաջ դժուարին եղաւ չուն ի պատճառս յորդութեան ձեան։ Քիրիսոփոս իւր յառաջապահներովն ընդ երեկս հասնելով գիւղ մի՝ տեսաւ կանայս և աղջկունս, որ մօտաւոր աղբերէ մը ջուր կը տանէին։ Կանայք հարցանեն Յունաց թէ ո՞յք են։ Թագաւորին կողմէն ղրկուած զօրք են առ սատրապն, ասէ թարգմանն պարսկերէն։ Սատրապն չէ աստ, ասեն կանայք, այլ է աստի փարսախ մի հեռու։ Քիրիսոփոս ջրուոր կանանց հետ մտնելով գիւղը՝ գնաց առ աւանապետն, և զօրքը բանակեցան անդ։ Քսենոփոն վերջապահօք եկած էր յայլ գիւղ, իբր քսան ասպարիզօք հեռու Քիրիսոփոսի գիւղէն. Քսենոփոն ճաշեց այն իրիկուն ընդ աւանապետին և ընդ դստեր նորա, հարսն իննօրեայ, որոյ այրն գացած էր որսալ նապաստակ։ Տունք գեղջն էին ընդարձակ գետնափորք, նեղ նեղ լուսամուտք։ Մարդիկ կ՚իջնէին սանդղով, անասունք՝ ընդ մուտս առ ի շեղ գործեալ, քանզի այն գետնափորներուն մէջ կը պահուէին իբրև ի գոմս այծք և ոչխարք և եզինք, նաև հաւք պէսպէս և խար անասնոց համար։ Կային և համբարք ցորենոյ, գարւոյ, ընդեղինաց և գինի ի գարւոյ թակոյկներու մէջ, և եղեգունք

այլ և այլ մեծութեամբ։ Երբ կը ծարաւէր ոք՝ այն եղեգանց մին առնելով ի բերան միով ծայրիւ և միւս ծայրը մխելով գինւոյն մէջ՝ կը խմէր ծծելով։ Այս ըմպելին սաստիկ է, ասէ Քսենոփոն, եթէ ըմպի անապակ, բայց սովորելոց ախորժելի է։ Քսենոփոն վարձ խոստացաւ աւանապետին՝ եթէ առաջնորդէր Յունաց մինչև սահմանագլուխը. Հայրենասէր աւանապետն ուրիշ վարձ չխնդրեց բայց միայն ազատութիւն Հայ գերեաց։ Ի վաղիւ անդր Քսենոփոն աւանապետին հետ գնաց գտնել զՔիրիսոփոս։ Ո՛ր գիւղ և կը հանդիպէր՝ կը գտնէր յոյն զինուորներն ի խնջոյս և յուրախութեան, և գրեթէ ամենայն ուրեք սեղանի վրայ գառն և ուլ, խոզենի և որթ և հաւ. իսկ հաց առատ ցորենոյ և գարւոյ։ Քիրիսոփոսի գիւղը գալով՝ գտին և զնա և զորս ընդ նմայն էին ի խրախութեան, և Հայ պատանիս որ կը ծառայէին նոցա իւրեանց խուժ հանդերձիւ։ Քիրիսոփոս և Քսենոփոն հարցին ցաւանապետն պարսիկ թարգմանաւ, թէ ի՛նչ երկիր էին, և առին պատասխանի թէ ի Հայս։ Հարցին դարձեալ, թէ որո՛յ համար կը բուծանէին Հայք այնչափ ձի. պատասխան տրուեցաւ թէ թագաւորին համար ի սակ հարկի։ Քսենոփոն ընտրեց առաւ ձի մի ի ձիոց նուիրելոց արեգական, և յանձնեց աւանապետին զոհել. յետոյ առաւ մտրուկ մի վասն իւր, և մէն մի մտրուկ՝ վասն իւրաքանչիւր զօրավարի։ Յոյնք առին զաւանապետն ընդ իւրեանս իբրև առաջնորդ մինչև սահմանագլուխը, և թողին ընտանիքը բաց յորդւոյն, որ յանձնուեցաւ Եպիսթենայ Ամփիպոլսեցւոյ։ Քիրիսոփոս զճանապարհայն կասկածելով զաւանապետէն, որպէս թէ անապատ տեղ կ'առաջնորդէր,—քանզի երեք օթևան գացին առանց հանդիպելու գիւղ մը,—զանեց զծերունին։ Ազնիւն Քսենոփոն չհաճեցաւ ընդ խստութիւն Քիրիսոփայ և յանդիմանեց զնա՝ և յիրաւի. քանզի ի խոր խոցեալ աւանապետին ընդ ապաշնորհ գնացս յոյն զօրավարին՝ փախաւ գիշերայն։ Բայց Հայ պատանին, որդի աւանապետին, մնաց առ Եպիսթենայ, և էր նմա սիրելի և հաւատարիմ։

Գ. ՄԱԿԵԴՈՆԱՑԻՔ.

1. Մակեդոնիա մինչեւ Աղեքսանդր մեծ: 2. Արշաւանք յարեւելս. Պատճառք այս արշաւանաց: 3. Այլ պատճառք տկարութեան պարսկական պետութեան. բռնութիւն եւ զեղխութիւն: 4. Մեծութիւն աշխարհակալութեան Աղեքսանդրի: 5. Աղեքսանդրի աշխարհակալութեան արդիւնքն առ յաջորդօք նորա. գիտութիւնք, յունարէն լեզուն: 6. Յաջորդք Աղեքսանդրի. Սելեւկեանք: 7. Արմենիա ի՞նչ օգուտ քաղեց յունական քաղաքակրթութենէ: 8: Հայոց նախնական ժամանակի պատմութեան վերջին շրջանը, յԱղեքսանդրէ մինչեւ Տիգրան մեծ: 9. Արմենիա առ Աղեքսանդրիւ եւ առ յաջորդօք նորա ըստ ո՛չ ժամանակակից պատմագրաց: 10. Արմենիա առ յաջորդօք Աղեքսանդրի ըստ ժամանակակից եւ գրեթէ ժամանակակից պատմագրաց. Արտաշատ: 11. Արշակունի ցեղին ծագումը: 12. Արշակունի բառին նշանակութիւնն ըստ արիական լեզուաց: 13. Արշակունիք՝ ճիւղ թագաւորական ցեղ ըստ հնագոյն մատենագրաց մերոց: 14. Ազգականութիւն ի մէջ Արշակունեաց եւ Պարթեւաց:

1. Ի հիւսիսոյ Յունաց անդր քան զԹեսաղիա, ի մէջ Թրակիոյ եւ Իլլիւրիկիոյ, էր լեռնայինն Մակեդոնիա, թագաւորութիւն փոքր եւ աննշան, մինչեւ կոչել բարբարոս ի Յունաց։ Արդարեւ այնպիսի էր Մակեդոնիա դէթ յառաջ քան զՓիլիպպոս Բ. թագաւոր նորա (360 նախ քան զՔր.), առ որով մեծացաւ եւ զօրացաւ Մակեդոնիա, մինչեւ նուաճել նախ ազդեցութեամբ եւ ապա զինուք զՅունաստան, զյաղթողն ահագին զօրութեան աշխարհակալաց Պարսից։ Փիլիպպոս մեռաւ 336-ին, մինչ կը պատրաստուէր յարձակել յարեւելս, գործ մը զոր կատարեց որդի եւ յաջորդ Փիլիպպոսի, Աղեքսանդր, յերկոտասանամեայ կարճ ժամանակի թագաւորութեան իւրոյ (336—323)։

2. Աղեքսանդրի արշաւանքն յարեւելս չէր յանկարծադէպ. երբ 70 ամօք յառաջ փորձեց զայս Ագեսիղաւոս թագաւոր Սպարտացւոց, որ անցնելով յԱսիա՝ եհար զՊարսս եւ յառաջացաւ մինչեւ ի Կապադովկիա (395). դաշնակցութիւն մը որ կազմուեցաւ պարսկական ոսկւով ի Յունաստան ընդդէմ Սպարտացւոց՝ դարձոյց զԱգեսիղաւոս ի հայրենիս իւր, եւ զերծաւ Պարսից պետութիւնը մօտալուտ վտանգէն։ Յունաց արշաւանքն յարեւելս հետեւանք էր սխալ

աշխարհակալութեան յաջորդաց Կիւրոսի։ Մարական կոչուած պատերազմներով Պարսք երկիցս փորձեցին նուաճել Յունաստան, Դարեհ 492—490, և Քսերքսէս՝ 485—479. բայց յաղթութիւնք Յունաց առ Մարաթոնիւ և առ Սաղամիսաւ ցուցին, թէ զօրութիւնը ոչ թէ բազմութեան է, այլ քաջութեան և առաքինութեան։ Յոյնք ճանչցան թէ այն ահագին զօրութեան մէջ յորում էր Պարսից տկարութիւնը։ Նիւթական վայրագ զօրութիւն առանց այն բարոյական ուժոյ, զոր տան զինուորական խրատ և կրթութիւն։ Զկնի ճակատուն առ Պղատեաւ, Քսերքսէս չգտաւ զօրավար փոխանակ Մարտոնիոսի, որ ինկած էր այն ճակատուն մէջ, մինչ առ Յոյնս իւրաքանչիւր բանակ ունէր Միլտիադէսի և Թեմիստոկլէսի պէս գոնէ տասն զօրավար։ Նահանջ բիւրուն ևս աւելի ճանչցուց Յունաց Պարսից տկարութիւնը։

3. Բայց պարսկական պետութեան տկարութիւնը՝ մանաւանդ բռնութիւնը և զեղխութիւնն էր, որ զօրութիւն և մեծութիւն կը կարծուէին։ Սատրապներուն բռնութիւնն, ասէ Հերոդոտոս, այնչափ էր որ բարբարոսք անգամ տժգոհ էին։ Հաւատարմութիւնը, եթէ կար, ոչ թէ ի սիրոյ էր այլ ի տգիտութենէ և յապիկարութենէ։ Բռնութիւնը կը տիրէր նաև ի բանակին։ Հերոդոտոս կը պատմէ, թէ Քսերքսէս յետ հանդէս առնելոյ զօրաց իւրոց, երբ պիտի խաղար ի վերայ Յունաց՝ ասէ ցԴեմարատ յոյն, որ էր ի բանակին Պարսից. «Կարծեմ Յոյնք պիտի չկրնան զդէմ ունել այսչափ բազմութեան»։—«Այո, ասէ Դեմարատ, եթէ չփախչին զօրքդ»։ «Փախչի՞ն, ասէ Քսերքսէս. խարազան կայ»։—«Յոյնք քան զայն ահաւորն ունին, ասէ Դեմարատ,—զօրէնս, որ կը պատուիրէ յաղթել կամ մեռնիլ. աւելի կ'երկնչին Յոյնք յօրինաց քան քու հպատակներդ ի քէն, և պիտի ընդդիմանան քեզ, եթէ ոչ բոլոր Յոյնք՝ գէթ Սպարտացիք, թէև հազարք միայն մնան»։ Քսերքսէս ծիծաղեցաւ։ Թերևս կեղծիք է այս խօսակցութիւնը. բայց Թերմոպիւղեայ անցքը և բոլոր պատերազմին ելքը ցուցին թէ այսպէս էր։ Զեղխութեան գալով՝ այս մոլութիւնը ոչ միայն յարքունիս, այլ և ի բանակին կը տիրէր։ Երբ Յոյնք, յետ ճակատուն առ Պղատեաւ մտին Պարսից բանակը՝ գտան, ասէ Հերոդոտոս, ոսկեթել վրաններ, գահոյս և անօթս պէսպէս յոսկւոյ և յարծաթոյ. կաթսաներն անգամ յարծաթոյ էին։ Գրեթէ ամեն զինուոր ունէր ապարանջան ոսկի ի բազկին, և մանեակ ի պարանոցին։ Քսերքսէս ի փախչելն՝ զօրավարին իւրում Մարտոնիոսի թողած էր կարասին, որ էին անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք և օթոցք ի պէսպէս գունոց։ Պաւսանիաս սպարտացի, զօրավար Յունաց, որոյ ձեռք ինկաւ Պար-

սից բանակը, տեսնելով այնչափ մեծութիւն՝ հրամայեց հացարարաց և խոհակերաց Մարտոնիոսի պատրաստել սեղան, ինչպէս կը պատրաստէին Մարտոնիոսի։ Հրամանը կատարուեցաւ։ Պաւսանիաս մտաւ վրանը, և տեսնելով ոսկեղէն և արծաթեղէն գահոյս, սեղաններ նոյնպէս յոսկւոյ և յարծաթոյ մեծաշուք զարդարուած՝ զարմացաւ. ապա զբօսանաց վասն հրամայեց սպասաւորաց իւրոց այլ սեղան պատրաստել ըստ ծարագու Լակեդեմոնացւոց։ Որովհետև մեծ էր այս երկու սեղաններուն տարբերութիւնը՝ ծիծաղեցաւ Պաւսանիաս, և կոչել տալով Յունաց զօրավարներն ասէ. «Ո՛վ Յոյնք, կոչեցի զձեզ որպէս զի տեսնէք զանմտութիւն պարսիկ զօրավարին, որ ունելով այսպիսի սեղան՝ եկաւ յափշտակել զմերն որ այսպէս ողորմելի է»։

4. Այսպիսի տէրութեան մը վրայ գնաց Աղեքսանդր 35,000 զօրօք։ Աւելորդ է երկար խօսիլ զարդ աշխարհակալութենէն Աղեքսանդրի, որ 334-էն նախ քան զՔր. անցաւ Հելլեսպոնտոս և 324-էն արդէն տէր էր ծանօթ աշխարհի մեծ մասին, այն է յԱդրիական ծովէ մինչև ի ծովն Հնդկաց, և ի Սկիւթացւոց մինչև յԵթովպիա։ Աղեքսանդրի աշխարհակալութեան նիւթական մեծութեան վրայ այսչափ. բայց այն աշխարհակալութիւնն ունի նաև բարոյական կողմ մը, զորմէ երկայնագոյն խօսել հարկ է, որպէս զի գիտնանք թէ որպիսի քաղաքակրթութեան հետ կը մտնենք ի հաղորդութիւն։ Աղեքսանդրի աշխարհակալութեան բարոյական մեծութիւնը կը կայանայ յայնմ, որ այս աշխարհակալութիւնն, ընդհանրապէս խօսելով՝ փոխեց Ասիոյ կեանքը։ Փոխանակ ասիական զեղծ գանդաղութեան մտաւ յունական պինդ ժրութիւն, գիտնական և առևտրական։ Աղեքսանդրի աշխարհակալութիւնն արար զոր ինչ առնէ քաղաքակիրթ ազգ մը յետ մնացած երկրի մը մէջ, ինչպէս առ մեօք Անգղիա ի Հնդիկս և Գաղղիա յԱլճէրի։ Ըստ բանից մատենագրաց որ Աղեքսանդրի պատմութիւնը գրեցին՝ այս աշխարհակալին մեծագոյն նպատակն էր հաստատել յԱսիա, երկրագնտիս այն գեղեցիկ բայց դժբախտ մասին մէջ, ընկերական և քաղաքական կազմութիւն մը բոլորովին նոր, այսինքն փոխանակ այն բռնի և նիւթական կեղծ միութեան, քան զոր լաւագոյն զմտաւ ածել չկրցան հին աշխարհակալք Ասիոյ՝ հաստատել ճշմարիտ բարոյական միութիւն յունական դաստիարակութեամբ և դիւրացնելով ընդհանուր հաղորդակցութեան և վաճառականութեան միջոցները։ Անհաւատալի չէ այսպիսի գաղափարներ ունենալ աշխարհակալի մը, որ առ ոտս Արիստոտելի կրթուած էր։ Բայց թէ Աղեքսանդր ունէր արդարև վերոյիշեալ նպատակը՝ չունիմք առ այս այլ պատմական երաշխաւո-

րութիւն բաց ի վկայութենէն հեռաւոր պատմագրի մը, Դիոդորոսի Սիկեղացւոյ, որ կը պատմէ թէ Աղեքսանդր ի գրի հարած էր այն նպատակը մանր մասամբք, և թէ այն գիրը գտնուեցաւ Աղեքսանդրի առանձին թուղթերուն մէջ։ Բայց Աղեքսանդր ունէր թէ չունէր այնպիսի նպատակ՝ չէ փոյթ. արդեամբ այնպէս եղաւ անդէն առ առաջին յաջորդօք նորա։

5. Աղեքսանդրի յաջորդաց պատմութեան վրայ երկար և ուրոյն տեղեկութիւն տալ աւելորդ է. պարտ է գիտել սակայն, թէ Աղեքսանդրի աշխարհակալութեամբ սկսուած յունական քաղաքակրթութիւնը չմարեցաւ մահուամբ նորա, այլ նախ հեթանոսական և ապա քրիստոնէական ձևով մինչև Արաբացւոց արշաւանքն առ յաջորդօք Մահմետի տևեց, ունենալով ինքեան ոսոխ, բայց ոչ յաղթող, արևելեան քաղաքակրթութիւն մը առ Պարթևօք և առ Սասանեամբք. քաղաքակրթութիւն մը՝ բազմօք նման Ասորեստանցւոցն և Պարսից որոց դուստր էր։ Առ Պտղոմեաւ (323—285) և առ Սելևկոսիւ (312—279), առաջին թագաւորօք Եգիպտոսի և Ասրւոց, գիտութիւնք և արուեստք, ինչպէս նաև վաճառականութիւնը ծաղկած էին ըստ յունական ոճոյ այս թագաւորաց երկիրներուն մէջ։ Աղեքսանդրիա իբրև երկրորդ Աթէնք բարձր ի գլուխ կը պարծէր։ Վկայ է մուսէոնն Աղեքսանդրիոյ հաստատեալ ի Պտղոմեայ։ Գրեթէ ամէն ծանօթ գիտութիւն—փիլիսոփայութիւն, ուսողութիւն, բնագիտութիւն, բժշկականութիւն, բանասիրութիւն, դպրութիւն—ունէր անդ գիւր առանձին սրահ։ Կար մատենադարան մի մեծ ի մուսէոնի և ուրիշ մը ի Սերապէոն, այլ շինուած հանդերձ մեհենիւ, նուիրեալ ուսման և գիտութեան։ Պերգամոյ, փոքր թագաւորութիւն ի Փոքրն Ասիա, 283-ին նախ քան զՔր. սկսաւ մրցիլ, իբրև միւս ևս Աթէնք՝ ընդ Աղեքսանդրիոյ ոչ միայն գիտութեամբ և մատենադարանիւն, այլ և փոխանակ պապիրոսի գիւտիւ մագաղաթին, յորոյ ձեռն պահուեցան և հասին առ մեզ այնչափ ընտիր մատեանք։

Յոյն լեզուն տարածուելով ընդ բոլոր Ասիա և Եգիպտոս՝ շուտով եղև պաշտօնական լեզու դաստիարակութեան, վարչութեան և առևտրոյ։ Ըստ վկայութեան Յերոնիմոսի, բաց ի Գաղատիոյ չկար երկիր յԱսիա ուր չխօսուէր յունարէն։ Այս ազդեցութիւնն արդարև տկար էր ի Մարս և ի Պարսկաստան, ուր կրօնական աւանդութիւնք հակառակ էին հելլենականութեան. բայց ոչ այնպէս ի Հայս, ի Պարթևս և ի Բակտրիա։ Ըստ Պլուտարքոսի, որ իբր կէս դար յետոյ է՝ Հայոց թագաւոր մը Արտաւազդ անուն կը գրէր ողբերգութիւններ Սոփոկլի լեզուաւ։ Այս Արտաւազդ է որդի Տիգ-

բանալ մեծի, զոր մեր Խորենացին կը նկարագրէ իբրև «զիմաստութենէ անփոյթ», «զիշավայրիս և զխոզս արածող», «ծառայ և ստրուկ որովայնի», (Խոր. Բ. ԻԲ.)։ Արդարև զարմանալի է տեսնել Պարթև թագաւորաց դրամներուն վրայ ոչ միայն յունարէն լեզուն, այլ և «յունասէր» վերագիրը։ Յունարէնի ազդեցութեամբ ծնաւ ասորերէն մը (Syriaque), իբր մատենագրական լեզու, և մեր Ե. դարու ոսկեղինիկ մատենագրութեան առաջին ոճոյն քերականական կանոնաւորութիւնը ո՛չ ապաքէն այն մատենագիրներուն յունարէնի զգօն հետևողութեան արդիւնքն էր։ Շատ կ'երկարինք և կը շեղինք մեր նպատակէն՝ եթէ յիշենք արուեստից, առևտրոյ, աշխարհավարութեան, դեսպանութեան, շինութեան, գաղթականութեան վերաբերեալ ինչ որ եղաւ առ յաջորդօք Աղեքսանդրի յԱսիա։

6. Յետ մահուն Աղեքսանդրի մին ի զօրավարաց նորա Պերդիկկաս, որում ի մեռանելն տուած էր Աղեքսանդր զիւր մատանին՝ եղաւ խնամակալ տէրութեան, մինչ միւս զօրավարք այլևայլ նահանգներ բռնելով կը տիրէին առանց անուան թագաւորի։ Զկնի մահուն Պերդիկկայ, միւս զօրավարք յետ երկար պատերազմաց բաժնեցին տէրութիւնը, և Ասիա ինկաւ բաժին Սելևկոսի (312—279)։ Այս բաժնին մէջ էր Արմենիա, որ այնուհետև համարեցաւ իբրև գաւառ ընդ իշխանութեամբ Սելևկեանց, թագաւորաց Ասորւոց։

Սելևկոսի յաջորդաց գլխաւորներն են—Անտիոքոս Ա. Սոտէր (279—261), Անտիոքոս Բ. Թէոս (261—246), Սելևկոս Բ. Կալինիկոս (246—225), Անտիոքոս Գ. Մեծ (225—186), Սելևկոս Դ. Փիլոպատոր (186--174), Անտիոքոս Դ. Եպիփան (174—164), Անտիոքոս Ե. Եւպատոր (164—162), Դեմետրիոս Սոտէր (162—150), Դեմետրիոս Նիկատոր (146—125), և այլք որ չեն նշանաւոր։

7. Արդ տեսնենք, թէ ինչ օգուտ քաղեց Արմենիա յունական քաղաքակրթութենէն, որ մտաւ յԱսիա աշխարհակալութեամբ Աղեքսանդրի։ Արմենիա յառաջ քան զքրիստոնէութիւնն գրեթէ ոչինչ օգտեցաւ յունական քաղաքակրթութենէն։ Առ տկարութեան նոր տերանց իւրոց Սելևկեանց՝ շուտով զօրացաւ հօն հին արևելեան տարրը։ ՅԱրմենիա յարեաւ արդարև նոր Արարատեան թագաւորութիւն մը, ի մոխրոյ հին Արարատեան թագաւորութեան, Արշակունեաց թագաւորութիւն անուամբ, մեծ քան զհին Արարատեան, բայց բոլորովին ասիական։

8. Հայոց նախնական ժամանակի պատմութիւնն ինչպէս էր մութ և ընդհատ առ Ասորեստանեօք և Մարօք՝ նոյնպէս է այսուհետև, այսինքն յԱղեքսանդրէ մինչև Տիգրան մեծ։ Այս ժամանակին հա-

մար եւ չունինք մասնաւոր աղբիւր. արդարեւ կը գտնենք ինչ ինչ յիշեալ ի հին պատմագիրս զՀայոց առ Աղեքսանդրիւ և առ յաջորդօք նորա, մանաւանդ առ Սելեւկեամբք, բայց այս պատմագիրներէն շատք ժամանակակից չեն, և երբեմն հակառակ միմեանց: Այսպէս ինչ որ Դիոդորոս Սիկեղացի, Պլուտարքոս, Կուրտիոս, Յուստինոս և Ապպիանոս կը յիշեն՝ իբր երեք հարիւր և աւելի ամօք յառաջ են քան զնոսա, ուստի և չեն կրնար իբրեւ ստոյգ ընդունուիլ: Պողիբիոս միայն, իբրեւ արդարեւ ժամանակակից, արժանի է կատարեալ հաւատարմութեան, և յետ Պողիբեայ Ստրաբոն՝ իբրեւ մօտագոյն ժամանակաւ: Յետ յուշ առնելոյ զայսոսիկ իբրեւ կարեւոր՝ տեսնենք թէ ինչ կը յիշեն զՀայոց հին պատմիչք ոչ ժամանակակիցք և ժամանակակիցք:

Գ. Աղեքսանդր մեծ անձամբ չեկաւ իւր նոր տէրութեան հիւսիսային կողմը, ո՛չ ի Կապադովկիա և ոչ յԱրմենիա, կամ վասն զի ժամանակ չունեցաւ, և կամ, որ աւելի հաւանական է՝ վասն զի ընդհանուր վաճառականութեան համար, որ էր մին ի գլխաւոր նպատակաց նորա՝ յարմարագոյն գտեցաւ զբաղել հարաւային կողմը: Հիւսիսային նահանգներն, ինչպէս Կապադովկիա և Հայք՝ յանձնուեցան պարսիկ սատրապներու, որ հաւատարիմ գտնուած էին Աղեքսանդրի: Այսպէս Արմենիա յանձնուեցաւ, ըստ Դիոդորոսի և Կուրտեայ՝ Միհրան անուն ումեմն (330—323), սատրապի Լիւդիոյ որ անձնատուր եղած էր Աղեքսանդրի:

Յետ մահուն Աղեքսանդրի Պերդիկկաս եդ կուսակալ ի վերայ Արմենիոյ, ըստ Յուստինոսի՝ Փրատափեռնես, ըստ Դիոդորոսի՝ Նէոպտղոմէոս անուն զոմն, այլ խիստ և ամբարտաւան, որ և մերժեցաւ ի Հայոց, որոց գլխաւոր էր Արդուարդ զոր թագաւոր կ'անուանէ Դիոդորոս: Եւմենէս որ առած էր Կապադովկիոյ կուսակալութիւնը (323), վանելով զԱրիարաթ Բ. թագաւոր Կապադովկիոյ, հրամանաւ Պերդիկկայ երթալով ի Հայս՝ հաւանեցոյց զԱրդուարդ միւսանգամ ընդունել զՆէոպտղոմէոս իբրեւ վերակացու Մակեդոնացւոց կողմէն, գէթ ի նշան հպատակութեան առ Մակեդոնացիս: Բայց յետ սակաւուց Նէոպտղոմէոս գրգռեցաւ ի պատերազմ ընդդէմ Եւմենեայ և սպանաւ ի ճակատուն մենամարտութեամբ ի ձեռանէ նորին իսկ Եւմենեայ: Արդուարդ ըստ Դիոդորոսի յետ մահուան Եւմենեայ հաստատեց զԱրիարաթ Գ. զորդի Արիարաթայ Բ-ի ապաւինելոյ ի Հայս յաթոռ թագաւորութեան հօր նորա: Ըստ ոմանց (Չամչ. Պատմ. Հյ. Ա. էջ 130) Արդուարդայ յաջորդեց Հրանտ կամ Որոնդ: Ըստ Չամչեանի Արդուարդայ և Որոնդի իշխանութեան ժամանակն է իբր 78 տարի, այն է մինչև 247

նախ քան զՔր.։ Եթէ հաստատուի այս պատմութիւնը՝ կը հետեւի թէ արդէն իսկ առ առաջին Սելեւկեան թագաւորօք, այն է իբր յամէ անտի 325 նախ քան զՔր. կար յԱրմենիա ընիկ իշխանութիւն կամ թագաւորութիւն մը. բայց այս պատմութիւնը, որպէս ասացաւ՝ ստուգութեան կարօտ է։

10. Ստոյգ է սակայն թէ մեծին Անտիոքոսի վերջին տարիները (190—186) արդէն կը թագաւորէր, ըստ Պողիբիոսի ժամանակակից պատմագրի, Արմենիոյ մեծ մասին վրայ Արտաքսիաս, այսինքն Արտաշէս ոմն, և էր մին ի ստորագրողաց դաշին, որ Հռոմայեցւոց ազդեցութեամբ կնեցաւ (180) ի մէջ թագաւորաց Փոքուն Ասիոյ— Եւմենեայ Բ-ի արքայի Պերգամոնայ, Պրուսիասայ արքայի Բիւթանիոյ և Արիարաթայ Ե-ի արքայի Կապադովկիոյ մէկ կողմանէ, և միւս կողմանէ Փառնակայ արքայի Պոնտոսի, հաւուն մեծին Միհրդատայ։ Պողիբիոս յետ ի մէջ բերելոյ յիշեալ դաշնադրութեան միջամուխ էր (վեգլխաւոր կէտերն՝ ասէ. «Այս դաշնադրութեան միջամուխ էր (վերին) Ասիոյ թագաւորներէն Արտաշէս, որ կը թագաւորէր ի վերայ մեծագոյն մասին Արմենիոյ». (Պողիբ. գպր. ԻԶ.)։

ԶԱրտաշէս կը յիշէ նաեւ երեւելի ծոյն աշխարհագիրն Ստրաբոն, որ չէր հեռի ժամանակաւ ի նմին Արտաշիսէ։ Ըստ Ստրաբոնի՝ այս Արտաշիսի ժամանակ շինեցաւ Արտաշատ։ «Արտաշատ, ասէ Ստրաբոն, կոչի երբեմն և Արտաշիսաշատ (Արդաքսիասադա), քնղի հիմնեցաւ ի ձեռն Աննիբաղայ վասն Արտաշիսի արքայի առ Երասխաւ. քաղաք մեծ և գեղեցիկ, որ և է սովորական նիստ թագաւորացն Հայոց, ի մուտս դաշտին Երասխայ։ Շինեցաւ ի թերակղզւոջ ուրեմն, զոր կազմէ արմուկն մի Երասխայ, որ և թանայ յերից կողմանց զպարիսպ քաղաքին, մինչ չորրորդ կողմն քաղաքին որ է առ պարանոցաւ թերակղզւոյն՝ փակեալ է խրամով և պատուարաւ, թող զերկոսին ամրոցսն, որ չեն կարի հեռի ի քաղաքէն, տեղիք գանձուց Տիգրանայ և Արտաւազդայ» (Ստրաբ. գպր. ԺԱ., 6)։ Ասի թէ Աննիբաղ, որ յետ պարտութեան իւրոյ ի Հռոմայեցւոց ապաւինած էր առ Անտիոքոս մեծ՝ ի պարտել սորա ի Հռոմայեցւոց գնաց առ Արտաշէս ի Հայս։ Թէ արդարեւ Աննիբաղ գնաց առ Արտաշէս և թէ ըստ խրատու նորա շինեցաւ Արտաշատ՝ թողունք զայսոսիկ. ստոյգ է սակայն, թէ առ մեծաւ Տիգրանաւ, իբր 75 կամ 80 ամօք յետոյ քան զԱրտաշէս՝ կար Արտաշատ իբրեւ նշանաւոր քաղաք Մեծին Հայոց, որպէս յայտ է ի Բուզանդայ. «Խաղացուցին (զօրքն Շապհոյ) յԱրտաշատ քաղաքէ ինն հազար երդ Հրէայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացւոց» (Բուզ. Դ. ԾԵ.)։ Յետոյ յիշելով ուրիշ քաղաքաց հրեայ գերիները՝

կը յաւելու. «Մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յիւրում դարուն ժամանակին» (Անդ.)։

Ստրաբոն որ ծաղկեցաւ ի վերջ կոյս Ա. դարուն նախ քան զՔր. և ի սկզբան Ա. դարուն յետ Քրիստոսի, ուստի և է գրեթէ ժամանակակից Տիգրանայ մեծի՝ իբրև սերունդ վերոյիշեալ Արտաշիսի կը համարի զՏիգրան մեծ։ Ահա Ստրաբոնի խօսքը. «Այս երկրին (Արմենիոյ) վերջին համառօտ պատմութիւնն այս է ի ժամանակէ անտի Պարսից մինչև առ մեզ։ (Արմենիա) յետ լինելոյ ընդ իշխանութեամբ Պարսից և ապա Մակեդոնացւոց՝ հուսկ ուրեմն էանց ի ձեռս թագաւորաց Ասորւոց (Սելևկեանց)... բայց ապա ուրեմն Արտաքսիաս (Արտաշէս) և Զարիադրիս (Զարեհ), (ընիկ) զօրավարք Անտիոքոսի մեծի, բաժանեցան ի մէջ իւրեանց զԱրմենիա և վարեցին զերկիրն ի սկզբան յանուն և հաւանութեամբ Անտիոքոսի. ապա տեսեալ զտէր իւրեանց (զԱնտիոքոս) յաղթեալ ի Հռոմայեցւոց՝ փութացան անցանել ի կողմն Հռոմայեցւոց և լեալ ինքնագլուխ առին զանուն թագաւորի։ Տիգրան (մեծ), սերունդ Արտաքսիասայ, իբրև այնպիսի, կալաւ զբուն Արմենիա (զՄեծ Հայս), այսինքն զամենայն մասն երկրին, որ ձգի զաշխարհօքն Մարաց, Աղուանից և Վրաց մինչև ի Կողքիս և ի ծովեզերեայն Կապադովկիա։ Ի նմին ժամանակի Ծոփացին Արտանէս, սերունդ Զարիադրայ, ունէր զհարաւակողմն Արմենիոյ, մանաւանդ զմասնն յարևմտից հարաւոյ. այլ յետ սակաւ միոյ ընկեցաւ յաթոռոյն և սպանաւ ի Տիգրանայ, որ այսպէս մնաց միահեծան տէր բովանդակ երկրին» (Ստրաբ. գպր. ԺԱ. 15)։

Եթէ ըստ Ստրաբոնի (որ, որպէս ասացաք, ժամանակակից էր Տիգրանայ և Արտաւազդայ, ծննդեամբ Կապադովկացի, դրացի Հայոց և հմուտ իրաց արևմտեան Ասիոյ), Տիգրան մեծ Արշակունի էր սերունդ վերոյիշեալ Արտաշիսի և ի յաջորդաց նորա՝ կը հետևի թէ Արշակունի թագաւորաց ցեղն էր բնիկ Հայ, որ սկսելով առ մեծաւն Անտիոքաւ իբրև կուսակալութիւն ընդ իշխանութեամբ Սելևկեանց՝ եղաւ թագաւորութիւն, մինչև եհաս ի ծաղ փառաւորութեան իւրոյ մեծաւ Տիգրանաւ, որով կ'սկսի մեր պատմութեան պատմական ժամանակը։

11. Խորենացին բոլորովին տարբեր կը պատմէ Արշակունեաց ծագումը։ Ընդհանրապէս կը կարծուի, թէ Արշակունի կը նշանակէ Արշակեան, այսինքն սերունդ Արշակայ առաջին թագաւորին Պարթևաց։ Բայց զթագաւորս Պարթևաց կամ զցեղ նոցա արշակունի կոչուած ոչ ուրեք գտանեմք, մանաւանդ զի բոլոր թագաւորք Պարթևաց Արշակայ սերունդքն չէին. քանզի թագաւորք Պարթևաց

ոչ թէ միշտ որդի ի հօրէ կ'առնուին թագաւորութիւնը, այլ ընտրանաւ։ Արշակ կոչումը, որ կը նշանակէ թագաւոր՝ բոլոր Պարթեւ թագաւորաց բուն անուններուն հետ կից կը գտնուի իբրեւ պատուանուն, ինչպէս Փարաւոն տիտղոսը՝ Եգիպտացւոց։ Այսպէս Պարթեւաց առաջին թագաւորը (որ, որպէս կարծի, կը կոչուէր Դարեհ, ի ցեղէն Դարեհի վերջնոյ Պարսից թագաւորին, որ յետ վերջին պարտութեան իւրոյ յԱղեքսանդրէ ապաւինած էր ի Բակտրիա, Բահլ ըստ Խորենացւոյն, Բ. Բ.) կը կոչուի Արշակ Ա., յաջորդ նորա Տրդատ՝ Արշակ Բ, յաջորդ սորա Արտաւան՝ Արշակ Գ, սորա յաջորդն Պրապատ՝ Արշակ Դ, յաջորդ սորա Փրաատ՝ Արշակ Ե, յաջորդ սորա Միհրդատ Ա՝ Արշակ Զ, որ է Արշակ մեծ Խորենացւոյն։

Առ Հայս միայն կը գտնենք թագաւորական ցեղ մը Արշակունի կոչուած։ Խորենացին այս արշակունի ցեղ կը համարի սերեալ ի Պարթեւաց, և Արշակունի անունը կը հանէ ոչ յԱրշակայ առաջնոյ, այլ յԱրշակայ Զ-է, որ է Միհրդատ Ա. (Արշակ Բ. կամ Արշակ մեծ ըստ Խորենացւոյն), որպէս թէ ի յիշատակ այս Արշակայ, որ իւր եղբայրը Վաղարշակ թագաւոր կացոյց Հայոց՝ Արշակունի կոչեցաւ Վաղարշակայ տոհմը.—«Յարքայէն Պարսից Արշակայ և Վաղարշակայ եղբօրէ նորա զոր մերոյ ազգիս թագաւորեցոյց, որ յետ նորա եղեն թագաւորք աշխարհիս մերոյ ի նորին սերմանէ, որդի ի հօրէ առնլով զտէրութիւնն՝ անուանեցան Արշակունիք յԱրշակայ» (Խոր. Բ. Ա.)։ Ըստ պատմութեան Խորենացւոյն Արշակ մեծ ապստամբելով Մակեդոնացիներէն կը թագաւորէ «*ի վերայ ամենայն արեւելից*», և սպանելով զԱնտիոքոս ի Նինուէ (·°), կը հնազանդեցնէ «*զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ*». և անշարժ պահելու համար իւր թագաւորութիւնը՝ թագաւորութեան գրեթէ «կէսը» կու տայ իւր եղբօրը Վաղարշակայ, թագաւորեցնելով զնա ի վերայ Հայոց.—«Քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծբին, և սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարեւմտեայ Ասորւոց և զՊաղեստին և զԱսիա և զամենայն Միջերկրեայս (Փոքր Ասիա) և զԹիտալիա (Թեսաղիա ·̃), ի ծովէն Պոնտոսի մինչեւ ի տեղին ուր Կաւկաս յարեւմտեանն յանգի ծով, և զԱտրպատական» (Խոր. Ա. Ը.)։ Վաղարշակ կը պատերազմի և կը յաղթէ Եգերացւոց, Պոնտոսի, Փռիւգիոյ, Կապադովկիոյ և Փոքուն Հայոց թագաւորներուն, և տեսնելով ի Հայս «*խառն ի խուռն զամենայն եւ վայրենի*»՝ բազում և մեծամեծ կարգաց վրայ կը յաւելու նաեւ սա մեծ բարերարութիւնն ազգին, որ Նինուէի դիւանէն Մարիբաս անուն գիտուն ասորւոյ մը ձեռօք բերել կու տայ «ստոյգ» պատմութիւն մը Հայոց։ Իսկ Վաղարշակայ թոռն Արտաշէս այնչափ կը զօրանայ, մինչեւ «*արքունիս իւր ի Պարսից աշխարհին շի*

նել եւ ըրած՝ առանձին զիւր պատկերն հարկանել եւ զԱրշական (Պարթեւաց թագաւորը) *ընդ իւրով ձեռամբ կացուցանել թագաւոր Պարսից*»։ Արտաշէս գդուստր իւր զԱրտաշամա կու տայ կին «Միհրդատայ ումեմն Վրաց բդեշխի» (այն է Մեծն Միհրդատ, որ ի հաւուց անտի էր թագաւոր Պոնտոսի, ոչ Վրաց բդեշխ) և յանձնէ նմա հիւսիսային լերանց (Կովկասու) և Պոնտոս ծովուն կուսակալութիւնը (.՞)։ Անթիւ զօրօք կը խաղայ յարեւմուտս, կը բռնէ Լիւդացւոց թագաւորը Կրիւսոս (!!!). ոչ միայն ասիական Յունաց, այլ և բուն Յունաստանի մեհեանները կողոպտելով երեւելի յոյն անդրիագործներէ յօրինեալ դից պատկերներ բերել կու տայ ի Հայս, և այսպէս յետ *դողացուցանելոյ բոլոր Յունաստան եւ արեւմուտք*՝ կ՚սպաննուի իւր զօրքէն (Խոր. Բ. Գ—ԺԳ.)։

Այս պատմութիւնը, զոր Խորենացին վաւերական աղբիւրներէ, այն է ի Մար Իբասայ, իբրև ժամանակակից պատմագրէ, և Աֆրիկանոսի ձեռամբ Եդեսիոյ և Սինոպայ դիւաններէն առնուած կը դնէ՝ մեծաւ մասամբ անհիմն և անտեղի է, և եթէ կայ ի նմա ինչ ինչ ճշմարիտ՝ կը վերաբերի Տիգրանայ և Միհրդատայ պատմութեան։ Ուստի Արշակունեաց ի Պարթեւաց կամ ի Վաղարշակայ սերելուն վէպն դնելով այն պատմութեան քով, զոր Վաղարշակ բերել տուած է Նինուէի դիւաններէն՝ լուիցուք զոր ինչ բանասիրութիւն և ազգային աւանդութիւնն ասեն զարշակունի բառէն և ցեղէն։

12. Արշակունի բառին նշանակութիւնը գիտնալու համար պէտք չունինք Խորենացւոյն և այլոց վկայութեան։ Արիական լեզուաց ուսումը, կամ լաւ ևս ասել համեմատեալ բանասիրութիւնը (philologie comparée), որ մեր դարուն յատուկ է՝ բաւական է ճշդիւ տալ մեզ արշակունի բառին նշանակութիւնը։ Արշակունի կը նշանակէ «արքունի, թագաւորական», հայերէն *Արշակ* անունէն, որ զանդիկ կամ հին պարսկերէն լեզուին *Քշէրշէ* (Քսերքսէս) բառին կրճատեալը կամ աղաւաղեալն է, և կը նշանակէ արքայ, ինչպէս նաև Քշէրշէն սանքրիտ լեզուին *Քշաղրան* է։ Դիտողութեան արժանի է, որ Արշակ անունը թագաւորաց միայն կը տրուէր, այնպէս որ մեր պատմութեան մէջ ուրիշ մը Արշակ կոչուած չենք գտներ, մինչ Արտաւազդ, Արշաւիր, Արտաշէս, Տիգրան, Տիրան, որ թագաւորաց սովորական անուններ են՝ կոչուած են շատեր։ Հայք որոց պաշտօնական լեզուն, գէթ առ Պարսիկօք, պարսկերէն էր՝ արիական բառով արշակունի կոչեցին հին Արարատեան թագաւորական ցեղը։

13. Զայս թուին ակնարկել հնագոյնք ի մատենագրաց մերոց, որ զԱրշակունիս գիտեն իբրև *բնիկ տեարս* երկրին։ Այսպէս ըստ Ագաթանգեղոսի՝ Տրդատ ի հրովարտակին որ առ նախարարս Հայոց՝

բոլոր Հայ նախարարութիւնը և ազգը կ՚անուանէ *ընիկ* ձեռատունկ և ձեռասուն, այսինքն սեպհականութիւն Արշակունեաց.—«Ամենայն նախարարք, մեծամեծք և գործակալք և շինականք, *բնակք եւ ծա-ռայողք եւ ծառայողք* մեր Արշակունեաց» (Ագաթ. ԺԲ.)։ Մանուէլ Մամիկոնեան սպարապետ Արշակայ վերջնոյ՝ ըստ Բուզանդայ ի մեռանելն կը խրատէր զորդի իւր զԱրտաշիր «Հնազանդ կալ... և մեռանել ի վերայ *բնակ տերանց աշխարհիս, Արշակունեաց*»։ Նոյն Մանուէլի ցաւ էր զի մեռանէր յանկողնի և ոչ ի պատերազմի ի վերայ Հայրենեաց և բնիկ Թագաւորին.—«Սկսաւ (Մանուէլ) լալ, ասէ Բուզանդ, և ասել, թէ Ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմունս, և ընդէր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի... զի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի... և ի վերայ *Արշակունեաց, բնակ տերանց աշխարհիս*» (Բուզ. Ե. ԽԴ.)։

Թէ արշակունի ցեղն հին Արարատեան թագաւորական ցեղն էր՝ Հայոց պատմութեան շատ պարագաներէն յայտնի է։ Արշակունիք էին բուն տէարք Արարատեան նահանգին, իբրև սեպհական կալուածոյ այն ցեղին, և իբրև տէարք Արարատեան նահանգին, այն է իբրև սերունդք հին Արարատեան թագաւորաց՝ կը վայելէին բոլոր Հայոց վրայ թագաւորելու իրաւունքը, այնպէս որ Արարատեան նահանգը բնակիլ առանց գիտութեան թագաւորին՝ կը համարուէր նշան թագաւորութիւնը յափշտակելու։ Վարդան Մամիկոնեան սպարապետ Արշակայ որդւոյ Տիրանայ յամբաստանելն զԳնէլ՝ ասէ ցԱրշակ. «Ո՞չ գիտես, զի խորհեալ է Գնէլ սպանանել զքեզ, զի ինքն փոխանակ քո թագաւորեսցէ։ Ահա տես, արքայ, գնշան ի-րին, զի բնակեցաւ Գնէլ յԱյրարատ, ի կալուածս ձեր թագաւորաց» (Խոր. Գ. ԻԲ.)։ Միւս բոլոր նահանգները կամ նախարարութիւնները կը համարուէին իբրև ի վաղուց և յիրաւանց աւատ (fief) այս հին Արարատեան ցեղին։ Արշակունեաց կամ Արարատեան ցեղին այս աւատատիրութեան (suzeraineté) կամ թագաւորութեան իրաւունքն այնպէս հին և սեպհական էր, որ ուրիշ որ և իցէ ցեղէ թագաւոր ընդունելի չէր Հայոց. այնպէս որ ապստամբ նախարարք անգամ եթէ Արշակունի ցեղէն չէին՝ չհամարձակէին թագ կապել կամ թագաւորի տիտղոս առնուլ։ Երբ յետ մահուն Տրդատայ Սանատրուկ, որ Արշակունի էր, ապստամբելով թագաւորեց ի Փայտակարան՝ նաև Աղձնեաց բդեշխը Բակուր, մին ի չորից գահերէց իշխանաց թագաւորին, «զնոյն խորհեցաւ առնել» (այսինքն ապստամբել), ասէ Խորենացին, «թէպէտ ոչ թագաւորել, զի ոչ էր Արշակունի, այլ տիրագլուխ կամեցաւ լինել» (Խոր. Գ. Դ.)։ Հռոմայեցիք և Սասանեանք անգամ ստիպեալ էին յարգել Արշա-

կունեաց այս իրաւունքը, երբ կամէին հաճեցնել ազգը։ Օգոստոս կայսր, ինչպէս կը պատմէ ինք ի կտակին իւրում, յետ երկիցս տալոյ օտար ցեղէ թագաւոր, տեսնելով Հայոց դժգոհութիւնը՝ տուաւ թագաւոր զՏիգրան ոմն, ex regio genere Armeniorum oriundus, այսինքն «սերեալ յարքունի տոհմէն Հայոց» (Յիշատ. Անկիւր. Կիլ-մէն, Հնախօս, արևել.)։ Ըստ Խորենացւոյն Թէոդոս յետ Պապայ թագաւորեցուց զՎարազդատ, Արշակունի.—«Բարեացապարտն Թէոդոս․․․թագաւորեցոյց փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն ի նմին տոհմէ Արշակունեաց» (Խոր. Գ. Խ.)։ Շապուհ յետ թագաւորեցուցանելոյ զԽոսրով յԱրշակունի ցեղէ՝ առ նախարարս Հայոց, որ առ ի չգոյէ Արշակունի թագաւորի ցրուած էին՝ կը գրէ այսպէս. «Թագաւորեցուցաք ձեզ զԽոսրով ի դենէ ձերմէ և յազգէ ընիկ ծն-նդոյ տէրութեան» (Խոր. Գ. ԽԲ)։ «Իբրև լուան նախարարքն Հայոց, կը յաւելու Խորենացին, թէ կացոյց Շապուհ թագաւոր Արշակունի՝․․․ դարձան ի բնակութիւնս իւրեանց» (Խոր. Գ. ԽԳ.)։

Այսօքիկ բաւական են ցուցնելու, թէ Արշակունիք էին հին Արարատեան թագաւորաց սերունդ, որ յառաջ իսկ քան զմեծն Արշակ Խորենացւոյն միւսանգամ հաստատեցին հին Արարատեան թագաւորութիւնը դարձեալ նոյն տեղը, այն է յԱրարատեան նահանգին առ Երասխաւ, և յորոց, ինչպէս տեսանք վերը՝ երկու յոյն պատմիչք, Պոլիբիոս և Ստրաբոն, մին ժամանակակից և միւսն մօտաւոր ժամանակաւ՝ կը յիշեն զԱրտաշէս. իսկ վերջինը, Ստրաբոն, զՏիգրան մեծ, ընդ որում ժամանակակից է և որ գիտենք թէ Արշակունի էր՝ կը յիշէ իբրև սերունդ Արտաշիսի և ի յաջորդաց նորա, առանց ամենևին յիշելոյ ո՛չ զՎաղարշակ և ոչ զերկոսին յաջորդս նորա զԱրշակ և զԱրտաշէս, որոց անուններն և պատմութիւնը կը գտնենք առ Խորենացւոյն միայն և ոչ այլ ուրեք ի պատմութեան։

14. Արդարև մեր պատմութենէն յայտնի է, թէ կար ազգականութիւն ի մէջ Հայ Արշակունի և Պարթև թագաւորաց և թէ Արշակունիք իբրև նախնեաց իւրեանց սեպհական կը համարէին Պարսից կամ Պարթևաց տէրութիւնը։ Ըստ Բուզանդայ՝ Տիրանայ սենեկապետը Փիսակ ամբաստանեց զՏիրան առ Վարազ Շապուհ պարսիկ իշխան Ատրպատականի, որպէս թէ Տիրան կը խորհէր Պարսից թագաւորութիւնն, իբրև իւր նախնեաց սեպհականութիւն՝ հանել ի Սասանեանց.—«Ի կայսր և ի զօրս նորա յուսացեալ—ասէր Փիսակ—խորհի Տիրան (արքայ Հայոց) հանել զթագաւորութիւնն Պարսից յազգէն Սասանայ, զի ասէ, թէ Մեր լեալ է և հարցն մերոց այն տէրութիւնն» (Բուզ. Գ. Ի.)։ Այլուր կը պատմէ Բուզանդ, թէ

մինչ առ Շապհոյ էր Արշակ որդի Տիրանայ՝ Շապուհ փորձելու համար, թէ Արշակ պիտի մնար հաւատարիմ, եթէ Շապուհ արձակէր զնա ի Հայս՝ ըստ խրատուն քաղդէից կամ կախարդաց Պարսից հող բերել տալով Հայաստանէ՝ տարածեց գաղտ վրանի մը յատակը։ Արշակ մինչ պարսիկ հողին վրայ էր՝ խոնարհութեամբ կը խօսէր ընդ Շապհոյ ասելով. «Ահաւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. արա զիս զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ»։ Բայց երբ Շապուհ բանելով զձեռանէ Արշակայ բերաւ զնա հայ հողին վրայ՝ Արշակ սկսաւ ամբարտաւանութեամբ և խրոխտալով խօսիլ ընդ Շապհոյ այսպէս. «Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ, տիրացեալ տերանցդ քոց. այլ ոչ թողից քեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, զմահն Արտաւանայ արքայի. այժմիկ ձեր, ծառայից՝ զմեր, տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ» (Բուզ. Դ. ԾԴ.)։ Այս պատմութիւնն արդարև առասպել է, բայց կը ցուցնէ, թէ հայ Արշակունիք յետ Խոսրովու, հօր Տրդատայ՝ Պարսից տէրութիւնը կը համարէին սեպհական նախնեաց իւրեանց և զՍասանեանս՝ եկամուտ և յափշտակիչ, վասն զի Պարթևաց վերջին թագաւորն Արտաւան, զոր Արտաշիր Սասանեան սպան և յինքն վարեց Պարսից տէրութիւնը՝ եղբայր էր Խոսրովայ, հօր Տրդատայ։

Այս աւանդութիւնը, թէ Արտաւան և Խոսրով եղբարք էին՝ կը գտնենք ի մէջ Հայոց ի չորրորդ դարու, և յայս ազգականութիւն հային վերյիշեալ բանք եդեալք ի բերանս Տիրանայ և Արշակայ։ Այս կը տեսնուի նախ ի բանից Ագաթանգեղոսի, որ յետ յիշելոյ զսպանումն Արտաւանայ յԱրտաշրէ՝ ասէ զԽոսրովայ, թէ «էր ի մեծի տրտմութեան վասն բնութեան *եղբայրութեան* ազգատոհմին. . . և էր (Խոսրովու) դեսպան արարեալ, զի իւրեանց (Արտաւանայ և Խոսրովու) տոհմայինքն (եղբարք և ազգականք) ի թիկունս եկեսցեն». . . այլ նոքա «միամտեալ և հաւանեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմի և *եղբայրութեանն*» (Ագաթ. Ա.)։ Հայոց նամակն առ Թէոդոս կայսր առ Եղիշէի զԱնակ որ սպան զԽոսրով հայրն Տրդատայ՝ *հօրեղբայր* կը կոչէ Տրդատայ.—«Վասնորոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող *հօրեղբօրէն* իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրին Յունաց» (Եղիշ. տպգր. Վենետ. 1828, էջ 123)։ Արդ՝ Անակ եղբայր էր Արտաւանայ, ինչպէս կը տեսնուի յակնարկութենէ Ագաթանգեղոսի (Ագաթ. Բ.), և մանաւանդ ի պատմութենէն, զոր կը բերէ Խորենացին Խոռհբուտ

անուն պարսիկ հեղինակէ մը, զորմէ առէ լեալ դպիր Շապհոյ թագաւորին Պարսից։ Ըստ այս պատմութեան՝ կային երեք ցեղք ազգակիցք Արտաւանայ, յորոց երկուքն նախանձ ունելով ընդ Արտաւանայ ի պատճառս թագաւորելոյ նորա՝ միաբանած էին ընդ Արտաշրի որդւոյ Սասանայ. մին միայն չմիաբանելով ընդ Արտաշրի՝ փախած էր, այն է Վեհսաճան, Կամսարականաց նախնին։ Ահա բանք Խորենացւոյն. «Յետ սպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ երկու ցեղք Պահլաւին (Արտաւանայ և Խոսրովու ցեղն ըստ այն պատմութեան Պահլաւ կամ Պահլաւեան կը կոչուէր) որ Ասպահապետի և Սուրենեան Պահլաւն անուանին, նախանձ պահելով ընդ թագաւորեալ ցեղին իւրեանց հարազատութեան ազգին՝ կամաւ յանձն առին թագաւորել Արտաշրի որդւոյ Սասանայ». բայց Կարն անուանեալ Պահլաւն «մտերմութիւն պահելով առ եղբայրութիւն ազգականութեան տան (Արտաւանայ)՝ ընդդիմացան պատերազմաւ Արտաշրի որդւոյ Սասանայ» (Խոր. Բ. ՀԱ.)։ Այս երրորդ եղբօր, որ ըստ պարսիկ հեղինակին կը կոչուէր Վեհսաճան, թոռն էր Կամսար, որ առ Տրդատաւ եկն ի Հայս և իբրև մօտ ազգական, այսինքն իբրև հօրեղբօր թոռն՝ մեծ սիրով և պատուով ընդունեցաւ ի Տրդատայ, մինչև նորին իսկ Տրդատայ լինել կնքահայր ի մկրտել Կամսարայ (Խոր. Բ. Ղ.), ինչպէս նաև ցեղ նորա Կամսարականք ի մեծ պատուի էին, իբրև երկրորդ յետ տիրող տան (Խոր. Գ. ԼԱ, ԽԸ, ԿԵ.)։ Խորենացին Արտաւանայ, Խոսրովու և միւս երից եղբարց մերձաւորութիւնն ընդհանուր կ'առնու, իբրև ազգականութիւն կամ ցեղի մերձաւորութիւն, բայց պատմութեան պարագաները, «հարազատութիւն», «եղբայրութիւն» բառերը և մանաւանդ Հայոց նամակն առ Եղիշէի՝ կը ցուցնեն բաւական, թէ Արտաւան, Խոսրով և Անակ եղբարք էին։

ԳԼՈՒԽ Դ.

ՄԱՐ ԻԲԱՍ ԿԱՄ ԽՈՐԵՆԱՑԻՆ:

1. Հայոց նախնական ժամանակի պատմութեան ուրիշ աղբիւր մը. Մար Իբաս: 2. Մարիբասեան պատմութիւնն ընդհանրապէս: 3. Խորենացին իբրեւ մատենագիր եւ իբրեւ պատմիչ: 4. Հայոց պատմութիւն մը ունենալու առաջին խորհուրդը՝ ըստ Խորենացւոյն: 5. Նինուէի դիւանը. Հայոց հնագոյն պատմութիւնը պարունակող մատեան մը: 6. Հայկ, աշտարակաշինութեան հսկաներէն առաջին նահապետ: 7. Նկարագիր Հայկայ, ապստամբութիւն նորա, փախուստ եւ շինութիւնք ի Հայս: 8. Յարձակումն Բելայ. պատերազմ եւ յաղթութիւն Հայկայ: 9. Մահ Հայկայ. Արմենակ՝ երկրորդ նահապետ. Խոռ, Մանաւազ, Բազ. Առաջին գաղթականութիւն՝ յԱրագած: 10. Արմայիս՝ երրորդ նահապետ. Շինութիւն Արմաւրի. Երասխ կը կոչուի. Շարա եւ Շիրակ. Հին գեղջկական առակ մը: 11. Ամասիա՝ չորրորդ նահապետ. Երկրորդ գաղթականութիւն՝ ի Մասիս. Շինութիւնք—Փառախոտ, Ցոլակերտ: 12. Գեղամ եւ Հարմա՝ հինգերորդ եւ վեցերորդ նահապետք. Շինութիւնք—Գեղաքունի, Գեղամի (Գառնի). Սիսակ. Սիւնիք: 13. Արամ. Պատերազմ ընդ Մարս. Նինոս: 14. Պատերազմ ընդ Ասորւոց եւ յարեւմուտս: 15. Արայ. Պատերազմ նորա ընդ Շամիրամայ եւ մահ: 16. Շինութիւնք Շամիրամայ ի Հայս. մահ նորա. Առասպելք Հայոց զՇամիրամայ: 17. Հայաստան յետ մահուան Արայի. Արայեան Արայ, Անուշաւան: 18. Հայաստան յետ Անուշաւանայ. Քսան եւ վեց իշխանք: 19. Ազգ Խորենացւոյն. Հայկակ, Զարմայր: 20. Վարբակէս, Պարոյր. Բարձումն տէրութեան Ասորեստանի: 21. Յաջորդք Պարուրի մինչեւ Տիգրան. Հրաչեայ: 22. Տիգրան: 23. Աժդահակ կը թշնամանայ ընդ Տիգրանայ. Երազ, խնամութիւն, պատերազմն եւ մահ Աժդահակայ. Մարաց գերութիւնը: 24. Յաջորդք Տիգրանայ. Վահագն. Վահէ. Անտէրնչութիւն մինչեւ ի Վաղարշակ:

1. Վերագոյն (էջ 1, 2) ի խօսել մեր զաղբերաց նախնական ժամանակի պատմութեան Հայոց՝ թողաք յիշել զՄար Իբաս, կամ զպատմիչն յորմէ առնու Խորենացին զիւր «Հայկազանց պատմութիւն», որ ի շնորհս համբաւաւոր հեղինակին եւ աղբերն ուստի հանուած կը պատմուի՝ մեծ ընդունելութիւն գտած է յազգին աւելի քան 1300 ամաց հետէ:

2. Մեր պատմութեան այն ժամանակին վրայ, որ ազգին ենթադրեալ սկիզբէն, այսինքն ի Հայկայ, մինչև Աղեքսանդր մեծ երկայն միջոց մը, իբր 2,000 տարի կը պարունակէ՝ մարիբասեան աղբիւրէն Խորենացւոյն միջոցաւ մեզի տրուած տեղեկութիւնք, զորս ամբողջ մէջ պիտի բերենք հանդերձ ընագրով՝ կարի համառօտ և անօսր են, այնպէս որ այն պատմութիւնը, որ կը տրուի մեզ յանուն Մար Իբասայ, թէև լինէր վաւերական և ստոյգ՝ չկարէր համարուիլ իբրև անընդհատ պատմութիւն այն հին երկար ժամանակին։ Արդարև մարիբասեան պատմութիւնն ոչ միայն զմեզ գոհացուցանող տարեգիր չէ, որպէս պարտ էր լինել ըստ անուանն և ծագման զոր կը պնդէ ունենալ, այլ և իրօք չի պարունակեր գհայոց աւելի ինչ և նոր՝ քան զոր կը պարունակեն ուրիշ հին պատմութիւնք և հին ազգային աւանդութիւնք զայնր ժամանակի Հայոց։ Յանուանեալ մարիբասեան պատմութեան կան արդարև հատուածք ինչ, որպէս Հայկայ, Արամայ և Տիգրանայ պատերազմաց նկարագիրք, որ շատ աւելի ընդարձակ են քան որչափ կը պահանջուի տարեգրէ մը, և բուն իսկ այս պատճառաւ կասկածելի. բայց այն պատմութիւնը, եթէ ամբողջ նկատուի՝ բոլորովին ցանցառ է, աղքատ յոյժ պատմական դիպօք։ Արդարև զարմանք է, որ Հայկայ մինչև մազերուն գանգուրը, կռուին մէջ գփքինն իւրոյ վիրազին մարմնոյն ո՛ր դին դիպեցուցանելն անգամ նկարագրող պատմութիւնն՝ յետոյ յանկարծ կը պապանձի և ամբողջ դարերու վրայէն լռութեամբ անցնելով՝ ոչ այլ ինչ գտանէ ի յիշել՝ բայց անուններու երկայն ցանկ մը։ Իւր այս աղքատութեամբն հանդերձ, մեր հին պատմութեան իբրև անգին աղբիւր պիտի ընդունէինք մարիբասեան ծաղկաքաղը՝ եթէ տեղի չտար մեզ տարակուսելոյ զստուգութենէ և զվաւերականութենէ իւրմէ։

Աւելի սակաւ էին թուով, բայց ստուգութեան կողմանէ անգին, այն ըստ դիպաց իմն և անուղղակի տրուած տեղեկութիւնք, զորս բերաք ուրիշ հին աղբիւրներէ, ինչպէս ի Հրէից գրոց, ի Հերոդոտոսէ, ի Քսենոփոնէ և այլուստ։ Այն տեղեկութիւնք արդարև ոչ իբրև տիւ կը լուսաւորեն մեր պատմութեան այն հին և աղօտ ժամանակը, բայց իբրև լուսոյ շառաւիղներ ժամանակ ժամանակ ծագելով մեր պատմութեան վրայ՝ մաս մը տեղ կը լուսաւորեն, ոչ առանց արձակելոյ գէթ աղօտ շող մը ընդհանրոյն վրայ։

3. Մեք զմարիբասեան պատմութիւնն գիտեմք Խորենացւոյն միջոցաւ միայն. բուն աղբիւրը ծանօթ չէ մեզ։ Խորենացւոյն թէ իբրև մատենագիր և թէ իբրև պատմիչ առաւելութիւններն չեն կրնար ուրացուիլ։ Ընդհանրապէս խօսելով՝ իբրև հայերէն մատե-

նագրութիւն՝ Խորենացւոյն գիրքը մեր նախնի մատենագրութեան մնացորդաց մէջ երևելիներէն մին է։ Ոչ բոլորովին յստակ, բայց ինքեան յատուկ ընտիր բառերով, հակիրճ՝ այլ պերճ և հարուստ, միանգամայն զուարթ ոճով, մանաւանդ նկարագիրներու մէջ՝ Խորենացին կը հաւասարի իւիք իրօք քան զնա առաջիններուն, որպիսի են Ագաթանգեղոս, Բուզանդ, Եզնիկ, իսկ քան զնա յետնոց, Եղիշէի, Փարպեցւոյն և այլոց մէջ Խորենեան ոճոյն ստուերն անգամ չի տեսնուիր։ Հայկայ պատերազմին, ինչպէս նաև Զիրաւի ճակատուն, տեղագրութեանց մէջ Արագածու դաշտին և Երուանդակերտի նկարագիրներն և ուրիշ ոչ սակաւ նկարագիրք՝ ոչ մերայոց միայն—յոյն և հռոմայեցի մատենագրաց մէջ անգամ հազիւ ունին զիւրեանց նմանն. գրեթէ չիք գլուխ, ուր չիցէ տեսանելի մատենագրական հանճար հեղինակին. ամէն դէպ, ամէն պարագայ ընդ գրչաւ Խորենացւոյն առնու գեղեցկութիւն, վսեմութիւն, ոյժ և կենդանութիւն։ Պարբերութիւն չկայ, իմաստ չկայ, որ բոլոր գիրքին հիմը կազմող բարձրութենէն անկանի կամ նուաստանայ։ Միով բանիւ Խորենացւոյն պատմութիւնը բազմարուեստ ճարտարագործ պատկերներու թանգարան է, որ կը հիացնէ և կը յագեցնէ տեսնողը մինչև ցգմայլումն։ Ստոյգ է, թէ Խորենեան ոճոյն մատենագրական գերազանցութիւնը բնագրին կից է, ինչպէս մարմնոյ մը յատկութիւնը մարմնոյն հետ. գէթ մինչև ցարդ թարգմանութիւն մը չկրցաւ կաղապարել այս բնագիրն ինչպէս որ է իւր բանասիրական գոյներովը. այնպէս որ Խորենացին իբրև մատենագիր՝ պարտ է նոյն իսկ Խորենացւոյն մէջ տեսնել։ Մի միայն թերութիւն ոճոյ նորա են ստէպ գեղչմունք և զարտուղութիւնք, որովք կամի կարճառօտ և ազդու երևել. բայց, հակառակ կանոնաց լեզուի, երբեմն այնպէս կը խրթնանայ՝ մինչև յանել լաբիւրինթոս արկանել զընթերցողն։

Ոչինչ ընդհատ երևելի է Խորենացին նաև իբրև պատմագիր։ Դիպաց զանազանութիւն և հարստութիւն, ստէպ պատմական շեղումներով, որ կամ անձանց և տեղեաց նկարագիրներ են և կամ հանճարեղ դիտողութիւններ, միանգամայն ազգային երգերու և աւանդութեանց ստէպ յիշատակութիւնք՝ ապացոյց են պատմական հմտութեան և ճաշակի նորա. երկու գլխաւոր յատկութիւնք՝ որ մեր հին պատմիչներէն և ոչ միոյն, իսկ արտաքիններէն սակաւուց քով կը տեսնուին։ Այսպիսի և այսչափ եզական յատկութեանց հետ ցաւ է տեսնել մեր ծերունի պատմագիրը քննադատութեան կողմանէ թերի։

Խորենացին կ'ընդունի առանց քննութեան, և կը պատմէ ա-

ռանց տպացուցի։ Զորօրինակ, Մար Իբաս ի Վաղարշակայ կը ղրկուի
Նինուէ, և հոն ի վաղուց պահուած դիւանէ կը բերէ Հայոց
պատմութիւն մը. Վաղարշակ իբրև անգին գանձ կը պահէ զայն
մեծ զգուշութեամբ յարքունիս իւր, նաև զմասն ինչ անտի կը հրա-
մայէ դրոշմել ի վիմի։ Այսօքիկ պատահին երբ. 650 կամ 700 ամօք
յառաջ քան զնոյն ինքն Խորենացին։ Հարիւրաւոր տարիներու մի-
ջոցին Հայոց մէջ պատահած բոլորովին ներքին դէպք—գաղթակա-
նութիւնք, շինութիւնք, պատերազմներ, իշխանաց յաջորդութիւնք
հանդերձ անուամբ նոցա——այս ամենայն որպէս թէ կը գրուին և
կը պահուին Նինուէի դիւանին մէջ, և Աղեքսանդր մեծ թարգմա-
նել կուտայ այս և ուրիշ դէպքեր պարունակող մատեանն ի յոյն
լեզու։ Այս ամենայն կը կատարուի ութ հարիւր, հազար և թերևս
հազար հինգ հարիւր տարի յառաջ քան զԽորենացին, և բարեմիտ
պատմագիրն զայսոսիկ, որպէս թէ յիւրում ժամանակի և առաջի
աչաց իւրոց պատահեալ իրեր՝ կ'ընդունի առանց քննելու և առանց
բնաւ երկբայելու։ Պատմագիր մը չկարէ իւր պատմութեան մէջ
իբրև լեալ ի մէջ բերել դէպք մը, որում ինք ականատես չէր՝ ա-
ռանց փնտռելու և ցուցնելու այն դիպաց ստուգութեան փաստե-
րը։ Խորենացին կը ջանայ նաև ծածկել իբրև գաղտնիք մարի-
բասեան մատենին վերաբերեալ իւր անգին գիւտը, չկամելով ամե-
նևին ասել մեզ, թէ զի՛րդ և ո՛ւր ձեռք բերաւ այն բնագիրը,
կամ թէ ինչ լեզուաւ էր այն, յունարէ՞ն թէ ասորերէ՞ն։ Նոյն գաղտ-
նիքը կը պատէ բուն իսկ բնագրին խմբագրութեան պատմութիւնը։
Այս խմբագրութեան վրայ Խորենացւոյն խօսքերն այնպէս շփոթ և
կեղակարծ են՝ որ այն աղբեր ծագման և մատենագրութեան մի-
ջոցներուն և եղանակին վրայ որոշ գաղափար ունենալ անհնար է։
Մերթ կը տեսնենք Նինուէի արքունի դիւանին մէջ այն պատմու-
թեան ոչ թէ քաղդէարէն բնագիրը, այլ յունարէն թարգմանու-
թիւնը, և կը կարդանք, թէ ի նմա պարունակեալքն բուն հնոց և
նախնեաց խօսքերն էին.—«Աղաչեմ . . . հրամայես առաջի առնել
զդիւանն արքունի ընդդէմ առնդ (Մար Իբասայ) . .։ Արշակ . . .
հրամայէ առաջի առնել նմա զդիւանն արքունի որ ի Նինուէ . .։
Խուզեալ սորա (Մար Իբասայ) զամենայն մատեանսն՝ գտանէ մա-
տեան մի հելլէն գրով . . . հրամանաւ Աղեքսանդրի ի քաղդէացւոց
բարբառոյ փոխեալ ի յոյն, որ ունէր *զբուն հնոց եւ զնախնեացն*
բանս (Խոր. Գիրք Ա. Գլ. Թ.)։ Մերթ կը կարդանք, թէ այն (Հայ-
կազանց) պատմութիւնը բուն արքունի մատեաններուն մէջ գըր-
ուած չէր, քանզի քաղդէացիք պէտք չունէին օտար և հեռաւոր
աշխարհաց հին համբաւները կամ զրոյցներն իրենց թագաւորաց

մատեաններուն մէջ գրել. մանաւանդ զի պարծանք ինչ չէր նոցա՝ օտար ազգաց քաջագործութիւններն յիշատակել, այլ քանի մը փոքր և աննշան մարդիկ այն պատմութիւնը վիպասանութիւններէ հաւաքեցին.—«Այսոքիկ (Հայկազանց վրայով պատմուածներն) ի բուն մատեանս թագաւորաց ոչ յիշատակեցան... զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարևորք էին նոցա (Քաղդէացւոց)՝ զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեայ, և զհամբաւս հինս և զբոյցս նախնականս յիրեանց թագաւորաց մատեանս գրել. մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ (էին) նոցա... օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան։ Սակայն ի փոքունց ոմանց եւ յաննշանից արանց ի զուսանականէն այս զտանի ժողովեալ» (Խոր. Գիրք Ա. Գլ. ԺԳ.)։ Դարձեալ ուրիշ տեղ սոյն հակառակը կը կարդանք, թէ մեր նախնեաց (Հայկազանց) գործքերը և անուններն, իբրև Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից կողմանէ գրուած գործակալներու գործքեր և անուններ՝ այն ազգերուն բուն արքունի մատեաններուն մէջ գրուեցան, և թէ զանոնք նոյն ինքն Խորենացին հանեց այն ազգերուն դիւաններէն.—«Եթէ ասիցեն. ուստի՞ մեզ զնախնեացն մերոց բազմաց այսպէս զտանել զանուանս և զգործս՝ ասեմ. ի հնոցն դիւանաց Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբր գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց» (Խոր. Գիրք Ա. Գլ. ԻԱ.)։

Այսպէս մեր ծերունի պատմագիրն, ինք իրեն հակառակ՝ մարիբասեան պատմութիւնը Քաղդէացւոց արքունի դիւանին մէջ գտնելով՝ մերթ ասէ թէ այն պատմութիւնը գրողք բուն Քաղդէացիք էին, և մերթ փոքունց ոմանց և աննշանից կու տայ զայն հաւաքել. մերթ հանել կու տայ զայն Մար Իբասայ ձեռքով Նինուէի դիւանէն, և մերթ հարցանողաց, թէ ուստի՞ գտաւ այն պատմութիւններն՝ պատասխան կու տայ, թէ ինք հանեց Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից դիւաններէն։

ԶԽորենացւոյն այսչափ ինչ ասել բաւական համարելով՝ տեսնենք թէ ինչպէս ձեռք բերուեցաւ այս մարիբասեան պատմութիւնը և ինչ բաներ կը պարունակէր այն։

4. Ըստ Խորենացւոյն՝ նախ Վաղարշակ յղացաւ Հայոց պատմութիւն մը ունենալու խորհուրդը, Վաղարշակ, որ իբր 150-ին նախ քան զՔր. յեղբօրէն իւրմէ ի մեծէն Արշակայ գրուած էր թագաւոր Հայոց և Միջագետաց և որ պատուէր ընդունած էր յեղբօրէն՝ իմաստութեան և քաջութեան հոգ տանել։ Ահա Խորենացւոյն պատմութիւնը։—Վաղարշակ իւր իշխանութիւնը կարգի դնելով և հաս-

տատելով զԹագաւորութիւն իւր՝ կամեցաւ գիտել, թէ ո՛յք և ո՛րպիսի մարդիկ տիրած էին Հայաստանի յառաջ քան զնա, քաջա՛ց թէ վատաց տեղը կը բռնէր։ Եւ գտեալ ասորի ոմն Մար Իբաս Կատինա, ուշիմ և վարժ քաղդէացի և յոյն դպրութեամբ՝ կը ղրկէ արժանի ընծայիւք առ Արշակ, երէց եղբայր իւր՝ բանալ նմա զդիւանն արքունի, և գրէ առ Արշակ այսպէս. «Արշակ երկրի և ծովու Թագաւոր, որոյ անձն և պատկեր՝ աստուածոց է, իսկ բախտն քան զամենայն Թագաւորաց և քան զմտաց լայնութիւն այնչափ ի վեր, որչափ ի վեր են երկինք քան զերկիրս. կրտսեր եղբօրէդ և նիզակակցէ որ ի քէն կարգեցաւ Թագաւոր Հայոց՝ ողջոյն ամենայն յաղթութեամբ։ Որովհետև պատուէր ընկալայ ի քէն քաջութեան և իմաստութեան հոգ տանել՝ անփոյթ չեղէ քո խրատուն, այլ խնամ տարեալ հոգացայ զամենայն, որչափ միտք և կարողութիւն իմ բաւեցին։ Եւ արդ որովհետև քո խնամով հաստատեցաւ Թագաւորութիւնս՝ խորհեցայ գիտել, թէ ո՛յք յառաջ քան զիս տիրած են Հայոց և ուստի՛ են նախարարութիւնք երկրիս. քանզի աստ ոչ կարգք կը տեսնուին, ոչ մեհենից պաշտամունք, և ոչ երկրին գլխաւորներուն առաջինն և վերջին յայտնի են. չիք ինչ օրինաւոր, այլ ամենայն ինչ խառն ի խուռն և վայրենի։ Ուստի կը խնդրեմ տէրութենէդ՝ հրամայել զդիւանն արքունի բանալ մարդուն որ քո հզօր տէրութեանդ առջև պիտի գայ, որպէս զի գտնելով զեղբօր քո և որդւոյ ըղձալին՝ շուտով բերէ. և լաւ գիտեմ, թէ զուարճութիւնը զոր կ'զգանք քոց կամաց հնազանդելով՝ քեզ ևս ուրախութեան պատճառ է։ Ողջ լեր, երեւելիդ ի դիւցազունս»։

Սորա (Վաղարշակայ) կարգեալ զիշխանութիւն իւր մեծապէս, և հաստատեալ զԹագաւորութիւն իւր՝ կամ եղև գիտել սորա, թէ ո՛յք և ո՛րպիսի արք տիրեալ են ի վերայ աշխարհիս Հայոց մինչև ցնա, զքաջա՛ց արդեօք եթէ զվատաց անցեալ ունիցի զտեղի։ Եւ գտեալ զոմն ասորի Մար Իբաս Կատինա, ուշիմ և վարժ քաղդէացի և յոյն գրով, զոր յղէ առ մեծ եղբայրն իւր Արշակ արժանի ընծայիւք, բանալ նմա զդիւանն արքունի։ Եւ գրէ առ նա ձև բանից օրինակ զայս. Արշակ Թագաւոր երկրի և ծովու, որոյ անձն և պատկեր՝ որպէս և է իսկ մեր աստուածոց, իսկ բախտ և պատահումն՝ ի վեր քան զամենայն Թագաւորաց, և մտաց լայնութիւն՝ որչափ երկինն ի վերայ երկրի. Վաղարշակ կրտսեր եղբայր քո և նիզակակից, որ ի քէն կարգեալ արքայ Հայոց. ողջ լեր ամենայն յաղթութեամբ։ Քանզի պատուէր ընկալայ ի քէն քաջութեան և իմաստութեան հոգ տանել՝ ոչ երբէք անփոյթ արարեալ զքոյովն խրատու, այլ խնամ տարեալ հոգացայ ամենայնի որչափ միտք և հասողութիւն բաւեցին։ Եւ այժմ ի քումմէ խնամակալութենէ զետեղեալ

թագաւորութիւնս՝ խորհուրդ ի մտի եդի գիտել, թէ ոյք ոմանք յառաջ քան զիս իցեն տիրեալ աշխարհիս Հայոց և ուստի՞ նախարարութիւնքս որ աստ կան։ Զի ոչ կարգք ինչ լեալ աստ յայտնի, և ոչ մեհենից պաշտամունք, և ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն և վայրենի։ Վասն որոյ աղաչեմ զքոյ տէրութիւնդ, հրամայեա բանալ զդիւանդ արքունի ընդդէմ առնդ եկելոյ առաջի քոյոյ հզօր տէրութեանդ, զի գտեալ զըղձալին եղբօրդ քո և որդւոյ՝ բերցէ զստոյգն փութապէս. և զմեր հեշտութիւն, որ ի կամակատարութենէ լեալ՝ քաջ գիտեմ խնդութիւն քեզ լեալ։ Ողջ լեր, երևելիդ բնակութեամբ ի մէջ դից»։

5. «Արշակ, ասէ Խորենացին, ընդունելով զթուղթն ի ձեռաց Մար Իբասայ՝ մեծ լրջմտութեամբ կը հրամայէ բանալ առաջի նորա Նինուէի դիւանը, ուրախանալով որ այսպիսի մտաց տէր էր եղբայրն, առ որ հաւատացած էր իւր թագաւորութեան կէսը։ Մար Իբաս (դիւանին) բոլոր գիրքերը խուզելով՝ կը գտնէ մատեան մի յունարէն, յորոյ վերայ գրուած էր այսպէս. Այս գիրք, որ կը պարունակէ զբանս բուն հնոց և նախնեաց՝ Աղեքսանդրի հրամանաւ թարգմանուեցաւ քաղդէարէնէ յունարէն։ Այս գիրք կը յիշէր նախ զՁրուան, Տիտան և Յապետոսթէ (այսինքն՝ Սեմ, Քամ, Յաբեթ), և այս երեք նահապետաց սերունդէն երևելի մարդոց անունները դարերով կը շարէր կարգաւ»։ «Այս գիրքէն, ասէ Խորենացին, հանելով Մար Իբաս մեր ազգին հաւաստի պատմութիւնը՝ կը բերէ առ Վաղարշակ ի Մծբին յոյն և ասորի լեզուաւ։ Վաղարշակ առնլով զայս պատմութիւն՝ իբր իւրոյ գանձուն առաջինը, մեծ զգուշութեամբ կը պահէ յարքունիս իւր և մաս մը այն պատմութենէն կը հրամայէ արձանի (քարի) վրայ դրոշմել։ Ասկէ (արձանէն թէ գիրքէն) մեք ստուգիւ տեղեկանալով ահա կը պատմենք»։

Եւ ընկալեալ Արշակայ մեծի զգիրն ի ձեռաց Մարիբասայ Կատինայ՝ մեծաւ լրջմտութեամբ հրամայէ առաջի առնել նմա զդիւանն արքունի որ ի Նինուէ, միանգամայն և ուրախացեալ այնպիսի միտս ունել եղբօր իւրոյ, որում զկէս թագաւորութեան իւրոյ հաւատացեալ էր։ Եւ խուզեալ սորա զամենայն մատեանսն՝ գտանէ մատեան մի հելլէն գրով, յորոյ վերայ էր, ասէ, վերնագիրն այսպիսի. Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յոյնն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս։ Որոյ (մատենին) սկիզբն լեալ ասէ զՁրուանն, զՏիտանն և զՅապետոսթէ, յորում և զիւրաքանչիւր ոք ի ծննդոց երից նախարարականացս այսոցիկ արանց զարս անուանիս կարգաւ շարադասել յիւրաքանչիւր տեղիս մինչև ցբազում ամս։ Յայսմ մատենէ Մար Իբաս Կատինա զմերոյ ազգին միայն հանեալ զպատմութիւն հաւաստի՝ բերէ առ արքայ Վաղարշակ ի Մծբին յոյն և ասորի գրով։ Զոր առեալ Վաղարշակ . . . առաջին իւրոյ գանձուն համարելով՝ դնէր յարքունիսն ի պահեստի մեծաւ զգուշութեամբ, և զմասն ինչ ի յար-

ձանի հրամայէ դրոշմել։ Յորմէ մեր հաւաստի ի վերայ հասեալ կարգի զրուցացս՝ երկրորդեմք այժմ քոյ հարցասիրութեանդ։

6. Յետ ասելոյ զայսսիկ՝ Խորենացին Մար Իբասայ գիրքէն կը բերէ սա հատուածը. «Աստուածներուն մէջ առաջիններն ահեղ և երևելի են և ամէն բարեաց պատճառ. աշխարհի և բազմամարդութեան սկիզբն դարձեալ նոքա են։ Ի սոցանէ սերեցան Հսկայք, անհեդեդք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք, որք և ամբարտաւանութեամբ յղանալով ծնան աշտարակաշինութեան ամբարիշտ խորհուրդը, և զայն գլուխ հանելու ջանացին. բայց աստուածոց բարկութենէն ահագին հով մը փչելով ցրուեց ամբարտակը, և մարդոց անլուր լեզուներ տրուեցան, և այնպէս աղմուկ և շփոթութիւն անկաւ ի նոսա։ Այս հսկաներէն մին էր Յապետոսթեանն Հայկ, անուանի քաջ նահապետն, կորովի աղեղնաւոր»։ «Բայց այս խօսքերն թողունք, ասէ Խորենացին, քանզի նպատակ մեր՝ ոչ (Մար Իբասայ) ամբողջ պատմութիւնը գրել է, այլ ջանալ ցուցնել մեր բուն և առաջին նախնիներն, որ են, նոյն գիրքէն առնլով ասեմ, Յապետոսթէ, Մերոդ, Սիրաթ, Թակլաթ, այն է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ. և յետ սոցա կու գան, ըստ նոյն պատմագրին, Հայկ, Արմենակ և որ ի կարգին, զորոց անուններն յառաջագոյն յիշեցինք»։ Այսինքն Արմայիս, Ամասիա, Գեղամ, Հարմայ, Արամ և Արայ, զորս յիշած է Ա. գիրքի Ե. գլխոյն մէջ)։

Անհեղք և երևելիք առաջինքն ի դիցն, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան։ Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեդեդք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք, որք յղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն և նոյն լինէին ի գործ անկեալք. յոր հողմ ահագին խմն և աստուածային շնչեցեալ ի դիցն ցասմանէ՝ ցրուէ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ՝ աղմուկ շփոթի ի մէջ արկանէին։ Յորոց մի էր և Յաբետոսթեանն Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովաձիգ և հաստաղեղն։ Այս կարգ զրուցաբանութեան դադարումն առցէ, զի հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն հին նախնիս։ Արդ ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յաբետոսթէ, Մերոդ, Սիրաթ, Թակլադ, որ է Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ։ Յետ որոյ նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արմենակ, և զայլսն ի կարգի, զորոց յառաջագոյն ասացաք։

7. Այսպէս յետ յօրինելոյ զազգահամար Հայկայ և տոհմի նորա՝ Խորենացին սկսանի զպատմութիւն նոցա, որպէս թէ ի Մար Իբասայ առնլով բառ առ բառ, ինչպէս յայտնի է սաէ բառէն։

«Այս Հայկ, ասէ (Մար Իբաս), գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ, քաջ և երևելի ի հըսկայս, դէմ կեցաւ ամենուն՝ որ բոլոր հսկայից և դիւցազանց վրայ իշխել կը մտաբերէին: Հայկ ընդդիմացաւ նաև Բելայ, որ բազմակոյտ և ուժեղ հսկայից մէջ ուզեց բռնանալ, երբ մարդիկ հանդերձեալ էին ցրուել երկրիս երեսին վրայ: Քանզի մինչ իւրաքանչիւր մոլեգնեալ, սուր ի կող ընկերի իւրոյ մխելով կը ջանար տիրել ամենուն վրայ՝ Բելայ յաջողեցաւ տիրել բոլոր երկրի: Հայկ չուզելով հնազանդել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ ի Բաբելոն՝ որդւովք և դստերօք և որդւոց որդւովք, իբր երեք հարիւր զօրաւոր մարդկամբ և ուրիշ ընդոծնօք, նաև օտարներով որ ի նա յարեցան և բոլոր աղխիւ՝ եղ գնաց դէպի հիւսիս Արարատայ երկիրը, ուր բնակեցաւ լերան մը ոտքը դաշտի վրայ, ուր կը բնակէին յառաջագոյն ցրուեալներէն սակաւք, զորս Հայկ հնազանդեցուց, և բնակութեան համար կալուածներ հաստատելով՝ տուաւ ժառանգութիւն Արմենակայ որդւոյն՝ Կադմեայ: Այս կ'արդարացնէ հին անգիր գրոյցներ»: «Եւ ինքն (Հայկ), ասէ (Մար Իբաս), — կը յաւելու Խորենացին — ուրիշ աղխիւ յառաջ կ'երթայ դէպի հիւսիսային արևմուտք, և կը բնակի բարձր դաշտի մը վրայ, և լեռնադաշտակը կ'անուանէ Հարք. այսինքն թէ հոս բնակեցան Թորգոմեան ազգին նախահարք: Շինէ և գիւղ մի յիւր անուն Հայկաշէն»: «Հոս կը յիշուի նաև, թէ, ասէ Խորենացին, այս դաշտին հարաւային կողմը երկայնանիստ լերան մը ստորոտով կանխաւ կը բնակէին քիչ մարդիկ, որ ինքնակամ հնազանդեցան դիւցազին»: Այս ևս, ըստ Խորենացւոյն՝ կ'արդարացնէ՛ անգիր գրոյցները:

Այս, ասէ (Մար Իբաս), Հայկ, գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ. սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ ընդդիմակաց ամենեցուն որ ամբառնային զձեռն միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեան Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլից և ուժաւորաց: Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով ջանային տիրել ի վերայ միմեանց, ուր պատահմունք ի դէպ եկանէին Բելայ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարատայ որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդ-

կանէ յառաջագոյն ցրուեցոյն դադարեալ բնակէին, զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց, և տայ ի ժառանգութիւն Կադմեայ, որդւոյ Արմենակայ։ Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս։ Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ, գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք, այսինքն՝ աստէն բնակեալքս ազգի տանն Թորգոմայ։ Շինէ և գիւղ մի և անուանէ յիւր անուն Հայկաշէն։ Յիշի և աստանօր պատմութիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանստիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնազանդել դիւցազինն։ Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս։

8. «Յառաջ տանելով—ասէ Խորենացին—Մար Իբաս զբանս իւր՝ կը պատմէ այսպէս. Տիտանեանն Բէլ յետ հաստատելոյ զիւր թագաւորութիւն ամենուն վրայ՝ զմին յորդւոց իւրոց կը ղրկէ քանի մը հաւատարիմ մարդկամբ դէպ ի հիւսիս առ Հայկ, որպէս զի հնազանդելով ապրի խաղաղութեամբ. Բնակեցար, ասէ (Բէլ), սառնամանեաց ցրտութեան մէջ. բայց տաքցնելով մեղմացուր հպարտ բարուցդ սառուցեալ ցրտութիւնը, և հնազանդելով ինձ հանդարտութեամբ ապրէ ուր և հաճոյ է քեզ յերկրիս իմում։ Իսկ Հայկ խիստ պատասխաններով յետ դարձուց Բելայ պատգամաւորները։ Ղրկուողը կը դառնայ Բաբելոն։

Բէլ զօրք ժողվելով՝ հետևակ զօրաց մեծ բազմութեամբ կու գայ Հայկայ վրայ դէպ ի հիւսիս Արարատայ երկիրը, Կադմեայ տանը մօտ։ Կադմոս կը փախչի առ Հայկ, առջևէն սուրհանդակ ղրկելով, թէ Գիտցիր, ով մեծ դիւցազն, զի Բէլ քաջ և երկայնահասակ հսկայ մարտիկօք գայ ի վերայ քո։ Ես իմանալով զմերձենալ նորա ի տուն իմ՝ փախայ և կու գամ ահա փութով։ Աճապարէ խորհել զինչ առնել արժան է։ Իսկ Բէլ իր յանդուգն և անճոռնի բազմութեամբ, լեռնէ վայր թափող սաստիկ հեղեղի պէս, զօրաւոր մարդոց ուժոյն և քաջութեանն ապաւինեալ՝ կը փութար հասնել Հայկայ բնակութեան տեղը։ Աստ ուշիմ և խոհեմ հսկայն (Հայկ) աճապարելով կը ժողվէ զիւր որդիս և զթոռունս, քաջ և աղեղնաւոր բայց թուով շատ նուազ մարդիկ, նաև զայլս որ էին ընդ իւրով ձեռամբ, և կը հասնի աղի ջուր և մանր ձուկեր ունեցող ծովակի մը եզրը։ Հոն կոչելով զզօրս իւր ասէ. Երբ Բելայ բազմութեան դէմ կ՚ելլենք՝ ջանանք պատահել տեղւոյն՝ ուր կը կենայ Բէլ քաջաց բազմութեան մէջ, այնպէս որ կամ մեռնինք, և մեր կարասին Բելայ ձեռք իյնայ, և կամ մեր մատանց յաջողութիւնը ցուցնենք ի նա, ամբոխը ցրուի և ստանանք յաղթութիւնը։

Եւ յառաջ խաղալով ասպարէզս ինչ՝ բարձր լերանց վրայ դաշ-

տաձև տեղ մը կը հասնին, և գետի մը աջ դին բարձր տեղ մը կը կենան պատրաստ։ Վեր նայելով տեսան Բելայ անկարգ ամբոխին բազմութիւնը, որ երկրին երեսին վրայ յանդուգն յարձակմամբ կ՚արշաւէր։ Իսկ Բէլ մեծ ամբոխիւ հանդարտ կը կենար գետին ձախ դին բլրակի մը վրայ իբրև ի դիտանոցի։ Հայկ տեսաւ, թէ Բէլ այս խմբին առջև կեցած էր ընտիր ընտիր վառելովք, և ի մէջ խմբի նորա և մնացեալ զօրաց երկար միջոց կար։ Բէլ գլխանոց ունէր երկաթի, նշանաւորօք վերջօք, ի վերայ թիկանց և լանջաց նորա պղնձի տախտակներ, բարձից ու բազկաց վրայ պահպանակ, մէջքը գօտեւորեալ, ձախ ազդեր վրայ երկսայրի, աջ ձեռքը նիզակ, ձախը վահան, և ընտիր ընտիրներ յաջմէ և յահեկէ նորա։ Հայկ տեսնելով զԲէլ և յաջ և ի ձախ կողման նորա ընտիր մարդիկ կուռ վառեալ՝ զԱրմենակ և եղբայրներն յաջմէ, իսկ Կադմոս և միւս որդիներէն ուրիշ երկուք ձախմէ դնելով, վասն զի կորովիք էին յաղեղն և ի սուսեր՝ ինք անցաւ յառաջ, և զկնի իւր դնելով մնացեալ զօրքը երեքանկիւնի ձևով՝ սկսաւ հանդարտ յառաջ խաղալ։

Երկու կողման հսկայք իրարու մօտ հասնելով՝ ահագին դղրդմամբ սկսան շահատակել, այնպէս որ յահ և ի տագնապ արկանէին զերեարս։ Երկու կողման հսկաներէն ոչ սակաւք, յաղթանդամ մարդիկ, սրոյ բերնի պատահելով յերկիր կը տապալէին, և պատերազմն երկուստեք կը մնար անորոշ։ Արքայն տիտանեան տեսնելով այս անակնունելի դիպուածը՝ զարհուրեցաւ, և դարձեալ ելաւ ի բլուրն ուստի իջած էր. քանզի խորհեցաւ ամբոխին մէջ ամրանալ մինչև ի հասանել բոլոր զօրուն, որպէս զի նորէն ճակատ կազմէր։ Աղեղնաւորն Հայկ իմանալով զայս՝ յառաջ կերթայ, մօտ կը հասնի թագաւորին, պնդով կը քաշէ լայնալիճը (աղեղը), հանդիպեցուցանէ զերեքթևեանն (նետը) (Բելայ) կրծից տախտակին, այնպէս որ կռնակէն թափանցելով սլաքը՝ գետին կ՚իյնայ, և այսպէս հպարտացեալն Բէլ գետին թաւալելով հոգին կը փչէ։ Իսկ զօրքը տեսնելով զայս ահագին գործ քաջութեան՝ դարձնելով զերեսս իւրեանց փախան»։

«Զայսմանէ այսչափ բաւական է, սաէ Խորենացին։ Բայց կռուին տեղը դաստակերտ շինելով (Հայկ)՝ կոչեց Հայք ի յիշատակ յաղթութեան իւրոյ, և այս պատճառաւ գաւառը հիմա կը կոչուի Հայոց ձոր. իսկ բլուրն ուր քաջ մարտիկներովն ինկաւ Բէլ՝ անուանեց Հայկ Գերեզմանս, որ հիմա Գերեզմանք կը կոչուի։ Բայց Հայկ դեղերով պատեց Բելայ դիակը, և հրամայեց տանել Հարք և բարձր տեղ մը թաղել ի տեսիլ կանանց և որդւոց։ Իսկ երկիր մեր յանուն նախնւոյն մերոյ Հայկայ կը կոչուի Հայք»։

Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր (Մար Իբաս) ասէ. Ի հաստատել տիտանեանն Բելայ զթագաւորութիւնն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ։ Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղմեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան։ Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բելայ՝ խստութեամբ պատասխանեաց։ Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելոն։

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց, գայ հասանէ ի հիւսիսի յերկիրն Արարատայ, մերձ ի տունն Կադմեայ։ Փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջ ընթացիկս առաջի իւր առաքէ. Գիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք և երկայնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք։ Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ և գամ աւասիկ տագնապաւ։ Արդ աճապարեա խորհել որ ինչ գործելոց ես։

Իսկ Բէլն յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեան Հայկին, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց։ Աստ ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս թուով յոյժ նուազունս, և զայլս եւս որ ընդ իւրով ձեռամբ, հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով ձկունս յինքեան։ Եւ կոչեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ դիմեալ ջանասցուք անդր ուր անցեալ կայ ի մէջ խուռն քաջացն Բէլ։ Զի կամ մեռցուք, և աղխ մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, և կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք։

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց ինչ դաշտաձև լերանց բարձրագունից, և յաջմէ ջրոցն հասանեն ի բարձրաւանդակութեան կուռ կալով ի տեղւոջ։ Ի վեր զերեսս ամբարձեալ՝ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխայն Բելայ ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ յեց և հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջրոցն ի վերայ տաւոյ միոյ իբրև ի դիտանոցի։ Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամբք. և երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն։ Եւ ինքն գլխանոց ազուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց, զօտեւորեալ զմէջսն, և յահեկէ զտախինն երկսայրի, և նիզակն առ ի ձեռին իւրում աջոյ, և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ։ Եւ տեսեալ զտիտանեանն կուռ վառեալ, և զօրս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս՝ կարգէ զԱրմենակ երկու եղբարբք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորդւոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր, և ինքն առաջի, և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց, երեքանկիւնի իմն կարդեաց ձևով, հանդարտ յառաջ մատուցանելով։

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս՝ ահագին դղրդիւն ի վերայ երկրի առնէին շահատակելովն, և ահս պակուցանողս տարազուք յարձակմանցն զմիմեամբք արկանէին։ Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն առք յաղթանդամք ըերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին, և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի։ Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն տիտանեան՝ զարհուրեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջանեալ ելանէ. քանզի խորհէր ի մէջոցի ամրանալ ամբոխին, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլինդ զլայնալիճն, դիպուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և չիշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ճողոպրեալն տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին։ Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց։ Եւ վասն այսորիկ այսչափ բաւական լիցի։ Բայց զտեղի ճակատուն շինէ (Հայկ) դաստակերտ և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց Ձոր։ Իսկ բլուրն, ուր քաջամարտիկօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանք։ Բայց զդիակն Բելայ պաճուճեալ իմն դեղովք՝ ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց։ Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք։

9 «Յետ այսորիկ—ասէ Խորենացին—ուրիշ շատ բան կը պատմուի այն (Մար Իբասայ) մատենին մէջ. բայց ես կ'առնում միայն՝ ինչ որ պէտք է իմ հաւաքմանս։ Հայկ, ասէ (Մար Իբաս), Կադմոսի շատ բան տուաւ աւարէն, յընդոծնաց իւրոց եւս երեւելի մարդիկ, և հրամայելով նմա երթալ իւր առաջին բնակութեան տեղը՝ ինք գնաց Հարք, և շատ տարիներ ապրելով մեռաւ, երէց որդւոյն Արմենակայ յանձնելով բոլոր ազգը։

Արմենակ իւր եղբայրներէն երկուքը, Խոռ և Մանաւազ և Մանաւազայ որդին Բազ բոլոր ազխիւ իւրեանց կը թողու Հարք։ Մանաւազ կը ժառանգէ Հարք. որդի նորա Բազ՝ աղի (Վանայ) ծովուն հիւսիսային արևմտեան եզրը, գաւառն ու ծովը յիւր անուն (Բզնունիք) անուանելով։ Իսկ Խոռ (ծովուն) հիւսիսային կողմը կը բազմանայ և կը ծաղկեցնէ երկիրը շինութեամբք։

Արմենակ առնլով բոլոր բազմութիւնը՝ կ'երթայ դէպ ի հիւսիսային արևելք, և կ'իջնէ բարձր լեռներէ պարսպեալ խոր դաշտավայր մի, ընդ որ յարևմտից կ'անցնին կարկաջասահ գետեր։ Դաշտը դէպ արևելք երկայնելով կ'երթայ. լերանց ստորոտէն եւս ոչ սակաւ ականակիտ աղբերք բխելով կը ժողվուին և փոքր գետեր ձևանալով՝ առ եզերբ դաշտին առ ստորոտով լերանց կը հոսեն հեզասահ։ Հարաւային լեռն սպիտակ գագաթամբըն ի սկըզ-

բան շիտակ դէպ ի վեր բարձրանալով, յետոյ սակաւ կը ծռի և իբրև թէ ծերացեալ կ'երևի միւս երիտասարդ լերանց մէջ։ Այս խոր դաշտին մէջ կը բնակի Արմենակ, դաշտին հիւսիսային կողման մէկ մասը կը շէնցնէ, ինչպէս նաև լերան ստորոտը նոյնպէս հիւսիսէն, և լեռը կ'անուանէ յիւր անուն Արագած, և կոչուածներն՝ Ոտն Արագածու։ Այս Արմենակ յետ բազում ամաց ծնաւ զԱրմայիս, և յետոյ շատ տարիներ ապրելով մեռաւ։

10. Արմայիս կը շինէ իւր տուն բնակութեան առ եզերբ գետոյն ի վերայ բլրոյ և յիւր անուն կը կոչէ Արմաւիր և զգետն յանուն թոռին իւրոյ Արաստայ՝ Երասխ։ Իսկ զորդին Տարա, յոլովածին և շատակեր՝ բոլոր աղխիւ կը ղրկէ մօտաւոր դաշտ մը, բարի և արգաւանդ, ուր ոչ սակաւ գետեր կը քալեն, Արագած կոչուած լերան ետին հիւսիսային կողմը։ Ասի թէ այն գաւառը Տարայի անուամբ կոչեցաւ Շիրակ»։ Խորենացին ի հաստատութիւն Տարայի շատակերութեան և Շիրակայ բեղմնաւորութեան՝ կը յիշէ գեղջկական առակ մը. «Թէ քո Տարայի որկորն է՝ մեր Շիրակայ ամբարքն չեն»։ «Այս Արմայիս, ասէ Խորենացին (ի Մար Իբասայ առնլով), յետ կելոյ շատ տարիներ՝ ծնաւ իւր որդին Ամասիա»։

11. Ամասիա Արմաւիր բնակելով՝ յետ ամաց կը ծնանի զԳեղամ, ետ Գեղամայ զՓառոխ և զՑոլակ։ Յետոյ գետն ի վեր երթալով հարաւային լերան մօտ՝ կը շինէ հոն ի խորշ մի լեռնոտին մեծամեծ ծախիւք երկու տուն. մին դէպ արևելք, լերան ստորոտէն բղխող աղբերականց մօտ, իսկ միւսը նոյն տան արևմտեան կողմը, հետի գացող մարդու մը ոտիւք իբր կէս օրուան ճամբայ հեռագոյն։ Երկու որդւոց իւրոց, արուոյն Փառոխի և կայտառին Ցոլակայ կու տայ ժառանգութիւն այս տուները, յորս բնակելով սոքա՝ յանուն իւրեանց կոչեցին այն տեղերը—Փառախոտ և Ցոլակերտ։ Ամասիա յիւր անուն Մասիս կոչելով լեռը՝ դարձաւ յԱրմաւիր ուր և մեռաւ։

12. Գեղամ յետ ամաց զՀարմայ զոր ծնած էր յԱրմաւիր, թողլով անդ՝ գնաց դէպ ի միւս լեառն, որ հիւսիսային արևելեան կողմն էր ծովակի մը եզրը։ Հարմայ ծովակին եզրը կը զարդարէ շինիւք և բնակչօք, լեռը կ'անուանէ յիւր անուն Գեղ և շէնն ու ծովակը՝ Գեղաքունի։ Հոն ծնաւ Գեղամ իւր որդին Սիսակ, սէգ, անձնեայ, բարեգեղ, կորովաբան և գեղեցկաղեղ։ Յընչից իւրոց մեծ մաս մը և շատ ծառաներ տալով Գեղամ Սիսակայ՝ հատանէ նմա ժառանգութեան սահման ծովակէն դէպ արևելք մինչև դաշտ մը։ Երասխ գետ անձաւները կտրելով նեղ տեղերէ կ'անցնի, և ահագին դղըրդմամբ կ'իջնէ այս դաշտը։ Հոն բնակելով Սիսակ՝ շինութեամբք կը զարդարէ երկիրը, զոր յիւր անուն կը կոչէ Սիւնիք։ Պարսք, ասէ

Խորենացին, աւելի որոշ կ'անուանեն—Սխական։ Իսկ Գեղամ վերոյիշեալ դաշտին մէջ առ ստորոտով նոյն լերան յամուր ձորակի ձեռակերտ շինելով՝ կը կոչէ յիւր անուն Գեղամի, որ յետոյ ի թոռանէ նորա Գառնկայ կոչեցաւ Գառնի։ Գեղամ մեռաւ, պատուիրելով որդւոյ իւրում Հարմայի բնակել յԱրմաւիր։ Այս Հարմայի որդին էր Արամ»։

Բազում ինչ զկնի այսօրիկ պատմի ի մատենին. այլ մեք որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է շարեսցուք։ Զկնի այսօրիկ դառնալ ասէ (Մար Իբաս) Հայկայ ի նոյն տեղի բնակութեան, և Կադմեայ թոռին իւրում բազում ինչ յանկածէ պատերազմին պարգևաց, և յիւրոց ընդոծնաց արս անուանիս։ Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն, և ինքն երթեալ դադարէ յանուանեալ տեղին Հարք։ Սա կեցեալ ամս ծնաւ զԱրմենակ ի Բաբելոնի, որպէս վերագոյն ասացաք։ Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւս մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազգն Արմենակայ որդւոյ իւրոյ։ Իսկ նորա թողեալ զերկուս յեղբարց իւրոց, զԽոռ և զՄանաւազ ամենայն աղխիւն իւրեանց ի կոչեցեալն Հարք, և զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք, իսկ որդի նորա Բազ՝ յարևմտից հիւսիսոյ զեզր ծովուն աղւոյ, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբն։ . . . Իսկ Խոռն ի կողմանս հիւսիսոյ (ծովուն) բազմանայ, կարգէ զշէնս իւր։ . . . Իսկ Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն խաղայ յարևելս հիւսիսոյ, և երթեալ իջանէ ի խորին դաշտավայրի մի ի բարձրագագաթանց պարսպեալ լերանց, գետս կարկաջաահոս յարևմտից ընդ մէջ անցանելով, և զդաշտն արևելից իմն գոգցես իբր որոշեալ, ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն պարզեալ, և ստորոտովք լերանցն բազում ակնաակնս բղխեալ աղբիւրք, որ գետոց հաւաքումն եղեալ՝ հեզաբար առ սահմանօք նոցա, ծնիւք լերամբք և եզերօք դաշտին, պատանեակք ամանք իբր երիտասարդուհեօք ճեմիցեն։ Այլ հարաւայինն արեգակնաճեմ լեառն, սպիտակափառ ունելով գագաթն, ուղղորդ ի յերկրէ բուսեալ, երեքօրէիւ քաջագօտւոյ առնն շրջապատեալ ճանապարհաւ, և առ փոքր փոքր ի շեշտումն անկեալ, ծեր ոմն արդարև լեառն ի մէջ երիտասարդացեալ լերանց։ Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արմենակայ՝ շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին և զոտն լերինն ի նոյն կողմանէ, և զլեառն անուանէ յանկարգոյն յիւր անուն Արագած, և զկալուածսն՝ Ոտն Արագածու։

Այս Արմենակ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրմայիս, և յետոյ կեցեալ ամս շատ՝ մեռաւ։ Իսկ որդի նորա Արմայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ սարոյ միոյ առ եզերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր, և զանուն գետոյն յանուն թոռին իւրոյ Արաստայ՝ Երասխ։ Նա զորդին իւր զՇարայ, զյոլովածին և զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բարի, յորում գնան ջուրք ոչ սակաւք ի թիկանս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած, յորոյ անուն և զգաւառն ասեն անուանել Շիրակ։ Վասն որոյ արդարանալ թուի առասպելին, որ ասի ի մէջ գեղջկաց. Թէ քո Շարայի որկորն է՝ տեսն, մեր Շիրակայ ամբարքն չեն։ Այս Արմայիս կեցեալ ամս՝ ծնանի զորդի իւր զԱմասիա, ի վերայ որոյ կեցեալ այլ ևս ամս՝ մեռաւ։

Ամասիա բնակեալ յԱրմաւիր յետ ամաց ծնանի զԳեղամ, և յետ Գեղամայ զՓառոխ արի և զՑոլակ. և յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ, և շինէ անդ առ խորշիւք լեռնոտինն մեծամեծս ծախիւք երկուս տունս, զմին յարևելս կոյս, մօտ յակունս աղբերցն որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւսն՝ յարևմուտս կոյս նորին տանն, բացագոյն իբր մեծօր հասարակօրոյ միոյ հետևակագնացի առնն ճանապարհի: Եւ տա զնոսա ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց, արւոյն Փառոխի և կայտառին Ցոլակայ. յորս բնակեալ՝ յիւրեանց անուն զանգիւն կոչեցին, ի Փառոխայ՝ Փառախոտ, և ի Ցոլակայ՝ Ցոլակերտ: Բայց զլեառնն Ամասիա անուանէ իւր անուամբ Մասիս, և ինքն դարձեալ յԱրմաւիր՝ եկաց ամս սակաւս և մեռաւ:

Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր. և թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանդերձ որովք բնակէին՝ ինքն գնաց զմիւս լեռամբն առևելեան հիւսիսոյ յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ, և զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի և ծովն: Աստ ծնաւ զորդի իւր զՍիսակ, զայր սէգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և գեղեցկադեղն: Սմա զմեծ մասն յընչից իւրոց տուեալ, և ծառայս անձինս բազումս՝ սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արևելս մինչև ցդաշտ մի, որ գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմաձիգս և նեղս, ահագին գրնդրնմամբ իջանէ ի դաշտն: Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ, և զաշխարհն կոչէ իւրով անուամբ Սիւնիք. այլ Պարսք յստակագոյն իսկ Սիսական կոչեն:

Բայց ինքն Գեղամ դառնայ անդրէն ի դաշտ անդր, և առ ստորոտ նորին լերինն ի ձորակի մի ամրոջ շինէ ձեռակերտ մի և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի: Այս Գեղամ, որպէս ասացաք՝ յետ ամաց կենաց իւրոց ծնաւ զՀարմայ. յետ որոյ և այլ ևս, և մեռաւ: Եւ հրամայեաց որդւոյ իւրում Հարմայ բնակել յԱրմաւիր: Իսկ Հարմայ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամ:

13. Խորենացին յետ նկարագրելոյ այսպէս զգաղթականութիւնն և զշինութիւնս Հայկայ և յաջորդաց նորա մինչև Արամ՝ Արամայ գործերը կ՚սկսի պատմել: Արամ, ասէ Խորենացին, վասն զի աշխատասէր և հայրենասէր էր, ինչպէս կը ցուցնէ նոյն պատմագիրը (Մար Իբաս)՝ լաւ կը համարէր հայրենեաց համար մեռնիլ, քան թողուլ օտարածնաց կոխել իւր երկրին սահմանները և իւր համազգեաց վրայ տիրել:

Այս Արամ, ասէ (Մար Իբաս), քիչ տարի յառաջ քան զախրելն Նինոսի Ասորեստանեայց և Նինուէի՝ շրջակայ ազգերէն նեղուելով ժողվեց ընտանի մարդոց բազմութիւն մը, որ աղեղ և նիզակ գործածել քաջ գիտէին, թւով իբրև յիսուն հազար, բոլորը նորատի և ուժեղ: Արամ այս զօրքով կ՚երթայ Հայոց սահմանին վրայ մար երիտասարդաց դէմ, որոց առաջնորդ էր մար ոմն Նիւքար

անուն Հպարտ և պատերազմասէր, որպէս ասէ նոյն պատմագիր (Մար Իբաս)։ Նիւքար ոտնակոխ առնելով Հայաստանի սահմանները ծառայեցուց երկու տարի։ Ի վերայ սորա յարձակելով Արամ յանկարծ յառաջ քան զծագել արեգական՝ զարկաւ բոլոր բազմութիւնը, և զՆիւքար բռնելով բերաւ Արմաւիր, և հոն պարսպին աշտարակին ծայրը ճակատէն երկաթի ցցով պատին գամել հրամայեց ի տեսիլ անցորդաց և հոն եկող մարդոց, և զերկիր նորա մինչև Զարասպ կոչուած լեռը նուաճեց մինչև ի թագաւորելն Նինոսի Ասորեստանի և Նինուէի։

Իսկ Նինոս որ թագաւորեց ի Նինուէ, գիտելով յաւանդութենէ, թէ նախնին իւր Բէլ սպանուած էր ի Հայկայ՝ ունէր ոխ ի մտի և տարիներով կ՚սպասէր պատեհութիւն գտնել, Հայկայ բոլոր սերունդը ջնջել։ Բայց վախնալով (յԱրամայ), թէ թերևս վնաս հասնի իւր թագաւորութեան՝ ծածկեց զչարութիւն իւր, և հրամայեց Արամայ անկասկած վարել զիշխանութիւն իւր, նաև ետ նմա համարձակութիւն մարգարտէ վարսակալ կապել և երկրորդ նորա կոչուիլ»։

Սա (Արամ) այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր՝ լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենիս, և հարազատաց արեան նորա տիրել արանց օտարածնաց։

Այս Արամ սակաւուք ամօք յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեայց և Նինուէի, նեղեալ յազգացն որ շուրջ զիւրեաւ՝ և ժողովէ զկազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և որ ի տէգ նիզակի կամակարողք, նորատիք և հարուստք յոյժ և յաջողաձեռնութիւն լիկ և երկաւորք, որ ի սիրտ և ի պատրաստութիւն, իբր թէ բիւրս հինգ։ Պատահէ Մեդացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւքար անուն ասացեալ Մադէս, այր հպարտ և պատերազմասէր, որպէս ցուցանէ նոյն ինքն պատմագիրն, յեղերս սահմանացն Հայոց։ Որոց միանգամ քուշանաբար հինիւ ամբակոխ արարեալ զսահմանս Հայոց՝ ծառայեցոյց ամս երկուս։ Որում յանկարծօրէն ի վերայ հասեալ Արամ յառաջ քան զծագել արեգականն՝ սատակեաց զբազմութիւն ամբոխիցն, և զնոյն ինքն զՆիւքար կոչեցեալ Մադէս ձերբակալ արարեալ ածէ յԱրմաւիր, և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցից վարեալ երկաթի ընդ ճակատն յորմն վարսել հրամայէ, ի տեսիլ անցաւորաց և ամենայն եկելոց անդր. և զաշխարհն նորա մինչև ցլեառն անուանեալ Զարասպ ի ծառայութիւն հարկի կալաւ մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի։

Իսկ Նինոս թագաւորեալ ի Նինուէ, յիշատակ քինու զնախնւոյն իւրոյ զԲելայ ունէր ի մտի, ի զրուցաց ուսեալ. և զայս խորհէր հատուցանել յամս ձիգս, նկատել որպէս զյաջողութիւն աւուրց, բառնալ ջնջել զամենայն ճետ սերմանեալ յարանց քաջին Հայկայ։ Այլ երկիւղ կասկածանաց խորդաւանակ լինելոյ իւրոյ թագաւորութեանն զայսպիսիս համարեալ իրագործու-

թիւն՝ ծածկէ զչարութիւնն, և հրամայէ նմա (Արամայ) զայն իշխանութիւն անկասկածաբար ունել, և համարձակութիւն տայ նմա վարսակալ ածել մարգարտէ և երկրորդ նորա կոչել։

14. Խորենացին յետ պատմելոյ զպատերազմն Արամայ Հայաստանի արևելեան կողմը Մարաց դէմ՝ ասէ. «Համառօտիւ պատմենք նաև Արամայ կռիւներն Ասորեստանի դէմ և Հայաստանի արևմտեան կողմը, ինչպէս որ նոյն (Մար Իբասայ) գիրքին մէջ կը պատմուի։ Եւ կը շարունակէ այսպէս.

Արամ յետ ի գլուխ հանելոյ զկռիւն ընդդէմ արևելեայց՝ նոյն զօրութեամբ կը քալէ Ասորեստանի (թերևս կամի ասել Ասորւոց) կողմը։ Հոն կը գտնէ ապականիչ ոմն երկրին իւրոյ չորս բիւր հետևակ զօրօք և հինգ հազար հեծելովք, հսկաներու ցեղէն Բարշամ անուն, որ խիստ հարկերով կը նեղէր և անապատ դարձուցած էր շրջակայ տեղերը։ Ընդ նմա պատերազմելով Արամ՝ սպան զբազումս ի զօրաց նորա, և զմասն մի ի նոցանէ արար հալածական անդր քան զլերինս Կորդուաց, մինչև ի դաշտն Ասորեստանի։ Իսկ Բարշամ Արամայ զինակիրներուն պատահելով սպանաւ։ Արամ Ասորեստանի դաշտին մեծ մասն արար հարկատու երկայն ժամանակ։

Պատմենք արդ ինչ որ գործեց Արամ յարևմուտս ընդդէմ Տիտանեանց։ Արամ յառաջին զօրս իւր յաւելլով չորս բիւր հետևակ և երկու հազար հեծեալ՝ եկաւ Կապադովկացւոց կողմը, ի տեղին որ այժմ Կեսարիա կոչի։ Եւ որովհետև արևելեան և հարաւային սահմանները նուաճելով յանձնած էր երկուց ցեղից, այսինքն արևելեանը Սիսակեանց, և Ասորեստանի կողմը Կադմեայ տան՝ այն կողմերուն համար երկիւղ չունէր, ուստի և երկայն ժամանակ մնալով յարևմուտս՝ կը պատահի Տիտանեաններէն Պայապիս անուն ումեմն (որդւոյ) Քաղեայ, որ բռնած էր զերկիրն ի մէջ երկուց մեծ ծովուց, Պոնտոսի և Ովկիանու (Սև ծովուն և Միջերկրականին, այն է զՓոքրն Ասիա)։ Ընդ սմա կը կռուի Արամ, և Պայապիս յաղթուելով կը փախչի Ասիական ծովուն կղզիներէն մին։ Իսկ Արամ իւր ազգէն Մշակ անուն զոմն թողլով անդ տասն հազարաւ՝ ինքն դառնայ ի Հայս։ Բայց կը հրամայէ այն երկրին բնակչաց ուսանել հայերէն, այս պատճառաւ այն երկիրը կը կոչուի Պրոտին Արմենիան, որ կը նշանակէ Առաջին Հայք։ Մշակ հոն փոքր պարսպապատ քաղաք շինելով՝ յիւր անուն կը կոչէ Մշակ, զոր տեղացիք չկարելով հնչել ուղիղ՝ Մաժաք կ'անուանէին։ Արամ այն տեղերէն մինչև իւր սահմանը բնակչօք կը լնու շատ անբնակ

երկիրներ, որ Երկրորդ, Երրորդ, նաև Չորրորդ Հայք անուանեցան։ Այնպէս անուանի եղաւ այս Արամ՝ որ ուրիշ ազգեր զերկիր մեր յանուն նորա (Արմենիա կամ Արմնիք) կոչեցին։

Արամ տարիներ ապրելով՝ ծնաւ զԱրայ, և յետոյ ևս շատ տարիներ ապրելով մեռաւ։

Կարգեսցուք դոյզն յիշատակօք բանից և որ ինչ զկնի այսորիկ սորա (Արամայ) գործք քաջութեան պատմին յարեւմուտս ի նոյն մասունս, և որ ընդ Ասորեստանեայս կռիւն։ Նոյն այս Արամ յետ վճարելոյ ճակատոյն որ ընդ արեւելեայս՝ խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբք Ասորեստանի. գտանէ և անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ՝ չորիւք բիւրովք վառեալ հետեւակօք և հինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն, յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյն նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր։ Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ՝ հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումս ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի զինակրացն նորա պատահեալ մեռանի. . . ։ Զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ բազում ժամանակս։ Այլ որ ինչ յարեւմուտս կոյս ընդ Տիտանեանցն է սորա գործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի։ Աստ յարեւմուտս չուեալ, ի վերայ առաջնոյն չորիւք բիւրու հետեւակ զօրու և երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացւոց, ի տեղի մի որ այժմ ասի Կեսարիա։ Եւ քանզի զարեւելեայն և զհարաւայինն նուաճեալ, ի ձեռն յանձնեալ էր երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսակեանցն՝ զարեւելս, և որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին՝ ոչինչ այնուհետեւ կասկած չփոթից ուստեք ունէր։ Վասնորոյ յերկարեալ ժամանակս լինել յարեւմուտս՝ պատահէ նմա Պայապիս Քաղեայ տիտանեան՝ պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտոսն և զՈվկիանոս։ Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն։ Եւ ինքն թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ աշխարհին՝ և ինքն դառնայ ի Հայս։ Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին ուսանել զխօսս և զլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայս օր ժամանակի անուանեն զկղիմայն զայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք։ Եւ զգաստակերտն զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք՝ անուանէին հինք աշխարհին Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել..։ Ըստ նմին օրինակի և տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանն՝ զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլև Չորրորդ։ Այսպէս հզօր և անուանի եղեալ՝ յանուն սորա մինչև ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեօք ազգք զաշխարհս մեր անուանեն։ Բազում և այլ գործք քաջութեան ի նմանէ գտանին կատարեալ, այլ մեզ բաւական լիցի ասացեալս։ . . . .

Արամ յետ ամի կենաց իւրոց ծնաւ զԱրայն. զկնի որոյ և այլս բազումս կեցեալ ամաց՝ մեռաւ»

15. Արայի գալով՝ Խորենացին կը պատմէ զայս օրինակ. «Արայ

սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեց իւր հայրենեաց, ընդունելով Նինոսէ միևնոյն շնորհքը՝ զոր ընդունած էր հայր նորա Արամ։ Բայց վաւաշոտն Շամիրամ շատ տարիներէ հետէ լսեալ զգեղեցկութենէ Արայի՝ կը ցանկար հասնել իւր փափաքին, բայց յայտնի ինչ առնել ոչ համարձակէր։ Իսկ յետ վախճանելոյ Նինոսի կամ փախչելոյ նորա ի Կրետէ, համարձակ պատուելով զախտ իւր՝ ընծաներով առաքէ հրեշտակ առ Արայն գեղեցիկ, բազում աղաչանօք և պարգևներու խոստմամբ՝ գալ ի Նինուէ, և կամ ամուսնանալով ընդ Շամիրամայ՝ թագաւորել բոլոր Ասորեստանի, և կամ կատարելով զկամս Շամիրամայ՝ մեծ պարգևով և խաղաղութեամբ դառնալ ի տեղի իւր։

Յետ առաքելոյ սուէպ պատգամաւորս, Շամիրամ տեսնելով, թէ Արայ ոչ հաւանի՝ սաստիկ բարկանալով կ՚առնու զօր բազում և կու գայ ի Հայս ի վերայ Արայի, բայց ոչ այնչափ սպաննելու, որչափ ողջ բռնել տալու մտօք զԱրայ, առ ի տալ կատարել նմա զցանկութիւն իւր, քանզի առ սաստիկ ցանկական մոլեգնութեանն, երբ կը լսէր զանուն Արայի՝ շամշութեամբ կը վառէր, որպէս թէ զնոյն ինքն զԱրայ կը տեսնէր։ Շամիրամ եկաւ յանուն Արայի Այրարատ կոչուած դաշտը։ Երբ ճակատ պիտի մղուէր՝ պատուիրեց զօրապետներուն ամենայնիւ ջանալ ողջ բռնել զԱրայ. բայց ի կռուին պարտեցան զօրք Արայի, և Արայ սպանաւ Շամիրամայ պատանիներէն։ Յետ յաղթութեանն տիկինը դիակապուտներ կը ղրկէ ի տեղի ճակատուն, դիականց մէջ խնդրել զիւր ըղձալին և զտարփածուն։ Արայ քաջամարտկաց մէջ կը գտնուի մեռեալ և Շամիրամայ ապարանից վերնատունը կը դրուի։

Երբ Հայք նորէն պատերազմի գրգռեցան Շամիրամայ դէմ առ ի պահանջել զվրէժ մահուան Արայի՝ Շամիրամ ասէ ցնոսա. Հրամայեցի աստուածոց իմոց լիզուլ զվէրս Արայի և կենդանացնել։ Արդարև Շամիրամ կը յուսար կենդանացնել զԱրայ իւր վհկական արուեստին դիւթութիւններով, քանզի էր ցնորեալ տռփական ցանկութեամբ։ Բայց երբ նեխեցաւ դիակը՝ հրամայեց ընկենուլ զդին ի վիհ մեծ և ծածկել, և իւր հոմանիներէն զմին ծածուկ զարդարելով՝ այսպէս համբաւ հանեց. Աստուածները լիզելով զԱրայ կենդանացուցին և լցին մեր փափաքը, ուստի այսուհետև ևս առաւել պաշտուելու և փառաւորուելու արժանի են ի մէնջ, իբրև հեշտացուցիչք և կամակատարք։ Եւ նոր պատկեր կանգնելով աւի յանուն դիւաց՝ կը պատուէ մեծապէս զոհիւք, որպէս թէ այն աստուծոյն զօրութիւնն էր որ կենդանացուցանել ամենեցուն թէ

դանացոյց զԱրայ։ Այս համբաւը տարածելով բոլոր Հայոց երկրին մէջ՝ դադրեցոյց խռովութիւնը։

Արայ յետ կելոյ ամս բազումս ծնած էր զԿարդոս։

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեալ իւրոց հայրենեաց, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ ի Նինոսէ որպէս և հայր իւր Արամ։ Բայց վաւաշն այն և բորբորիտն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա՝ ցանկայր հասանել. այլ ոչ ինչ յայտնապէս զայսպիսիս իշխէր գործել։ Իսկ յետ վախճանելոյն կամ փախստական լինելոյ Նինոսի ի Կրետէ, համարձակ պատուելով Շամիրամայ զախտն՝ առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց, գալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և դառնալ մեծաւ պարգևօք և խաղաղութեամբ ի տեղի իւր։

Եւ բազում անգամ երթևեկութիւն հրեշտակագնացութեանն լինելոյ և ոչ հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի։ Բայց որչափ գիմաց էր նշանակել՝ ոչ այնչափ ինչ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ. զի առ ի յոյժ ցանկական մոլեգնութեան, ի բանին որ զնմանէ՝ որպէս ի տեսութիւն չամչութեամբ վառեալ էր։ Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ։ Եւ ի լինել ճակատուն պատուէր տայր զօրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն։ Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի, մեռանի Արայ ի պատերազմին ի մանկանցն Շամիրամայ։ Դիակապուտս առաքէ տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն՝ խնդրել ի մէջ դիականցն անկելոց զբղձալին իւր և զտարփածուն։ Գտանեն զԱրայն ի մէջ քաջամարտիկացն, և հրամայէ դնել զնա ի վերնատանն ապարանին։

Իսկ ի դրդել միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել մահուանն Արայի՝ ասէ. Հրամայեցի աստուածոցն իմոց լիզուլ զվէրս նորա, և կենդանասցի։ Միանգամայն և ակն ունէր դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ըմնորեալ ի տռփական ցանկութենէն։ Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայեաց ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել. զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ այսպէս. Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ՝ լցին զփափագ մեր և զհեշտութիւն, վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք։ Կանգնէ և նոր իմն պատկեր յանուն դիւաց, և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն՝ իբրև թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրայ։ Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զխազմն։

Սա (Արայ) կեցեալ ամս՝ ծնաւ զԿարդոս։

16. Յետ այսորիկ Խորենացին սկիզբնէ առնէ պատմել, թէ ինչ-
պէս Տամիրամ Արարատայ դաշտէն գալով դէպ ի Հարաւ Վանայ
կողմը՝ կը հիանայ ընդ գեղեցկութիւն տեղւոյն, և կու տայ շինել
գՎան, և առ եզերբ ծովուն, քարակտուր բլրոյ մը վրայ ամարա-
նոցի համար վասն իւր՝ բերդ, զոր և մանր կը նկարագրէ Խորենա-
ցին ԺԶ. գլխոյն մէջ (տես էջ 17—20), և ասէ թէ Տամիրամ մեշտ
ամառներն այն քաղաքը կու գար, Զրադաշտ անուն մար մը փո-
խանորդ դնելով Ասորեստանի և Նինուէի։ Յետոյ Տամիրամայ վարքը
և մահն յիշելով Մար Իբասայ պատմութիւնն հաւանականագոյն
կը համարի, այսինքն թէ Տամիրամ գժտելով ընդ Զրադաշտի, առ
որ բոլորովին հաւատացած էր տէրութիւնը՝ պատերազմի կ'ելլէ, և
յաղթուելով կը փախչի Հայաստան, ու կ'սպանուի յորդւոյ իւրմէ
ի Նինուասայ, որ կը թագաւորէ Ասորեստանի։ Ի հաստատութիւն
պատմութեան Մար Իբասայ զՏամիրամայ՝ Խորենացին կը յիշէ Հայ-
ոց հին առասպելները, յորս ասէ թէ կը պատմուէր Տամիրամայ
հետի փախուստն և մահ ի Հայս։ Տամիրամ, ըստ առասպելին, ծա-
րաւի, խնդրէ ջուր և ըմպէ. սուսերաւորք կու գան մօտ, և յու-
ռութք (կախարդանք) Տամիրամայ կը նետուին ի ծովն, ուստի ա-
ռակ էր, թէ Ուլունք Տամիրամայ ի ծով։ Ահա իմաստ առասպե-
լին՝ Խորենացւոյն բառերով. «Եւ աշխարհիս մերոյ առասպելք
զբազմահմուտ աօրին արդարացուցանեն՝ ասա ուրեմն զմահն ա-
սել Տամիրամայ և զհետևակ փախուստն, և զպապքումն և զիղձս
ջրոյն և զարբումն, այլ և ի մօտ հասանել սուսերաւորաց՝ և զյու-
ռութսն ի ծով, և բան ի նմանէ. Ուլունք Տամիրամայ ի ծով»։
Թուի թէ Հայոց մէջ հին Քուշեան Անահտայ, կամ Ասորեստա-
նեայց Աստղկան՝ Տամիրամայ վրայ կար գեղեցիկ վիպասանական երգ
մը, զորոյ, բմբէ, իմաստը միայն կու տայ Խորենացին։ Թուի թէ
հայ առասպելը վերջապէս զՏամիրամ, զօրէն Նիոբայ դստեր չա-
րագործին Տանտաղոսի՝ կը պատմէր փոխեալ ի քար. ուստի կը յա-
ւելու Խորենացին. «Այլ թէ ախորժիս առասպել՝ և Տամիրամ
քար առաջին քան զՆիոբէ»։

17. Խորենացին ոչ ասէ յայտնապէս, սակայն թուի ակնարկել,
թէ յետ Արայի Հայաստան եղաւ նահանգ կամ հարկատու իշխա-
նութիւն Ասորեստանեայց, քանզի Ի. գլխոյն սկիզբը կ'սկսի յա-
ռաջ տանել զպատմութիւն իւր այսպէս. «Տամիրամ արդէն ի կեն-
դանութեան իւրում՝ զորդին Արայի, որ ծնած էր ի սիրելի կնոջէ
նորա Նուարդայ, և էր երկոտասանամեայ ի մահուան հօրն, առ-
ակէր Արայի կոչելով Արայ՝ կը դնէ վերակացու Հայոց, մտերմու-

թեամբ հաւատալով նմա զերկիրն։ Յետ այսորիկ կը պատմէ, ասէ, (անտարակոյս Մար Իբաս) զայս օրինակ. Արայեան Արայ կը մեռնի Շամիրամայ (Զրադաշտի դէմ) պատերազմին մէջ, թողլով որդի ուժեղ և հանճարեղ, Անուշաւան անուն, որ Սօս կը կոչուէր, քանզի ըստ պաշտամանց (այսինքն ըստ յայնժամու կրօնից Հայոց) ձօնեալ էր Արմաւրի հայական սօսիներուն. որոց տերևներուն՝ օդէն հանդարտ կամ սաստիկ շարժման նայելով՝ սովոր էին առնել գուշակութիւնս Հայք, և այս երկար ժամանակ։ Այս Անուշաւան բաւական ժամանակ արհամարհութիւն կրելով ի Մինուասայ՝ մնաց արքունի դուռը, բայց բարեկամաց օգնութեամբ յաջողեցաւ իբրև հարկատու տիրել նախ մասին իրիք Հայաստանի, և ապա բոլորին»։

Այլ անդէն իսկ ի կենդանութեան իւրում Շամիրամ զծնեալն ի Նուարդայ սիրելւոյ կնոջէն Արայի, որ էր երկոտասան ամաց մնացեալ ի մահուանն Արայի, վասն առաջին իւրոյ խանդաղատանացն որ առ Արայն գեղեցիկ՝ կոչէ զանուն նորա Արայ, և կարգէ զնա ի վերակացութիւն աշխարհիս, մտերմութեամբ հաւատացեալ ի նա . . . ։ Բայց յարէ (Մար Իբաս) զկարգ բանիցս զկնի այսորիկ օրինակ զայս. Արայեանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմի, թողլով արու զաւակ ամենահարուստ և շատահանճար յիր և ի բան զԱնուշաւանն, որ Սօս անուանիւր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ որ յԱրմաւիրն, զորոց սաղարթուցն սօսաւիւն ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն ևեթ ուստ շարժումն՝ սովորեցան ի հմայս աշխարհիս Հայկազանց, և այս բազում ժամանակս։ Այս Անուշաւան բաւական ժամանակս արհամարհութիւն կրեալ ի Զամեսեայ (Նինուասու), տուայտի ի դրան արքունի. իսկ օգնեալ ի բարեկամաց՝ շահի զմասըն ինչ աշխարհիս հարկահանութեամբ խնամել, զկնի ապա և զբոլորս։

18. Խորենացին ԺԹ. գլխոյն մէջ յետ Անուշաւանայ մինչև Ասորեստանի թագաւորութեան կործանումը կը դնէ քսան և վեց անձանց անունները, իբր վերակացուաց կամ հարկատու իշխանաց ընդ իշխանութեամբ Ասորեստանեայց։ Այս անուններն են.

Պարէտ	Առնակ	Զարմայր
Արբակ	Շաւարշ	Պերճ
Զաւան	Նորայր	Արբուն
Փառնաս	Վստասկար	Բազուկ
Սուր	Գոռակ	Հոյ
Հաւանակ	Հրանտ	Յուսակ
Վաշտակ	Ընձաք	Կայպակ
Հայկակ	Գղակ	Սկայորդի։
Ամպակ	Հորոյ	

19. Բայց յառաջ քան զայս Խորենացին մթին ոճով յառաջաբան մը կը դնէ իբրև ազդ՝ որոյ իմաստն այս է. «Կը դնեմ հոս մեր ազգին աւագագոյն մարդիկը և նախնիները և ինչ որ զմիոյ միոյ ի նոցանէ զրոյցք կամ գործք կը պատմուին, ոչ թէ ի մտաց ստեղծելով, այլ առնլով ի գրոց և ի բանից իմաստուն և այսցիկ հմուտ մարդոց, յորոց ջանացի հաւաքել մեր հին պատմութիւնը։ Ես ճշմարտութեամբ և ուղղամտութեամբ կը պատմեմ զայսոսիկ, բայց թէ են ճշմարտախօս նաև այնք յորոց հաւաքեցի՝ այն Աստուծոյ միայն է գիտելի, քանզի մեք օտար և հեռի եմք ի նոցանէ ժամանակաւ։ Բայց զիարդ և իցէ՝ հաւաստի կամ սակաւ ինչ թերի ի ճշմարտութենէ՝ պիտի պատմեմ, քանզի պատմութեանս կարգը կը պահանջէ յիշել զայսոսիկ»։

Յարմարեալ կարգեցից ի գիրս յայսոսիկ զազգիս մերոյ զաւագագոյն զարս և զնախնիս, և որ ինչ վասն սոցա զրոյցք և իրականութիւնք, ոչ ինչ կամամտածական . . . , այլ որ ինչ ի գրոց . . . և որ ինչ ի բանից արանց իմաստնոց և յայսոսիկ քաջախոհակաց, յորոց մեք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս։ Եւ ասեմք լինել արդարաբան ի պատմութեանս յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան և ուղղամտութեան. իսկ ըստ որոց հաւաքումն՝ Աստուծոյ լինել յայտնիս, և մարդկան գովելիս կամ բասրելիս, և մեք այնոցիկ օտար և բացակացեալ։ . . . Այսոցիկ այսպէս կարգելոց, կամ հաւաստի կամ զոյգն ինչ կասեալ յարդարոյն՝ սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի հիւսման պատմութենէ պիտոյից։

Խորենացին, ինչպէս կը տեսնուի՝ կամի ասել, թէ Անուշաւանայ յաջորդաց անունները և գործերը, մինչև Պարոյր կամ մինչև ցանկումն Ասորեստանի տէրութեան՝ առած է ուրիշ աղբիւրէ կամ արժանահաւատ մարդոց վկայութենէ, և կը խոստանայ պատմել բազում ինչ զնոցանէ, բայց կը պատմէ ոչինչ. միայն զՀայկակայ ասէ, թէ էր առ Բեղոքոսիւ և սպանաւ ի պատճառս խռովութեան, զոր յարոյց յանխորհուրդս։ Եւ Զարմայրի համար, զոր կը դնէ առ Տրովական պատերազմաւ՝ ասէ, թէ Ասորեստանի Տևտամոս թագաւորէն եթովպացի զօրօք օգնական ղրկուելով Պրիամու՝ սպանաւ Հելլենացւոց քաջերէն, բայց կամի Աքիլլէսէն և ոչ յայլմէ քաջէ։

ԶՀայկակայ ասեն լինել առ Բելոքոսիւ, և ամբոխս իմն արարեալ անխորհուրդս, և մեռանել ի նմին (Խոր. Ա. ԺԹ.)։ Վասն Եղիականի պատերազմին պատմի առ Տևտամաւ Ասորեստանեայց, և մեր Զարմայր ի ծառայութեան Ասորեստանեայց՝ սակաւուք ընդ եթովպացի զօրուն օգնական Պրիամու, և անդ ի քաջացն Հելլենացւոց վիրաւորեալ մեռանի. այլ կամիմ յԱքիլլեայ, և մի յայլ ումեքէ ի քաջացն (Խոր. Ա. ԼԲ.)։

20. Խորենացին կամ աղբիւր նորա Մար Իբաս վերոյիշեալ 29 անձանց (յԱրայէ մինչև ցՍկայորդին) իշխանութեան միջոցը, որ իբր 1000 տարի է,—քանզի կը համեմատէ ժամանակ նոցա ամաց 29 երբայեցի նահապետաց, յԻսահակայ մինչև Յովրամ, 1896—880—այսպէս գրեթէ լռութեամբ կ'անցնի՝ ասելով. «Կ'երկարի յոյժ եթէ մանր յիշենք այս պատմութեան մէջ զբանս և զգործս նախակարգեալ մարդոց։ Ուստի թողլով զայնս որ չեն կարևոր՝ ասացուք որ ինչ հարկաւոր է։ Յետ Շամիրամայ կամ Նինոսի, Ասորեստանեայց թագաւորութեան ժամանակ ապրող հայ իշխանաց վերջինն էր Պարոյր առ Սարդանապաղաւ»։ Յետոյ կ'սկսի պատմել՝ թէ ինչպէս «Վարբակէս մար, խորագէտ և քաջ պատերազմող, տեսնելով Ասորեստանեայց վերջին թագաւորին Սարդանապաղայ կնամարդի բարքը և հեշտասէր թուլութիւնը՝ առատաձեռնութեամբ յինքն յանկոյց ոչ սակաւ քաջ և պիտանի մարդիկ, որ զայնու ժամանակաւ նեցուկ և հաստատութիւն էին Ասորեստանի կառավարութեան։ Զքաջ նախարարն մեր զՊարոյր ևս յինքն յանկուցանէ, թագաւորութեան ձև և շուք խոստանալով նմա․ և նիզակ և աղեղն և սուր գործածելու յաջողակ շատ մարդիկ ժողվելով՝ կ'առնու զթագաւորութիւնն ի Սարդանապաղայ, և տիրելով Ասորեստանի և Նինուէի՝ վերակացուներ կը դնէ Ասորեստանի, իսկ աթոռը կը փոխէ ի Մարս։ Ուստի կու գամ ահա մեր թագաւորներուն որ տիրեցին Հայոց մինչև ի ժամանակս Պարթևաց»։

Կարի շատ լինի, թէ զամենայն որ ինչ արժան է՝ ասիցեմք ի ճառս զնախակարգելոց արանց զբանս և զգործս։ Թողլով զոչ կարևորագոյնսն ի բանից՝ ասասցուք որ ինչ հարկաւորն է։ Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն, և որք ի Շամիրամայ կամ թէ ի Նինոսէ՝ զմերն ասեմ Պարոյր առ Սարդանապաղաւ։ Սա ոչ փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի Վարբակայ մարէ, բառնալով (որ երարձ) զթագաւորութիւնն ի Սարդանապաղայ։ . . . Քանզի Վարբակէս, զաւառաւ մեդացի (մար), խորամանկագոյն ի կենցաղավարութեան և ի մարտն երևեալ, ծանուցեալ զանմարդի բարս և զհեշտասէր թուլամտութիւն յուլութեան թուլոյն Կոնկոզւոյ (Սարդանապաղայ)՝ խտացուցանէ բարուցն և ձեռացն առատութեամբ ի քաջացն և ի պիտանեաց արանց բարեկամս, որով և աշխարհակալութիւնն Ասորեստանի առ այնու ժամանակաւ վարեր յայտնապէս մեծաւ հաստատութեամբ։ Յինքն և զքաջն մեր նախարար յանկուցանէ զՊարոյր, թագաւորութեան ձև և շուք խոստանալով նմա, և բազմամբոխս յարի արանց, և որ ի մէգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողաձեռք։ Եւ այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապաղայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի և Նինուէի։ Բայց այլ վերակացուս կարգեալ Ասորեստանի՝ փոխէ զթագաւորութիւնն ի

Մարս։ . . . Արդ այժմ անցից ի թիւ արանց, մանաւանդ թագաւորաց (Հայոց), մինչև ցաէրութիւնն Պարթևաց։

21. *Հաս Խորենացին Պարոյրէն մինչև Տիգրան 9 թագաւոր դնելով, այսինքն*

Պարոյր	*Պաճոյճ*	*Միւս Հայկակ*
Հրաչեայ	*Կոռնակ*	*Երուանդ Սակաւակեաց*
Փառնաւաս	*Փաւոս*	*Տիգրան,*

առանց ամենևին յիշելոյ գործ ինչ ի սոցանէ՝ Հրաչէի համար միայն ասէ, թէ այսպէս կոչուեցաւ, վասն զի պայծառերես և բոցակնագոյն էր և թէ լինելով ժամանակակից Նաբուգոդոնոսորայ որ Հրեաները գերեց՝ խնդրեց և առաւ ի նմանէ հրեայ գերիներէն երևելի ոմն Շամբաթ անուն, յորմէ են, ասէ, ըստ Մար Իբասայ, Բագրատունիք։

Հրաչեայ սա կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ։ Առ սովաւ ասեն կեցեալ զՆաբուգոդոնոսոր արքայ Բաբելացւոց որ գերեաց զՀրեայս։ Եւ սորա (Հրաչէի) ասեն զմի ի գլխաւորաց Երրայեցւոցն գերելոց խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ, Շամբաթ անուն, ածեալ բնակեցոյց մեծաւ պատուով, և ի սմանէ ասէ պատմագիրն (Մար Իբաս) լինել ազգն Բագրատունի։

Ի թագաւորաց աստի ինուց զՀրաչէէ միայն համառօտիւ այսչափ խօսելով՝ Խորենացին կու գայ առ Տիգրան, զորմէ փառաւոր գովեստ մը կը յօրինէ, և ապա Աժդահակայ դէմ պատերազմը երկայն և մանր պատմելով՝ կը վերջացնէ իւր Հայկազանց պատմութիւնը։ Ահա Տիգրանայ վրայ գրուածը, զոր ի Մար Իբասայ առած է.

22. *Գանք, ասէ, այսուհետև Տիգրանայ և գործոց նորա։ Տիգրան մեր բոլոր թագաւորաց հզօրագոյնը և իմաստնագոյնն է, և քաջ քան զամենեսին։ Կիւրոսի աջակցելով երարձ Մարաց իշխանութիւնը, նաև Յոյները նուաճելով հնազանդեցուց ոչ սակաւ ժամանակ։ Մեր երկիրն ընդարձակելով հասոյց ի նախկին սահման իւր։ Եղաւ նախանձելի իւրոց ժամանակացս, և յետնոց ևս ըղձալի, ինքն և ժամանակ իւր։ Զանզի ո՛ր ողջամիտ և քաջութիւն և իմաստութիւն սիրող մարդ ոչ զուարճասցի յիշատակաւ սորա և ոչ յորդորեսցի նմին նման լինել։ Քաջերու գլուխ անցնելով արութիններ գործեց և զազգ մեր բարձրացոյց։ Զմեզ որ ընդ լծով էաք՝ շատ լծագիր և հարկապահանջ բազմաց։ Բազմացոյց ոսկւոյ և արծաթոյ գանձեր, պատուական քարեր, արանց և կանանց համար պէսպէս գունովք և անկուածովք զգեստներ, որովք տգեղքն ե-*

րև զգեղեցիկս սքանչելի կ'երևէին, իսկ գեղեցիկքն՝ դիւցազունք ժամանակին։ Զօրքը որոց զէնք էին առաջ պարսատիկ և շերտ, և հետի կ'երթային գրեթէ մերկ՝ առ հասարակ վառեցան աղեղամբք, սուսերօք և նիզակօք, և պատեալ զրահիւք և վահանօք՝ ձիով կ'երթային, այնպէս որ երբ ի մի վայր կու գային՝ տեսիլ նոցա և շողիւն պահպանակաց նոցա և զինուց բաւական էր ահիւ հալածել զթշնամին։ Միով բանիւ Տիգրանայ ժամանակ խաղաղութիւն և շինութիւն էր, և ամենայն ոք սնանէր իւղով և մեղու։

Զայսոսիկ և զայլ բազում ինչ սոյին նման տրար երկրի մերում այս Տիգրան Երուանդեան, խարտեաշն և գանգրահեր, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայ և թիկնաւէտ, առոյգաբարձ և գեղեցկոտն, պարկեշտ ի կերակուրս և յըմպելիս, և ի զուարճութիւնս օրինաւոր։ Յերգս վիպասանաց, զորս նախնիք մեր կ'երգէին՝ ասի զսմանէ, թէ և ի հեշտութիւնս մարմնոյ էր չափաւոր, նաև մեծիմաստ, պերճաբան և յամենայնի պիտանի մարդկութեան։ Զինչ կայ ինձ աւելի սիրելի ի մատենիս յայսմիկ՝ քան թէ երկարել զգովեստ և զպատմութիւն սորա։ Իբրև թագաւոր զամենայն ինչ արդարութեամբ դատէր, երբ թէ իւրոց մտաց լծակաւ կը կշռէր իւրաքանչիւր մարդոյ վարքը։ Ոչ մեծերուն կը նախանձէր, և ոչ ստորինները կ'արհամարհէր, այլ իւր խնամոց վերարկուն ի վերայ ամենեցուն հաւասար կը տարածէր»։

Բայց անցցուք այսուհետև և որ ինչ յաղագս Տիգրանայ և որ ի նմանէ գործք։ Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հզօրագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ։ Որ և Կիւրոսի աջակցեալ զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրև նուաճեալ հնազանդէր։ Եւ զսահման մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինան մեր հասուցանէ յեզերս ծայրից բնակութեանց, և ամենեցուն որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և յետնոցս բղձալի ինքն և ժամանակ իւր։

Զի ո՞ ոք ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօքն ոչ զուարճասցի և յօրդորեսցի այսպիսի այր լինել։ Արանց կացեալ գլուխ, և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալսս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս պէս գունոց և անկուածոց՝ արանց հասակաց և կանանց միանգամայն բազմացոյց, որով տգեղագոյնքն իբրև գեղաւորս երևէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազանցեալք։ Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առհասարակ դիպաղեղունք, և չերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք։ Որոց ի մի վայր հաւելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայցն պահպանակաց և զինուց փայլ

մունք և չուլունք՝ զթշնամիսն արտահալածել։ Խաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու զհասակս ամենեցուն պարարել։

Զայս և որ այլ այսպիսիք բազումք՝ եթէ մերոյ աշխարհիս խարտեաշս այս և աղերձկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգարարձն և գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս, և ի խրախճանութիւնս օրինաւոր. զորմէ ասէին ի հինսն մեր, որք բամբռամբն երգէին՝ լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր, մեծիմաստ և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի։ Եւ զինչ ինձ ի գիրս յայս արդեօք լիցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել։ Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք կենցաղ մտացն լծակաւ կշռէր։ Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածել զգեստս։

23. Յետ յօրինելոյ զայս գովեստ զՏիգրանայ՝ Խորենացին ի Մար Իբասայ առնլով կ'սկսի պատմել Աժդահակայ կասկածը Տիգրանայ Կիւրոսի հետ մտերմութենէն, երազը, նենգաւոր խնամութիւնը Տիգրանայ հետ, պատերազմը, յաղթութիւնն ի Տիգրանայ և Մարաց գերութիւնը։

«Յաւուրսն յայնոսիկ, ասէ (Մար Իբաս), ոչ սակաւ վտանգ կար Մարաց թագաւորին Աժդահակայ ի միաբանութենէն Կիւրոսի և Տիգրանայ, և այս պատճառաւ սաստիկ ծփանաց մէջ էր Աժդահակ։ Գիշեր մը այսպիսի ալէկոծեալ խորհուրդներով անկողին մըտնելով, այն ինչ ի քուն եղև՝ երազին մէջ տեսաւ ինչ որ յարթնութեան իւրում ո՛չ տեսած էր և ոչ ականջով երբէք լսած. ուստի ընդոստ ելլելով քունէն՝ չսպասեց ըստ սովորութեան խորհրդականաց ժողովին գումարման, այլ գիշերայն կանչեց աւագանին, և տխրութեամբ գետին նայելով կը հառաչէր ի խորոց սրտէ, և երբ խորհրդականք հարցուցին այս հառաչման պատճառը՝ ուր ուրեմն հեծութեամբ սկսաւ յայտնել զիւրոյ սրտին խորհուրդ և զկասկած, միանգամայն երազոյն ահագին տեսիլն այսպէս.

Երազիս մէջ կը թուէր ինձ, սիրելիք, անծանօթ երկիր մը գտնուիլ երկրէս վեր շատ բարձր լեռան մը մօտ, որոյ գագաթն սառնամանեօք պատեալ կ'երևէր, և ասէին թէ Հայաստան էր այն երկիրը։ Մինչ ես աշխատեալ կը նայէի լեռն ի վեր՝ կին մըն ծիրանազգեստ, երկնագոյն քօղով, նստած երևեցաւ այն բարձր լերան ծայրը, աչեղ, բարձրահասակ, կարմրայտ, և որդեծնութեան ցաւով բռնուած։ Երկար դիտելով այս հիանալի տեսիլը՝ տեսայ որ կինը յանկարծ երեք դիւցազունք ծնաւ, հասակաւ և բնութեամբ կատարեալ։ Առաջինը հեծնելով առիւծու վրայ՝ սլացաւ դէպ արևմուտք, երկրորդը նստաւ ընձու վրայ և ի հիւսիս արշաւեց, իսկ

երրորդն անարի վիշապ մը սանձելով՝ կը յարձակէր մեր երկրին վրայ։ Այսպիսի խառն երազոց մէջ, կը թուէր ինձ կալ արքունեացս տանեաց վրայ, և յարկին վերին երեսը կը տեսնէի գեղեցիկ շատրւանօք զարդարեալ, և զմեզ պսակող դիք էին անդ հրաշալի տեսլեամբ, իսկ ես և դուք զոհիւք և խնկովք կը պատուէինք զնոսա։ Այս միջոցին յանկարծ վեր նայելով տեսայ, որ վիշապին վրայ հեծնողն իբրև զարծուի սլացեալ թևօք կու գար մեր վրայ, որ և մօտ հասնելով կամէր կործանել զգիս։ Բայց ես, Աժդահակ, խորոց կենալով ի միջի՝ իմ վրաս կրեցի այն յարձակումը, քաջաբար կռուելով ընդ դիւցազնոյն։ Նախ նիզակներով յօշոտեցինք իրարու մարմին, այնպէս որ արեան վտակներ հոսելով՝ մեր արեգակնատես ապարանից երեսը ներկեցին կարմրագոյն։ Բայց ինչ երկարեմ. կռւոյն վախճանն էր իմ կործանումս. ուստի և ի սաստիկ քրտան և ի տագնապի ընդոստ յարեայ ի քնոյ, և գրեթէ անկենդան եմ. քանզի ուրիշ ինչ կը նշանակէ այս տեսիլը՝ եթէ ոչ ի Հայկազնոյն Տիգրանայ մեր վրայ գալու բուռն յարձակումը։ Եւ ո՛վ արդեօք, յետ աստուածոց, կրնայ օգտակար խրատ տալ ինձ. անշուշտ թագաւորակից առնեմ ինձ զայնպիսին։

Աժդահակ շատ իմաստուն խորհուրդներ լսելով խորհրդակիցներէն՝ շնորհակալութեամբ ետ նոյա պատասխանի օրինակ զայս.

Ձեր իմաստուն խորհուրդները լսելով, սիրելիք, առացից զոր ինչ ես կը խորհիմ օգտակար յետ աստուածոցն օգնականութեան։ Թշնամեաց խորհուրդներն ի դերև հանելու աւելի օգտակար միջոց չկայ, քան դաւել զնոսա սիրոյ պատրուակաւ։ Եւ այս ոչ կաշառով հնար է և ոչ պատիր բանիւք, այլ սա կերպով, զոր ես յարմարագոյն կը տեսնեմ։ ԶՏիգրան դաւաճանելու շատ յարմար միջոց է վասն մեր օրիորդն Հայոց Տիգրանուհի։ Խնամութիւնն ապաքէն կը դիւրացնէ երթևեկութիւնը, և այսու առթիւ կրնանք ինչս կամ պատիւ խոստանալով մտերմաց Տիգրանայ՝ տալ խողխողել զնա սրով, և կամ դեղոց հնարիւք սպանանել, և կամ զարս հաւատարիմս և զկուսակալս նորա հեռացուցանելով ի նմանէ՝ իբրև անզօր տղայ ձգել զնա ընդ մերով ազդեցութեամբ։

Խորհրդականք Աժդահակայ հաճեցան ընդ այս խորհուրդ, և իսկոյն առաջարկութիւնն սկսաւ ի գործ դրուիլ։ Մարաց աւագանիներէն մին ղրկուեցաւ առ Տիգրան մեծամեծ գանձիւք և նամակաւ մը, որոյ պատճէնն այս էր.

’Սիրելի եղբայրութիւնդ գիտէ, թէ չիք ինչ օգտակարագոյն յաշխարհի յաստուածոց պարգևեալ մեզ քան բազմութիւն սիրելեաց, մանաւանդ իմաստնոց և հզօրագունից։ Քանզի այսպէս

մեր վրայ արտաքուստ խռովութիւններ չեն գար, և եթէ գան՝ շուտով կը հերքուին. իսկ ներքուստ ամենևին չեն կրնար ծագել։ Արդ իմ տեսեալ բարեկամութեան այս մեծ օգուտը՝ խորհեցայ ի մէջ ձեր և իմ հաստատուն և խորագոյն սէր հաստատել, որպէս զի երկոքինս ամէն կողմանէ ամրացեալ՝ ողջ և անշարժ պահենք զտէրութիւն մեր։ Այս սէրը լիովին պիտի կատարուի կարծեմ, եթէ Հայոց Մեծաց օրիորդն, զՏիգրանուհի քոյր ձեր, հաճիք տալ ինձ կնութեան։ Կարծեմ թէ լաւ համարելոց ես, զի Տիգրանուհի լիցի տիկնաց տիկին Մարաց։ Ողջ լեր, թագակից մեր և սիրելի եղբայր,։

Զերկարեմ խօսքս, ասէ Մար Իբաս. պատգամաւորը կու գայ և կը կատարէ գործը. քանզի Տիգրան չգիտելով դաւաճանութիւնը՝ կը հաճի տալ Աժդահակայ կնութեան զքոյր իւր Տիգրանուհի, զոր և շուտով կը յուղարկէ ինչպէս օրէն է թագաւորաց, և Աժդահակ մեծ պատուով ընդունելով զՏիգրանուհի՝ առնէ զնա իւր կանանց առաջինը, ոչ միայն առ նենգութեան սրտին, այլ և վասն գեղեցկութեան օրիորդին։

Աժդահակ, կ'ըսէ (Մար Իբաս), յետ հաստատելոյ զՏիգրանուհի ի տիկնութեան՝ չառնէր ինչ առանց կամաց նորա բոլոր թագաւորութեան մէջ, այլ անոր խօսքովը կը գործէր, և ամենուն պատուիրած էր հրամանի նորա հնազանդել։ Յետ առնելոյ զայս այսպէս՝ սկսաւ մեղմով յայտնել դաւաճանութեան խորհուրդը։ Զե՞ս գիտեր, ըսաւ, եղբայրդ Տիգրան իր կնոջը Զարուհւոյ թելադրութեամբ սկսաւ նախանձել տիկնութիւնդ Արեաց վրայ։ Հիմա ուրիշ բան չուզեր՝ եթէ ոչ զիս սպաննել տալ, որպէս զի Զարուհի լիցի տիկին բոլոր Արեաց, և իբրև աստուածուհի պաշտուիլ։ Հիմա մնայ քեզ ընտրել զմի յերկուց աստի, կամ եղբայրասէր լինել և ամօթալի կործանում յանձն առնուլ Արեաց առջև, և կամ անձիդ օգուտը խորհելով՝ այս չարեաց առաջն առնուլ։

Բայց խորամանկ խրատուն հետ կար ի ծածուկ նաև Տիգրանուհւոյ մահը՝ եթէ ըստ խրատու Աժդահակայ չվարուէր։ Բայց խորագէտն Տիգրանուհի իմանալով զայն՝ քաղցրութեամբ պատասխանեց, և դաւաճանութեան խորհուրդը գաղտ իմացուց Տիգրանայ։

Աժդահակ չգիտնալով զայս՝ պատգամաւորաց ձեռօք հրաւիրեց զՏիգրան երկու թագաւորութեանց սահմանին մօտ տեղ մը իրարու հետ տեսնուիլ, որպէս թէ կարևոր ինչ ունէր հաղորդել նմա, և թէ գրով կամ պատգամաւորի բերնով չկրնալով պարտ էր բերան ի բերան խօսել։ Բայց Տիգրան որ գիտէր Աժդահակայ

խորամանկութիւնը՝ գրով յայտնեց Աժդահակայ թէ գիտակ. էր ծածուկ նենգութեան նորա։ Այսպէս չարութիւնը յայտնուեցաւ, այնպէս որ չէր կրնար այնուհետեւ խորամանկութեամբ ծածկուիլ, ուստի և յայտնի գրգռեցաւ պատերազմը։

Ապա Թագաւորն Հայոց՝ Կապադովկիոյ, Վրաց և Աղուանից երկիրներէն, ի Մեծ և ի Փոքր Հայոց ընտիր մարդիկ ժողվելով խաղաց Մարաց վրայ, և Աժդահակ ստիպուեցաւ պատահել պատերազմաւ Հայկազին ոչ սակաւ ամբոխիւ։ Բայց կռիւը երկարեցաւ մինչև հինգ ամիս. քանզի կը վարանէր Տիգրան, երբ կը խորհէր իւր սիրելի քոյրը, և կը ջանար ամէն կերպով հնար գտնել զՏիգրանուհի ազատելու։ Վերջապէս հարկ եղաւ ճակատ տալ։

Բայց կը զովեմ, ասէ Խորենացին, զՏիգրան, քաջահասակն, ամենևին բոլոր անդամօք համեմատ, առոյգ, և որ ուժով չունէր զօք ինքեան հաւասար։ Եւ ինչ երկարեմ խօսքս. երբ կռիւը սկսաւ՝ նիզակաւ իբր ջուր ճեղքելով երկաթի զրահը՝ կը շամփրէ զԱժդահակ ի տէգ նիզակի իւրոյ, և երբ յետ կը քաշէ ձեռքը՝ Թոքին մէկ մասը նիզակին հետ դուրս կը բերէ։ Սակայն կռիւն սքանչելի էր. քանզի քաջք քաջաց պատահելով՝ գիւրաւ չէին տար տեղի, ուստի և կռիւը երկարեցաւ ժամերով, և Աժդահակայ մահը միայն վախճան տուաւ գործին։ Այսպէս աճեցաւ և բազմացաւ Տիգրանայ փառքը։

Սա ևս կը պատմուի թէ, ասէ Խորենացին, յետ կատարելոյ զայս ամենայն՝ Տիգրան կը յուղարկէ գքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբոխիւ Թագաւորապէս Հայաստան, այն աւանը զոր շինեց յիւր անուն կոչելով Տիգրանակերտ, և շրջակայ գաւառները սեպհականեց նմա։ Այն կողմանց ոստան կոչուած ազատ մարդոց համար ևս ասէ (Մար Իբաս), թէ Տիգրանուհւոյ զարմէն են։

Իսկ Աժդահակայ առաջին կինը զԱնոյշ և Թագաւորական տունէն աղջկունս և պատանիս բազումս և ուրիշ գերիներ իբր տասն հազար, բնակեցոյց մեծ լերան (Մասեաց) արևելեան կողմը, տալով նոցա սահման մինչև Գողթան, զՏամբատ, Ոսկիօղայ, Դաժգոյնս և ուրիշ դաստակերտս գետին եզերքը, յորոց մին Վրանջունիք, մինչև Նախճաւանու ամրոցին դիմացը, ինչպէս նաև սա երեք աւանները— Խրամ, Ջուղա և Խօշակունիս. իսկ գետոյն միւս կողմէն՝ բոլոր դաշտը, որոյ ծայրն է Աժդանական, դարձեալ մինչև նոյն Նախճաւանոյ ամրոցը։ Իսկ Աժդահակայ կինը զԱնոյշ իւր որդւովք բնակեցոյց մեծ լերան ընդարձակ փլածին ծայրը, զորմէ ասի թէ ահագին շարժէ մը եղած է։ Անուշայ տուաւ Մարաց ազգէն պաշտօնեաներ ևս, որ լերան ստորոտը բնակեցան։

Էր, տէր (Մար Իբաս), յաւուրսն յայնս ոչ սակաւ ինչ վտանգ որ ի Մարացն Աժդահակայ, ի միաբանութենէ Կիւրոսի և Տիգրանայ։ Վասն որոյ և ի սաստկութենէ ծփանաց խորհրդոցն լինել նմա ի տեսլենէ երազոյն երևութանալ ի քուն գիշերոյ՝ զոր ոչ երբէք յարթնութեան տես աչօք և ոչ ի լուր ականջաց լուաւ։ Ուստի և ընդոստ ի քնոյն լինելով՝ ոչ յամէ ըստ սովորութեան կարգին ի ժամ խորհրդականութեանն, այլ այն ինչ գիշերոյն ժամս ունելով ոչ սակաւս՝ ձայնէ զխորհրդակիցսն, և տրտում երեսօք յերկիր հայելով ի խորոց սրտին մռնչէ յոգոցհանութեամբ։ Եւ ի զվասն էրն ի խորհրդակցացն հարցանել՝ յերկարէ ժամս ինչ զպատասխանին, և ուր ուրեմն հեծութեամբ սկիզբն արարեալ յայտնէ զամենայն որ ի ծածուկ սրտին խորհուրդ և կասկած, ընդ նմին և զիրս ահագին տեսլեանն.

Էր ինձ, տէր, ով սիրելիք, լինել այսօր յերկրի անծանօթում, մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ գագաթն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ, և ասէին զոգցես յերկրին Հայկազանց գոլ լինել։ Եւ ի նայել ինձ յերկարագոյն ի լեառնն՝ կին ոմն ծիրանազգեստ, երկնագոյն ունելով զվերեաւ տեռ, նստեալ երևեցաւ ի ծայրի այսպիսւոյ բարձրութեան, աչեղ, բարձրահասակ և կարմրայտ, երկանց ըմբռնեալ ցաւովք։ Եւ յերկարագոյն նայելն իմ յայսպիսի երևումն և ի հիացման լինել՝ ծնաւ կինն յանկարծ երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ և բնութեամբ։ Առաջինն զերանոսն ածեալ ի վերայ առիւծու՝ սլանայր յարևմուտս, և երկրորդն ի վերայ ընձու՝ ի հիւսիսի հայելով, իսկ երրորդն զվիշապն անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ չահատակեալ յարձակէր տէրութեանս։

Եւ ի մէջ այսպիսեաց խառն երազոց թուէր ինձ կալ ի վերայ տանեաց իմոց ապարանացս, և զնոյն ինքն վերին երեսս յարկացս տեսանել գեղեցիկ և բազմագոյն չատրուանօք զարդարեալ, և զսպասկողսն զմեզ զդիսն մեր հրաշատեսիլ տեսլեամբ ի վերայ կացեալ, և զիս ձեւք հանդերձ զոսա պատուեալ զոհիւք և խնկովք։ Եւ յանկարծ ի վեր հայեցեալ, զայն որ ի վերայ վիշապին հեծեալ կայր՝ արծուանման սլացեալ թևօք տեսի յարձակեալ, որ մօտ հասեալ խորհէր կործանել զդիսն։ Իսկ ես Աժդահակ խորոց ընդ մէջ անկեալ և յիս զայնպիսի եղեալ յարձակումն ընկալայ, մարտ ընդ աքանչելւոյն առնելով դիւցազանն։ Եւ նախ ի տէգ նիզակաց զմարմինս երկաքանչիւրոցս յօշելով վտակս արեան ի վայր հոսեցուցաք, զարեգակնատես երեսս ապարանիցս արեան հոսեալ ցուցաք ծով։ Այսպէս և զկնի այլովք զինուք ժամս ոչ սակաւս։

Բայց զի՞նչ օգուտ ինձ և խօսից երկարութիւն, զի վախճան գործոյն իմն էր կործանումն. ուստի և ի քրտան սաստիկ վտանգի եղեալ՝ փախեաւ յինէն քունն, և այսուհետև ոչ թուիմ կենդանի։ Զի ոչ այլ ինչ նշանակէ երևութիցս շարժումն՝ եթէ ոչ որ ի Հայկազեանն Տիգրանայ հասանելոց է մեզ բռնութեան յարձակումն։ Բայց ով արդեօք, յետ աստուածոցն օգնականութեան, բանիւ և գործով մեզ յօգուտ խորհելով՝ ոչ զինքն կարծիցէ թագաւորակից մեր լինել։ Եւ բազում ինչ ի խորհրդակցացն լուեալ օգտութեան մտածութիւն՝ շնորհակալութեամբ պատուէ զնոսա։

Բազում ինչ հանճարով և իմաստութեամբ ի ձէնջ լուեալ, ով սիրելիք, ասացիք և որ ինչ իմ յետ աստուածոցն օգնականութեան յայտնի օգտակար բան և մտածութիւն։ Բանզի ոչ ինչ առ թշնամեացն զգուշութիւն վեհագոյն

բերէ օգնականութիւն և ծանօթութիւն նոցայն առաջի արկելոյն գործոց՝ քան թէ որ ի ձեռն սիրոյն զգաւելն ոք խորհիցի։ Եւ զայս դարձեալ ոչ ի ձեռն բանից պատրողաց այժմ առ մեզ հնարաւորութիւն է կատարել՝ եթէ ոչ որպէս կամք են ինձ այժմ գործել։ Եւ այն է նիւթ կատարման խորհըրդոյս և հնարք որոգայթից—գեղեցիկն ի կանայս և խոհեմ, քոյր նորա Տիգրանուհի։ Զի այսպիսի խել արտաքուստ և ներքուստ հարազատութիւնք համարձակ զգաւելն ի ձեռն երթեեկութեան անյայտաբար ընդ արձակ մարթացուցաննեն վարժել, կամ յանկարծօրէն իւրոց մտերմաց, ընչիւք և խոստմամբ պատուոց՝ տալ հրաման սրով խողխողել և կամ դեղոց հնարիւք, և կամ ըզմտերիմս նորա և զկուսակալս զանձիւք ի նմանէ ի բաց մերկանալ, և այսպէս իբրև զանզօր տղայ ի բուռն առցուք։

Եւ ազդող համարեալ բարեկամացն զայսպիսի խորհուրդ՝ նիւթեն և զգործն, ի ձեռն միոյ ուրեմն ի խորհրդակցացն տուեալ բազմութիւն զանձուց, և ի ձեռն թղթոյ օրինակաւս այսուիկ յուղարկէ.

Գիտէ սիրելի եղբայրութիւնդ քո, ոչ ինչ օգտակարագոյն ի կեանս աշխարհիս ի դիցն մեզ պարգեւեալ՝ քան զսիրելեաց բազմութիւն, և այս՝ իմաստնոց արդեւք և հզօրագունից. զի այսպէս և արտաքուստ ոչ ի վերայ համարձակին խռովութիւնք, և եկեալքն վաղվաղակի հերքին, իսկ ի ներքս ոչ զմուտն յումեքէ գտեալ այսպիսւոյ չարութեան՝ հալածեալ լինին։ Արդ զայսպիսի շահ օգտութեան որ ի բարեկամութենէ լինի, տեսանելով՝ խորհեցայ ես հաստատուն և խորագոյն զսէրն որ է ի մէջ մեր՝ հաստատել. զի երկոքեանս յամենայն կողմանց ամրացեալք՝ ողջ և անշարժ զտէրութիւն մեր կալցուք։ Եւ այս լինի ի տալն քում զօրիորդն Հայոց Մեծաց զքոյր քո Տիգրանուհի ինձ կնութեան. թէ արդեօք և բարի համարեսցիս դմա, զի թագուհեաց թագուհի լիցի։ Ողջ լեր, թագակից մեր և սիրելի եղբայր։

Եւ առանց յերկարելոյ զբանս ասացից։ Գայ առաքեալն և կատարէ յաղագս օրիորդին գեղեցկի. զի յանձն առեալ Տիգրանայ՝ տալ զքոյր իւր Տիգրանուհի Աժդահակայ կնութեան։ Ոչ ևս զխնելով զառ ի նմանէ զաւաճանութիւն՝ յուղարկէ զքոյր իւր որպէս օրէն է թագաւորաց։ Զոր առեալ Աժդահակայ, ոչ միայն վասն նենգին որ ի սրտին իւրում, այլ վասն գեղեցկութեանն՝ առաջին կարգէ կանանց իւրոց, և զչարութիւնն ի ներքոյ ոստայն հինու։

Զկնի այսորիկ ասէ (Մար Իբաս), թէ ի հաստատել Աժդահակայ զՏիգրանուհի ի տիկնութիւն՝ ոչ ինչ առանց կամաց նորա ի թագաւորութեանն իւրում գործէր, այլ բերանով նորա կարգէր զամենայն, և հրամանի նորա ամենեցուն հնազանդ լինել հրամայէր։ Եւ յօրինեալ զայս այսպէս՝ սկսանի մեղմով մատուցանել նմա պատրանս. Ո՞չ գիտես, ասէ, եթէ եղբայր քո Տիգրան խանդացաւ տիկնութիւնդ քո ի վերայ Արեաց, ի կնոջէ իւրմէ ի Զարուհեայ գրգռեալ։ Եւ զի՞նչ լինիցի այն՝ եթէ ոչ նախ ինձ մեռանել, և ապա լինել զԶարուհի ի վերայ Արեաց՝ և զաստուածուհեաց ունել զտեղի։ Բայց արդ ընտրելի է քեզ այժմ զմի յայսցանէ, կամ լինել եղբայրասէր, և կործանումն խայտառակելի յանդիման Արեաց յանձն առնուլ, և կամ զանձին իմանալով զբարի՝ խորհուրդ օգտակար ի մէջ բերել և յաղագս առաջակայիցն հոգալ։

Բայց էր ի մէջ այսպիսւոյ խորամանկութեան թագուցեալ և զմեււ-

նեղն Տիգրանուհեաց, եթէ ոչ ինչ ըստ կամաց խորհեսցի մարապարացւոյն։ Այլ իմացեալ խորագիտոյ գեղեցկին զայսպիսի դաւաճանութիւն՝ պատասխանի առնէ սիրոյ բանս Աժդահակայ, և արագագոյն ի ձեռն մտերմաց պատմէ եղբօրն զնենգութիւնն։ Եւ (Աժդահակ) ձեռնարկէ այնուհետև ի գործն ի ձեռն պատգամաւորութեան—գալ նոցա ի միաբանութիւն տեսութեան ի տեղի միջոց սահմանաց երկոցունց թագաւորութեանց, իբր բան ինչ և գործ հարկաւոր հասեալ, որ ի ձեռն գրոյ և հրեշտակութեան կատարել ոչ է կարողութիւն, եթէ ոչ և դէմք երկոցունցն հանդէպ լինիցին։ Այլ գիտելով Տիգրանայ զառաքելոյ իւրին կատարումն՝ ոչինչ յորոց խորհէրն Աժդահակ՝ ծածկէր, այլ ի ձեռն գրոյ յայտնէ որ ինչ ի նորայն խորութեան սրտին։ Եւ ի յայտնել այսպիսւոյ չարութեանն՝ ոչ ինչ այնուհետև էր բան և խորամանկութիւն, որ զայսպիսիս առագաստէր զչարութիւն, այլ յայտնի այնուհետև գրգռէր խազմն։

Եւ ժողովէ արքայն Հայոց ի սահմանացն Կապադովկացւոց, և որչափ ընտիրք Վրաց և Աղուանից աշխարհին, և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքունց։ Եւ խաղայ ամենայն զօրութեամբ իւրով զկողմամբք Մեդացւոց։ Վտանգ հասանէ այնուհետև Աժդահակայ պատահել պատերազմաւ Հայկազինն՝ ոչ փոքր ինչ ամբոխիւ։ Եւ երկայնէր հակառակութիւնն մինչև ցամիսս հինգ. քանզի հիւանդանայր գործն արագ և առողջ, յորժամ զմտաւ ածէր Տիգրան յաղագս քեռն իւրոյ սիրելւոյ։ Եւ այսպէս զելս իրացն հնարէր յարգարել, զի ապրելոյ ճար լիցի Տիգրանուհեայ։ Ի պատահման այսորիկ և ժամ մարտին մերձենայ։

Բայց զովեմ զքաջահասակն զիմ և զնիզակաւորն և զամենեւին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի. քանզի առոյգ, ամենայնիւ ըստ իրաւորս պատշաճեալ, և ուժով ոչ զոք իւր ունելով զոյգ։ Եւ զի՞ երկայնեմ զբանս. քանզի ի լինել պատերազմին, նիզակաւ որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ չամփրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամփոփել միւսանգամ զձեռն՝ արտաքս զկէս մասն թոքիցն հանդերձ զինաւն ի դուրս բերէ։ Բայց մարտն էր աքանչելի, զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ վաղվաղակի թիկունս ի միմեանց դարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին ժամս ձիգս։ Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աժդահակայ, և այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ յաճախէր փառս Տիգրանայ։

Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ (Տիգրան) յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբոխիւ ի Հայս, յաւանն զոր շինեաց իւրով անուամբ Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ։ Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս իբր թագաւորական զարմ։

Իսկ զԱնոյշ զառաջին կինն Աժդահակայ և զբազումս ի սերմանէ Աժդահակայ աղջկունս հանդերձ պատանեկօք և այլ բազում գերեօք, որչափ թէ աւելի քան զբիւր մի՝ բնակեցուցանէ յարեւելեայ ուսոց մեծի լերինն մինչև ի սահմանս Գողթանն, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք և որ այլք առ եղերբ գետոյն դաստակերտք, յորոց մին է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախջուանու. և զերիս աւանսն, զԽրամ, զՋուղայ և զԽոշակունիս։ Իսկ ի միւս կողմանէ գետոյն զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժ-

դանական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանայ։ Բայց զնախասացեալ Անոյշ բնակեցուցանէ որդւովքն իւրովք յանդորրութեան սպառուածի փլածի մեծի լերինն, զորմէ լեալ ասեն յահագին իմն շարժմանէ . . . Իսկ պաշտօնեայս տայ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ստամբ լերինն բնակեցան։

24. Ըստ Խորենացւոյն Տիգրանայ որդիքն էին Բաբ, Տիրան և Վահագն։ Վահագնի վրայ Խորենացին կը յիշէ հին անուանի առասպելն «Երկնէր երկին», զոր բամբռնահարք (տեսակ մը երգիչներ Հայոց մէջ) կ'երգէին մինչև Խորենացւոյն ժամանակ։

«Ոմանց զայս բամբռամբ երգելը մեր ականջով լսեցինք» ասելով Խորենացին կը յաւելու. «Վահագնի համար երգին մէջ կ'ըսուէր, թէ վիշապներու հետ կը կռուէր և կը յաղթէր, և Հերակլի քաջութիւններուն շատ նման գործեր պատմէին զնմանէ։ Նաև աստուածացեալ ասէին զՎահագն, և թէ Վիրք զպատկեր սորա կանգնած էին և կը պաշտէին զոհիւք»։ Ըստ Խորենացւոյն, մինչև Աղեքսանդր մեծ՝ Տիգրանայ յաջորդեցին որդի ի հօրէ ութ թագաւորք—Վահագն, Առաւան, Ներսեհ, Զարեհ, Արմոգ, Բագամ, Վան և Վահէ։ Այս վերջինն ընդդիմանալով Աղեքսանդրի՝ կը սպանուի։ «Այնուհետև մինչև Վաղարշակայ թագաւորելն Հայոց վրայ, ասէ Խորենացին, ճշմարիտ ինչ չունիմ ի պատմել, քանզի շփոթութիւն տիրեց, այնպէս որ շատեր իրարու հետ կը մրցէին տիրել մեր երկրին, և այս պատճառաւ Արշակ մեծ դիւրաւ մուտ գտնելով Հայաստան՝ թագաւորեցուց զեղբայր իւր Վաղարշակ Հայոց վրայ»։

Այսպէս Խորենացին Վահէի մահուամբ կը գոցէ Հայկազանց պատմութիւնը, որ է նիւթ առաջին գրոց նորա, և իբր 180 տարուան անիշխանութեան միջոց պարապ թողլով՝ յաջորդ գրոց մէջ կու գայ Արշակունեաց։

Սորա (այսինքն Տիգրանայ) որդի Բաբ, Տիրան, Վահագն, զորմէ առասպելք. Երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով. երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն. ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր, և ի բոցոյն պատանեկիկ վազէր. նա հուր հեր ունէր. ապա թէ բոց ունէր մօրուս, և աչկունքն էին արեգակունք։ Զայս երգելով ոմանց բամբռամբ՝ լուաք իսկ ականջօք մերովք։ Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգն կռուել նմա և յաղթել, և կարի իմն նմանագոյն զՀերակլեայ նահատակութեանցն նմա երգէին։ Այլ ասէին զսա և աստուածացեալ, և անդ յաշխարհին Վրաց զսորա չափ հասակի կանգնեալ պատուէին զոհիւք։ Եւ սորա են զարմք Վահունիք։ Սորա (Վահագնի) Առաւան, սո-

րա Ներսեհ, սորա Զարեհ, սորա Արմոգ, սորա Բագամ, սորա Վան, սորա Վահէ։ Սա ընդվզեալ մեռանի յԱղեքսանդրեայ Մակեդոնացւոյ։

Ցայսմհետէ մինչև ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի չիք խժն ամբոխից լեալ՝ այր զարամբ եղանէին տիրել աշխարհիս. և վասն այսորիկ դիւրամուտ ի Հայս լեալ Արշակ մեծ՝ թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց։

ԳԼՈՒԽ Ե.

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԲԱՍԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ:

1. Մարիբասեան պատմութիւնը ծնունդ է քրիստոնէական ժամանակի: 2. Նամակ Վաղարշակայ եւ առաքումն Մար Իբասայ կեղծիք են: 3. Այս ենթադրութիւնը եւ զպարագայս նորա թելադրող պատճառը։ 4. Զարմանալի պատահում մը: 5. Նինուէ քաղաքը չկար առ Վաղարշակաւ: 6. Թէեւ լինէր Նինուէ առ Վաղարշակաւ՝ ի հնուց մնացեալ դիւան կամ մատեան չկարէր լինել անդ: 7. Կարեւոր գիտելիք զքաղդէարէնէ եւ զասորերէնէ. 8: Նինուէի դիւանին քաղդէական մատեանը ո՞ր քաղդէարէնով գրուած էր: 9. Հին քաղդէարէն լեզուաւ մնացորդ գտնուա՞ծ է երբէք: 10. Բանք հնոց զԲերոսոսէ բաւական չեն ցուցանել՝ թէ հին քաղդէարէն մատենագրութիւն կար: 11. Նաբատեան երկրագործութիւն կոչուած գիրքն հին քաղդէական աղբերէ չէ: 12. Մար Իբաս ո՞ր ասորերէնով թարգմանեց: 13. Եզրակացութիւն: 14. Երից նահապետաց եւ Հայկայ ազգաբանութիւնը, զոր Մարիբասեան պատմութիւնն ի քաղդէական մատենէն առեալ կը դնէ՝ կեղծիք է: 15. Խորենացւոյն վկայութիւնը, թէ Աբիւդենոս կը յիշէ Հայկայ ազգաբանութիւնը՝ կը պարունակէ մեծ անտեղութիւն: 16. Խորենացին զԱբիւդենոս Եւսեբիոսէ միայն գիտէր: 17. Մարիբասեան պատմութիւնն զծագմանէ հայ ցեղին՝ թէ՛ ըստ ժամանակին (զկնի ջրհեղեղի) եւ թէ ըստ տեղւոյն (ի Բաբելոն)՝ հակառակ է լուսոյն, զոր կուտան մեզ արդի երկրաբանական, լեզուաբանական եւ պատմական տեղեկութիւնք: 18. Եզրակացութիւն. Հնութիւն հայ ցեղին: 19. Քաղդէական մատենին ընծայուած գաղափարք քրիստոնէական են, ոչ թէ քաղդէական-հեթանոսական: 20. Անդէպ է հաւատալ քաղդէական մատենի կամ տարեգրի մը մէջ Հայկայ նկարագրին պէս երկայն նկարագիր: 21. Եւս աւելի անդէպ է հաւատալ Հայկայ յաջորդներուն մանր պատմութիւնը քաղդէական դիւանին մէջ: 22. Յատուկ անուանք ի պատմութեան Մար Իբասայ եւ ստուգաբանութիւնք եւս աւելի կասկածելի կը գործեն այն պատմութիւնը. Խոռխոռնի. Հարք: 23. Անդէպ է Մարիբասեան պատմութեան զհայաստան ամայի ենթադրելն առ Հայկաւ եւ առ յաջորդօք նորա: 24. Քննութիւն զպատմութենէն Արամայ. Զարմանալի խոստովանութիւն մը: 25. Դիտողութեան արժանի այլ կէտ: 26. Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ Հայք կոչմանց պատմական ծագումը: 27. Անուանք տուեալք Հայաստանի այլեւայլ ժամանակ: 28.ն Նիոսի

եւ Արամայ յարաբերութիւնը. Այս պատմութեան բուն աղբիւրը: 29. Թէ Արամայ եւ Նինոսի թուականն ուստի՛ առնուած է: 30. Արայի վէպը: 31. Հայոց առասպելն զՇամիրամայ. Արայի վէպին բարոյական իմաստը: 32. Քսան եւ եօթն հայ իշխանք. Թէ ուստի՛ են Հայկակայ ապստամբութեան եւ Զարմայրի Տրովական պատերազմն երթալուն պատմութիւնները: 33. Զփախստեանէ որդւոց Սենեքերիմայ ի Հայս. Հակասութիւն մը: 34. Դիտողութիւն զԲագրատունեաց: 35. Ժամանակագրական սխալ մը: 36. Զկործանմանէ պետութեան Ասորեստանի առ Սարդանապաղաւ. Այլ հակասութիւն: 37. Դիտողութիւն զՊարուրէ. Յովհաննէս կաթողիկոս: 38. Յաջորդք Պարուրի. Այլ հակասութիւն: 39. Դիտողութիւն զպատմութենէ Տիգրանայ: 40. Այս պատմութեան գլխաւոր պարագաները որ անղէպ են: 41. Դարձեալ հակասութիւն: 42. Տիգրանայ եւ Աժդահակայ մէջ անցից անտեղութիւնը: 43. Մար Իբասայ ընծայուած պատմութիւնն զԱժդահակայ նմանութիւն է Հերոդոտոսի պատմութեան: 44. Դիտողութիւն զգերութենէն Մարաց: 45. Վետայի առասպելը: 46. Ընդհանուր եզրակացութիւն:

1. Այս է ահաւասիկ Հայկազանց պատմութիւնը, զոր ըստ Խորենացւոյն բերաւ Մար Իբաս Նինուէի դիւանէն առ Վաղարշակ: Թէ այս պատմութիւնը վէպ է մանաւանդ, քան վաղեմի դիւանէ մը հանուած ստոյգ տարեգիր՝ այնպէս յայտնի է սկիզբէն մինչեւ վերջը, որ իբրեւ ազգային վաւերական պատմութիւն դնելով զայն առաջի լուսաւորեալ աշխարհի ոչ այլ ինչ կը շահինք՝ եթէ ոչ ցուցնել խորին տգիտութիւն պատմութեան, եւ յետին դիւրահաւանութիւն: Արդարեւ անաչառ քննելով Մարիբասեան պատմութեան ներքին եւ արտաքին պարագաները՝ կը գտնենք զայն քրիստոնէական ժամանակի ծնունդ, որ չկարէ լինել հնագոյն քան զերկրորդ դար քրիստոնէութեան: Այսմ ապացոյց է իբր թէ հեթանոսական անուններով եւ ոճով, բայց ըստ էութեան եւ պարագայից Ծննդոց գիրքէն առնուած պատմութիւնն զծագմանէ մարդկային ազգին յերից որդւոց Նոյի, զաշտարակաշինութենէ, զխառնակութենէ լեզուաց, զբաժանմանէ ազգաց եւ զազգաբանութենէ Յաբեթի, յորմէ Մարիբասեան պատմութիւն կու տայ սերել զՀայկ, ծանօթ ազգին իբրեւ Հսկայ դիւցազն մանաւանդ քան իբրեւ նահապետ: Մարիբասեան պատմութիւնը ստեղծող անձն, ով որ է՝ յետ երեւակայելոյ զՆինուէ քաղաք դեռ կանգուն իբր 150-ին նախ քան զՔր. եւ գտնելոյ անդ ի վաղնջուց մնացեալ դիւան, եւ հրամանաւ Աղեքսանդրի քաղդէարէնէ յունարէն թարգմանեալ եւ Հայոց նախնագոյն ժամանակին պատմութիւնը պարունակող մատեան՝ այն պատմութիւնը յիշեալ դիւանէն հանել տալու յարմարագոյն զոք արդարեւ չէր կրնար գտնել քան զՎաղարշակ, Հայոց առաջին ար-

Բ. Նախ կը հարցուցանենք, թէ ուստի ունեցաւ Վաղարշակ Նինուէի դիւանին մէջ Հայոց պատմութիւն մը փնտռել տալու խորշակունի թագաւորը, զեղբայր Արշակայ, զոր հնարողն պատմութեան կը կարծէ տիրող ինչպէս Բաբելոնի՝ նոյնպէս Նինուէի։ Հուրդը, մինչև ղրկել զՄար Իբաս առ Արշակ այնպիսի աներկբայութեամբ, որպէս թէ ստուգիւ գիտէր, թէ կային հոն Հայոց պատմութիւնք պարունակող գրեան.—«Հրամայես(ցես) բանալ զդիւանդ արքունի առաջի առնդ... զի գտեալ զըղձալին եղբօր քո և որդւոյ՝ բերցէ *զստոյգն փութապէս*»։ Զայս ասացաք ենթադրելով, թէ իբր 150-ին նախ քան զՔր. կար Վաղարշակ անուն անձ մը, եղբայր Պարթևաց թագաւորին Արշակայ, ի նմանէ կարգեալ թագաւոր Հայոց և Միջագետաց. քանզի ինչ որ կը գրէ Խորենացին զՎաղարշակայ և զերկուց յաջորդաց նորա՝ չէ պատմական, որպէս տեսցուք յետոյ։ Բայց թողունք զայս առ այժմ։ Թողունք նաև Վաղարշակայ ընծայուած նամակին աւելորդ և անբնական յաւելուածները, որ նամակին անհարազատութիւնը կը մատնեն։ Ո՞չ ապաքէն աւելորդ և անբնական էր Վաղարշակայ՝ յիշեցնել Արշակայ, թէ էր «կրտսեր եղբայր նորա», և թէ «ի նմանէ կարգեալ էր թագաւոր Հայոց», պարագաներ՝ որ արդէն ծանօթ էին Արշակայ։ Ոչինչ ընդհատ անբնական էր նաև անյայտ և անծանօթ բանի մը համար, որպիսի էր Հայոց պատմութեան գտնուիլն ի դիւանին՝ ասելն Վաղարշակայ ցեղբայր իւր. «Բաց զդիւանդ այս մարդուն, որպէս զի եղբօրդ ըղձալին գտնելով՝ ստոյգը բերէ փութապէս»։

Գ. Մասնաւոր դիտողութեան արժանի են սակայն Մար Իբասայ առաքման պարագաները, որ կը ցուցանեն, թէ այս առաքումն, հանդերձ պարագայիւք՝ պատմական պատճառէ մը թելադրուած կեղծիք է։ Սահակ Բագրատունի Հայոց պատմութիւն մը գրել կ'առաջարկէ Մովսէսի Խորենացւոյ, որ արդարև զայնու ժամանակաւ առաջին և թերևս մի միայն կարող անձն էր յազգին այնպիսի գործ մը գլուխ հանելու։ Կերպով մը որ մեզ անծանօթ է՝ Մովսէս կը ստանայ իբր հին քաղդէական մատենէ մը առնուած կեղծ աղբիւր մը հնագոյն ժամանակի պատմութեան Հայոց։ Այս աղբիւրն հնարողին հարկ էր ցուցնել, թէ ինչ առթիւ, յո՛յր ձեռն և ուստի ձեռք բերուած էր այն։ Քաղդէական հին մատեան մը ո՞ւր կրնար գտնուիլ, եթէ ոչ Բաբելոն կամ Նինուէ։ Աղբիւրն հնարողն այս վերջին քաղաքը կ'ընտրէ իբրև տեղի քաղդէական մատենին, թէպէտ ի ժամանակին, յորում այս մատեանը գտնուած կը դնէ, այն է 150-ին նախ քան զՔր. առ Վաղարշակաւ՝ Նինուէ ի վաղուց անհետ եղած էր, և եթէ չէր ևս անհետ լեալ՝ յԱսորեստանեայց և

ի Քաղդէացւոց մնացեալ դիւան և մատեան չկարէին լինել անդ, որպէս տեսցուք ի ստորև. բայց աղբիւրն հնարողը չկարաց և չէր կարող գիտել այս պարագաները. պատմական և բանասիրական գիտութիւնք այնր դարու չզօրէին այնչափ հեռուն երթալ։ Արդ՝ յետ գտանելոյ տեղւոյ քաղդէական մատենին՝ կը գտնուի նաև զայն անտի հանել տուող անձը, այն է Նինուէի կողմանց իշխող մեծին Արշակայ Պարթևի եղբայրը Վաղարշակ, որ ըստ Խորենացւոյն կամ ըստ բանից այն աղբիւրը հնարողին՝ ոչ միայն թագաւոր կարգեալ էր յեղբօրէն ի վերայ Հայոց և Միջագետաց, այլ և պատուէր ընկալեալ ի նմանէ՝ «քաջութեան և իմաստութեան հոգ տանել», և ինքն ևս լեալ ուսումնասէր՝ փափաք մեծ ունէր գիտել Հայոց ազգին անցեալը։ Եւ որովհետև քաղդէարէն մատենէ մը չկարէր օգուտ քաղել Վաղարշակ՝ այս դժուարութեան ևս հնարը կը գըտնուի. նախ Աղեքսանդր Մակեդոնացի թարգմանել կուտայ զայն մատեան ի յոյն լեզու, և ապա յոյն և ասորի լեզուաց հմուտն Մար Իբաս թարգմանելով զայն ի յունէ յասորի՝ կը բերէ առ Վաղարշակ։ Ոչ միայն Վաղարշակ կրցաւ հասկանալ (այսպէս պարտ է ենթադրել) յունարէն կամ ասորերէն թարգմանութիւնը՝ այլև Խորենացին, որոյ միայն ձեռքն ինկաւ մին կամ միւսն յերկուց թարգմանութեանց անտի, կամ թերևս երկոքին ևս, յետ իբր 600 և աւելի ամաց, այնուհետև ոչ ուրուք ձեռքն իյնալով մինչև ցայսօր։

4. Այս հանճարեղ ենթադրութեան, այն է Վաղարշակայ թելադրութեամբ և Մար Իբասայ աշխատութեամբ Հայոց պատմութեան մը ստացման ենթադրութեան մէջ, կէտ մը կայ զոր պարտ է զարմանալի պատահում կոչել, եթէ պատահում է և ոչ մանաւանդ խորհուրդ, և որ յանգի ի մեծ գովեստ Խորենացւոյն և մեկենասայ նորին Սահակայ Բագրատունւոյ. քանզի վերոյիշեալ ենթադրութեամբ ի մէջ Վաղարշակայ և Սահակայ, ինչպէս նաև ի մէջ Մար Իբասայ և Մովսիսի՝ կը գոյանայ պանծալի համեմատութիւն մը. Սահակ իբրև եռանդուն փափաքող և թելադիր ազգային պատմութեան մը խմբագրութեան՝ լինի երկրորդ Վաղարշակ, և Խորենացին, իբրև յաջողակ և գործունեայ գրիչ այն պատմութեան՝ երկրորդ Մար Իբաս Կատինա, այսինքն սրամիտ կամ հնարագէտ։ (Տես և Վիքդ. Լանկլ. Հաւաք. պատմ. Հայոց. հտ. Ա. էջ 8։)

5. Մարիբասեան պատմութիւնը, որոյ բնագիրն անծանօթ է մեզ, ընդունելու համար իբրև արդարև հանեալ ի դիւանէն Նինուէի՝ պարտինք լինել նախ աներկբայ, թէ առ Վաղարշակաւ Նինուէ քաղաքը կը կենար իւրով բազմադարեան հնութեամբք, յորոց մին էր հարկաւ դիւանն, որ կենթադրուի մնացեալ անդ հարիւրա-

ւոր ամաց հետէ, այն է ի ժամանակէ անտի Ասորեստանեայց, Քաղդէացւոց և Պարսից։ Ստուգիւ գիտենք սակայն, թէ հարիւրաւոր ամօք յառաջ քան զՎաղարշակ չկար Նինուէ։ Հերոդոտոս, երբ 450-ին նախ քան զՔր. Նինուէի մօտէրէն անցնելով՝ զաւերակս նորա անգամ չգտաւ․ իսկ Քսենոփոն, քան զնա երբ 50 ամօք յետոյ՝ Նինուէի անունն անգամ չի յիշեր, թէպէտ առ աւերակօք նորա բանակեցաւ․ նոյնպէս ի ժամանակս արշաւանաց Աղեքսանդրի, երբ 180 տարի յառաջ քան զՎաղարշակ՝ չի յիշուիր այն աշխարհածանօթ քաղաքը։

6. Բայց Մարիբասեան պատմութիւնն ընդունելու համար երբեւ արդարև հանեալ ի դիւանէն Նինուէի՝ բաւական չէ միայն ստուգիւ գիտել, թէ կար Նինուէ առ Վաղարշակաւ, այլ պարտ է գիտել նաև ստուգիւ, թէ կրնար գտնուիլ հոն հին Ասորեստանցիներէն կամ Քաղդէացիներէն մնացեալ դիւան կամ մատեան։ Ըստ արդի պատմական և բանասիրական ստոյգ տեղեկութեանց գիտենք սակայն, թէ ոչ Ասորեստանեայց և Քաղդէացւոց, և ոչ իսկ Մարաց և Պարսից ժամանակէն կրնար գտնուիլ հին մատեան և դիւան, այսինքն տարեգիր կամ մատենադարան (գրատուն), քանզի դիւան բառն այս երկու նշանակութիւնն ունի առ մեզ։ Ասորեստանեայք և Բաբելացիք կամ Քաղդէացիք, ինչպէս նաև նոյին դրացի արիական կամ հնդեւրոպական ազգեր՝ չունէին այբուբենական գիր և ոչ մատեան․ գիր նոցա էին բևեռագիր կոչուած նշանք, իսկ դիւանք կամ մատեանք, եթէ արժան է այսպէս կոչել՝ քարինք և աղիւսք նոյն նշանագրօք։ Հայերէն սա հին բառերն՝ *արձանագրութիւն*, այսինքն քարի վրայ փորագրութիւն, և դաշինք *կռել*, որով, առ ի չգոյէ այլ ազգ գրութեան, դաշնագրութեանց ի քարի դրոշմուիլը կ'ակնարկուի՝ բաւական կը ցուցնեն, թէ Հայք ևս, ինչպէս նոյին դըրացիք Ասորեստանեայք, Մարք և հին Պարսք՝ այն հին ժամանակները ոչ այլով օրինակաւ գիտէին գրել, եթէ ոչ կռելով, այսինքն փորագրելով. ինչպէս նաև նշանագիր բառը, որ հին հայերէն լեզուաւ գիր կամ տառ կը նշանակէ՝ բևեռագիր կ'ակնարկէ մանաւանդ քան այբուբենական գիր կամ տառ, որ համեմատութեամբ շատ նոր են ի մերում լեզուի նշանագրի մօք, առաջինը (գիր)՝ ըստ այս նշանակութեան, վերջինը (տառ)՝ բոլորովին նոր, յետ անկման լեզուին մուծուած։ Այբուբենական գիրն արդարև հին է, գէթ երբեւ հազար ամօք յառաջ քան զքրիստոնէական թուականն, բայց առ Փիւնիկեցիս, որոց կը վերաբերի այս գիւտին առաջին գործածութիւնը, թերևս նոյն իսկ գիւտն, և յորոց առած են Եբրայեցիք առ Սամուէլիւ կամ առ Թագաւորօք։ Իսկ առ Քաղդէա-

ցիս և Ասորիս, որպէս և առ Պարսս այբուբենի գործածութիւնն համեմատութեամբ աւելի նոր է։ Յետ Դարեհի և Քսերքսի սկսան Պարսիկք գիր և դիւան ունենալ, ինչպէս յայտնի է դիւան բառէն ևս, որ արիական է։

7. Խորենացին խօսելով զմատենէն, զոր որպէս թէ գտած էր Մար Իբաս ի դիւանի անդ Նինուէի՝ երկու սեմական լեզու կը յիշէ, քաղդէարէն՝ որով գրուած էր բուն մատեանը, և ասորերէն՝ որով Մար Իբաս թարգմանելով բերաւ այն մատենէն Հայոց վերաբերեալ մասը։ Նախ՝ քաղդէարէն կը կոչուի Ասորեստանի և Բաբելոնի կողմերը խօսուած հին լեզուն, որ և արևելեան արամերէն կը կոչուի. իսկ ասորերէն կը կոչուի հին Ասորւոց երկրին և Միջագետաց լեզուն, որ կը կոչուի հիւսիսային արամերէն։ Երկրորդ՝ քաղդէարէն կը կոչուի ասորերէնով և եբրայեցերէնով խառն այն գաւառական լեզուն, որ էր Հրէից կամ Պաղեստինու յատուկ յետ գերութեան, և որով գրուած են Եզրասայ և Դանիէլի գրոց մէկ մասը, և ուրիշ Հրէական գրեան, այսինքն Միշնա, Թարկում և Թալմուտ կոչուած գիրքերը. և այս պատճառաւ այս քաղդէարէնը կը կոչուի Գրոց քաղդէարէն կամ Թարկումեան և Թալմուտեան քաղդէարէն, (chaldéen biblique, targumique, talmudique, syro-chaldaïque), և ասորերէն կը կոչուի վերջին կամ նոր ասորերէնը, որ յետ քրիստոնէութեան ծաղկեցաւ և կը կոչուի քրիստոնէական արամերէն (aramaïsme chrétien, syriaque)։

8. Արդ կը հարցունենք. Նինուէի դիւանին քաղդէական մատեանը ո՞ր քաղդէարէնով գրուած էր. հի՞ն քաղդէարէնով, այսինքն արևելեա՞ն արամերէնով կամ հին Ասորեստանեայց և Բաբելացւոց քաղդէարէնո՞վ՝ թէ Հրէից քաղդէարէնով։ Հին քաղդէարէնով գրուած չկարէ ենթադրուիլ, քանզի այն լեզուն այբուբենական գիր կամ դպրութիւն չունէր, և այն ժամանակէն մնացած այբուբենական գրով գրուած ամենևին չկայ։ Եթէ երբէք այն լեզուաւ գրուած է՝ բևեռագիր կոչուած նշանագիրներով գրուած է, և թերևս բևեռագիր արձանագրութեանց միոյ տեսակին լեզուն այն հին քաղդէարէնն է։

9. Արդարև կարծուած է, թէ հին Քաղդէացիք գիր և մատենագրութիւն ունէին, և թէ այն հին քաղդէական մատենագրութենէ բազում ինչ թարգմանուած էր ի հնումն ի յոյն լեզու։ Այսպէս Եւսեբեայ վկայութեամբ, ըստ Աղեքսանդրի Բազմավիպի, (որ էր յոյն մատենագիր յառաջնում դարու նախ քան զՔր.) Բերոսոս անուն քաղդէացի մատենագիր մը Աղեքսանդրի ժամանակ, «Ի տիս Աղեքսանդրի Փիլիպպեայ, κατ' Ἀλέξανδρον τοῦ Φιλίππου τὴν ἡλικίαν», հին

քաղդէարէնէն թարգմանեց այլեւայլ գրեան, որ «ի Բաբելոնի բազում զգուշութեամբ պահէին յերկերիւր և ի հնգետասան բիւրոց ամաց, յորս (էր) գիր պատմութեանց զերկնից և զերկրէ և զծովէ և զնախակերտն արարչութենէ, և զթագաւորաց և զնոցուն իրաց և զգործոց, և զջրհեղեղէն»։ (Առ Եւսեբ. Քրոն. Ա. հտ.)։

Նաև Յովսեպոս հրեայ պատմիչն զԲերոսոսայ ասէ, թէ ի հին (քաղդէական) մատենից առնլով գրեց մեր (Հրէից) ազգին վրայ հանգոյն Մովսէսի. «Ծառեցից այժմիկ զառ ի Քաղդէացւոց մի ըստ միոջէ գրեալսն և զպատմեալս, յորս կայ բազում միաբանութիւն և առ այլ ևս մեր գիրս։ Եւ վկայ այսոցիկ Բերոսոս է, այր քաղդէացի յազգէ և երևելի յամենեսին՝ որ զխրատու և զիմաստութեամբ գայլն. քանզի և զաստեղագիտութեանն մատեանս և որ ինչ ի Քաղդէից ճարտարութիւն իմաստութեան պատմէր՝ նա եհան ի Յունաց լեզու։ Նոյն իսկ Բերոսոսն մտադիւր զհետ երթեալ առաջնոցն մատենից (Քաղդէացւոց)՝ վասն ջրհեղեղին և բնաջինջ մարդկան ապականութեանն լինելոյ՝ զնոյն ձև ըստ Մովսիսի պատմութեանն վիպագրեաց. և վասն արկղակերտ տապանին որով Նովքոս (Նոյ) նախնին մերոյ ազգիս (Հրէից) ապրեցաւ, և երթեալ դադարէ ի գլուխս լերանց Հայաստան աշխարհին, և ապա մի ըստ միոջէ ի Նովքայ համարեալ և զնոցին ժամանակսն յաւելեալ՝ ի Նաբուպաղասարոս, ի Բաբելոնի և Քաղդէացւոց թագաւորն եկեալ հասանէ» (Առ Եւսեբ. Քր. Ա. հտ.)։

10. Բայց արդի քննադատութիւնը չկրնար պատմական յարգ ընծայել յանուն Բերոսոսի տրուած հատակոտորներու, և ոչ զնոյն ինքն Բերոսոս ճանաչել իբրև արդարև պատմական անձ և քաղդէացի։ Արդարև զարմանք է, որ արիական անուն կրող քաղդէացի մը, առ մեծաւ Աղեքսանդրիւ, ի քաղդէարէնէ յունարէն մատեաններ կը թարգմանէ, և այս մատեաններ կը մնան անծանօթ աշխարհի, նա մանաւանդ կը կորսուին, և ապա յանկարծ, յառաջնում դարէ անտի քրիստոնէութեան՝ կը ծանօթանան ոչ իբրև ամբողջ, այլ իբրև հատակոտորք, հեթանոսական առասպելախառն գունով, եկեղեցական նպատակաւ գրող հեղինակաց ոմանց, որպիսի են Յովսեպոս և Եւսեբիոս, իբրև հզօր ապացոյցք հաստատելու հին հրէական աւանդութիւններ։ Ապա, որպէս ասէ Րընան, հմուտն հին արևելեան մատենագրութեան, մանաւանդ սեմականին «առողջ քննադատութիւն չկրնար իբրև վաւերական ընդունել՝ ինչ որ յոյն, գլխաւորապէս եկեղեցական պատմութիւնը կ՚ընծայեցունէ մեզ յանուն Բերոսոսի, Աբիւդենայ, Մանեթոնի, Սանքոնիաթոնի իբրև մնացորդս հին արևելեան կորուսեալ մատենագրութեան»։

11. Զարդիս արաբերէն մատեան մը գտնուեցաւ «Նաբատեան երկրագործութիւն» անուամբ։ Ըստ բանից այսր մատենի՝ Նաբատացի կոչուած շատ հին ազգ մը յարևելս՝ որպէս թէ ծաղկեալ մատենագրութիւն ունէր զմշակութենէ, զբժշկականութենէ, զբուսաբանութենէ, զընագիտութենէ, զաստեղագիտութենէ և զայլ գիտութեանց, և թէ այս մատեան Նաբատացւոց մատենագրութենէն մնացորդ էր։ Ոմանք յեւրոպացի գիտնոց կարծեցին, թէ Նաբատացիք հին Քաղդէացիք էին, ուստի և այն մատեանն էր հին քաղդէական դպրութեան մնացորդ, արաբերէն թարգմանեալ, և աստի կամեցան հետեւցնել, թէ առ հին Քաղդէացիս կամ Բաբելացիս և առ Ասորեստանեայս գոյր դպրութիւն և մատենագրութիւն։ Բայց յետոյ ճիշտ քննութեամբ տեսնուեցաւ, թէ Նաբատեան երկրագործութիւն անուանեալ գիրքն էր արաբացւոյ մը գործ առասպելախառն, որոյ մատենագրութեան թուականը չէ հին քան զԺ. դար յետ Քր., և թէ Նաբատացիք ոչ այլ ինչ էին՝ եթէ ոչ հին հեթանոս արաբացի ցեղ ի կողմանս Բաբելոնի կամ Պաղտատու։ (Մասբէրոյ, Հնախօս. արևել. ազգ. էջ 193)։

12. Նոյնպէս կը հարցունենք ասորերէնին համար. Մար Իբաս ո՞ր ասորերէնով թարգմանեց քաղդէական մատենէն Հայոց վերաբերեալ մասը և բերաւ առ Վաղարշակ. հին ասորերէնով, այսինքն հիւսիսային արամերէն կոչուած լեզուա՞ւ, թէ նոր կամ Syriaque կոչուած ասորերէնով։ Հին ասորերէնով չէր կարող, քանզի նաև այս լեզուաւ հին գրուած ամենևին չկայ. Հնագոյն արձանագրութիւնք որ գտնուած են Ասորւոց երկրին այլ և այլ կողմերը, գլխաւորապէս ի Բալմիրա՝ չեն հին քան զերկրորդ դար քրիստոնէութեան, և լեզուն նոր ասորերէն է կամ շատ մօտ նմին։ Իսկ եթէ Մար Իբասայ թարգմանութեան ասորերէնը նոր ասորերէն (Syriaque) էր՝ կը հետևի թէ Մար Իբաս յետոյ էր քան զԲ. դար քրիստոնէութեան։ Զարամէական լեզուաց և զդպրութենէ նոցա ընդարձակ խօսուած է ի Պատմութեան Սեմական լեզուաց Ռընանի։

13. Արդ՝ որովհետև յառաջ քան զքրիստոնէական թուականն բաց ի Հրէից քաղդէարէնէն ընիկ քաղդէարէն, և յետ քրիստոնէութեան նոր ասորերէնէն ուրիշ ասորերէն դպրութիւն կամ գրել չկար, ի՞նչպէս կրնար այնչափ հարիւրաւոր ամօք յառաջ քան զայն թուական քաղդէարէն լեզուաւ գրուած մատեան գրոնուիլ ի Նինուէ, և ի՞նչպէս Մար Իբաս, 150 ամօք յառաջ քան զքրիստոնէական թուականն, այն է իբր երեքհարիւր ամօք յառաջ քան զսկիզբն ասորական (syriaque) դպրութեան՝ կրցաւ ասորերէն

թարգմանել Հայոց պատմութիւնը, զոր գտաւ քաղդէարէնէ յունարէն թարգմանեալ մատենին մէջ։

Մարիբասեան պատմութիւնն ստեղծողը, որ անտարակոյս յետոյ է քան զերկրորդ դար քրիստոնէական թուականին, զոր օրինակ, չլինելով տեղեակ հին պատմութեան՝ կը կարծէր, թէ Վաղարշակայ ժամանակ Նինուէ կար. նոյնպէս չլինելով տեղեակ սեմական լեզուաց դպրութեան պատմութեան՝ կը կարծէր, թէ նոյն Վաղարշակայ ժամանակ և բազմօք իսկ յառաջ քան զնա կար քաղդէարէն և ասորերէն դպրութիւն, այսինքն թէ այն լեզուներով մատեաններ կը գրուէին. ուստի և նախ քաղդէարէն գրուած մատեան կը գնէ ի Նինուէ, կանգուն համարելով այս քաղաքը, և ապա այն քաղդէարէն գրուած մատենին յունարէն թարգմանութենէն Մար Իբասայ Հայոց պատմութեան ասորերէն թարգմանութիւն մը բերել կու տայ առ Վաղարշակ։ Այս այնպէս է՝ որպէս թէ ոք չգիտելով զպատմութիւն հայերէն դպրութեան և զժամանակ գիւտի հայերէն նշանագրաց՝ դարերով յառաջ քան զՍահակ և զՄեսրոպ ենթադրէր հայերէն գրուած մատեաններ կամ դիւաններ։

14. Մեր այս դիտողութիւնն զծագմանէ Մարիբասեան պատմութեան բաւական է ցուցանել, թէ այն պատմութիւնը Նինուէի դիւանէն հանուած գնել՝ հին ժամանակին, և առանձինն Քաղդէացւոց և Նինուէի պատմութեան անտեղեակ ուրուք կեղծիք է, զոր բոլորովին կը հերքեն մեր այժմու ստոյգ տեղեկութիւնք զհանգամանաց ազգին և քաղաքին այնորիկ։ Եկեսցուք այժմ յայլ իմն դիտողութիւն, որ նոյնչափ և ևս աւելի յայտնի կը ցուցնէ, թէ Մարիբասեան պատմութիւնն յետին ժամանակի, ուստի և անհարազատ գործ է, ոչ թէ ստոյգ պատմութիւն հին քաղդէական ազգին միջոցաւ պահեալ և հասեալ մինչև առ մեզ։ Դիտողութիւնն զորմէ բանքս են՝ է զազգաբանութենէն Հայկայ, զոր, որպէս տեսաք ի վեր անդր ի բուն պատմութեան (էջ 95)՝ որպէս թէ Մար Իբաս գտաւ ի քաղդէական մատենի անդ դիւանին Նինուէի, ի Հայկայ դէպ ի վեր մինչև Յաբեթ, և դէպ ի վայր մինչև զԱրայ գեղեցիկ, և զորոյ վերջին մասն, այն է ի Հայկայ մինչև զԱրայ՝ Խորենացին կը ջանայ հաստատել նաև Աբիւդենոսի վկայութեամբ։

Ի քաղդէական մատենին, յորմէ Մար Իբաս, ըստ Խորենացւոյն, հանեց Հայոց հին պատմութիւնը՝ որպէս թէ յիշուած էին Զրուան, Տիտան և Յապետոսթէ, իբրև երեք առաջին նահապետք յորոց սերեցաւ ազգ մարդկան։ Յետ այս երից յիշուած էին անդ, ասէ Խորենացին, նաև սերունդք նոցա, և Մար Իբաս զմին միայն ի սերնդոց Յապետոսթեայ, այսինքն զնախահարս Հայկայ մի-

այն առաւ սա անուններով—Յապետոսթէ, Մերոգ, Սիրաթ, Թակլադ, Հայկ։ Յայտնի է թէ այս ազգաբանութիւնը Ծննդոց է, քանզի Զրուան, Տիտան և Յապետոսթէ՝ Ծննդոց Սեմ, Քամ, Յաբեթն են։ Յետ Յապետոսթեայ յիշուած անուանք՝ Մերոգ, Սիրաթ, Թակլադ՝ նոյնպէս Ծննդոց Գամեր, Թիրաս և Թորգոմն են։ Սակայն յազգաբանութեան աստ երկու ինչ կայ դիտողութեան արժանի, որ ազգաբանութեան անհարազատութիւնը կը մատնէ։ Նախ՝ Ասորեստանցիք յայնպիսում հին ժամանակի, որպիսի կ'ենթադրէ Մար Իբաս՝ չէին կարող գիտել Զրուան անունը որ զրադաշտական է, ուստի և համեմատութեամբ նոր, և ոչ իսկ Տիտան անունը որ նոյնպէս համեմատութեամբ նոր և յունական է։ Երկրորդ՝ Մերոգն ու Սիրաթը Հրէից Գամեր և Թիրասն են տառերու փոփոխութեամբ։ Կ'երևի թէ Մար Իբաս, կամ այս անունն առնող անձը ով որ էր՝ չէ հին քան զերկրորդ դար յետ Քրիստոսի՝ կարծենելու համար, թէ վերոյիշեալ ազգաբանութիւնը Մովսիսական չէր, այլ բոլորովին տարբեր, այն է քաղդէական աղբերէ՝ փոխանակ Սեմայ և Քամայ ընտրած է հեթանոսական անունները Զրուան և Տիտան, իսկ զԳամեր և Թիրաս տառերու շրջմամբ փոխած է ի Մերոգ և ի Սիրաթ։ Յետ այս երից անուանց, որ են Գամեր, Թիրաս, Թորգոմ, զորս Ծննդոց ազգաբանութիւնը կը յիշէ իբրև սերունդ Յաբեթի՝ քաղդէական մատեանն, ըստ Խորենացւոյն, որպէս թէ կը յաւելոյր. Հայկ, Արմենակ, այլովքն հանդերձ մինչև ցԱրայ։

15. Խորենացին անուանեալ քաղդէական ազգաբանութեան այս վերջին մասն, այն է ի Հայկայ մինչև ցԱրայ գեղեցիկ՝ կամի հաստատել Աբիւդենոսի վկայութեամբ, որպէս թէ Աբիւդենոս ևս կը յիշէր Հայկայ սերունդն այսպէս. «Արայն գեղեցիկ՝ Արամեայ, Հարմեայ, Գեղամեայ, Ամասեայ, Արամայիսայ, Արմենակայ, (Հայկայ), որ եղև կենախուզ Բելայ»։ Խորենացին բերելով այս ազգաբանութիւնն իբրև յԱբիւդենոսէ՝ կը յաւելու. «Զայս մեզ Աբիւդենոս յիւրում առաջնում արձանականի ի մանր ազգաբանութեան ասէ, զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին». այսինքն Աբիւդենոս կը պատմէ մեզ զայս իւր առաջին արձանականին ի մանր ազգաբանութեան, բայց զայս (Արմենակէն մինչև Արայ յիշուած կտորը) յետոյ ոմանք բարձին։ Եթէ չենք սխալիր՝ Խորենացին կամի ասել, թէ Աբիւդենոս ի պատմութեան իւրում յիշած էր Հայկայ սերունդը մինչև ցԱրայ. բայց յետոյ այս մասն ի պատմութենէ նորա դուրս ձգուեցաւ։ Կը հարցունենք սակայն. Աբիւդենոսի պատմութենէն այն մասն ինչպէս կընար դուրս ձգուիլ և ընդէր։

Դիցուք թէ Հայոց թշնամի՛ մը կամեցաւ այն մասն Աբիւդենոսի պատմութենէն հանել. ի միջէ ձեռագիր օրինակէ միայն կարէր հանել զայն, այսինքն այն օրինակէն, զոր ինք գրեց կամ գրել տուաւ. միթէ կրնա՞ր Աբիւդենոսի բոլոր ձեռագիր օրինակներէն հանել—ամենեւին. ապա թէ ոչ հարկ էր նմա Աբիւդենոսի պատմութեան բոլոր ձեռագիր օրինակներն որ աշխարհիս վրայ կը գտնուէին՝ ժողվել և ջնջել, և իւր ձեռագիր օրինակը միայն տարածել։ Եւ Խորենացին ինչպէս կրցաւ գիտնալ, թէ այն մասն Աբիւդենոսի պատմութենէն հանուած էր։ Դիցուք թէ Խորենացին ի միում ի հին ձեռագիր օրինակաց Աբիւդենոսի գտաւ այն ազգաբանութիւնը, և յայլում ձեռագիր օրինակի չգտաւ. որովհետև Խորենացին Աբիւդենոսի պատմութեան աշխարհիս վրայ գտնուած բոլոր ձեռագիր օրինակները չէր կարող ունենալ՝ անտեղի է ասել նորա, թէ Աբիւդենոս այն ազգաբանութիւնը գրեց, և այլք յետոյ բարձին զայն։

Խորենացին անուանեալ քաղդէական ազգաբանութեան հաստատութիւն տալու համար կամի վկայ կոչել երևելի հին պատմիչ մը, ինչպէս կարծուէր ան ատեն, թէ էր Աբիւդենոս, և կը դիմէ նորա վկայութեան։ Բայց որովհետև ի պատմութեան Աբիւդենոսի ոչ ոք պիտի գտնէր այն ազգաբանութիւնը՝ կը կանխէ ասել թէ յետոյ զայն ոմանք բարձին։ Աւելի դիւրին պիտի ըլլար հաւատք ընծայել Խորենացւոյն՝ եթէ ասէր. ես այն ազգաբանութիւնը գտայ ի միում ի հնագոյն օրինակաց Աբիւդենոսի, թէպէտ տեսայ ուրիշ նորագոյն օրինակ մը, ուր այն մասը թողուած կամ հանուած էր։

16. Զայս ասացաք ենթադրելով թէ Խորենացին Աբիւդենոսի պատմութեան բնագիրն ունէր։ Բայց գիտենք թէ Խորենացին զԱբիւդենոս գիտէր յԵւսեբեայ միայն, որ ի Քրոնիկոնին իւրում ինչպէս այլևայլ հեղինակներէ՝ նոյնպէս Աբիւդենոս անուն հին պատմագրէ մը կը բերէ Ծննդոց գրոց պատմութեան համաձայն հատուածներ զնախաջրհեղեղեան նահապետաց, զՆոյէ, զջրհեղեղէն, զաշտարակաշինութենէ և զխառնակութենէ լեզուաց։ Եւսեբեայ Քրոնիկոնն յառաջ քան զԽորենացին թարգմանուած էր հայերէն, և Խորենացին Եւսեբեայ այս հայերէն թարգմանութեան մէջ կարդացած էր Աբիւդենոսէ բերուած հատուածները։ Թէ Խորենացին զԱբիւդենոս Եւսեբեայ հայերէն թարգմանութենէն միայն գիտէր՝ անտի յայտ է, զի ուրիշ հատուած մը զոր ի պատմութեան իւրում (Գիրք Բ. գլ. Ը.) կը յիշէ՝ բառ առ բառ առած է Եւսեբեայ Քրոնիկոնին հայերէն թարգմանութենէն, հանդերձ սխալով թարգմանչին։ Եւսեբիոս, յետ յիշելոյ ինչ ինչ յԱբիւդենոսէ զՆաբուգոդո-

նոսորայ՝ Մեգասթենէս անուն պատմագրէ մը եւ նոյն Նաբուգոդոնոսորայ վերաբերեալ հատուած մը կը բերէ այսպէս. «Մեգասթենէս ասէ. Նաբուկոդրոսորոս որ ուժգնագոյն էր քան զՀերակլէս՝ ի Լիբէացւոց և յԻբերացւոց աշխարհն զօրաժողով լեալ հասանէր, և վանեալ վկանդեալ ընդ ձեռամբ նուաճէր, և զմասն մի ի նոցանէն յաջակողմն Պոնտոս ծովու տարեալ բնակեցուցանէր» և այլն։ Թարգմանիչը Մեգասթենէս բառը, որ մեծազօր կը նշանակէ՝ երբ ածական առած է, և կը թարգմանէ այսպէս. «Մեծազօրն, ասէ, Նաբուկոդրոսորոս», և այլն։ Այսպէս, *ասէ* բառն՝ առաջ յիշած Աբիւդենոսի կ'երթայ, ոչ թէ Մեգասթենէսի, ուստի և Աբիւդենոսի կը կարծուի հատուածը որ չէ, Այսպէս առած է նաև Խորենացին։ Ահա Խորենացւոյն հատուածը. «Աբիւդենոս պատմէ այսպէս ասելով. Մեծազօրն Նաբուգոդոնոսոր բռնագոյն էր քան զՀերակլէս Լիբէացւոց. զօրաժողով լեալ հասանէր ի Վերիացւոց աշխարհն, և վանեալ խորտակեալ ընդ ձեռամբ նուաճէր, և զմասն մի ի նոցանէ յաջակողմն Պոնտոս ծովուն տարեալ բնակեցուցանէր»։ Ապա յայտնի եղաւ, թէ Խորենացին Եւսեբիոսի միջոցաւ միայն գիտէր զԱբիւդենոս, ոչ թէ բուն Աբիւդենոսի գիրք մը ունէր։ Եթէ Աբիւդենոս գիրք ունենար՝ այնպիսի հատուած մը պիտի չգտնէր հոն, քանզի ինչպէս տեսանք՝ այն հատուածը Մեգասթենէսի է, ոչ թէ Աբիւդենոսի։

17. Այս դիտողութենէն տեսնուեցաւ, որ Հայկայ ազգաբանութիւնն դէպ ի վեր մինչև Յապետոսթէ (Յաբեթ) յետին ժամանակի քրիստոնէի ուրուք տկար կեղծիք է ծննդոց ազգաբանութեան վրայ հիմնուած, ոչ թէ քաղդէական. նոյնչափ և աւելի տկար կեղծիք է ազգաբանութեան երկրորդ մասն, որ է ի Հայկայ մինչև Արայ։ Հիմա գանք Մարիբասեան պատմութեան այն կէտին, որ Հայ ազգը քան զքրիստոնէական թուականն երբ 2,200 տարի առաջ, Հայկայ 300 հոգիէ բաղկացեալ ընտանիքէն սերեալ, և զՀայկ ի Բաբելոն երբև զմին ի հսկայից անտի աշտարակաշինութեան կը դնէ։

Հեղինակ Մարիբասեան պատմութեան, որպէս Նինուէի և սեմական լեզուաց դպրութեան՝ նոյնպէս մարդկային ազգին ծագման, հնութեան, բաժանման և լեզուաց պատմութեան անտեղեակ կը թուի։ Ծննդոց պատմութիւնը միայն գիտնալով և զայն միայն դնելով ինքեան հիմն՝ կը կարծէ թէ սկիզբն ազգաց, հնագունից անգամ, ոչ անցանէ անդր քան զաշտարակաշինութիւնն, այսինքն՝ քան զամն 2,245 նախ քան զՔր.։ Նոյնպէս չգիտնալով, թէ ազգերը լեզուաւ և տեղեաւ ուրոյն և տարբեր բուներու ճիւղեր են, որոց սկիզբը նախապատմական է՝ կը կարծէ թէ հնտեւրոպական բունին

վերաբերեալ ճիւղ մը, որպիսի են Հայք՝ իւր գետնէն դուրս և իւր բունէն զատուած, իբր թէ ինքնօրէն առաջ եկած էր Բաբելոն, բոլորովին օտար և տարբեր բունոյ մը հողին վրայ։ Նոյնպէս ենթադրելով, թէ բոլոր մարդկային ազգը կը գտնուէր Բաբելոնի երկիրը Սենաար, երկնաբերձ աշտարակ մը շինելու զբաղեալ՝ կը կարծէ թէ այն ժամանակ, այսինքն իբր 2,240 տարի յառաջ քան զՔր.՝ Հայաստանի կողմերը և անտի անդր բոլոր երկիրը դէպ ի հիւսիս ամայի և անբնակ էր, այնպէս որ իբր 300 հոգիէ բաղկացեալ ընտանիք մը, որպիսի ասէ թէ էր ընտանիքն Հայկայ՝ կրցաւ բռնել բոլոր այն երկիրը, և հետզհետէ բազմանալով լնուլ զայն դէպ ի հիւսիս։ Այս պատմութիւնը կամ մանաւանդ ենթադրութիւնն՝ անցեալ դարերու մէջ կրցաւ իբրև ճշմարիտ կամ գէթ իբր հաւանական ընդունուիլ. բայց զարդիս, մանաւանդ ի վերջին 20 կամ 25 ամաց հետէ՝ դրական գիտութիւնք զծագմանէ, զհնութենէ և զբաժանմանց մարդկային ազգին այնպիսի և այնչափ լոյս տուած են, որ այս խնդրոց վրայ հին վարդապետութեանց կամ կարծեաց շատերը եթէ ոչ բոլորովին ջրուած՝ գէթ մեծապէս փոխուած կամ չափաւորուած են։ Մարդկային ազգին վերաբերեալ ուրիշ խնդիրներ թողլով՝ որ հոս ուղղակի չեն պատկանիր մեզ՝ առնունք միայն ինչ որ երկրաբանութիւնը, պատմութիւնը և լեզուաբանութիւնը յայտնած են զհնութենէ և զբաժանմանց մարդկային ազգին։ Ոչինչ այնպէս յայտնի և որոշ կը ցուցանէ մարդկային ազգին հնութիւնն՝ ինչպէս երկրաբանութիւնը։ Այս գիտութեան դոյզն ինչ տեղեկութիւն ունեցողք գիտեն, թէ երկրիս կեղեւը կը բաղկանայ այլեւայլ խաւերէ, որ հետզհետէ կազմուած են հազարաւոր դարերով, և թէ այս խաւերէն շատերը, մանաւանդ վերջինները, կը պարունակեն այլեւայլ տեսակ գործարանաւոր մարմնոց, այսինքն տնկոց և շնչաւորաց քարացեալներ։ Այս կը ցուցնէ, թէ այս գործարանաւոր էակներն, որ այս ինչ խաւին վրայ կ՚ապրէին ժամանակաւ, երբ երկրաբանական յեղափոխութեամբ մը այն խաւին վրայ ուրիշ խաւ մը եկաւ՝ այս նոր խաւին տակ մնալով քարացան։ Իւրաքանչիւր խաւ ոչ միայն անգործարան նիւթոց, այլ և ի նմա գտնուած գործարանաւոր մարմնոց կազմութեան և բաղադրութեան կողմանէ տարբեր է ի հնագունից քան զնա։ Խաւ մը որչափ աւելի մօտ է երկրիս երեսին՝ այնչափ աւելի բազմազգի և աւելի զարգացեալ են գործարանաւոր մարմինք որ ի նմա։ Երկրաբանք ընդհանրապէս կը հաստատեն նաև, թէ իւրաքանչիւր խաւի թէ անգործարան նիւթը և թէ ի նմա գտնուած գործարանաւոր մարմինք՝ բնականապէս փոխուած են ի միջոցի հազարաւոր դարուց

այլեւայլ երկրաբանական յեղափոխութեամբք, որ երկրիս այն ատեններուն երեսին վրայ գործուեցան բնական օրինաց ազդեցութեամբ։ Երկրիս այժմու մակերեւոյթը կամ վերջին խաւը կազմուած է յետ վերջին երկրաբանական յեղափոխութեան, նոյնպէս Հարիւրաւոր, թերեւս Հազարաւոր դարեր առաջ։ Որովհետեւ երկրիս ոչ միայն վերջին, այլ եւ քան զնա շատ հին խաւերէն ոմանց մէջ անգամ, շնչաւորաց ի վաղուց ջնջուած տեսակաց, ինչպէս մամմութի, մաստոթոնի եւ այլոց մնացորդներուն հետ կը գտնուին նաեւ մարդու մնացորդներ, զորօրինակ մարդու ոսկրոտի եւ մարդու ձեռօք կամ արուեստիւ շինուած քարեղէն, ոսկրեղէն եւ մետաղեայ գործիք, զէնք եւ զարդք, եւ որովհետեւ այն խաւերն յորս այս մնացորդք կը գտնուին, Հազարաւոր դարերով հին են քան մարդուս ստեղծման տրուած սովորական թուականն՝ — ապա կը հետեւի թէ մարդ կոչուած տեսակ կայ երկրիս վրայ ոչ թէ 6 կամ 7 Հազար տարիներէ հետէ, այլ թերեւս նոյնչափ Հազար եւ տասնապատիկ եւս աւելի դարերէ հետէ։ Եւրոպայի այլեւայլ կողմերն, ինչպէս Գաղղիա, Բեղգիա, Սկանտինաւեան երկիրները գըտնուած մարդկային անթիւ մնացորդներէն, որ այս վերջին 20 կամ 25 տարիներու մէջ մեծ խնամով երեւելի գիտնոց ձեռօք ժողովուած եւ Եւրոպայի թանգարաններուն մէջ պահուած են՝ կը տեսնուի թէ Եւրոպայի կողմերն անգամ, յառաջ քան զվերջին երկրաբանական յեղափոխութիւնն, կամ ըստ երկրաբանից չորրորդական եւ երրորդական կոչուած ժամանակներ՝ մարդ արարածը կը գտնուէր, թէպէտ այն մարդիկ, ինչպէս յոսկերաց, մանաւանդ ի ձեւոյ գանկաց, նաեւ ի գործեաց եւ ի սովորութեանց նոցա կը տեսնուի՝ Ափրիկէի եւ Աւստրալիոյ այժմու վայրենի մարդոց շատ նման էին։ Տարակոյս չկայ թէ, ասեն գիտունք, երկրիս ուրիշ մասերն եւս — Ասիա, Ափրիկէ, Ամերիկա եւ Աւստրալիա, այսպիսի հին բնակիչներ ունեցած են յայնմ նախաւոր ժամանակին՝ եթէ այն կողմերն յիշեալ ժամանակներ ցամաք եւ բնակելի էին։ Մեկնիչք եւ աստուածաբանք այլեւայլ մեկնութիւններ տալով այս մնացորդներուն՝ մարդկային ազգին հնութիւնը քան զջրհեղեղն անդր չեն անցուներ, բայց եւ այնպէս մարդկային ազգին ամբաւ հնութիւնն արդի գիտութեան երեւելի գիւտերուն կարգն է։ Այս նիւթին վրա աւելի ընդարձակ տեղեկութիւն կրնայ առնուիլ մեր ժամանակին երեւելի բնագիտաց գրուածներէն, յորոց միջի իբրեւ պարզ եւ դիւրիմաց յիշատակութեան արժանի են գրուածք Պիւհների։ Բայց թողունք երկրիս ներքին խաւերը. նոյն իսկ երկրիս այժմու երեսին վրայ մարդկային ազգն ունի ամբաւ հնութեան երեւելի նշաններ։

Երկրիս այժմու երեսին վրայ ցրուած մարդկային ազգին ամբաւ հնութիւնը ցուցնող շօշափելի փաստերէն մին լեզուներն են։ Գիտունք Ասիոյ և Եւրոպայի ծանօթ լեզուներն միայն քննելով՝ յայտնեցին զարմանալի իրեր, որ նոր լոյս ծագեցին մարդկային ազգին նախաւոր պատմութեան վրայ։ Հիմա ապացուցուած է, թէ լեզուն ևս, ուրիշ բնական իրաց պէս, հարիւրաւոր դարերով յառաջ վարած է զիւր բնական ընթացս։ Բնական իրաց ձայներու նմանութենէն առնլով իւր ծնունդը՝ լեզուն հասած է այն այլևայլ հասակներուն, զորս լեզուաբանութիւնը կը գտնէ յայլևայլ տեսակ լեզուս, առանց քերականութեան չինարէնէն մինչև կատարեալ քերականութեամբ յղկեալ հնդեւրոպական լեզուներ։ Բայց լեզուաց քննութիւնը ոչ միայն զկենսաբանութիւն նոցա, այսինքն զեղանակ ծագման և զարգացման նոցա կը ցուցնէ մեզ, այլև մարդկային ազգին աշխարհագրական և ցեղային բաժանման վրայ կը յայտնէ կարևոր իրեր, այսինքն թէ մարդկային ազգը կը բաժնուի այլևայլ ընտանիք կամ բուն, և թէ իւրաքանչիւր բուն իւր ճիւղերովն ունի իւր յատուկ գետինը երկրիս վրայ, այնպէս որ լեզուի մը լեզուաց ո՛ր բունին վերաբերելը գիտնալով՝ կրնանք առանց վարանելու ասել, թէ այն լեզուն խօսող ժողովուրդը մարդկային ո՛ր բունին կը վերաբերի և աշխարհագրապէս երկրիս ո՛ր կողմը կը բնակէր։

Երկրիս այժմու երեսին վրայ բնակող մարդկային ազգին հնութիւնը և ցեղային և աշխարհագրական բաժանումները կը հաստատուին ոչ միայն լեզուաբանութենէ, այլև պատմութենէ։ Ամէն ազգի աւանդութիւնք, նոյն իսկ եբրայական, կը վկայեն, թէ մարդկային վայրենի կամ ստորին ցեղեր անծանօթ ժամանակներէ հետէ բռնած էին երկրիս բոլոր երեսը։ Հին և նոր ժամանակներ երկրիս ո՛ր մասը որ քաղաքակիրթ ազգեր գացին՝ գտան միշտ վայրենի ցեղեր, զորս ջնջեցին և որ ի վէպս այն հին քաղաքակիրթ ազգաց կը յիշուին իբրև հսկայք երկրածինք, այլևայլ անուամբք, որպէս՝ Ենակիմ, Զամզումիմ, Տիտանք, այլովքն հանդերձ, երբեմն նաև իբրև ճիւաղներ։ Երկրագունտիս այն կողմերն, ուր մինչև վերջին քանի մը հարիւր տարիներ քաղաքակիրթ ազգեր գացած չէին, ինչպէս հարաւային և միջին Ափրիկէ, Ամերիկա, Աւստրալիա, Ովկիանեան կղզիներ՝ գտնուեցան նոյնպէս և կան տակաւին այն նախկին մարդկութենէն մնացորդներ, որ թէպէտ տարբեր տարբեր յատկութիւններ ունին, զորօրինակ, քաղցրաբարոյութիւն՝ Անդիլեանք, գազանութիւն՝ Ասամի և Պոռնէոյի բնակիչք, յետին վաւաշոտութիւն՝ Գաֆգցիք՝ սա կողմանէ ամենեքին միօրինակ են,

զի առանց արտաքին օգնութեան չեն կարող զարգանալ և լինել յառաջադէմ ի քաղաքակրթութեան և յուսմունս։ Այս վայրենի ցեղք զիւրեանց անցելոյն բնաւ յիշատակ չունին, և ոչ վասն ապագային իւրեանց յոյս, այլ իւրեանց ներկայ նիւթական կեանքը միայն ողորմելի կերպով գիտեն հոգալ։ Այս ցեղերուն սկիզբն այնպէս հին է, որ զնոցանէ տեղեկութիւն ոչ այնչափ պատմութենէ, որչափ երկրաբանութենէ պարտինք սպասել։ Ընդհանրապէս այս ստորին ցեղերն առ սակաւ սակաւ անհետ եղած են, ուր որ միանգամ մուտ գտած են քաղաքակիրթ ազգեր կամ գաղթականք նոցա, ինչպէս անհետ լինին վայրենի տունկք՝ ուր ընտանի տունկեր կ՚սկսին մշակուիլ։

Բայց մարդկային ազգը, երկրիս այժմու երեսին վրայ, վայրենի կամ ստորին ցեղերէ միայն չի բաղկանար. եղած են նաև անծանօթ ժամանակներէ հետէ քաղաքակիրթ կամ ազնիւ ցեղեր։ Այս ցեղերուն ևս սկիզբը նախապատմական է, և միոյ մասին նոցա, այն է շատ հին ժամանակ քաղաքակրթելոց՝ քաղաքակրթութեան սկիզբն ևս անծանօթ է մեզ. այնպէս որ այն ազգերը, զորս մեք իբրև առաջին քաղաքակիրթ ազգեր գիտենք՝ ի սկզբան պատմական ժամանակին, այսինքն իբրև չորս կամ հինգ հազար տարի առաջ՝ արդէն բարձր աստիճանաւ արուեստներու, գիտութեանց, քաղաքային վարչութեան, մշակեալ լեզուի և գրչութեան անգամ հասած էին։ Այս հնագոյն քաղաքակիրթ ազգերն են—Չինացիք՝ յարևելեան Ասիա, Քամեանք՝ յարևմտեան Ասիա, ինչպէս Քանանացիք (Փիւնիկէ), և Քուշեանք՝ ի միջին Ասիա և հիւսիսային արևելեան Ափրիկէ, ինչպէս հին Բաբելացիք, Եթովպացիք և Եգիպտացիք։ Այս ազգերուն մէջ մեծագործութիւն (մեծամեծ հսկայաձև շէնքեր) և մեքենական արուեստք աւելի ծաղկած էին քան քաղաքագիտութիւն և զինուորութիւն, բայց վարչութեան մէջ այս ազգերը գրեթէ այնպէս յառաջադէմ էին ինչպէս Հռոմայեցիք և արդի եւրոպական ազգեր։ Իսկ գիր ունէին երեք ձևով ևս—մեհենական (Եգիպտացիք), գաղափարագրական (Բաբելացիք. բևեռագիրք), և ձայնական կամ այբուբենական (Փիւնիկեցիք)։ Այս ազգերն, այսու քաղաքակրթութեամբ իւրեանց, կային քան զքրիստոնէական թուականն երեք կամ չորս հազար տարի առաջ։ Քամեանց և Քուշեանց քաղաքակրթութիւնն անհետ եղած է առաջի քաղաքակրթութեան սեմական և մանաւանդ հնդեւրոպական կամ արիական ազգաց, որ յետոյ են քան զնոսա։ Ի Չինաստան միայն մնացած և մինչև առ մեզ հասած է քաղաքակրթութեան այն հնագոյն ձևն. իսկ Եգիպտացիներէն, Փիւնիկեցիներէն և Բաբե-

լացիներէն ունինք միայն. Հատակոտորներ զորս եւրոպական մեծամեծ ազգեր իբրև պատուական գանձ կը ժողվեն և կը պահեն։

Քաղաքակիրթ կամ ազնիւ ցեղերու միւս մասին, այն է Սեմականաց և Արիականաց սկիզբը նոյնպէս նախապատմական է։ Այս ցեղերուն հնագոյն աւանդութեանց նայելով՝ գիտունք կը կարծեն, թէ նախկին բնակութիւնը կամ բուն հայրենիք սոցա էր Իմաուս (Հնդկաստան), ուստի հաւանականապէս մեծի իրիք բնական յեղափոխութեան պատճառաւ գաղթելով եկած և բնակած են—Սեմականք՝ միջին Ասիոյ հարաւային արեւմտեան մասը (Միջագետք, Ասորիք, Արաբիա, Փոքր Ասիոյ հարաւային եզրը), իսկ Արիականք կամ Հնդեւրոպականք՝ ի հիւսիսոյ նոցա, ի Հնդկաց կամ Տիգրիսի արեւելեան հովտէն մինչև ի ծագս Եւրոպայ։ Երկրիս այս մասերն են սեպհական տեղիք կամ յատուկ գօտիներ, յորս յանծանօթ ժամանակաց հետէ մինչև ցայսօր կը բնակին այս երկու ցեղք։ Սեմականք և Արիականք, ի սկզբան ստորին քան զՔամեանս և զՔուշեանս (Փիւնիկեցիս, Բաբելացիս և Եգիպտացիս) մեծագործութեան, մեքենական արուեստից և վարչութեան կողմանէ, սակայն գեր ի վերոյ քան զնոսա, մանաւանդ Արիականք, զօրութեամբ և քաղաքագիտական և զինուորական հանճարով՝ յետոյ կը գերազանցեն զՔամեանս և զՔուշեանս նաև մեքենական արուեստից և վարչութեան կողմանէ մինչև ցայսօր։ Այս երկու ազնիւ ցեղերուն (Սեմականաց և Արիականաց) գլխաւոր յատկութեանց մին ևս է զազգ մարդկան ի միութիւն ածելու միտումը։ Սեմական ցեղն, իւր տեսական գաղափարին համեմատ՝ այս միութեան գործը ջանացած է կատարել կրօնիւք (միաստուածութեամբ), արիական ցեղն ընդհակառակն, իւր գործնական հանճարոյն հետեւելով՝ գործնական կերպով, այսինքն ի սկզբան՝ աշխարհակալութեան, և ապա՝ կրթութեան միջոցաւ։ Արդարև մասնաւոր դիտողութեան արժանի է, զի աշխարհիս մէջ երևելի կրօնք, որպէս հրէութիւն, քրիստոնէութիւն և մահմետականութիւն՝ Սեմականներէ են, ուր մեծամեծ աշխարհակալութիւնք գործուած են ընդհանրապէս ի ձեռն արիական կամ հնդեւրոպական ազգաց։

Լուսաւորութեամբ մանաւանդ քան աշխարհակալութեամբ ազգերը բարոյապէս միացնելու գործն այս վերջին դարերուն պահուած էր, և կը կատարուի հետզհետէ եւրոպական ազդեցութեամբ գրեթէ բոլոր աշխարհի վրայ, հնդեւրոպական (լատին և գերմանական կամ սաքսոն) ցեղերու միջոցաւ, ինչպէս որ իբր քսան կամ քսան և հինգ դար առաջ եղաւ ուրիշ հնդեւրոպական ցեղի մը (Յունաց) միջոցաւ։

Քաղաքակիրթ կամ ազնիւ ցեղերէն վերջիններուն, այն է Սեմականաց և Արիականաց գաղթականութեան վրայ գիտունք հետեւեալ տեղեկութիւնը կու տան, որ եթէ ոչ բոլորովին՝ գէթ մեծաւ մասամբ ուղիղ է։ Նախ՝ ըստ հնագոյն աւանդութեանց Սեմականաց (Ծննդոց գրոց)՝ այս ցեղը (Սեմականն) հիւսիսէն և հիւսիսային արևելքէն եկող արիական ցեղերէ մղուելով՝ իւր առաջին գաղթականութեան երկրէն, որ էր Ուր—գաստիմ (Արփաքսադ), այն է Կորդուաց երկիրը կամ Արմենիա՝ կ'սկսի գաղթել դէպ ի հարաւ (Ասորւոց երկիրը)։ Այս առաջին գաղթականութենէն, որում սեմական աւանդութիւնն Արամ կամ Արամէական անունը կու տայ՝ մաս մը, այն է Յոկտանեանք (Արաբացիք) բաժնուելով՝ կ'երթան դէպ ի հարաւային արևմտեան թերակղզին, յԱրաբիա։ Վերջին սեմական գաղթականութիւնն ըստ եբրայական պատմութեան, որ Թարայեան գաղթականութիւնն է՝ Միջագետք եկաւ, և յորմէ մաս մի զԵփրատ անցնելով հաստատուեցաւ Քանանացւոց երկրին սահմանները։ Գետն անցնելուն համար եբրայեցի կոչուած այս գաղթականութեան երևելի խումբերէն մին էին Քանանացւոց երկիրը մտնող Աբրահամեանք կամ Իսրայելացիք, որոց յատկացաւ եբրայեցի անունն, ընդ որով պէտք է հասկնալ նաև այս վերջին սեմական գաղթականութեան միւս ցեղերն, որ են Մադիանացիք, Մովաբացիք, Իսմայելացիք և յայնկոյս Եփրատայ բնակող ուրիշ ոչ-քանանացի ցեղեր։

Սեմականաց գաղթականութեան հետ սկսած, մանաւանդ թէ առաջին մղումը տուած է նոցա՝ արշաւանք Արիականաց դէպ ի հարաւ։ Այս յանդուգն և պատերազմող (արիական) ցեղն զհայեցուած իւր թուի ուղղեալ ի վերայ այն Քուշեանց, որ ի վաղուց հաստատեալ էին ի հարաւային արևելեան կողման միջին Ասիոյ, այն է ի Բաբելոն։ Այսպէս Բաբելոնի և Ասորեստանի տիրող մեզ ծանօթ վերջին ցեղն հաւանականապէս արիական էր, ինչպէս կը տեսնուի Նինուէի և Բաբելոնի աշխարհակալ թագաւորաց անուններէն։ «Զգիտնալով այս աշխարհակալաց լեզուն, որ թերևս իսպառ կորսուած է—ասէ Րընան (Պատ. սեմ. լեզ. 62)—յանուանց նոցա միայն ըստ բաւականին կը տեսնենք, թէ այն աշխարհակալք ի բնէ սեմական չէին։ Սեմական անուն մը ճանչնալ շատ դիւրին է։ Թագղաթփաղասար, Սենեքերիմ, Ասորդան, նոր անուանք, որ նախ և առաջ յականջս ժամանակակցաց Եսայեայ հնչեցին՝ եբրայերէն, փիւնիկերէն, ասորերէն, արաբերէն, միով բանիւ սեմական լեզուաց բնութենէ և յօրինուց բոլորովին դուրս են։ Որք միանգամ յարդի գիտնոց փորձեցին սեմական լեզուօք մեկնել այն անունները՝ չյա-

ջողեցան. ընդհակառակն պարսկերէնով մեկնել փորձելով աւելի մօտեցան այն անուանց ճշմարիտ ստուգաբանութեան»։ Բայց եթէ ոչ այն աշխարհակալաց ցեղը՝ գէթ յաջորդք նոցա, որ բոլոր Ասիոյ նաև Ափրիկէի հիւսիսային մասին տիրեցին մինչև Արաբացւոց (Մահմետի) աշխարհակալութիւնը՝ կարգաւ արիական էին, ինչպէս Մարք և Պարսք, ապա Յոյնք, և յետ նոցա Հռոմայեցիք, որպէս և այսօր երկրիս հինգ մասանց ևս՝ իշխանութեամբ կամ ազդեցութեամբ տիրող՝ նոյն արիական կամ հնդեւրոպական ցեղն է, այն է քաղաքակիրթն Եւրոպա։

18. Այս է ըստ արդի գիտնական հետազօտութեանց մարդկային ցեղերուն համառօտ պատմութիւնը։ Այս պատմութենէն կը տեսնուի, թէ ինչպէս, թող վայրենի ցեղերը որ պատմութիւն չունին՝ ուրիշ իրարմէ անկախ և ուրոյն ազնիւ ցեղեր անծանօթ ժամանակներ երկրիս ամենայն կողմերը բռնած և ապա յընթացս յոլով դարուց բազմանալով այլևայլ ճիւղեր բաժնուած են, յորոց ոմանք կորսուած են, այլք կան մինչև ցայժմ։ Արդ՝ ազգերու կազմութեան այս հին և երկայն ժամանակին մէջ հայ ցեղն ո՞ւր էր և ո՞ւր կրնանք գտնել զնա։ Եթէ Հայք հնդեւրոպական են, (որպէս և են իսկ նոյնչափ ստուգիւ՝ որչափ ստուգիւ հնդեւրոպական էին և են Մարք, Պարսք, Յոյնք, Լատինք, գերմանական և սլաւեան ցեղեր), ոչ այլուր էր և կրնայ գտնուիլ հայ ցեղն՝ եթէ ոչ ի մէջ համացեղից իւրոց հնդեւրոպական ազգաց և յերկրի նոցա։ Այս ազգաց մէջ և ընդ նոսա՝ իւր առանձին բարբառովն և ցեղային յատկութեամբ կը զարգանար հայ ցեղն՝ լինել հնդեւրոպական ճիւղ մը, մինչև եղև իսկ արդեամբ այնպիսի, և ի բազում յեղափոխութեանց և ի վտանգաց կորստեան ապրելով եկն, անծանօթ ժամանակ, ի վերջին բնակութիւն իւր յերկիրն Արարատայ՝ ուր կը գտնենք զնա առաջին անգամ առ Սենեքերիմաւ իբրև առանձին թագաւորութիւն յիշուած ի ժամանակակից պատմութեան Հրէից և յազգային աւանդութեան (էջ 39)։

Ապա հայ ազգը կամ ցեղն յառաջ բերել ի Հայկայ, իբրև Յաբեթի ուրումն սերունդէն նահապետէ մը, որ որպէս թէ աշտարակաշինութեան առթիւ Բաբելոն կը գտնուէր՝ նմանողութիւն է ազգաբանութեան Ծննդոց, որ իւրաքանչիւր ազգ Նոյի երեք որդւոց սերունդէն նահապետէ մը յառաջ կը բերէ։ Թէ այն ազգաբանութեան, նկատելով մանաւանդ պատմութեան պարագաները՝ կրնա՞յ պատմական հիմ ընծայուիլ թէ ոչ՝ թողունք այս խնդիրը՝ հայ ցեղն, իբր ճիւղ հնդեւրոպական արմատոյ, իւր բնական, այն է արիական հողէն դուրս, սեմական երկիր մը, Բաբելոն բռնած

ենթադրել՝ ըստ արդի գիտնական սկզբանց զպատմութենէ ծագման և զարգացման մարդկային ազգին, այնպէս անտեղի է, ինչպէս անտեղի է Հասարակածի տունկ մը ընդ սառուցեալ գօտւով բուսեալ գտնել։

19. Քաղդէական մատեանն, ըստ Մարիբասայ, Խորենացւոյն վկայութեամբ, աշտարակաշինութիւնը յիշելով՝ այն գործին ձեռնարկող Հսկաներուն համար ասէ. «Յղացեալ *ամբարտաւանութեամբ* ծնան *զամբարիշտ* խորհուրդ աշտարակաշինութեան»։ Զաշտարակաշինութիւնն *ամբարտաւանութիւն* և *ամբարիշտ* *խորհուրդ* կոչել Գրոց գաղափար է. նոր ապացոյց, թէ այն գրուածը քրիստոնէի գործ է մանաւանդ քան նախնի հեթանոսի, մանաւանդ քաղդէացւոյ։

20. Ոչինչ ընդհատ անտեղի է նաև քաղդէական դիւանի կամ տարեգրի մը մէջ մուծուած գտնել այնպիսի մանր նկարագիր մը, որպիսի է նկարագիր Հայկայ անձնական յատկութիւններուն, փախստեան, հալածման նորա ի Բելայ, փոխփոխ պատգամաւորութեան, պատերազմին և յաղթութեանն։ Բայց թող այն նկարագրին մանր և մեծաւ մասամբ անտեղի պարագաները, որ տարեգրի կամ դիւանի մը մէջ չէին կրնար մտնել, թէև այնպիսի դիւան կամ տարեգիր արդարև գտնուէր առ Ասորեստանեայս՝ մեծ դիւրահաւանութիւն է հաւատալ, թէ Ասորեստանի թագաւոր մը փախստական Հայկի մը ետևէն ինկաւ բիւրաւոր զօրօք ի Նինուէէ մինչև Հայաստան, այսինքն Վանայ կողմերը, որպէս թուի ակնարկել պատմութիւնն, մանր ձկամբք աղի ծովակ յիշելով. ճանապարհ՝ զոր ի հատանել անցանել այնչափ զօրօք, մանաւանդ այն ժամանակ՝ ամիսներ պիտոյ էին։ Ո՞րչափ յիմար պարտէր լինել Բէլ, մինչև թողուլ ամիսներով զիւր մայրաքաղաք և այնչափ մղոն հեռուն երթալ ահագին բանակաւ՝ ի նուաճել կամ հնազանդեցնել 300 հոգիէ բաղկացեալ գաղթական խումբ մը, որոց կէսն տղայք և կանայք էին։ Սա ևս կը հարցունենք, թէ ի Նինուէէ մինչև Հայաստան այն ընդարձակ երկիրն այն ատեն շէ՞ն էր քաղաքներով և գիւղերով, թէ ամայի։ Եթէ շէն էր՝ Հայկ ի՞նչպէս կրցաւ երեքհարիւր հոգւով անցնիլ այն քաղաքներէն և գիւղերէն որ Բելայ հպատակ էին (Խոր. Ա. Ժ), և այն երկիրներուն կուսակալներէն ի՞նչպէս չարգելուեցաւ։ Իսկ եթէ ամայի էր այն երկիրը՝ յայնպիսում երկար ճանապարհորդութեան պաշար ուստի՞ գտաւ Հայկ. մանաւանդ Բէլ ուստի՞ գտաւ ամիսներով պաշար այնչափ բազմութեան զօրաց։ Պարագայք՝ որ արդարև բաւական են բառնալ այն պատմութենէն ամէն հաւանականութիւն։

Գիցուք սակայն, թէ ընդ Բելայ յարաբերութիւն ունեցաւ Հայկ,

ուստի և Ասորեստանցիք՝ զպատմութիւն նորա գիտցան և այնպէս մանր գրեցին ի տարեգիրս իւրեանց. բայց միթէ զԹագաւորն և զզօրն իւրեանց պարսաւելով և զՀայկ գովելո՞վ կը գրէին. *հպարտ* և *բռնաւոր* կոչելով զԲէլ, և զզօրս նորա *անկարգ, անճոռնի, յանդուգն*, իսկ զՀայկ՝ *ուշիմ, խոհեմ, խաղաղական*։

21. Իսկ յետ Հայկայ Հայաստանի մէջ գաղթականութեանց և ներքին շինութեանց պարապող և յԱսորեստանէ բոլորովին հեռու և զատ ապրող յաջորդ նահապետաց պատմութիւնն ինչպէս գիտցան Ասորեստանցիք. ապա թէ ոչ՝ հարկ է սեպել, թէ Ասորեստանցիք յետ Հայկայ ունեցան ի Հայս դարերով յատուկ լրտեսներ կամ գործակալներ, որոց գործ էր ամենայն ինչ ի գրի հարեալ առաքել ի Նինուէ՝ տարեգիրներուն մէջ արձանագրուելու։

Հայկայ յաջորդներուն պատմութիւնը, ուր կը յիշուին գաղթականութիւնք և շինութիւնք որ եղան դէպ ի հիւսիս, ամայի ենթադրեալ երկիրը շէն մարդաշատ գործելու՝ բոլորովին տեղական և մասնաւոր է, և թեթև վերաբերութիւն անգամ չունէր Ասորեստանեայց, որ Նինուէի ենթադրեալ դիւանին մէջ գոնէ համառօտիւ յիշուէր, ուստի և առանց այն քննադատական պատճառներուն իսկ զորս վերը մէջ բերինք՝ տղայական դիւրահաւանութիւն է նինուէական դիւանին մէջ գրուած հաւատալ այն պատմութիւնը։ Այնպիսի հին տարեգիր մը, եթէ երբէք կար ի Նինուէ՝ կրնար պարունակել Ասորեստանի թագաւորաց և թերևս դրացի իշխանաց ոմանց յաջորդութեան և շատ երևելի գործոց, զորօրինակ նշանաւոր իրիք յաղթութեան ժամանակագրական համառօտ յիշատակութիւնը, բայց ոչ անձանց և տեղեաց երկայն նկարագիրներ, որպիսի է Հայկայ յաջորդաց գաղթականութեան պատմութիւնը, որ որպէս դիւրին է տեսանել՝ ոչ այլ ինչ է արդեամբ՝ եթէ ոչ մեծաւ մասամբ Հայաստանի երևելի բնական դրից տեղագրութիւնը, զոր առանց քաղդէական հին պատմութեան մը կրնար յօրինել Խորենացին կամ ուրիշ նմին նման ճարտար գրիչ մը։

Ի պատմութեան յաջորդաց Հայկայ եթէ կայ ինչ կարևոր՝ պատմութեան մատենագրական կողմն է. և այս առանց տարակուսի կը վերաբերի հնարագէտ հանճարոյ Խորենացւոյն, որ գիտցաւ յղանալ և երևցնել, տեսակ մը ինքեան միայն սեպհական ոճոյ փափկութեամբ՝ իմաստնագոյն և կանոնաւորագոյն աշխարհաշինութեան պատկեր մը՝ զոր մտածել հնար էր այնպիսի հին ժամանակի մը համար։ Բայց զոր մեք խնդրեմք աստ՝ պատմութեան նիւթն է, ոչ թէ ոճը, որ բոլորովին դուրս է մեր առաջիկայ նպատակէն։

22. Անձանց և մանաւանդ տեղեաց յատուկ անուանք, եթէ

արդարեւ պատմական են՝ ընդհանրապէս կը ծառայեն իբրեւ ապացոյց ի հաստատութիւն պատմութեան։ Սակայն ի պատմութեան Մարիբասայ յատուկ անուանք մանաւանդ առիթ տուած են առարկութեանց պատմութեան վաւերականութեան դէմ։ Բաւական մեծ առարկութիւն է արդարեւ, թէ ինչպէս Հայ նահապետաց անուանք, որ մինչեւ Արայ (բաց ի Հայկայն, զոր ազգային աւանդութիւնն, անկախ ի Խորենացւոյն պատմութենէ, գէթ իբրեւ հսկայ կը ճանչնար), հայ լեզուին բոլորովին օտար և անծանօթ բառեր են՝ յետ Արայի սկսանին լինել կարգաւ հայեցի անուններ, արմատով և կազմութեամբ ծանօթ և ընտանի։ ԶՄարիբասեան պատմութիւնն իբրեւ ի յառաջագունէ ճշմարիտ ենթադրող մը անտարակոյս պէտի ջանայ հարթել զայս դժուարութիւն ասելով, թէ Հայկ և ընտանիք նորա երկար ժամանակ բնակելով ի Բաբելոն՝ արամերէն կը խօսէին, վասնորոյ մինչեւ Անուշաւան՝ յատուկ անուանք են օտար, թերեւս սեմական լեզուաւ. բայց յետ այնորիկ ազգին լեզուն առ սակաւ սակաւ փոխուեցաւ, և յատուկ անուանք ևս սկսան հայանալ, այնպէս որ Արմենակ, Կադմոս, Արմայիս, Ամասիա, Արամ անուանց յաջորդեցին Անուշաւան, Պերճ, Բազուկ, Սկայորդի, Հրաչեայ և սոյին նման հայերէն անուանք։ Այս պատճառը թերեւս զօրէր՝ եթէ յիշեալ անծանօթ անուանց հետ միանգամայն ծանօթ հայեցի անուանք չյիշուէին միեւնոյն ժամանակ, ինչպէս Գերեզմանք, Զօր, Մշակ, այլովքն հանդերձ։

Դիտողութեան արժանի է, զի Արմենակ անունն իբրեւ Արմէն բառին ածանցը՝ կ'ենթադրէ այս բառը, այսինքն կը ցուցնէ, թէ Արմէն բառը կար ազգին մէջ՝ երբ Արմենակ անունը դրուեցաւ. սակայն ըստ պատմութեան Խորենացւոյն՝ Արմէն անունը համեմատութեամբ նոր է քան զԱրմենակ, քանզի եկած է յանուանէ Արամայ. ուստի կամ պարտինք ընդունել, թէ Արմենակ յետոյ էր քան զԱրամ, և կամ՝ թէ Հայք Արմէն կոչուած են յԱրմենակայ, ինչպէս ոմանք կը համարին (էջ 5—6.), և ոչ յԱրամայ, որպէս պատմէ Խորենացին։

Չէ պարտ առանց յիշելու անցնիլ նաեւ սա կէտը, թէ Մարիբասեան մատենին քաղդէական բնագիրն, ապա յոյն թարգմանիչը և ապա ասորին Մարիբաս ինչպէս կարող եղան ճշդիւ գրել Անուշաւան, Նորայր, Զարմայր, Պերճ, Բազուկ, Սկայորդի, Պարոյր, Հրաչեայ, Պաճոյճ և սոյին նման հայերէն անուններ, այնպէս որ Խորենացին կրցաւ զնոսա դիւրաւ հայերէն դարձունել։

Խորենացին ընդհանրապէս տեղեաց անունները կը հանէ յան-

ունենէ երևելի արանց, ինչպէս զԱրագած՝ Արմենակայ, զՄասիս՝ Ամասիայ, զԵրասխ՝ Երաստայ, զԱրարատ՝ Արայի անուններէն, անտարակոյս հաստատութիւն տալու համար պատմութեան, և ուրեք ուրեք թուի հասանել իւր նպատակին։ Արդարև ի՞նչ աւելի ապացոյց կրնայ պահանջուիլ պատմութեան Ցոլակայ և Փառոխի՝ քան զՑոլակերտն և զՓառախոտ, յատուկ անուանք տեղեաց որ ի հինգերորդ դարուն դեռ կը յիշուին (Եղիշ. տպ. Վենետ, 1828. էջ 136)։ Բայց և այնպէս և ոչ մին ի ստուգաբանութեանց Խորենացւոյն ունի բանասիրական կամ պատմական հիմ. և ստուգաբանութիւն մը ընդունելու համար պարտի համաձայն գտնուիլ այս երկուց, բանասիրութեան և պատմութեան։ Բանասիրութեան և պատմութեան յայտնապէս անհամաձայն են ստուգաբանութիւնք, զորս տայ Խորենացին Հարք և Երասխ անուանց։ Յետ պատմելոյ, իբրև ի Մարիբասայ, թէ Հայկ բնակեցաւ «ի բարձրաւանդակ դաշտի միում՝ կը յաւելու. «Եւ անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք, այսինքն, աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ»։ Հարք բառին տրուած այս մեկնութիւնը մութ է, կը ցուցնէ սակայն, թէ Խորենացին *հայր* բառին յոգնակին կը համարի զՀարք, որպէս թէ Հայկ այս անունը տուաւ իւր առաջին բնակութեան տեղւոյն՝ ցուցնելու համար առյապայ եկելոց, թէ Թորգոմական ազգին (Հայոց) հարք բնակեցան անդ։ Բանասիրութիւնը կը ցուցնէ սակայն, թէ Հարք հայր բառին յոգնակին չէ, այլ ուրիշ մեզի անծանօթ եզակի բառ մը, ինչպէս յայտնի է բառին հոլովման ձևէն, որ է *Հարքայ* և ոչ *հարանց*. ուստի աւելի տրամաբանական է ենթադրել, թէ Հարք անուան պատահական նմանութիւնը հայր բառին յոգնակւոյն հետ թելադրած է այն պատմութիւնը, քան ընդունել զՀարք իբրև յոգնակի հայր բառին։ Իսկ զԵրասխ հանել յանուանէ Երաստայ՝ պատմական չէ, քանզի գիտենք թէ Երասխ (Արաքսա), ինչպէս նաև Կուր՝ արիական լեզուի բառեր են և գետոյ հասարակաց անուանք արիական երկիրներէն երևելիներուն։ Պարսկաստան, Մարաստան և Բակտրիա ունէին Երասխ և Կուր, ինչպէս Հայաստան (Մասբեր. Հնախօս. արևել. ազգ. էջ 503)։ Ի՞նչ աւելի բանասիրական պատճառ կայ զԱրագած յորջորջումը տալ Արմենակայ անուան, ընդ որում ամենևին նմանութիւն չունի, քան *արագ* բառին և կամ ուրիշ արմատոյ մը որ անծանօթ է մեզ. կամ ի՞նչ աւելի պատմական պատճառ կայ հաւատալու, թէ Մասիս (որ հայցականն է Մասիք բառին, սխալմամբ ուղղականացեալ) եկած է յանուանէն Ամասիայ, քան Մասիոս բառէն, որ յունարէն անունն է Տաւրոսի հարաւային արևելեան շղթային և այլով ան-

ուամբ կը կոչուի Կորդուաց գօտի, կամ ըստ Սեմականաց՝ լերինք Արարատայ, և որոյ միջին և երկրորդական ճիւղն է Հայ Մասեաց գօտին։ Ոչինչ ընդհատ անհիմն է զԱյրարատ հանել յանուանէ Արայի։ Գալով Ցոլակերտ և Փառախոտ անուանց՝ գիտելի է զի այս անուանք, առաջինն իբրև Ձմերոց արքունի, և երկրորդն իբրև երևելի աւան՝ կը յիշուին ի Ե. դարուն առ Եղիշէի տարբեր ուղղագրութեամբ, իբր Զօղակերտ և Փարախոտ, *ծող* և *փարախ* բառերէն, և աւելի բանաւոր իմաստ կու տան։ Այս երկու տեղեաց իբրև կարևոր յիշատակուիլն ի Ե. դարուն՝ պատճառ կու տայ մեզ համարել զնոսա յետնագոյն ժամանակի տեղեր, քանզի Ամասիայի ժամանակէն մինչև հինգերորդ դար աւան կամ գիւղ մնացած կարծել հաւանական չէ, մանաւանդ զի Զօղակերտ բառին *կերտ* մասնիկը որ հայ անուանց, մանաւանդ տեղւոյ յատուկ անուանց մէջ ստէպ մուտ ունի՝ նոր պարսկերէնի *քերտէն*, հյ. գործել, ըստ յետնոց՝ կերտել բառէն է, և չկարէր լինել ծանօթ Հայոց Ամասիայի ժամանակ, մինչ Պարսից հետ յարաբերութիւն դեռ չկար։

Խորենացին որպէս թէ ի Մարիբասայ առնլով կը յիշէ երիս անձինս, Խոռ, Մանաւազ և Բազ։ Զերկուց առաջնոց ասէ, թէ էին եղբարք Արմենակայ, իսկ զերրորդէն, զԲազայ ասէ լինել որդի Մանաւազայ, և ի սոցանէ համարի սերեալ զնահապետութիւնս Մանաւազեանց, Բզնունեաց և զԽոռխոռունեաց։ Թէ Մանաւազ և Բազ արդարև անձինք էին, և թէ Մանաւազեանն և Բզնունին ստուգիւ կը սերէին ի Մանաւազայ և ի Բազայ՝ ցայսցանէ որոշ ինչ ասել չունիմք։ Խոռխոռունի անունը միայն քննենք աստ։ Տեղւոյ կամ ազգի մը անունէն, առանց պատմական ապացուցի, անձ ստեղծել իբրև նահապետ այն ազգին՝ դիւրին է. զորօրինակ, Տայոս մը կամ Գոգ մը ստեղծել՝ իբրև նահապետ Տայոց կամ Գուգարաց, որպէս էր սովորութիւն հին ազգաբանից՝ գրեթէ ամէն ցեղի կամ ազգի համար ստեղծել նահապետ զոմն, և յանուն նորա կոչուած համարել զազգն կամ զցեղ։ Այսպէս Եբրայեցիք Եբերէ են, Ասորեստանցիք՝ Ասուրէ, Յոյնք՝ Յաւանէ։ Արդ՝ մեր ծերունի պատմիչը, ինչպէս տեսանք՝ Խոռխոռունի անունը կը հանէ ի Խոռայ, զԽոռ Հայկայ կրտսեր որդիներէն մին դնելով։ Թէ Խոռ պատմական անձ էր թէ ոչ՝ թողունք այս խնդիրը. տեսնենք միայն, թէ Խոռխոռունի անունը կրնա՞ր այլուստեք, գէթ հաւանականապէս, առնուլ ծագում։ Խոռխոռ հին արևելեան լեզուի մը բառ է,. և կը պատասխանէ հայերէն *կարկառ*, լատիներէն carcer և գերմաներէն Kerker բառերուն, որ կը նշանակեն քարակոյտ կամ բանտ, որպիսի էր Վանայ բերդը։ Արդ՝ Խոռխոռ հին անուն էր Վանայ քարաբլրոյն և

բերդին, որ ինչպէս կ'երևի՝ ժամանակաւ բանտարկեալներ դնելու յատկացեալ էր (տես էջ 22)։ Բանասիրական տեսութեամբ՝ միթէ նուա՞զ բանաւոր է կարծել, թէ Խոռխոռունին էր անուն այն ցեղին, որում հին, թերևս նախապատմական հարստութեան մը ժամանակ յանձնուած էր Խոռխոռին պահպանութիւնը։ Արդարև Խոռխոռունիք ի Հայս հին նախարարութիւն էին, որոց ծագումն անյայտ է, ուստի և չենք գիտեր թէ սերնդեամբ բուն հա՞յ էին թէ ոչ. սակայն ինչպէս որ յետ գտնելոյ Վանայ բերդին հին Խոռխոռ անունը՝ չենք կրնար, Խորենացւոյն ստուգաբանութեան միայն հաւատալով, Խոռխոռունի անունը Խոռէ մը հանել՝ նոյնպէս չենք կրնար այն նախարարութիւնն ի բնէ հայ համարել, տեսնելով այն ցեղին ուրիշ մէկ անունն, այն է *Մաղխազ* կամ *Մաղխազունի*, որ սեմական կամ թերևս հին քուշեան լեզուին *Մալաքա* կամ *Մէլիքի*, թագաւորական, բառն է։ Մասնաւոր պատմական յիշատակութիւն մը չունենալով՝ չենք կարող գիտել, թէ ինչ պատճառաւ այս Մաղխազունի, թագաւորական, անունը տրուած էր այն ցեղին. բայց բառին սեմական կամ քուշեան ծագումը ո՞չ ապաքէն կրնայ կարծել տալ, թէ Խոռխոռունիք որ և Մաղխազունիք՝ Վանայ բերդը շինող, այն հին արմենական բևեռագիրները դրոշմող, ծագմամբ հին քուշեան (տես էջ 22, 23) թագաւորական ցեղէն էին, և կամ այն հին տէրութեան արքունի պաշտօնեաներ, թերևս թիկնապահներ, քանզի նաև առ Արշակունեօք այս պաշտօնը վարեցին Խոռխոռունիք։

Ուղիղ չէ նաև Մշակ բառին աղաւաղեալն համարել զՄաժաք (Մազաքա), որ էր հին քաղաք Կապադովկիոյ, և կը թուի կոչուած այսպէս յանուն հին քուշեան ազգին Մոսոքաց կամ Մազքթաց, որ էին նախնի բնակիչք Կապադովկիոյ և Պոնտոսի, և ապա սեմական և արիական ազգերէ մղուելով քաշուեցան դէպ ի հիւսիս։ Ի սոցա անուն կոչուած կ'երևի նաև *Մոսքեան* լերանց գօտին։ Ըստ Խորենացւոյն՝ որպէս թէ Արամայ կուսակալը Մշակ շինելով զՄաժաք՝ կոչեց յիւր անուն Մշակ, բայց տեղացիք չկրնալով արտաբերել՝ կոչեցին Մաժաք։ Եթէ տեղացիք չկրցան արտաբերել մշակ բառն, ինչպէս կրցան հայերէն խօսել սորվիլ ըստ հրամանին Արամայ, որպէս պատմէ Խորենացին. և Հայք ընդէ՞ր ոչ պահեցին Մշակ անունը. միթէ և Հա՞յք չկրցան արտաբերել, քանզի ի հին մատենագիրս մեր զԿեսարիա կը գտնենք հայերէն անուամբ Մաժակ կոչուած, և ոչ ուրեք Մշակ.—«Այս իշխանք են . . . զորս գումարեաց Թագաւորն. և առաքեաց զնոսա ի կողմանս Կապադովկացւոց ի քաղաքն Կեսարացւոց, զոր ըստ հայերէն լեզուին (կը յաւելու թարգմանիչն) Մաժաք կոչեն» (Ագաթ. ՃԺԲ.)։

Հոս դիտողութիւն մը աւելցնելով՝ վերջացնենք այս յօդուածը։ Եթէ Հայ ցեղն հնդեւրոպական է՝ հարկաւ այնպէս հին է, զի զըսկիզբն նորա պատմաբանօրէն ցուցնել անհնար է. քանզի մեր պատմական աւանդութեանց սկիզբը չի հասնիր մինչև հոն։ Հայ ցեղը չի կրնար եկած համարուիլ յԱրմենիա, կամ ճշգագոյն ևս, ի բուն Արարատեան գաւառ իւր՝ բայց եթէ արիական ազգաց գաղթականութեան հօսանաց ուրիշ առուներուն հետ, սակաւ ինչ կանուխ կամ անագան, բայց անշուշտ միշտ ի նախապատմական ժամանակի։ Հայ ցեղին հնդեւրոպական կամ արիական սկիզբը որչափ յայտնի է՝ նոյնչափ յայտնի է, թէ այս ցեղն ստացած է իւր Արարատեան գաւառը՝ զայն յառաջ քան զնա գրաւող զանդիկ ցեղերէ։ Այսմ ապացոյց կրնան համարուիլ այն գաւառին և շրջակայից հին աշխարհագրական անուանք—Արարատ, Արմաւիր, Արագած, Արաքս և այլք։ Առանց երկբայութեան մարթ է ասել, թէ այս և սոյին նման հին անուանք են պատմական դիպաց առթիւ թելադրեալ արիական լեզուի բառեր. բայց թէ այն բառերը թելադրող դէպք, և թէ կազմիչ արմատք և ածանցք նոցա այնպէս անծանօթ են մեզ՝ զի զճշմարիտ իմաստ նոցա գտանել՝ պատմութեան և լեզուաբանութեան այժմու վիճակի մէջ կարելի չէ։ Այն բառերը թելադրող դէպք նախապատմական են, ուստի և բոլորովին արտաքոյ մեր դիտութեան սահմանէն, իսկ կազմիչ արմատք նոցա շատ հաւանական է թէ կը վերաբերէին զանդիկ լեզուին կամ ուրիշ հին արիական լեզուի մը, որ կորուսած կամ անծանօթ է մեզ։

23. Ի հին աշխարհագիրներէ գիտենք, և է արդարև հաւանականագոյն, թէ ի հիւսիսային և յարևելեան կողման Հայոց, անդր քան զԵրասխ և զԿուր, մինչև Կովկաս և մինչև ի ծովն Կասպից, յանծանօթ ժամանակաց հետէ կը բնակէին այլևայլ սկիւթացի, կամ արդի գիտնական բառով, դուրանեան կամ արիո—դուրանեան ցեղեր։ Խորենացին է միայն որ առ Հայկաւ և յաջորդօք նորա ամայի և անբնակ ենթադրելով այն կողմերը՝ Հայկայ յաջորդներուն գրաւել, բաժնել և նոր նոր գաղթականութեամբք լեցունել կու տայ բոլոր այն երկիրները մինչև Կովկաս։ Զորօրինակ, զարևելեան մասէն Հայոց և զՍիւնեաց խօսելով՝ ասէ թէ այն երկիրը բազմամարդ և շէն գործողն եղաւ Գեղամայ որդին Սիսակ, որում Հայր նորա Գեղամ ետ ժառանգութիւն Գեղամայ ծովուն արևելեան կողմը, սահման կարելով «մինչև ցդաշտ մի, որ (ուր) գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմաձիգս նեղս, և ահագին դդչմամբ իջանէ ի դաշտն»։ Այսպէս ըստ Խորենացւոյն՝ Գեղամ կը պարգևէ ի ծովէն Սևանայ մինչև

ի ջրվէժս Երասխայ այն ընդարձակ երկիրը Սիսակայ։ Բայց ընդէր արդեօք Գեղամ մինչև ջրվէժները սահման կը կտրէ Սիսակայ, և չտայ նմա թոյլ երթալ աւելի յառաջ։ Այսր պատասխանն յայտնի է։ Խորենացին, կամ այլ ո ոք և է չինիչ Մարիբասեան պատմութեան, գիտնալով թէ Սիւնեաց սահմանը կը հասնէր մինչև այն ջրվէժները՝ Գեղամայ մինչև հոն սահման գնել կու տայ ժառանգութեան որդւոյն։ Բայց Խորենացւոյն այս պատմութիւնն անհիմն է։ Խորենացին յետ պատմելոյ, թէ Սիսակ ելից «շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ և զաշխարհն կոչեաց իւրով անուամբն Սիւնիք»՝ կը յաւելու. «Այլ Պարսք յստակագոյնս Սիսական կոչեն։» Նախ՝ Սիւնիք բառն ամենևին նմանութիւն չունի Սիսակ անուան, այլ է բնիկ ցեղի մը անուն։ Գալով Սիսական բառին՝ Պարսիկք յորոց առնուն և Արաբացիք՝ Սիսական անուամբ կ՚իմանային Սակ կամ Շակ կոչուած հին մար—սկիւթացի (médoscythe) ցեղի մը երկիրը յարևմտից Կասպից ծովուն։ Ուստի շատ հաւանական է, թէ Սիւնեաց երկիրն, ինչպէս նաև մերձակայ նահանգն Արցախու, որ և կոչի ի հին մատենագիրս մեր «Փոքր Սիւնիք» (Խոր. Գ. Գ.), Սիսական և Հաբանդ համանուն գաւառներով՝ վաղուց բնակութիւն էին Շակաց, ժողովուրդ վայրենաբարոյ, օտար ի Հայոց, մինչև Կորեան, յետ քրիստոնէութեան անգամ՝ կոչել այն կողմերան բնակիչները «գազանամիտս, վայրենագոյնս, ճիւաղաբարոյս»։ Այս է, որպէս ասացաք՝ հաւանականապէս Սիւնեաց երկրին, ինչպէս նաև Արցախու գաւառին Սիսական կոչուելուն պատճառը, մանաւանդ զի ունիմք Շակաշէն անուն գաւառ, որ է մին ի գաւառաց նահանգին Ուտի։ Սակ կամ Շակ անունը կը գտնենք նաև առ Եղիշէի (էջ 80, տպագր. Վենետ. 1828) ի բառին Սագաստան, Սասանեանց Սիպերիան, իբրև տեղի ապաստանաց մեղուցելոց քաղաքական յանցանօք։ Նաև Իսիդորոս Քարակացի, հին աշխարհագիրոյն առ Պտղոմեաւ Ղագոսիւ՝ կը յիշէ զՍակաստան իբրև գաւառ Սակաց սկիւթացւոց (Ա. Ինճիճ. Ստոր հին Հայ. էջ 341)։ Ըստ Ստրաբոնի (գլր. ԺԱ. 4, 5), ի Բակտրիոյ մինչև ի սահմանս Հայոց այն ահագին երկիրը կը վերաբերէր Շակաց, որոց յիշատակը մնացած է, ասէ, ի միում ի գաւառաց Հայոց որ կոչի Շակաշէն։ Ըստ աւանդութեան իրիք, ասէ Ստրաբոն, Կիւրոս գնաց ի պատերազմ ընդդէմ Սակաց, և յաղթելով նոցա հաստատեց Սակեան կոչուած տօնն ի պատիւ Անահտայ։

Խորենացին ըստ հին սովորութեան զոր յիշեցինք վերագոյն տեսնելով Սիսական անունը՝ կ՚ստեղծէ Սիսակ մը իբրև նահապետ, յորմէ սերել կու տայ ոչ միայն զՍիւնիս այլև զԱղուանս.

որպէս զի Աղուան անունն հանէ ի Սիսակայ՝ «աղու» մականունը կ՚ընծայէ նմա, որպէս թէ Սիսակ վասն քաղցրաբարոյութեանն աղու կը կոչուէր, և աստի ելաւ Աղուան անունը.—«Զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնում մատենին յիշատակել, զգունդս սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ, և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա» (Խոր, Բ, Ը.)։ Գիտենք սակայն, թէ Աղուանից հին և բուն անունն էր գարգարացի (Խոր. Բ, ԺԵ. Գ, ԶԴ. բաղդատէ ընդ Բ. Ը.)։ Աղուան անունը որ թարգմանութիւն է լատիներէն Ալպանիա բառին և կը նշանակէ սպիտակ՝ տրուեցաւ այն երկրին առ Հռոմայեցւովք, ինչպէս Իբերիա, Վիրք, անունը՝ Գուգարաց, որ նախկին և բուն անունն է Վրաց։ Թէ ընդէր Ալպանիացի և Իբերիացի կոչուեցան Աղուանք և Վիրք, որոց համանուն ազգեր կան յԵպիւրոս և ի Սպանիա՝ այլևայլ կարծիք կան, զորոց խօսել չէ պատշաճ տեղւոյս։ Զիարդ և իցէ այս՝ Սիւնիք, Արցախ, Փայտակարան և Ուտի, որպէս և Մուրացան ցեղին երկիրն յարևելից Մասեաց (տես էջ 54)՝ ի սկզբան կը վերաբերէին Մարաց, և առ Աքեմենիդեամբ (յաջորդօք Կիւրոսի) եղեն նահանգք Պարսից, և Ատրպատական կոչուած ընդարձակ երկրին արևելի մասը կը կազմէին (Բուզ. Գ. Զ.) Առ Արշակունեօք, հաւանականապէս առ մեծաւն Տիգրանաւ, մասնաւոր դաշամբ, որ զԿուր գետ կը դնէր սահման ի մէջ Հայոց և հիւսիսային դրացեաց նոցա Վրաց և Աղուանից (Բուզ. Ե. ԺԳ. ԺԵ.)՝ վերոյիշեալ նահանգներն եղան մասն Մեծին Հայոց, թէպէտ բնակիչները բոլորովին տարբեր էին ի Հայոց ծագմամբ և լեզուաւ, զոր նոյն ինքն Խորենացին կը նկարագրէ իբրև «կոկորդախօս, աղխազուր, խժական, խեցբեկազոյն» (Խոր. Գ. ԾԴ.)։ Այս նահանգներն, ինչպէս նաև Գուգարք՝ մնացին ընդ իշխանութեամբ Հայոց, թէպէտ ապստամբութիւններ պակաս չէին (Բուզ. Գ, Ե. Խոր. Գ, Դ.), մանաւանդ մօտ ի կատարած հարստութեան Արշակունեաց։ Մուշեղ Մամիկոնեան, սպարապետ Պապայ, սաստիկ պատերազմաւ նուաճեց այս և ուրիշ նահանգներ որ ապստամբած էին առ Արշակաւ.—«Թողին զիւրեանց արքայն Արշակ ... նախ բդեաշխն Աղձնեաց ... յետ սորա Գուգարաց բդեաշխն ... ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ ... յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց տունն Հայոց թագաւորին որ էր զԱտրպայական աշխարհաւն. յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կազբից (Փայ-

տակարան)» (Բուզ. Դ. Ծ.)։ «Եւ զկողմանս Մարաց, քանզի և նոքա ապստամբեցին յարքայէն Հայոց՝ Հարկանէր (Մուշեղ) մեծապէս, Հարկանէր և զերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ» (Բուզ. Ե, ԺԱ.. ԺԲ.)։ Նոյն Բուզանդ «Աղուանից երկիր» կը կոչէ զՈւտի, այսինքն մասն բուն Աղուանից որ էին անդր քան զԿուր, որպէս և զԳուգարս կ'անուանէ «աշխարհ Վրաց,» այսինքն մասն բուն Վրաց բնակելոց յայնկոյս Կուր գետոյ.—«Առնէր (Մուշեղ) պատերազմ ընդ երկիրն Աղուանից, . . . Հարկանէր . . . զՈւտի և զՇակաշէն . . . և որ շուրջն էին զնովաւ գաւառք. և զԿուր գետ որպէս և յառաջն լեալ էր՝ ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն Հայոց սահման արարեալ կացուցանէին» (Բուզ. Ե. ԺԳ.)։ «Ապա խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց. . . և զբդեաշխն Գուգարաց որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց՝ կալեալ գլխատէր. . . և զհին սահմանսն որ յառաջուն էր լեալ ընդ երկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր՝ այնուհետև յինքն վարեալ դառնայր անտի» (Բուզ. Ե. ԺԵ.)։

24. Եկեսցուք այժմ ի պատմութիւնն Արամայ, որ քան զպատմութիւնն Հայկայ ընդարձակ է, ուստի և աւելի անտեղի է Ասորեստանի դիւանի մը կամ տարեգրի մէջ գրուած հաւատալ զայն։ Բաւական համարելով սակայն ինչ որ ասացաւ զայսմանէ՝ քննենք միայն համառօտիւ Արամայ պատմութեան ուրիշ կէտերը։ Բայց հարկ կը համարինք հոս ի մէջ բերել նախ Խորենացւոյն զարմանալի խոստովանութիւնը զՄարիբասեան աղբերէն։ Զարմանալի է արդարև, որ մեր ծերունի պատմիչն յետ ասելոյ յԹ. գլուխ առաջին գրոց պատմութեան իւրոյ, թէ Մար Իբաս հանեց մեր ազգին *ճշմարիտ* պատմութիւնը Նինուէի դիւանին մէջ Աղեքսանդրի հրամանաւ յունարէն թարգմանուած քաղդէական մատենէն, որ ունէր «զբուն հնոց և զնախնեացն բանս»՝ ի ԺԴ. գլուխ նոյն գրոց, յետ յանդ հանելոյ զպատմութիւնն Արամայ՝ յանկարծ, որպէս թէ ինքն իսկ տարակուսելով՝ առարկութիւն մը կը ջանայ լուծել սա կերպով. Թող, ասէ, չտարակուսի ոք, թէ ընդէր այսոքիկ (ի Հայկայ մինչև ցԱրամ պատմեալքն) Ասորեստանի թագաւորաց կամ մեհենից գրոց մէջ յիշուած չեն։ Նախ՝ վասն զի յառաջ են քան զժամանակն Նինոսի, մինչ ոչ ոք այսպիսեաց (այսինքն պատմութիւն գրելու) փոյթ ունէր. երկրորդ՝ հարկ ևս չէր նոցա (Ասորեստանեայց) ուրիշ ազգաց օտար և հեռաւոր երկիրներու հին լուրերն և աւանդութիւնները գրել ի մատեանս թագաւորաց և մեհենից իւրեանց, մանաւանդ զի պարծանք և պատիւ չէր նոցա օտար ազգաց արութիւն քաջութեան։ Յիշէ և այլ ինչ պատճառ նոյն մատենագիր

(Մար Իբաս), թէ որովհետև հպարտ և անձնասէր էր Նինոս և կամէր աշխարհակալութեան և ամենայն քաջութեան և լաւութեան հեղինակ զինքն ցուցանել՝ շատ մատեաններ, որ զարութիւնս յառաջագունից քան զնա յիշատակէին՝ եա այրել բազում ուրեք, իւրոյ ժամանակին մարդոց գործերն ևս գրել դադրեցնելով իւր գործերը միայն գրել կու տար։ Բայց (ինչ որ մենք պատմեցինք զհայոց) թէպէտ գրուած չէին ի պատմութիւնս բուն Թագաւորաց և մեհենից՝ սակայն, որպէս Մար Իբաս ասէ, փոքր և աննշան արանց ոմանց ձեռօք երբեմն ժողովուած և պահուած էին յարքունի դիւանին Նինուէի։ Ահա Խորենացւոյն բուն խօսքը. «Բայց թէ ընդէր այսոքիկ ի բուն մատեանս Թագաւորացն կամ մեհենիցն (Ասորեստանեայց) ոչ յիշատակեցան՝ մի ոք ընդ այս երկբայեսցեալ տարակուսեսցի։ Մի՝ զի յառաջ քան զՆինոսի ժամանակս Թագաւորութեանն է, յորում ոչ ոք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր. երկրորդ՝ զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարևորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեայ և զհամբաւս հինս և բզ-գրոյցս նախնականս յիւրեանց Թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել, մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ նոցա և ոչ բարգաւաճանք (էին) օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան։ Բայց թէպէտև ոչ ի բուն մատեանսն՝ սակայն, որպէս Մար Իբաս կատինայ պատմէ, ի փոքունց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց։ Ասէ և այլ իմն պատճառս նոյն այր (Մար Իբաս), թէ որպէս ուսայ, հըպարտ և անձնասէր գոլ Նինոս, կամելով զինքն միայն աշխարհակալութեան և ամենայն քաջութեան և լաւութեան ցուցանել սկիզբըն՝ հրամայէ զբազում մատեանս և զգրոյցս առաջնոցն, ըստ տեղեաց տեղեաց և որ ուրուք գործոց քաջութեան՝ այրել. իսկ որ առ իւրովք ժամանակօք՝ դադարեցուցանել, և որ ինչ վասն իւր միայնոյ՝ գրել»։ Ի բանից աստի Խորենացւոյն կը հետևի ուրեմն, թէ Հայկազանց կոչուած պատմութիւնն, ի Հայկայ մինչև ցԱրամ, ոչ թէ ի ժամանակակից մարդոց գրուած ստոյգ պատմութիւն է՝ այլ յետ Նինոսի աննշան մարդոց ձեռօք անուն և ժամանակն անյայտ երբեմն հաւաքուած գրոյցք։ Զարմանալի է նախ, թէ ինչպէս գուսանական երբեմն այսպիսի երկայն և մանր պատմութիւն մը կրցաւ հաւաքուիլ, և փոքր և աննշան մարդոց ձեռամբ երբեւէ հանուած հաւաքածոյ մը մուծաւ ի դիւան արքունի։ Երկրորդ՝ եթէ Ասորեստանցիք չունէին պէտս, և ոչ պարծանք և բարգաւաճանք էին նոցա օտար և հեռաւոր ազգաց գրոյցներն ի մատեանս Թագաւորաց իւրեանց գրել՝ ինչպէս նոյն գրոյցներն ի ձեռաց փոքր

և աննշան մարդոց առնլով դրին յարքունի դիւանին իւրեանց. ո՞չ ապաքէն հակասութիւն է այս։ Սա ևս չենք հասկնար, թէ թագաւորաց մատեաններուն և արքունի դիւանին մէջ ի՞նչ տարբերութիւն կայ։ Դիտողութեան արժանի միւս ևս կէտ սա է, զի Խորենացին, ինչպէս կ'երևի՝ կը կարծէ, թէ Նինոսի ժամանակ և յառաջ իսկ քան զնա, կար մատենագրութիւն, և ամենայն ուրեք կը գտնուէին մատեանք, դիւանք և տարեգիրք, որպէս էր առ իւրով ժամանակաւ, ուստի և ամէն տեղ մատեաններ այրել և նորեր գրել կու տայ Նինոսի, ուր, որպէս արդէն ասացաւ՝ շատ պատճառներէ յայտնի է, թէ զայնու ժամանակօք Ասորեստանեայց, Քաղդէացւոց և նոյին սահմանակից ազգաց մէջ ոչ մատենագրութիւն կար և ոչ մատեան. բևեռագիրք միայն կային, և աշխարհակալ թագաւորք ևեթ գործածած են այն գիրը գլխաւորապէս Նինուէի և Բաբելոնի կողմերը։

25. Դիտողութեան արժանի ուրիշ կէտ մը կայ հոս։ Մարիբասեան պատմութիւնն առ Արամաւ ենթադրելով զՀայաստան որոշ սահմաններով երկիր կամ թագաւորութիւն՝ կու տայ ոտնակոխ առնել այն սահմանները դրացի ազգաց — Մարաց, Ասորւոց և այլոց, և Արամայ՝ պաշտպանել, նա մանաւանդ ընդարձակել այն սահմանները։ Բայց այս գաղափարն հակառակ կու գայ նոյն Մարիբասեան պատմութեան, որ ինչպէս արդէն տեսանք՝ կ'ենթադրէ թէ Հայաստան կոչուած երկիրն, առ Հայկաւ և առ յաջորդօք նորա, անտէր և ամայի էր այնպէս, ինչպէս էր աստի դար մի յառաջ և ըստ մասին է տակաւին Ամերիկայի Միացեալ Նահանգաց արևմտեան մասը և Աւստրալիա։ Նահապետք, ըստ բազմանալ սերնդոց իւրեանց՝ կը տարածուէին ընդ ամայի երկիրն ընդ այն։ Մինչև ցԱրամ այսպէս էր ըստ ենթադրութեան Մար Իբասայ։ Յայսպիսում վիճակի չկարէր երկիրն ունել որոշ սահմաններ, բայց եթէ պարտինք ասել, թէ Հայք անձամբ անձին սահման գծած էին ինքեանց, թէ մինչև աստ լիցի Հայաստան. և Արամ այն երևակայական գիծն այսր անցնողներուն, իբրև Հայաստանի սահմանը կոխողներու դէմ պատերազմ բացաւ։ Երկրին այն ամայի ենթադրեալ վիճակին մէջ կրնային Հայք և ուրիշ հեռաւոր ցեղեր հակառակ ուղղութեամբ յառաջ խաղալ դէպ յերեարս, և այսպէս ի մերձենալ նոցա միմեանց՝ կարէր կռիւ ծագել ի մէջ նոցա, և յաղթողն հարկաւ մարթէր արդելուլ միւսոյն յառաջադիմութիւնը — կամ նուաճել զնա և ընդարձակուիլ, և կամ, եթէ երկոքին հաւասար էին ուժով՝ կը մնային ուր և հասած էին, և յայնժամ բնականապէս սահման կ'որոշուէր երկու ազգին մէջ։ Բայց մեր պատ-

մագիրն, իսր պատմութեան ենթագրեալ ժամանակին հանգամանաց հակառակ՝ զՀայաստան, Մարաստան, զԱսորիս, այլովքն հանդերձ կ'ենթադրէ որոշ սահմաններով արդէն իրարմէ զատուած երկիրներ, ուստի և Հայաստանի կու տայ արևելեան, հարաւային և արևմտեան սահմաններ, դրացի ազգաց կու տայ կոխել անցնիլ այն սահմաններն, և Արամայ՝ պաշտպանել զնոսին և անցնողներն ըստ սահման՝ հալածել։

26. Խորենացին, ըստ Մար Իբասայ, յետ տալոյ նուաճել Արամայ Հայոց արևմտեան կողման երկիրներն — զԿապադովկիա և զՓոքր Հայս, հրամայել բնակչացն «ուսանել զխօսս և զլեզուս հայկական», և «լնուլ զքաղում անբնակ երկիր բնակչօք»՝ կը յաւելու. «Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք, իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանն՝ մեզ ոչ է հաճոյ»։ Խորենացին Արամայ աշխարհակալութեան իբրև պատճառ մէջ կը բերէ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք կոչումներն, բայց կը խոստովանի, թէ Յոյնք այլազգ կը պատմէին, այլ թէ ինչպէս՝ չի յիշեր։ Գիտենք սակայն, թէ Առաջին, Երկրորդ, Երրորդ, և Չորրորդ, ինչպէս նաև Մեծ և Փոքր Հայք կոչումներն համեմատութեամբ յետոյ են յոյժ քան զժամանակն որ ընծայի Արամայ, և չկարեն ամենևին իբրև ապացոյց ծառայել Արամայ աշխարհակալութեան։ Արդէն (էջ 11, 13, 40 և 65) համառօտիւ խօսեցանք զվերոյիշեալ բաժանմանց, ինչպէս նաև զանուանց տուեալոց Հայաստանի այլևայլ ժամանակ։ Հոս հարկ կը համարինք ընդարձակագոյնս խօսել զայսցանէ։ Արմենիա անունն, որպէս տեսցուք ի ստորև՝ ի Դարեհէ Վշտասպեայ տրուեցաւ այն երկրին, զոր նախնի Սեմականք, յանուանէ Եբրայեցիք՝ կը կոչէին «Երկիր Արարատայ», և զոր մեք անուանեմք Հայաստան։ Դարեհ այսու անուամբ արար ուրոյն նահանգ Պարսից զՀայաստան, որ առ յաջորդօք նորա եղև սատրապութիւն, արևելեան և արևմտեան։ (Տես էջ 13, 67)։ Աղեքսանդր մեծ, որ Պարսից բոլոր երկիրներուն տիրեց՝ զԱրմենիա, որպէս և էրն, իբրև ուրոյն նահանգ յանձնեց կուսակալի մը։ Յետ Աղեքսանդրի Սելևկեանք երկու բաժնելով զԱրմենիա՝ զարևելեան մեծագոյն մասն յայնկոյս Եփրատայ կոչեցին Մեծ, իսկ զարևմտեան փոքրագոյն մասն յայսկոյս Եփրատայ կոչեցին Փոքր Արմենիա, և երկոքին յանձնուեցան կուսակալաց։ Մօտ յամն 189 նախ քան զՔր. Մեծ և Փոքր Հայք եղեն ուրոյն թագաւորութիւնք։ Ի Մեծ Հայս թագաւորեց Արտաշէս յարևելեան մասին առ Երասխաւ։ Ի Փոքր Հայս թագաւորեց Զարիադրիս (Զարեհ), որոյ ցեղը

տևեց մինչև 80 նախ քան զՔր.։ Այս թուականին էր որ Տիգրան մեծ զօրանալով միացուց բոլոր Արմենիա և ընդարձակեց իւր տէրութիւնը։ Յետ պարտութեան Տիգրանայ ի Հռոմայեցւոց և հրաժարելով դաշամբ (64) բոլոր երկիրներէն, զորս գրաւած էր արտաքոյ Մեծին Հայոց՝ Հռոմայեցիք գրաւեցին ընդ այլ գաւառս նաև զՓոքրն Հայս, և բաժնելով զնա յԱռաջին, յԵրկրորդ և յԵրրորդ Հայս՝ կու տային Փոքուն Ասիոյ թագաւորաց, դաշնաւորաց իւրեանց, իբրև յաւելուած իշխանութեան նոցա, մինչև Վեսպասիանոս որ արար նահանգ զերկիրն (Տակիտ. ԺԱ. 9, ԺԳ, Յովս. Նախն. պտմ. Ի. 5)։ Չորրորդ Արմենիա անունն, որ Մեծին Հայոց Ծոփաց նահանգին տրուեցաւ՝ աւելի նոր է։ Յետ անցանելոյ արևմտեան մասին Հայոց ի Յոյնս մօտ ի վախճան թագաւորութեան Արշակունեաց՝ Ծոփաց նահանգը կոչուեցաւ Չորրորդ Արմենիա, զոր յետոյ Յուստինիանոս (527—565) առնելով ուրոյն դքսութիւն՝ ասէ. «Կը հաստատենք նաև զՉորրորդն Արմենիա, որ առաջ, մինչ Հռոմէական նահանգ չէր՝ ուրիշ ազգի կը վերաբերէր, և կը բաղկանար խժական անուններէ, ինչպէս Խորձէն, Հանձիթ, Ծոփք, Հաշտեանք, Բալահովիտ, այլովքն հանդերձ։ Սոքա հռոմէական մեծութեան վայելուչ անուններ չէին և ոչ մեր նախնիներէն դրուած, այլ օտար տէրութենէ։ Ուստի զարդարելով զայս գաւառ մեծութեամբ և պատուով՝ առնեմք զնա դքսական իշխանութիւն» (Յուստ. Նոր Հրամ. ԼԲ.)։ Այս է Հայաստանի Մեծ և Փոքր, ինչպէս նաև Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք բաժանմանց պատմութիւնը, ոչ թէ այն, զոր Խորենացին և յետնագոյն հեղինակք ի նմանէ առեալ կը պատմեն։

27. Գանք այժմ այլևայլ անուանց տուելոց Հայաստանի այլ և այլ ժամանակ։ Յայտնի է, թէ երեք անուն տրուած է ի սկզբանէ մեր ազգին կամ երկրին—Արարատ, Արմենիա և Հայք։ Արարատ է շատ հին տեղական կամ աշխարհագրական անուն։ Արարատայ երկիր անունը կը գտնենք ի կիր արկեալ արդէն յՌ. դարուն նախ քան զՔր. առ Եբրայեցիս (Եզ 39) փոխանակ Հայաստանի, բայց թէ որչափ ընդարձակ կը կարծուէր յայնժամ Արարատ կոչուած երկիրը՝ յայտնի չէ. սաչափ միայն գիտենք, թէ Եբրայեցւոց Արարատ կ'իմացուէր Արմենիա, և այսպէս թարգմանուած կը գտնենք յետոյ այս բառը (Եզ 11, 5)։ Արարատ անունն ի վաղուց ծանօթ կ'երևի նաև ազգին։ Առ հնագոյն մատենագիրս մեր, առ Ագաթանգեղեայ և Բուզանդայ՝ զԱրարատ անունն իբրև արդէն ծանօթ ազգին՝ կը գտնենք տրուած Հայաստանի կեդրոնական նահանգին, և թերևս դրացի Սեմականք ընիկներէն ուսան այսպէս կո-

չել ոչ միայն Արարատեան նահանգը և Թագաւորութիւնը (էջ 11. 39), այլ և զբոլոր Հայս։ Բայց թէ ընդէր յոյն մատենագիրք, Հերոդոտոս անգամ, Արմենիա միայն գիտեն և ոչ Արարատ, և Արմենիա անունը կու տան նաև երբ երկրին հին պատմութեան վրայ կը խօսին՝ պատճառն այս է, զի յոյն մատենագրաց բոլորը գրած են յետ Դարեհի Վշտասպեայ, առ որով մուծաւ Արմենիա անունը։

Թէ որ լեզուի բառ է Արարատ և ինչ կը նշանակէ՝ չենք գիտեր։ Ի զուր է Խորենացւոյն, պատմական անձ համարելով զԱրայ, ջանալն հանել զԱրարատ յանուանէ նորա, իբրև Արայի դաշտ։ Նայելով մեր արդի տեղեկութեանց զհին լեզուաց և զպատմութենէ՝ լաւագոյն է այսպիսի վաղեմի, գրեթէ նախապատմական անուններ ստուգաբանելէ հրաժարել, քան մեկնութիւններ տալ նոցին ըստ քմաց։

Գալով Արմենիա, ըստ Պարսից Արմին կամ Արմնիք բառին՝ անունս այս, որպէս ասացաք (էջ 65), համեմատութեամբ նորագոյն է քան զանունն Արարատ, և բոլոր Հայաստանի, այն է Մեծ և Փոքր Հայոց համար գործածուած կը գտնենք առաջին անգամ յարձանագրութիւնս Դարեհի Վշտասպեայ (510 նախ քան զՔր.)։ Այս թագաւորը նուաճելով բոլոր միջին և արևմտեան Ասիա մինչև յԵգէական ծով՝ այս նուաճեալ երկիրներուն հիւսիսային մասն, ի Մարաց մինչև ի Կապադովկիա, և Կորդուաց լեռներէն մինչև Կուր գետ, այսինքն բոլոր այն երկիրը, զոր մեք Մեծ և Փոքր Հայք անուանեմք՝ արար ուրոյն նահանգ կամ սատրապութիւն Արմին անուամբ, զոր Յոյնք իւրեանց բարբառով կոչեցին Արմենիա։

Արմին կամ Արմէն բառին ևս նշանակութիւնն անծանօթ է մեզ։ Խորենացին ինչպէս զԱրարատ յԱրայէ՝ նոյնպէս զԱրմէն կամի հանել յԱրամայ, որպէս թէ մեծութիւն Արամայ անուան եղև պատճառ զի օտար ազգեր կոչեցին զմեզ Արմէն, այսինքն Արամեան։ Կ'երևի թէ առ Ստրաբոնիւ կար հին ինչ աւանդութիւն առ Յոյնս զանուանէն Արմենիա.— «Վերը յիշեցինք», ասէ Ստրաբոն, թէ ինչպէս Թեսաղացին Արմենոս, թողլով իւր ծննդեան քաղաքը զԱրմենիոն՝ գնաց զկնի Յասոնի և այս դիւցազնին հետ մտաւ մինչև ի սիրտ Արմենիոյ. արդ, եթէ պարտ է հաւատալ պատմագրացն Կիւրսիլղայ Փարսաղացւոյ և Մեդեայ Լարիսացւոյ, երկոքին ևս ընկերք զինուց Աղեքսանդրի՝ այս Արմենոսի պարտի Արմենիա զիւր անուն» (Ստրաբ. ԺԱ. 12)։ Բայց Յասոնի, Արգիական նաւորդաց գլխաւորին անունէն յայտնի է, թէ այս աւանդութիւնն առասպելական է։ Եւրոպացիներէն ևս ոմանք այլևայլ ազգ ջա-

նացին մեկնել զանունն Արմենիա։ Ոմանք Սեմայ որդւոյն Արամայ անուանէն կը հանեն, ինչպէս Հարդման։ Ըստ Պոշարի՝ Արմենիա է Հար—Միննի, այսինքն՝ Միննւոյ կամ Մինիասայ լերինք, հարը մեկնելով իբր հար – լեռն։ Կայ ի գիրսն որ կոչի Ասխա՝ զԱրմենիա կ՚ստուգաբանէ երկնաւոր լեռան, զանդկերէն մինու, պարսկերէն մինէ բառէն, որ կը նշանակէ երկինք, երկնագոյն, երկնային։ Բայց այս ստուգաբանութեանց և ոչ մին ընդունելի է ըստ մեզ։ Արմէն անունը, որպէս արդէն ասացաւ՝ տրուեցաւ ի Դարեհէ Վշտասպեայ և է հաւանականապէս բառ Զենտաւեստի, ուր երկիրն յարևմտից սահմանակից Մարաց՝ կոչուած է Երիմէն։

Կը մնայ Հայ անունը։ Հայ ազգային անուն էր, այսինքն Հայք միայն կու տային զայս անուն իւրեանց ազգին և երկրին։ Ըստ մեզ՝ Հայ բուն Արարատայ ժողովուրդն էր, որոյ անուն և լեզուն տարածուեցաւ ընդ բոլոր Արմենիա առ Արշակունեօք, որ տիրելով նախ Արարատեան նահանգին՝ տակաւ միացուցին բոլոր Արմենիա ընդ իւրեանց ձեռամբ։ Արդարև դիտողութեան արժանի է, զի Հայաստանի հին աշխարհագրական անուանք յԱրարատեան նահանգին և ի մօտակայս նորա մեծաւ մասամբ հայերէն են, և որչափ կը հեռանանք այն կեդրոնէն՝ այնչափ կ՚սկսին օտարանալ անուանք տեղեաց։ Բաւական ապացոյց է այս, թէ մեզ ծանօթ հայերէնն բուն Արարատայ նահանգին և թագաւորութեան լեզուն էր, ուստի և ի բնէ Հայ՝ Արարատ բնակող ցեղն էր։

Մինչև ցարդ կարելի չեղաւ գտնել նաև զնշանակութիւն Հայ անուան։ Գլաբրոթ ի գիրսն, որ կոչի «Վաճառականութիւն ի Վիրս»՝ Վրաց աւանդութենէ մը առնլով ասէ, թէ Հայք, Վիրք, Լեկիք (Լազք), Մինկրէլք և Կովկասացիք էին ի միոջէ նախահօրէ, որ կը կոչուէր Թարգամոս (Թորգոմ)․ և ուրիշ գերմանացի ճամբորդ մը, Կուլտէնշտադ, կը յաւելու, նոյնպէս յաւանդութենէ Վրաց, թէ Թարգամոս էր հայր եօթն որդւոց, որոց երէցն էր Աւոս, Հայոց նախնին։ Աւելորդ է ասել թէ այսպիսի աւանդութիւնք յառասպելաց սակի են։ Խորենացին զՀայս կամի հանել ի Հայկայ, ինչպէս յայտնի է, իբրև ի նահապետէն Հայոց։ Բայց ինչպէս Արմենակ Արմէն բառին՝ նոյնպէս Հայկ Հայ անուան նուազականն է, ուստի և իբրև ածանց նորա կ՚ենթադրէ Հայ բառն, այնպէս որ եթէ մին ի միւսէն ելած է՝ աւելի բանաւոր է զՀայկ համարել ելեալ ի Հայէ, քան զՀայ ի Հայկայ։ Մարթ էր թերևս ենթադրել, թէ Հայկ երևելի անձ կամ դիւցազն կամ աստուածութիւն էր ժամանակաւ յազգին, և ազգը յանուն նորա կոչեցաւ Հայ․ բայց Հայ և Հայկ անուանց մերձաւորութիւնն միայն ըստ հնչման՝ բաւական չէ տալ

ենթադրել զայս․ հարկ էր թէ գէթ աւանդութիւն մը գտնուէր յազգին, թէ Հայք ի Հայկայ են, կամ թէ Հայկ՝ նահապետ էր ազգին․ բայց այսպիսի աւանդութիւն մը, որպէս ցուցաւ էջ 3—5 չկար յազգին մինչև Խորենացին։

Արդի լեզուագէտ մը (Տ. Յովհ. Հիւնք.) Հայկ անունը կը համարի սեմական աստեղագիտութեան Այուք բառը, որ է անուն Կասիոպէ համաստեղութեան․ նախնիք մեր չկարելով ընտրել Կասիոպէն Օրիոնէ՝ այս վերջնոյն սեպհականած են Հայկ (Այուք) անունը։

Իսկ Հայ բառին համար չէ անդէպ ասել, թէ է սեմական բառն հայ—կենդանի, զոր ընտրած են ինքեանց նախնի Արարատեանք, թելադրեալ իրենց դրացի արիական ազգին զենտ կամ զանդիկ կոչմանէն, որ կը նշանակէ կենդանի։ Զայսօսիկ կը դնենք գիտնոց հետազօտութեան առջև իբրև թելադրութիւն։

28. Ըստ Մարիբասեան պատմութեան, որպէս թէ Նինոս ի համբաւոյ ուսեալ, թէ նախնին իւր Բէլ սպանեալ էր ի Հայկայ՝ ոխ ունէր ի սրտին ընդդէմ Հայոց և առիթ կը խնդրէր քաջին Հայկայ սերունդը ջնջել երկրիս երեսէն. բայց խորհելով թէ թշնամանալն ընդ Արամայ կարէր վտանգ բերել իւրում թագաւորութեան՝ ծածկելով գչարութիւն իւր կը հրամայէ Արամայ անկասկած վարել գիշխանութիւնն, և համարձակութիւն տայ նմա մարգարտէ վարսակալ կապել և երկրորդ իւր կոչել։ Շատ անհաւանական, մանաւանդ թէ անտեղի է քաղդէական մատենի մը մէջ յիշուած հաւատալ այսպիսի պատմութիւն մը, ուր Նինոս յայտնապէս կը նախատուի իբրև ոխակալ, անիրաւ, չարասիրտ, միանգամայն երկչոտ և վատ․ իսկ Հայք կը նկարագրուին իբրև քաջ, հզօր և ահեղ քան զԱսորեստանեայս․ հակասական է նոյնպէս, յետ ասելոյ թէ Նինոս կամեցաւ վրէժ խնդրել ի Հայոց, բայց չհամարձակեցաւ՝ յաւելուլ, թէ Նինոս հրամայեց Արամայ անկասկած վարել գիշխանութիւնն, վարսակալ ածել մարգարտէ և երկրորդ իւր կոչել։ Յայտնի է, թէ այս պատմութիւնն առնուած է ոչ թէ քաղդէական աղբերէ, այլ ի Դիոդորոսէ Սիկեղացւոյ, որ ինչպէս այլուր յիշուեցաւ՝ կը պատմէ զՆինոսէ, թէ յաղթելով Հայոց, կալաւ զթագաւոր նոցա Բարզանէս (Վարդան), այլ ետ նմա հաստատել զնա միւսանգամ յիշխանութեան։ Մար Իբասայ պատմութեան հեղինակն այս պատմութիւնը կը զարդարէ Հայոց պատիւ և Ասորեստանեաց նախատինք բերող պարագաներով։

29. Գանք այժմ թուականին զոր կու տայ Խորենացին Նինոսի և Արամայ, առնլով, որպէս ասէ՝ ուշիմ և ընթերցասէր Ասորիէ մը և Աբիւդենոսէ, բայց առած է Եւսեբեայ Քրոնիկոնէն։ Խորենացին ի Ե. գլուխ առաջին գրոցն՝ Սեմայ ազգաբանութիւնը դնելով

մինչև ցԱբրահամ՝ կը յարէ ի նոյն Նոյի միւս երկու որդւոց—Քամայ և Յաբեթի ազգաբանութիւնը միևնոյն թուով անձանց, այսպէս.

Սեմ	Քամ	Յաբեթ
Արփաքսաթ	Քուշ	Գոմեր
Կայնան	Մեստրիմ	Թիրաս
Սաղայ	Նեբրովթ	Թորգոմ
Եբեր	Բաբ	Հայկ
Փաղեկ	Անեբիս	Արմենակ
Ռագաւ	Արեղ	Արմայիս
Սերուք	Քայաղ	Ամասիա
Նաքովր	Արբեղ	Գեղամ
Թարայ	Նինոս	Հարմայ
Աբրահամ	Նինուաս	Արամ

Խորենացին ցուցնելու համար այս ազգաբանութեանց ուղղութիւնը՝ կը բերէ «ուշիմ և ընթերցասէր Ասորւոյ» մը, զորոյ անունը չի յիշեր, և Աբիւդենոսի (զոր երբէք տեսած չէ, տես էջ 134) վկայութիւնը։

Այսպէս յիշուած գտանք, ասէ, յուշիմ և ընթերցասէր Ասորւոյ ումեմնէ, և հաւատարիմ թուեցաւ մեզ. . . վասն զի թէպէտ Քամայ ծննդոց (յաջորդաց) տարիներն մինչև ցՆինոս յիշուած չենք գտներ ուրեք, կամ առ մեզ հասած չեն, և ոչ իսկ Նինոսի թուականը, իսկ Յաբեթի ծննդոց տարիներն ամենևին՝ սակայն ազգաբանութիւնը զոր գրենք՝ հաւաստի է. այսինքն, երեք ցեղերուն (Սեմայ, Քամայ, Յաբեթի) ծնունդք մինչև ցԱբրահամ և ցՆինոս և ցմերն Արամ՝ են մետասան. և այս ճշմարիտ է՝ թող չերկբայի ոք, քանզի կը պատմէ զայս ի բազում իրս հաւատարիմն Աբիւդենոս, այսպէս. «Նինոս Արբէլեայ, Քայաղայ, Արբէլեայ, Անէբեայ, Բաբեայ, Բելայ»։ Նոյնպէս զազգաբանութիւն մեր ի Հայկայ մինչև ցԱրայն գեղեցիկ, զոր սպան փաւաշոտն Շամիրամ՝ կը թուէ այսպէս. «Արայն գեղեցիկ՝ Արամեայ, Հարմեայ, Գեղամեայ, Ամասեայ, Արամայիսեայ, Արամենակայ, որ եղև Հայկառակորդ, միանգամայն կենախուզ Բելայ»։ Զայս ասէ մեզ Աբիւդենոս յիւր առաջին արձանականին, ի մանր ազգաբանութեան, զոր յետոյ ոմանք բարձին։

«Այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշմագունէ ումեմնէ և յընթերցասիրէ Ասորւոյ, և հաւատարիմ թուեցաւ մեզ ասացեալն... զի թէպէտ և ամք ժամանակաց ծննդոցն Քամայ մինչև ցՆինոս ոչ ուրեք գտանին թուեալ, և կամ թէ առ մեզ ոչ հասեալ, այլ հաւաստեաւ և ոչ նորին ինքեան Նինոսի. իսկ մերոյն Յաբեթի՝ ամե-

նեւին ոչ. սակայն ասացեալ ազգաբանութիւնդ հաւաստի է. երեցունց ցեղիցն մետասան գոլով ցԱբրաամ և ցՆինոս և ցմերն Արամ… և է ճշմարիտ, և մի ոք յերկուասցի, քանզի պատմէ մեզ զայսոսիկ յոլով իրս հաւատարիմն Աբիւդենոս, և ասէ այսպէս. «Նինոս Արբէեղայ, Քայաղայ, Արբէեղայ, Անէբեայ, Բաբեայ, Բելայ»։ Նոյնպէս և զմերն Հայկայ մինչև ցԱրայն գեղեցիկ, զոր սպանեալ կաթոտն Շամիրամ՝ թուէ այսպէս. «Արայն գեղեցիկ՝ Արամեայ, Հարմեայ, Գեղամեայ, Ամասեայ, Արամախսեայ, Արամենակայ, որ եղև հակառակ Բելայ միանգամայն և կենախուզ»։ Եւ զայս մեզ Աբիւդենոս յիւրում առաջնում արձանականի ի մանր ազգաբանութեան ասէ, զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին»։

Այսպէս ըստ Խորենացւոյն Արամ և Նինոս լինին ժամանակակից Աբրահամու, ուստի և ըստ ժամանակագրութեան Եբրայեցւոց, աւելի քան 2,000 ամօք յառաջ քան զքրիստոնէական թուականն։ Բայց զՆինոս դնել առ Աբրահամաւ, այսինքն աւելի քան 2,000 ամօք նախ քան զՔր. պատմական չէ, և ոչ հաշիւ «ուշիմ և ընթերցասէր» Ասորւոյ կամ Աբիւդենոսի, այլ Եւսեբեայ, որ կ'առնու ի Կտեսեայ։ Կտեսիաս ի Շամիրամայ մինչև ցՅասոն կամ Արգոնաւորդաց նաւարկութիւնը կը դնէ հազար ամ. և որովհետև Արգոնաւորդաց նաւարկութիւնը կը համարուի իբր 1200-ին նախ քան զՔր.՝ ապա թուական Նինոսի ըստ Կտեսեայ լինի իբր 2200-ին նախ քան զՔր.։ Խորենացին ոչ զԿտեսիաս գիտէր, և ոչ զգիրս Դիոդորոսի տեսած էր, որպէս ինքն իսկ վկայէ (գիրք Բ. Ա.), այլ զԵւսեբիոս միայն ունէր, յորմէ որպէս բազում ինչ՝ նոյնպէս Նինոսի այս ժամանակագրութիւնն առած է։ Գիտելի է սակայն, զի զՆինոսէ և զՇամիրամայ գրուածներուն և ոչ մին պատմական յարգ ունի, քանզի յոյն պատմիչք որ խօսած են զՆինոսէ և զՇամիրամայ՝ դարերով յետոյ են քան զենթադրեալ թուականն Նինոսի և Շամիրամայ, և հաւաքելով գրած են արևելեայց աւանդութիւններէն միայն, որ շատ անգամ զգիս և զդիւցազունս կը դասեն ի կարգս թագաւորաց իւրեանց։ Նինոսի և Շամիրամայ գալով՝ ասեմք թէ ոչ միայն թուական նոցա, այլ և անձինք տարակուսական են։ Շամիրամայ համար գրեթէ ստոյգ է, թէ հին Քուշեանց Անահիտը կամ Աստղիկն էր (տես էջ 22). հաւանական է թէ նաև Նինոս Ասորեստանի Նինիբ աստուածն է, որ իբրև զԱթենասն Յունաց՝ իմաստութեան միանգամայն պատերազմի աստուած էր։

30. Մարիբասեան պատմութիւնն Արամայ յաջորդել կու տայ որդի նորա զԱրայ գեղեցիկ իբրև ժամանակակից Շամիրամայ. Որ հին աւանդութիւնն հուչակէ իբրև քան զայլ թագաւորս Ասո-

բեստանի իմաստուն, հզօր և աշխարհաշէն։ Մարիբասեան պատմութիւնն յետին ծայր վաւաշոտ ենթադրելով զՇամիրամ՝ յօդէ զնմանէ այն պատմութիւնը, զոր ի վեր անդ տեսանք (էջ 106-109), և որ արժանի է կոչուիլ, նոյն իսկ Խորենացւոյն բառով (Յաղագս Բիւր. Աժդ.)՝ *փծուն* առասպել. Կ'երևի թէ Մար Իբասայ Հայկազանց պատմութիւնն հաւաքելով Նինուէի դիւանը դնող Ասորեստանցին մասնաւոր դիտում ունէր պարսաւել Ասորեստանի թագաւորները. քանզի նաև հոս Շամիրամ, Ասորեստանի այն մեծ աշխարհաշէն թագուհին, կը վատահամբաւի իբրև անուանի բոզ, հոմանիներէ պաշարեալ, վհուկ, սնապաշտ, դիւապաշտ, միանգամայն անմիտ։ Արդարև զի՞նչ քան զայս մեծ անմտութիւն, Շամիրամայ պէս թագուհւոյ մը հեռաւոր մարդու մը զոր տեսած չէր, ի համբաւոյ միայն այնպէս սիրահարել, մինչև ստէպ պատգամաւորօք կոչել զնա ի Նինուէ, և որպէս թէ բոլոր Ասորեստանի մէջ գեղեցիկ երիտասարդ կը պակսէր այնպիսի տիկնոջ՝ այն տաժանելի արշաւանքն յանձն առնլով՝ բազմագունդ զօրօք գալ յԱսորեստանէ ի Հայաստան և պատերազմ տալ, զօրապետներուն այն անիմաստ պատուէրը տալով՝ չսպաննել զԱրայ ի կռուին։ Ոչ ինչ ընդհատ զարմանալի էր Հայոց զԱրայ ողջացած հաւատալը՝ Ի ստորև պիտի տեսնենք, թէ ո՛վ էր Արայ. առ այժմ հետևինք պատմութեան կարգին։

Ըստ Մարիբասայ, Շամիրամ իւր հոմանիներէն մին զարդարելով՝ համբաւեց, թէ Արայ էր, զոր աստուածք լիզելով ողջացուցին, և Հայք, որ ի պատերազմ գրգռեալ էին առ ի խնդրել զվրէժ թագաւորին իւրեանց ի Շամիրամայ, լսելով զայս՝ հանդարտեցան։ Այս պատմութենէն կը հետևի, թէ Հայք զԱրայ արդեամբ ողջացած հաւատացին։ Զարմանալի է արդարև, թէ ինչպէս Հայք, գէթ նախարարները, որ հարկաւ տեսան այն յարուցեալ կարծուած սուտ Արայն՝ խաբուեցան, զբուն զԱրայն կարծելով զնա։ Մար Իբասայ այս պատմութենէն սա ևս կը հետևի, թէ սուտ Արայն, զոր Շամիրամ զարդարելով դրաւ ի տեղւոջ Արայի՝ թագաւորեց գէթ առժամանակ մի. բայց պատմութիւնը մոռանալով զայս և առանց ամենևին յիշելոյ, թէ ինչ եղաւ սուտն Արայ՝ ասէ, թէ Շամիրամ յետ մահուանն Արայի գեղեցկի թագաւորեցոյց Հայոց զորդի նորա զԿարդոս, որ ի Նուարդայ սիրելի կնոջէ նորա ծնած էր, առ խանդաղատանացն, զոր ունէր առ Արա՝ նորին անուամբ կոչելով Արայ։

31. Խորենացին յետ պատմելոյ Շամիրամայ սիրահարութիւնն ընդ Արայի, պատերազմը և շինութիւններն ի Հայս՝ կը յաւելու զնկարագիր կենաց և մահուան Շամիրամայ, առնլով յԵւսեբեայ

Քրոնիկոնէն, ուր յիշուած են ի յոյն պատմչաց—ի Կտեսեայ Դիոդորոսէ, ի Կեփաղիոնէ և յայլոց մահ և թաղումն Նինոսի ի Նինուէ, թագաւորելն Շամիրամայ, պատերազմն ընդ Զրադաշտի ուրումն արքայի Բակտրիացւոց, Շամիրամայ որդւոց կոտորածն ի նմին իսկ ի Շամիրամայ, պատերազմն ի Հնդիկս, պարտութիւն և փախուստ նորա և մահ յիւրուրոյն որդւոյ ի Նինուասայ։ Բայց Խորենացին ճշմարտագոյն կը համարի Մարիբասայ պատմութիւնն, իբրև բուն Քաղդէացւոց մատեաններէն առնուած և համաձայն Հայոց առասպելներուն զՇամիրամայ.—«Այլ հաւաստի թուեցաւ մեզ որ ի Մար Աբայն Կատինայէ քննութիւն քաղդէական մատենին քան զայսոսիկ (զպատմեալսն ի Յունաց)․ քանզի ոճով իմն ասէ։ . . . Առ այսոքիւք և աշխարհիս մերոյ առասպելք զբազմահմուտ Ասորին արդարացուցանեն» (Խոր. Ա. ԺԸ.)։

Ըստ Մար Իբասայ, Շամիրամ ի գալ իւրում ամի ամի յիւր ամարանոցի քաղաքն ի Վան, զոր շինեաց ի Հայս՝ կուսակալ կը թողուր Ասորեստանի և Նինուէի զԶրադաշտ մոգ նահապետ Մարաց։ Այսպէս առնելով երկար ժամանակ՝ հուսկ ուրեմն բոլորովին հաւատաց ի նա զիշխանութիւնն . . . ։ Որովհետև շատ կը սիրէր Շամիրամ իւր հոմանիները՝ բոլոր իշխանութիւնը և գանձը պարգևեց նոցա, անփոյթ առնլով զորդիս իւր, որոց ի չափ հասեալ՝ կը խրատէին զնա թողուլ դիւական տռփանքը և աւանդել զիշխանութիւն իւր և զգանձս որդւոց իւրոց։ Այլ Շամիրամայ ևս աւելի զայրացեալ՝ կ'սպաննէ բոլոր որդիները, և կրտսերն Նինուաս միայն կ'ազատի։ Իսկ Զրադաշտ յանցաւոր գտնուելով առ տիկինն՝ կ'ապստամբի. Շամիրամ պատերազմ կը բանայ ընդդէմ Զրադաշտի և յաղթուելով կը փախչի ի Հայս, ուր պատեհութիւն գտնելով Նինուաս՝ կ'սպաննէ և ինքն կը թագաւորէ։

«Սա (Շամիրամ) հանապազ յամառնայինսն ի խաղալն իւր ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի, զոր շինեաց ի Հայս՝ կողմնապետ Ասորեստանի և Նինուէի թողու զԶրադաշտ մոգ և նահապետ Մարաց։ Եւ ի բազում ժամանակս զայս այսպէս կարգեալ Շամիրամայ՝ ամենևիմբ հաւատայ նմա արդարև զիւր իշխանութիւնն։ . . . Բարեկամացաւ հոմանեաց իւրոց, պարգևելով զամենայն իշխանութիւնն և զգանձս, ոչինչ վասն որդւոց իւրոց ունելով փոյթ յանձին։ Իսկ ի հասակ և ի տիս հասեալ որդւոց նորա՝ մեղեցուցանեն նմա զայս ամենայն, կարծելով ցածուցանել զնա ի դիւական մրցական տռփանացն, և աւանդել զիշխանութիւն և զգանձս որդւոց իւրոց։ Ընդ որ առաւել զայրագնեալ՝ սատակէ զամենեսեան, և մնաց Նինուաս միայն, որպէս վերագոյն ասացաք։ Ի լինել

ինչ սխալանաց Զրադաշտի առ տիկինն և հակառակութեան ի ներքս անկանելոյ՝ պատերազմի ի վերայ նորա Շամիրամ, քանզի բռնանալ ի վերայ ամենայնի խորհէր այրն։ Եւ ի սաստկանալ պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս։ Այս ժամանակ վրէժխնդրութեան պատեհի գտեալ Նինուաս՝ սպանանէ զմայրն, և ինքն թագաւորէ ի վերայ Ասորեստանի և Նինուէի»։

Այս պատմութիւնն հերքել ջանալ աւելորդ է, քանզի թող զի Շամիրամ և Զրադաշտ պատմական անձինք չեն և բոլոր պատմութիւնը վէպ է՝ կայ նաև հակասութիւն պատմութեան մէջ։ Զարմանք է, թէ ինչպէս Շամիրամ, որ բոլոր իշխանութիւնը հաւատացած էր Զրադաշտի՝ կրցաւ նոյն իշխանութիւնը միանգամայն իւր հոմանիներուն պարգևել։ Անտեղի է նաև Ասորեստանի արքունի մատեաններուն մէջ նկարագրուած հաւատալ (եթէ կային մատեանք) այն մեծագործ և հզօր թագուհին այրասպան, որդեսպան, «ախտասէր», «չարասէր», և առ «վաւաշ պոռնկական բարուց», և «ի դիւական տոփանաց»՝ տէրութեան իշխանութիւնը և գանձը հոմանիներուն մատնող։ Արդարև յոյն պատմիչք ևս այս մոլութեանց շատը կու տան Շամիրամայ, բայց Յոյնք ոչ թէ «քաղդէական մատեաններէ» կ'առնուն, այլ յաւանդութենէ Մարաց և Պարսից, որ թշնամի էին Ասորեստանեայց։

Գալով Շամիրամայ և Զրադաշտի պատերազմին՝ ասեմք թէ այս պատմութիւնն այլաբանութիւն է և կը նշանակէ Արիականաց հին ցեղային կռիւն ընդ Քուշեանս, որ կ'իմացուին Շամիրամաւ, ինչպէս Արիականք՝ Զրադաշտիւ։ Արդարև ասի, թէ ի միում ի յետին կրօնական գրոց Պարսից կը յիշուի Շամիրամայ պատերազմն ընդ Զարաւըշտի, իբրև ամբարիշտ ցեղի մը ընդ բարեպաշտի. և, ըստ մեզ՝ Հայոց առասպելն զՇամիրամայ Պարսից կրօնական երգերէն առնուած էր, ինչպէս Տիգրանայ և Աժդահակայ կռիւն Վէտայէն առնուած վէպ է (տես էջ 51) Զենտի միջոցաւ։ Այսպէս նաև Արայի և Շամիրամայ սիրահարութեան պատմութիւնն արևելեան ազգերէն շատերուն ծանօթ բարոյական առասպելի մը նմանութիւնն է։ Շամիրամ Ասորեստանեայց, կամ մանաւանդ Քուշեանց աստուածուհին էր, իբրև Յունաց Ափրոդիտէն կամ Արտեմիսը։ Օրիոնի առասպելն արդէն յիշեցինք (էջ 4.), այսինքն թէ ինչպէս Արտեմիս սիրահարեալ Օրիոնի, որ էր երիտասարդ գեղեցիկ և արհամարհեալ ի նմանէ՝ բարկանալով ետ խայթել զնա կարճի, բայց յետոյ զղջալով ողջացուց զնա և փոխեաց յերկինս, ուր Օրիոն է մին ի գեղեցկագոյն համաստեղութեանց։ Միևնոյն է Արայի առասպելն։ Շամիրամ, արևելեան Անահիտն, կը սիրէ զԱրայ (գե-

ղեցիկ), կ՚արհամարհի ի նմանէ, նիւթէ զմահ նորա, բայց զղջալով կը ջանայ ողջացնել զնա, և որ ի կարգին։ Կանացի հրապուրանաց դէմ արական զգաստութեան այս այլաբանական օրինակը կը գըտնենք նաև ի դիցաբանութեան ուրիշ արևելեան ազգաց, զորօրինակ Փիւնիկեցւոց, Եգիպտացւոց և Եբրայեցւոց, ինչպէս յայտնի է Յովսեփայ գեղեցկի պատմութենէն։ Պատմութեան էական մասը միևնոյն է յամենեսին. միշտ կին մը դարան կը գործէ գեղեցիկ երիտասարդի մը զգաստութեան, և արհամարհուելով դաւաճանութիւն կը նիւթէ, բայց ի վերջոյ առաքինութիւնը կը բարձրանայ յաղթանակաւ։

32. Խորենացին, ինչպէս տեսանք էջ 110, յետ պատմելոյ ի ԺԸ. գլուխ առաջին գրոցն զմահն Շամիրամայ, յաջորդ գըլխոյն մէջ կը դնէ յԱնուշաւանայ մինչև Սկայորդին իբր 26 կամ 27 հայ իշխանաց «ծննդաբանութիւնը», կամ լաւ ևս է ասել՝ յաջորդութեան ցուցակը, և այս իշխանաց թիւն հաւասար գտնելով թուոյ եբրայեցի իշխանաց՝ որ այն միջոցին ապրեցան, այս հաւասարութիւնն իբրև ստուգութեան ապացոյց կը համարի իւր աշխատութեան.—«Հաւասարութիւն թուոյ կարգի պատանեաց՝ զճշմարտութիւն աշխատասիրութեանս մերոյ ակնարկէ» (Խոր. Ա. ԺԹ.)։ Բայց միթէ Մար Իբաս գտաւ յԱնուշաւանայ մինչև Սկայորդին իբր 27 հայ իշխան—Պարէտ, Արբակ, Սուր, Ամպակ, Առնակ, Նորայր այլովքն հանդերձ, քաղդէական մատենին մէջ, հաւասար թուոյ եբրայեցի իշխանաց, թէ Խորենացին կամ այլ ոք, Անուշաւանայ կարծեցեալ ժամանակէն մինչև ի կարծեցեալ ժամանակ Սկայորդւոյն ապրող եբրայեցի իշխանաց թուոյն համեմատ հայ իշխանաց անուններ ստեղծեց. քանզի, որպէս ասացաք այլուր՝ աւելի հաւանական է այն անունները ենթադրել շինուած, քան թէ քաղդէարէնէ յունարէն թարգմանուած մատենի մը մէջ գրուած և ուղիղ առոգանութեամբ և ուղղագրութեամբ ի հայ փոխուած։

Բայց թողլով այս խնդիրը՝ գանք պատմութիւնը քննել։ Խորենացին ժամանակին միջոցը որ յԱնուշաւանայ մինչև Սկայորդին՝ կը համեմատէ ժամանակի այն միջոցին, որ է ի Նինուասայ մինչև ի կործանումն Ասորեստանեայց պետութեան ի ձեռն Վարբակայ ըստ Կտեսեայ, այսինքն 1896-էն մինչև 880 նախ քան զՔր., միջոց մը, որ կը պարունակէ աւելի քան 1000 տարի։ Զարմանք է սակայն, թէ ինչպէս Մարիբասեան մատեանը չի գտներ արժանի ինչ յիշատակաց այս հազար տարուան մէջ։ Արդարև Խորենացին այս ժամանակէն կը յիշէ ինչ ինչ, բայց ոչ ի Մար Իբասայ, այլ որպէս ինքն ասէ, «ի գրոց և ի բանից արանց իմաստնոց և յայսոսիկ քաջախոհակաց»

(տես էջ 111)։ Առաջին դէպք յիշեալ ի Խորենացւոյն ի վերոյիշեալ հազարամեայ ժամանակէն՝ է քանանացի ցեղի մը գաղթականութիւնն ի Հայս։ Խորենացին քանանացի ցեղին գաղթականութիւնը կը պատմէ այսպէս. Ի կոտորելն, ասէ, Յեսուեայ զՔանանացիս՝ երևելիք ի նոցանէ գնացին փախստական յԱգռա? (յԱփրիկէ), ինչպէս կը գտնուի ցարդ յԱփրիկէ քարերու վրայ դրոշմուած, թէ Մեք, նախարարք Քանանացւոց, փախչելով ի Յեսուեայ գողոյ՝ եկանք բնակել աստ։ Որպէս և ոմն ի պատուականաց նոցա Քանանիդաս եկաւ Հայաստան. և ստուգելով գտանք ի սմանէ սերեալ զԳնթունիս, և բարք այս ցեղին կը ցուցնեն, թէ արդարև քանանացի են նոքա։ «Ի սատակել սորա (Յեսուեայ) զՔանանացիս՝ անցին ի սմանէ փախստականք յԱգռաս . . . և յայտնի որոշմամբ յարձանսն Ափրիկեցւոց աշխարհին գրեալ կան մինչև ցայսօր ժամանակի արդարապէս այսպէս. Ի Յեսուեայ գողոյ փախուցեալ՝ մեք նախարարք Քանանացւոց եկաք բնակել աստ։ Յորոց մի և Քանանիդաս պատուականագոյն մեր ի Հայս։ Եւ ստուգեալ հաւաստի գտաք զսերունդ ազգին Գնթունեաց ի սմանէ առանց հակառակութեան լեալ. զայս և բարք արանց ազգին յայտնեն՝ քանանացի գոլ» (Խոր. Ա. ԺԹ)։

Պրոկոպիոս ևս, յոյն պատմիչ առ Յուստինիանոսիւ, կը յիշէ զայս պատմութիւն (Պրոկոպ. Պտմ. պատեր. Վանդալ. Բ. 10)։ Գալով Գնթունեաց՝ արդարև կ'երևի թէ կար աւանդութիւն առ Հայս, թէ Գնթունիք, ինչպէս նաև Բագրատունիք՝ ի բնէ պաղեստինացի էին. բայց Զօրայ նահապետ Գնթունեաց կը հերքէ այս աւանդութիւնն իբրև «վաղնջուց գրոյց և պառաւեալ առասպել», որպէս պատմէ նոյն ինքն Խորենացին ի ԻԴ. գլուխ Բ. գրոցն։ Զօրայ նահապետ Գնթունեաց յամբաստանելն առ Արշամայ զԵնանոս Բագրատունի, որ արձակած էր զՀիւրկանոս քահանայապետ Հրէից՝ Տիգրանայ գերիներէն՝ կը խօսի այսպէս. Գիտացիր, ասէ, արքայ՝ զի Ենանոս խորհեցաւ ապստամբել, յորդորեց և զիս խնդրել ի Հերովդէէ ժառանգութիւն տալ մեզ մեր բնիկ երկրին մէջ (ի Պաղեստին), քանզի խայտառակ եղանք, ասէր, աստ։ Իսկ ես յանձն չառնլով, ասեմ. Մինչև ցե՞րբ կը խաբուինք հին գրոյցներով և պառաւանց առասպելօք, պաղեստինացի կարծելով զմեզ, ևայլն՝ «Գիտեա, արքայ, զի ապստամբել ի քէն կամեցաւ Ենանոս, խորհուրդ ընդ իս բերելով, զի երդումն խնդրեսցուք ի Հերովդէէ թագաւորէ Հրէաստանի՝ ընդունել զմեզ և տալ մեզ ժառանգութիւն ի բնակ երկրի մերում, քանզի նորակտուտ ծանակեցաք յաշխարհիս յայսմ։ Եւ իմ ոչ առնլով յանձն՝ ասեմ ցնա. Ընդէ՞ր

պատրիմք զրուցօք վաղնջուց և պառաւեալ առասպելօք, պաղեստինացիս զմեզ վարկանելով» և այլն (Խոր. Բ. ԻԴ.)։

2. Երկրորդ դէպքն է «անխորհուրդ ապստամբութիւնն» Հայկակայ։ Զայսմ անխորհուրդ ապստամբութենէն Հայկակայ (տես էջ 111) գիտելի է, զի ըստ յոյն պատմչաց՝ Ասորեստանի թագաւորին Բեղոքոսի Բ-ի կամ Դ-ի ժամանակ Բաբելացիք գալով յաւարի առին զՆինուէ։ Նինուէացիք այս յարձակման պատճառ համարելով կառավարութեան թուլութիւնը՝ կ՚ապստամբին ընդդէմ Բեղոքոսի, և արքունի պարտիզաց վերակացուն Բեղիդարաս (ըստ Խորենացւոյն Բազոտոաէս) ընկենլով զԲեղոքոս՝ ինքն կ՚առնու թագաւորութիւնը, և Բաբելացիք նորէն կը նուաճուին։ Այս պատմութենէն, ինչպէս կ՚երևի, առիթ առնլով Խորենացին՝ Ասորեստանի հարկատու կարծուած Հայ իշխաններէն միոյն, Հայկակայ, զոր ժամանակակից կը դնէ Բեղոքոսի՝ կու տայ որպէս թէ «յանխորհուրդս» ապստամբել այն միջոցին և ապա սպաննուիլ (տես էջ 111)։

3. Երրորդ դէպքը, զոր իբր Հայոց վերաբերեալ կը պատմէ Խորենացին ի միջոցի անդ վերոյիշեալ 1,000 ամաց՝ է երթալն Զարմայրի, Ասորեստանի Տևտամոս թագաւորին հրամանաւ, իբրև զօրավար եթովպացի զօրուն՝ յօգնութիւն Պրիամու և մեռանել ի քաջացն Հելլենացւոց (տես էջ 111)։ Հայ նախարար մը տրովական պատերազմին մասնակցել յայտնի է թէ Հոմերոսի Եղիականէն թելադրուած գաղափար է քան ճշմարիտ պատմութիւն։ Ըստ Հոմերոսի (Հատկոտ. Հոմեր.) և ըստ Դիոդորոսի Սիկեղացւոյ (Գիրք Բ. Գ. 22) յորմէ առնու Եւսեբիոս, Ասորեստանի թագաւոր մը, Տևտամոս, եղիական պատերազմին վերջին տարին զՄեմնոն ոմն (որ առասպելեալ անձ է, Արշալուսոյ որդի, Եթովպիոյ և Եգիպտոսի իշխան) քսան հազար զօրօք կը ղրկէ յօգնութիւն Տրովացւոց։ Մեմնոն յետ գործելոյ բազում արութիւնս ի տրովական պատերազմին ի նպաստ Պրիամու՝ կ՚սպաննուի յԱքիլլեայ։ Խորենացին այս պատմութիւնը կարդալով առ Եւսեբեայ, և որպէս հաւանական է կարծելով զպատերազմն զայն ստուգիւ լեալ՝ խորհած է դեր մը խաղալ տալ ի նմա Զարմայրի, զոր Տևտամոսի ժամանակակից կը դնէ։ Բայց պատմութիւնը ոչ զՏևտամոս կը ճանչնայ և ոչ տրովական պատերազմը, եթէ ոչ ըստ էութեան, գէթ ըստ կերպին ըստ որում կը պատմէ Հոմերոս։

33. Հրէից պատմութենէն գիտենք, թէ Ասորեստանեայց թագաւորին Սենեքերիմայ երկու հայրասպան որդիքն Ադրամելէք և Սանասար փախան յերկիրն Արարատայ (տես էջ 39)։ Խորենացին մոռնալով յիշել զայս ի կարգի պատմութեան՝ կը պատմէ ի սկզբան

ԻԳ. գլխոյ առաջին գրոցն։ Մոռացանք, ասէ, խօսել զՍենեքերիմայ։ Իբր ութսուն ամօք յառաջ քան զԹագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ եկաց Թագաւոր Ասորեստանի այս Սենեքերիմ, որ զԵրուսաղէմ պաշարեց առ Եզեկիայիւ արքայիւ Հրէից և սպանաւ յորդւոց իւրոց յԱդրամելայ և ի Սանասարայ, որ եկան փախստական առ մեզ։ Քաջ նախնին մեր Սկայորդի, մեր երկրին հարաւային արևմտեան կողմը, նոյն իսկ Ասորեստանի (?) սահմանին մօտ, բնակեցոյց զմին ի սոցանէ, այսինքն զՍանասար, յորմէ սերեցան Սիմ կոչուած լերան բնակիչք։ Յետ ժամանակաց երևելիք ի սոցանէ հաւատարմութիւն ցուցեալ առ Թագաւորս մեր (Արշակունիս)՝ առին այն կողմերուն բդեշխութիւնը։ Իսկ Արգամոզան (Ադրամելէք) բնակեցաւ յարևելից հարաւոյ երկրին մերոյ, և ի սմանէ սերեցան, ասէ պատմագիրն (Մար Իբաս), Արծրունիք և Գնունիք՝ «Ի մոռացումն եկն արդեւք յաղագս Սենեքերիմայ. քանզի ութսուն ամօք, աւելի կամ պակաս, յառաջ քան զԹագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ էր և Սենեքերիմս կացեալ արքայ Ասորեստանի, որ զԵրուսաղէմ պաշարեաց առ Եզեկիայիւ Հրէից առաջնորդաւ. զոր (զՍենեքերիմ) սպանեալ որդւոց նորա Ադրամելայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ։ Յորոց զմին յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այսինքն զՍանասարն. և ի սմանէ սերեալ լցին զՍիմն անուանեալ լեառն։ Իսկ պերճքըն և գլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ Թագաւորսն մեր ցուցեալ՝ զբդեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ։ Իսկ Արգամոզանն յարևելից հարաւոյ նորին կողման բնակեալ. ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս» (Խոր. Ա. ԻԳ.)։

Խորենացին ի Սարասարայ (զոր Սանասար կ'անուանէ) սերել կու տայ զԱղձնիս, և յԱդրամելէքայ (զոր կը կոչէ Ադրամէլ, նաև Արգամոզան, չենք գիտեր ուստի առնլով)՝ զԱրծրունիս և զԳնունիս։ Թէ Գնունիք, և մանաւանդ Արծրունիք Սենեքերիմայ որդւոց սերունդէն էին՝ թուի լինել ստոյգ, քանզի երբ Տաւասպ Արծրունի, ըստ նոյն Խորենացւոյն, ի մականախաղուն ի ձեռաց Յազկերտի որդւոյն Տայհոյ հանեց գնտակը, և Տայուհ մականաւ եհար զնա ասելով, «Ծանիր զքեզ»՝ Տաւասպ պատասխանեց՝ «Այո, ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ, և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո համբուրել զբարձն արքայի»։ Միայն զարմանք է, թէ մինչ հոս Տաւասպ զԱրծրունեաց ասէ թէ ի Սանասարայ սերեցան՝ Խորենացին ասէ թէ սերեցան յԱրգամոզա-

նայ, յեղըօրէն Սանասարայ։ Զենք գիտեր թէ միևնոյն ցեղը երկու եղբայրներէ միանգամայն ինչպէս կրնայ սերիլ. կամ թերևս Խորենացին յերրորդ գիրս իւր (գլ. ԾԵ.) ի յիշելն զբանս Տաւսապայ՝ մոռացած էր ինչ որ յառաջին գիրս իւր (գլ. ԻԳ.) գրած էր զորդւոց Սենեքերիմայ։

Յենթադրութեան աստ Խորենացւոյն, որ զգալուստ որդւոցն Սենեքերիմայ ի Հայս կը համարի լեալ առ Սկայորդւով, այսինքն յառաջ քան զկարծեցեալ կործանումն տէրութեան Ասորեստանի ի ձեռն Վարբակայ՝ հակասութիւն կայ, քանզի Սկայորդին, իբրև Հայր Պարուրի՝ չկարէ լինել յառաջ քան զկարծեցեալ կործանումն տէրութեան Ասորեստանի ի ձեռն Վարբակայ, միանգամայն ժամանակից Սենեքերիմայ, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։

Հոս կամիմք դիտել ի պատմութեան աստ Խորենացւոյն ուրիշ կէտ մը։ Մեր հայրենասէր ծերունին, որ առիթ չի փախցըներ ըզ-Հայս առնել միջամուխ ամէն գործի որ կը յիշուի ի պատմութեան այնր ժամանակի՝ կարդալով Սենեքերիմայ որդւոց փախուստն ի Հայս, գիտնալով ևս թէ ի նոցանէ սերեալ կը պատմուէին Արծրունիք՝ Հայ իշխանի մը ընդունել կու տայ արքայազուն փախստականները և տալ նմա բնակեցուցանել զՍանասար—Սիմ և Սանասար անուանց ձայնի նմանութեան նայելով—Սիմ լերան, այսինքն Աղձնեաց կողմը, զոր կը կոչէ սահմանակից Ասորեստանի, որ Միջագետաց մանուանդ քան Ասորեստանի սահմանակից էր. իսկ զԱրգամոզան բնակել կու տայ յարևելից նոցա, ուր էր Արծրունեաց երկիրը, ուստի և յԱրգամոզանայ սերել կու տայ այս ցեղը, մինչ Արծրունիք, որպէս տեսաք՝ ըստ աւանդութեան իւրեանց ի Սանասարայ սերեալ համարէին զինքեանս։

Գիտել պարտ է, զի Խորենացին որ հոս Սիմ անունն ի Սանասարայ կը թուի հանել՝ այլուր (Ա. Զ.) ի Սեմայ կը համարի կոչեցեալ այնպէս. և ի հաստատութիւն այսորիկ կը բերէ զբանս Ողոմպիադորայ ուրումն անծանօթ փիլիսոփայի, որ որպէս թէ յանգիր աւանդութենէ կըպատմէր այսպէս. Պատմեմ ձեզ անգիր զրոյց, որ աւանդութենէ հասած է առ մեզ, և զոր գեղջուկներէն շատերը կը զրուցեն ցարդ։ Կար, ասեն, զՆոյէ և զորդւոց նորա մատեան, որ այժմ չէք ուրեք և յորում կը պատմուէր այսպէս. Յետ նաւելոյ Նոյի ի Հայս և ելանելոյ ի ցամաք՝ մին յորդւոց նորա Սիմ գնաց յարևմուտս հիւսիսոյ դիտել երկիրը, և պատահելով փոքր դաշտի առ երկայնանիստ լերամբ, ուր և գետեր (Եփրատ, Տիգրիս) հոսելով կ'երթային դէպ յԱսորեստան՝ կը կենայ հոն երկամսեայ ժամանակ և կոչելով զլեառնն յանուն իւր Սիմ՝ կ'դառնայ յարև-

ւելս Հարաւոյ. ուստի եկած էր.—«Պատմեցից ձեզ, ասէ (Ողոմպիոդորոս), զրոյցս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զոր և բազումք ի գեղջկաց զրուցեն մինչև ցայժմ։ Մատեան լեալ զՔսիսութրեայ և զորդւոց նորա, որ այժմ ոչ ուրեք երևի. յորում ասեն կարգ լեալ բանից այսպիսի. Յետ նաւելոյ Քսիսութրեայ ի Հայս և դիմելոյ ցամաքի՝ գնայ, ասէ, մի յորդւոց նորա կոչեցեալն Սիմ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն, և դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լերամբ, գետոց ընդ մէջ նորա անցանելով ի կողմանս Ասորեստանի՝ դադարէ առ գետովն երկլուսնեայ աւուրս, և անուանէ յանուն իւր զլեառն Սիմ և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ ուստի եկն»։ Թէ այսպիսի աւանդութեանց հիմն ինչ հաւատք կրնայ ընծայուիլ յայտնի է։ Նոյն ինքն Խորենացին չկամի լինել երաշխաւոր ստուգութեան այսր աւանդութեան.—«Եւ այսոքիկ զրոյցք, ասէ, սուտ և կամ թէ արդարև լեալք՝ մեզ չէ ինչ փոյթ»։ Ի յետին ժամանակս Սիմ սկսաւ կոչուիլ Սասուն, բայց թէ երբ և ընդէր՝ չէ յայտ։ Եթէ պարտ է հաւատալ Լաստիվերտցւոյն, որ է մատենագիր ԺԱ. դարուն՝ Սասուն անունն ևս կոչուած է յանուն Սանասարայ.—«Իջին զօրքն ի լեռնէն Սիմն կոչեցեալ, զոր մարդկան (բնակչաց) սովորութիւնք Սանասուն (Սասուն) ասեն, ըստ անուան նախնւոյն իւրեանց» (Լաստ. գլ. ԻԱ.)։

Ի պատմութեան որդւոց Սենեքերիմայ ըստ մեզ ճշմարիտ է միայն գալուստ նոցա ի Հայս և Արծրունեաց սերելն ի նոցանէ. այլն ամենայն անստոյգ և անհիմն է։

34. Խորենացին ի ԻԲ. գլուխ Ա. գրոցն, յետ յիշելոյ զՊարոյր իբրև առաջին թագաւոր Հայոց առ Վարբակաւ՝ առ յաջորդաւ նորա Հրաչէիւ կը պատմէ Բագրատունեաց ծագումը Հրէից գերութենէն Շամբաթ անուն ումեմնէ, զոր, ինչպէս տեսանք էջ 113՝ որպէս թէ Հրաչեայ խնդրելով ի Նաբուգոդոնոսորայ՝ առ և բնակեցոյց պատուով։ Սակայն զԲագրատունիս Հրեայ գաղթականութենէ մը սերեալ կարծելոյ հաստատուն պատճառ չունինք։ Բուզանդ և Ագաթանգեղոս կը յիշեն զԲագրատունիս «ասպետութեան իշխան» անուամբ.—«Ամենեցուն միաբանութեամբ, եպիսկոպոսացն և թագաւորին և աշխարհախորհ ձուլիւք հաւանութեամբ ի միասին, արձակեցան և գնացին Հայր մեծ իշխանն մարդպետութեան, և Բագարատ մեծ *իշխանն ասպետութեան*» (Բուզ. Դ. Դ.)։ Ագաթանգեղոս ի վերայ ասպետութեան կը յաւելու նաև թագակապ բառը.—«Իսկ թագաւորն (Տրդատ) փաղփաղակի գումարեաց գլխաւորս նախարարացն, առաջին՝ զիշխանն Անգեղ տան . . . չոր-

րորդ՝ զիշխանն թագակապ իշխանութեանն ասպետութեան» (Ագաթ. ԾԺԲ.): Գիտենք արդարև թէ Բագրատունիք կը կրէին ասպետ տիտղոսը և էին թագադիր, գէթ առ հեթանոս թագաւորօք. շատ անգամ վարած են նաև սպարապետութիւնը: Ըստ Խորենացւոյն Բագրատունիք այս իշխանութիւններն առին ի Վաղարշակայ: Յետ սանձելոյ զՄակեդոնացիս, ասէ Խորենացին, երբ պատերազմները դադրեցան՝ քաջ Պարթեւն (Վաղարշակ) սկսաւ բարեգործութեան: Նախ փոխարէն ծառայութեանց զօրաւոր և իմաստուն Հրէին Բագարատայ Շամբայ, տուաւ նմա իշխանութիւն՝ ազգաւ թագադիր լինել Արշակունեաց, և բոլոր տոհմին արտօնութիւն՝ Բագրատունի կոչուիլ յանուն նորա, և այժմ իսկ մեծ նախարարութիւն են Բագրատունիք յազգի մերում: Քանզի այս Բագարատ ի սկզբան նուիրեց զանձն ինքնակամ ի ծառայութիւն Վաղարշակայ. . . : Վաղարշակ տուաւ Բագարատայ նաև Հայաստանի արևմտեան սահմանին կուսակալութիւնը.—«Յետ սանձահարելոյ զՄակեդոնացիս և դադարելոյ պատերազմացն՝ սկիզբն առնէ բարեգործութեանց Պարթեւն քաջ (Վաղարշակ). նախ և առաջին փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի և իմաստնոյ, որ ի Հրէից Շամբայ Բագարատ. տայ նմա իշխանութիւն՝ ազգաւ թագադիր լինել Արշակունեաց և որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել յանուն նորա կոչմամբ Բագրատունի, որ և այժմ մեծ նախարարութիւն է ի մէջ աշխարհիս: Քանզի այս Բագարատ նախաձեռն ընծայ մատոյց զինքն Վաղարշակայ . . . : Իսկ ի ծայրս հայերէն խօսից (կացոյց զնա) կողմնակալ իշխան բիւրուց և հազարաց յարևմտից կուսէ» (Խոր. Բ. Գ.): Աւելի մանր կը պատմէ զայս Խորենացին յէ. գլուխ նոյն գրոցն.— Բագարատ կոչուած Հրէին, ի շնորհակալութիւն անձնատուր ձեռընտուութեան նորա առ թագաւորն, ինչպէս նաև ի փորձ անկեղծութեան և քաջութեան նորա՝ տուաւ տանուտէրութեան պատիւ, նմա և ազգատոհմին, ինչպէս պատմեցինք յառաջագոյն, նաև իշխանութիւն թագաւորին գլուխը թագ դնել և կոչիլ թագադիր և ասպետ և առանց ոսկւոյ և ականց, երեք կարգ մանր մարգարտէ խոյրը դնել ի շրջելն յարքունիս և առ թագաւորին: «Եւ զկոչեցեալն Բագարատ որ ի Հրէիցն, ի շնորհակալութեան նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեան առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն՝ զյառաջասացեալ տանուտէրական պատիւն ազգին պարգևէ, և իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր և ասպետ, և առանց ոսկւոյ և ականց զկրտսեր մարգարիտն երեքտակէն փարսակալ ածել՝ յորժամ յարքունիս և ի տան թագաւորին շրջիցի»: Առ Վաղար-

շակաւ կամ յառաջ քան զՎաղարշակ, զկարդ և կցէ՝ ունէին Բագրատունիք այս հին ցեղային արտօնութիւնները։ Այսմ, ինչպէս տեսանք՝ վկայ են մեր նախնի մատենագիրք, հնագոյնք քան զԽորենացին։ Բայց յառաջ քան զԽորենացին ի պատմութեան մերում ոչ ուրեք յիշուած կը գտնենք, թէ Բագրատունիք ծագմամբ հրեայ էին։ Կ'երևի սակայն թէ կար աւանդութիւն, թէ Բագրատունիք՝ ինչպէս նաև Գնթունիք՝ ի բնէ «Պաղեստինացի» էին։ Բայց որպէս տեսաք ի վեր անդ էջ 166, Զօրայ Գնթունի կը հերքէր այս աւանդութիւնն իբրև «վաղնջուց գրոյց և պառաւեալ առասպել»։ Նոյն իսկ Խորենացին կը վկայէ, թէ կային որ զԲագրատունիս կը համարէին բնիկ հայ։ Ոմանք, ասէ, որ չեն արժանահաւատ, զԲագրատունիս ի Հայկայ կը համարին. բայց դու մի հաւատար այսպիսի յիմար բանից, որ ամենևին ճշմարտութեան նշան չունին.—«Ասեն ոմանք յանհաւատի մարդոց, ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան, ի Հայկայ զԹագադիր ազգդ լինել Բագրատունեաց. փառն որոյ ասեմ. մի՛ այսպիսեաց յիմար բանից հաւանիր, զի և ոչ մի շաւիղ կամ ցուցումն գոյ նմանութեան յասացեալսդ՝ որ զարդարութիւն ակնարկէ» (Խոր. Ա. ԻԲ.)։

Զօրաւորագոյն փաստ Խորենացւոյն ի հաստատութիւն հրէութեան Բագրատունեաց են անուանք նոցա, զորս կը ջանայ մեր ստուգաբան պատմիչը մերձեցուցանել եբրայեցերէն անուանց։ Գիտասջիր, ասէ, զի անունդ Սմբատ զոր Բագրատունիք յաճախ կուտան պատանեաց իւրեանց՝ Շամբաթն է ըստ հին եբրայական լեզուին.—«Բայց ծանիր զՍմբատդ անուն զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատանեաց կոչեն՝ ճշմարիտ Շամբաթ է ըստ նախնի իւրեանց խօսիցն՝ որ է եբրայեցի» (Խոր. Ա. ԻԲ.)։ Խորենացին որ հոս Սմբատը Շամբաթին հետ կը նոյնացնէ՝ ուրիշ տեղ խժական կը կոչէ այն անունը.—«Բայց գիտասջիր զի Բագրատունիք յետ թողլոյ զօրէնս հարց իւրեանց՝ խժական անուններ առին, որպէս Բիւրատ, Սմբատ և ուրիշ անուններ, և զրկուեցան ի նախնի անուանց իւրեանց, զորս յառաջ քան զուրանալն զհրէութիւն ունէին, ինչպէս Բագադիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս։ Եւ ինձ թուի թէ Բագրատունեաց այժմու անուանք, Բագարատ՝ Բագադիա է, Աշոտ՝ Ասուդ, Վարազ՝ Վազարիա, որպէս և Սմբատ՝ Շամբաթ.—«Բայց գիտեա, զի ի թողուլ ազգին Բագրատունեաց զօրէնս հարցն՝ նախ խժական ժառանգեցին յորջորջումն, Բիւրատ և Սմբատ և այլ այսպիսի կոչմունս, զրկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուրանալն—Բագադիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս։ Եւ ինձ թուի

թէ որ այժմ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա, և Ասուդ՝ Աշոտ, դոյնպէս և Վաղարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ» (Խոր. Բ. ԿԳ.)։ Բայց Խորենացւոյն այս դիտողութիւնն ուղիղ չէ։ Բագրատունիք այն *խժական* կոչուած անուններն ունէին նաև յառաջ քան ղուրանալն զհրէութիւն։ Վաղարշակայ ժամանակի Բագրատունեաց իշխանին անունն, ըստ Խորենացւոյն, Բագարատ էր, իսկ զհրէութիւնը Բագրատունիք, ըստ նմին Խորենացւոյ՝ ուրացան աստ ուրեմն առ Արշամաւ։

Վերոյիշեալ անուններուն գալով՝ ասեմք թէ Շամբաթ, այսինքն Շաբաթ, իբրև մարդոյ անուն գործածուած չենք գտներ ոչ ի Հին և ոչ ի Նոր Կտակարանի, և սովորութիւն չէր Հրէից այս և սմին նման կրօնական անուններ մարդոց վրայ կոչել։ Եւ ոչ Բագադիա, Սափատիա, Վաղարիա, Սենեքիա, Ասուդ անուններ կան բոլոր Հրէից գրոց մէջ, և ինչպէս կը կարծենք՝ այս անունները եբրայական չեն։ Ընդհակառակն գիտենք, թէ Սմբատ, Բագարատ, Վարազ՝ արիական բառեր են և ոչ թէ հրէական անուանց աղաւաղութիւն։ Սմբատ՝ *սիմ* (արծաթ) և *պատ* (շէն) արիական բառերէն կը բաղկանայ։ Բագարատ նոյնպէս արիական բառ է, և թուի նշանակել աստուածատուր—*բագ* (դիք) և *արատ* (ետ) բառերէն. իսկ Վարազ, որ Սասանեանց ժամանակ փոխուելով Պերոզ եղած է՝ կը նշանակէ յաղթող, և Պարսից սովորական անուն էր, երբեմն բարդութեանց մէջ ևս կը մտնէր, ինչպէս Վարազտիրոց, Վարազվաղան, Վարազդեն, Վարազդատ։

Եթէ պարտ է հաւատալ Խորենացւոյն՝ Բագրատունիք ծանր հալածումներ կրած են առաջին երեք կամ չորս Արշակունի թագաւորներէն ի պատճառս հրէութեան։ Վաղարշակ, յետ մեծարելոյ զԲագարատ գրեթէ թագաւորական պատուով վասն հաւատարմութեանն, և յանձնելոյ նմա այն մեծ զինուորական իշխանութիւնը, զոր վերագոյն յիշեցաք՝ կ'ստիպէ զնա թողուլ զհրէութիւն և պաշտել զկուռս։ Յետ այսպիսի գործոյ, ասէ Խորենացին (գիրք Բ. գլ. Ը.), Վաղարշակ մեհեան շինելով յԱրմաւիր և անդրիս կանգնելով ի պատկեր արեգական և լուսնի և իւրոց նախնեաց՝ թախանձանօք կ'ստիպէ զԲագարատ, թագադիր ասպետ, թողուլ զհրէութիւն և պաշտել զկուռս. և տեսնելով թէ Բագարատ չառնուր յանձն՝ կը թողու զնա ըստ կամաց.—«Իսկ յետ այսր ամենայնի մեհեան շինեալ (Վաղարշակայ) յԱրմաւիր, անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեաց. և աղերսեալ որ ի Հրէիցն Շամբայ Բագարատ, որ և թագադիր ասպետ, հանդերձ հարկեցուցանող բանիւք, թողուլ զօրէնս հրէութեան և պաշտել զմե-

հեանս. զոր չառեալ յանձն (Բագարատայ)՝ ըստ կամաց Թողու զնա արքայն Վաղարշակ»: Առ Արշակաւ յաջորդաւ Վաղարշակայ, : Թախանձանքն փոխին ի բռնութիւն: Արշակ, ասէ, բռնադատեց զորդիս Բագարատայ պաշտել զկուռս. երկուք սրով նահատակեցան քաջութեամբ ի վերայ հայրենի օրինաց, արդարև հետևելով Անանիանց և Եղիազարեանց: Մնացեալքն յանձն առին շաբաթ օրը ձի հեծնել և յորս և ի պատերազմ երթալ, նաև թողուլ անթլփատ զմանկունս իւրեանց. և որովհետև անկին էին՝ Արշակ պատուիրեց բոլոր նախարարութեանց կին չտալ նոցա, եթէ ոչ ուխտիւ խոստանային թողուլ զթլփատութիւն: Բագրատունիք յանձն առին զերկուս զայսոսիկ—շաբաթը չպահել և թլփատութիւնը թողուլ, միայն կուռք պաշտել չառին յանձն: «Ի սմանէ (յԱրշակայ) նեղեալ որդիք Բագարատայ վասն զկուռս պաշտելոյ, երկու ի նոցանէ սրով կատարեցան արիաբար ի վերայ հայրենի օրինացն, զորս ոչ պատկառեմ ասել հետևող լինել Անանիանցն և Եղիազարանց: Բայց այլքն յանձն առնուն այսչափ միայն,—ի շաբաթու հեծանել յորս և ի պատերազմունս, և զմանկունս թողուլ անթլփատս յորժամ լինիցին, քանզի անկին էին. և հրամայեցաւ յԱրշակայ մի տալ նոցա կանայս յամենայն նախարարութեանցն՝ եթէ ոչ ուխտ պայմանի հաստատեսցեն թողուլ զթլփատութիւնն: Զորս յանձն առնուն զերկուս զայս միայն, այլ ոչ զերկրպագութիւն կռոցն» (Խոր. Բ. Թ.):

Նոյն բռնութիւնը կը կրկնուի առ Տիգրանաւ: Տիգրան, ըստ Խորենացւոյն, մեհեան շինելով և բագիններ կանգնելով՝ բոլոր նախարարաց հրամայեց զոհ մատուցանել երկրպագութեամբ, և որովհետև չառին յանձն Բագրատունիք՝ Տիգրան կտրել տուաւ զլեզու միոյն որոյ անունն էր Ասուդ, վասն անարգելոյ նորա զկուռս և ուրիշ տանջանք չտուաւ, քանզի այլք յանձն առին ուտել զոհեալ և խոզենի, թէպէտ ինքեանք չզոհեցին երկրպագութեամբ: Ուստի Տիգրան առաւ ի նոցանէ սպարապետութիւնը, թագակապ ասպետութիւնը միայն թողուց.—«Մեհեանս շինեալ Տիգրանայ և առաջի մեհենիցն բագինս կանգնեալ՝ զոհս ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել հանդերձ երկրպագութեամբ. զոր չառեալ յանձն ազգն Բագրատունեաց՝ զմիոյ զլեզուն հատեալ որում անուն էր Ասուդ, վասն պատկերացն անարգութեան, և ոչ այլ ինչ խոշտանգէ. քանզի յանձն առին ուտել ի զոհիցն և զմիս խոզի, թէպէտև ոչ ինքեանք զոհեցին երկրպագութեամբ. վասն որոյ առնու ի նոցանէ զիշխանութիւն զօրուն, բայց միայն զթագակապ իշխանութիւնն ոչ հանէ» (Խոր. Բ. ԺԵ.):

Առ Արշամաւ կրեց թագադիր ազգն Բագրատունեաց, ըստ

Խորենացւոյն, վերջին և խստագոյն հալածումը, որ և վերջացաւ ի սպառ ուրացութեամբ նոցա։ Զայնու ժամանակաւ, ասէ Խորենացին, Արշամ բարկացաւ յոյժ Թագակապ ասպետին իւրում Ենանոսի, որ արձակած էր զՀիւրկանոս քահանայապետ Հրէից, զոր գերի բերած էր Բարզափրան Ռշտունի առ Տիգրանաւ . . . ։ Արշամ գրգռուելով նաև ի բանից Զօրայի Գնթունւոյ, որ ամբաստանած էր զԵնանոս իբրև մէտ յապստամբութիւն՝ հրամայեց, ասէ, պէսպէս տանջանս կուտել ի վերայ Ենանոսի, ստիպելով թողուլ իսպառ զհրէութիւն, երկրպագել արեգական և պաշտել թագաւորին աստուածներն առ ընդունել զառաջին իշխանութիւն իւր, և կամ կախուիլ զփայտէ և ջնջուիլ ազգովին։ Ասպետին ազգականներէն մին, Սարիա անուն, սպանաւ առաջի նորա, յետոյ երկու որդիքը՝ Սափատիա և Ազարիա, բերուեցան ի տեղին սպանման։ Որդւոցը սպանման երկիւղէն և ի թախանձելոյ կանանց իւրոց կատարեց Ենանոս թագաւորին կամքը բոլոր ազգատոհմիւ, և հաստատուեցաւ յառաջին պատիւ իւր.—«Զայսու ժամանակաւ եղև մեծ ցասումն Արշամայ ի վերայ Ենանոսի ասպետի ուրումն թագակապի, քանզի նա արձակեաց զՀիւրկանոս Հրէից քահանայապետ, զոր գերեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ յաւուրս Տիգրանայ . . . ։ Քսութիւն զնմանէ (զԵնանոսէ) մատուցանէ արքայի և Զօրա նահապետ ազգին Գընթունեաց, ասելով. Գիտեա, արքայ, զի ապստամբել ի քէն կամեցաւ Ենանոս . . . ։ Այս քսութեանցս հաւատայ Արշամ. հրամայեաց տանջանս պէսպէս ի վերայ Ենանոսի կուտել. և փախճան զործոյն՝ կամ թողուլ իսպառ զօրէնս հրէութեան և երկիր պագանել արեգական և պաշտել զկուռս արքայի, ընդ որով հարկեալ արքայ տացէ նմա զնոյն իշխանութիւնն, կամ կախել զփայտէ և բնաջինջ լինել ազգի գորա։ Եւ սպանեալ մի յազգականացն առաջի նորա, որում անուն էր Սարիայ, և առընթեր զորդիսն մատուցեալ ի տեղի սպանմանն, որոց անուանքն Սափատիայ և Ազարիայ, յերկիւղէ մահուան որդւոցն և ի թախանձելոյ կանանցն կատարէ զկամս արքայի հանդերձ ամենայն ազգատոհմիւն և յառաջին պատիւն իւր հաստատի» (Խոր. Բ. ԻԴ.)։

Ըստ Բուզանդայ և ըստ նմին իսկ Խորենացւոյն՝ յԱրտաշատ, յԵրուանդաշատ, ի Վան, ի Նախճաւան և յայլ բազում տեղիս ի հայս ոչ սակաւ Հրեայք կային, յորոց բազումք մնացին հրէական օրինօք նաև յետ քրիստոնէութեան (Բուզ. Դ. ԾԵ. Խոր Գ. ԼԵ.), և ամենևին յիշուած չէ, թէ առ քրիստոնէութեամբ կամ յառաջ քան զքրիստոնէութիւնն հրեայ մը տանջուեցաւ կամ սպանաւ երբէք վասն հաւատոյ։ Այն է մանաւանդ զարմանալին, զի այս

Հրեաներն Հայաստան բերողն էր Տիգրան մեծ։ Տիգրան Հրեաներ կը բերէ իւր երկիրը, քաղաքներ կուտայ նոցա բնակել, և կը թողու զնոսա իւրեանց հայրենի օրինօք. իսկ իւր թագադիր ասպետներն հաւատոյ համար կը տանջէ և կ՚սպաննէ, նոյնպէս այլ թագաւորք յառաջ քան զնա և յետ նորա։ Եթէ այսչափ ատելի էր նոցա Հրէութիւնն, ընդէ՞ր Հրեայ ցեղի մը նահապետին տուին այնպիսի բարձր իշխանութիւններ, որպիսի էին թագադիր ասպետութիւն և սպարապետութիւն։ Զարմանալի է նաև, զի Բագրատունիք կը թողուն շաբաթը և թլփատութիւնը, կ՚ուտեն զոհեալ և խոզենի և տակաւին Հրեայ են։ Կռապաշտութեան հաւասա՛ր էր այս Հրէից համար, ինչպէս յայտնի է ի պատմութենէն Մակաբայեցւոց։ Եօթն եղբարք սպանուեցան, վասն զի յանձն չառին խոզի միս ուտել։ Բոլորովին անիմաստ է նաև այն խօսքը, թէ Արշակ հրամայեց բոլոր նախարարութեանց չտալ զդստերս իւրեանց Բագրատունեաց որ անկին էին, որպէս թէ Բագրատունիք պիտի չկրնային ամուսնանալ առանց խնամութեան այլոց ցեղից. մի՞թէ աղջիկ չկա՞ր Բագրատունեաց մէջ. արո՞ւ միայն կը ծնանէր այս ցեղը։ Վերջապէս, Բագրատունեաց հալածանաց պատմութիւնը պարտ է դասել ի կարգ այն վկայաբանութեանց, որ հոգևոր վէպ (ռոման) են։ Խորենացին կը գրէ զիւր պատմութիւն ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ, և այնպիսի ժամանակ մինչ Հայք ի հալածանս էին կամ կը կարծէին լինել, և փոքր թուլութիւն մը ի հաւատոյս կը համարուէր ուրացութիւն։ Խորենացին առիթ առնլով այն աւանդութենէն, թէ Բագրատունիք պաղեստինացի կամ Հրեայ էին (տես էջ 172), ի շնորհս իւրոյ Մեկենասայ ույժ կու տայ այն աւանդութեան, զնախնիս Սահակայ ցուցնելով ոչ միայն սերունդ Աբրահամու և աստուածապաշտ, այլ և քաջ ախոյեան հաւատոյ յարքունիս հեթանոս թագաւորաց, իբրև զԴանիէլն և զերիս մանկունսն, և այս ի գովեստ և ի քաջալերութիւն Սահակայ։ Ուրիշ այսպիսի միջոցներ գործածուած են այն դարուն մէջ ի Հայս, որպէս տեսցուք յիւրում տեղւոջ։ Խորենացին այնպէս պաշտպանել էր Բագրատունեաց Հրէութեան գաղափարը՝ զի ո՛ւր և երևելի Հրեայ մը կը գտնէ պատմութեան մէջ՝ կը համարի Բագրատունի։ Զօրօրինակ, զեդեսացի Հրեայն Տուբի անուն, յորոյ ի տան պատմի թէ ագաւ Թադէոս առաքեալ ի գալն բժշկել զԱբգար ըստ աւանդութեան իբր.՝ Խորենացին Բագրատունի կ՚անուանէ.—«Եկեալ (Թադէի) եմուտ ի տուն Տուբիայ իշխանի Հրէի, զորմէ ասեն լինել յազգէն Բագրատունեաց» (Խոր. Բ. ԼԳ.)։

Առանց ժամանակակից յարգի վկայութեան կամ ուրիշ անժխ

տեղի ապացոյց տեսնելու չենք կրնար իբրև պատմութիւն ընդունել վերոյիշեալ վկայաբանութիւնը։ Ընդհակառակն, Բագրատունեաց պաշտօնը, և անուանք նոցա որ արիական են՝ բաւական են ցուցնել, թէ Բագրատունիք ի բնէ հայ էին, որպէս և կը պնդէին իսկ ոմանք առ Խորենացւով, և թէ հին Արարատեան թագաւորութեան ժամանակէն ունէին նոքա զթագաւորս պսակելու արտօնութիւնը։ Արդարև Բագրատունեաց թագադիր իշխանութիւնն այնպէս կապուած էր Արշակունեաց թագին հետ, զի զոր օրինակ չէր օրէն բաց յԱրշակունեաց յայլմէ ցեղէ թագաւոր դնել (էջ 84)՝ նոյնպէս չէր օրէն Արշակունւոյ մը թագաւորել առանց պսակելոյ թագադիր ասպետէ մը, այն է ի Բագրատունեաց։ Թէպէտ մեր պատմութեան մէջ յայտնի յիշուած չէ, թէ ամէն Արշակունի թագաւոր կը պսակուէր թագադիր ասպետէ մը՝ կան սակայն ակնարկութիւններ, որ կը ցուցնեն թէ օրինաւորութեան համար հարկ էր թագաւորաց պսակիլ ի Բագրատունեաց։ Խորենացին ի պատմելն զթագաւորել Երուանդայ խորամանկութեամբ ի ձեռն կաշառակուրծ նախարարաց՝ ասէ. «Եւ ի մեռանել Սանատրկոյ, միաբանեալ (այն նախարարաց) թագաւորեցուցին զնա, առանց արանց յազգէ Բագրատունեաց լինել թագադիր» (Խոր. Բ. Լէ.)։ Իսկ զյաջորդէ նորա զԱրտաշիսէ ասէ. «Յետ մահուանն Երուանդայ մտեալ Սմբատայ (Բագրատունւոյ) զարքունականսն յուզէր զգանձսն, և գտեալ զթագն Սանատրկոյ արքայի՝ դնէ ի գլուխն Արտաշիսի և թագաւորեցուցանէ ի վերայ ամենայն երկրիս Հայոց» (Խոր. Բ. Խէ.)։ Օրինաւոր թագաւոր համարուելու համար Բագրատունի իշխանէ մը պսակուելու օրէնքը կ'ակնարկուի նաև այն խօսքէն, զոր Խորենացին կը դնէ ի բերան Սմբատայ Բագրատունւոյ, երբ Սմբատ հրաշէկ շամփուրը բոլորելով պսակաձև դրաւ ի գլուխ Մերուժանայ, ասելով հեգնօրէն. «Պսակեմ զքեզ, Մերուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել ի վերայ Հայոց, և ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոց հայրենեաց» (Խոր. Դ. Լէ.)։

Խորենացին, որ յառաջ քան զՎաղարշակ ամենայն ինչ «խառն ի խուռն և վայրենի» կը համարի ի Հայս՝ ի մէջ այլ կարգաց նաև թագադիր ասպետութիւնը կու տայ հաստատել նմին Վաղարշակայ.— «Նախ և առաջին օրինադրէ թագաւորն զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյն իւրմէ և ի թագէն»։ Եւ Բագարատայ տայ իշխանութիւն «թագ ի գլուխ դնել թագաւորին և կոչիլ թագադիր և ասպետ» (Խոր. Բ. Է.)։ Արշակունի թագաւորաց պսակուիլն ի Բագրատունեաց, ինչպէս տեսանք՝ գրեթէ վաւերացնել էր

թագաւորին ընտրութիւնը և տեսակ մը սեղմում թագաւորական իշխանութեան. ուստի Վաղարշակայ այսպիսի սեղմում մը ինքնակամ յանձն առնուլ հաւանական չէ։ Ըստ մեզ թագաւոր պսակելն առ Հայս ոչ միայն վաղեմի սովորութիւն էր, որպէս ասացաք, հին Արարատեան թագաւորութեան ժամանակէն, այլև թերևս կրօնական արարողութիւն, և Բագրատունիք իբրև զՎահունիս էին թերևս քրմական ցեղ ի մէջ Հայոց։ Առ այս արդարև չունինք պատմական ապացոյց, բայց այսպէս ենթադրելու բաւական պատճառ կու տայ մեզ Բագրատունի անուան առաջին բառը ԲԱԳ, որ հնդեւրոպական լեզուաց շատերուն մէջ կայ և կը նշանակէ դիք կամ աստուած։ Ուստի մարթ է կարծել, թէ Բագրատունիք այսպէս կոչուած էին իբր նուիրական անձինք որպէս զՎահունիս, որ քուրմ էին ցեղով և որոց անուան առաջին բառը ՎԱՀ՝ բագ բառին ուրիշ ձեւն է և միևնոյն նշանակութիւնն ունի։

Զթագաւորս պսակելու սովորութիւնն ի ձեռն Բագրատունեաց դադրած կը գտնենք առ քրիստոնեայ թագաւորօք։ Վերջին թագադրութիւնը որ կ'յիշուի ի պատմութեան մերում՝ է թագադրութիւնն Աշխէն տիկնոջ, հաւանականապէս ի ձեռն Սմբատայ ասպետի, ինչպէս կ'երևի, յառաջ քան զդարձն Տրդատայ։ Տրդատ ասէ Խորենացին, գալով ի Հայս՝ յղեց զՍմբատ ասպետ, Բագարատայ հայրը, բերել զօրիորդն Աշխէն, զդուստր Աշխադարայ ի կնութիւն, և հրամայեց գրել զնա Արշակունի, ագուցանել նմա ծիրանի և թագ կապել.—«Եկեալ Տրդատայ յաշխարհս՝ առաքէ զՍմբատ ասպետ, զհայր Բագարատայ, ածել զկոյսն Աշխէն, զդուստր Աշխադարայ իւր ի կնութիւն։ Եւ հրամայէ գրել զնա Արշակունի և զգեցուցանել ծիրանիս և թագ կապել» (Խոր. Բ. ՁԳ.)։ Յետ դարձին Տրդատայ, առ յաջորդօք նորա, Բագրատունիներէն պսակուած թագաւոր ամենևին յիշուած չէ, ո՛չ առ Բուզանդայ և ոչ առ Խորենացւոյն, այնպէս որ այն սովորութիւնը բոլորովին դադրած կ'երևի առ քրիստոնէութեամբ։ Պատճառ այս դադարման թերևս այն էր, զի այն սովորութիւնն իբրև հեթանոսական արարողութիւն ճանչցուած էր յազգին։

Մեր այս դիտողութիւնն զթագադիր իշխանութենէ Բագրատունեաց, թէև ենթադրութիւն՝ ունի սակայն խորին պատմական նշանակութիւն մը։ Ինչպէս առ Եբրայեցիս՝ նոյնպէս առ Եգիպտացիս և առ արիական ազգս (Զենտ. Բ.), իշխանութիւնն ի սկզբան աստուածպետական էր, այսինքն քուրմք կամ մարգարէք էին միանգամայն աշխարհական իշխանք։ Երբ աշխարհական իշխանութիւնն առնուեցաւ ի կրօնականաց՝ այս վերջինք ինքեանց պահեցին զթա-

գաւորս պսակելու կամ օծելու արտօնութիւնը։ Այսպէս երբ Հրեայք խնդրեցին թագաւոր՝ վերջին մարգարէ իշխան նոցա Սամուէլ օծեց զՍաւուղ, զառաջին թագաւոր Հրէից, և ապա զԴաւիթ յաջորդ նորա։ Առ Բակուրիացիս և առ Մարս կար զթագաւորս պսակելու սովորութիւն։ Պարթևաց թագաւորք, որ էին ի տոհմէ թագաւորաց Պարսից՝ ունէին յատուկ թագադիր իշխաններ։ (Ամմ. Մարկեղ. ԻԳ. 3, Լ. 12)։

35. Խորենացին «զանխորհուրդ» ապստամբութիւն Հայկակայ, Զարմայրի երթն ի պատերազմն Տրովայ, ինչպէս նաև Սենեքերիմայ որդւոց գալուստն առ Սկայորդւով և զԲագրատունեացն առ Հրաչէիւ՝ իբրև միջանկեալ դէպք կը յիշէ, առնլով, որպէս ասէ՝ «ի բանից արանց իմաստնոց և առ այսոսիկ քաջախոհակաց», քանզի աղբիւր նորա Մար Իբաս, յետ յիշելոյ (գիրք Ա. գլ. Ի.) զմահ Արայեանն Արայի «ընդ Շամիրամայ ի պատերազմի», (Շամիրամայ դէմ, թէ վասն Շամիրամայ—չէ յայտ), համառօտիւ խօսելով զորդւոյ նորա զԱնուշաւանայ՝ կու գայ ի պատմութիւն Պարուրայ, լռութեամբ անցնելով, որպէս տեսցուք այլուր, զհարիւրամեան միջոցաւ, յԱնուշաւանայ մինչև ցՊարոյր։ Բայց յիշատակութիւն Խորենացւոյն զԱնուշաւանայ (տես էջ 110. 17.), համառօտ արդարև կարևոր է սակայն ըստ մեզ, քանզի յայտնի է թէ հին աւանդութենէ, թերևս ազգային երգէ մը կու գայ։ Խորենացին զԱնուշաւան, յետ մահուան հօր իւրոյ Արայեան Արայի առ Նինուասաւ, «տաւայտել» կու տայ «ի դրան արքունի բաւական ժամանակս», մինչև բարեկամաց օգնութեամբ առնուլ նախ մի՛ոյ մասին Հայաստանի, և ապա բոլորին վերակացութիւնը «հարկահանութեամբ», այսինքն իբրև հարկատու իշխան։ Այսպէս, ըստ Խորենացւոյն, յԱնուշաւանայ սկսեալ մինչև ի Պարոյր, իբր հազար տարի, Հայք են հարկատու իշխանութիւն Ասորեստանեայց։ Զհայս առ Ասորեստանեօք, ի Նինուասայ մինչև ի սպառ բարձումն տէրութեան Ասորեստանի, գնել հարկատու այն տէրութեան՝ մակաբերութիւն է մանաւանդ քան ստոյգ պատմութիւն։ Ասորեստանի թագաւորաց ընդարձակ աշխարհակալութեան նայելով՝ կրնայ արդարև կարծուիլ, թէ Հայք ևս նուաճեցան ընդ իշխանութեամբ նոցա. բայց ինչպէս արդէն տեսանք էջ 38—40՝ առ այս ոչ միայն պատմական ապացոյց չունինք, այլ ընդհակառակն կան ստոյգ պատմական ականարկութիւններ, որ բաւական են կարծեցնել, թէ Հայք, կամ «երկիրն Արարատայ», չեղև կանոնաւոր հարկատու իշխանութիւն առ Ասորեստանեօք։

Թէ Անուշաւան էր արդարև որդի Արայեան Արայի, և թէ

եղև Հարկատու իշխան կամ ոչ՝ այս չէ ըստ մեզ ի պատմութեան Անուշաւանայ կարևորագոյն կէտ, և չկարէ ընդունուիլ իբրև ստուգիւ պատմական։ Կարևորագոյն և պատմական կէտ յասացեալսն զԱնուշաւանայ է մանաւանդ Սօս անունն, որ ի կրօնական արարողութենէ իմեքէ յառաջ եկած կը պատմուի, այն է ի լինելոյ նորա նուիրեալ ի սօսիսն Արմաւրի, որ էր հին կրօնական կամ քրմական քաղաք Հայոց (Խոր. Բ. Ը. և ԺԲ.), ինչպէս նաև այն սօսեաց լինելն «ի հմայս», այսինքն պատգամատեղի բազում ժամանակս։ Արմաւրի սօսիներն արդարև կը յիշեցունեն Դոդոնայի «պատգամատու կաղնին,» quercum fatidicum, որոյ տերևներուն շարժմանէն հմայութիւնք լինէին առ նախնի Պեղասգացիս Եպիռոսի, որպէս առ հինսն Հայոց՝ յԱրմաւիր։ Զենք գիտեր, թէ ինչպէս Խորենացին զplatanum armeniacum Հռոմայեցւոց, այն է արմենական կամ հայական սօսին, սխալմամբ կը թարգմանէ Արմենակայ սօսի։

36. Մինչև սկսեալ յիշել զպատմութիւն Մար Իբասայ զՊարուրէ կամ զկործանմանէ տէրութեան Ասորեստանի ի ձեռն Վարբակայ Մարի ըստ Կտեսեայ՝ հարկ կը համարինք ցուցնել Խորենացւոյն ժամանակագրական սխալը, որով շատ անձանց և դիպաց թուականներն կը շփոթէ ընդ միմեանս։ Գիտենք թէ Ասորեստանեայց պետութիւնն անց ի Քաղդէացիս ի վերջ կոյս Է. դարուն (625) Ն. Ք. գՔր.։ Արդէն տեսանք, (էջ 33. 11.), թէ ինչպէս ժամանակակից պատմութիւնն Հրէից, թէպէտ ոչ յայտնապէս սակայն լռելեայն, զբարձումն տէրութեան Ասորեստանեայց առմամբ Նինուէի կ'ակնարկէ լեալ գրեթէ զայնու ժամանակաւ, այն է ի սկզբան թագաւորութեանն Յովսեայ (639—608), համաձայն յոյն պատմչացն Հերոդոտոսի և Քսենոփոնի, որ զբարձումն զայն կը պատմեն լեալ առ Կիաքսարաւ Ա.—ով, իբր 625-ին նախ քան զՔր.։ Բայց Կտեսիաս, այլ պատմիչ յոյն, և ի նմանէ առնլով նաև Դիոդորոս Սիկեղացի, յետ Նինուասայ ոչ սակաւ ծոյլ և մեղկ թագաւորաց անուններ տալով՝ Ասորեստանեայց պետութիւնը վերջացած կը դնեն առ Սարդանաբաղաւ, իբր 876-ին նախ քան զքրիստոնէական թուականն։ Ըստ բանի սոցա՝ Վարբակէս կուսակալ Մարաց և Բեղեսիս կուսակալ Բաբելոնի միաբանելով կու գան Նինուէի վրայ. քաղաքը կ'առնուն, Սարդանաբաղ կ'այրէ զինք ի պալատան իւրում, և այսպէս Մարք և Բաբելացիք ազատեալ Ասորեստանեայց իշխանութենէն՝ լինին ինքնագլուխ թագաւորութիւնք։ Եւսեբիոս ի Քրոնիկոնին իւրում, ի յիշելն զբարձումն տէրութեան Ասորեստանի՝ կը հետևի Կտեսեայ։ Նաև Խորենացին, որպէս թէ ի Մար Իբասայ, բայց բուն

յԵւսեբեայ առնլով, քան զոր այլ աղբիւր չունի՝ կը դնէ զբարձումն տէրութեան Ասորեստանի ըստ Կտեսեայ առ Վարբակաւ, ընդ որում ժամանակակից և գործակից կը պատմէ լինել զՊարոյր ոմն նախարար Հայ զայնու ժամանակաւ։ Արդ՝ ըստ Հաշուոյ Կտեսեայ, թուականն կործանման տէրութեան Ասորեստանի առ Վարբակաւ չէ յետոյ քան զամն 876 նախ քան զՔր. Ահա Կտեսեայ Հաշիւը։ Ըստ Կտեսեայ Ասորեստանի տէրութեան սկիզբը հազար ամօք կամ սակաւ ինչ աւելի յառաջ էր քան զՏրովական պատերազմն, այն է իբր 2176-ին նախ քան զՔր. (Կտես. առ Եւս. Քր. Ա. Հտ.), քանզի թուական Տրովական պատերազմին չանցնիր այսր քան զամն 1176 նախ քան զՔր., իսկ կործանումն Ասորեստանի տէրութեան ի ձեռն Վարբակայ, դարձեալ ըստ Կտեսեայ (Անդ), եղև 1300 ամօք յետոյ քան զհաստատութիւն տէրութեան Ասորեստանի, այսինքն 2176 — 1300=876-ին նախ քան զՔր.։ Արդ, եթէ ըստ Խորենացւոյն Ասորեստանի տէրութեան կործանումը եղաւ առ Վարբակաւ, այն է 876-ին նախ քան զՔր.՝ ապա ոչ Սկայորդին (նախորդ Պարուրայ) կարէր լինել առ որդւովք Սենեքերիմայ, այն է 707-ին նախ քան զՔր., քանզի ի մէջ այս երկուց թուականաց, 876 և 707, իբր 170 տարւոյ միջոց կայ, և ոչ Հրաչէ (յաջորդ Պարուրի) կարէր լինել առ Նաբուգոդոնոսորաւ, քանզի իբր 290 ամաց միջոց կայ ի մէջ 876-ի և 587-ի, որ է թուական Հրէից գերութեան։

Ոմանք զԽորենացին արդարացնելու համար՝ զՊարոյր կը դնեն ոչ առ Վարբակաւ, այլ առ Կիաքսարաւ Ա.-ով, կամ Նինուէի առման ժամանակ, այսինքն 625-ին նախ քան զՔր. և կը կարծեն, թէ այսպէս Սկայորդին լինի ժամանակակից Սենեքերիմայ, և Հրաչեայ՝ Նաբուգոդոնոսորայ։ Բայց այս բանի միաբանութեամբ ոչ թէ կը վերնայ սխալը, այլ նոր անտեղութիւն մը կը ծագի։ Սկայորդւոյն իշխանութեան սկիզբը դնելով 707-ին, որ է ամ փախստեան որդւոց Սենեքերիմայ ի Հայս, և Հրաչէի իշխանութեան վերջը 588-ին, որ է ամ վերջին գերութեան Հրէից՝ ամք իշխանութեան երից թագաւորաց կամ իշխանաց, Սկայորդւոյն, Պարուրի և Հրաչէի, լինին 120. իսկ ամք իշխանութեան յաջորդ եօթն թագաւորաց, այսինքն ի Հրաչէէ մինչև Տիգրան (Տիգրանայ թագաւորութեան սկիզբը դնելով Բաբելոնի առման տարին, որ է 538,)՝ լինին 50։ Ապաքէն հաւանական չէ և ոչ իսկ հաւատալի, թէ երեք անձինք թագաւորեցին 120 տարի, այսինքն իւրաքանչիւր, թէ սակաւ, 40 տարի կարգաւ, իսկ եօթն անձինք 50 տարի, այն է իւրաքանչիւր, թէ աւելի, եօթնական տարի։

Ըստ Կտեսեայ, առմամբ Նինուէի ի ձեռն Վարբակայ, ազատ

եղան Մարք և Բաբելացիք։ Մար Իբաս, ըստ Խորենացւոյն, կը պատմէ, թէ Հայք, որ էին ընդ իշխանութեամբ Ասորեստանեայց՝ եղան ազատ թագաւորութիւն։ Որպէս թէ յայնժամու հարկատու իշխանն Հայոց Պարոյր, օգնելով Վարբակայ՝ իբր վարձ առաւ «թագաւորութեան ձև և շուք»։ Ի բանից Խորենացւոյն դժուարին է հասկնալ, թէ Պարոյր օգնեց Վարբակայ բառնալ Ասորեստանի տէրութիւնը, թէ Վարբակ՝ Պարուրի. քանզի Խորենացին, որ զՊարուրէ ասէ, «Ոչ փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի Վարբակայ մարէ, բառնալով (եբարձ) զթագաւորութիւնն ի Սարդանաբաղայ»՝ յետոյ ասէ զՎարբակայ, թէ «Յինքն զքաջն մեր նախարար յանկուցանէ զՊարոյր,... և զթագաւորութիւնն ի Սարդանաբաղայ յինքն առեալ, տիրէ Ասորեստանի (Խոր. Ա. ԻԱ.)։

Թողունք զայս հակասութիւն. ինչպէս որ հիմ չունի լինելն Հայոց հարկատու իշխանութիւն առ Ասորեստանեօք (տես էջ 179)՝ նոյնպէս հիմ չունի Պարուրի մը «թագաւորական ձև և շուք» ընդունելն ի Վարբակայ, քանզի Կտեսեայ պատմութիւնն զկործանումն տէրութեան Ասորեստանի ի ձեռն Վարբակայ իբր 876-ին նախ քան զՔր.՝ չէ ամենևին համաձայն Հրէից ժամանակակից պատմութեան, որ այն կործանումը կը դնէ աւելի քան 200 ամօք յետոյ քան զամն 876։ Եւ արդարև ի միջոցի ժամանակին յորում Կտեսիաս բարձեալ կը դնէ զտէրութիւնն Ասորեստանի, այն է 876-էն մինչև 625, որ է թուական բուն կործանման Նինուէի՝ կը գտնենք զտէրութիւնն Ասորեստանի ի կատար մեծութեան հասած առ աշխարհակալ թագաւորօք, որպիսի էին Փուղա, Թագղադ—փաղասար, Սարգանաբաղ, Սենեքերիմ և այլք։ Սակաւ ինչ յետոյ են քան զամն 876 նաև Հրէից մարգարէք Եսայի, Երեմիա, որ կը յիշեն կամ կ'սպառնան Ասորեստանի տէրութեան անկումը և զկործանումն Նինուէի։ Ոմանք երկիցս աւերուած կը դնեն զՆինուէ, մի առ Վարբակաւ (876), և միւս ևս՝ առ Կիաքսարաւ (625)։ Բայց Հրէից մատեանք մի միայն աւերումն կը ճանչնան Նինուէի, և զայն առ Յովսեաւ կամ ըստ Յունաց՝ առ Կիաքսարաւ (625)։ Նաւումայ մարգարէութիւն կոչուած համառօտ գրոյն հեղինակը, որ թուի լինել ժամանակակից առման Նինուէի առ Կիաքսարաւ, ուստի և յետոյ քան զ876՝ ի վաղուց միշտ յաջողութեան և ի բարգաւաճման գիտէ զՆինուէ մինչև ի ժամանակ իւր.—«Նինուէ ի բազում ժամանակաց հետէ իբրև զաւազան ջուրց . . . բնակութիւն առիւծուց (թագաւորաց) և արօտ հզօր առիւծուց. անդ շրջէր արու առիւծ ընդ մատակ առիւծու և ընդ կորեան իւրում, և չէր որ զարհուրեցուցանէր զնոսա։ Որչափ ինչ բաւականն էր՝ պատրաստէր

կորեանց իւրոց և հեղձուցանէր վասն առևծուց իւրոց մատակաց, և լնոյր որսով զմորիս իւր և զբնակութիւնս իւր յափշտակութեամբ» (Նաւ. Բ. 8. 11, 12 ըստ Եբր. բն.)։

37. Ինչպէս ուրիշ Հայ իշխանաց յիշելոց ի Խորենացւոյն նոյնպէս Պարուրի գալով՝ չունինք ամենևին ապացոյց, թէ այսու անուամբ եղաւ իշխան կամ թագաւոր Հայոց. բայց թէ Հայք, երբև Արարատեան թագաւորութիւն, գտնուեցան ի մէջ ազգաց, որ տուին վախճան Հզօր պետութեանն Ասորեստանի՝ զայսմանէ չիք տարակոյս (տես էջ 52, 53)։

Դժբախտութեամբ մեր ծերունի պատմիչը կը սիրէ խրթնութիւն։ Ի սկզբան ԻԱ. գլխոյ առաջին գրոցն, նախ քան զսկսանելն խօսել զՊարուրէ՝ կը դնէ մթին յառաջաբան մը, որոյ ոչ միտք և ոչ նպատակ յայտնի է։ Արդ, ասէ, ուրախ եմ յոյժ, քանզի հասայ մեր պատմութեան այն տեղն, ուր Հայ իշխանաց սերունդը կը հասնի յաստիճան թագաւորութեան։ Ուստի գործ մեծ առաջի կայ մեզ, և յիշել բազում ինչ որոց զհիմունս յաջողեցաւ մեզ կարդալ ի չորս գիրս ճարտարախօսին և իմաստնոյ, նա մանաւանդ իմաստնագունին քան զայլս. «Եւ այժմ ահա զուարճացայց ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանել ի տեղիս մերում իսկ բնիկ նախնւոյն, յորում սերունդք թագաւորութեան հասանեն յաստիճան։ Վասնորոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ճառից, զորոց մեզէն իսկ հիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք ի չորս հազներգութիւնս արգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ, և զմէջ իմաստնոցն իմաստնագունի» (Խոր. Ա. ԻԱ.)։ Թէ ո՞վ էր այն «արգասաւորն ի բանս» և «իմաստուն» և «ի մէջ իմաստնոց իմաստնագոյնն,» և ինչ էին այն «բազում առարկութիւնք ճառից զորոց զհիմունս ի չորս հազներգութիւնս արժանաւորեցաւ ընթեռնուլ» Խորենացին՝ յայտնի չէ։ Կ'երևի սակայն, թէ այն չորեքին գիրք չէին զՊարուրէ և զյաջորդաց նորա, քանզի, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև՝ ինքն Խորենացին, կը խոստովանի, թէ զանուն և զգործս Պարուրի և յաջորդաց նորա առած է յայլմէ աղբերէ։ Հոս դիտողութեան արժանի սա է, զի Խորենացին իսկ կը վկայէ, թէ զպատմութենէն Վարբակայ այլ ազգ կարծիք կային առ իւրով ժամանակաւ։ Քանզի յետ վերոյիշեալ յառաջաբանին և զկնի յիշելոյ համառօտիւ զպատմութիւն Վարբակայ և Պարուրի՝ ասէ. Եթէ այլք այլազգ կը պատմեն զայս՝ մի զարմանար, վասն զի, որ ինչ կանխաւ ասացաք զանիմաստասիրութենէ նախնեաց մերոց՝ զնոյն ասեմք և աստ։ Նաբուգոդոնոսորայ հօր քաջութիւնք գրե-

ցան յիշողութեան վերակացուաց ձեռօք, իսկ մերքն չխորհեցան այսպէս առնել, ուստի և (մերոց գործք) գրեցան ի յետնոց· «Այլ այս եթէ առ այլս այլազգաբար պատմի՝ մի ինչ սքանչանար։ Զի որպէս վերագոյն ուրեմն յառաջին ճառսն ամբաստանեցաք զառաջին նախնեացն մերոց անիմաստասէր բարուց ախորժակս՝ այս հանդիպի և աստանօր։ Քանզի որք ի հօրէն Նաբուգոդոնոսորայ գործք՝ գրեցան յլուրեանցն յիշողութեանցն վերակացուաց, իսկ մերոցն ոչ այսպիսի ինչ խորհեցելոցն՝ մնացին նշանակեալ ի վերջինսն» (Խոր. Ա. ԻԱ)։ Խորենացին, որչափ կը հասկնանք, կամի ասել, թէ որովհետև գործք Պարուրայ և յաջորդաց նորա չգըտուեցան ի ժամանակակցաց՝ յետինք գրեցին զնոցանէ, ուստի և տարբեր կը խօսին քան զիս, որ կ'առնում «ի հնոցն դիւանաց Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից»։ Բայց անցնինք, ասէ, մեր որերոյն կամ մանաւանդ թագաւորաց, որ ապրեցան մինչև Պարթևաց տէրութիւնը։ Քանզի այս մարդիկը, թագաւորք մեր, սիրելի են ինձ իբրև *բնիկք, արեանառուք* և *հարազատք*։ Երանի թէ յայնժամ գար փրկիչն զիս գնել, և ես առ նոքօք գայի յաշխարհ զուարճանալ տեսութեամբ նոցա, և որդի տագնապը չկրել. բայց չհասանք այն բարեբախտութեան, և այն վիճակն ևս (թագաւորութիւնը) փախաւ մենէ. «Այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւանդ թագաւորաց, մինչև ցտէրութիւնն Պարթեւաց։ Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոյ թագաւորէն սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հարազատք։ Եւ սիրելի էր ինձ յայնժամ գալ փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տեսութեամբն խրախճանալ և յարդեացս վտանգից ապրել։ Այլ վաղ ուրեմն փախեաւ ի մէնջ պատահումն այն, թէ արդեւք և վիճակ» (Խոր. Ա. ԻԲ)։

Բնիկ, արեանառու, հարազատ բառերէն Յովհաննէս Կաթողիկոս պատմիչ, ինչպէս կը տեսնուի, հետևցնելով, թէ Նախորդք Պարուրի չէին բնիկ հայ՝ սա պատմութիւնը կ'հնարէ։ Յետ Անուշաւանայ, ասէ, ոչ որդի և ոչ ազգականք նորա ժառանգեցին զիշխանութիւնը, այլ օտար ցեղէ մարդիկ բռնութեամբ գրաւելով իշխանութիւնը՝ տիրեցին Թորգոմեան ազգին, ոչ յաջորդութեան այլ աշխարհակալութեան իրաւամբ. «Ի զարմից սորա (Անուշաւանայ) և զաւակաց ոչ տիրեալ գտանէին հայրենի նահապետութեանցն. այլ այլք ոմանք բռնակալեալք ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան տիրեալ Թորգոմեանս գրոհի, որոց անուանքն են Պարէտ, Արբակ... Սկայորդի. յետ ամենեցուն սոցա Պարոյր անուն յազգէ *Հայկայ, զանազգին ի բաց լքեալ*, և զնահապետութիւն ազգէ

իւրոյ վերստին նորոգեալ պայազատէր» (Յովհ. Կաթ. Գլ. Բ.)։ Յովհաննու Կաթողիկոսի այսպէս վճռողաբար խօսելէն ոմանք կը կարծեն զնա ստացիչ Մարիբասեան օրինակի մը, և ուղղակի անտի հանեալ կը դնեն այն պարագայն, զոր թողեալ էր Խորենացւոյն։ Յայտնի է սակայն, թէ յիշեալ պարագայն ի պատմութեան Յովհաննու Կաթողիկսի մակաբերութիւն է։ Կոչել Խորենացւոյն զՊարոյր և զյաջորդս նորա «ընիկ, արեանառու և հարազատ» ոչ թէ կը ցուցնէ, թէ քան զնոսա առաջինք օտարազգի էին, քանզի Պարուրի նախորդն Սկայորդի, ըստ նոյն պատմութեան, հայր էր Պարուրի, այլ Խորենացին հաւանականապէս զՊարուրեանս, իբրև Հայկայ սերունդ՝ կը կոչէ ընիկ և հարազատ, համեմատութեամբ յաջորդ հարստութեան Արշակունեաց զորս օտարազգի կը համարէր։ Յովհաննու Կաթողիկոսի ենթադրութեան նման կամայական, երբեմն նաև պառաւական վէպեր դժբախտութեամբ շատ են առ պատմիչս մեր, մանաւանդ առ յետինս։ Ի սկզբան պատմութեան Սեբէոսի անծանօթ ոմն կը կցէ այլանդակ պատմութիւն մը, կոչելով «Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ ճառեան», որ որպէս թէ յԱգաթանգեղոսէ դրոշմեալ էր յարձանի հրամանաւ Տրդատայ ի Մծբին հանդէպ դրան ապարանից Սանատրկոյ, բայց յետոյ ծածկեալ ընդ աւերակօք, և յետ ժամանակաց, մինչ աւերակները կը բանային սիւներ հանելու ըստ հրամանի Պարսից արքային՝ ըստ դիպաց իմն գտնուած էր արձանը։ Թէ ո՛վ կամ երբ էր Պարսից թագաւորն առ որով գտնուեցաւ արձանագրութիւնը, և ո՛վ կամ երբ էր այն, որ զայս կը պատմէ և որ ասէ թէ գտաւ զայն արձանագրութիւն ի Միջագետս՝ յիշուած չեն։ Թէ տգէտ կամ խաբեբայ մարդիկ ժամանակաւ կը յօդէին այսպիսի սուտեր՝ զարմանալի չէ. այն է զարմանալի, զի առ մեօք իսկ ծանր խորհող մարդիկ կը թուին հաւատս ընծայել յետին դարուց տգէտ հեղինակաց անհամ պատմութիւններուն, որոց թեթև հաւատարմութիւն անգամ ընծայել չէ առողջ մտաց։ Առ ի չգոյէ ստոյգ և մանր տեղեկութեան զհին ժամանակաց՝ անցեալ դարերն ըստ առաջակային դատել, ենթադրութեանց և անհեդեդ ստուգաբանութեանց վրայ պատմութիւն հիմնել, մինչդեռ ոչ պատմական և բանասիրական ուսմունք և ոչ սկզբունք անաչառ քննադատութեան յարգի էին, և ի պատճառս այսոցիկ անպատիժ մնալ գրական խաբէութեանց՝—այս ամենայն, ինչպէս նաև ազգային և կրօնական նկատմունք և նախապաշարմունք և միտումն ի հրաշալիս և այլ բազում ինչ, պատճառ եղան, զի ծագմանէ մատենագրութեան կամ ի սկզբանէ պատմական ժամանակին մինչև ցերևել բանասիրական և քննադատական ուսմանց յընթացս վերջին երկու դա-

բուց՝ հին ազգաց գրեթէ ամենուն մէջ պատմութեան մատեանք մեծաւ մասամբ լի են անտեղութիւններով, մանաւանդ երբ կը խօսին զդիպաց՝ որոց չեն ժամանակակից։ Ուստի բանասիրական, հնագիտական, քննադատական և գրեթէ ուրիշ ամեն ուսման և գիտութեան մէջ համբակ և թերի ժամանակներ, ինչպէս ուրիշ ազգաց մատենագիրներուն, նոյնպէս մերայոց՝ բնական էր ենթադրել գիր և մատեան, դիւաններ և տարեգիրներ՝ ուր և երբ այսոքիկ չգոյին և չկարէին գոլ։ Թողունք յԱրագած անուան զԱրմենակ, ի Մասիս անուան զԱմասիա տեսնելը. որ աւելի զարմանալին է՝ Մարանդ մեկնուած է իբր գերեզմանատեղի Նոյի կնոջ իբրև հասարակաց մօր, Նախճաւան՝ իբրև առաջին իջևան նոյն նահապետին յետ համաշխարհական ջրհեղեղին, Ակոռի՝ իբրև դարձեալ ի Նոյէ տնկեալ առաջին այգեստան, և այսպէս այս բառերն հայերէն կարծելով և ի նմին իսկ ի Նոյէ դրուած՝ եղան պնդողք, և թերևս կան ցարդ՝ թէ Հայոց լեզուն Նոյայ, ուստի և նախաջրհեղեղեան լեզուն է։

38. Խորենացին յառաջ քան սկսանելն զպատմութիւն յաջորդացն Պարուրի, հարցնողներուն թէ ուստի առած էր այն պատմութիւնը՝ կը պատասխանէ այսպէս. Եթէ հարցուի, թէ ուստի գտանք այսպէս մեր այսչափ նախնեաց անունները և գործերը՝ կը պատասխանենք թէ Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից հին դիւաններէն, վասն զի մեր նախնեաց անուններն և գործերն, իբրև այն տէրութեանց կողմանէ կարգեալ գործակալաց և վերակացուաց և մեծ կողմնակալաց՝ մտան յարքունի գրուածս նոցա (Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից)։ «Այլ եթէ ասիցեն՝ ուստի մեզ զնախնեացն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և զգործս՝ ասեմ. Ի հնոցն դիւանաց Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբր գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կարգելոց և մեծաց կողմնակալաց» (Խոր. Ա. ԻԱ.)։ Ի բանից աստի Խորենացւոյն կը հետևի նախ՝ թէ ի Խորենացւոյն այնպէս ցնծութեամբ թագաւոր կոչուած Պարոյր և յաջորդք նորա, նորին իսկ Խորենացւոյն վկայութեամբ, ոչ այլ ինչ էին եթէ ոչ Քաղդէացւոց և Պարսից կողմէն դրուած գործակալներ, վերակացուներ և մեծ կուսակալներ։ Մեր ծերունի պատմագիրն կամ հակառակ իւր կը խօսի, և կամ որոշ ինչ չի գիտեր զպաշտօնէ և զպատուոյ այնոցիկ զորս թագաւոր կանուանէ։ Երկրորդ կը հետևի, թէ զանուանս և զգործս նոցա ոչ թէ Մար Իբաս, այլ Խորենացին գլխովին հանեց Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից դիւաններէն, թէպէտ այլուր ասէ, թէ Մար Իբաս բերաւ բոլոր այն պատմութիւնը Նի-

նուէի դիւանին մէջ գտնուած քաղդէական մատենէն։ (Խոր. Ա. Թ.)։ Զիարդ և իցէ՝ կ՚անցնինք նաև զայսու հակառութեամբ, կը զարմանանք սակայն, թէ ինչպէս Խորենացին, ունելով առաջի իւր երից երևելի ազգաց, Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից դիւանները, յորս գրուած էին անուանք և գործք նախնեաց մերոց իբրև գործակալաց և վերակացուաց, նա մանաւանդ իբրև մեծաց կողմնակալաց՝ ինչպէս յառաջ քան զՊարոյր, նոյնպէս յետ Պարոյրի անուն միայն կը յիշէ առանց նշանաւոր ինչ գործ պատմելու մինչև Տիգրան, զորմէ երկայնագոյնս ճառէ լի գովեստիւք։

39. Մեր ծերունի պատմիչը կը ջանայ հաւատացունել մեզ, բայց հաւատալի չէ, թէ Քաղդէացիք և Պարսք ի դիւանս կամ յարքունի քարտէսս իւրեանց գրեցին զպատմութիւն Տիգրանայ, օտար թագաւորի, կամ մանաւանդ, դարձեալ ըստ նորին Խորենացւոյ, գործակալի կամ վերակացուի իւրեանց այնպէս մանր և երկար, մինչև յիշել զլինել նորա նախանձելի յետնոց՝ Հայաստանի հին սահմաններուն տիրելով, բազմացունելով «մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց, և զգեստուց և պէսպէս գունոց և անկուածոց արանց և կանանց միանգամայն, որով տգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք», «պարարելով զհասակս ամենեցուն խաղով և մեղու», բարւոքելով զկարգս զինուորութեան այնպէս, զի հետևակամարտք (ոտանաւոր զօրքը) լինէին «ի վերայ ուսոց ձիոց բերեալք, պարսաւորքն առհասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն (բրով կռուողներ) ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ» ծածկեալ, մինչ զի «տեսիլ միայն» նոցա և «փայլմունք և շողիւնք պահպանակաց և զինուց» նոցա բաւական էին զթշնամին հալածել. դարձեալ զառաքինութիւնս և զձիրս նորա, զորօրինակ զհամեստութիւն նորա «ի կերակուրս և յըմպելիս», զլինելն «մեծիմաստ, պերճաբան, պիտանի յամենայն իրս մարդկութեան», «արդարադատ, հաւասարասէր», աննախանձ; անարգամեծար, խնամոտ. նաև զհանգամանս մարմնոյն, այսինքն թէ էր «խարտեաշ, աղէբեկ ծայրիւ հերաց, երեսօք գունեան, մեղուակն, անձնեայ, թիկնաւէտ, առոյգաբարձ և գեղեցկոտն»։

Խորենացին յետ դնելոյ զնկարագիր անձին վարուց և կարգաց Տիգրանայ՝ կ՚սկսի պատմել զաղէրս բարեկամութեան նորա ընդ Աժդահակայ, սկսելով խնամութենէն ի մէջ երկուց թագաւորաց այսպէս. Սա (Տիգրան), ասէ, զառաջինն դաշնաւոր լեալ ընդ Աժդահակայ Մարաց թագաւորի՝ կուտայ նմա զքոյր իւր Տիգրանուհի կնութեան ի խնդրոյ նորին իսկ Աժդահակայ. քանզի այսու

խնամութեամբ կը յուսար Աժդահակ կամ հաստատուն սէր ունել առ Տիգրան, և կամ դիւրաւ տալ զնա սպանանել, վասն զի խնթիւ էր Աժդահակ ընդ Տիգրանայ, մանաւանդ զի դէպք մը պատահեցաւ, զոր չարագուշակ կը համարէր Աժդահակ։ Բայց պատճառ խիթալոյ նորա ի Տիգրանայ էր մտերիմ դաշնաւորութիւն սորա ընդ Կիւրոսի։ Այս մտերմութեան յիշատակաւ յաճախ կը փախչէր քուն ի նմանէ, և ստէպ կը հարցունէր խորհրդակիցներուն՝ թէ ո՞րպիսի հնարիւք մարթ էր լուծել զկապ սիրոյն, որ ի մէջ Պարսկին և Հայոյն։ Մինչ այսպիսի շփոթ խորհրդովք յուզեալ էր Աժդահակ դէպ եղև նմա տեսանել երազ, որ թուեցաւ նմա լինել գուշակ մօտալուտ ինչ վտանգի։ «Սա նախ յառաջագոյն դաշնաւոր եղեալ Աժդահակայ որ ի Մարաց էր՝ տայ նմա զքոյր իւր Տիգրանուհի կնութեան՝ ըղձիւք խնդրելով զնա Աժդահակայ։ Քանզի, ասէր, կամ ի ձեռն այսպիսւոյ մերձաւորութեան սէր հաստատուն առ Տիգրան ունել, կամ դիւրաւ այսպէս դաւաճանել զնա ի սպանումն։ Զի էր նմա խէթ կամաց իւրոց, մարգարէութիւն իմն յոչ կամաց լեալ նմա առաջիկայ դիպուածն իւր։ Բայց էր նիւթ այսպիսւոյ խոհականութեան դաշնաւորութիւն մտերմութեան որ ի Կիւրոսէ առ Տիգրան, յորմէ բազում անգամ և ախտ քնոյ ի բաց փախուցեալ լինէր յԱժդահակայ յիշատակաւս այսուիկ. և խորհրդակցաց իւրոց անդուլ առնէր զհարցուածս վասն այսպիսւոյ պատճառի. Ո՞րպէս հնարիւք լուծանել կարասցուք, ասէ, զկապ սիրոյ պարսկայնոյն և հայկազնին բազմաբիւրաւորի։ Եւ յայսպիսի շփոթման խորհրդոց հասանէ նմա առաջակայիցն յայտնութիւն ի ձեռն անրջականաց իմն նախատեսութեանց» (Խոր. Ա. ԻԴ. և ԻԵ.)։

Յետ այսորիկ Խորենացին կ՚սկսի կարգաւ պատմել երազը, խնամութիւնը, դաւաճանութեան խորհուրդը, պատերազմն և զմահ Աժդահակայ, այլովքն հանդերձ, զորս կրկնել հոս աւելորդ է (տես էջ 115—122 հանդերձ բնագրով)։

40 Ընդունինք թէ Տիգրան պատմական անձ է, և այս արդարև չէ բոլորովին առանց հաւանականութեան։ Քսենոփոն ի Կիւրոպեդիին, ինչպէս արդէն տեսանք էջ 56—59, կը յիշէ Տիգրան անուն զոմն արքայորդի Հայոց առ Կիաքսարաւ որդւով Աժդահակայ, ի մանկութեան ծանօթ և բարեկամ Կիւրոսի և որսակից նմա, և կը գովէ զնա իբրև իմաստնագոյն քան զհայրն. կը պատմէ ևս թէ Տիգրան ունէր առ իւր զոմն խրատտու, զոր զարմանալի կը համարէր և զոր հայր նորա ետ սպանանել առ նախանձու։ Կիւրոս ևս կը յարգէր զայրն, մինչև ի լսել զմահ նորա գոչել, «Ո՜հ առնն»։ Կ՚երևի նաև, թէ առ Հայս իսկ, յառաջ քան զԽորենացին, չէր

անծանօթ Տիգրան, այլ կային հին երգեր ի գովեստ նորա առ Խորենացւով, որ ի յիշելն Տիգրանայ գովելի յատկութիւնները՝ կը յաւելու. «Զորմէ ասէին ի հինսն մեր որք բամբռամբն երգէին՝ լինել նմա և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր» (Խոր. Ա. ԻԴ.)։

Ընդունինք ևս, թէ Տիգրան էր մին ի թագաւորաց Հայոց Արարատեան թագաւորութեան։ Բայց որպէս ասացաք՝ հաւանական չէ, և ոչ իսկ հաւատալի, թէ ի դիւանս Քաղդէացւոց և Պարսից կը գտնուէր Տիգրանայ անձին այն երկայն նկարագիրը, զոր կը բերէ Խորենացին, և ոչ մանաւանդ ի մէջ Տիգրանայ և Աժդահակայ անցից պատմութիւնը, որ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ խառնուրդ Վետայի առասպելի մը, զոր արդէն յիշեցինք էջ 51, և պատմելոցն զԿիւրոսէ առ Հերոդոտեայ՝ Տիգրանայ վրայ յարմարցուած, լի անտեղի պարագաներով և հակառակ ժամանակակից պատմութեան, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։

Չէ պարտ զարմանալ, թէ լի անտեղութեամբ կոչեցինք Տիգրանայ պատմութիւնը։ Խորենացին կամելով մեծ քան զամենայն աշխարհակալ թագաւորս ցուցանել զՏիգրան՝ կատարել կու տայ նմա այնպիսի գործ մը, զոր պարսկական պետութեան հզօրագոյն ժամանակին անգամ չկրցան վճարել Դարեհի և Քսերքսի պէս թագաւորք, այն է նուաճել զՅոյնս։ «Սա (Տիգրան), ասէ Խորենացին, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրև նուաճեալ հնազանդէր» (Խոր. Ա. ԻԴ.)։ Ո՞ր Յոյները. Ելլադայի և Պեղոպոնեսի՞, թէ յունական գաղթականութեանց, որ Փոքուն Ասիոյ արևմտեան եզերքն էին, կամ թերևս Արքիպեղագոսի կղզեաց։

Բայց Տիգրան, ըստ Խորենացւոյն, ոչ միայն զՅոյնս նուաճեց, այլև Մարաց տէրութիւնը ջնջեց օգնականութեամբ Կիւրոսի. «Կիւրոսի աջակցեալ զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն» (Խոր. Ա. ԻԴ.), և որ առաւել զարմանալին է՝ նաև զտէրութիւնն Պարսից յինքն յափշտակեց, և զայն՝ կամօք և յօժարութեամբ Կիւրոսի. «Օժանդակ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ունելով՝ զիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց» (Խոր. Ա. ԼԱ.)։ Չենք գիտեր, թէ Խորենացին այսպիսի չափազանց և անհեդեդ պատմութիւններով փառաւո՞ր թէ ծաղրելի ցուցնել կ'ուզէ մեր պատմութիւնը։

41. Խորենացւոյն պատմութեան այս մասին մէջ ևս կը գտնենք երևելի հակասութիւն մը։ Խորենացին յետ դնելոյ զՊարոյր առաջին թագաւոր և նովաւ բարձեալ զօտար լուծն ի պարանոցէն Հայոց՝ առ Տիգրանաւ, զոր իններորդ կը դնէ ի Պարուրէ՝ զՀայս տակաւին ընդ օտար լծով կ'ենթադրէ, քանզի ասէ. Սա (Տիգրան)

զմեզ որ ընդ լծով էինք՝ արար լծագիր և հարկապահանջ.—«Զընդ լծով կացեալսս՝ լծագիրս և հարկապահանջս կացոյց բազմաց» (Խոր. Ա. ԻԴ.)։ Ապա առ Տիգրանաւ, ո՛չ թէ առ Պարուրիւ ազատեցան Հայք յօտար լծոյ։

42. Խորենացին, կամ այլ ո ոք և է հեղինակ պատմութեան անցից ի մէջ Տիգրանայ և Աժդահակայ՝ կը ջանայ ցուցնել, թէ Աժդահակ կասկածելով ի բարեկամութենէն Տիգրանայ ընդ Կիւրոսի՝ կը խորհէր դաւ գործել նմա, և խնդրեց զքոյր նորա Տիգրանուհի կնութեան, կարծելով թէ այնու խնամութեամբ դիւրին լինելոց էր նմա գործ դաւաճանութեանն։ Սակայն, թող զանմիաբանութիւնն զոր պատմութիւն Խորենացւոյն ունի ընդ ժամանակակից պատմութեան՝ կան ի նմա անտեղութիւններ, որ առանց այն անմիաբանութեան ևս բաւական էին անհաւատալի գործել պատմութիւնը։ Դիցուք թէ այնպէս չար և նենգամիտ էր Աժդահակ՝ մինչև ընտրել դաւաճանութեան վատ միջոցը, և զայն յետ խառնելոյ սէր և բարեկամութիւն ընդ Տիգրանայ ի ձեռն խնամութեան. բայց միթէ նաև այնչափ անմիտ էր, մինչև զիւր նենգաւոր խորհուրդ յայտնել համօրէն ժողովոյ նախարարաց։ Աժդահակ այսպիսի խորհուրդ մը հազիւ կրնար մի կամ երկու շատ հաւատարիմ արբանեկաց իւրոց յայտնել գաղտ։ Բայց Աժդահակայ յիմարութիւնն յայնմ է մանաւանդ, զի զայն սոսկալի դաւաճանութիւն կը խորհի կատարել ի ձեռն Տիգրանուհւոյ։ Միթէ գիտէր Աժդահակ, թէ Տիգրանուհի յանձն առնլոց էր լինել գործիք այնպիսի սոսկալի եղեռնագործութեան, և եթէ առնոյր ևս յանձն, միթէ անձամբ պիտի սպանանէր զիւր եղբայր։ Եւ եթէ այն դաւաճանութիւնը, որպէս պատմութիւնն իսկ ասէ, պիտի կատարուէր ի ձեռն «մտերմաց՝ ընչիւք և խոստմամբ պատուոց», և Աժդահակ այնչափ ինչս ունէր մինչև մարթել «զմտերիմս և զկուսակալս Տիգրանայ *զանձիւք* ի նմանէ ի բաց մերկանալ՝ զի՞ պիտոյ էր խնդրել զձեռն Տիգրանուհւոյ՝ ԶՏիգրանուհի դաւաճանութեան խառնելով՝ գործն աւելի կը դժուարանար։ Մտերիմ մը կամ կուսակալ մը հրապուրել ի դաւաճանութիւն գանձուք և պատուոյ խոստմամբ թերևս դիւրին էր, բայց ոչ այնպէս քոյր մը համոզել լինել եղբայրասպան, մանաւանդ զՏիգրանուհի, «գեղեցիկն ի կանայս և խոհեմ», ըստ վկայութեան նորին իսկ Աժդահակայ։ Հոս կայ նաև հակասութիւն մը։ Աժդահակ որ ի սկզբան, ի խորհրդի անդ նախարարաց ասէր. «Զայս ոչ ի ձեռն գանձուց և ոչ ի ձեռն բռնից պատրողաց այժմ առ մեզ հնարաւորութիւն է կատարել»՝ յետ խնամութեանն դարձեալ նոյն միջոցներով, այսինքն «ընչիւք և խոստմամբ պատուոց» կը յու-

տալ կատարել դաւաճանութիւնը.—«Զի այսպիսի արտաքուստ և եկամուտ (սուտ, կեղծ) հարազատութիւնք համարձակ զդաւելն մարթացուցանեն ... իւրոց մտերմաց ընչիւք և խոստմամբ պատուոց տալ հրաման սրով խողխողել, և կամ դեղոց հնարիւք, և կամ զմտերիմս նորա և զկուսակալս զանձիւք ի նմանէ ի բաց մերկանալ»։ Մինթէ հրապուրել զմտերիմս և զկուսակալս Տիգրանայ ընչիւք և պատուոց խոստմամբ սպանանել զԹագաւոր իւրեանց կախեալ էր ի լինելոյ Տիգրանուհւոյ կին Աժդահակայ։

Միւս եւս անտեղութիւն ի պատմութեան աստ սա է, զի ասէ, թէ Աժդահակ խաբուելով ի Տիգրանուհւոյ, որ չէր հաւանելոյ կեղծեօք ընդ առաջարկութիւն նորա, դաւաճանութիւնը դաղտ իմացուած էր եղբօր իւրում՝ զՏիգրան հրաւիրեց երկու տէրութեանց սահմանագլուխը, և ոչ ուրիշ տեղ.—«Ի տեղի միջոց սահմանաց երկուց թագաւորութեանց»։ Աժդահակ կարեւոր գործի համար բարեկամ և խնամի թագաւոր մը ապաքէն կ'հրաւիրէր իւր տէրութեան մայրաքաղաքը, և կամ ինք կ'երթար առ նա։ Այս անսովոր հրաւէրը ո՞չ ապաքէն կասկած կ'յարուցանէր ի միտս Տիգրանայ, և Աժդահակ չխորհեցա՞ւ զայս։ Անտարակոյս Աժդահակայ խորհուրդն այս էր—ի սահմանագլխի անդ տալ խողխողել զՏիգրան, բայց ի՞նչպէս և որո՞յ ձեռօք. մինթէ շահա՞ծ էր Աժդահակ ընչիւք և պատուոյ խոստմամբ զօք ի մտերմաց կամ ի կուսակալաց Տիգրանայ. զայսցանէ կը լռէ պատմութիւնը։ Արդարև անհամ առասպել։

Խորենացին որ զՏիգրան կամէր ցուցանել իբրև զմին ի մեծամեծ աշխարհակալաց Ասիոյ, տալով նմա նուաճել զՅոյնս և «յինքն լափշտակել զտէրութիւն Մարաց և Պարսից»՝ կանխելով կու տայ նմա կարգել և յարդարել իւր զինուորական զօրութիւն և ահագին բանակ մը կազմել։ Զօրքն, ասէ, որոց զէնք էին առաջ պարսատիկ և շերտ, և հետի կ'երթային գրեթէ մերկ՝ (առ Տիգրանաւ) առ հասարակ վառեցան աղեղամբք, սուսերօք և նիզակօք, և պատեալ զրահիւք և վահանօք՝ ձիով կ'երթային, այնպէս որ երբ ի մի վայր կու գային՝ տեսիլ նոցա և շողիւն պահպանակաց նոցա և զինուց բաւական էին ահիւ հալածել զթշնամին։ «Հետեւակամարտքն (լինէին) ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն՝ առ հասարակ գիտաղեղունք, և շերտաւորքն՝ ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն՝ վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայցն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել» (Խոր. Ա. ԻԴ.)։ Գժուարին է սակայն հաւատալ,

թէ ժողովուրդ մը, որ յետ ընկճեալ մնալոյ դարերով գրեթէ առանց զինուց և զինուորութեան ընդ օտար լծով, այն ինչ սկսած էր սրով, նիզակաւ և աղեղամբ վառեալ հետևակ և հեծեալ ունենալ և ի մօտոյ ճակատ յարդարելով կռուել սովին՝ յանկարծ այնպէս զօրացաւ մինչև տիրել Փոքուն Ասիոյ, զՅոյնս հնազանդեցնել և ջնջել Մարաց թագաւորութեան պէս աշխարհակալ տէրութիւն մը ի հզօրագոյն ժամանակի նորա, որպիսի էր ժամանակ Աժդահակայ, սպաննելով զնոյն ինքն զԱժդահակ և գերի վարելով զկին նորա և զորդիս:

Իսկ Աժդահակայ զերազէն երկար խօսել աւելորդ է: Երազն հասարակաց տեղի էր հին պատմագրաց շատերուն, որք երևելի անձին ուրուք զվարս թափուր կը համարէին ի պայծառութենէ՝ առանց երազի մը հրաշալեաց: Այսպէս Յովսէփ, Փարաւոն, Նաբուգոդոնոսոր երազ կը տեսնեն. Աղեքսանդրի անգամ ապագայ մեծութիւնն երազով կը գուշակուի: Բայց մեր դարը, որ երազն երազ միայն գիտէ և ոչ աւելի ինչ՝ չկարէ տեղի անգամ շնորհել երազոց ի պատմութեան, թող թէ պատմութիւն հիմնել ի վերայ երազոյ:

Բայց թողունք անտեղութիւններն. ինչ որ Խորենացին կը պատմէ զԱժդահակայ, զԿիւրոսէ և զբարձմանէ թագաւորութեանն Մարաց և Պարսից՝ հակառակ է պատմելոցն զնմին Կիւրոսէ և զթագաւորութենէն Մարաց և Պարսից ի գիրս Հրէից, որ ժամանակակից կամ շատ մօտ են ժամանակաւ, նաև ունին ի մօտոյ վերաբերութիւն պատմուածներուն, ինչպէս տեսանք էջ 61:

Ըստ Խորենացւոյն՝ Կիւրոս թշնամի էր Աժդահակայ և հետամուտ թագաւորութեան նորա, որ բարձաւ մահուամբ Աժդահակայ ի ձեռն Տիգրանայ. և որ առաւել զարմանալին է՝ նաև Պարսից թագաւորութիւնն անցաւ առ Տիգրան, ուր ըստ պատմութեան Քսենոփոնի, որ ժամանակակից և միջամուխ էր գործոց Պարսից՝ ոչ միայն բարեկամութիւն այլ և ազգականութիւն կար ի մէջ Մարաց և Պարսից, քանզի Կիւրոս թոռն էր Աժդահակայ ի դստերէ նորա Մանդանեայ և ժառանգեց մանաւանդ քան թէ նուաճեց զթագաւորութիւնն Մարաց յետ Կիաքսարայ մօրեղբօր իւրոյ, որ մեռաւ անորդի: Հրէից մատեանք, ոչ յայտնի, սակայն լռելեայն, կը հաստատեն զայս միաբանութիւն Մարաց և Պարսից. քանզի ի պատմելն զառումն Բաբելոնի ի ձեռն Մարաց՝ յանուանէ կը յիշեն զԿիւրոս իբրև գլուխ և առաջնորդ գործոյն (տես էջ 61): Նոյնպէս կոչելով զպարսկական պետութիւնն «տէրութիւն Մարաց և Պարսից»՝ կը ցուցնեն այն երկու տէրութիւնը միացեալ մանաւանդ քան նուա-

ճեալ մին ի միւսէն։ Իսկ Պարսից տէրութեան գալով՝ իբրեւ զտիւ յայտնի է, թէ տէրութիւնն այն մնաց յետ Կիւրոսի դարս ինչ, և առ Աղեքսանդրիւ նուաճեցաւ ի Մակեդոնացւոց և ի Յունաց։ Ուստի չենք հասկնար, թէ ուստի կը հնարէ Խորենացին թէ Տիգրան «զիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց», և զայն՝ «կամօք և յօժարութեամբ» նորին իսկ Կիւրոսի։

Յետ պատերազմին Աժդահակայ Տիգրանուհի, ըստ Խորենացւոյն, բերուեցաւ Հայաստան թագաւորական պատուով ի քաղաքն Միջագետաց ի Տիգրանակերտ, զոր որպէս թէ եղբայր նորա Տիգրան ետ շինել ի բնակութիւն քեռ իւրոյ։ Կը պատմէ (Մար Իբաս), ասէ Խորենացին, թէ յետ ի գլուխ հանելոյ զայսոսիկ՝ կը յուղարկէ Տիգրան թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ բազմութեամբ ի Հայս, ի քաղաքն զոր շինելով կոչեց յիւր անուն Տիգրանակերտ, և զգաւառսն ետ նմա ի կալուած։ Եւ ասէ թէ այն կողմերուն ոստան անուանեալ ազատ ցեղն ի նորին (Տիգրանուհւոյ) զարմէն է իբրեւ թագաւորական ցեղ։ «Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբոխիւ ի Հայս, յաւանն զոր շինեաց իւրով անուամբ Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ։ Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն՝ ի զարմից սորա ասէ լեալս իբր թագաւորական զարմ» (Խոր. Ա. Լ.)։ Եւ ի պատմելն զաւերումն Տիգրանակերտի ի Շապհոյ՝ նոյն Խորենացին դարձեալ Տիգրանայ կ'ընծայէ այն քաղաքին շինութիւնը։ Նգօք (երկաթի ձողերով), ասէ, խախտեալ կործանեցին ի Հայկազնոյն Տիգրանայ կանգնեալ հզօր պարիսպները։ «Նգախարխար արարեալ զայն, որ ի Հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին» (Խոր. Գ. ԻԸ.)։ Սակայն յոյն և հռոմայեցի պատմիչք զշինութիւն Տիգրանակերտի կ'ընծայեն Տիգրանայ մեծի Արշակունւոյ։ Թողունք զՊլուտարքոս և զայլս, որ բաւական հեռի են ժամանակաւ ի մեծէն Տիգրանայ. Ստրաբոն որ ծաղկեցաւ ի վերջնում կիսուն Ա. դարուն նախ քան զՔր., այն է առ մեծաւ Միհրդատաւ և Տիգրանաւ, և իբր ասիացի, յԱմասիա քաղաքէն Կապադովկիոյ, էր հմուտ իրացն Տիգրանայ՝ մանր կը պատմէ զշինութենէն Տիգրանակերտի ի մեծէն Տիգրանայ յԱրշակունւոյ։ Յետ յիշելոյ զտիրել Տիգրանայ Ատրպատականի, Կորդուաց, առ սակաւ սակաւ բոլոր Միջագետաց, Ասորւոց երկրին և Փիւնիկէի՝ ասէ. «Այսպէս հասեալ ի ծայր զօրութեան (Տիգրան), շինեաց ի մէջ Ողիբերեայ և Զեւգմայի, այն է կամրջին Եփրատայ, քաղաք նոր, զոր անուանեաց Տիգրանակերտ, և արարեալ անմարդէ

երկոտասան քաղաքս Յունաց՝ ած զբնակիչս նոցա անդր։ Բայց արգել եղև նմա ի կատարումն գործոյն յարձակումն Ղուկուղղեայ յաղթողին Միհրդատայ։ Ղուկուղղոս հրաման տուեալ բնակչաց Տիգրանակերտի դառնալ ի քաղաքս ծննդեան իւրեանց, և այնպէս խախանեցաւ նոր մայրաքաղաքն, որ կիսով չափ միայն շինուած էր, և եղև գիւղ աննշան» (Ստրաբ. գիրք ԺԱ. 15)։ Այսչափ միայն գիտէ Ստրաբոն. բայց յետոյ Հռոմայեցի կայսերք մինչև Շապուհ նորոգելով ամրացուցին զՏիգրանակերտ, այնպէս որ իբրև հարիւր տարի յետոյ քան զՍտրաբոն՝ Տակիտոս, պատմիչ Հռոմայեցի զՏիգրանակերտ կ'անուանէ «քաղաք հզօր մեծութեամբ պարսպացն»։ Ուստի այն պարիսպք, զորս «նգախարխար արար» Շապուհ՝ «հոծեալ և յարմարեալ» էին ոչ ի Հայկազնոյն Տիգրանայ և ոչ յԱրշակունեաց, այլ ի Հռոմայեցւոց։

Բայց կան այլ պատմական և բանասիրական պատճառք, յորոց սակս չէ մարթ զՏիգրանակերտ շինեալ դնել առ Արտաշեան թագաւորութեամբ։ Տիգրանակերտ է ի Միջագետս, որ առ մեծաւ Տիգրանաւ միայն եղաւ կարճ ժամանակ մասն Մեծին Հայոց։ Կորիւն զՏիգրանակերտ կ'անուանէ քաղաք Ասորւոց.—«Երթեալ հասանէր (Մեսրոպ) ի կողմանս Արամի, ի քաղաքս երկուս Ասորւոց՝ որոց առաջինն Եդեսիա կոչէր, և երկրորդն՝ Ամիդ անուն»։ Կերտ մասնկանէն ես յայտնի է, թէ չէ մարթ զՏիգրանակերտ այնպէս հին համարել, որպէս դնէ Խորենացին։ Քան զկերտ առաջ են Հայերէն շէն և աւան, ինչպէս կը տեսնենք ի հնագոյն անուանս, որպէս Շակաշէն, Նախճաւան։ Յետ Դարեհի, երբ պաշտօնական լեզու եղաւ պարսկերէնը՝ մուծաւ կերտ, ինչպէս նաև շատ և պատ որ միևնոյն իմաստն ունին, որպէս Երուանդակերտ, Արտաշատ, Վաղարշապատ, և յայտնի է թէ համեմատութեամբ յետնագոյն են, այն է առ Արշակունեօք։ Ընդհանրապէս աւան բառը գործածել սովոր էին նախնիք մեր, ինչպէս Զարեհաւան, Բագաւան, իբրև քաղաք Զարեհի, քաղաք Բագնաց։ Զնոյն իսկ Տիգրանակերտ Խորենացին կ'անուանէ աւան, ինչպէս տեսանք վերը։ Քաղաք, այսինքն խալաք (գալէ),—բերդ, ամրոց՝ սեմական բառ է, մուծեալ ի հայերէն, թէպէտ շատ հին, քանզի Վարդգեսի երգին մէջ կը գտնենք գործածուած. «Եկեալ նստեալ զԱրտխմէդ քաղաքաւ»։

43. Հեղինակ Մարիբասեան պատմութեան զՏիգրանայ և զԱժդահակայ, տեսնելով առ Քսենոփոնի Տիգրան զոմն Հայ, բարեկամ Կիւրոսի և գործակից ի պատերազմունս նորա, Հերոդոտոսի մէջ ևս կարդալով Աժդահակայ երազը, և հրամանաւ նորա ի գործ դրուած միջոցներն ի կորուսանել զԿիւրոս, յորմէ որպէս թէ կը

կասկածէր Աժդահակ (Հերոդ. գլր. Ա. 127)՝ զԿիւրոսէ պատմուած առասպելը կը դարձունէ Տիգրանայ վրայ։

Ըստ Հերոդոտոսի Աժդահակ երազ կը տեսնէ, թէ ի դստերէն իւրմէ ծնեալ որդին Կիւրոս կործանելոց էր Մարաց տէրութիւնը։ Այս երազին վրայ կը խռովի Աժդահակ, խորհուրդ կը խնդրէ յիմաստնոց. Կիւրոսի ազգականին Արբակայ կը յանձնէ դաւ գործել Կիւրոսի. Արբակ կը խնայէ Կիւրոսի, և հնարիւք կ՚իմացնէ նմա Աժդահակայ նենգութիւնը. Կիւրոս զօրօք կու գայ Աժդահակայ վրայ, և բռնելով զնա գերի՝ կը տիրէ Մարաց և Պարսից։ Մար Իբասայ պատմութիւնն ևս ո՛չ ապաքէն նոյն է։ Աստ ևս երազով կը յայտնուի Աժդահակայ, թէ ծիրանազգեստ կնոջէ (թագուորացնէ) ծնած դիւցազնի մը (Տիգրանայ) ձեռօք Մարաց տէրութիւնը պիտի կործանէր. Աժդահակ կը խռովի, ի խորհուրդ կը կոչէ նախարարները. Տիգրանայ ազգականին, այն է քեռ նորա կ՚առաջարկէ դաւել զՏիգրան. Տիգրանուհի գթալով եղբօրը՝ գաղտ կ՚իմացնէ նմա նենգութիւնը. Տիգրան զօրօք գալով կ՚սպաննէ զԱժդահակ և գերի կը տանի զամենայն տուն նորա։

44. Անհիմն է նաև ասել Խորենացւոյն, թէ Մասեաց արևելեան կողման Մարք ի Տիգրանայ բերուած գաղթականութիւն էին Մարաց գերիներէն, և թէ Վիշապազունք անուամբ յերգս վիպասանաց Հայոց կ՚ակնարկուի սերունդն Աժդահակայ, որ վիշապ կը նշանակէ.—«Յայտնեն զայս ճշմարտապէս և թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւէտ Գողթան, յորս շարին բանք երգոյն զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յիշելով այլաբանաբար և զզարմիցն Աժդահակայ՝ վիշապազունս զնոսա կոչելով. զի Աժդահակդ ի մեր լեզուս է վիշապ» (Խոր. Ա. Լ.)։ Եթէ չէ և չկարէ լինել ճշմարիտ այն պատմութիւն, թէ Տիգրան սպաննելով զԱժդահակ ջնջեց Մարաց տէրութիւնը, որպէս ցուցաւ էջ 192՝ ապա ինքնին կը ջրի նաև պատմութեան այն մասը, թէ Տիգրան գերի բռնելով «զԱնոյշ կին Աժդահակայ և զբազումս ի սերմանէ Աժդահակայ աղջկունս հանդերձ պատանեկօք և այլ բազում գերեօք, որչափ թէ աւելի քան զբիւր մի՝ բնակեցուցանէ յարևելեայս ուսոց մեծի լերինն (Մասեաց)» (Խոր. Ա. Լ.)։ Նա մանաւանդ գիտենք այլուստ, թէ Մասեաց արևելեան կողմը կը կոչուէր Մարք ո՛չ թէ ի պատճառս գերութեան Աժդահակայ, այլ վասն զի այն կողման բնակիչք ի վաղուց մար կամ մարկիւթացի ցեղեր էին (տես էջ 54)։ Ի հին մատենագիրս մեր, որպէս ասացաւ անդ՝ այն կողմերը կը կոչուէին Մարք, և յերգս վիպասանաց զՄարակերտէ ասի, թէ էր «ի մէջ Մարաց».—«Արտա-

ւազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղի ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ» (Խոր. Ա. Լ.). և գիտենք, թէ Մարակերտ էր ի դաշտին Շարուրայ (Խոր. Անդ), որ էր յարևելից Մասեաց առ Երասխաւ։ Բակուր ումն որ ի Խորենացւոյն կոչի իշխան Սիւնեաց, առ որ ապաւինեցաւ Տրդատ Բագրատունի (Խոր. Բ. ԿԳ.)՝ թուի լինել այն Բակուր, զոր օտար պատմիչք կ'անուանեն թագաւոր Մարաց։

Վիշապազանց գալով՝ ասեմք, թէ առ հինսն Հայոց սնապաշտական հաւատք էր, թէ վիշապք, այսինքն դևք ի կերպարանս վիշապաց, կը բնակէին յամայի տեղիս, թէ տաճարներ ունէին, և թէ բռնելով զթագաւորազունս կը պահէին առ իւրեանս։ Եզնիկ ի ջրելն զսնապաշտութիւնս նախնի դիցապաշտ Հայոց կը յիշէ նաև հին Հայոց այս սնապաշտ հաւատքն ասելով. «Ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա (վիշապաց) ի բնակութիւն, և ոչ զօք ի թագաւորազգեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի» (Եզն. տպգր. Վենետ. 1826, էջ 104)։ Ուստի յասելն Հայոց վիպասանաց զԱրտաշիսէ, «խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց» (Խոր. Ա. Լ.), և զԱրտաւազդայ, թէ «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և դև փոխանակ եդին» (Անդ՝ Բ. ԿԱ.)՝ հաւանականագոյն է թէ կ'ակնարկեն վիշապաց առասպելին ըստ Եզնկայ, ոչ թէ Աժդահակայ զարմը, որպէս մեկնէ Խորենացին։

45. Բայց Տիգրանայ և Աժդահակայ կռիւը կ'ակնարկէ ուրիշ հին առասպել մը, այն է Թրիդայի և Աժի-տահակայ առասպելը (զորմէ տես վերագոյն էջ 51), զոր թերևս հին հայ երգիչք առած էին ի Զենտաւեստայ։

46. Յասացելոց մինչև ցարդ զՄարիբասեան պատմութենէն դիւրին է տեսանել, թէ, ըստ մեզ, չէ մարթ ընդունել այն գործն իբրև վաւերական աղբիւր նախնական ժամանակի պատմութեան մերոյ, և ոչ առնուլ անտի իբրև ճշմարիտ՝ ինչ որ հաստատուած չէ ժամանակակից պատմութենէ, կամ գէթ հին ինչ աւանդութենէ և ազգային երգերէ։ Ոմանք կամին ենթադրել, թէ այսպիսի աւանդութիւններ և երգեր ունէր Խորենացին եթէ ոչ բոլոր պատմելոյն ի Մար Իբասայ՝ գէթ մեծագոյն մասին նոցա։ Արդարև առ նախնի Հայս կային, անգիր ժամանակէն, աւելի կամ նուազ այլաբանական կամ բանաստեղծական ոճով յօրինեալ երգեր զերևելի արանց, և Խորենացին փոյթ մեծ ունի բերել զնոսա, ուր և կը գտնէ, ի հանդէս պատմութեան իւրոյ, մերթ բառ առ բառ յիշելով, ինչպէս զառակն Շարայի, Վարդգեսի երգը և զԵրկնէր երկինն, և մերթ զիմաստ նոցա միայն տալով, ինչպէս Շամիրամայ մահուան

առասպելին և բամբռնահարաց գովեստին զՏիգրանայ։ Բայց ո՜րչափ սակաւ են այսպիսի երգեր առ Խորենացւոյն. տարակոյս չկայ սակայն, թէ կը յիշէր Խորենացին՝ եթէ գտնէր այնպիսի վկայութիւններ նաև զՀայկայ, զԱրամայ, զԱրայէ և զայլոց։

Բայց ոչ երգեր միայն, այլ թուի թէ պատմութիւն ևս կար առ Խորենացւով զնախնի ժամանակէն Հայոց, որպէս էր այն՝ զորմէ ասէ Խորենացին, թէ «ի բայ բանից և անոճ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ» (Խոր. Ա. ԻԲ.)։ Սակայն Խորենացին չի համարեր զայն արժանի հաւատարմութեան, և խրատ կու տայ Մեկենասայ իւրում Սահակայ Բագրատունւոյ՝ չհաւատալ այնպիսի բանից.—«Բայց դու մի այնպիսի յիմար բանից հաւանիր» (Անդ)։

Այսպէս բաց ի սակաւ երգոց ուրիշ աղբիւր չի մնար անուանեալ Հայկազանց պատմութեան Խորենացւոյն՝ եթէ ոչ Մար Իբաս։ Ճշմարի՛տ է արդեօք այս անունը թէ պիտակ՝ ասել դժուարին է. հաւանական է սակայն, թէ Հեղինակ Մարիբասեան մատենին, եթէ արդարև կար այնպիսի մատեան՝ էր քրիստոնեայ ոմն ոչ յառաջ քան զչորրորդ դար, քանզի գիտէ Եւսեբեայ քրոնիկոնը։ Այսպէս դատած են գրեթէ ամենեքին, որ ի մօտոյ քննած են զՄար Իբաս։ Րընան, դարուս երևելի քննիչներէն մին, այն գործին Հեղինակ կը համարի ասորի եկեղեցական մը Եդեսիոյ դպրոցէն, որ փայլեցաւ յառաջին դարս քրիստոնէութեան։ Նոյն քննիչ կ՚անուանէ տեսակ մը զրոյց (légende) և առասպելական (fabuleux) ոչ միայն Մար Իբասայ ընծայուած պատմութիւնը՝ այլ և ինչ որ Խորենացին ի յաջորդգիրս իւր կը բերէ յԵդեսիոյ դիւանէն՝ իբրև լեալ ի Հայս նախ քան զքրիստոնէութիւնն և կամ առ Քրիստոսիւ։ Սակայն ճշդիւ խօսելով՝ Մարիբասեան պատմութիւնն ոչ զրոյց է և ոչ առասպել, այլ յոյն մատենագիրներու պատմութիւնը զԱսորեստանեայց եւ զՊարսից, մեծաւ մասամբ Եւսեբեայ քրոնիկոնէն առնուած եւ Հայոց վրայ դարձուած, անհաւանական, շատ անգամ՝ նաեւ անհաւատալի եւ ժամանակակից պատմութեան հակառակ պարագաներու յաւելուածով։

Չէ բոլորովին առանց հաւանականութեան, թէ Խորենացին ունեցաւ Մար Իբաս կամ Մար Աբաս Կատինա անուն ուրումն ասորերէն կամ յունարէն գրուածն զնախկին ժամանակէն Հայոց, իբրև հին քաղդէական աղբերէ քաղուած։ Շատ նշաններէ կը տեսնուի սակայն, թէ նոյն ինքն Խորենացին է, գէթ մեծաւ մասամբ, Մարիբասեան պատմութեան ստեղծիչ։ Մատենագրական նենգութիւնը որ մեծ արատ է առ մեօք՝ սովորական էր առ նախնիս։ Խարդախեալ կամ կեղծ գրուածներ, նոյն իսկ իբրև բարեպաշտ վկայեալ անձանց ձեռօք՝ յառաջին դարէ անտի գրեթէ ողողեցին քրիստո-

նէական մատենագրութիւնը։ «Ճշմարտախօս ոք և բարեպաշտ, կը հարցուի—ասէ Շտրաուս—կրնա՞յ գիր գրուած ստութեամբ ընծայել այլում։ Ոչ. բայց ինչ որ առ մեզ պարսաւելի է՝ գովելի էր ժամանակաւ։ Գիտենք այսօր, թէ Նէոպիւթագորեանք առաջնոյ դարուն նախ քան զՔր., իբր եօթանասուն գիրք հրատարակեցին յանուն Պիւթագորայ կամ հնագոյն աշակերտաց նորա՝ փիլիսոփայական նոր վարդապետութիւններ քշելու. և այլ ոմն Նէոպիւթագորեան, հեղինակ վարուց փիլիսոփային՝ կը գովէ այն խաբէութեան հեղինակներն իբրև փառասիրութենէ ազատ մարդիկ, որ զաշխատութիւն իւրեանց ընծայեցին վարդապետին։ Յերկրորդ դարու քրիստոնէական թուականին, Պօղոսի և Թեկղեայ կեղծ վկայաբանութիւնը գրող քրիստոնեայն, երբ յանդիմանուեցաւ իբրև խաբող՝ արդարացոյց զանձն ասելով. «Ի սէր առաքելոյն արարի» և եկեղեցին ոչ միայն չմերժեց սուտը, այլ և առանց ուրիշ վկայութեան, միայն ի հաւատս այն վկայաբանութեան՝ տօն հաստատեց ի պատիւ կուսին։ Ինչ որ կրնար շինութիւն տալ՝ ճշմարիտ էր յայնմ դարու, ինչ որ վսեմ՝ հին, ինչ որ արժանի առաքելոյ՝ առաքելական։ Այսպէս ոչ սակաւ յարգի գրուածոց անուանք փոխ առնուած են։ Ի՞նչ է Դանիելի գիրքը, զոր յամառ միայն յորթոդոքսաց կը համարին հարազատ, և Իմաստութեան գիրքը՝ զոր պաշտպանող գրեթէ չիք այսօր» (Շտրաուս, վարք Յիս. մուտք ԺԲ.)։ Արդի քննադատութիւնն հազիւ կարաց մաքրել նախնի մատենագրութեան մնացորդներն, ընտրելով զեկամուտն ի հարազատէն, և խարդախութեան առաջն առնուլ։ Զարմանալի չէ տեսնել մատենագրական նենգութիւնն՝ բարի կարծուած նպատակներու հասնելու համար իբրև միջոց գործածուած այնպիսի ժամանակներ, մինչ սա սկզբունքը, թէ «Վախճանն արդարացուցանէ զմիջոցն»՝ գործնականապէս կը տիրէր։ Ինչե՞ր օրինաւոր չհամարեցաւ այսու սկզբամբ առաջնորդուած մոլոր և ծայրայեղ կրօնական նախանձը։ Թողունք հաւատաքննութիւնը և խաչակրութիւնը, զերկուսին հրէշս միջին դարուց քրիստոնէութեան. ո՞վ օրինաւոր կը համարի այսօր հերետիկոս անուանելոց դէմ այն հալածումներն, որ, ոչ յետ բազմաց՝ յաջորդեցին հռոմայեցի կայսերաց արիւնահեղ հալածանաց, շատ անգամ ոչինչ նուազ անագորոյն քան զնոցայն։ Կորիւն գովութեամբ կը պատմէ քանդելը տանջանքը, զոր բորբորիտոն կոչուած գնոստիկեանք կրեցին հրամանաւ Սահակայ և Մեսրոպայ՝ թելադրութեամբ Կոստանդնուպօսոյ պատրիարքին (Խոր. Գ. ԾԷ. Թուղթ Ատտիկ. առ Սահակ և ԾԲ.)։ «Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր (Մեսրոպ) զդժպատեհ և ըդ-

կամկոր բարբարիանոս ազանդն քննելոյ, և իբրև ոչինչ գտանէր հնարս յաղթութիւն անելոյ, առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանտս, ի տանջանս, ի գեղարանս։ Իսկ յորժամ այսու ես պակասեալ ի փրկութենէն գտանէին՝ խորտակեալս, ապախանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորզէին» (Կորիւնի վարս Մեսր.)։

Խորենացին կը գրէր զպատմութիւն իւր յետ պատերազմին Վարդանանց, մինչ Վահան Մամիկոնեան և Սահակ Բագրատունի, իբրև ախոյեան հաւատոյ և ազատութեան՝ կը կռուէին սակաւ ուժով ընդդէմ ահագին զօրութեան Սասանեանց։ Արդարև դժուարին էր ժամանակն ազգին համար, եթէ ոչ բոլորովին անյոյս։ Մի մասն նախարարաց, յորս երևելի էին Սիւնիք և Արծրունիք, միտագոյն ի Պարսիկս, եթէ ոչ բոլորովին բաժանեալ՝ գէթ ուծացեալ էր միւս մասէն, յորմէ կը նկատուէր իբրև ուրացեալ, և որ, իբրև ուխտապահ, իրեն թիկունք ունենալով կղերը, յուսացեալ էր ի Յոյնս իբրև ի հաւատակիցս, առանց ընաւ օգնութիւն տեսնելու։ Յայսպիսում անօգնական ժամանակի ամէն հայրենասիրի պարտքն էր՝ որ և իցէ միջոցաւ արծարծել ազգին կրօնական և հայրենասիրական ոգին։ Սոյն նպատակաւ և գրեթէ միևնոյն ժամանակ գրուեցան կամ թարգմանուեցան Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշէ և Փարպեցին։ Առաջինն՝ Ագաթանգեղոս, կը պատմէ Տրդատայ քաջութիւններն և ազգին դարձն ի քրիստոնէութիւն մեծամեծ նշանօք և արուեստիւք։ Բուզանդ, ի Խոսրովայ, յաջորդէն Տրդատայ, մինչև վերջին Խոսրով, կամ ի բաժանումն թագաւորութեան՝ երևելի արանց, գլխաւորապէս Մամիկոնեան ցեղին քաջութիւնները կը պատմէ ի պաշտպանութիւն եկեղեցւոյ և ազգին։ Վերջին երկուքն, Եղիշէ և Փարպեցին, կը պատմեն (առաջինը կը նկարագրէ մանաւանդ բանաստեղծական ոճով քան կը պատմէ) ուխտազանց և ուխտապահ կոչուած երկու կուսակցութեան գործերը։ Գրեթէ յամենեսին ի սոսա կը տեսնուին աւելաբանութիւն (չափազանցութիւն) և պատմել հրաշալիս, միջոցներ՝ որովք ոչ այլ ինչ կը դիտուէր՝ եթէ ոչ զարթուցանել ազգին եռանդը։

Մինչ ազգային մատենագրութիւնն այսու ոգւով և նպատակաւ կ'աշխատէր՝ Սահակ Բագրատունի կը խնդրէ Խորենացւոյն գրել զընդհանուր պատմութիւն Հայոց։ Խորենացին կը պատասխանէ Սահակայ այն խորին բայց դժուարիմաց նամակով, զոր կը գտնենք ի սկզբան պատմութեան նորա.—

Աստուածային շնորհաց և Հոգւոյն ազդումը քու խորհրդոցդ վրայ ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյդ, որով նախ քան զմարմինդ

Հոգւոյդ ծանօթացաւ ինձ, և որ համաձայն է ախորժակաց իմոց և մանաւանդ սովորական զբաղմանս։ Ուստի ոչ միայն կը գովեմ զքեզ, այլ և կ՚աղօթեմ մնալ քեզ միշտ նոյնպէս։ Արդարև եթէ բանիւ եմք պատկեր Աստուծոյ, և եթէ ճշմարտապէս բանաւոր մարդ այն է, որ կը խորհի զօգտակարն և զազնուական՝ ապա դու որ այսպիսեաց ցանկութեամբ վառեալ ես՝ կը ցուցնես, թէ մարած չէ ի քեզ այն աստուածապարգև լոյսը, ուստի և յիրաւի արժանի ես կոչիլ պատկեր Աստուծոյ։ Այսպէս, չիք տարակոյս թէ կ՚ուրախացնես նաև զայն՝ որ սկզբնատիպն է այնր լուսոյ։ Հանդերձ այսու այն մանաւանդ թուի ինձ զարմանալի, զի մինչ հզօրք և իշխանք ազգիս նախ քան զմեզ և առ մեօք չխորհեցան իւրեանց ժամանակի գիտնոց հրաման տալ գրել զպատմութիւն մեր, և կամ զգրեալսն յայլոց տալ թարգմանել՝ դու յղացար զայս խորհուրդ. ապա յայտ է, թէ դեր ի վերոյ գտանիս քան զնախնիս մեր և բարձր գովեստից արժանի։ Վասն որոյ և ես մտադիւր ընկալեալ զխնդիրդ՝ ջանացայց անել ի կատարումն, յանմահ յիշատակ քեզ և սերնդոց քոց։ Արդէն երևելի է ցեղդ և արդիւնաւոր իմաստութեամբ, և մեծագործութեամբ անուանի, ինչպէս պիտի յիշենք առնելով զազգահամար ցեղիդ որդի ի հօրէ ի կարգի պատմութեանս, ի ճառել մեր համառօտիւ զնախարարութեանց Հայոց, որպէս զիարդ գտանեմք ի պատմութիւնս ինչ Յունաց։

«Զանսպառ խաղացմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն և զանդուլ հոգւոյն ի վերայ քո իմացուածոյդ շարժմունս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն, որ՞ և սիրելի իմոց իսկ ախորժակացս է, առաւել ևս սովորութեանցս։ Վասն որոյ և ոչ միայն գովել արժան է զքեզ, այլ և ի վերայ քո աղօթել՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի։ Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, և դարձեալ՝ առաքինութիւն բանականին է խոհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն՝ ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն՝ զարդարես զբանն, որով մնաս առ ի լինելն պատկեր։ Իձեռն որոյ և զայսորիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել, գեղեցիկ և չափաւոր մոլութեամբ յայսոսիկ մոլեալ և զակատեալ։ Առ որով տեսանեմ և զայս, զի եթէ որք յառաջ քան զմեզ և կամ առ մեօք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեւք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել զյիշատակս բանից, և ոչ արտաքուստ ուստեք այսոցիկ ի ներքս անել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, և ըդ-

քեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք՝ ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, և բարձրագունից արժանաւոր գովութեանց, և յայսպիսիս պատկանաւոր գնիլ յարձանագրութիւնս բանից։ Յաղագս որոյ հեշտաբար ընկալեալ զքոյ խնդիրդ՝ աշխատասիրեցայց ածել ի կատարումն, անմահ ի յիշատակ թողուլ զայս քեզ, և որ զկնի քոյինքն են զաւակ ազգք։ Զի և ազգի ևս նախնականի, և քաջ և արգասաւոր՝ ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ ի մեծամեծ և ի բազում գործս արժանափառս, զոր յիշատակեսցուք ի կարգի պատմութեանս, յորժամ զորդի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զբովանդակն։ Իսկ զհաստատանեացս նախարարութիւնս, զամենեցուն զուստն և զշխարգն յայտնելով համառօտ, որպէս հաւաստի ի յունականս ոմանս կայ պատմութիւնս»։

Ինչպէս կը տեսնուի այս նամակէն՝ Խորենացին ուրախութեամբ ընդունելով զխնդիր Սահակայ, զոր ոչ ճանաչէր անձամբ, գրեց զպատմութիւն իւր յերիս դպրութիւնս։ Խորենացւոյն պատմութեան դժուարագոյն մասն էր առաջին դպրութիւնը, զոր կ'անուանէ «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց», այսինքն պատմութիւն ծագման կամ նախնեաց Հայոց։ Այս մասին համար Խորենացին չունէր այլ աղբիւր բաց ազգային երգերու զոյգն մնացորդներէ։ Մար Իբասայ պատմութիւնն, եթէ ունէր Խորենացին այսպիսի պատմութիւն մը՝ չէր, ո՛չ ընդարձակութեամբ և ոչ ըստ նիւթոյն՝ այն զոր կ'ընծայեցնէ մեզ Խորենացին, ինչպէս յայտնի է այն պատմութեան ոճէն և ձևէն։ Այսպէս չէր կարող Խորենացին, առ ի չգոյէ աղբերաց, տալ այն նախնական ժամանակին ճիշդ պատմութիւնը. ուստի կը գրէ քերթողական ազատութեամբ մանաւանդ քան պատմական ճշդութեամբ համառօտ դիւցազներգութիւն մը, ուր գլխաւոր գործողք են երեք վիպասանական անձինք — Հայկ, Արամ, Տիգրան, իբրև օրինակ քաջութեան և հայրենասիրութեան։ «Սիրեմ կոչել, ասէ Խորենացին, այսպէս ըստ քաջութեան, Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ՝ քաջաց ազգք քաջքն, իսկ միջոցքն՝ որպէս դէպ ումեք թուեսցի կոչել» (Խոր. Ա. ԼԱ.)։ Խորենացին արդարև կը ջանայ որչափ հնար է պատմական կերպարանք տալ այս վիպասանական մասին պատմութեան իւրոյ, բայց յայտնի է արուեստը, և չի կրնար այլազգ ընդունուիլ Հայկազանց պատմութիւնը՝ եթէ ոչ իբրև պատմական դիւցազներգութիւն, որում կատարեալ քերթողական ձևը տուաւ Բագրատունին իւր Հայկ կոչուած դիւցազնականին մէջ։ Թէ ինչպէս ընդունուեցաւ պատմութիւն Խորենացւոյն իւր ժամանակակիցներէն՝ յայտնի չէ։ Գիտողութեան արժանի

է սակայն, զի Փարպեցին, որ գիտէ զԽորենացին և ուրեք ուրեք գրեթէ բառ առ բառ կ՚օրինակէ ի Խորենացւոյն՝ չի յիշեր զնա, մինչ երկայն կը խօսի զԲուզանդայ և զԱգաթանգեղոսէ (Փարպ. Բ. Գ.)։ Զխարդ և իցէ՝ Հայկազանց կոչուած պատմութիւնն այնպիսի է մեր ընդհանուր պատմութեան մէջ, որպիսի է վէպն Հռոմուլոսի և առաջին յաջորդաց նորա ի պատմութեան Հռոմայեցւոց, կամ որպիսի են Հոմերական դէպք զպատերազմէն Տրոյայ և զհին գիւցազանց Հելլենացւոց։ Այսպիսի վէպեր հայրենասիրական եռանդով ստեղծուած են, և կարեն լինել մասն ազգային ուսման, թէպէտ միշտ իբրև վէպ և ոչ իբրև պատմութիւն։ Բայց որևիցէ հին բերանացի կամ գրաւոր աւանդութիւն ըստ սկզբանց գիտութեան դատելով պատմութիւնն ի վէպէ որոշել՝ գործ է ոչ միայն ամէն անաչառ պատմագրի, այլ և ամեն լուսաւորեալ ընթերցողի։ Կը տեսնենք ժամանակ ժամանակ քննական յօդուածներ եւրոպական թերթերու մէջ, երբեմն նաև տետրակներ մեր պատմութեան այլևայլ աղբերաց վրայ, մինչ մեք այն աղբիւրներուն կը նայինք դեռ հին բարի ժամանակին միամտութեամբ։ Եղան արդարև և առ մեզ ոմանք՝ մանաւանդ մեր ռուսիացի համազգիներէն, որ հրատարակեցին մեր պատմութեան վերաբերեալ յօդուածներ՝ արժանի ուշադրութեան եւրոպացի հմուտ արևելագիտաց։ Բայց թող որ այս գրուածք մեծաւ մասամբ մասնաւոր գիտնական դիտողութիւններ են՝ ընդհանրապէս կը թուին ջանալ պաշտպանել մանաւանդ մեր պատմական աղբիւրները, քան քննել և ի լոյս հանել զատոյգ պատմական յարգ նոցա։ Ի դէպ և հարկ էր քննական ոգին պատմութեան առանձին մասերէն անել ի վերայ բոլորին։ Այս էր մեր դիտումը։ Ոչ փոքր համարձակութիւն էր սակայն դարերով գրեթէ ազգովին վաւերացեալ պատմութիւնը մը արկանել ընդ քննութեամբ. ուստի սպասեմք լսել ի բազմաց. Անդէպ կամ դէթ կանուխ չէ՞ր այսպիսի ոգւով գրուած մը զազգային պատմութենէ, և ո՞չ ապաքէն խոհեմութիւն էր դէթ ժամանակ մի ևս թողուլ զազգն ի միամտութեան հին բարի ժամանակին։ Ըստ մեզ ոչ անդէպ էր և ոչ կանուխ, քանզի մեր այս գործն ուղղեալ է ազգին լուսաւորեալ մասին, այն մասին, որ գիտէ իննևտասներորդ դարուն քննադատական ոգին, և կամէր վաղուց տեսանել այն ոգին մուծեալ և յազգային պատմութիւն մեր. ազգին այս մասին համար հին բարի ժամանակն արդէն անցած է։

ԳԼՈՒԽ Զ.

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑԻՈՅՆ

1. Արշակ մեծ Պարթևաց: 2. Վաղարշակ, եղբայր Արշակայ: 3. Արշակ քաջ և Արշակ մեծ: 4. Պատերազմ Վաղարշակայ յարևմուտս. Մորփիւղիկէս: 5. Շինութիւնք Վաղարշակայ ի Հայս: 6. Արքունիք Վաղարշակայ. պաշտօնեայք պալատան: 7. Կարգք զինուորութեան. Նախարարութիւնք. Այլ շինութիւնք: 8. Օրէնք յարքունիս և արտաքոյ: 9. Անդրանկութեան օրէնքը. Հաշտեանք՝ ժառանգութիւն Արշակունեաց: 10. Արշակ յաջորդ Վաղարշակայ. Կոթող նորա յեզեր Պոնտոսի: 11. Նոր աղբիւր Խորենացւոյն. Ափրիկանոս. Դիւանք Եդեսիոյ, Սինոպայ: 12. Արտաշէս, յաջորդ Արշակայ. Մեծութիւն նորա. Խնամութիւն ընդ բդեշխին Վրաց: 13. Արշաւանք յարևմուտս. Կրիսոս: 14. Ցոյն պատմիչք՝ զարշաւանաց Արտաշիսի. Պողիկրատէս, Նաւգարոս, Կամադրոս, Փղեղոնիոս:

1. Խորենացին յԲ. գլուխ առաջին դպրութեանն կը պատմէ թէ Արշակ մեծ, որ է Միհրդատ Ա. կամ Արշակ Զ., Պարթևաց թագաւորն, ապստամբելով Մակեդոնացիներէն և տիրելով բոլոր Ասիոյ՝ զեղբայր իւր Վաղարշակ թագաւորեցոյց Հայոց: «Պարսից և Պարթևաց թագաւորն Արշակ մեծ, որ բուն Պարթև էր ազգաւ, ապստամբելով ի Մակեդոնացւոց՝ թագաւորեց բոլոր արևելից վրայ, և սպաննելով զԱնտիոքոս թագաւոր ի Նինուէ՝ հնազանդեցոյց զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ»:

Արշակ մեծ արքայ Պարսից և Պարթևաց, որ և ազգաւ իսկ Պարթև, ապստամբեալ, ասեն, ի Մակեդոնացւոցն, և թագաւորեալ ի վերայ ամենայն արևելից և Ասորեստանեաց, և սպանեալ զԱնտիոքոս թագաւոր ի Նինուէ, հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ։

2. «Այս Արշակ կը թագաւորեցունէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ Հայոց, պատշաճ համարելով այնպէս անշարժ կացուցանել զթագաւորութիւն իւր: Քաղաք թագաւորութեան կու տայ նմա զՄծբին, նաև մասն մի յարևմտեան Ասորւոց և զՊաղեստին և

զԱսիա և զբոլոր Միջերկրայս (Փոքր Ասիա) և զԹիտալիա (Թեսաղիա?), Պոնտոս ծովէն մինչև անդր՝ ուր Կովկաս կը յանգի ի ծովն Արևմտեան (թերևս արևելեան, այսինքն Կասպից ծով) և զԱտրպատական։ Նաև ետ նմա իշխանութիւն որչափ և կարող էր՝ ընդարձակել զիւր տէրութիւն, քանզի, ասէ, քաջաց սահմանն է զէնք նոցա»։

Սա (Արշակ մեծ) թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց, պատեհ իմն համարեալ այսպէս անշարժ իւրոյ թագաւորութեանն լինել։ Եւ քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծբին, և սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարևմտեայ Ասորւոց և զՊաղեստին և զԱսիա և զամենայն Միջերկրեայս և զԹիտալիա, ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին ուր Կաւկաս յարևմտեանն յանգի ծով, և զԱտրպատական, և այլ որչափ միտք քո և քաջութիւն հասանեն. զի սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց· որքան հատանէ՝ այնքան ունի։

Յետ այսորիկ կը պատմէ Խորենացին, թէ ինչպէս Վաղարշակ ըզՄար Իբաս ասորի, «այր ուշիմ և վարժ քաղդէացի և յոյն գրով», ղրկեց հանդերձ նամակաւ առ Արշակ հանել Հայոց պատմութիւն մը Նինուէի դիւանէն, այլովքն հանդերձ։ (Տես էջ 92, 97)։

3. *Երկրորդ գլրութեան սկիզբը Խորենացին նոյն պատմութիւնը կը կրկնէ այլազգ, սկսելով ի քաջէն Արշակայ, այն է յԱրշակայ առաջնոյ այսպէս. «Թէոս կոչուած Անտիոքոսի մետասաներորդ տարին (250) ապստամբեցան Պարթևք Մակեդոնացւոց ծառայութենէն. ուստի և թագաւորեց Արշակ քաջ, ի զաւակէ Աբրահամու ի Քետուրայ, որպէս զի հաստատուի բան Տեառն առ Աբրահամ՝ թէ թագաւորք ազգաց ի քէն ելցեն։ Այսպէս վաթսուն ամաւ յետոյ քան զմահն Աղեքսանդրի (263) թագաւորեց Պարթևաց Արշակ քաջ ի քաղաքին Բահլ, յերկրին Քուշանաց, և սաստիկ պատերազմաւ տիրելով բոլոր արևելից՝ հալածեց զՄակեդոնացիս ի Բաբելոնէ. և լսելով զզօրանալն Հռոմայեցւոց ի վերայ արևմտից և ծովուն (Միջերկրականի), զառնուլ նոցա ոսկւոյ և արծաթոյ հանքերն Սպանիացիներէն, և նուաճելն զԳաղատացիս (Գաղղիացիս) և զԱսիացիս (զՍելևկեանս)՝ ի ձեռն պատգամաւորաց խնդրեց ի նոցանէ դաշամբ խոստանալ՝ չօգնել Մակեդոնացւոց (Սելևկեանց)՝ և ինքն կը խոստանար տալ նոցա ամի ամի հարիւր քանքար, ոչ իբրև հարկ, այլ իբրև ընծայ։ Այսպէս տիրեց (Արշակ Ա.) ամս երեսուն և մի. յետ նորա որդին Արտաշէս ամս քսան և վեց։ Սմա յաջորդեց որդին Արշակ մեծ, որ պատերազմեցաւ Դեմետրի և Դեմետրի որդւոյն Անտիգոնոսի հետ. քանզի (Դեմետր) եկաւ ի վերայ*

Արշակայ ի Բաբելոն մակեդոնական զօրու, և պատերազմելով բըռնուեցաւ գերի։ Արշակ տարաւ զնա ի Պարթեւս երկաթի կապանօք։ Բայց եղբայր նորա Սիդիացին Անտիոքոս իմանալով զմեկնելն Արշակայ՝ եկաւ տիրեց Ասորւոց։ Իսկ Արշակ երկոտասան բիւրուք դարձաւ յետս, և Անտիոքոս սաստիկ ձմերան պատահելով պատերազմի բռնուեցաւ նեղ տեղեր և կորեաւ հանդերձ զօրօքն։ Այսպէս Արշակ տիրեց երրորդ մասին աշխարհիս, (այն է բոլոր Ասիոյ)։ Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցոյց զՎաղարշակ զեղբայր իւր մեր երկրին, սահման տալով նմա զհիւսիս և զարեւմուտս»։

Ի մետասաներորդ ամին Անտիոքոսի Թեւոսն կոչեցելոյ ապստամբեն Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացւոցն. ուստի և թագաւորեաց Արշակ քաջ, որ է ի զաւակէ Աբրահամու, ի քետուրական ծննդոց, առ ի հաստատել բանին Տեառն առ Աբրահամ, թէ Թագաւորք ազգաց ի քէն ելցեն։ Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ Պարթեւաց Արշակ քաջ ի քաղաքին, որ կոչի Բահղ Առաւօտին, յերկրին Քուշանաց։ Եւ տայ պատերազմ սաստիկ յոյժ, թափելով յինքն զամենայն արեւելեայս։ Հալածէ և ի Բաբելոնէ զՄակեդոնացւոց իշխանութիւնն։ Լսէ զզօրանալն Հռովմայեցւոց ի վերայ արեւմտից և ծովու, և թէ ի Սպանիացւոցն թափեցին զբովսն, ուստի ոսկին և արծաթն հատանի. և զԳաղատացիս հարեալ ընդ հարկիւ կացոյց (կացուցին), և զթագաւորութիւնն Ասիացւոց։ Հրեշտակս առաքեալ խնդրէր զդաշնաւորութիւն, զի մի օգնեսցեն Մակեդոնացւոցն, ոչ տալով հարկս՝ այլ պատարագս միայն ամի ամի հարիւր քանքարոյ։ Այսպէս տիրեալ (Արշակայ) ամս երեսուն և մի, և յետ նորա Արտաշէս որդի նորա ամս քսան և վեց։ Զսա պայազատէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ մեծ. պատերազմի ընդ Դեմետր և որդւոյն Դեմետրեայ Անտիգոնեայ. քանզի ի վերայ նորա եկն (Դեմետր) ի Բաբելոն մակեդոնական զօրու, և պատերազմեալ՝ ի գերութիւն ըմբռնեցաւ. զոր կալեալ Արշակայ տարաւ ի Պարթեւս երկաթեղէն կապանօք։ Այլ իմացեալ եղբօր նորին Սիդիացւոյ Անտիոքայ զգնալն Արշակայ՝ գայ ունի զԱսորիս։ Իսկ Արշակ երկոտասան բիւրեաւ անդրէն դարձեալ, և Անտիոքոս ի սաստիկ ձմերայնոյ հեղքեալ՝ պատահի նմա պատերազմաւ յանծուկ տեղիս, և կորնչի հանդերձ զօրօքն. և Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս . . . ։ Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ մերոյ աշխարհիս, զհիւսիսի և զարեւմուտս տալով նմա սահմանս։

4. Խորենացւոյն երկրորդ գրոց Գ-էն մինչեւ Թ. գլուխները Վաղարշակայ վրայ են։ Եթէ պարտ է հաւատալ Խորենացւոյն՝ Վաղարշակ Հայաստանի հիւսիսային արեւմտեան ազգերը մինչեւ Սեաւ ծով, և Փոքուն Ասիոյ թագաւորութիւններն որ հաւատարիմ մնացած էին Սելեւկեանց, պատերազմաւ նուաճելով ընկճեց իսպառ Սելեւկեանց զօրութիւնը։ «Յետ պատերազմին Արշակայ, ասէ, ընդ

Մակեդոնացիս և նուաճելոյ զԲաբելոն և զարևելս և զարևմուտս Ասորեստանի՝ կը ժողվէ Վաղարշակ զօր բազում յԱտրպատականէ և ի բուն Հայոց, անուանի և քաջ մարդիկ, զԲագարատ և զորս ընդ նմայն էին, զբնակեալս առ ծովակաւն Գեղամայ, ի Քանանացւոց ի ծննդոց Շարայի և Գուշարայ, զՍիսակեանս, զԿադմեանս և ի մերձաւորաց նոցա, որպէս թէ Հայաստանի կէսը։ Վաղարշակ այս ամենայն բազմութեամբ կու գայ ի միջոց աշխարհիս (Արարատեան նահանգը), մերձ յակունս Մօրին մեծի յափն Երասխայ, մօտ յԱրմաւիր, և երկայն ժամանակ կենալով անդ՝ կը կրթէ զօրքը։ Այսպէս Վաղարշակ միաբանելով բոլոր Հայաստան՝ կ՚երթայ անոր Խաղտեաց կողմերը։ Ղազիկս (Լազք), Պոնտոս, Փռիւգիս, Կապադովկիա և այլ (գաւառք Փոքուն Ասիոյ) չգիտելով զփորձ պատերազմին Արշակայ՝ հաստատուն կը պահէին զդաշինս միաբանութեան ընդ Սելևկեանս։ Ուստի Մորփիւղիկէս ոմն միաբանելով այն (Փոքուն Ասիոյ) կողմերը՝ կը գրգռէ ի պատերազմ ընդ Վաղարշակայ։ Երկոքին կողմանք կը պատահին միմեանց մօտ ի բլուր մի բարձր քարագագաթն, ի տեղւոջ որ այժմ (առ Խորենացւով) կոչի Կողոնիա, և բաւական հեռի ի միմեանց կը կենան երկոքին կողմանք աւուրս բազումս։ Հուսկ ուրեմն կը գրգռէ պատերազմը մեր (Վաղարշակայ) կողմէն. ուստի Մորփիւղիկէս կամաւ թէ ակամայ ճակատ կազմելով կու գայ յանդուգն յարձակմամբ։ Եւ զի էր սրտեայ յաղթանդամ և ուժեղ, ամրացեալ պղնձի և երկաթի զրահիւք և ընտիր վառելովք՝ յերկիր կը կործանէր զոմանս ի քաջ և յընտիր զօրացն Վաղարշակայ, և կը ջանար զօրքը ճեղքելով հասանել մինչև յարքայն Հայոց։ Արդարև յաջողեցաւ մօտ գալ և ձգել սուինը՝ և զի էր կորովի և երկայնաձիգ, որպէս հաւ սրաթև ի թռիչս՝ հեռու արձակեց զաշտէն, բայց Հայկայ և Ասորեստանեայն Սենեքերիմայ զարմէն քաջ և անուանի մարդիկ աճապարեցին մտանել խըռնոց ի մէջ նորա և Վաղարշակայ, և հարեալ աշտէիւ սպանին զքաջն և փախցնելով կոտորեցին զօրքը, այնպէս որ վտակք արեան իբրև զհեղեղս անձրևաց՝ կ՚ոռոգանէին զերկիր։ Այնուհետև խաղաղեցաւ երկիրն ընդ ձեռամբ Վաղարշակայ, և Սելևկեանք չիշխեցին այլ ևս տալ պատերազմ»։

Յետ պատերազմին Արշակայ ընդ Մակեդոնացիս և ունելոյ զԲաբելոն և զարևելս և զարևմուտս Ասորեստանի՝ միաբանէ և Վաղարշակ զօր բազում յԱտրպատականէ և ի Հայոց, արս անուանիս և քաջս, զկոչեցեալն Բագարատ և որ ընդ նովաւ քաջք, և զծովեզերեայսն մանկունս որք ի Գեղամայ, և ի Քանանացւոց, և Շարայի ծնունդք և Գուշարայ, և առ թեր Սիսակեանս և զԿադմեանս և զնոցա մերձաւորսն, որպէս թէ

զկէս մասն աշխարհիս։ Հասանէ ի մէջ աշխարհիս վերագոյն քան զակունս Մօրին մեծի յափն Երասխայ, մօտ յԱրմաւիրն, որ ասի բլուր, աւուրս չորս առնելով անդ, զի ոչ գիտէին զկարգս ինչ։ Եւ աստի միաբանեալ զբոլոր կողմ աշխարհիս՝ հասանէ առ սահմանօքն Խաղտեաց։ Քանզի Գաղիկայ, Պոնտոս, Փռիւգիա, Մաժաք և այլք, ոչ գիտելով զհամ պատերազմին Արշակայ՝ առ Մակեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին։ Վասն որոյ ուրումն Մորփիւղիկեայ միաբանեալ զասացեալ կողմանսն զայսուիկ՝ գրգռէ ի պատերազմ ընդ Վաղարշակայ։ Բայց պատահեն միմեանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարագագաթինի, որ այժմ ասի Կողոնիա, և մօտեալք ի միմեանս ձիգ ասպարիսօք միջոցացն՝ ամրանան երկոքին կողմանքն բովանդակ աւուրս։

Զկնի անցանելոյ բազում աւուրց ամրանալոյ կողմանցն երկոցունց՝ Գրգռի պատերազմ ի մերմէ կողմանէս դիմեալ. վասնորոյ յարձակէ կամաւ կամ ակամայ և Մորփիւղիկեան զիւրոյ կողման ճակատն, հասանէ յանդուգն յարձակմամբ։ Քանզի այր սրտեայ էր, և անդամովք երկար և ընդ երեսս պատշաճ, զոյգ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով, ամրացեալ պղնձով և երկաթով, և այլովք ընտիր վառելովք, ոչ սաստիկ ինչ թուով տապաստ յերկիր արկանէր արս ընտիրս և քաջս ի մանկանցն Վաղարշակայ, և ջանայր անցանել հասանել յարքայն Հայոց ի մէջ խմբի մեծի և զինու ամրացելոց։ Եւ մօտ անցեալ աջողեցաւ ձգել զսուինն. քանզի էր կորովի և երկայնաձիգ՝ հեռի զաշտէսն արձակեալ, որպէս ի թռիչս սրաթեւ հաւուց։ Այլ ոչ ինչ կարէ յամեցին ընդ մէջ անցանել արք քաջք և անուանիք ի զարմից Հայկայ և Ասորեստանեայն Սենեքերիմայ. և աշտէիւ հարեալ սաստկեն զքաջն. և զզօրսն առաջի արկեալ՝ ի փախուստ դարձուցանէին, բազում վտակս արեան հեղեալ, զերկիրն ողողանէին իբրեւ հեղեղք անձրեւաց։ Եւ յայնմ հետէ դադարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, և Մակեդոնացւոցն դադարեալ գոռն։

5. «Վաղարշակ, ասէ Խորենացին (Գիրք Բ. գլ. Զ.), յետ կարգելոյ Կապադովկիոյ, Պոնտոսի և Եգերացւոց կողմերը՝ դարձաւ ի Տայս առ ստորոտով Պարխարայ, երկիր անտառային, գէճ, մառախլուտ և լոռաւէտ, ուր լեռնայինն ու ջերմահոտը բարեխառնելով՝ պատրաստեց ամարանոց վասն իւր, և երկու անտառախիտ Թափարակ տեղեր հանդերձ լերամբք (պատելով որմով)՝ ելից էրէվք ի զբօսանս որսոց, իսկ Կողայ ջերմ գաւառը սահմանեց ի պէտս այգեաց և բուրաստանաց։ Ապա բարբարոս ազգաց, բնակելոց ի Հիւսիսոյ առ Կովկասաւ, պատուիրելով հրաժարել յաւազակութենէ և ի մարդադաւութենէ և հնազանդել արքունի հրամանաց և հարկաց՝ արձակեց իմաստուն վերակացուօք, և ինքն արձակելով արեւմտեան զօրքը՝ եկաւ ի խոտաւէտ տեղիս մօտ ի Շիրակ, և անտի, երբ օդն սկսաւ ցրտանալ՝ իջաւ դէպ ի Հարաւ, ի տեղին

ուր Երասխ կը խառնի ի Մեծամօր, և թողլով զօրս և քաղաքայլն պաշտօնեայս յիւրմէ՝ եկն ի Մծբին հանդերձ աւագանւովն»։

Այսպէս կատարեալ՝ կարգէ զկողմանս Մաժաքայ և զՊոնտացիս և զԵգերացիս, դառնայ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց ի գէջին և մառախլուտ տեղիս մայրացն և ի լուռւէսս. գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հաւասարելով զլեռնայինն և զջերմահոտն ի բարեխառն և ի զուգագեղեցիկ վայելչութիւն, իւրոյ թագաւորութեանն ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով, յորժամ զհիւսիսով երթիցէ։ Գոմս զերկուս տափարակսն անտառախիտս հանդերձ լերամբքն կազմելով որսոց տեղիս. և զջերմութիւնն Կողայ ի մարմանդս այգեաց և բուրաստանաց։ . . . Եւ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, . . . պատուէր տալով զաւազակութիւն և զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել . . . և արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք յիւրմէ։ Եւ ինքն արձակեալ զարեւմտեայ բազմութիւնն՝ իջանէ ի տեղիս խոտաւէտ մերձ ի սահմանն Տարայի։ . . . Իսկ ի ցրտանալ հիւսիսոյ ի դառնահոտ փչելոյ՝ խաղայ իջանէ ի դաշտն . . . ուր գետն մեծ . . . խառնի ի Մօրն մեծ։ Եւ անդ կարգեալ զզօրս աշխարհիս և թողեալ յինքենէ վերակացուս՝ իւր առեալ զամենայն զկնաւորսն չուէ ի Մծբին։

6. *Ըստ Խորենացւոյն՝ Վաղարշակ յետ դառնալոյ ի Մծբին՝ նախ իւր տան և անձին օրէնք կը դնէ, սկսելով ի գլխոյն իւրմէ և ի թագէն։ Հրէից զաղթականութենէն* (*տես էջ* 170) *Բագարատ զոմն կը կարգէ թագադիր ասպետ, իբր փոխարէն միամիտ ծառայութեան նորա և քաջութեան, և զտոհմ նորա կ'անուանէ յանուն նորա Բագրատունի։ Ի զաղթականութենէ Քանանացւոց* (*տես էջ* 166) *կարգէ զգեցուցանողս իւր, և զտոհմն անուանէ Գնթունիս։ Ի զաւակէն Խոռայ Հայկազնոյ՝* (*տես էջ* 147) *զինեալ թիկնապահներ՝ Մաղխազ զոմն կարգելով գլուխ նոցա, բայց կը պահէ նախարարութեան հին անունը Խոռխոռունի։ ԶԴատ ոմն ի զաւակէ Գառնիկայ, թոռանէ Գեղամայ* (*տես էջ* 101) *կարգէ վերակացու որսոց՝ բայց ցեղ նորա յետոյ յանուն որդւոյ նորա Վարժայ կը կոչուի Վարաժնունի։ Գաբաղ ոմն կարգի ի վերայ կուտից* (*երամակաց?*), *և Աբեղ ոմն՝ սպասարար և գահաւոր* (*սենեկապետ*), *և ի սոցանէ ելլին նախարարութիւնքն Աբեղէն և Գաբեղէն։ ԶԱրծրունիս գիտէ Խորենացին՝ ոչ արծրունիս, այլ* արծիւ ունիս, *վասն զի արծուիս* (*դրօշ արծուէնշան?*) *կը կրէին առաջի նորա, և զԳնունիս գիտէ* զինի ունիս, *իբրև պատրաստողս ըմպելեաց թագաւորին. և որովհետև համեղ համեղ գինիներէ ըմպելին պատրաստողը կը կոչուէր Գին՝ այ-*

անուան զինի բառին հետ պատահական մերձաւորութենէն զուարճանալով Վաղարշակ՝ կարգեց և զնա ի թիւ մեծ նախարարութեանց։ Այս երկու տունք, Արծրունիք և Գնունիք, էին յորդւոց Սենեքերիմայ։

Խորենացին Սպանդունեաց, Հաւենունեաց և Ձիւնականաց անուններէն կը հետևցունէ, թէ առաջինքն կարգեալ էին ի վերայ զէնարանաց, երկրորդքն՝ բազէակիր և բազէակալ, մանաւանդ զի սոքա կը բնակէին յանտառս, իսկ երրորդքն՝ ամարանոցաց պահակ և ձիւնակիր։

Վաղարշակ կը կարգէ հին թագաւորական զարմէն (Հայոց) չորս գունդ պահապան դրան արքունի, և կը հրամայէ նոյն հին թագաւորական զարմէն ներքինիներ խզել, և նահապետ կարգէ նոցա ըզՀայր ոմն, իշխան մասին, որ յԱտրպատականէ մինչև Նախճաւան։

Նախ և առաջին օրինադրէ թագաւորն զինքն ու զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյն իւրմէ և ի թագէ։ Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի Հրէեյն, չնորհակալութիւն նմա փոխան յառաջագոյն անձնատուր ձեռընտուութեան առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն՝ տայ նմա իշխել թագ ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր և ասպետ, և առանց ոսկւոյ և առանց ականց զկրտսեր մարգարիտ երեքտակէն վարսակալ ածել յորժամ յարքունիս և ի տան թագաւորին շրջիցի։

Եւ զգեցուցանողս իւր ի զաւակաց Բանանացւոց, անուն կոչէ ազգին Գնթունի։ Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ՝ արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս և զլուխ նահապետ նոցա զՄաղխազ ոմն. բայց անուն ազգին զնախնականն պահէ։ Իսկ զԴատ ի զաւակէ Գառնկայ որ ի Գեղամայ, ի վերայ որսոց արքունականաց կարգէ։ Որոյ որդի եղեալ Վարժ՝ յանուն նորա անուանի ազգն, բայց այս զկնի, յաւուրս Արտաշիսի։ Եւ զԳաբաղ ոմն ի վերայ կուտից, և զԱբել՝ սպասաւոր և գահաւոր. և չէնս պարգևէ նոցա, յորոց և անուն կոչին սապէս և նախարարութիւնքն՝ Աբեղէն և Գաբեղէն։

Եւ զԱրծրունիսդ գիտեմ՝ ոչ արծրունիս, այլ արծիւ ունիս, որք առաջի նորա կրէին։ . . . Գիտեմ զԳնունիսդ՝ զինի ունիս, որ առաջի թագաւորին պատրաստէր զըմպելիսն, որ աքանչելի իմն գիպեալ եղև ըստ գործոյն և անունն, քանզի (որ) պատրաստէր զըմպելիս արքայի յընտիր և համեղ գինեաց՝ ունէր և կոչումն անուանն Գին. ընդ որ զուարճացեալ, ասեն, Վաղարշակ՝ կարգէ ի թիւ նախարարութեան ազգաց մեծապէս։ Եւ են այս երկու տունքս ի զաւակէ Սենեքերիմայ, Արծրունիս և Գնունիս։

Ասեմ և զՍպանդունիսդ ի վերայ զինարանաց, և զՀաւենունիսդ՝ բազէակիրս և բազէակալս, յաղագս ի մայրիս բնակելոյ։ Եւ եթէ առ ցոփ․ ոչ ունիցիս՝ զՁիւնականդ ամարանոցաց պահակս և ձիւնակիրս։ Եւ գունդս պահապանս դրան արքունի պատրաստէ զչորսս, զմի մի իւրաքանչիւր ի նոյն հին զարմից թագաւորացն որ ի Հայկայ։ . . . Նա և ... ներքինիս..., ի նոյն հին զարմից թագաւորացն որ ի Հայկայ։

ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ լինել, և նահապետ նոցա զՀայր իշխանն մասին յԱտրպատականէ մինչև ցՃուաշ և Նախճաւան։

7. Վաղարշակ, ասէ Խորենացին, «յետ կարգելոյ զտուն թագաւորին»՝ կու տայ նահապետի ազգին Մուրացան լինել «երկրորդ թագաւորութեան», թողլով նմա Մարաց գիւղերը։ Կը կարգէ նաև սահմանապահ իշխաններ. արևելեան սահմանին վրայ՝ երկու ցեղից՝ Սիսակեանց և Կադմեանց նահապետները. հիւսիսային արևելեան սահմանին վրայ՝ Առան անուն զոմն հանճարեղ և մտացի, առ մեծ գետովն որ կոչի Կուր։ Այս Առան էր ի ծննդոց Սիսակայ, որ ժառանգեց (առ Հայկազամբք) Աղուանից դաշտը և այն դաշտին լեռնակողմը, յԵրասխայ մինչև ցամուրն Հնարակերտ։ Ի զաւակէ սորա (Առանայ) ասեն սերեալ Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծոդէացւոց ազգը և Գարգարացւոց իշխանութիւնը։

Գուշարայ, որ էր յորդւոց Շարայի՝ ժառանգեց (ի Վաղարշակայ) Մթին կոչուած լեռը որ է Կանգարք, զկէս մասն Ջաւախաց, զԿողը, զԾոբ և զՁոր մինչև ցամուրն Հնարակերտ։ Վաղարշակ այս Գուշարայ Հայկազնոյն սերունդէն կարգեց նաև Աշոցայ տէրութիւնը և զսեպհականութիւնն (տէրութիւն) Տաշրայ։ Իսկ Կովկասու գօտւոյն դէմ, իբրև կողմնակալ հիւսիսոյ կարգեց այս Գուշարայ մեծ և հզօր ազգը, և բդեշխ Գուգարացւոց անուանեց զնահապետ նոցա, որ էր ի զաւակէ Դարեհի նախարարին Միհրդատայ՝ զոր Աղեքսանդրի կացուցեալ էր ՚իշխան ի վերայ գերութեան, զոր Նաբուգոդոնոսոր բերած էր Իբերիոյ ազգերէն, ինչպէս կը պատմէ Աբիւդենոս. Մեծազօրն Նաբուգոդոնոսոր բռնագոյն էր քան զՀերակլէս. Լիբէացիներէն (Ափրիկէ) զօրք ժողվելով գնաց Իբերացւոց (Սպանիոյ) երկիրը, և տիրելով նոցա՝ զմասն մի ի նոցանէ բերաւ բնակեցուց յաջակողմն Պոնտոսի։

Վաղարշակ հաստատեց նաև Որդունի կոչուած նահապետութիւնն ի մեծի հովտին Բասենոյ, ի զաւակաց Հայկայ։ Եւ զոմն Տորք անուն ի զաւակէ թոռին Հայկակայ, ի Պասքամայ, այր տգեղ, յաղթանդամ և գժնեայ, որ վասն ժահագիմութեանն կը կոչուէր անգեղեայ՝ հաստատեց կուսակալ արևմտից, և ցեղին անունը կոչեց Անգեղ տուն։ Յետ սորա հաստատեց Վաղարշակ Ծոփաց նահապետութիւնն ի Չորրորդ Հայս. զնախարարութիւնն Ապահունեաց՝ զՄանաւազեանն և զԲզնունեանն նոյնպէս ի զաւակաց Հայկայ, երկրին բնակիչներէն երևելի մարդիկ նահապետ կարգելով, և զգաւառսն կոչեց յանուն ցեղիցն։

Եւ Սլաք անուն զոմն այր գժնեայ, որ չէ յայտ թէ ի Հայկայ

էր եթէ ի հնագոյն բնակչաց քան զնա, ըստ հին գրուցաց (Խոր. Բ. Ը.), կարգեց սակաւ արամբք պահել լեռը և որսալ քօշս։ Սոքա անուանեցան Սղկունիք։ Ի նոյն պաշտօն կարգեց նաև զանպարտելին Միանդակ, յորմէ են Մանդակունիք։

Իսկ յորդւոց Վահագնի գտաւ զոմանս, որ ինքնակամ յանձն առին լինել պաշտօնեայ մեհենից։ Զսոսա պատուեց Վաղարշակ մեծապէս, յանձնելով նոցա զքրմութիւնն, և Վահունի անուամբ կարգեց զնոսա ի թիւ առաջին նախարարութեանց։ Նոյնպէս զԱռաւենեանսն (Խոր. Գ. ԽԳ.) և զՋարեհաւանեանս, առաջին թագաւորաց զարմէն (Խոր. Ա. ԼԱ.), կարգեց համանուն քաղաքաց վրայ։

Եւ զՇարաշան ումն ի տանէ Սանասարայ կարգեց բդեշխ մեծ և կուսակալ յարևմտից հարաւոյ, ի վերայ սահմանացն Ասորեստանի (Ասորւոց), յափն Տիգրիս գետոյ, պարգևելով նմա զԱրձն և որ շուրջ զնովաւ գաւառս, և Տաւրոս լեռը, ուր է Սիմ, և զբոլոր Խոր Ասորիս։

Իսկ ի Մոկաց գաւառէն գտնելով մոկացի մը, որ ունէր ընդ իւրև շատ սրիկաներ՝ հաստատեց նախարարութիւն. նոյնպէս Կորդուաց, Անձևացեաց և Ակէացւոց նախարարութիւններն, նոյն գաւառներէն մարդիկ նահապետ կարգելով նոցա։ Իսկ զՌշտունեաց և զԳողթնեցւոց պատմի, թէ եկած էին գաղթական ի Սիսականէն, բայց չեմ գիտեր թէ գաղթականք ,ունէին այս անունները, թէ գաւառաց հին անուամբ կոչեցան այսպէս։

Ցետ կարգելոյ զսուն Թագաւորին՝ երկրորդ Թագաւորութեանն լինէր ի զաւակէ Աժդահակայ, Մարաց եղելոյ Թագաւորի, որ այժմ Մուրացանդ կոչեն։ Քանզի ոչ ասեն նահապետի ազգին՝ Մուրացան տէր, այլ Մարացւոցն տէր։ Եւ Թողու ի վերայ նոցա զամենայն չէնս որ ի գերութենէն Մարաց։ Եւ յարևելից կողմանէ զեզերբ հայկական խօսից կողմնակալս, զերկու ցեղից նահապետութեանցն՝ Սիսակեան և Կադմեայն։

Ցետ սորա մեծ և անուանի և բազմարիւր զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի՝ մոռացումն եղև մեզ յառաջին մատենին յիշատակել, զԳունդս Սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ, և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա։ Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ ի պարթևէն Վաղարշակայ կողմնակալ բիւրաւոր։ Ի սորա զաւակէ ասեն սերեալ զազգ Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծովդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն։

Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի՝ ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, և կէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոբ, զՁոր մինչև ցա-

մուրն Հնարակերտ։ Բայց զտէրութիւնն Աշոցայ և զսեպհականութիւնն Տաշրայ՝ կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ։ Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն (Գուգարաց). և նահապետութեանն անուն կարգայ բդեշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ Դարեհի նախարարի, զոր ածեալ Աղեքսանդրի թողեալ իշխան ի վերայ գերութեան ի Վիրիացւոց ազգացն, զորս էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիւդենոս պատմէ այսպէս ասելով. Մեծազօրն Նաբուգոդոնոսոր բռնագոյն էր քան զՀրակլէս. ի Լիբիացւոց զօրաժողով լեալ՝ հասանէր ի Վերիացւոց աշխարհն, և վանեալ խորտակեալ ընդ ձեռամբ նուաճէր. և զմասն մի ի նոցանէ յաջակողմն Պոնտոս ծովու յարևմուտս տարեալ բնակեցուցանէր։

Իսկ ի հովտին մեծի Բասենոյ կարգէ նահապետութիւն զՈրդունին անուանեալ, որ ի զաւակացն Հայկայ։ Իսկ զայր խոժոռագեղ և բարձր և կոպտաբանձն և տափակքիթ, խորակն և դժնահայեաց, ի զաւակէ Պասքամայ ի Հայկակայ թոռանէ, Տորք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով հաստատէ կուսակալ արևմտից. և յերեսացն անպիտանութեանն կոչէ զանուն ազգին Անգեղ տուն։

Բայց զկնի դորա հաստատէ զմեծ նահապետութիւնն Ծոփաց ի Չորրորդն կոչեցեալ Հայս։ Այլև զնախարարութիւնն Ապահունեաց և զՄանաւազեանն և զԲզնունեանն ի նոյն զաւակացն Հայկայ. ի բնակչաց գտեալ պերճագոյն՝ տեարս կարգէ, յանուն շինից և գաւառաց կոչելով։

Այլ մոռացաք և զԴժնեայ Սլաքն անուանեալ այր, զոր ոչ կարեմ հաստատեաւ ասել, ի Հայկա՞յ եթէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհիս, զոր հին զրոյցքն պատմեն լինել. բայց էր այր քաջ։ Զսա կարգէ սակաւ արամբք պահել զլեառնն, որսալ զքօշն. որք անուանեցան Սլկունիք։ Այսպէս և ի նոյն իրս և զՄիանդակն անդառնալի. և ի սմանէ Մանդակունիք։

Բայց յորդւոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ խնդրեցին զմեհենիցն պաշտամունս՝ պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա զքրմութիւնն և կարգէ ընդ առաջին նախարարութիւնսն. և անուն կոչէ Վահունիս։ Սոյնպէս և զԱռաւենեանն և զԶարեհաւանեանն գտեալ ի զարմից առաջին թագաւորացն՝ կարգէ ի նոյնանուանս աւանս։

Եւ զՇարաշեան ի տանէ Սանասարայ հաստատէ բդեշխ մեծ և կուսակալ յարևմտից հարաւոյ, յեզր սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ. գաւառս պարգևելով զԱրձն, որ շուրջ զնովաւ, և զլեառն Տաւրոս, ուր և Սիմ, և զԿղեսուրն ամենայն։ Իսկ զՄոկացին ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւնս հաստատէ։ Նոյնպէս և զԿորդուացիս, զԱնձևացիս, զԱկէացիս ի նոյն գաւառաց։ Իսկ զՌշտունիս և զԳողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարև հաստատ. ոչ գիտեմ թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, և թէ յանուն գաւառացն զնախարարութիւնսն կոչեցեալ։

Վաղարշակ, ըստ Խորենացւոյն, կը շինէ մեհեան յԱրմաւիր՝ կանգնելով «անդրիս արեգական և լուսնի և իւրոց նախնեաց»։ Կը հրամայէ նորոգել Շամիրամայ քաղաքը (տես էջ 15—23), և «յայն

բազում տեղիս շինել քաղաքս բազմաբնակս, և շէնս գլխաւորս և մարդախիտս»:

8. Ըստ Խորենացւոյն՝ Վաղարշակ իմաստուն օրէնսդիր էր: Յարքունիս իւր «ժամս որոշէ ելևմտից (ունկնդրութեան, audience), խորհրդոց, խրախճանութեանց (կերակրոյ) և զբօսանաց: Եւ յիշեցուցանողս երկուս ի ձեռն գրոյ», մին՝ բարւոյ, և միւսը՝ վրէժխնդրութեան. «բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ ի բարկութեան արքային և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրաւն և զմարդասիրելն»:

Վաղարշակ հաստատեց, ըստ Խորենացւոյն զինուորական պատուոյ. աստիճաններ. «կարգս զինուորութեանց, առաջինս և երկրորդս և երրորդս և որ ի կարգին». նաև «իրաւարարս ի տան արքունի, իրաւարարս ի քաղաքս և յաւանս»: «Հրաման տայ քաղաքացեաց մարդկան արգոյ լինել քան զգեղջկաց . . . և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարել, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք»:

9. Վաղարշակ «բազում ունէր ուստերս», ասէ Խորենացին, և «պատշաճ վարկաւ՝ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին»: Երէց որդին զԱրշակ միայն պահեց առ իւր «ի համար թագաւորութեան», և զթոռն իւր Արտաշէս, զոր շատ կը սիրէր, «քանզի էր արդարև տղայն կայտառ և հզօր մարմնով». մնացեալները ղրկեց Հաշտենից կողմերն, առանձին մուտ և ռոճիկ սահմանելով նոցա յարքունուստ: «Եւ եղև այս—կը յաւելու Խորենացին--«յայնմ հետէ և առաջայ օրէնք ի մէջ Արշակունեաց, միոյ որդւոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, և այլ ուստերաց և դստերաց գնալ ի կողմանս Հաշտենից», որ այն ազգին (Արշակունեաց) ժառանգութիւն էին:

«Յետ այսպիսի արութեանց և բարեկարգութեանց, ասէ Խորենացին, մեռանի Վաղարշակ ի Մծբին, թագաւորեալ ամս քսան և երկու», այսինքն, ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն՝ 166—144, կամ 153—131 նախ քան զՔրիստոս:

10. Ըստ Խորենացւոյն՝ Վաղարշակայ յաջորդելով որդին Արշակ՝ կը թագաւորէ ամս երեքտասան, այսինքն 144—131 կամ 131—118 նախ քան Քր.: ԶԱրշակայ այսչափ միայն ասէ Խորենացին, թէ եղաւ «նախանձաւոր և հետևող հայրենի առաքինութեանցն», և թէ «բազում կարգս ուղղութեանց գործեաց»: Արշակ, ըստ Խորենացւոյն, մեծամեծ քաջութիւններ գործած էր Փոքուն Ասիոյ կողմերը. քանզի կը յաւելու Խորենացին, թէ Արշակ պատերազմեցաւ

ընդ Պոնտացիս, և ի նշան քաջութեան իւրոյ կոթող կանգնելով յեզեր Սեաւ ծովուն՝ իւր բոլորատէգ (մխակուր) թունաւոր նիզակն այնպէս ուժով նետեց ի հեռաւորուց, որ նիզակը մնաց ի կոթողին։ Զայս արձան (քար), ասէ Խորենացին, պատուեցին Պոնտացիք երկար ժամանակ իբրև աստուածային գործ, բայց «ի գոռալն Արտաշիսի (որդւոյ Արշակայ) միւսանգամ ընդ Պոնտացիս՝ ընկեցեալ ասեն զարձանն ի ծով»։

Այս Արշակայ ժամանակ, ըստ Խորենացւոյն, Բուլկար գաղթականներ Կովկասու կողմերէն գալով ի Հայս՝ բնակեցան Տայոց Կող գաւառը, «յարգաւանդ և ի հացաւէտ տեղիս»։

Ըստ Խորենացւոյն՝ հոս կը վերջանար Մար Իբասայ պատմութիւնը՝

Արշակ որդի Վաղարշակայ թագաւորէ ի վերայ Հայոց ամս երկոտասան։ Նախանձաւոր և հետեւող հայրենի առաքինութեանցն լեալ բազում կարգս ուղղութեանց գործեաց. պատերազմելով ընդ Պոնտացիս և նշանակ եթող յեզեր ծովուն մեծի զնիզակն իւր զբոլորատէգ, որ երարեամբ զեռնոց մխեալ, ձգեալ ի հեռաւորուց՝ խորագոյն նստոյց յերկանաքար արձանին, զոր կանգնեաց ի ծովեզերն։ Զայս արձան բազում ժամանակս պատուեցին Պոնտացիք որպէս զառ ի յաստուածոց գործ։ Իսկ ի գոռալն Արտաշիսի միւսանգամ ընդ Պոնտացիս՝ ընկեցեալ ասեն զարձանն ի ծով։

Ի սորա աւուրս ազմուկ մեծ լեալ ի գօտիս մեծի լերինն Կաւկասու յաշխարհին Բուլղարաց, և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր, և բնակեցան ներքոյ Կողայ, յարգաւանդ և ի հացաւէտ տեղիս բազում ժամանակս։

Աստանօր սպառին բանք ծերունւոյն Մար Իբաս Կատինայ։

11. Խորենացին Արշակայ յաջորդել կու տայ զորդի նորա զԱրտաշէս, որոյ պատմութիւնը որպէս թէ կ'առնու ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի, որ թարգմանեց կամ օրինակեց, «փոխադրեաց», ասէ Խորենացին, ինչ որ զթագաւորաց Հայոց կը պատմուէր Եդեսիոյ դիւանին գրուածներուն մէջ, ի քարտէսս դիւանին Եդեսիոյ»։ Այս գրուածք կամ քարտէսք, ըստ Խորենացւոյն, «ի Մծբնայ հոն փոխուած էին»։ Ափրիկանոս, ըստ Խորենացւոյն, առած էր նաև «Պոնտոսի Սինոպ քաղաքին մեհենական պատմութիւններէն»։ «Թող չտարակուսի ոք», կը յաւելու Խորենացին. քանզի մեք իսկ ականատես եղանք այն դիւանին։ Եւ վկայ է նաև Եւսեբի Կեսարացւոյ եկեղեցական պատմութիւնն, զոր թարգմանել տուաւ հայ լեզու երանելին Մաշտոց։ Եթէ կամիս (ասէ Խորենացին ցՍահակ Բագրատունի)՝ խնդրել առ Սիւնեաց Գեղարքունի գաւառը պիտի գտնես առաջին հագներգութեան (գպրութեան) յերեքասաներորդ թուին, թէ մեր առաջին թագաւորաց բոլոր գործերը

մինչև ցԱրգար, և յետ Արգարու մինչև ցՆրուանդ՝ կան ի դիւանին Եդեսիոյ: Եւ կարծեմ տակաւին կը գտնուին պահուած ի նմին քաղաքի»:

Սկիզբն արասցուք պատմել ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի . . . քանզի նա բովանդակ փոխադրեաց որ ինչ ի քարտէսս դիւանին Եդեսիայ, որ է Ուռհայ, որ յաղագս Թագաւորացն մերոց պատմէր. որ մատեանքն ի Մծբնայ էին փոխեալ անդր, և ի Սինոպայ Պոնտոսէ ի մեհենական պատմութեանցն: Մի ոք անհաւատասցի, քանզի մեզէն իսկ ականատես եղաք այն դիւանին: Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկղեսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ, զոր եւ Թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու: Խնդրեր արասցես ի Գեղաքունի ի գաւառին Սիւնեաց, և գտցես յառաջին հագներդութեանն յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յԵդեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջին թագաւորացն մերոց մինչև ցԱբգար, և զկնի Աբգարու մինչև ցՆրուանդ: Որ այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի:

12. Այսպէս Խորենացին, ըստ իւրում վկայութեան՝ Ափրիկանոսի միջոցաւ յԵդեսիոյ դիւանէն առնլով կը պատմէ զԱրտաշէսէ օրինակ զայս. «Արտաշէս թագաւորեց Հայոց փոխանակ Արշակայ հօր իւրոյ, Պարսից թագաւորին Արշականայ քսան և չորրորդ տարին (131—106 կամ 118—93), և յառաջադէմ լեալ՝ կամեցաւ լինել առաջին և ոչ երկրորդ յետ Պարթևաց, և Արշական հաւանելով յանձն առաւ տալ նմա նախագահութիւնը. վասն զի հպարտ և պատերազմասէր էր Արտաշէս, շինեց իւր արքունիս յերկրին Պարսից, ետ հարկանել դրամ իւր պատկերով, և զԱրշական արար ընդ իւրով իշխանութեամբ թագաւոր Պարսից, և զՏիգրան որդին իւր՝ Հայոց . . . Արտաշէս տուաւ զդուստր իւր զԱրտաշամա կին Միհրդատ անուն ումեմն, որ բդեշխ էր Վրաց . . . , և յանձնեց նմա Հիւսիսային լերանց (Կովկասու) և Պոնտոս ծովուն կողմնակալութիւնը:

13. Այնուհետև Արտաշէս ժողվեց զօրք յարևելից և ի հիւսիսոյ այնչափ՝ մինչև չգիտել զհամար նոցա, բայց ի նշան բազմութեանն քար դիզել կու տար ըստ մարդաթուի յանցս և յիջևանս: Այսպիսի մեծ բազմութեամբ խաղալով Արտաշէս յարևմուտ՝ արար ձերբակալ զԿրիսոս թագաւոր Լիւդացւոց: Եւ գտնելով յԱսիա Արտեմեայ, Հերակղի և Ապողոնի պղնձաձոյլ ոսկեզօծ անդրիս (արձան)՝ ղրկեց ի Հայս, կանգնել յԱրմաւիր: Նոյնպէս Դիոսի, Արտեմեայ, Աթենասայ, Հեփեստոսի և Ափրոդիտեայ անդրիներն առնլով ի Յունաց՝ բերել տուաւ ի Հայս:

Արտաշէս տիրելով ցամաքին, որ ի մէջ երկուց ծովուց (Միջերկրականին և Սեաւ ծովուն, այսինքն Փոքուն Ասիոյ)՝ լցոյց զՈվկիանոս (Միջերկրականը) բազմութեամբ նաւաց, կամելով ծառայեցնել բոլոր արևմուտք․ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, քանզի Հռոմայեցիք էին յայնժամ ի մեծի յուզման։ Բայց չգիտեմ, ասէ Խորենացին, ինչ պատճառաւ խռովութիւն մեծ յարեաւ ի բանակին, այնպէս որ զօրքն սկսան զիրար կոտորել, և Արտաշէս սպանաւ ի փախստեան իւր զօրքէն ի քսան և հինգերորդ ամի թագաւորութեան իւրոյ։

Արտաշէս թագաւորէ Հայոց փոխանակ Արշակայ հօր իւրոյ ի քսան և ի չորրորդ ամի Արշականայ Պարսից արքայի․ և յառաջադէմ եղեալ՝ ոչ երկրորդականն ունի գահ, այլ զաւագութեան թեկն ածէ․ որում հաւանեալ յանձն առնու Արշական տալ նմա զնախագահութիւնն։ Քանզի էր այր հպարտ և պատերազմասէր․ որ և արքունիս իւր ի Պարսից աշխարհին շինեաց, և դրամ առանձին զիւր պատկերն հարկանէր․ և զԱրշական ընդ իւրով ձեռամբ կացուցանէր թագաւոր Պարսից, որպէս զՏիգրան որդի իւր՝ Հայոց։ . . . Բայց զդուստր իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումեմն Վրաց բդեշխի մեծի, . . . և հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պոնտոս ծովուն։

Յայնժամ հրաման տայ Արտաշէս զօր յարուցանել յարևմտից և ի հիւսիսոյ բազում յոյժ, մինչև ոչ գիտել նմա զհամարն, այլ յանցս և յիջևանս քար ըստ մարդաթուի կարկառ՝ նշան բազմութեանն թողուլ. խաղայ յարևմուտս, և ձերբակալ արարեալ զԿրիսոս թագաւոր Լիւդացւոց։

Եւ գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկէզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր։ . . . Բայց և յԵլլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդայ, զԱթենայ, զՆփեստու, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս։

Բայց Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արևմուտս։ Քանզի մեծ յոյզք խռովութեան եղեալ ի Հռովմէ՝ ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս։ Այլ ոչ գիտեմ ասել յորմէ ազդմանէ, ահագին իմն ազմուկ լեալ չփոթից՝ բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ․ իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրաց, թագաւորեալ ամս քսան և հինգ։

14. Խորենացին հաստատելու համար Արտաշիսի ձերբակալելն զԿրիսոս՝ կը յիշէ յոյն պատմագիրներ։ Զայս, ասէ, կը յիշեն պատմագիրք Յունաց, ոչ մի ոք այլ բազումք․ ուստի տարակուսելով եղաք ի խնդիր։ Քանզի լսած էաք ի պատմութենէ ոմանց, թէ Կիւրոս սպանանելով զԿրիսոս՝ եբարձ Լիւդացւոց թագաւորութիւնը։ Բայց որովհետև շատերը կը պատմեն հաւաստեաւ, թէ Արտաշէս բռնեց զԿրիսոս՝ ես կը հաւատամ։ Պողիկրատէս ասէ,

Ըստ իս քան զՄակեդոնացին Աղեքսանդր մեծ է Արտաշէս, քանզի սա առանց ելանելոյ իւր երկրէն՝ իշխեց Թէբէի և Բաբելոնի, և առանց անցանելոյ ընդ Ալիւս գետ՝ սատակեց լիւդական զօրքը և կալաւ զԿրիւսոս, և յառաջ քան զհասանելն յԱսիա՝ Ատտիկէի դղեկին մէջ հռչակեցաւ։ Աւա՜ղ բախտին, իցէ՜ թէ իւր տէրութեան մէջ մեռնէր, և ոչ ի փախստեան։

Սմին նման կը պատմէ Եւագարոս. Աղեքսանդրի և Դարեհի պատերազմը փոքր է առ պատերազմաւ Արտաշիսի. քանզի ի պատերազմին նոցա փոշին կը մթացունէր տուընջեան լոյսը, իսկ սա նետաձգութեամբ ծածկեց և խաւարեցոյց արևը, առնելով ձեռագործ գիշեր ի միջօրէի։ Արտաշէս չթողուց փախստեայ, որ գոյժ տանէր Լիւդացւոց, այլ բռնելով զթագաւոր նոցա Կրիւսոս՝ հրամայեց դնել ի տապակի։ Զօրք սորա այնչափ էին, մինչև արմամբ նուազեցնել զջուր գետոյն, զոր ձմեռնային հեղեղք չկրցան ստուացնել, և ոչ թիւք բաւական էին համարել զզօրս նորա, ուստի և հարկ եղաւ չափ գործածել քան թիւ։ Բայց Արտաշէս փոխանակ հպարտանալոյ՝ արտասուեց ասելով. Աւա՜ղ փառացս անցաւորի։

Կամադրոս կը գրէ. Հպարտ Լիւդացիք խաբուեցան Պիւթեայ հարցկին պատասխանէն առ Կրիւսոս, թէ Կրիւսոս Ալիւս գետ անցնելով՝ պիտի քակէ իշխանութիւնը։ Լիւդացիք կարծեցին, թէ Կրիւսոս օտար իշխանութիւն պիտի քակէր, բայց քակեց զիւրն, քանզի Արտաշէս Պարթև բռնելով զԿրիւսոս հանեց զնա ի տապակ. իսկ Կրիւսոս յիշելով զբան Սողոնի Աթենացւոյ՝ ասէ իւրով լեզուաւ. Ո՜վ Սողոն, Սողոն, գեղեցիկ խօսեցար մարդոց բարեբախտութեան երանի չտալ մինչև ցվախճան։ Արտաշիսի մարդիկը լսելով զբան Կրիւսոսի՝ պատմեցին թագաւորին, թէ Կրիւսոս կը կոչէ նոր ոմն Աստուած։ Արտաշէս գթալով հրամայեց ածել զԿրիւսոս առաջի իւր, և իմանալով թէ զինչ էին բանք Կրիւսոսի՝ հրամայեց չտանջել զնա։

Իսկ Փղեգոնիոս կը գրէ. Քան զայլ ամենայն թագաւորս հզօր էր Արտաշէս Պարթև, որ ոչ միայն Լիւդացւոց յաղթելով կալաւ զԿրիւսոս, այլ և փոխեց զընութիւն տարերաց ի Հելլեսպոնտոս և ի Թրակիա, զցամաք ի ծով, և զծով ի ցամաք փոխելով։ Թեսաղացւոց սպառնացաւ, և համբաւն հիացոյց զՀելլենացիս։ ԶԼակեդեմոնացիս կործանեաց, զՓոկէացիս փախոյց, Ղովկրացիք անձնատուր եղան, Բէովտացիք հպատակեցան նմա, բոլոր Յունաստան հարկեցաւ նմա առ ահին։ Բայց յետ սակաւուց մեծ եղաւ յոյժ դժբախտութիւն նորա։ Ոչ այնչափ թշուառացաւ Կիւրոս ի պատերազմին Մասքթաց, ոչ Դարեհ՝ ի կռուին ընդ Սկիւթացիս, և ոչ Կամբիւսէս՝ ընդ Եթովպացիս։ Փոքր էր նաև Քսերքսի արշաւանքն ի Յոյնս,

ուր զգանձ և զվրան իւր թողեալ փախեաւ մազապուր. իսկ սա յետ պանծալի յաղթութեանց՝ խողխողեցաւ իւր զօրքէն։

Զայս ասացեալ պատմագրացն Յունաց, ոչ միոյ կամ երկուց, այլ բազմաց. ընդ որ տարակուսեալ մեր՝ բազում խոյզ խնդրոյ արարաք՝ Քանզի լսէաք ի պատմութեանց ոմանց՝ Կիւրոսի սպանեալ զԿրիւսոս, և բարձեալ զթագաւորութիւնն Լիւդէացւոց։ . . . Բայց քանզի բազումք են որ ասեն զԿրիւսոս մերոյ Արտաշիսի կալեալ, և ոճով իմն պատմեն՝ ես հաւանիմ։ Քանզի ասէ Պողիկրատէս այսպէս. Վեհ ևս Արտաշէս Պարթև քան զՄակեդոնացին Աղեքսանդր, զի կալով յիւրում աշխարհին՝ իշխեաց Թերայ և Բաբելոնի, և չև ընդ Ալիւս գետ անցեալ՝ զԼիւդականն սատակեաց զզօրս և կալաւ զԿրիւսոս. և յառաջ քան յԱսիոյ հասանելն՝ յԵտոնիկէ դղեկին քարոզեցաւ։ Աւաղ բախտին. միայն թէ ի տէրութեանն և ոչ ի փախստեան էր վախճանեալ։

Հանդոյն դմին ասէ Եւագորոս. Փոքր Աղեքսանդրի և Դարեհի պատերազմն առ Արտաշիսին բաղդատեալ. քանզի նոցայն ոչ ի փոշւոյն մաքուր երևէր լոյս տուընջեանն, այլ սա ծածկեաց նետաձգութեամբն և ստուերացոյց զարեգակն, ձեռագործ գիշեր զմիջօրէիւ արարեալ։ Ոչ փախստեայ համբաւաբեր Լիւդացւոցն թողեալ, այլ և զթագաւորն նոցին զԿրիւսոս ի տապակի հրամայեաց կացուցանել։ Վասն սորա և ոչ ուղխք զգետն ստուարացուցին, արբմամբն ի ձմեռնային նուազութիւն իջուցանելով. վասն ՚զի և զթուոցն եցոյց տկար՝ բազմութեամբ զօրացն, մինչ զի չափոյ պէտք եղեն առաւել քան զհամարոյ։ Ընդ այս ոչ հպարտացեալ, այլ արտասուեաց ասելով. Աւաղ փառացս անցաւորի։

Գրէ և Կամադրոս այսպէս. Խարկանք լինէին հպարտացելոցն Լիւդացւոց՝ Կրիւսեայ Պիւթիայ հարցուկն պատասխանելով. Կրիւսոս անցեալ ընդ Ալիւս գետ՝ քակեսցէ զիշխանութիւնս։ Զոր նորա օտարաց կարծեցեալ՝ զիւրն քակէ. քանզի կալեալ զնա Պարթևին Արտաշիսի հրամայեաց հանել յերկաթեղէն տապակի։ Իսկ Կրիւսոսի յիշեալ զբանն Սողոնի Աթենացւոյ՝ ասէ յիւր լեզուն. Ո՜վ Սողոն, Սողոն, գեղեցիկ բարբառեցար, ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցվախճան՝ Եւ լուեալ որ մերձն կային՝ պատմեցին Արտաշիսի, եթէ զնոր ոմն Աստուած կարդայ Կրիւսոս։ Եւ հարցեալ և ուսեալ Արտաշիսի, թէ զինչ է որ աղաղակեացն՝ հրամայեաց ներել զտանջանսն։

Գրէ և Փղեգոնիոս. Ամենայն թագաւորաց հուժկու եղեալ Պարթևն Արտաշէս, և ոչ միայն զԼիւդացիս վանեալ և զԿրիւսոս կալեալ, այլ յԵլեսպոնտոս և ի Թրակէ զտարերացն փոխեաց զբնութիւն, ծովագնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծով հետևակելով, Թետաղացւոցն սպառնալով, և համբաւն հիացուցանէր զհելլենականն։ Կործանեալ զԼակեդեմոնացիս, փախոյց զՓոկէացիս, Լոկրացիք անձնատուրք եղեն, Բիւտացիք մասն են ի կողմանց նորա. առհասարակ նմա Ելլադայ մատուցանէր զահն։ Յետ փոքու ժամանակի աղէտք անցին զամենեքումբք՝ ոչ այնքան թշուառացաւ Կիւրոս ընդ Մասքութս պատերազմելով. ոչ այնպիսի կիրս կրեաց Դարեհ ի Սկիւթացւոցն պահուստ, և ոչ Կամբիւսէս յԵթովպացիս. փոքր և Քսերքսին յԵլլադա զօրու երթալն, թողլով նոցա

զգանձս և զխորանս, միայն կենդանի փախուցեալ մազապուր։ Այլ սա մեծամեծ յաղթանակօք պանծացեալ՝ յիւրոց զօրացն խողխողի։

«Ես այս վկայութիւններն Հաւատարմութեան արժանի Համարիմ, ասէ Խորենացին. ուստի այն Կրիւսոս որ առ Կիւրոսիւ ասի լինել՝ կամ սուտ է և կամ այլ ոք՝ Կրիւսոս անուամբ»։ Այսպէս մեր ծերունի պատմիչը բովանդակելով Վաղարշակայ և երկուց յաջորդաց նորա փառաւոր պատմութիւնը՝ կ'անցնի առ Տիգրան մեծ, զոր արդէն առ Հայրըն Թագաւորեալ կը դնէ, և որով որպէս ասացաք՝ կ'սկսի մեր պատմութեան երկրորդ, այն է պատմական ժամանակը։ Քննական գիտողութիւնները, զորս արդ պիտի, պարունակէ մեր յաջորդ գլուխը՝ Հարկ ի վերայ դրաւ մեզ այսպէս երկար մէջ բերել այն պատմութեան բովանդակութիւնը։

ԳԼՈՒԽ Ը.

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

1. Պարթեւաստան: 2. Ապստամբութիւն Պարթեւաց եւ ծագումն նոցա ըստ Խորենացւոյն: 3. Թուականի տարբերութիւն առ Խորենացւոյն: 4. Պարթեւք յԱբրահամէ չեն: 5. Թագաւորք ըստ Խորենացւոյն եւ ըստ Դահեկանաց: 6. Պարթեւ թագաւորաց հարստութեան բուն թուականը: 7. Տոհմ Պարթեւ թագաւորաց. Մար-Սկիւթական ճիւղը: 8. Պահլաւք. Տարբերութիւն նոցա ի Պարթեւաց: 9. Յատկութիւն Պահլաւ ցեղին: 10. Պարթեւաց վերջին թագաւորն: 11. Աղերս Պահլաւաց ընդ Սասանեանս: 12. Դահեկանք եւ աղբիւր Խորենացւոյն. Խոռոհբուտ. Բարսումա: 13. Պատմութիւն Խորենացւոյն զքաջէն Արշակայ: 14. Այս պատմութեան սխալը: 15. Պատմութիւն Խորենացւոյն զմեծէն Արշակայ. Այս պատմութեան սխալը: 16. Թագաւորել Վաղարշակայ ըստ Խորենացւոյն: 17. Այս պատմութեան անտեղութիւնը: 18. Պարթեւք չտիրեցին «երրորդ մասին աշխարհի», այսինքն համօրէն Ասիոյ: 19. Միհրդատ Ա. կամ Արշակ Զ.: 20. Վաղարշակայ պատմութեան գաղտնիքը: 21. Կրկին աւանդութիւն զծագմանէ Արշակունեաց. Պողիբիոս, Ստրաբոն: 22. Կարեւոր հետեւութիւն: 23. Մեծագոյն արժանիք Վաղարշակայ. Խնդիր զպատմութենէ Հայոց. Համճարեղ հիւսուած հարկաւոր պարագայից: 24. Վաղարշակայ ընծայուած յատկութիւնք եւ գործք: 25. Առաջին երեւելի գործ Վաղարշակայ. Հակասութիւնք Խորենացւոյն: 26. Պատերազմ Վաղարշակայ. Մորփիւղիկէս: 27. Պատմական տեսութիւն մը: 28. Ժամանակի կանխումն (anachronisme)*: 29. Խորենացւոյն զգօնութիւնը: 30. Մեծագործութիւն: 31. Զարմանալի խրատ: 32. Դարձ Վաղարշակայ ի Մծբին. Բարեկարգութիւնք: 33. Կարեւոր դիտողութիւն մը. Նոր աղբիւր Խորենացւոյն. Յունական պատմութիւնք: 34. Բագրատունիք: 35. Գնթունիք: 36. Խոռխոռունիք: 37. Վարաժնունիք: 38. Գաբեղեանք, Աբեղեանք, Արծրունիք, Գնունիք, Սպանդունիք, Հաւենունիք, Զիւնականք. Պահապան զունդեր: 39. Մարդպետութիւն: 40. Մուրացանք՝ երկրորդ թագաւորութեան: 41. Սահմանագլուխ ցեղեր. Սիւնիք: 42. Աղուանք, Առան: 43. Վիրք. Գուշար: 44. Անգեղտուն: 45. Աղձնիք: 46. Հակասութիւն մը: 47 Բդեշխութիւնք. Զինուորական սահմանապահք: 48. Այլ նախարարութիւնք. Մոկացիք: 49. Վահունիք. Վահագն. 50. Ընդհանուր դիտողութիւն: 51. Պաշտօնէութիւնք առ Արշակունեօք: 52. Ուրիշ կարգեր: 53. Նոր աղբիւր Խորենացւոյն. Ափրիկանոս. Եւսեբի վկայութիւնք:*

1. Պարթեւաստան էր մին արիական երկիրներէն, յայնկոյս Տիգրիս գետոյ. լեռնային, մանաւանդ հիւսիսային կողմը, անջրդի և անկոխ անապատներով։ Պարթեւաստան ունէր սահման ի հիւսիսոյ զՎրկանս ի հարաւակողման Կասպից ծովուն, յարևելից՝ բուն զԱրիս, այսինքն Արիք կոչուած ցեղը, յարևմտից՝ զՄարս, ի հարաւոյ՝ զԿրմանս։ Բնակիչքն էին արիական ցեղէ, քաջ և վարժ ի ձիավարել, այլ բիրտ։ Վասն բրտութեան բնակչացն, ինչպէս նաև վասն ամայութեան երկրին՝ անուես լեալ էր միշտ Պարթեւաստան արիական ցեղերուն ազնուագոյններէն, որպիսի էին Մարք և Պարսք։ Քան զսոսա աւելի յարգ չընծայեցին Սելեւկեանք այս երկրին, ուստի և Դարեհ կոչեցեալն Արշակ, այն է արքայ, ի զարմէ Աքեմենեանց (Տես թիւ 7 այս գլխոյ), իբր 255-ին նախ քան զՔր., տեսեալ զտկարութիւն Սելեւկեանց և զհաստատութիւն նոր յունական թագաւորութեանն Բակտրիոյ (256) ապստամբութեամբ, յարմարագոյն դատեցաւ զՊարթեւս առնուլ ի ձեռն, և կազմեց ինքն եւս նոր պարսկական կամ արիական տէրութիւն մը, որ կոչեցաւ Պարթեւական։

2. Ըստ Խորենացւոյն (գիրք Բ. գլ. Ա.) Անտիոքոս Թէոսի մետասաներորդ տարին, վաթսուն ամաւ յետոյ քան զմահն Աղեքսանդրի, կ'ապստամբին Պարթեւք ի Մակեդոնացւոց (կամի աւել ի Սելեւկեանց), և կը թագաւորէ Արշակ քաջ, այսինքն Արշակ Ա., ի գաւակէ Աբրահամու, ի՛ կնոջէ նորա Քետուրայ, որպէս զի կատարուի բան Տեառն առ Աբրահամ, թէ Թագաւորք ազգաց ի քէն ելցեն։ (Տես էջ 205)։ Պարթեւաց յԱբրահամէ սերելուն պատմութիւնը կը կրկնէ Խորենացին այլուր (գիրք Բ. գլ. ԿԸ.) աւելի ընդարձակ այսպէս. «ՅԱդամայ քսաներորդ առաջներորդ նահապետ մեզ զԱբրահամ աստուածային պատմութիւնքն ցուցանեն, և ի նմանէ եղեալ ազգդ Պարթեւաց։ Քանզի ասէ, յետ մեռանելոյն Սառայի առեալ Աբրահամու կին զՔետուրայ, յորմէ ծնան Եմրան և եղբարք նորա, զոր Աբրահամ ի կենդանութեան իւրում մեկնեաց յԻսահակայ, արձակելով յերկիրն արևելից. յորոց սերեալ ազգ Պարթեւաց»։

3. Նախ գիտելի է, զի ի մէջ վաթսներորդ ամի մահուան Աղեքսանդրի, այն է 263 նախ քան զՔր., և ի մէջ մետասաներորդ ամի թագաւորութեան Անտիոքայ Թէոսի, այն է 250՝ իբր երեքտասան ամաց միջոց կայ։ Դիտողութեան արժանի է նաև, զի Խորենացին որ հոս (գիրք Բ. գլ. Ա.) Արշակայ քաջի (Արշակայ առաջնոյ) կու տայ ապստամբել ի Մակեդոնացւոց՝ այլուր (գիրք Ա. գլ. Թ.) զմեծէն Արշակայ, որ ըստ նորին իսկ Խորենացւոյ իբր 56 ամօք յետոյ է

քան զԱրշակ քաջ՝ ասէ թէ ապստամբեցաւ Մակեդոնացիներէն (տես էջ 204)։ Գիտենք սակայն, զի Պարթեւք թեւադրութեամբ Արշակայ առաջնոյ փորձեցին առ Անտիոքաւ Թէոսիւ (255) ապստամբել ի Սելեւկեանց, սակայն վաղ մարեցաւ այս ապստամբութիւնը։ Առ Սելեւկոսիւ Բ-իւ (246—225), յաջորդաւ Անտիոքայ Թէոսի, Կալինիկոս կոչեցելով, եղեն Պարթեւք ինքնագլուխ, եւ թագաւորեց Արշակ Ա․ նախ քան զՔր․ յամին 238, զոր իբրեւ բուն թուական ազատութեան իւրեանց կը տօնէին Պարթեւք։ (Կիյմէն, Հնախօս․ արեւել․ գլ․ ԺԷ․)։

4. Խորենացին զՊարթեւս կը համարի սերեալ յԱբրահամէ, ինչպէս կ'երեւի, նայելով Ծննդոց ԻԵ. գլխոյն 6 համարին, ուր ասի թէ Աբրահամ արձակեց զորդիս հարճից իւրոց «յերկիրն արեւելից»։ «Եւ ետ Աբրահամ զամենայն ինչս իւր Իսահակայ որդւոյ իւրում, եւ որդւոց հարճիցն իւրոց որ էին Աբրահամու՝ ետ Աբրահամ պարգեւս, եւ արձակեաց զնոսա յԻսահակայ որդւոյ իւրմէ, մինչդեռ ինքն կենդանի էր, *ընդ արեւելս յերկիրն արեւելից*»։ Խորենացին կը սխալի սակայն արեւելից երկրաւ հասկնալով արիական ազգաց երկիրն անդր քան զՏիգրիս։ «Երկիր արեւելից» եւ «որդիք արեւելեայց» բառերով կ'իմանան գիրք Պաղեստինու սահմանակից մասն Միջագետաց եւ Արաբիոյ, ուր կը բնակէին սեմական ասորի եւ արաբացի ցեղեր։ ԶՅակոբայ ասի, թէ գնաց «յերկիրն արեւելից առ Լաբան,» այն է ի Միջագետս Ասորւոց. «Եւ զոտս իւր ամբարձեալ Յակոբայ գնալ *յերկիրն արեւելից* առ Լաբան, որդի Բաթուելի Ասորւոյ» (Ծննդ. ԻԹ. 1)։ Իսկ «որդիք արեւելեայց» շատ անգամ կը յիշուին ի պատմութեան Հրէից ընդ Մադիամու եւ Ամաղեկայ, որ էին արաբացի ցեղեր. «Եւ լինէր իբրեւ վարէր (կը ցանէր) այր Իսրայելի՝ ելանէր Մադիամ եւ Ամաղէկ եւ *որդիքն արեւելեայց*, հասանէին ի վերայ նոցա»։ «Եւ ամենայն Մադիամ եւ Ամաղէկ եւ ամենայն *որդիքն արեւելեայց* ժողովեցան ի միասին, եւ եկին բանակեցան ի հովիտն Յեզրայելի» (Դատ. Զ. 3. 33)։ «Եւ Մադիամ եւ Ամաղէկ եւ *որդիքն արեւելեայց* բանակեալ էին ի ծործորին» (Դատ. Է. 12)։

Խորենացին չլինելով տեղեակ մարդկային ցեղերու զանազանութեան՝ կը կարծէր թերեւս թէ արիական ցեղ մը, լեզուաւ եւ երկրաւ տարբեր, որպիսի էին Պարթեւք՝ կրնար սերիլ ուրիշ նոյնպէս լեզուաւ եւ երկրաւ տարբեր սեմական ցեղ մը, Եբրայեցւոց նահապետէն, ուստի եւ Ծննդոց «արեւելք» բառին այն ընդարձակ նշանակութիւնը տալով՝ զԱրշակ կը սերէ յԱբրահամէ եւ կատարեալ կը համարի զբան Գրոյն, թէ թագաւորք պիտի ելլէին յԱբրա-

համէ։ «Հայր ազգաց բազմաց եդի զքեզ, և աճեցուցից զքեզ յազգս, և *թագաւորք ի քէն ելցեն*» (Ծննդ. ԺԷ. 5,6)։ Բայց զՅակոբայ ևս ասէ նոյնպէս. «Աճեսջիր և բազմասջիր. ազգք և ժողովուրդք ազգաց եղիցին ի քէն, և *թագաւորք յերանաց քոց ելցեն*» (Ծննդ. ԼԵ. 11)։ Յայտնի է սակայն, թէ Ծննդոց հեղինակն այն խօսքը դնելով ի բերան Եհովայի խոստման ձևով առ Աբրահամ՝ կ՚ակնարկէ Իսմայելա ի կամ արաբացի ցեղերուն թագաւորները, զորոց ազգաբանութիւնը կը դնէ Գլ. ԻԵ. ԼԶ., և որ ըստ եբրայական աւանդութեան, (Ծննդ. ԻԵ. 1,2,12), էին սերունդք Աբրահամու, որպէս Իսմայէլ, Եդոմ և այլք, ինչպէս որ յերանաց Յակոբայ ելլող թագաւորօք ակնարկին թագաւորք Յուդայ և Իսրայելի։ Առանց լուսոյ դրական գիտութեանց, ի վերայ բանից Գրոց պատմութիւն հիմնելէն որչափ սխալներ սպրդած կան ի գրուածս հին քրիստոնեայ մատենագրաց։

5. Բայց թողլով այս մանր պարագաները՝ զանք բուն պատմելոյն ի Խորենացւոյն զՊարթևաց։ Խորենացին չորեքտասան թագաւոր միայն կը դնէ Պարթևաց, յԱրշակայ առաջնոյ մինչև յԱրտաւան վերջին թագաւոր Պարթևաց. մինչ ըստ դահեկանաց նոցա, որ գրեթէ ամբողջ կան՝ երեսուն թագաւորք նստան Պարթևաց։

ԱՆՈՒԱՆՔ ՊԱՐԹԵՒ ԹԱԳԱՒՈՐԱՑ

Ըստ Խորեն.	*Ըստ դահեկանաց*			
Արշակ Ա. քաջ.	Արշակ Ա.	(Դարեհ).	Արշակ ԺԶ.	Հրահատակ.
Արտաշէս Ա.	Արշակ Բ.	Տրդատ.	Արշակ ԺԷ.	Որոդէս Բ.
Արշակ Բ. մեծ.	Արշակ Գ.	Արտաւան Ա.	Արշակ ԺԸ.	Վոնոն Ա.
Արշանակ.	Արշակ Դ.	Պրապատ.	Արշակ ԺԹ.	Արտաւան Գ.
Արշական.	Արշակ Ե.	Հրահատ Ա.	Արշակ Ի.	Վարդան.
Արշէզ.	Արշակ Զ.	Միհրդատ Ա.	Արշակ ԻԱ.	Գոտարզ.
Արշաւիր.	Արշակ Է.	Հրահատ Բ.	Արշակ ԻԲ.	Վոնոն Բ.
Արտաշէս Բ.	Արշակ Ը.	Արտաւան Բ.	Արշակ ԻԳ.	Վաղարշ Ա.
Դարեհ.	Արշակ Թ.	Միհրդատ Բ.	Արշակ ԻԴ.	Բակուր.
Արշակ Գ.	Արշակ Ժ.		Արշակ ԻԵ.	Խոսրով.
Արտաշէս Գ.	Արշակ ԺԱ.	Սանատրուկ.	Արշակ ԻԶ.	Վաղարշ Բ.
Պերոզ.	Արշակ ԺԲ.	Հրահատ Գ.	Արշակ ԻԷ.	Վաղարշ Գ.
Վաղարշ.	Արշակ ԺԳ.	Միհրդատ Գ.	Արշակ ԻԸ.	Վաղարշ Դ.
Արտաւան.	Արշակ ԺԴ.	Որոդէս Ա.	Արշակ ԻԹ.	Վաղարշ Ե.
	Արշակ ԺԵ.	Հրահատ Դ.	Արշակ Լ.	Արտաւան Դ.

6. Թէպէտ իւրաքանչիւր թագաւորի թուականը ճշդիւ գտնել դժուարին է ըստ դահեկանաց՝ ստոյգ է սակայն, թէ սկիզբն հարստութեան Պարթեւ թագաւորաց չանցնիր անդր քան զամն 255 նախ քան զՔր. և վերջն չէ յառաջ քան զամն 226 յետ Քրիստոսի, որ է միանգամայն թուական սկզբան հարստութեան Սասանեանց։ Ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն՝ Պարթեւաց թագաւորութիւնը կ'սկսի նախ քան զՔր. 263-ին, որ է վաթսուներորդ ամ յետ մահուան Աղեքսանդրի, և կը վերջանայ յետ Քր.ի 172-ին, հաշիւ մը որ կը խախտէ ի հիմանց մեր բոլոր պատմութիւնը։

7. Գիտենք թէ Պարսից վերջին թագաւորը Դարեհ Կոդոմանոս յետ վերջին պարտութեանն ի ճակատուն Արբելայ (331), քաշուեցաւ Բակտրիոյ մայրաքաղաքը Բակտրա, բանակ կազմել անդ ընդդէմ Աղեքսանդրի, բայց սպանաւ Բակտրիոյ սատրապէն Բասոսէ, զոր կալաւ Աղեքսանդր և մատնեաց ազգականաց Դարեհի։ Դարեհի ցեղը մնաց ի Բակտրիա իբրեւ թագաւորական զարմ. (Բուզ. Ե. Լէ.)։ Երբ Պարթեւք ապստամբեցան ի Սելեւկեանց (255 կամ 238)՝ այն թագաւորական ցեղէն Դարեհ կամ Զարեհ (ըստ Շահնամէի) իբրեւ Արշակ առաջին թագաւորեց Պարթեւաց։ Յետ բարձման յոյն թագաւորութեան Բակտրիոյ (254—126) թագաւորեց ի Բակտրա նոյն Դարեհեան ցեղէն ուրիշ ճիւղ մը, զոր արդիք կը կոչեն Մար—Սկիւթացի (Médo—Scythe) և որոց դահեկանները գտնուած են առ մեօք, նման դահեկանաց Պարթեւաց (Կիյլմէն, Հնախօս. Արեւել. Բակտրիա)։

Այս Մար—Սկիւթական կոչուած թագաւորութիւնն է, զոր ոչ միայն Խորենացին, այլև քան զնա հնագոյնք ի մատենագիրս մեր Ագաթանգեղոս և Բուզանդ, ստէպ կը յիշեն Քուշեան, երբեմն ալ Մազքութք կամ Հոն անուամբ, որով կ'իմանան հիւսիսային արեւելեան ազգերն անդր քան զՊարսս։

8. Հին մատենագիրք մեր Պահլաւ կ'անուանեն մանաւանդ այն երկրորդ ճիւղը յանուն Բահլ քաղաքին, որ է Բակտրա, մայրաքաղաք Բակտրիոյ, և կը համարին այս ճիւղն ազգակից Պարթեւ թագաւորաց։ Խորենացին միեւնոյն ցեղ կամ ճիւղ կը համարի Պարթեւն ու Պահլաւը, որպէս թէ Պարթեւ թագաւորաց ցեղը կոչուեցաւ նաև Պահլաւ յանուն Բահլ քաղաքին, ուր թագաւորած կը համարի զԱրշակ քաջ և զերկոսին յաջորդս նորա զԱրտաշէս և զԱրշակ մեծ։ «Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի թագաւորէ ի վերայ Պարթեւաց Արշակ քաջ, ի քաղաքին որ կոչի Բահղ Առաւատին, յերկրին Քուշանաց . . . ։ Յետ նորա որդի նորին Արտաշէս,. , . և ապա Արշակ նորին որդի որ կոչեցաւ

մեծ, . . . և չուեալ ի Բահլ՝ հաստատեաց զթագաւորութիւն իւր . . . վասն որոյ զարմք նորա Պահլաւք անուանեցան»։ Բայց չէ ուղիղ դնել թագաւորեալ զԱրշակ քաջ և զյաջորդս նորա մինչև 126 նախ քան զՔր. ի Բահղ, այսինքն ի Բակտրա մայրաքաղաք Բակտրիոյ, քանզի 254-էն մինչև 126 Բակտրիա էր ուրոյն յունական թագաւորութիւն։ Յետ անկման այսր յունական թագաւորութեան հարկ է դնել թագաւորեալ ի Բահղ նոր Դարեհեան ճիւղ մը, որ կոչեցաւ Պահլաւ, և զոր Բուզանդ կը կոչէ Արշակունի, իբրև ազգակից վերջին Հայ Արշակունեաց.—«Զայն ժամանակաւ (առ Վարազդատաւ, յաջորդաւ Պապայ) թագաւորին Պարսից Սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ թագաւորին Քուշանայ ընդ Արշակունոյն որ նստէր ի Բաղհ քաղաքին» (Բուզ. Ե. ԼԷ.). և այլուր (Ե. Է.) ասէ. «Զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս, զի Արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բահղ քաղաքի՝ նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապհոյ թագաւորին Պարսից»։

Նոյն իսկ Խորենացին, որ ինչպէս տեսանք վերը, զՊահլաւս նոյն կը համարի ընդ Պարթեւաց՝ այլուր մի և նոյն ցեղի տարբեր ճիւղեր կը դնէ զնոսա։ Ի խօսելն զմահուանէն Արտաւանայ՝ ասէ վասն Խոսրովու առաջնոյ մերոյ թագաւորի. «Լսէ զբօթ մահուանն Արտաւանայ և զմիաբանութիւն ամենայն զօրաց Պարսից և նախարարաց, նաև զիւրոյ ազգին *Պարթեւաց* և *Պահլաւկաց*» (Խոր. Բ. ՀԱ.). և ի յաջորդ գլուխն դարձեալ զնմին Խոսրովայ ասէ. «Յղէ ի ձեռն հրեշտակաց առ իւր տոհմայինսն, *Պարթեւ* և *Պահլաւիկ ազգս*»։

9. Պահլաւ ճիւղն քան զՊարթեւականն յարգի էր առ Պարսիկս, քանզի Պահլաւք աւելի մաքուր պահած էին հին արիական կրօնքը և սովորութիւնները քան զՊարթեւս, որ իբրև կարի յունասէրք՝ ատելի էին Արեաց։ Խորենացին «պատուականագոյն» կ'անուանէ Պահլաւ ցեղը. «Յայնժամ հասանեն առ Խոսրով ոմանք ի հրեշտակաց իւրոց որ ի *պատուականագոյն* ազգն երթեալ էին, ի խորագոյն աշխարհն, ի նոյն ինքն ի ներքս ի Բահլ» (Խոր. Բ. ՀԲ.)։ Նոյն իսկ Արտաշիր՝ «պատուական» վերադիրը կու տայ Պահլաւ ցեղին, յառաջարկելն եղբարց Խոսրովու, որ Պահլաւ էին՝ սպանանել զԽոսրով. «Զբուն *պատուական* զձեր սեպհական Պահլաւն, զայն անդրէն ի ձեռ դարձուցից» (Խոր. Բ. ԿԷ.)։

10. Այս Պահլաւ ցեղէն էր Պարթեւաց վերջին թագաւորն Արտաւան, եղբայր մեծին Խոսրովու և Անակայ (տես էջ 86), որ ըստ Ագաթանգեղոսի, որպէս թէ խաբուելով յԱրտաշրէ յուսով թագաւորելոյ հայրենի ազգին իւրում Պահլաւաց՝ սպան զԽոսրով։

«Խօսել սկսաւ ընդ նմա (ընդ Անակայ) Թագաւորն (Արտաշիր) և ասէ. Եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ (ըսպանանել զԽոսրով)՝ . . . զձեր սեպհական Պահլաւն ի ձեզ դարձուցից» (Ագաթ. Բ.)։ «Իբրև զայն լսէր (Անակ)՝ զերդումն ուխտին յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր. նա և ըզխոստմունս յիշէր զպարգևացն, և ի բուն աշխարհն փափաքէր՝ որ Պահլաւն կոչէր» (Անդ)։ Նոյնպէս կը պատմէ Խորենացին առնելով յԱգաթանգեղեայ. «Խոստանայր (Արտաշիր եղբարց Արտաւանայ և Խոսրովու որ էին Պահլաւ) զբուն տունն դարձուցանել ի նոսա որ Պահլաւն կոչէր, զարքայանիստ քաղաքն Բահլ, և զամենայն աշխարհն Քուշանաց» (Խոր. Բ. ՀԴ.)։

11. Թուի թէ Սասանեանք կամեցան նուաճել նաև զՊահլաճիւղն, ինչպէս նուաճած էին Պարթևականք։ Յազկերտ ի հրովարտակին իւրում առ հպատակ ազգս՝ ասէ. «Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց» (Եղիշ. էջ 18. Տպգր. Վեն. 1825)։ Բայց չյաջողեցաւ խորհուրդ Յազկերտի, քանզի ըստ նմին Եղիշէի՝ «Զերկեամ մի կըռուեալ՝ ոչինչ կարաց ազդել նոցա» (էջ 21)։ Եւ էջ 250—251 ասէ. «Զայս իբրև լուաւ Թագաւորն Քուշանաց՝ . . . փութացաւ վաղվաղակի, զօր ժողովէր, գունդ կազմէր ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ. . . ։ Բազում հարուածս հասուցանէր ի վերայ զօրացն արքունի, և այնպէս նեղեալ շտապէր, զի անձուկ լաշքարավատախտարակ արարեալ այսրէն դարձուցանէր, և ասպատակազհետ մտեալ աւերէր զբազում գաւառս արքունի, և ինքն ողջանդամ անդրէն յերկիրն իւր դառնայր»։ Նոյնպէս և աւելի զըտակաւ և մանր կը պատմէ Փարպեցին. «Եւ յամի վեշտասաներորդի թագաւորութեանն իւրոյ Յազկերտ չու արարեալ ամենայն բազմութեամբ իւրով խաղայր ի պատերազմ ի վերայ Քուշանաց. . . ; Եւ հասեալ ի սահմանս թշնամեացն՝ և ոչ սակաւ մի մասամբք կատարէին խնդիրք թագաւորին, այլ ամենայնիւ նկուն եղեալ դառնայր ամօթալից, կորուսեալ ի զօրաց իւրոց արս ընտիրս և ականաւորս, նոյնպէս և յայլ ռամիկ այրուձիոյ։ Քանզի ոչ դէմ յանդիման ճակատեալ թշնամեացն պատերազմէին ընդ զօրսն Պարսից, այլ յեղակարծումն անկեալք ի վերայ միոյ միոյ թևի՝ հանէին ընսուր զբազումս, և ինքեանք դարձեալ անվնաս աներևոյթ լինէին։ Եւ այսպէս ի բազում աւուրս արարեալ՝ վատնէին սաստիկ հարուածովք զզօրսն Պարսից» (Փարպ. ԽԸ.)։

12. Առանց տարակուսի է, թէ իբրև պատմական աղբիւր՝ ար-

ժանի հաւատարմութեան են դաշնկանք։ Ուստի անուանք Թագաւորաց որ առ Խորենացւոյն՝ կամ հնարուած են, և կամ, որ աւելի հաւանական է՝ կը վերաբերին այլոյ հարստութեան։ Խորենացին յետ դնելոյ ի ԿԸ. և ի ԿԹ. գլուխ Բ. գրոցն զազգաբանութիւն Պարթև թագաւորաց, յԱրշակայ քաջէ մինչև զԱրտաւան՝ ասէ. Զսա (զԱրտաւան) սպաննելով Ստահրացին Արտաշիր, որդի Սասանայ՝ երարձ զթագաւորութիւնն Պարթևաց, յափշտակելով զերկիր ժառանգութեան նորա։ Այս ժամանակին պատմիչները շատ են ի Պարսից և յԱսորւոց, նաև ի Յունաց։ «Զսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի, որդւոյ Սասանայ, բառնալով զթագաւորութիւնն Պարթևաց, հանելով ի նոյանէ զաշխարհն ժառանգութեան։ Բազում են ժամանակիս այսորիկ պատմողք ի Պարսից և յԱսորւոց, այլ և ի Յունաց»։ Յետոյ յիշելով Պաղեփատոս, Պորփիւր և Փիլեմոն անուն անծանօթ հեղինակներ, որ որպէս թէ գրած էին Պարթևաց պատմութիւնը՝ կը յաւելու. Բայց մեք առնումք ի մատենէն Բարսումայի, զոր բերաւ Խոռոհբուտ։ Այս Խոռոհբուտ դպիր էր թագաւորին Պարսից Շապհոյ, և անկանելով ի ձեռս Յունաց, երբ Յուլիանոս եկաւ զօրօք ի Տիզբոն՝ յետ մահուն Յուլիանու՝ առ Յովիանոսիւ արքունի սպասաւորաց հետ եկաւ ի Յոյնս, և մեր հաւատքը դաւանելով կոչեցաւ Եղիազար, և ուսեալ յունարէն՝ պատմեց Շապհոյ և Յուլիանու գործերը։ Թարգմանեց նաև մատեան մի, որ ունէր առաջնոց պատմութիւնը, յօրինեալ ի Բարսումայէ ումեմնէ, որ էր գերեկից նորա և որոյ պարսկերէն անունն էր Ռաստսոհուն։ Այս մատենէն ուսեալ մեր՝ կը գրենք աւասիկ, թողլով զբարբանջմունս առասպելաց նորա։ «Բայց մեք ասասցուք ի մատենէն, զոր եբեր Խոռոհբուտ զԲարսումայի։ Այս Խոռոհբուտ դպիր եղեալ Շապհոյ թագաւորին Պարսից, և անկեալ ի ձեռս Յունաց յորժամ Յուլիանոս զօրու հանդերձ ի Տիզբոն չոգաւ՝ և ի մեռանելն նորա անդ՝ ընդ Յոբիանու ի Յոյնս ընդ արքունական սպասաւորսն եկն և մերոյ հաւատոյս դաւանեալ, անուանեցաւ Եղիազար, և յոյն լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանու։ Ընդ նմին թարգմանեաց և զառաջնոցն պատմութիւնս մատեան մի, որ գերեկից իւր լեալ Բարսումայի ուրումն անուամբ, զոր Պարսք Ռաստսոհուն կոչեն. յորմէ մեր ուսեալ՝ երկրորդեմք այժմ ի գիրս այս, թողլով զառասպելաց նորա բարբանջմունս»։

Արդարև զարմանք են, զի Խորենացին յետ ասելոյ, թէ շատերը գրեցին այն ժամանակին պատմութիւնը, թողլով զայն՝ կ՚առնու Բարսումայի պարսկի առասպելական պատմութենէն։ Զիարդ և իցէ հաւանական է թէ Պարթև թագաւորաց այն տարբեր ազգաբա-

նութիւնն առ Խորենացւոյն՝ կը վերաբերի Պահլաւ ցեղին, զոր պարսիկ պատմիչն Բարսումա, աղբիւր Խորենացւոյն՝ շփոթած կը թուի ընդ ազգաբանութեան Պարթեւ թագաւորաց, ինչպէս յայտնի է վերջին երկու թագաւորաց, Վաղարշու եւ Արտաւանայ, անուններէն, որ նոյն են ընդ անուանց գահեկանաց։

13. Ըստ Խորենացւոյն՝ յետ վախճանին ամի մահուան Աղեքսանդրի, այն է 263-ին նախ քան զՔր., Արշակ քաջ, որ է Արշակ Ա., թագաւորելով Պարթեւաց՝ տիրեց *բոլոր արեւելից*, «թափելով յինքն *զամենայն արեւելայս*». եւ լսելով թէ Հռոմայեցիք զօրանալով յԵւրոպա եւ ի Միջերկրականին, «ի վերայ արեւմտից եւ ծովու», առին Սպանիոյ հանքերը, «թափեցին ի Սպանիացւոց զբովսն ուստի ոսկին եւ արծաթն հատանի», եւ հնազանդեցուցին զԳաղիա եւ զթագաւորութիւնն Ասիացւոց (Սելեւկեանց), «հարեալ ընդ հարկիւ կացուցին զԳաղատացիս եւ զթագաւորութիւնն Ասիացւոց»—խնդրեց ի Հռոմայեցւոց լինել նմա դաշնակից եւ չօգնել Սելեւկեանց, «հրեշտակս առաքեալ խնդրէր զդաշնաւորութիւն, զի մի օգնեսցեն Մակեդոնացւոցն», տարուէ տարի ոչ հարկ, այլ ընծայ տալու խոստմամբ Հռոմայեցւոց հարիւր քանքար, «ոչ տալով հարկս, այլ պատարագս միայն ամի ամի հարիւր քանքարոյ» (Տես եւ էջ 205)։

14. Թող այս պատմութեան սխալը՝ ժամանակագրութիւնն ևս անյարմար է։ Արդարեւ սխալ է ասել Խորենացւոյն զԱրշակայ Ա-ոյ, թէ «թափեաց յինքն զամենայն արեւելեայս», մինչ Պարթեւաց աշխարհակալութիւնը կ՚սկսի առ Միհրդատաւ Ա-ով, որ է Արշակ Զ. (165—139)։ Իսկ «թափելն Հռոմայեցւոց զբովսն ի Սպանիացւոց», եւ «ի հարկի կացուցանել նոցա զԳաղատացիս եւ զթագաւորութիւնն Ասիացւոց»՝ բազում ամօք յետոյ են քան զմահն Արշակայ, որ ըստ հաշուոյ Խորենացւոյն՝ թագաւորեց 263—232։ Բոլոր այս միջոցին Հռոմայեցիք զբաղեալ էին պունիկեան պատերազմներով (264—201)։ Գաղղիա նուաճեցաւ 220-ին, Սպանիոյ մի մասն միայն՝ 206-ին, իսկ Սելեւկեանց յաղթեցին Հռոմայեցիք 190-ին առ մեծաւն Անտիոքաւ (225—186)։ Նոյնպէս անդէպ է ասել Խորենացւոյն, թէ Արշակ խնդրեց դաշամբ ստիպել զՀռոմայեցիս՝ չօգնել Սելեւկեանց, հատուցանելով նոցա իբրեւ պարգեւ ամի ամի հարիւր քանքար։ Հռոմայեցւոց ազդեցութիւնն սկսաւ յարեւելս յետ յաղթելոյ նոցա Անտիոքայ մեծի, 190 նախ քան զՔր., ուստի եւ բազում ամօք յետոյ քան զմահն Արշակայ։ Եթէ կենդանի ևս լինէր յայնժամ Արշակ՝ աւելորդ էր դաշամբ ստիպել զՀռոմայեցիս չօգնել Սելեւկեանց, քանզի Հռոմայեցիք թշնամի էին Սելեւկեանց եւ ոչ բարեկամ։

15. Ոչինչ ընդհատ սխալ եւ շփոթ է նաեւ պատմութիւն Խորե-

նացւոյն զԱրշակայ մեծէ։ Ըստ Խորենացւոյն՝ Արշակ մեծ, թոռն Արշակայ Ա-ոյ, սպաննելով «զԱնտիոքոս թագաւոր ի Նինուէ»՝ կը հնազանդեցունէ «զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ»։ Այլուր ասէ թէ Դեմետր, այն է Դեմետրիոս Բ. Նիկատոր (146—125) եկաւ ի վերայ Արշակայ, բայց բռնուելով՝ տարուեցաւ երկաթի կապանօք ի Պարթեւս, և եղբայր նորա Անտիոքոս Սիդիտէս կալաւ աթոռը. բայց պատերազմի բռնուելով ընդ Արշակայ նեղ տեղեր՝ սաստիկ ձմեռան պատճառաւ կորեաւ ամենայն զօրօքն։ Արդ՝ ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն՝ Արշակ մեծ թագաւորեց 206—154, իսկ Դեմետրիոս Նիկատոր, ըստ պատմութեան Սելեւկեանց՝ 146-ին, երբ 7 ամօք յետոյ քան զմահն Արշակայ, և եղբայր Դեմետրիոսի Անտիոքոս Սիդիտէս սպանաւ ոչ թէ յԱրշակայ ի Նինուէ, այլ ի մեհենին Եղիմացւոց 129-ին նախ քան զՔր․, այսինքն ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն՝ երբ քսան և հինգ ամաւ յետոյ քան զմահն Արշակայ։

16. Խորենացին յետ տալոյ տիրել Արշակայ մեծի համօրէն Ասիոյ, «երրորդ մասին աշխարհիս»՝ տայ նմա թագաւորեցուցանել զեղբայր իւր Վաղարշակ ի վերայ Հայոց, որպէս թէ հարկ համարելով առնել այնպէս ի հաստատութիւն թագաւորութեան իւրոյ «Պատեհ իմն համարեալ այսպէս անշարժ իւրոյ թագաւորութեանն լինել», սահման տալով նմա զհիւսիսի և զարեւմուտս»։ Այլուր (Գիրք Ա. Գլ. Ը.) աւելի մանր կը յիշէ Վաղարշակայ տրուած երկիրներն յԱրշակայ, այսինքն «զմասն ինչ յարեւմտեայ Ասորւոց», «զՊաղեստին», «զԱսիա» (Սելեւկեանց երկիրը), «զբոլոր Միջերկրեայս» (Փոքր Ասիա), «զԹիտալիա» (Թեսաղիա?), ի Պոնտոսէ մինչեւ ի Կասպից ծով, «ի ծովէն Պոնտոսի մինչեւ ի տեղին՝ ուր Կաւկաս յարեւմտեանն յանգի ծով», և «զԱտրպատական», միով բանիւ՝ «զկէս թագաւորութեան իւրոյ»։ Արշակ որպէս թէ բաւական չհամարելով զայսոսիկ՝ Վաղարշակայ կամաց և քաջութեան կը թողու ընդարձակել զտէրութիւն իւր. «Եւ այլ որչափ միտք քո և քաջութիւն հատանեն. զի սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի»։ Արշակ կ'որոշէ նաեւ այս նոր դուստր տէրութեան մայրաքաղաք զՄծբին, «քաղաք թագաւորութեան տալ նմա զՄծբին»։

Այս պատմութեան անտեղութիւնն ինքնին յայտնի է, մանաւանդ որոց գիտակ են քաղաքական հանգամանաց առաջակողման Ասիոյ յերկրորդ դարուն նախ քան զՔր․։ Զարեւմտեան մասն Ասորւոց, զՊաղեստին, զԱսիա, այն է զերկիր իշխանութեան Սելեւկեանց, բոլոր փոքր Ասիա, և այն ընդարձակ երկիրն ի ծովէն Պոն-

տոսի մինչև ի ծովն Կասպից հանդերձ Ատրպատականաւ—գրեթէ ամբաւ թագաւորութիւն մը—Վաղարշակայ պարգևելու համար՝ հարկ էր Արշակայ ունել եթէ ոչ «զամենայն տիեզերս», որպէս ասէ ուրեք Խորենացին (գիրք Ա. գլ. Ը.)՝ գէթ, որպէս այլուր ասէ (գիրք Բ. գլ. Բ.)՝ երկիրս այն մասը որ կոչի Ասիա։ «Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել ի չորրորդէն, որ յաղագս բաժանելոյ զբոլոր երկիր յերիս մասունս, և կոչեալ զոմն Եւրոպիէ (Եւրոպա), և զոմն Լիբիէ (Ափրիկէ), և զոմն Ասիա, *որում եւ տիրեաց Արշակ* (Խոր. Բ. Բ.)։

18. Արդ՝ Պարթևք երբէք չտիրեցին ոչ թէ աշխարհիս երրորդ մասին, այն է բոլոր Ասիոյ, այլ և ոչ այն երրորդ մասին երրորդին, մանաւանդ նախ քան զՔր. երկրորդ դարուն կիսունքանցի ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն, ինչպէս դիւրին է մակաբերել ի ԿԸ. գլխոյ երկրորդ գրոց նորա՝ Վաղարշակայ թագաւորութեան ընծայուած թուականն է 166 նախ քան զՔր., առ Երեւելեաւն Անտիոքաւ (174—164), մինչ դեռ Սելևկեանց իշխանութիւնը ոչ միայն կանգուն էր յԱսորիս՝ այլ և բաւական զօրաւոր՝ մինչև Դեմետրի Նիկատորայ արշաւել (143) յաղթանակաւ ի վերայ հզօրագունին ի թագաւորս Պարթևաց, Միհրդատայ Ա-ոյ, որ է Արշակ Զ, կամ Արշակ մեծ Խորենացւոյն, և եղբօր Դեմետրի, Անտիոքայ Սիդիտեայ՝ ի վերայ յաջորդին Միհրդատայ, Հրահատայ Բ-ի որ է Արշակ Է։ Ի Պաղեստին կը տիրէին Մակաբեանք, Յուդա և Յովնաթան (166—144)։ Միջագետք, Վերինն, ուր էին Մծբին, Եդեսիա և Ամիդ (Տիգրանակերտ)՝ էր դեռ ընդ իշխանութեամբ Սելևկեանց. առ Սիդիտէսն Անտիոքաւ (137), Միջագետաց այն մասը Միգդոնիա անուամբ եղաւ ինքնօրէն։ Իսկ ի Փոքուն Ասիա թագաւորութիւնք, ինչպէս Պերգամոն, Բիւթանիա, Գաղատիա, Կապադովկիա, Պոնտոս, 190-էն հետէ ընդ պաշտպանութեամբ Հռոմայեցւոց՝ կը կազմէին դաշնակցութիւն մը, որում մասնակից էին նաև Հայք, Արտաքսիաս կամ Արտաշէս (Տես էջ 80)

19. Արդարև Միհրդատ Ա. (Արշակ Զ.), որ կը թուի լինել Խորենացւոյն Արշակ մեծն՝ ընդարձակեց Պարթևաց տէրութիւնը և հասաւ մինչև Եփրատ առ Դեմետրիւ Սոտերաւ (162—150), բայց այս յաջողութիւնը չտևեց երկար։ Դեմետր Նիկատոր (146—125), որպէս ասացաք սակաւիկ մի յառաջ՝ վանեց զՄիհրդատ. և թէպէտ Դեմետր բռնուեցաւ գերի՝ բայց Պարթևք չհամարձակեցան այնուհետև, կամ չհամարեցան խոհեմութիւն, անցնել ըստ Տիգրիս Հռոմայեցւոց օրըստօրէ աճող զօրութեան դէմ յառաջակողման

Ասիոյ. աշխարհակալութիւն Պարթևաց էր անդր քան զՏիգրիս: Տիգրան մեծ (86—36) եղաւ առաջին, որ հանդերձ մեծաւն Միհրդատաւ ազգականաւ իւրով համարձակեցաւ ի վէճ գալ ընդ Հռոմայեցւոց, գրաւելով զՄիջագետս, զՊաղեստին, զԱսորիս և զՓոքրն Ասիա: Ուստի այն ընդարձակ տէրութիւնը, զոր ըստ Խորենացւոյն, որպէս թէ Արշակ մեծ պարգև տուաւ եղբօր իւրում Վաղարշակայ՝ չունի ամենևին պատմական հիմն, և չիք ուրեք յիշուած ի պատմագիրս, որ մերձաւորագոյն են ժամանակաւ քան զԽորենացին, նա գրեթէ ժամանակակից, որպէս Պոլիբիոս և Ստրաբոն:

20. Բայց և այնպէս Խորենացին կ'ուզէ որ հաւատանք, թէ Վաղարշակայ Հայոց թագաւոր տրուելուն պատմութիւնը ժամանակակից աղբերէ է, այն է ի Մար Իբասայ: Յայտնի է սակայն Վաղարշակայ պատմութեան գաղտնիքը: Ամեն ազգ կամ ցեղ երևելի անձէ մը յառաջ եկած ցուցնել, որպէս արդէն ասացաւ՝ հին սովորութիւն էր, որ և շատ որոշ կը տեսնուի առ Խորենացւոյն: Բուն հայ ազգէն սկսեալ գրեթէ ամեն ցեղ կը գտնենք առ Խորենացւոյն անձէ մը սերեալ: Այսպէս Հայը կը սերի ի Հայկայ, Բզնունին ի Բազայ, Խոռխոռունին՝ ի Խոռայ, Արմէնն՝ յԱրամայ, Սիւնին՝ ի Սիսակայ, Մանդակունին՝ ի Միանդակայ, Սղկունին՝ ի Սլաքայ, Գնունին՝ ի Գինայ, Վանանդեցին՝ ի Վընդայ, և ընդէր Արշակունին չսերէր Արշակէ մը. և ո՞ր Արշակ յարմարագոյն էր լինել նախահայր այս թագաւորական ցեղին, քան զԱրշակ մեծ: Այս գաղափարը բաւական էր զԱրշակ մեծ առնելոյ տէր ամբողջ Ասիոյ, «երրորդ մասին աշխարհիս», և տալ նմա, աշխարհակալի մը անսովոր մեծանձնութեամբ՝ պարգևել Հայոց «զկէս թագաւորութեան իւրոյ»: Ապաքէն պիտի հաւատայինք, ինչպէս հաւատացին մեր նախնիք, թէ Արշակունիք յԱրշակայ էին՝ եթէ ժամանակակից պատմութիւնը չհերքէր այն տիեզերական աշխարհակալութիւնը, զոր Խորենացին կ'ընծայէ Արշակայ, ուստի և այն մեծ պարգևը՝ որ տըրուած կը պատմուի Հայոց. և եթէ դարձեալ պատմութիւնը և բանասիրութիւնը չգային մեկնել Արշակունի անունը, որ կ'ելլէ արդարև արշակ, այսինքն *արքայ, թագաւոր* բառէն, բայց ոչ Արշակայ անուանէն (տես էջ 83):

21. Զծագմանէ Արշակունեաց ունիմք երկու աւանդութիւն, այսինքն այն, զոր կը պատմէ Խորենացին, որպէս տեսաք վերագոյնն, և այն, որ կը մակաբերուի ի պատմութենէն Պոլիբեայ և Ստրաբոնի:

Թէ ինչ աստիճան հաւատարմութեան արժանի են այս երկու պատմիչք՝ գիտել կարևոր է մեր պատմութեան այս մասին հա-

մար։ Պողիբիոս ապրեցաւ նախ քան զՔր. Բ. դարուն սկիզբէն գրեթէ մինչև վերջը, քանզի ծնաւ 205-ին և մեռաւ ութսնամենի։ Իբրև պատմագիր ծաղկեցաւ Պողիբիոս ի ժամանակին, որ ընծայէ Արշակայ և Վաղարշակայ։ Կրթեալ ի զինուորութեան ընդ ձեռամբ Փիղոպեմենայ զօրավարի Աքայեցւոց՝ գտնուեցաւ ի բազում ճակատս։ Բայց Պողիբիոս ոչ միայն զօրավար էր, այլ և իբրև դեսպան կամ պատանդ Աքայեցւոց կողմէն 17 տարի մնալով ի Հռոմ և բարեկամացեալ Էմիլեանց և Սկիպիոնեանց՝ այն դարուն առաջին աշխարհակալ ազգին քաղաքագիտութենէն ուսաւ բազում ինչ։ Պողիբիոս յետ մնալոյ այնչափ տարի ի Հռոմ՝ շրջեցաւ յԵւրոպա, յԱփրիկէ և յԱսիա։ Յետ այսպիսի և այսչափ պատրաստութեան եկն Պողիբիոս ի գրել զիւր ընդհանուր պատմութիւն, ուր նախ քան զՔր. 220-էն սկսեալ մինչև յիւր ժամանակ Հռոմայեցւոց պատմութեան առընթեր կը դնէ ուրիշ ժամանակակից ազգաց պատմութիւնը, դիտելով ի նոսա մանաւանդ զինուորական և դեսպանական գործողութիւններ, դիպաց պատճառներն և առիթը և զբոյս բարուց և զտաղանդս իշխանաց և պաշտօնէից։ Պողիբիոս կը պատմէ ճշդիւ, կը դատէ կորովաբար և կը յանդիմանէ անաչառ։ Համառօտ ասել՝ Պողիբիոս գրած կ'երևի քաղաքագիտաց, ռազմագիտաց և փիլիսոփայից։

Ոչինչ ընդհատ երևելի էր կրթութեամբ և հանճարով Ստրաբոն, բազմահմուտն ի հին աշխարհագիրս։ Ծնեալ ի միջոցի Ա. դարուն նախ քան զՔր. յԱմասիա քաղաքի Կապադովկացւոց, յետ դաստիարակուելոյ ըստ արժանւոյն՝ շրջեցաւ յառաջակողման Ասիոյ, ի Յոյնս և յԻտալիա, կեցաւ երկար ժամանակ ի Հռոմ և մեռաւ ի վերջին ամս Տիբերի։ Ստրաբոն ունի Աշխարհագրութիւն յԺԷ. գիրս, որոց մեծագոյն մասն կայ։ Այս աշխարհագրութեան մէջ կը գտնուին ոչ սակաւ պատուական տեղեկութիւնք պատմականք։ Ժամանակ մը այնպէս մեծ էր անուն Ստրաբոնի յԵւրոպա՝ մինչև աշխարհագիր անուամբ իմանալ զնա միայն։ Մի միայն ստուգագոյն տեղեկութիւն զսկզբանէ երկրորդ Արարատեան թագաւորութեան կամ զԱրշակունեաց գտանեմք առ Ստրաբոնի. ստուգագոյն, քանզի Ստրաբոն ոչ միայն ժամանակակից և մօտ էր ժամանակաւ, այլ և դրացի մեզ։

22. Յերկրորդ դարուն նախ քան զՔր. կային ի Փոքրն Ասիա չորս կամ հինգ թագաւորութիւնք—Պերգամոն, Բիւթանիա, Գաղատիա, Կապադովկիա և Պոնտոս, ընդ ազդեցութեամբ Հռոմայեցւոց, մանաւանդ յետ ճակատուն Մագնեսեայ, այն է յետ պարտութեան Անտիոքայ մեծի (190)։ Պոնտոսի թագաւորը Փառնակ իբր 180-ին

նախ քան զՔր. սկսաւ ընդարձակել զտէրութիւն իւր, միւս թագաւորաց երկիրներէն տեղեր գրաւելով։ Հռոմայեցիք որ այս տէրութեանց և ոչ միայն զօրանալը կ'ուզէին՝ ազդ. արարին Փառնակայ քաշուիլ դրացի տէրութեանց երկիրներէն, միանգամայն խրատ տալով Պերգամոնի թագաւորին Եւմենեայ և Կապադովկիոյ թագաւորին Արիարաթայ՝ զօրօք մտանել Փառնակայ երկիրը։ «Ծփոթեցաւ Փառնակ, ասէ Պօղիբիոս ժամանակակից, և յանձն առաւ որով և իցէ պայմանաւ ընդունել խաղաղութիւնը։ Յետ երկուստեք բանադնաց լինելոյ բազմիցս ի ձեռն հրեշտակաց՝ կռեցան դաշինքն օրինակ զայս. «Խաղաղութիւն մշտնջենաւոր ի մէջ Եւմենեայ, Պրուսիասայ, Արիարաթայ, Փառնակայ և Միհրդատայ։ Փառնակ մի գիցէ երբէք զոտն ի Գաղատիա։ Ամենայն դաշինք կռեալք ընդ Գաղատացիս եղիցին իբրև զչեղեալս։ Փառնակ ելցէ նաև ի Պափլագոնիոյ և դարձուսցէ անդր զբնակիչս երկրին զորս խախտեաց, նոյնպէս զզէնսն և զայլ ամենայն կազմած զոր առ անտի։ Զերկիրսն և զկահ և զկազմած և զպատանդսն զոր առ յԱրիարաթայ՝ դարձուսցէ ի նա. տացէ և զՏայա, քաղաք փոքր մօտ ի Պոնտոս։ Արձակեսցէ զգերիս և զփախստեայս առանց փրկանաց, նաև զամենայն արծաթ և զինչս զոր հանեալ է ի Մորզիասայ և յԱրիարաթայ՝ տացէ, և հատուսցէ նոցա ինն հարիւր քանքար, երեք հարիւր ևս Եւմենեայ փոխանակ ծախուց պատերազմի, դարձեալ երեք հարիւր՝ Միհրդատայ կուսակալի փոքուն Հայոց»։ «Այս դաշնագրութեան մասնակից էր, կը յաւելու Պօղիբիոս, (վերին) Ասիոյ թագաւորներէն Արտաքսիաս (Արտաշէս), որ կը թագաւորէր ի վերայ մեծի մասին Հայոց (Մեծաց)։ Դաշնագրութեան մէջ նշանակուած էին նաև թիւ և պայմանք պատանդից զորս տալոց էր Փառնակ. և երբ եկան պատանդքն՝ մեկնեցաւ զօրն Եւմենեայ և Արիարաթայ, և այսպէս վերջացաւ պատերազմն» (Պօղիբ. գպր. ԻԶ. Հատ. Դ.)։

Արդ այս դաշնագրութիւնը եղաւ 180-ին կամ ամաւ միով յետոյ նախ քան զՔր.։ Ապա յայտ է թէ երկրորդ դարուն կիսուն մօտ նախ քան զՔր., ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն իբր երեքտասան ամաւ յառաջ քան զկարծեցեալ թագաւորութիւնն Վաղարշակայ՝ կային ի Փոքրն Ասիա ծանուցեալ թագաւորութիւնք, Բարեկամ և դաշնակից Հռոմայեցւոց, և թէ ի Հայս կը թագաւորէր յայնժամ Արտաքսիաս, այսինքն Արտաշէս ոմն, ինչպէս յայտնի է յանուանէն՝ ի բնակաց երկրին։ Որովհետև Վաղարշակայ ենթադրեալ թագաւորութեան թուականն է, ըստ հաշուոյ Խորենացւոյն, 166 նախ քան զՔր.՝ ապա հարկ է ենթադրել թէ տիրելն

Արշակայ մեծի բոլոր Ասիոյ, «երրորդ մասին աշխարհիս», եղաւ յառաջ քան զամն 166 նախ քան զՔր.: Սակայն ի պատմութենէ Սելեւկեանց գիտենք, թէ Միհրդատ Ա., այն է Արշակ Զ. (Արշակ մեծ Խորենացւոյն), առ Դեմետրիւ Սովտերաւ (162—150) յառաջացաւ դէպ յԵփրատ, և առ Դեմետրիւ Նիկատորաւ, որդւով Սովտերայ (140—125) ստիպուեցաւ յետ քաշուիլ (143). և թէպէտ Դեմետր բռնուեցաւ գերի՝ Անտիոքոս Սիտիդէս եղբայր Դեմետրի յառաջ տարաւ պատերազմը մինչև ցմահն Միհրդատայ (139), և Պարթևք այնուհետև չանցան ընդ Եփրատ՝ բայց եթէ առ Կրասեաւ (54), երբ սկսան կրել յարձակումն ի Հռոմայեցւոց: Տիրելն Արշակայ մեծի, ըստ Խորենացւոյն, բովանդակ Ասիոյ, «երրորդ մասին աշխարհիս», և տալն զարևմտեան Ասիա, «զկէս թագաւորութեան իւրոյ», Վաղարշակայ, եթէ էր ճշմարիտ՝ չէր կրնալ զանխուլ մնալ ի յոյն պատմագրաց, մանաւանդ ի Պողիբեայ՝ որ որպէս ասացաք՝ էր ժամանակակից: Ոչ միայն զաշխարհակալութիւնն Արշակայ մեծի և զանուանս և զմեծամեծ արութիւնսն Վաղարշակայ և երկուց յաջորդաց նորա, Արշակայ և Արտաշիսի, յիշուած չենք գտներ այլուր՝ բայց միայն առ Խորենացւոյն՝ այլ և առ Ստրաբոնի, որ ժամանակակից էր Տիգրանայ մեծի՝ կը գտնենք զՏիգրան մեծ յիշուած իբրև ի յաջորդաց Արտաքսիասայ (Արտաշիսի) յիշելոյ ի Պողիբեայ: Եթէ Տիգրան մեծ, որ էր Արշակունի ըստ ժամանակակից պատմութեան, էր սերունդ Արտաքսիասայ, և Արտաքսիաս էր բնիկ Հայ՝ ապա Արշակունիք ևս էին բնիկ Հայ, սերունդ Արտաքսիասայ, և ոչ Արշակայ Պարթևի, և կոչուած են արշակունի ոչ յանուն Արշակայ մեծի, իբրև սերունդ նորա, այլ իբրև թագաւորական ցեղ: Արդարև կար աւանդութիւն առ Հայս, ինչպէս կը յիշեն ոչ միայն Խորենացին, այլ և Բուզանդ և Ագաթանգեղոս, թէ Արշակունիք ազգական էին Պարթևաց: Բայց եթէ մանր միտ դնենք այս աւանդութեան պարագաներուն՝ կը տեսնենք որ Արշակունեաց ազգականութիւնն ուղղակի Պահլաւ ցեղին հետ էր:

Այսպէս առ Բուզանդայ և առ նմին իսկ Խորենացւոյն միշտ Պահլաւ իշխանք կը կոչուին ազգականք Արշակունեաց: Վասն Ալանայոզանայ Պահլաւի, զոր Շապուհ զրկեց ի վերայ Արշակայ՝ ասէ Բուզանդ, թէ էր ի տոհմէն Արշակունեաց. «Ազանայոզանն որ Պահլաւն էր ի տոհմէն Արշակունեաց . . . գայր հասանէր ի սահմանս Հայոց» (Բուզ. Դ. ԼԸ.): Նոյնպէս վասն այլոյ պահլաւ իշխանի Սուրէն կոչեցելոյ ասէ, թէ էր ազգական Արշակայ. «Շապուհ արքայ Պարսից կազմէր պատրաստէր գունդս, և Սուրէն Պահլաւ, որ ազգակից էր Արշակայ թագաւորին Հայոց՝ առաջնորդ նոցա» (Բուզ.

Դ. ԼԴ.)։ Խորենացին նոյն Ալանայոզանայ ազգականութիւնը կը յիշէ ուրիշ կարեւոր պարագայիւք. «Պարապ առեալ, ասէ, Շապհոյ ի պատերազմացն՝ առաքէ ի վերայ Արշակայ զԱլանայոզան ումն Պահլաւիկ որ էր ազգակից Արշակայ։ . . . Ուստի տարակուսեալ Արշակայ՝ յղէ պատգամ (առ Ալանայոզան), եթէ Դու, արիւն իմ և հարազատութիւն, ընդէր այգպիսեաւ վարես զիս ջերմութեամբ. Թէպէտ և ակամայ զգալուստ քո գիտեմ, ոչ կարացեալ սայթաքել զհրամանս Շապհոյ՝ գալ ի վերայ քո ազգականիս։ Այլ արդ թուլացո ինձ զօղել ուրեք փայրկեան մի ժամանակի, մինչև ոգի առեալ անցանել կարացից յերկիրն Յունաց, և դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպեցիս բարութեանց, որպէս ի մտերիմ հարազատէ։ Դարձուցանէ Ալանայոզանն այսպիսի պատասխանիս և ասէ. Թէ դու ոչ խնայեցեր յազգայինսն մեր Կամսարականս, որ առաւել քան զիս էին քո հարազատագոյնք, դենի ձեր մասամբ և աշխարհաւ համաբնակաւ, զիա՞րդ յինէն ակն ունիցիս ի քեզ խնայել, հեռացեալ դենիւ և բնակութեամբ» (Խոր. Գ. ԼԴ.—Վասն Կամսարականաց տես էջ 87)։ Նաև Սուրէն զոմն Պահլաւ կը յիշէ Խորենացին իբրև ազգական Արշակունեաց, գիրք Գ. գլ. ԿԴ. և ԿԷ.։ Սա ևս որժանի է դիտողութեան, զի ոչ ուրեք ի հին պատմագիրս մեր, ոչ յառաջ քան զԽորենացին և ոչ առ Խորենացւոյն, Պարթևք կոչուած են երբէք Արշակունի, որպէս այլուր յիշեցաք (էջ 81). Պահլաւ (Քուշանաց) ցեղը միայն կոչուած է Արշակունի (Բուզ. Գ. Զ. և Ի.։ Դ. ԼԴ.։ Ե. Ի և ԼԷ.)։ Եթէ Հայ Արշակունիք, իբրև սերունդ Արշակայ մեծի Վաղարշակաւ, կոչուեցան Արշակունի՝ Պահլաւք, այսինքն Բահլի թագաւորական ցեղն ընդէր կը կոչուի Արշակունի. միթէ այս ցեղն ևս կը սերէր ի մեծէն Արշակայ։ (ԶԱրշակունեաց տես և էջ 81—87)։

23. Խորենացին յետ պատմելոյ յերկրորդ գլուխ Բ. գրոցն զտիրել Արշակայ բոլոր Ասիոյ, «երրորդ մասին աշխարհիս», և թագաւորեցուցանելոյ զՎաղարշակ «ի վերայ աշխարհիս մերոյ, զհիւսիսի և զարեւմուտս տալով նմա սահմանս»՝ կ'սկսի պատմել Վաղարշակայ գործերը։ Մեծագոյն արժանիք Վաղարշակայ եղև ըստ Խորենացւոյն, որպէս արդէն ասացաւ՝ յղել զՄար Իբաս առ եղբայր իւր Արշակ բերել զպատմութիւն Հայոց ի դիւանէն Նինուէի։ Առ ի տալ կատարել Վաղարշակայ զայս գործ՝ հարկ էր նախ յարմարացնել պարագաները, որ կրնային թելադրել նմա և տալ ի գլուխ հանել զայն գործ։ Ուստի նախ՝ որպէս թէ Արշակ կանխաւ պատուէր կուտայ Վաղարշակայ «քաջութեան և իմաստութեան հոգ տանել», և Վաղարշակ «յառնէ անփոյթ զխրատու նորա». Նաև

զՀայաստան որպէս թէ կը գտնէ Վաղարշակ անկարգ և վայրենի.— «Ոչ կարգ ինչ լեալ աստ յայտնի—ասէ Վաղարշակ, ըստ Խորենացւոյն, ի նամակին իւրում առ Արշակ—և ոչ մեհենից պաշտամունք, և ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն եւ վայրենի»: Ապաքէն հարկ էր զայսօրիկ իբրև յառաջաբան դնել, որպէս զի հետևէր Վաղարշակայ ելանելն ի խնդիր Հայոց պատմութեան: Դիտողութեան արժանի է սակայն, զի Խորենացին կուտայ Վաղարշակայ գտանել ի Հայս «խառն ի խուռն զամենայն և վայրենի», մինչ ըստ երկուց հաւատարիմ պատմագրաց, Պողիբեայ և Ստրաբոնի, մին ժամանակակից և միւսն մօտ ժամանակաւ՝ արդէն նախ քան զՔր. երկրորդ դարուն գրեթէ կիսուն (188—168), Արտաքսիաս (Արտաշէս) կը հաստատէր ի Մեծն Հայս նոր թագաւորութիւն, բաւական մեծ՝ մինչև մտանել ի դաշնակցութիւն դրացի տէրութեանց Փոքուն Ասիոյ (էջ 233) և վայելել Հռոմայեցւոց բարեկամութիւնը, և կը շինէր ամրոցներ և քաղաքներ, մանաւանդ զպարսպաւորն Արտաշատ առ Երասխաւ, «մեծ և գեղեցիկ» ըստ Ստրաբոնի, և այս իբրև երեքատասն ամաւ միայն յառաջ քան զկարծեցեալ թուական թագաւորելոյ Վաղարշակայ ի վերայ Հայոց:

24. Վաղարշակայ պէս ուսումնասէր և իմաստուն թագաւորի ապաքէն վայել էր լինել նաև հզօր, քաջ, յաղթող, օրէնսդիր և աշխարհաշէն. և արդարև այսպէս կը նկարագրէ զնա Խորենացին. «Սա այր քաջ և խոհեմ, ընդարձակեաց ի վերայ սահմանաց իւրոց, և կարգս կենցաղականս, որչափ մարթ էր, սահմանեաց աշխարհիս, և նախարարութիւնս, և նոցին նախարարութեանց նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս» (Խոր. Բ. Գ.): Ուստի և ամբողջ վեց գլուխ կը նուիրէ Խորենացին Վաղարշակայ գործոց, որպէս ասէ, «հաւաստի պատմութեամբ լի, և արժանի բանից ողորկագունից և յոլովից» (Խոր. Բ. Է.):

25. Յետ առաքելոյ զՄար Իբաս ի Նինուէ ի խնդիր պատմութեան Հայոց՝ առաջին երևելի գործ Վաղարշակայ լինի, ըստ Խորենացւոյն, սանձահարել զՄակեդոնացիս (զՍելևկեանս), և նուաճել պատերազմաւ հիւսիսային արևմտեան և արևմտեան (Փոքուն Ասիոյ) տէրութիւններն, զՂազիկս, զՊոնտոս, զՓռիւգիա, զՄաժաք և զայլս: Զարմանալի է արդարև, զի Խորենացին, յետ ասելոյ թէ Արշակ տիրեց «երրորդ մասին աշխարհիս», այն է բոլոր Ասիոյ՝ տակաւին կանգուն կ'ենթադրէ Փոքուն Ասիոյ տէրութիւնները և զՄակեդոնացիս, այսինքն Ասորւոց կամ Սելևկեանց տէրութիւնը. քանզի ասէ թէ «Պոնտոս, Փռիւգիա, Մաժաք ոչ զի-

տելով զՀամ պատերազմին Արշակայ՝ առ Մակեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին»: Միթէ այս տէրութիւններն աշխարհիս երրորդ մասին (Ասիոյ) մէջ չէի՞ն, ուր արդէն տիրած էր Արշակ: Նոյնպէս յետ տալոյ Արշակայ պարգեւել Վաղարշակայ «զԱսիա և զամենայն Միջերկրեայս», այսինքն Սելեւկեանց երկիրները, կամ Խորենացւոյն բառով, զՄակեդոնացիս և զՓոքրն Ասիա՝ նորէն նոյն Վաղարշակայ կու տայ «սանձահարել զՄակեդոնացիս» և նուաճել Փոքուն Ասիոյ տէրութիւնները ծանր պատերազմաւ:

26. Խորենացին Վաղարշակայ դէմ ոսոխ կը յարուցանէ Մորփիւղիկէս անուն զոմն, որպէս ասէ՝ «այր սրտեայ, անդամովք երկար և ընդ խրեարս պատշաճ, զոյգ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով»: Այս հսկայն, ըստ Խորենացւոյն, միաբանելով Փոքուն Ասիոյ կողմերը՝ «կը դրդուի ի պատերազմ ընդ Վաղարշակայ»: Վաղարշակ ժողովելով յԱտրպատականէ և ի Հայոց «քաջ և անուանի մարդիկ» (տես էջ 206), «որպէս թէ զկէս մասն աշխարհիս», յետ կրթելոյ զնոսա յԱրարատեան նահանգին, «ի միջոցի աշխարհիս վերագոյն քան զակունս Մօրին մեծի յափն Երասխայ, զի ոչ գիտէին զկարգս ինչ»՝ կը յարձակի ի վերայ միաբանելոցն ընդ Մորփիւղիկեայ: Պատերազմը կը սաստկանայ, Վաղարշակ կը վտանգի: Մորփիւղիկէս կը «ձգէ զսուինն, քանզի էր կորովի և երկայնաձիգ, որպէս ի թռիչս սրաթեւ հաւուց», և մինչ մերձ էր ընկենուլ զարքայն՝ «արք քաջք և անուանիք ի զարմից Հայկայ և ասորեստանւոյն Սենեքերիմայ ընդ մէջ անցեալ՝ աշտէիւ հարեալ սատակեն զքաջն»: Զօրքը կը ցրուի, վտակք արեան կ'ողողեն զգետինն. Բայց երկիրը կը խաղաղի ընդ ձեռամբ Վաղարշակայ, և Սելեւկեանք կը դադրին ի պատերազմելոյ, «յայնմ հետէ դադարեալ խաղաղէր երկիրն՝ նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, և Մակեդոնացւոցն դադարեալ զօռն»:

27. Այս մանր նկարագիրը, որ սովորական է հին ժամանակի պատերազմներուն՝ բաւական չէ պատմական հաստատութիւն տալ վերոյիշեալ պատմութեան. այս հաստատութիւնը մենք այն պատմութենէն դուրս կը փնտռենք: Ի ժամանակին յորում Խորենացին նուաճեալ կը դնէ Փոքուն Ասիոյ տէրութիւններն ի ձեռն Վաղարշակայ՝ կը գտնենք զնոսա ի մեծի անդորրութեան և յապահովութեան: Պատերազմ Փոքուն Ասիոյ տէրութեանց դէմ և նուաճումն առաջ քան զՄիհրդատ մեծ՝ յիշուած չէ ուրեք ի ժամանակակից պատմութեան, և ոչ Հռոմայեցիք լուռ կը կենային որ և իցէ յարձակման դէմ ի վերայ թագաւորութեանց Փոքուն Ասիոյ, որոց չէ-

զօրութիւնն կարևոր էր յապահովութիւն նոր ստացուածոց նորա ի Միջերկրականին և յԱսիա։ Ուստի անհնար էր Վաղարշակայ յարձակել ի վերայ տէրութեանց Փոքուն Ասիոյ առանց բռնուելոյ ի պատերազմ ընդ Հռոմայեցւոց, ինչպէս երբ ութսուն ամօք յետոյ քան զկարծեցեալ Թուական թագաւորութեան Վաղարշակայ դիպեցաւ Միհրդատայ և Տիգրանայ մեծի, որ փորձեցին տիրել Փոքուն Ասիոյ։ Խորենացին կու տայ, բոլորովին հակառակ քաղաքականութեան Հռոմայեցւոց, Փոքուն Ասիոյ տէրութեանց միաբանել ի նպաստ Սելևկեանց, ոսոխաց Հռոմայեցւոց, ընդ առաջնորդութեամբ Մորփիւղիկեայ, առանց ամենևին յիշելոյ, թէ ով էր այն Մորփիւղիկէս։ Փոքուն Ասիոյ տէրութիւնք զայնու ժամանակաւ ունէին առանձին թագաւորներ ի սերտ բարեկամութեան ընդ Հռոմայեցիս։ Ի Պերգամոն կը թագաւորէր Եւմենէս Բ. (197—159), ի Բիւթանիա՝ Պրուսիաս Բ. (192—148). ի Կապադովկիա՝ Արիարաթ Գ. (166—130), ի Պոնտոս՝ Փառնակ Բ. հաւ Միհրդատայ մեծի (186—157)։ Մորփիւղիկէս ով էր։ Ոմանք զՄորփիւղիկէս համարին լինել Միհրբարզան, յիշեալն ի Դիոդորոսէ Սիկեղացւոյ իբրև թագաւոր Ծոփաց (Զամչ. Պատ. Հյ. հտ. Ա. 207). բայց Թուական սորա բազում ամօք յառաջ է քան զԹուական կարծեցեալ թագաւորութեան Վաղարշակայ։ Գիտելի է ևս, զի Ծոփաց թագաւորութիւնը որ կը բաղկանար Մեծին Հայոց արևմտեան նահանգներէն (Չորրորդ և Բարձր Հայք)՝ տևեց մինչև Տիգրան մեծ, որ ըստ Ստրաբոնի ժամանակակից պատմագրի, ջնջելով այն փոքր թագաւորութիւնը միացուց զՄեծ Հայս։ «Անդստին ի ժամանակէ Պարսից մինչև առ մեզ գտանեմք, զի Արմենիա յետ անկանելոյ ընդ Պարսիւք և ընդ Մակեդոնացւովք՝ անց ի ձեռս թագաւորաց Ասորւոց (Սելևկեանց) որոց վաղ իսկ տիրեալ էր Մարաց, այլ հուսկ ուրեմն երկոքին զօրավարք Անտիոքայ մեծի, բաժանեցան զերկիրն. սոքա կոչէին Արտաքսիաս և Զարիադրիս, որ յետ վարելոյ ի սկզբան զերկիրն յանուն Անտիոքայ, տեսեալ զտէր իւրեանց պարտեալ և նուաճեալ՝ ետուն ձեռս ի Հռոմայեցիս, և լեալ միահեծան առին զանուն թագաւորի։ Տիգրանէս ի զաւակէ Արտաքսիասայ, առ զմասն երկրին, որ ձգի առ Մարօք, Ադուանիւք և Վրօք մինչև ի Կողքիս և ի ծովեզերեայն Կապադովկիա։ Զայնու ժամանակաւ Արտանէս (ըստ այլոց՝ Արշակէս) ծոփացի, ի զարմէն Զարիադրեայ, ունէր զհարաւային, և մանաւանդ զարևմտեան հարաւային մասն Արմենիայ, այլ արկաւ յաթոռոյն և սպանաւ ի Տիգրանայ, որ եղև միահեծան տէր բովանդակ Մեծին Հայոց» (Ստրաբ. ԺԱ. 15)։

28. Զանհարազատութիւն պատմութեան պատերազմին Վա-

ղարշակայ կը մատնէ ուրիշ կէտ մը արժանի դիտողութեան, այն է ժամանակի կանխումը (anachronisme), որով Խորենացին զՆաճապիվան, վերջին Արշակունեաց բանակատեղին, կը դնէ առ Վաղարշակաւ, քանզի Հոն կու տայ նմա կեդրոնացնել զզօրս իւր։ Արդարեւ Խորենացին առ ի չտալոյ կասկած՝ կը լռէ Նաճապիվան անունը, յայտնի է սակայն, թէ բանքն «մօտ յակունս Մօրին մեծի յափն Երասխայ»՝ կ'ակնարկեն զՆաճապիվան։ Վերջապէս ըստ մեզ անտարակուսելի է, թէ պատմեալքն Խորենացւոյն զպատերազմաց Արշակայ և Վաղարշակայ կամ յետին և անստոյգ աղբերք են, և կամ դիտմամբ հնարեալ։

29. Խորենացին յետ նուաճել տալոյ Վաղարշակայ «զՀիւսիսի և զարևմուտս»՝ ասէ. «Եւ այս այսպէս կատարեալ՝ կարգէ (Վաղարշակ) զկողմանս Մաժաքայ (Կապադովկիոյ) և զՊոնտոս և զԵգերացիս» (Խոր. Բ. Զ.)։ Խորենացւոյն այսպէս «կարգէ» բառով միայն անցնելը կը ցուցնէ, թէ չունէր ինչ ի պատմել, և ինչպէս կրնար ունենալ, մինչ ոչ նուաճումն կար և ոչ Վաղարշակ. ուստի ինչպէս այլուր՝ նոյնպէս աստ կը ջանայ մթին բանիւք բարեքել իւր պատմութեան այս տկար կողմը։ Պարտ էր, ասէ, զիրելի առնէն (զՎաղարշակայ) զամենայն ինչ մանր և յայտնի պատմել. բայց անձայ համառօտիւ առանց ոճոյ և կարգի, և այս ի սիրոյ զոր ունիմ առ նա. —«Այլ խորեմ աստ վասն սիրելի առնն յայտնի գրել զամենայն և մանրապատում, զի անցի միայն զտեղիսն նշանակելով, զՀաւաստին և զոճն ի բաց թողեալ, վասն զկապ սիրոյ զՀրաշալւոյն անխզելի պահելոյ» (Խոր. Բ. Զ.)։

30. Յետոյ բերել տալով զՎաղարշակ ի կողմանս Տայոց՝ անդ, ինչպէս կ'երևի կամելով Տամիրամայ նմանցնել զիւր դիւցազնն՝ կու տայ նմա շինել ամարանոցս, որսոյ տեղիս, այգիս և բուրաստանս, լեռներ Հարթելով, դաշտերու և Հովիտներու ջերմոտ օդը փոխելով ի բարեխառն և յառողջարար. —«Դառնայ (Վաղարշակ) առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց ի գիջին և ի մառախլուտ տեղիս մայրեացն և ի լռաւէտս. գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, Հաւասարելով զլեռնայինն և զջերմաՀոտն ի բարեխառն և ի զուգագեղեցիկ վայելչութիւն իւրոյ թագաւորութեան. ամառնային ժամանակին Հովանոցս պատրաստելով, յորժամ զՀիւսիսով երթիցէ։ Խոմս զերկուս տափարակս անտառախիտս Հանդերձ լերամբքն ագմելով և որսոց տեղիս, և զջերմութիւնն Կողայ՝ ի մարմանդս այգեաց և բուրաստանաց» (Խոր. Անդ.)։

31. Այս թերևս կարելի էր, բայց քան զայս զարմանալին զործել կու տայ Խորենացին Վաղարշակայ։ Բոլոր Կովկասեան ազգերը

կոչել տալով—«Կոչեցեալ զվայրենի և եկամուտ ազգսն որ ի դաշտին Հիւսիսոյ և որ ստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ ի ձորս երկայնագոգս խորացեալս, ի լեռնէն որ զհարաւով իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ»՝—պարթևական ծանրութեամբ տալ կու տայ նմա այն վայրենիներուն սա միամիտ խրատը՝ «Զաւազակութիւն և զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց՝ և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել, որպէս զի միւանգամ տեսեալ զնոսա՝ առաջնորդս և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեսցէ» (Խոր. Անդ)։

32. Յետ այս մեծամեծ կարգաց՝ Խորենացին կու տայ իջանել Պարթևին «ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանս Տարայի», այն է ի կողմանս Վանանդայ, որ առաջ Անփայտ կամ Վերին Բասեան կը կոչուէր, և անտի ի սկզբան ձմերայնոյն, «ի ցրտանալ հիւսիսոյ ի դառնահոտ փչելոյ», դառնալ ի Տահապլիվան, որպէս յայտ է ի նկարագրէն, «զափամբ Մօրին մեծի, ի տեղւոջ ուր գետն մեծ իջանէ և խառնի ի Մօրն մեծ»։ Աստ թողեալ Վաղարշակայ զօրս և վերակացուս, «կարգեալ զզօրս աշխարհիս և թողեալ յինքենէ վերակացուս»՝ ինքն գլխաւորօք կու գայ Մծբին, «Իբր առեալ զամենայն գլխաւորսն չուէ ի Մծբին», ուր կ'սկսին վարչական բարեկարգութիւնք։

Խորենացին այս բարեկարգութեան պատմութեան կը նուիրէ Բ. գրոցն երկայնագոյն գլուխներն, զեօթներորդն և զութերորդ՝ սա յառաջաբանով. «Այս դրուակ մեծ, և հաւաստի պատմութեամբ լի, և արժանի բանից ողորկագունից և յոլովից։ Քանզի բազում ինչ աստ կարգաց և յօրինուածոց, տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և համայն ասել օրէն թագաւորութեան և որ ինչ շուրջ զթագաւորութեամբն, զօրաց, զօրապետաց՝ կողմանց կողմնակալաց, և որ նման այսոցիկ»։ Այս յառաջաբանէն շատ բան կը յուսայինք լսել ի Խորենացւոյն գ.քաղաքային, վարչական և զինուորական կարգաց Վաղարշակայ. սակայն մեր պատմիչն արևելեան արքունեաց քանի մը սովորական պաշտօններ, և Մեծին Հայոց բոլոր նախարարութիւններն հաստատել տալով Վաղարշակայ՝ կը վերջացնէ այն երկայն գլուխները։

33. Ըստ Խորենացւոյն՝ Վաղարշակ եղաւ առաջին, որ երկիրը բաժնեց ժառանգական նախարարութեանց, այսինքն սատրապութեանց, նահանգաց և գաւառաց, իւրաքանչիւր նախարարութեան երևելի անձ մը կարգելով նահապետ, այսինքն ցեղապետ կամ իշխան.—«Նախարարութիւնս, և նոցին նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս»։ Այսպէս, ըստ Խորե-

նացեալն, Վաղարշակաւ կ՚առնու Հայաստան այն ընդարձակ աւատային (féodal) դրութիւնը, որ այնչափ աղետալի եղաւ և պատճառ կործանման ազգին։ Չիք ուրեք սակայն յիշուած ի պատմութեան, թէ աւատային դրութիւն մը երբէք հաստատուեցաւ իբրև սահմանադրութիւն կամ վարչական օրէնք, այլ այս դրութիւնը ծագած է միշտ ի միանալոյ մանր մանր իշխանութեանց, յորոց ի սկզբան կը բաղկանար ամէն համացեղ երկիր կամ թագաւորութիւն։ Ուստի շատ հաւանական է թէ նախարարութիւնք Հայոց, որոց իւրաքանչիւրն ունէր իբրև ժառանգական երկիր գաւառ կամ գաւառի մը մասը՝ քան զկարծեցեալ ժամանակն Վաղարշակայ շատ հին էին։ Բայց ենթադրելով ևս զՎաղարշակ իբրև պատմական անձ, առ ընդունելոյ Հայոց աւատային դրութիւնն իբրև վարչական օրէնք կամ սահմանադրութիւն հաստատեալ ի Վաղարշակայ՝ կը պահանջենք վաւերական աղբիւր։ Ուստի՞ կ՚առնու Խորենացին նախարարութեանց ծագման համառօտ ուրուագիծը, զոր կու տայ մեզ վերոյիշեալ երկու գլուխներուն մէջ։ Ունէ՞ր Խորենացին նախարարութեանց ծագումը և ազգահամարը ցուցնող տոհմային արձանագրութիւնները։ Միթէ գտա՞ւ առ Սահակայ Բագրատունւոյ գրաւոր կամ անգիր աւանդութիւն մը, թէ այս ցեղն էր ի Սմբատայ, և առ Վաղարշակաւ եղև նախարարութիւն, կոչուելով Բագրատունի յանուն Սմբատայ Բագարատայ հանդերձ թագադիր ասպետութեամբ։ Խորենացին այսպիսի աղբիւր մը չի ցուցներ վասն Բագրատունեաց, նա մանաւանդ ի նամակէ նորա առ Սահակ Բագրատունի կը տեսնուի, թէ այս վերջինն անգէտ էր պատմութեան իւրոյ ցեղին, և Խորենացին կը խոստանայ նմա տալ տեղեկութիւն զԲագրատունեաց։ Կը վերաբերիս, ասէ, «ազգի նախնականի, և քաջ և արգասաւոր՝ ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ և ի մեծամեծ և ի բազում գործս արժանափառս, զորս յիշատակեսցուք ի կարգի պատմութեանս, յորժամ զորդի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զրովանդակն» (Խոր. Ա. Ա.)։ Կամ Գնունիք ունէ՞ին գրաւոր աւանդութիւն մը, թէ էին յորդւոց Սենեքերիմայ, և թէ Գնունի անունն առին ի Վաղարշակայ, վասն զի նախնին իւրեանց Գին կը մատուցանէր զինի թագաւորին։ Խորենացին այսպիսի ընտանի աղբիւրներ չի յիշեր, այլ յայտնապէս ասէ, թէ առաւ յունական պատմութիւններէ.—«Իսկ զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն զուստն և զզիարդն յայտնելով (յայտնեսցուք) համառօտ, որպէս հաւաստի ի յունականս ոմանս կայ պատմութիւնս» (Խոր. Ա. Ա.)։ Ո՞ր յունական պատմութիւնք էին, որ գիտէին Հայոց նախարարութեանց, փոքունց և աննշանից անգամ,

«զուստն և զգխարգն» հաւաստեաւ։ Խորենացին, դիտմամբ թէ յանգէտս՝ կը ծածկէ այս յունական պատմութեանց հեղինակներուն անունները և ժամանակը. երկու գլխաւոր կէտք՝ զորս գիտել մեզ կարևոր էր։ Անաչառ քննադատութիւնը կասկածելի կը գտնէ այս լռութիւնը, մանաւանդ զի նախարարութեանց «ուստն և գխարգն», զորս կու տայ Խորենացին՝ չեն կրնար յունական աղբիւրներէ առնուած համարուիլ։ Յոյն մը չէր կրնար զՍպանդունին մեկնել «ի վերայ զենարանաց», զՀաւնունին՝ «բազէակալ բազէակիր», զՁիւնականն՝ «ամարանոցաց պահակս և ձիւնակիրս». և ոչ զԱրծրունիս ստուգաբանել *արծիւ ունիս*, որպէս թէ արծրունիք արծուիս կը կրէին առաջի թագաւորին, և զԳնունիս՝ *գինի ունիս*, վասն զի ընտիր և համեղ գինիներ պատրաստել առաջի թագաւորին այս ցեղին պաշտօնն էր։ Յունական պատմութեան գործ չէր նաև ըզՍղկունիս Սլաքէ մը հանելով՝ իբրև քաջ նետաձիգ որսալ տալ նըմա քօշս ի լերինս։ Արդարև Խորենացւոյն ճաշակին յարմար բառախաղեր, ինչպէս ինքն իսկ Խորենացին կը համարի, մինչ ի մեկնելն զՁիւնականն իբրև «ամարանոցաց պահակս և ձիւնակիրս» կը յաւելու—«Եթէ առ ցոփս ոչ ունիցիս»։

34. Ըստ Խորենացւոյն կամ թերևս ըստ կարծեցեալ յունական պատմութեանց՝ Վաղարշակ «յետ սանձահարելոյ զՄակեդոնացիս և դադարելոյ պատերազմացն, նախ և առաջին փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի և իմաստնոյ, որ ի Հրէիցն Շամբայ Բագարատ՝ տայ նմա *իշխանութիւն* ազգաւ թագադիր լինել Արշակունեաց, և որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել յանուն նորա կոչմամբ Բագրատունիս»։ «Քանզի այս Բագարատ—կը յաւելու պատմիչը—նախաձեռն ընծայ մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ քան զպատերազմն Արշակայ ընդ Մակեդոնացիսն»։ Այս համառօտ յիշատակութենէն սա կը հասկցուի, թէ Բագարատ, յառաջ քան զթագաւորելն Վաղարշակայ ի վերայ Հայոց, ծանօթ և օգնական լեալ էր նմա, և վասն այսր «յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեան առ թագաւորն» տրուեցաւ նմա «իշխել թագ ի գլուխ դնել թագաւորին»։ Խորենացին կամ յունական աղբիւր նորա թուի դիտմամբ մուծեալ այս «ձեռնտուութեան» պարագան ի պատմութիւն Վաղարշակայ, որպէս զի տալ տայ նմա թագադիր իշխանութիւնը Բագարատայ։ Բայց Վաղարշակ չունէր պէտս ո՛չ ձեռընտուութեան, քանզի պատրաստ առաւ թագաւորութիւնն յեղբօրէն, ըստ նմին Խորենացւոյ, և ոչ թագադիր ասպետի, քանզի արդէն թագաւոր էր և կարօտ չէր նորէն պսակուելու. վասն յաջորդաց իւրոց ևս չէր կրնար հաստատել այնպիսի իշխանութիւն մը՝

քանզի իշխանէ մը թագաւոր պսակուիլն էր թագաւորութիւնն իրրև ի նմանէ ընկալեալ ճանաչել։ Արդարև թագադիր ասպետէ մը պսակուիլ գրեթէ այս նշանակութիւնն ունէր առ Հայս։ Բայց զհաւանական պատճառ այսր տես էջ 170—179։

35. Վաղարշակ յետ կարգելոյ իւր թագադիրս ի Հրէից՝ ի հայրենակցաց նոցա Քանանացւոց կը կարգէ, ըստ Խորենացւոյն, «զգեցուցանողս իւր», կոչելով զնոսա Գնթունիս, անտարակոյս յանուն Նախնոյն նոցա Քանանիդասայ (անուն կեղծ, վասն զի Քանանիդաս ոչ թէ անձի անուն է, այլ քանանացի բառին յունարէնը)։ Լաւ ևս լինէր, եթէ Խորենացին Գնիթ անուն ումն գտնելով՝ ի նորա անուանէն հանէր Գնթունին, բայց զիարդ և իցէ փախած է այս յուշագրութենէ Խորենացւոյն։ Զաւանդութենէն լինելոյ Բագրատունեաց և Գնթունեաց պաղեստինացիս՝ տես էջ 166.

36. Վաղարշակ, ասէ Խորենացին, թիկնապահս կարգելով իւր «ի զաւակաց Խոռայ Հայկազնոյ»՝ «գլուխ և նահապետ նոցա» կը կարգէ «զՄաղխազ ումն», բայց ցեղին հին Խոռխոռունի անունը կը պահէ։ Այս վերջին պարագան յաւելուլ հարկ էր, վասն զի թիկնապահութեան ցեղը կը կոչուէր ընդհանրապէս Խոռխոռունի և ոչ Մաղխազունի։ Գիտելի է սակայն, զի այս հին սեմական բառը մաղխազ, համանուն հայերէն արքունի և պարսկերէն ոստան բառերուն՝ իբր պաշտօնի անուն կը տրուէր ի վաղուց Խոռխոռունեաց ցեղէն թիկնապահաց իշխանին (Բուզ. Դ. ԺԱ, և Ե. ԼԸ. ԽԳ.), ինչպէս ասպետ անունը Բագրատունիներէն թագակապ իշխանին։ Թէ մաղխազ թիկնապահութեան պաշտօնը ցուցնող հասարակ անուն էր՝ յայտնի է «մաղխազութիւն» (Ագաթ. ԾԺԲ. և ԾԻԶ.) ածանցէն։

37. Խորենացին յառաջին գիրս իւր ի գլուխ ԺԲ. խօսելով զԳառնկայ ումեմնէ թոռանէ Գեղամայ՝ կը յիշէ լեալ ի զաւակէ նորա առ Արտաշիսիւ թոռամբ Վաղարշակայ Վարժ կամ Վարաժ ումն քաջ որսորդ, զոր Արտաշէս կարգէ ի վերայ որսոց արքունի.—«Ի սորա (Գառնկայ) ծննդոց աստ ուրեմն առ Արտաշիսիւ թոռամբ Վաղարշակայ ումն Վարժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց և այծեմանց և վարազուց, դիպաձգութեամբ նետից կորովի. զսա ի վերայ որսոց արքունեաց կարգէ, և շէնս պարգևէ նմա առ եզերբ գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան, և ի սմանէ ասեն լինել զտունն Վարաժնունի»։ Հոս (գիրք Բ. գլ. Ը.), Խորենացին Վաղարշակայ կու տայ կարգել «ի վերայ որսոց արքունականաց ոչ զՎարժ, այլ զհայր նորա Գառն»։ Իսկ զԳառն ի զաւակէ Գառնկայ որ ի Գեղամայ, ի վերայ որսոց արքունականաց կարգէ»։ Բայց զարմանք է զի Վաղարշակ Գառնայ ցեղը չի հաստատեր նախարա-

րութիւն յանուն նորա կոչելով, այլ յետոյ ուրեմն թոռն նորա Արտաշէս զորդի Դատայ զՎարժ կարգելով «ի վերայ որսոց արքունականաց»՝ կ՚անուանէ նախարարութիւն. Եւ որովհետեւ Վարժ էր քաջ նետող՝ Արտաշէս կը յանձնէ նմա զորդի իւր զՏիգրան կրթել ի նետաձգութիւն.—«Արտաշէս տայ զՏիգրան զորդի իւր ցպատանի ոմն Վարաժ անուն, որդի Դատայ, որ ի զաւակէ Գառնկայ որ ի Գեղամայ, քանզի էր պատանին նշաւակ ի նետաձգութիւն կորովութեան, ուսուցանել զՏիգրան։ Զնա (զՎարաժ) իշխան արքունականացն արարեալ որսոց, և չէնս պարգեւեալ նմա առ Հրազդան գետով՝ յանուն նորա կոչի ազգն Վարաժնունի» (Խոր. Բ. ԺԱ.)։ Վարաժնունի անուամբ ազգ կամ նախարարութիւն յիշուած չէք ուրեք։ Վարաժնունի անուամբ երեք գաւառք կը յիշուին յաշխարհագրութեան, որ ընծայի Խորենացւոյն, մին՝ ի Տուրուբերան նահանգին, միւսն՝ ի Վասպուրականի, և երրորդն յԱյրարատ։ Այս վերջինը կ՚ակնարկեն բանք Խորենացւոյն։

Վարաժ անունը մօտ է ի Վարազ, ուստի Վարաժ լինի քաջ որսորդ վարազուց, և հարկաւ նաև քաջ նետաձիգ, արժանի կարգելոյ յԱրտաշիսէ ուսուցիչ Տիգրանայ, մեծին ի թագաւորս Հայոց։ Բնական էր տալ սերել զՎարաժ ի Գառնկայ, քանզի Վարաժնունին գաւառ առ Հրազդան գետով մօտ էր ի Գառնի։ Եւ որովհետեւ Վաղարշակ է հաստատիչ բոլոր նախարարութեանց՝ հայր մը կը ստեղծուի Վարաժայ, Դատ, որ կը կարգուի ի վերայ որսոց արքունականաց, առանց արժանանալու նախարարական պատուոյ, քանզի Վարաժնունի է գաւառը և ոչ Դատունի։ Զայս իբրեւ թելադրութիւն կը դնենք. կ՚ընդունինք սակայն թէ Խորենացւոյն տեղեկութիւնն զՎարաժայ կրնայ առնուիլ իբրև պատմական, միայն զարմանալի է թէ ուստի և զիարդ գտաւ Խորենացին թէ աննշան գաւառի մը նախնին Դատ առ Վաղարշակաւ կը սերէր իբրև հազար հինգ հարիւր տարի առաջ ապրող անձէ մը, որպիսի էր Գառնիկ։

38. Խորենացին յետ տալոյ Վաղարշակայ կարգել զԳաբաղ ոմն ի վերայ կուտից, և զԱբէլ՝ սպասարար և գահաւոր, յորոց սերին նախարարութիւնքն Գաբեղէն և Աբեղէն, յետ կարգելոյ նաև զԱրծրունիս իբրև արծիւ ունիս, զԳնունիս իբրև գինի ունիս, և հաւանականապէս, որպէս ասէ Խորենացին, ի վերայ զինարանաց՝ զՍպանդունիս, բազէակիրս և բազէակալս՝ զՀաւենունիս, և ձիւնակիր՝ զՁիւնականս՝—կուտայ նմա հոգալ պալատան ապահովութիւնը, կարգելով գունդս չորս «պահապանս դրան արքունի» ի զարմից առաջին թագաւորաց Հայոց։

39. Յետ այսորիկ Խորենացին հաստատել կու տայ մարդպետու-

թիւնն, այսինքն ներքինապետութիւնը, որպէս թէ չկար առաջ ներքինի խզելու սովորութիւնն ի Հայս, և Վաղարշակ եղաւ առաջին, որ խզել տուաւ ներքինիս ի զարմից նոյն առաջին թագաւորաց Հայոց. այսու կը ցուցնէ սակայն, թէ շատ հին էր մարդպետութեան ցեղն ի Հայս, անդստին ի ժամանակէ Արարատեան թագաւորութեան։ Բուզանդ յայտնապէս ասէ, թէ մարդպետութիւնը կար «ի բնէ ժամանակաց»։ Խորենացին յետ ասելոյ, թէ Վաղարշակ «ներքինիս հրամայէ խզել» ի հին զարմից Հայոց, և նահապետ կարգէ նոցա «զՀայր իշխանն մասին յԱտրպատականէ մինչև ցձուաշ և Նախճաւան՝ կը թուի ցաւել որ այս նախարարին պատմութիւնը մնացած էր անյիշատակ. «բայց թէ ո՛րպէս և ո՛ւր սորա իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ»։

Մարդպետք կը կոչուէին ընդհանուր անուամբ Հայր։ Խորենացին Հայր անունը կը համարի իբրև յատուկ անուն առաջնոյ մարդպետին. «Եւ նահապետ կարգէ նոցա (ներքինեաց) զՀայր իշխանն մասին յԱտրպատականէ մինչև ցձուաշ և Նախճաւան»։ Բայց պատուոյ սակս կամ պաշտօնին աղագաւ կը տրուէր նոցա այս անունը, որպէս ասէ իսկ Բուզանդ, թէ մարդպետն «անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ Հայր թագաւորին»։

40. Վաղարշակ, ըստ Խորենացւոյն, «յետ կարգելոյ զտուն թագաւորին»՝ կը կարգէ «երկրորդ թագաւորութեան» Մուրացան կոչուած ազգէն, զոր Խորենացին կը համարի սերունդ «Աժդահակայ Մարաց եղելոյ թագաւորին», զորոյ զկինն և զորդիս, ըստ Խորենացւոյն, իբրև գերի բերելով բնակեցուցած էր Տիգրան «յարևելեայ ուսոց մեծի լերինն» (Մասեաց), յետ յաղթելոյ Աժդահակայ և ջնջելոյ Մարաց թագաւորութիւնը։ Թէ Մուրացանք Մար էին՝ անտի յայտ է, ասէ Խորենացին, զի «նահապետի ազգին ասեն Մարացւոց տէր», թէպէտ ազգը կը կոչուի Մուրացան (Խոր. Բ. Ը.)։ Աժդահակայ զարմին գերութիւնն առ Տիգրանաւ պատմական չէ (տես էջ 195). ստոյգ է սակայն թէ Մասեաց արեւելեան կողման բնակիչք էին ի բնէ Մար, և նահապետ նոցա ունէր պատիւ մեծ առ Արշակունեօք, իբրև երկրորդ թագաւորութեան։ Ստուգիւ յայտնի չէ, թէ ինչ էր «երկրորդ թագաւորութեան լինել», կամ ունել «զգահն երկրորդական», կը թուի սակայն թէ կը նշանակէ զկնի թագաւորին առաջին բարձն ունել։ Հաւանական է, թէ յետ առնլոյ Արշակունի թագաւորաց, յառաջ քան զՏիգրան կամ առ Տիգրանաւ, զարեւելեան նահանգսն ի Պարթեւաց (Ստրաբ. ԺԱ. 5. Բուզ. Ե. ԺԳ. ԺԵ.)՝ Մարք համարեցան երկրորդ …ոյ Արշակունի ցեղին, և ժամանակ մը մեծ դեր խաղացին առ

Արգամաւ (ըստ վիպասանաց՝ Արգաւան) նահապետաւ իւրեանց, որպէս ակնարկեն երգք վիպասանաց (Խոր. Ա. Լ. Բ. ԾԱ.)։ Ըստ Խորենացւոյն՝ Երուանդ, նախորդ Արտաշիսի, դարձուց յԱրգամ երկրորդական գահը, զոր Տիգրան մեծ հանելով ի նմանէ տուած էր քեռառն իւրում Միհրդատայ (Խոր. Բ. ԽԴ.), և Արտաշէս ոչ միայն պահեց նմա երկրորդական գահը՝ այլ և ետ նմա «պսակ յակնթակապ, և գինդ յերկոսին ականջսն, և կարմիր զգեստ միոյ ոտինն, դարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղինօք ըմպել նուագօք» (Խորեն. Բ. ԽԷ.)։ Մուրացան նահապետութիւնը բարձաւ առ նովին իսկ Արտաշիսիւ այլ և այլ կասկածանաց պատճառաւ, որպէս տեսցուք ի կարգի պատմութեան։

Թէ առաջին Արշակունիք ընդարձակեցին զսահմանս իւրեանց որ ի սկզբան չէր այնչափ մեծ՝ կ'ակնարկէ Բուզանդ ասելով, թէ Կուր գետ վաղուց սահման դրուած էր ի մէջ Հայոց և ի մէջ Վրաց և Աղուանից։ Բայց Ստրաբոն իբր ծանօթ դէպք՝ մանր կը պատմէ Արշակունեաց տէրութեան ընդարձակուիլն, յետ ազատելոյ նոցա ի լծոյ Սելևկեանց, յանուանէ յիշելով նուաճեալ գաւառներն, և ազգերն որոց կը վերաբերէին այն գաւառք. «Ուսանիմք, ասէ ի պատմութենէ, զի Արմենիա, որ չէր զառաջինն այնպէս մեծատարած, ընդարձակեցաւ մանաւանդ աշխարհակալութեամբ նախնի կուսակալաց Անտիոքայ մեծի, Արտաքսիասայ և Զարիադրեայ, որոց յետ անկման տեառն իւրեանց դիպող համարեալ թագաւորել մին ի վերայ Ծոփաց, Անձտայ և Որմանդեայ և գաւառաց շուրջանակի, և միւսն ի վերայ նահանգին Արտաշատայ (Արարատայ), և գուն գործեալ միաբան կորզել գաւառս յարուարձանեալ ազգաց հանին մի զմիոյ կնի, ի Մարաց՝ զԿազբս, զՀաբանդ և զՎասպուրական, ի Վրաց՝ որ ինչ առ ստորոտովն Պարխարայ հանդերձ Խորձենաւ և զԳուգարս յայսկոյս Կուր գետոյ, ի Խաղտեաց և ի Մոսինեքաց՝ զԿարին և զԴերջան, գաւառք որ այժմ սահմանակից են Փոքուն Հայոց, եթէ չեն մասն նորա, ի Կատաւոնաց՝ զԵկեղեաց և զամենայն գաւառն Անտիտաւրոսի, հուսկ ուրեմն յԱսորւոց՝ զՏարօն. ամենեքին՝ գաւառք, որոց բնակիչք այսր միութեան ազգաւ խօսին այժմ զմի և զնոյն լեզու» (Ստր. ԺԱ. 5)։

41. Ապաքէն վայել էր Վաղարշակայ կացուցանել յապահովի նաև զսահմանս տէրութեան իւրոյ։ Խորենացին զայս ևս տայ առնել Վաղարշակայ, տալով նմա հաստատել զինուորական իշխանութիւներ, կամ նորին իսկ Խորենացւոյն բառով «կողմնակալութիւնս» Հայաստանի սահմանագլուխներն, «ի ծայրս հայերէն խօսից»։

Ցարևելից կողմանէ զՍիսակեանս և զԿադմեանս։ Սիսակեանն

էին Սիւնիք, վերջին արեւելեան նահանգ Հայոց: Իսկ Կադմեան կ'անուանէ Խորենացին զսերունդ Կադմոսի, որ ըստ Մար Իբասայ՝ էր որդի Արմենակայ, թոռն Հայկայ, ծնեալ ի Բաբելոն (Խոր. Ա. Ժ.). Բայց ոչ զԿադմոս և ոչ զԿադմեանս, իբր նախարարութիւն կամ ցեղ, կը գտնենք ուրեք յիշուած ի պատմագիրս մեր յառաջ քան զԽորենացին: Մար Իբասայ պատմական յարգն արդէն ցուցուեցաւ ի Ե. գլուխ գրոցս:

42. *Ցարեւելից հիւսիսոյ* «կողմնակալ բիւրաւոր» զԱռան ումն, «ի ծննդոց Սիսակայ»: Խորենացին յառաջին գիրս իւր (գլ. ԺԲ.) խօսելով զՍիսակայ՝ ասէ. «Ի սորա (Սիսակայ) ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ, որ առաջին ի Պարթեւաց արքայ Հայոց, գտեալ արս անուանիս՝ տեարս աշխարհին կարգէ, որ է Սիսականդ ազգ, և զայս առնէ Վաղարշակ *ի պատմութենէն ստուգեալ*: Այլ այս թէ որպէս է՝ յիւրում ժամու պատմեսցուք»: Խորենացին հոս, յԸ. գլուխ երկրորդ գրոցն, իբր թէ կատարելով այս խոստումը՝ կը յիշէ երբեւ սերունդ Սիսակայ զԱռան, «մեծ և անուանի և բազմաբիւր», այսինքն բիւրաւոր զօրաց տէր, «յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին», և կարգել կու տայ զնա Վաղարշակայ «կողմնակալ բիւրաւոր» ոչ Սիսական աշխարհին, այլ Աղուանից, զոր կը պատմէ սերեալ ի Սիսակայ.—«Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի՝ մուացումն եղև մեզ յառաջին մատենին յիշատակել, զգունդս Սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, և ի գետոյն Երասխայ մինչև ցԱմուրն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա»: Ամուրն Հնարակերտ թուի լինել ամուր բերդ ի կրճին, որ կոչէր Դուռն Ալանաց կամ Կասպեան ձորայ: Այսպէս Աղուանք, որ էին Սկիւթացի, Մասքութ (Ագաթ. ԾԻԶ. Բուզ. Գ. Ե.), արդի գիտնական բառով Դուրանեան կամ Արիոյ—Դուրանեան՝ լինին համացեղ ընդ Հայս: (ԶԱղուանից տես էջ 149—152)։ Վաղարշակ, ըստ Խորենացւոյն, «ի յաւանդութենէ երկրին, «սուտ-պատմութենէ»], կամի ասել՝ յաւանդութենէ երկրին, կարգեց զնա կողմնակալ, թէ Առան էր «ի ծննդոց» Սիսակայ՝ կարգեց զնա կողմնագեալ, զի Աղուանից պէս բարբարոս ժողովուրդ մը, անգիր և առանց գրականութեան՝ կը պահէր, ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն, իբր հազար հինգ հարիւր տարի Արդարև զարմանալի է, զի Աղուանից պէս բարբարոս ժողովուրդ մը, անգիր և առանց գրականութեան՝ կը պահէր, ըստ ժամանակագրութեան Խորենացւոյն, իբր հազար հինգ հարիւր տարուան աւանդութիւն մը, որպիսի էր աւանդութիւնն սերելոյ Առանայ ի Սիսակայ:

43. Վաղարշակ, ըստ Խորենացւոյն, Ծարայի սերունդէն (էջ 210) Գուշարայ անուն ումեմն տուաւ ժառանգութիւն Կանգարք

կոչուած գաւառն առ մթին լերամբ, Ջաւախաց կէսը, և զգաւառսն Կողբ, Ծոբ և Ձոր մինչև ցամուրն Հնարակերտ։ Այս Գուշարայ մեծ և հզօր ցեղը կարգեց Վաղարշակ կողմնակալ հիւսիսոյ ընդդէմ «լերինն Կաւկասայ», «բդեշխ Գուգարացւոց» կոչելով զնահապետ նոցա որ էր Դարեհի նախարարին Միհրդատայ ցեղէն։ Նոյն Գուշարայ տոհմէն ուրիշներ կարգեց Վաղարշակ տէր Աշոցայ և Տաշրայ.—«Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի՝ ժառանգեաց (ժառանգեցոյց Վաղարշակ) զլեառնն մթին, որ է Կանգարք, և զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոբ, զՁոր մինչև ցամուրն Հնարակերտ։ Բայց զտէրութիւնն Աշոցայ և զսեպհականութիւնն Տաշրայ կարգէ Վաղարշակ ի զաւակաց Գուշարայ Հայկազնոյ։ Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն (Գուգարաց), և նահապետութեան անուն կարգայ՝ բդեշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի» (Խոր. Բ. Ը.)։

Լեառն մթին կամ Ստորին Կովկաս կը կոչուէր գօտին լերանց ի մէջ Կուր գետոյ և մեծի գօտւոյն Կովկասու (տես էջ 9)։ Իսկ Կանգարք էր հիւսիսային գաւառ Գուգարք կոչուած նահանգին Հայոց (Փարպ. ՀԳ.)։ նոյնպէս Կողբ, Ծոբ, Ձոր էին գաւառք նոյն նահանգին։ Իսկ Տաշիր էր հարաւային գաւառ Գուգարաց, սահմանակից Արարատեան գաւառին Աշոցայ։ Ըստ Խորենացւոյն՝ բնակիչք այս գաւառաց էին սերունդք Շարայի, ուստի և համազգի Հայոց, քանզի Շարայ, հռչակեալն յերգս վիպասանաց իբր շատակեր և յոլովածին՝ էր ըստ Խորենացւոյն որդի Արմայիսայ, թոռնորդի Հայկայ (տես էջ 101). և առ Վաղարշակաւ կոչեցան Գուգարք յանուն Գուշարայ, որ էր նոյն Շարայի սերունդէն և վերոյիշեալ գաւառաց մեծ մասն առաւ ժառանգութիւն ի Վաղարշակայ։ Գիտելի է սակայն, զի ըստ Ստրաբոնի և այլ հին աշխարհագրաց՝ Գուգարք, Γωγαρήνη կը կոչուէր Վրաց երկիրն, որ կը ձգուէր ի Մթին լեռնէն մինչև Երասխ, և ազգն էր Դուրանս—Արխական իբրև զԱգուանս, ինչպէս յայտնի է նաև հին վրացերէն լեզուէն։ Ինչպէս Աղուանք՝ նոյնպէս Գուգարք հաւանականապէս առ Արշակունեօք, երբ Կուր գետ որոշուեցաւ սահման Մեծին Հայոց ի հիւսիսոյ (Բուզ. Ե. ԺԳ, ԺԵ.)՝ բաժնուեցան երկու, այսինքն բուն կամ հիւսիսային Գուգարք յայնկոյս Կուր գետոյ, իբրև ուրոյն թագաւորութիւն, և հարաւային Գուգարք յայսկոյս նորին գետոյ իբրև նահանգ Մեծին Հայոց և ընդ իշխանութեամբ Արշակունեաց։ Նահանգին իշխանը կը կոչուէր բդեշխ, թէպէտ ոմանք ի գաւառաց, ինչպէս Կող, Ձոր և Տաշիր՝ տէր կոչուած ուրոյն իշխանները կը վերաբերէին (Բուզ. Գ.

Ծ.), և էին հաւանականապէս ընդ վերին իշխանութեամբ բդեշխին (Խորեն. Բ. Ը.)։

Խորենացին զՎիրս կը դնէ իբրև զատ ցեղ ի Գուգարաց, և կը համարի գաղթականս կամ գերիս, զորս որպէս թէ Նաբուգոդոնոսոր բերելով յԻբերիոյ որ ի Սպանիա՝ բնակեցոյց յաջակողմն Պոնտոսի, այսինքն ի Գուգարս, ըստ Մեգասթենեայ յոյն պատմագրի։ Մեգասթենեայ այս հատուածը կը բերէ Եւսեբիոս ի Քրոնիկոնին, յորոյ հայերէն թարգմանութենէն կ'առնու Խորենացին հանդերձ սխալով հայ թարգմանչին Քրոնիկոնի, իբրև յԱբիւդենոսէ (տես էջ 134)։ Խորենացին ոչ միայն այս սխալը կը գործէ, այլև Վրաց բդեշխ կարգել կու տայ Վաղարշակայ զՄիհրդատ, զհայր կամ ըզհաւ մեծին Միհրդատայ, որում յետոյ Տիգրան մեծ կը յանձնէ, ըստ Խորենացւոյն, զԿապադովկիա և զՓոքրն Ասիա (Խոր. Բ. ԺԴ.)։ Բայց ոչ մեծն Միհրդատ և ոչ հայր և հաւ նորա բդեշխ էին Վրաց, այլ ի նախնեաց հետէ թագաւորք Պոնտոսի։ Նոյնպէս լինելն Վրաց իբերացի գաղթականութիւն տարեալ ի Սպանիոյ ի ձեռն Նաբուգոդոնոսորայ՝ թուի լինել հիմնեալ ի վերայ նոյնութեան անուան, և չունի պատմական հիմն։ ԶՎրաց տես և էջ 151։

44. *Արեւմտեան* սահմանը կը յանձնուի, ըստ Խորենացւոյն, Անգեղ տան։ Խորենացին յառաջին գիրս իւր (գլ. ԻԳ.) յիշելով Պասքամ զոմն թոռն Հայկակայ՝ ի նմանէ կըպատմէ սերեալ զԱնգեղ տունն, և այս պատմութիւնը որպէս թէ կ'առնու ի Մար Իբասայ. «ԶԱնգեղ տունն ասէ նոյն պատմագիր (Մար Իբաս) ի Պասքամայ ումեմնէ, ի Հայկակայ թոռնէ լինել»։ Այս Հայկակ էր, ըստ Խորենացւոյն, նախորդ Երուանդայ, հօր Տիգրանայ Հայկազնոյ (տես էջ 113)։ Ապա Մար Իբաս յանուանեալ քաղդէական մատենին գտաւ արձանագրեալ զանուանս ոչ միայն Հայկազուն իշխանաց և թագաւորաց, այլև որդւոց և թոռանց նոցա։ Զխարդ և իցէ այս՝ Խորենացին զԱնգեղ տունն իբրև նախարարութիւն ի Վաղարշակայ կը դնէ հաստատեալ։ Վաղարշակ, ասէ, յիշեալ Պասքամայ, Հայկակայ թոռին սերունդէն Տորք անուն զոմն, տգեղ յոյժ՝ հաստատեց կուսակալ արևմտից, և յանպիտանութենէ երեսացն զանուն ազգին կոչեց Անգեղ տուն։ Բայց Տորք ոչ միայն տգեղ էր, այլև անհնարին ուժեղ, մինչև կարծր քարեր որ ամենևին գեզութիւն չունէին, բռնելով կը ճեղքէր մեծ և փոքր ըստ կամաց և եղնգամբ հարթելով իբրև տախտակ՝ կը գրէր ի վերայ արծուիս և այլ պատկերներ։ Անգամ մը Պոնտոս ծովուն եզերքը յարձակեցաւ ի վերայ նաւատորմղի թշնամեաց, և երբ նաւերը խաղացին դէպ ի խորն՝ Տորք չկրնալով հասնիլ, բլրաձև քարեր նետեց ծո-

վը, և ի պատառմանէ ջուրցն կէսք ի նաւաց ընկղմեցան, այլք վարեցան մղոններով հեռու։ Կարի է առասպելս, ասէ Խորենացին. բայց էր Տորք արդարև հուժկու, և այսպիսի զրուցաց արժանի.— «Իսկ զայր խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակքիթ, խորակն և դժնահայեաց, ի զաւակէ Պասքամայ, ի Հայկակայ թոռանէ, Տորք անուն կոչեցեալ, զոր վասն առաւել ժահագիմութեանն ձայնէին անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ (Վաղարշակ) կուսակալ արևմտից, և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն։ . . . Բայց կարի իմն անյարմար թուէին նմա երգ բանիցն վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն . . . քանզի երգէին նմա բուռն հարկանել զորձաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեղութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր, և քերել եղնգամբ և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղնգամբք իւրով արծուիս և այլս այսպիսիս։ Եւ յեզերս ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ, և ի խաղալն նոցա ի խորն իբրև ասպարէզս ութ, և սա ոչ ժամանեաց նոցա. առնու, ասեն, վէմս բլրաձևս և ձգէ զկնի. և ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, և ամբարձումն ալեացն որ ի պատառմանէ ջուրցն՝ վարէ զմնացեալ նաւս բազում մղոնս։ Ո՜հ, կարի է առասպելս, այլև առասպելաց առասպել։ Բայց քեզ զի՞ է, քանզի էր արդարև սաստիկ հզօր, և այսպիսեաց զրուցաց արժանի»։

Այս է Անգեղ տան պատմութիւնն ըստ Խորենացւոյն։ Անհնարին էր սակայն Խորենացւոյն գիտել, թէ Տորք անուն ոմն կար իբր վեց հարիւր ամօք յառաջ, և իբր նոյնչափ ամօք յառաջ քան զնա՝ Պասքամ ոմն թոռն Հայկակայ, բայց եթէ հարկ է ենթադրել, թէ գրաւոր աւանդութիւն կամ ազգաբանութիւն կար յԱնգեղ տան զոր գտաւ Խորենացին։ Բայց Խորենացին, որպէս արդէն ասացաւ՝ բաց ի Մար Իբասայ և յունական պատմութիւններէն ուրիշ աղբիւր չի յիշեր։ Թողունք սակայն այս կէտը. բոլորովին կամայական է Անգեղ բառը տգեղ նշանակութեամբ առնելով Վաղարշակայ Անգեղ, այսինքն Տգեղ կոչել տալ զՏորք, և յանուն նորա զազգն Անգեղ տուն, այսինքն Տգեղ տուն։ Անգեղ թուի լինել հին Հայ դիւցազին կամ աստուածութեան անուն։ Մեր նախնիք սովոր էին Հայոց աստուածներուն անուամբ կոչել, ըստ յարմարութեան, օտարազգի դիս. զորօրինակ. զՕրիոն՝ Հայկ, զՀերակլէս՝ Վահագն, զԱրտեմիս՝ Անահիտ, զԱփրոդիտէ՝ Աստղիկ, զԱպողոն՝ Տիւր, զՀեփեստոս՝ Միհր. այսպէս Անգեղ կը թարգմանեն հին Բուշեանց և Սեմականաց Ներկալ կամ Երկէլ (Հերակլ, Հէր-

քիւլ) աստուածը, որ կը յիշուի ի Զորրորդ գիրս Թագաւորաց (ԺԷ. 30)։ Հաւանական է, թէ ինչպէս Քուշեանց և Սեմականաց Ներկա-լը կամ Երկէլն (Րօլինս. բարն. Գրոց)՝ նոյնպէս Հայոց Անգեղն պա-տերազմի սոսկումն էր, անձնաւորեալ այլաբանօրէն ի հսկայ անճոռ-նի, կաշմբուան և աւերիչ, ինչպէս նախկին մարդկութեան պատե-րազմն ընդ գազանս՝ անձնաւորեալ էր ի Հերակղէս հսկայ գազա-նամարտ (Ետկ. Քին վերջ. գործ.), կամ ի վիշապաքաղն Վահագն։ Խորենացին Անգեղ ահագին ուժոյն վրայ կը յաւելու նաև սոսկա-լի տգեղութիւն, որպէս զի Անգեղ անունը մեկնէ տգեղ նշանակու-թեամբ, որ անսովոր է ի մերում լեզուի։ Անհնարին ուժը զոր ըստ երգոց վիպասանաց ունէր Անգեղ, ինչպէս նաև հսկայական արու-թեան առասպելը՝ բաւական են ցուցնել թէ այլաբանութիւն էր բոլորը։

Այլ թէ ընդէր Անգեղ տուն կը կոչուէր Հայոց այն մասը՝ յայտնի պատմական յիշատակութիւն չունինք զայսմանէ։ Գիտելի է զի Անգեղ տուն ոչ թէ ցեղի կամ նախարարութեան անուն էր, այլ Բարձր Հայք կոչուած նահանգին կամ միոյ ի գաւառաց նորա։ Այսպէս կը գտնենք զԱնգեղ տուն անունն յաճախ յիշուած իբրև գաւառ առ Բուզանդայ և Ագաթանգեղոսի.—«Մինչդեռ թագա-ւորն Արշակ ի կողմանս տորին գաւառացն, յԱնգեղ տանն էր լուեալ՝ զմիջնաշխարհն (զԱրարատ) քանդեալ բրեալ զօրքն թագաւորին Պարսից ապականէին» (Բուզ. Դ. ԻԳ.)։ «Ընդ Աղձնիս և ընդ Ծոփս մեծ, և ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձտայ, ընդ Ծոփս Շահունոց, ընդ Մզուր գաւառն և ընդ Դարանաղի, ընդ Եկեղեաց, Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօ-րօքն ասպատակեալ՝ հեղեալ ծաւալէր իբրև զջուրս բազումս» (Անդ.)։ «Գայլին պահ արկանէին զամուր բերդաւն, որ է յԱնգեղ տանն գաւառին» (Անդ.)։ Եւ Դպր. Ե. գլ. ԺԸ. ասէ զԱնգեղ տա-նէն, թէ ոստան արքունի էր։ Արդ ցեղը չի կրնար ասպատակուիլ և լինել ոստան արքունի, այլ գաւառ կամ նահանգ մը։ Որովհե-տև Բարձր Հայք նահանգն ի սկզբանէ կեդրոն էր կռապաշտու-թեան, և Թիլ, Թորդան, Երէզն, Անի այն նահանգին մէջ այլևայլ դից պաշտաման նուիրեալ տեղեր էին՝ հաւանական է թէ մասն մի նահանգին նուիրեալ էր վաղուց Անգեղ աստուծոյն։

45. Ցարևմտից հարաւոյ «բդեշխ մեծ և կուսակալ» կը հաս-տատէ Վաղարշակ զՇարաշան ոմն «ի տանէ Սանասարայ», Ասո-րեստանի (Ասորւոց) սահմանին վրայ, «առ ափն Տիգրիս գետոյ», պար-գևելով նմա «զԱրձն և որ շուրջ զնովաւ», Տաւրոս լեառն ուր է Սիմ, և բոլոր Խոր Ասորիս, «զԿղեսուրն ամենայն» (Coelesyria)։ Թէ-

պէտ Խորենացին լռութեամբ կ'անցնի բդեշխութեան բուն անունը՝ յիշուած երկիրներէն յայտնի է սակայն, թէ Աղձնեաց բդեշխութիւնն էր։ Սանասար, կամ ըստ Հրէից Սարասար՝ էր Սենեքերիմայ որդւոց մին, զորմէ խօսելով Խորենացին յառաջին գիրս իւր (գլ. ԻԳ.) ասէ. «Սկայորդին մեր քաջ նախնին բնակեցոյց *յարեւմտից հարաւոյ* աշխարհիս, և ի սմանէ սերեալ լցին զՍիմն ասացեալ լեառն. իսկ պերճքն և գլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբդեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ»։ Դիտողութեան արժանի է սակայն, զի մինչ Խորենացին զԱղձնիս կու տայ սերել ի Սանասարայ և զԱրծրունիս յԱդրամելեքայ՝ Ցուասպ Արծրունի ընդ հակառակն զԱրծրունեաց ասէ լինել «ի սերմանէ Սանասարայ (տես էջ 168)։ Հոս կը հարցնենք դարձեալ. Ո՞ւր գրուած գտաւ Խորենացին, թէ Ծարաշան ոմն կար առ Վաղարշակաւ երբ վեցհարիւր ամօք յառաջ քան զԽորենացին, և թէ այս Ծարաշան էր «ի տանէ Սանասարայ»։ Միթէ Աղձնեաց տո՞հմն եւս ունէր հազար հինգ հարիւր տարուան ազգահամար մը, աւանդութեամբ հասեալ ի հարց և ի հաւուց։

46. Խորենացին վերոյիշեալ սահմանագլուխ իշխանութիւնները դնելով՝ անձամբ կը ջրէ ինչ որ առաջ գրած էր զսահմանաց թագաւորութեան Վաղարշակայ։ Արդարև Սիւնիք յարևելից, Աղուանք և Վիրք ի հիւսիսոյ, Անգեղ տունն յարևմտից, և Աղձնիք ի հարաւոյ՝ Մեծին Հայոց սահմանագլուխներն էին առ Տրդատաւ և յաջորդօք նորա։ Սահմանագլուխք թագաւորութեան Վաղարշակայ պարտէին լինել աւելի հեռուն. քանզի զՍիւնիս դնելով սահմանագլուխ յարևելից՝ Խորենացին դուրս կը թողու զԱտրպատական. նոյնպէս յարևմտից ոչ թէ Անգեղ տունն, այսինքն Բարձր Հայք, լինելոց էր սահմանագլուխ, այլ Սեաւ ծով և Եգէականը, կամ գէթ Պոնտոս, Փռիւգիա և Կապադովկիա. իսկ ի հարաւոյ ոչ թէ Աղձնիք լինելոց էին սահմանագլուխ, այլ Ասորիք և Պաղեստին. քանզի ինչպէս արդէն տեսանք՝ Արշակ մեծ ըստ Խորենացւոյն տուած էր Վաղարշակայ «զմասն ինչ յարևմտեայ Ասորւոց և զՊաղեստին և զԱսիա և զամենայն Միջերկրայս և զԹետալիա. ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին ուր Կաւկաս յարևմտեանն յանգի ծով, և զԱտրպատական» (տես էջ 229)։

Դիտողութեան արժանի է նաև, զի Սիւնիք, Աղուանք և Վիրք՝ Անգեղ տունն և Աղձնիք արդէն սահմանագլուխ նահանգներ էին, ուստի աւելորդ էր Վաղարշակայ կարգել զնոսա այն սահմաններուն վրայ «կողմնակալ», «հազարաւոր», «բիւրաւոր»։ Այս բառերը կ'առնու Խորենացին յԱգաթանգեղոսէ, իբրև վերադիր զինուո-

րական սահմանապահ իշխանութեանց։ Բայց Ագաթանգեղոսի հեղինակը այս վերադիրները կու տայ ոչ միայն չորս բդեշխութեանց որ էին տեարք սահմանագլուխ նահանգաց, այլ և ուրիշ երևելի նախարարաց։ Էջ 596 և 97, յետ յիշելոյ վեշտասան իշխան, զորս Տրդատ ղրկեց Կեսարիա տալ ձեռնադրել զԳրիգոր՝ կը յաւելու. «Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ»։ Կողմնակալ, կուսակալ, ինչպէս նաև սահմանակալ բառերն առ Ագաթանգեղեայ և առ Բուզանդայ կը նշանակեն աշխարհատէր, գաւառատէր, և ամէն նախարարի կը պատշաճէին, քանզի ամէն նախարար էր նահանգի կամ գաւառի մը և կամ մասին իրիք գաւառի տէր։

47. Բդեշխք չէին զինուորական իշխանութիւններ, կարգեալ ի պահպանութիւն սահմանաց։ Այս հին բդեշխ, այսինքն տէր աշխարհի, անունն ի վաղուց տալ սովոր էին Հայք քանի մը սահմանագլուխ նահանգաց իշխաններուն, որ էին ընդ իշխանութեամբ Արշակունեաց, բայց ի բնէ Հայ չէին, այլ Սկիւթացի կամ Մասքութ, արդի բառով Թուրանեան (Ագաթ. ՃԻԶ. տես և էջ 150), ինչպէս Աղուանք և Վիրք, կամ Ասորի՝ ինչպէս Աղձնիք, և կամ Ասորեստանցի և Մար, որպիսի էին հարաւային և հարաւային արևելեան սահմանք Հայոց։ Այսպէս կը գտնենք առ Ագաթանգեղոսի. «Առնոյր (Տրդատ) զչորեսին գահերէցս իւրոյ տաճարին որ բդեաշխքն կոչէին. զառաջին սահմանակալն Նորշիրական կողմանէն, երկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց (Կորդուաց, տես Խոր. Բ. ԾԳ.) կողմանէն, և երրորդն յԱրուեստական (Աղձնեաց, Միջագետաց, տես Բուզ. Դ. ԻԱ.) կողմանէն, չորրորդն ի Մասքթաց (Վրաց և Աղուանից) կողմանէն» (Ագաթ. ՃԻԶ.)։ Գուգարաց, Աղձնեաց և Նորշիրական բդեշխներ կը յիշէ նաև Բուզանդ։ Այս բդեշխութիւնք կային առ Արշակաւ թոռնորդւով Տրդատայ։ «Եւ սկսան, ասէ Բուզանդ, սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին, թողին զիւրեանց արքայն Արշակ, նախ բդեաշխն Աղձնեաց, և Նորշիրական բդեաշխն . . . և յետ սորա Գուգարաց բդեաշխն» (Բուզ. Դ. Ծ.)։ Բուն զինուորական սահմանապահ իշխանութիւններ հաստատել, այսինքն զօրքը չորս բաժնելով դնել յարևելից, յարևմտից, ի հիւսիսոյ և ի հարաւոյ ընդ զօրավարութեամբ երևելի արանց՝ սկսաւ նախ առ Արտաշիսիւ, և Տրդատ նորոգեց այս սովորութիւնը (որ հաստատութիւն գտաւ առ նորին որդւով Խոսրովու։ «Բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն ի չորս. զարևելեանն թողու ի վերայ Արտաւազդայ, և զարևմտեանն տայ Տիրանայ, զհարաւայինն

ի Սմբատ Հաւատայ, և զհիւսիսայինն ի Զարեհ» (Խոր. Բ. ԾԳ.)։ «Սակայն Տրդատ (յետ մահուան սպարապետին իւրոյ Արտաւազդայ Մանդակունւոյ) չորս յիւրոցն առնելով զօրավարս, զՄիհրան առաջնորդ Վրաց, և զԲագարատ ասպետ, և զՄանաճիհր նահապետ ազգին Ռշտունեաց և զՎահան նահապետ Ամատունեաց» (Խոր. Բ. ԾԵ.)։ «Եկեալ Անտիոքոս (զօրավար Կոստանդեայ առ Խոսրովու, որդւոյ Տրդատայ) զչորեսին սպարապետսն մատոյց ի նոյն իշխանութիւն զօրու, զորս կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեանն՝ յետ մեռանելոյ դայեկին իւրում Արտաւազդայ Մանդակունւոյ, որ միագլխապետ էր և ամենայն Հայոց զօրավար։ Առաջին Բագարատ ասպետ՝ զօրավար արևմտեայ գնդին. երկրորդ՝ Միհրան բդեշխ Գուգարացւոց՝ սպարապետ հիւսիսային զօրուն. երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց՝ զօրավար արևելեան գնդին. չորրորդ՝ Մանաճիհր նահապետ Ռշտունեաց՝ սպարապետ հարաւային զօրուն» (Խոր. Գ. Զ.)։ Այս բաժանումը կար նաև առ Պապաւ, քանզի կը յիշուի քաջն Գնէլ Անձևացի սպարապետ արևելեան զօրուն Պապայ (Խոր. Գ. ԼԹ.)։

48. Վաղարշակ կը հաստատէ, ըստ Խորենացւոյն, ուրիշ բոլոր նախարարութիւնները, զՈրդունին «ի հովտին մեծի Բասենոյ», զԱպահունին, զՄանաւազեանն, զԲզնունեանն, սոքա ամենքին «ի զաւակացն Հայկայ», իւրաքանչիւր գաւառի բնակիչներէն երևելի անձինք կարգելով նահապետ, և ցեղերուն տալով գաւառաց անունները.—«Ի բնակչաց գտեալ պերճագոյնս՝ տեարս կարգէ, յանուն շինից և գաւառաց կոչելով»։ Եթէ արդէն կային այն անուններով գաւառներ հանդերձ բնակչօք և արամբք երևելեօք՝ ապա կային այն նախարարութիւնք։

«Իսկ զՄոկացին, ասէ Խորենացին, ի նոյն գաւառէ գտեալ այր որ ունէր սրիկայս բազում՝ նախարարութիւնս հաստատէ»։ Մոկացիք, լեռնային վայրագ ժողովուրդ, կը համարուէին դիւրաւ շահատակող ի լերինս և յափափայս (տես, էջ 70), մինչև Տապհոյ, որդւոյ Յազկերտի դև անուանել զՄոկացիս։ Յիշուելու արժանի դիպուած է այս, զոր իբր զարտուղութիւն կը մուծանէ Խորենացին Դպր. Գ. գլ. ԾԵ.։ «Էր երբեմն, ասէ, Տապհոյ և Ատոմայ Մոկացւոյ զհետ երամակաց ցռուց յանդգնագոյնս արշաւեալ ընդ խորտաբորտսն և ի վիմուտ տեղիս. յորմէ կասել սկսաւ Տապուհ։ Իսկ Ատոմայ Մոկացւոյ եպերեալ զնա ասէ. Գնա, գնա, աստուածորդիդ Պարսից, թէ այր իցես։ Եւ նա ասէ. Դու երթիջիր, զի ի քարինս՝ դիւաց է շահատակել։ Դարձեալ յայլում ժամու դիպեցաւ ի շամբս կինճս որսալ հրով. և Տապհոյ ոչ համարձակեալ

ի Թաւուն քաջարշաւ լինել, մինչև շրջապատէր հուրն. և նորա զհայեցուածսն յերկուս բաժանեալ՝ այսր անդր բերեալ լինէր երիվարաւն։ Միւսանգամ ասէ Ատոմ. Աստուածորդիդ Պարսից, ահա հայր քո և աստուած, ընդէր զանգիտես։ Իսկ Ծապուհ ասէ. Թողեալ զկատակելդ՝ յանցանել ընդ հուրդ դարձո զքեզ, որ և ես զկնի քո. քանզի յառաջելն՝ ձիս իմ խրտչի։ Յայնժամ այպանեաց զնա Ատոմ ասելով. Միթէ և այդ քարճնք իցեն, զի ես յառաջեցից. և արդ՝ եթէ դու զՄոկացիս կոչես դիւազգիս՝ ես զՍասանեանսդ կոչեմ կնամարդիս։ Եւ մտրակեալ զերիվարն՝ իբրև ընդ հովիտս ծաղկանց անցանէր ընդ հուրն, զերծուցանելով զԾապուհ»։ Հաւանական, է թէ յընդհանուր բուսոյ բարուց այս լեռնաբնակ ցեղին, Մոկացւոց, թելադրեալ՝ կը յաւելու Խորենացին Մոկաց առաջին նահապետին պատմութեան մէջ այն պարագան, թէ «ունէր սրիկայս բազումս», ապա թէ ոչ՝ ո՛չ Վաղարշակ նախարար կը կարգէր աւազակապետ մը, և ոչ Մոկացիք կը պահէին այնպիսի աւանդութիւն մը, թէ նահապետ իւրեանց էր գլուխ սրիկայից։

Վաղարշակ կը կարգէ նաև Կորդուաց, Անձևացեաց, Ակէացւոց, Ռշտունեաց, Գողթնեցւոց նախարարութիւնները, նաև «զմեծ նահապետութիւնն» Ծոփաց, թէպէտև Ծոփք (Չորրորդ Հայք) հանդերձ Անգեղ տամբ (Բարձր Հայք) ուրոյն թագաւորութիւն էին մինչև Տիգրան մեծ (Ստրաբ. Դպր. ԺԱ. 14)։

49. Վահունիք անգամ, ըստ Խորենացւոյն, իբրև սերունդ Վահագնի՝ ի Վաղարշակայ կարգեցան պաշտօնեայք մեհենից, և ի Վաղարշակայ կոչեցան Վահունի.—«Բայց յորդւոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ խնդրեցին զմեհենիցն պաշտամունս՝ պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա զքրմութիւնն, և կարգէ ընդ առաջին նախարարսն և անուն կոչէ Վահունիս»։ Զնշանակութենէ այսր անուան չասէ ինչ Խորենացին. յայտնի է սակայն Հայոց հին լեզուէն, թէ Վահունին կ'ըլլէ վան բառէն, որ կը պատասխանէ հընդեւրոպական լեզուներէն ոմանց պոկ կամ բազ բառին որ է աստուած կամ դիք։ Ուստի Վահունին թուի նշանակել աստուածեան կամ աստուծոց նուիրեալ ցեղ։

Խորենացին, ինչպէս տեսանք էջ 122՝ զՎահագն կը համարի որդի Տիգրանայ Հայկազնոյ, և ասէ թէ այս Վահագնի վրայ շինուած էր «Երկնէր երկինն», որ կ'երգուէր բամբռամբ ի ժամանակս իսկ Խորենացւոյն.—«զայս երգելով ոմանց բամբռամբ՝ լուաք իսկ ականջօք մերովք»։ Այս հաւանական է, քանզի ըստ Բուզանդայ, որպէս յիշեցաք այլուր՝ Հայք «սիրէին զվիպեանց երգս առասպելաց զվիպասանութեանն, և նմին հաւատացեալք և ի նոյն հանապազոր-

դեալք»։ ԶՎահագնէ ասէին ևս վիպասանք, թէ կռուէր ընդ վիշապաց և յաղթէր նոցա.—«եւ ընդ վիշապաց ասէին յերգսն կռուել նմա և յաղթել»։ Զայս ակնարկէ և Ագաթանգեղեայ հեղինակն, «Վիշապաքաղ» կոչելով զՎահագն։ Բայց վիշապաւ ոչ թէ յաղթանդամ օձ կը հասկնային վիպասանք, այլ այն առասպելեալ վիշապակերպ ոգիներն, որ ըստ հին սնապաշտ կարծեաց Հայոց՝ կը բնակէին յանբնակ տեղիս, ունէին տաճարս ուր կ'արգելուին զթագաւորազունս, այլովքն հանդերձ (Եզնիկ Ա. ԻԵ.)։ Նաև Հերակլէ նահատակութեանց նմանը կը պատմէին զՎահագնէ.—«կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանցն նմա երգէին»։ ԶՎահագն աստուածացուցեալ էին ոչ միայն Հայք, այլ և Վիրք, որ կանգնեալ զանդրի նորա պատուէին զոհիւք.—«այլ ասէին զսա և աստուածացուցեալ, և անդ յաշխարհին Վրաց զսորա չափ հասակի կանգնեալ պատուէին զոհիւք»։ Վահագն էր հաւանականապէս, ինչպէս կ'երևի Երկնէր երկնէն՝ այլաբանական օրինակ արեգական, ինչպէս Աստղիկ, միւս ևս աստուածութիւն Հայոց, «սենեակ Վահագնի կարդացեալ» ըստ Ագաթանգեղոսի՝ էր գէճ և փառաշուք պատկեր լուսնի, ընդ որում զոյգ կը պաշտուէր Վահագն իբրև սեղեխ նորա յԱշտիշատ Տարօնոյ։ Այսչափ տեղեկութիւն բաւական է ցուցանել, թէ չէր պատմական անձ Վահագն, այլ հին աստուածութիւն Հայոց. ուստի և քուրմք նորա Վահունիք՝ շատ աւելի հին էին քան զոր կարծէ Խորենացին, թերևս այնչափ հին, որչափ էին երեքին աստուածք Հայոց, Վահագն, Աստղիկ և Անահիտ, որոց էին Վահունիք պաշտօնեայք։ Վահունիք ջնջուած կը թուին ի սկզբան դարձին Հայոց առ Տրդատաւ, որպէս պատմէ Ագաթանգեղոս.— «Եւ կոտորեցան մարդիկ պաշտաման քրմութեան որ ի տեղւոջ անդ էին (յԱշտիշատ)» (Ագաթ. ՇԺԵ.)։ Իսկ որդիք նոցա առնուեցան ի դպրոցս ժառանգաւորաց ըստ նոյն Ագաթանգեղեայ.—«Տայր հրաման թագաւորն Տրդատ . . . զբազմութիւն մանկտւոյ ածել յարուեստ դպրութեան, և կարգել ի վերայ հաւատարիմ դպրապետս, առաւել զազգն պղծագործ քրմացն, զմանկունս նոցա ժողովել յարժանաւոր տեղիս դասս դասս» (Ագաթ. ՇԻ.)։

50. Այսոքիկ են ահա Հայաստանեայց նախարարութեանց «ուստրն և գիարդն» զոր կը խոստանար տալ մեզ Խորենացին յունական պատմութիւններէ։ Ի պատմութեան աստ Խորենացւոյն զնախարարութեանց կան ընդհանուր տեղեկութիւններ, որ կրնան համարուիլ պատմական, և զորս դիւրին էր Խորենացւոյն առնուլ ոչ թէ այն անանուն յունական պատմութիւններէն, այլ իւրոյ ժամանակին ստոյգ կամ սխալ աւանդութիւններէն. զոր օրինակ, թէ

նախարարութեանց շատերն ի Հայկայ էին, (Հայկաւ պարտ է իմանալ ժամանակ Հին Արարատեան թագաւորութեան), և թէ ցեղերէն ոմանք յօտար գաղթականութեանց կը սերէին, ինչպէս Արծրունիք՝ յորդւոց Սենեքերիմայ, Բագրատունիք և Գնթունիք՝ յեկաց Պաղեստինացւոց։ Բայց չենք կրնար Խորենացւոյն երկրորդ գրոց Է. և Ը. գլուխներն ամբողջ, կամ ինչպէս Խորենացին կ'անուանէ, այն գրուածը «մեծ և հաւաստի պատմութեամբ լի» ընդունել իբրև ստուգիւ պատմական, հայեցեալ յանստուգութիւն անձին Վաղարշակայ, ընդ որում կապեալ է այն գլուխներուն պատմութիւնը, պատմութիւն մը՝ որ մեծաւ մասամբ հիմնուած է աւանդներուն յարմարութեան կամ բռնազբօսեալ ստուգաբանութեանց վրայ, քան ստոյգ պատմական աղբերաց։

Արդարև կ'երևի, թէ անդէն իսկ առ Խորենացւով կային ի մէջ Հայոց յոյն և պարսիկ լեզուաւ ոչ սակաւ գրեան։ Խորենացին յԳ. գլուխ առաջին գրոցն, յետ մեղադրելոյ զնախնիս մեր, մանաւանդ զթագաւորս, թէ անփոյթ եղեն աւանդել յետնոց զպատմութիւն իւրեանց ժամանակին և գործոց՝ ասէ. Թերևս ասիցէ ոք թէ ազգը գիր և դպրութիւն չունէր յայնժամ, և չկրցաւ ոգի տանել ստէպ պատերազմներէ։ Բայց այս չէ ճշմարիտ, քանզի եղան առանց պատերազմի ժամանակներ, և կար գիր Պարսից և Յունաց, որով այժմ կը գտնուին առ մեզ գիւղից և գաւառաց, նաև առանձին տանց, դատերու և դաշանց վերաբերեալ անթիւ գրեան, մանաւանդ ժողովրդեան ազատ կոչուած մասին մէջ.—«Այլ ասիցէ ոք արդեւք, վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէսպէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի անհետ ի վերայ գային։ Այլ ոչ արդարև այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանի և միջոցք լեալ պատերազմացն և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, եւս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցայց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն»։ Բայց այն «անբաւ գրուցայց մատեանք», զորս յիշէ Խորենացին՝ քաղաքային և առանին պիտոյից վերաբերեալ օրըստօրական գրուածներ էին, ոչ թէ ցեղերու ծագման և յաջորդութեան վերաբերեալ պատմական յիշատակք, ինչպէս յայտնի է նմին իսկ ի Խորենացւոյն, որ յետ ասելոյ սակաւիկ մի յառաջ, թէ «Ամենուն յայտնի է մեր թագաւորաց և նախնեաց տխմարութիւնն և անուսումնութիւն, քանզի թէպէտ փոքր ազգ եմք և տկար և ստէպ նուաճեալ ընդ այլովք՝ կը գտնուին սակայն և առ մեզ գործեալ ոչ սակաւ արութիւնք

արժանի գրոց յիշատակի. բայց ոչ ոք յառաջնոց պարտ համարեցաւ անձին աւանդել զայնոսիկ ի գիր»՝—կը յաւելու ի վերջ կոյս նորին գլխոյ. «Կը զարմանամ սակայն ընդ հանճար քո (իմա՝ Սահակայ Բագրատունւոյ), քանզի ի սկզբանէ մինչև ցայժմ առաջին եղար ձեռն արկանել զայսպիսի մեծ գործոյ, առաջարկելով մեզ գրել յօգուտ ազգին զպատմութիւն թագաւորաց մերոց և նախարարութեանց, թէ ուստի՛ են նոքա և ի՛նչ իւրաքանչիւր ոք գործեց, ո՛ր ցեղերն են բնիկ և բնտանի և ո՛յք օտար և եկամուտ, զամենայն պատմել կարգաւ ի ժամանակէ անտի աշտարակաշինութեան մինչև ցայժմ։ Բայց կը հարցունեմ. *Միթէ մատեա՞նք կան ինծ մօտ, կամ դպրութիւնք քոց հայրենեաց* (Հրէից), ըստ բանին Յոբայ, որպէս զի Հրէից պատմագիրներուն պէս, վերուստ ի վայր առ քեզ իջեցունեմ, կամ ի քէն և յայլոց սկսելով հանեմ ի վեր. բայց զխարդ և իցէ՝ սկսիմ, թէպէտ մեծ ջանիւ, միայն թէ շնորհակալութեամբ ընդունուի աշխատութիւնս»։ Ահա բուն բանք Խորենացւոյն. «Ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոց առ ի յիմաստն աղամարութիւն և անկատարութիւն ոգւոյն բանականի։ Զի թէպէտ և եմք ածու փոքր և թուով յոյժ ընդփոքու սահմանեալ և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի, զորոց և ոչ մի ոք ի նոցանէ պէտք անձին կալաւ մատենագրել. . . . Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն, որ յիսկզբանցն մերոց ազգաց մինչև ցայժմուս միայն գտար զայսպիսւոյ մեծ իրէ բուռն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյս առաջի արկանել՝ երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւն, ճշգիւ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից, թէ ո՛վ յումմէ, և զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ո՛վ ոք ի ցեղիցս որոշելոց բնտանի և մերազնեալ և ո՛յք ոմանք եկք բնտանեցեալք և մերազնացեալք, և զգործս և զժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել՝ ի ժամանակէ անկարգամբարտակին շինուածոյ մինչև ցայժմ : . . . Առ որ այսչափ միայն ասացից. Միթէ մատեա՞ն մերձ կայցէ ինձ, որպէս ասէ Յոբ, կամ դպրութիւնք քոց հայրենեաց, որովք նմանագոյն արդեւք Եբրայեցւոցն պատմագրաց՝ ի վերուստ ի քեզ իջուցանեմ անսխալ, կամ ի քէն և յայլոց սկսեալ՝ անդր ի վեր հանիցեմ ի սկիզբն։ Բայց սակայն սկսայց, թէպէտ և ջանիւ. միայն թէ և շնորհակալ ոք մերոց գտանիցի լեալ աշխատութեանց»։

Մեր ծերունի պատմիչը կը պահանջէ ի մէնջ յարգել զիւր աշ-

խատութիւն. բայց ինչ յարգ կրնայ և պարտի ընծայուիլ պատմագրի մը, որ թէև ծանր և մեծարոյ՝ առանց ունելոյ հին յիշատակարան կամ գիր, կը դնէ մեր առջև աղօտ հնութեան վերաբերեալ իրեր՝ զորս կը ջանայ հիմնել անուանց պիտակ ստուգաբանութեան կամ խաղերու վրայ միայն։

Թէպէտ չենք գիտեր Արծրունի, Գնունի, Սպանդունի, Հաւենունի, Սղկունի կոչմանց պատմական ծագումը՝ չենք կրնար ընդունել սակայն, թէ առաջին երկուքը կ'ելլեն արծուի և գինի բառերէն, կամ թէ Սպանդունին է սպանդ բառէն, մինչ ունինք նոյն արմատով ուրիշ անուններ, ինչպէս Սպանդարան և Սպանդարատ, մին՝ գաւառի, և միւսն անձի անուն. ևս աւելի անտեղի է Հաւենունին՝ բազէիւք թռչուն, և Սղկունին՝ սլաքաւ քօշ որսալէ հանել։ Անիրաւ կասկած չէ զՇարաշան կարծել նմանութիւն Սարասար անուան, որպէս և զԱռանն՝ Աղուան անուան. իսկ Գուշար՝ յայտնի իսկ Գուգարն է։ Անուան մը տառերուն փոփոխութեամբ կամ շըրջմամբ նոր անուն կազմելու օրինակ առ Խորենացւոյն արդէն տեսանք, ինչպէս Գոմերն ու Թիրասը տառադարձութեամբ եղած Մերոգ, Սիրաթ (տես էջ 133)։

Վերջապէս, զո՛ր օրինակ Վաղարշակայ պատմութեան առաջին, աշխարհակալութեան մասը՝ նոյնպէս այս երկրորդ, վարչական և օրէնսդրական յօրինուածութեան մասը՝ չունի լի և լի պատմական հաստատութիւն։ Անաչառ դատաստանաւ անհնար է մեզ նախարարութեանց հաստատութեան պատմութիւնն ի ձեռն Վաղարշակայ, իբրև առաջին Արշակունի թագաւորի, ընդունել այլազգ՝ բայց եթէ մեծաւ մասամբ իբրև հայրենասիրական հնարք, որով սրտառուչ մատենագիրն կամի յերեսս հարկանել նախարարաց զապերախտութիւն նոցա, որ ոչ սակաւ նպաստ եղան ի բարձումն թագաւորութեան Արշակունի ցեղէն, որում ըստ պատմութեան նորա, պարտական էին նոքա զիւրեանց գոյութիւն և իշխանութիւն։

51. Տարակուսելի է դարձեալ, թէ այնչափ պաշտօնեաներ ունէին Արշակունի թագաւորք։ Թագադիր ասպետութիւնն սեպհական էր Բագրատունի ցեղին, այնպէս որ յետ դադարելոյ անգամ թագաւորութեան արարողութեան, առ քրիստոնէութեամբ, Բագրատունիք պահեցին տիտղոսը։

Նոյնպէս մաղխազութիւնը, որ թուի նշանակել թիկնապահութիւն՝ յատուկ էր Խոռխոռունեաց։

Երևելի պաշտօն էր նաև սպարապետութիւնն, բայց մասնաւոր ցեղի մը յատուկ չէր։ Սպարապետութիւնն ի սկզբան վարած կը թուին Բագրատունիք հանդերձ ասպետութեամբ (Խոր. Բ. Խէ,

ԾԳ.)։ Տրդատ սպարապետութիւնը տուաւ Արտաւազդայ Մանդակունւոյ, դայեկորդւոյ իւրում, որ փախուցած էր զնա, ըստ Խորենացւոյն, յետ մահու հօր նորա Խոսրովու ի դուռն կայսեր (Խոր. Բ. ՀԷ, ՁԲ.)։ Ագաթանգեղոս ասպետութեան և սպարապետութեան իշխաններն ուրոյն ուրոյն կը յիշէ։ Առ յաջորդօք Տրդատայ, գրեթէ մինչև ի բարձումն թագաւորութեան Արշակունեաց՝ Մամիկոնեանք վարեցին այս պաշտօնը։ Երևելի պաշտօն էր նաև հազարապետութիւնը, որ նոյնպէս յատուկ չէր մասնաւոր ցեղի մը։ Հազարապետն թուի թէ էր վերակացու եկամտից, և հոգ կը տանէր մանաւանդ մշակութեան և բերոց երկրին։ Բուզանդ այս պաշտօնը կ՚անուանէ «աշխարհատես խնամակալութիւն, աշխարհաշէն, աշխարհատած դեհկանութիւն» (Բուզ. Գ. Բ.), և զԳնունիս, որոց յանձն էր առ Արշակաւ թոռնորդւով Տրդատայ գործ հազարապետութեան՝ կ՚անուանէ «շինականաշէն»—«շինականաշէն ազգն Գնունեաց, հազարապետն ամենայն երկրին»։ Տրդատ այս պաշտօնը տուած էր Օտայի Ամատունւոյ, ազատչին քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ (Խոր. Բ. ՁԲ.)։ Առ Տիրանաւ որդւով Խոսրովու հազարապետ էր Վաղարշ իշխան Անձտայ (Բուզ. Գ. ԺԲ.)։ Ի վերջ կոյս թագաւորութեանն Արշակունեաց զայս պաշտօն վարեց Վահան Ամատունի (Խոր. ԳԿԷ.)։

Կը յիշուին նաև տակառապետք և սենեկապետք Արշակունի թագաւորաց։ Մեծին Տիգրանայ տակառապետն էր Գնէլ Գնունի (Խոր. Բ. ԺԹ.), որ Երուսաղէմ գալով գերի բռնեց գաւով զՀիւրկանոս քահանայապետ Հրէից։ Իբրև սենեկապետ Տիրանայ, որդւոյ Խոսրովու Կոտակայ կը յիշուի Փիսակ Սիւնի, կատաղախօս, շնաբերան, շորիկ, շոգմոգ, տիրանենգ, տիրամատնիչ՝ ըստ Բուզանդայ (Գ. Ի.), վասն զի մատնեց զՏիրան ի ձեռս Պարսից, որ կուրացուցին զնա։

Յայտնի չէ, թէ ունէ՞ին Արշակունիք յատուկ հանդերձապետ (զգեցուցանող)։ Բուզանդ յիշելով տուն պատմուճակաց՝ կը յաւելու թէրևս մեկնութիւն. «Ուր թագ արքունի դնէին», այսինքն տեղի թագադրութեան, կամ մանաւանդ տեղի պահելոյ զթագն արքունի։ Ապստամբ մարդպետն Դղակ սպանաւ հրամանաւ Պապայ ի տան պատմուճակաց.—«Այս Դղակ, ասէ Բուզանդ, էր այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ ոսկերօք. սակայն ասպարակիր մարդկանն պատեցին զնովաւ, և բարձին զնա վերըմբարձ, և տանէին զնա մինչև ի դուրս տաճարին (սեղանատան) արքունի։ Իբրև ետես թագաւորն թէ անդր տանէին՝ ասէ. Մի՛ այսր, մի՛ այսր, այլ մուծէք զդա ի տուն պատմուճակացն։ Եւ զօրք ասպարակրացն

մուծին զնա ի ներքս ի տուն պատմուճակացն կապեալ ձեռս յետս, այսինքն ուր թագ արքունի դնէին. և անդէն խօսել սկսաւ Դղակն և ասէ. Ասացէք ցարքայ, գոգէք. Ես այս մահու արժանի էի, բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել, և ոչ ի տան թագաց, և զքո թագդ արեամբ շաղախել» (Բուզ. Ե. Զ.)։ Պատմուճակաց տունը թերևս էր նաև տուն հանդերձից. բայց յատուկ հանդերձապետ արքայի չիք ուրեք յիշեալ։

Մեծ պաշտօն էր մանաւանդ մարդպետութիւնն, ոչ միայն առ հեթանոս թագաւորօք, այլ և յետ քրիստոնէութեան։ Առ Տրդատաւ իսկ կը յիշուի «մարդպետութեան իշխան», որ և էր մին ի գլխաւոր իշխանաց, որ տարին զԳրիգոր ի Կեսարիա վասն ձեռնադրութեան (Ագաթ. ՇԾԲ)։ Սոյնպէս առ Արշակաւ, որդւով Տիրանայ, զմեծն Ներսէս ձեռնադրութեան տանող իշխանաց գլխաւորն էր Հայր մարդպետն։ Ներսէս որ հեթանոսական սովորութեանց դէմ այնպէս սաստկութեամբ կը կռուէր՝ ոչ միայն հակառակ չէր այս սովորութեան, այլև կը պատուէր զմարդպետս։ Երբ անգամ մը Հայր մարդպետն յայցելութիւն եկած էր իւր երկիրներուն ի Տարօն, մօտ ի մայր եկեղեցին Աշտիշատու՝ մեծն Ներսէս որ կը գըտնուէր հոն՝ ի ճաշ հրաւիրեց ներքինապետը.—«Հրաման տայր, ասէ Բուզանդ, պատրաստել ճաշ եկելոցն»։ Բայց ներքինին, ըստ Բուզանդայ, յայտնեց զչարակամութիւն իւր.—«Մինչդեռ պատրաստէին, ասէ, նմա արժանի աւագօրէն սպաս՝ նա եկանէր յեպիսկոպոսական կայենէն յապարանիցն մինչև ի վկայարանս սրբոցն, ի մեծ և ի գեղեցիկ հրապարակին զերթևեկս առեալ շրջէր։ Տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շքեղութեան ի բարձրաւանդակ տեղեացն, և զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր, և չարակնեաց։ Ապա եմուտ բազմեցաւ յուտել և յըմպել. իսկ յորժամ արբեցաւ սխալակեցաւ՝ սկսաւ ներքինին խօսել բանս հպարտս և ամբարտաւանս յարբելեաց. դնէր թշնամանս Տրդատայ արքայի, ազգի և տակի և տոհմի Արշակունեաց թագաւորացն Հայոց։ Զիմրդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է, և ոչ արանց։ Քանզի զսուրբ տեղեօքն քամակեալ արհամարհէր և ասէ. Զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի։ Եթէ ես Հայր մարդպետ կենդանի լիցիմ և առ թագաւորաւն հասից՝ որ ինչ աստ իցէ, զայն ի բաց փոխեցից, և զտեղիս արքունի սենեակ կազմեցից» (Բուզ. Դ. ԺԴ.)։

Այս ամենայն պաշտամունք կը յիշուին ի մատենագիրս մեր, որ յառաջ քան զԽորենացին, բայց թէ կային նաև յատուկ ցեղե-

րէ պաշտօնեայք ի վերայ որսոց, կուտից, սպասուց, և գահուց, զենարանաց, ամարանոցաց, մինչև քօշ և հաւ որսալու անգամ՝ չենք գտներ ուրեք յիշեալ ի պատմութեան մերում ոչ յառաջ և ոչ յետոյ քան զԽորենացին։ Ընդհանրապէս պաշտօն ունեցող ցեղեր առ Ագաթանգեղոսի և Բուզանդայ կը յիշուին պաշտօններուն անուամբ—«իշխան թագակապ ասպետութեան», կամ «իշխան ասպետութեան տան», «իշխան սպարապետութեան տան», «իշխան մաղխազութեան տան», «իշխան մարդպետութեան իշխանութեան», «իշխան հազարապետութեան»։

52. Ըստ Խորենացւոյն՝ Վաղարշակ նաև ուրիշ կարգեր կը հաստատէ, զոր օրինակ կ'որոշէ «ժամս ելեմտից և խորհրդոց և խրախճանութեանց և զբօսանաց» ի տան թագաւորին. կը կարգէ զինուորութեան աստիճաններ՝ «առաջինս և երկրորդս և երրորդս և որ ի կարգին». «յիշեցուցանողս երկուս *ի ձեռն գրոց*», մին՝ բարւոյ, և միւսն՝ վրէժխնդրութեան. և «իրաւարարս ի տան արքունի, ի քաղաքս և յաւանս». կու տայ հրաման քաղաքացւոց՝ չբռնանալ ի վերայ գեղջկաց—«մի կարի առ գեղջկօքն պերճանալ», այլ *եղբայրաբար վարուիլ*, և գեղջկաց՝ պատուել զքաղաքացիս *որպէս զիշխանս*. կը դնէ օրէնս՝ երէց որդւոց միայն իբրև ժառանգ մնալ առ արքայի, իսկ մնացեալ ուստերաց և դստերաց բնակել այլուր (ի գաւառս Հաշտենից)։ Զարմանք են, զի Խորենացին բաց ի կարգաց և հաստատութեանց, զորս յիշեցաք մինչև ցայժմ և որ պատմութեան մը վերացեալ և ընդհանուր մասը միայն կը կազմեն, և բաց յառաջին պատերազմէն, որ ընդ արևմտեայս (էջ 237)՝ ուրիշ քաղաքական դէպք չգտնելով ի յիշել յայնմ ընդարձակ տէրութեան և յերկար ժամանակի անդ քսան և երկուց ամաց, զորս կ'ընծայէ Վաղարշակայ՝ կու տայ նմա մեռանել խաղաղութեամբ ի Մծբին նախ քան զՔր. իբր 144-ին կամ 131-ին, ըստ իւրում ժամանակագրութեան»։

Խորենացւոյն երկրորդ դպրութեան Ը. գլխոյն վերջը կ'աւարտի Վաղարշակայ պատմութիւնը, և յաջորդ հինգ գլուխներն, այսինքն իններորդէն մինչև երեքտասներորդը (Թ.—ԺԳ.) կը խօսին զգործոց Արշակայ և Արտաշիսի։ Պատմութիւն այս երկուց անուանեալ յաջորդաց Վաղարշակայ, ինչպէս տեսանք էջ 212—219, ոչ այլ ինչ է եթէ ոչ պատմութիւն արշաւանաց Կիւրոսի և յաջորդաց նորա Դարեհի և Քսերքսի, յարմարցուած ի վերայ Արշակայ և Արտաշիսի։ Ո՞վ չի տեսներ, թէ Արտաշիսի ի տապակ հանելն զԿրեսոս, դէպք մը, որ արդէն իբր երկու հարիւր յիսուն տարի առաջ եղած կը պատմուի, արտասուելն նոյն Արտաշիսի ի վերայ անցաւոր փառաց

աշխարհի ի տեսիլ բազմութեան զօրուն, ընկենուլն ի ծով Պոնտացւոց արձանը, փոխելն զծով ի ցամաք, այն է անցանելն կամրջով ընդ Հելլեսպոնտոս, հիացուցանելն զՀելլենացիս երթալով մինչև յԱտտիկէ, և վերջապէս կորակոր փախուստն ճանապարհօք՝—միևնոյն դէպք են, զորս կը պատմեն ուրիշ պարագաներով զԿրիւսոսէ և զՔսերքսէ Հերոդոտոս և Դիոդորոս Սիկեղացի։ Կրեսոսի բռնուիլ և ի խարոյկ հանուիլն, և կարդալով զանուն Սողոնի՝ ի գութ շարժելն զԿիւրոս և ազատիլն, ինչպէս նաև ի ծնէ համր որդւոյն յանկարծ խօսելն ի տեսանելն զհայր իւր ի վտանգի սպանման, և ուրիշ սոցին նման պարագաներ՝ վէպք են, որովք յունական հանճարը զարդարած է Կրեսոսի պատմութիւնը, և զորս Հերոդոտոս կը յիշէ իբրև զրոյց։ Ուստի ի զուր է Խորենացւոյն, զրոյցը պատմութիւն կարծելով, իբրև Արտաշիսի ձեռօք կատարուած, ջանալ հաստատել վկայութեամբ Պոլիկրատէս, Եւագարոս, Կամադրոս, Փղեգոնիոս անուն անձանց, իբրև երևելի պատմագրաց, մինչ ոչ միայն մատեանք սոցա անյայտ են, այլ և անուն և ժամանակն հազիւ նշմարելի ի պատմութեան։ Արդարև կը գտնենք հարևանցի իմն յիշուած Պոլիկրատ և Եւագորաս անուն աննշան հեղինակներ, իբրև հռետոր մանաւանդ քան պատմագիր, յորոց կան ճարտասանական հատակոտորք առ Սուիտասայ և այլոց։ (Տես Վիքդ. Լանկ. հաւաք. Հայ. պտմգր. Ա. 389, 390)։ Երրորդը, Կամադրոս՝ բոլորովին անծանօթ է։ Իսկ Փղեգոնիոս, եթէ կարդանք Փղեգոն՝ է Բ. դարու պատմագիր, յորմէ կան ճառք ինչ։ Բայց ով ոք իցեն այն յոյն մատենագիրք զորս յիշէ Խորենացին՝ անտարակոյս գիտէին զՀերոդոտոս, և անհնար էր նոցա զ'ի վաղուց պատմեալն ի Հերոդոտեայ զԿիւրոսէ՝ առնուլ ի վերայ Արտաշիսի։ Դիտողութեան արժանի է մանաւանդ, զի վկայութիւնքն զորս բերէ Խորենացին ի հաստատութիւն ունելոյ Արտաշիսի զԿրեսոս, մանաւանդ երեքն, Պոլիկրատէսին, Եւագարոսին և Փղեգոնիոսին՝ գրեթէ միևնոյն իմաստը և ոճն ունին, մինչև յիրաւի է կարծել, թէ չորեքին ևս միևնոյն գրչէ ելած են, ըստ ձևոյն ամենևին նման ակադեմական ճառի մը, քան պարզ պատմական գրուածոյ։ Միևնոյն դէպքը, հակառակ Հերոդոտոսի, երեք կամ չորս պատմագրէ գրեթէ նոյն ձևով գրուած չենք կրնար հաւատալ։ Խորենացին թերևս այս ոճը կ'ակնարկէ յասելն, թէ «Բազումք են, որ ասեն զԿրիւսոս մերոյ Արտաշիսի կալեալ, և ոճով իմն պատմեն, ես հաւանիմ»։ Բայց այն ոճն է մանաւանդ, որ կու տայ կասկած նենգութեան։

Ըստ Խորենացւոյն՝ Արտաշէս կ'առնու նաև նախագահութիւնն ի Պարթևաց, չինէ իւր արքունիս ի Պարսս, և կը հարկանէ դրամ

իւրով պատկերաւ: Արտաշիսի անուամբ դրամ գտնուած չէ սակայն մինչև ցարդ:

53. Խորենացին յետ յիշելոյ ի վախճանի Թ. գլխոյ երկրորդ գրոցն զսպառել պատմութեան Մար Իբասայ—«Աստանօր սպառին բանք ծերունւոյն Մար Իբաս Կատինայ»՝ կը յաւելու. «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսեպոս և Հիւպողիտոյ և այլք բազումք ի Յունաց: Քանզի նա (Ափրիկանոս) բովանդակ փոխադրեաց (թերևս կամի ասել թարգմանեաց), որ ինչ ի քարտէսս (ի մատեանս) դիւանին (գրատան) Եդեսիայ յաղագս թագաւորացն մերոց պատմէր. որ մատեանքն (դիւանին Եդեսիոյ) ի Մծբնայ էին փոխեալ անդր»: Ըստ Խորենացւոյն՝ Ափրիկանոս առած կամ թարգմանած էր նաև Պոնտոսի Սինոպ քաղաքին մեհենական պատմութիւններէն: Թէ ինչպէս կրնայ վկայել Յովսեպոս Ափրիկանոսի, որ իբր երկերիւր ամօք յետոյ է քան զնա, կամ թէ ո՛վ են Հիւպողիտայն և այն բազումք ի Յունաց՝ չենք գիտեր:

Յուլիոս Սեքստոս Ափրիկանոս, յոյն մատենագիր Գ. դարուն, իբր 230-ին դառնալով ի հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն՝ գրեց յԱդամայ մինչև ցՀելիոգաբաղոս, այսինքն մինչև 217, համառօտ ժամանակագրութիւն մը, որոյ հատակոտորք միայն կան առ Եւսեբեայ և առ այլս ոմանս ի հարց եկեղեցւոյ: Թէ Ափրիկանոս առած էր ինչ ինչ յԵդեսիոյ դիւանէն, թերևս նաև ի մեհենական պատմութեանց Սինոպայ (եթէ կար այնպիսի պատմութիւն ի Սինոպ)՝ առ այս չունիմք ինչ ասել: Բայց թէ ի քարտէսս, այսինքն ի մատեանս Եդեսիոյ դիւանին կը պատմուէին գործք առաջին թագաւորաց մերոց՝ այս սխալ ենթադրութիւն է Խորենացւոյն: Արդարև Խորենացին սակաւ ինչ յետոյ ի վկայութենէ Եւսեբեայ կամի հաստատել, թէ ի դիւանին Եդեսիոյ կային գործք առաջին թագաւորաց մերոց մինչև ցԱբգար և զկնի Աբգարու մինչև ցԵրուանդ.—«Եկլեսիաստէ գիրք (Եկեղեցական պատմութիւն) Եւսեբի Կեսարացւոյ . . . յառաջին հագներգութեան (դպրութեան) յերեքտասաներորդ թուին վկայէ յԵդեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջին թագաւորացն մերոց մինչև ցԱբգար և զկնի Աբգարու մինչև ցԵրուանդ» (Խոր. Բ. Ժ.): Եւսեբիոս յիշելով զառաքումն Թադէոսի յԵդեսիա ի Թովմայէ՝ ասէ.—«Ի յիշատակարանս հասարակաց (Եդեսիոյ), յորս վաղեմի անցք պատմութեան քաղաքին եւ գործք քաջութեան Աբգարու դրոշմեալ կային՝ գտաք և զայսոսիկ (զպատմութիւն գալստեան Թադէի և որ ի կարգին) պահեալ մինչև ի մեր իսկ ժամանակս»: Հին հայերէն թարգմանութիւնն ունի

այսպէս. «Ի քարտէսս որ կային անդ (յԵդեսիա), էր գրեալ *ամենայն ինչ որ միանգամ՝ գործեցաւ յառաջնոց անտի մինչեւ ցԱրգար*»։ Խորենացին այս թարգմանութեան նայելով կը կարծէ, թէ Եւսեբիոս բոլոր Հայ թագաւորաց գործերուն համար ասէ, թէ կը գտնուէին յԵդեսիա, մինչ բանք Եւսեբեայ են զվաղեմի պատմութենէ *քաղաքին* Եդեսիոյ և զգործոց *Արգարու* միայն։ Այսպէս կը ջրէ փաստ Խորենացւոյն, այն է Եւսեբեայ վկայութիւնը, թէ «յԵդեսիա դիւանին էին ամենայն գործք առաջին թագաւորացն մերոց մինչև ցԱբգար և զկնի Աբգարու մինչև ցԵրուանդ». կը ջրէ նաև այն, թէ Ափրիկանոս «բովանդակ փոխադրեաց (թարգմանեաց) որ ինչ ի քարտէսս դիւանին Եդեսիայ յաղագս թագաւորացն մերոց պատմէր»։ Բայց թէև գտնուէր ի ժամանակագրութեան Ափրիկանոսի գործք առաջին թագաւորաց մերոց՝ Խորենացին չէր կրնար ունենալ զԱփրիկանոս, որոյ ժամանակագրութիւնն կորսուած էր յառաջ քան զհինգերորդ դար. քանզի զԱփրիկանոս կոչող վերջին մատենագիր է Եւսեբիոս. այնուհետև զԱփրիկանոս կոչող մատենագիրք յԵւսեբեայ առնելով կը կոչեն, ուստի և Խորենացին, ինչպէս զԱբիդենոս և զայլ հին մատենագիրս Յունաց (տես էջ 134)՝ նոյնպէս զԱփրիկանոս յԵւսեբեայ միայն գիտէր։

Խորենացին, որ զՄծբին կը համարի մայրաքաղաք առաջին թագաւորաց Հայոց Վաղարշակայ և յաջորդաց նորա՝ զմատեանս դիւանին Եդեսիոյ կը դնէ փոխեալ ի Մծբնայ յԵդեսիա։

Խորենացին կը յաւելու նաև զիւր վկայութիւն.—«Մի ոք, ասէ, անհաւատասցի, քանզի մեզէն իսկ ականատես եղաք այն դիւանին»։ Յայտնի չէ սակայն, թէ դիւանի՞ն ականատես եղած էր Խորենացին, թէ դիւանին մատեաններուն՝ յորս գրուած էին ամենայն գործք առաջին թագաւորաց մերոց։ Եթէ մատեաններուն ականատես եղաւ, ընդէ՞ր յետոյ ասէ. «Այժմ *կարծեմ* գտանի պահեալ ի նոյն քաղաքի», և փոխանակ առնլոյ զիւր պատմութիւն յԱփրիկանոսէ, ընդէ՞ր չառնուր ուղղակի Եդեսիոյ դիւանէն։

Վերջապէս բոլոր պարագայք պատմութեան Խորենացւոյն ըզծագմանէ Արշակունեաց և զգործոց ընծայելոց Վաղարշակայ և երկուց յաջորդաց նորա՝ ունին այնպիսի նշաններ, որ համարձակութիւն կու տան մեզ ասել, թէ մեր ծերունի պատմիչն, արդարև բազմարդիւն և նշանաւոր ի մատենագիրս մեր՝ կը ճարտարէ մանաւանդ քան կը պատմէ զնախնական ժամանակ պատմութեանը մերոյ։

ԳԼՈՒԽ Բ.

ԿՐՕՆՔ ԵՒ ԼԵԶՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅՈՑ

1. Կռապաշտութիւն առ նախնի Հայս: Անահիտ, Վահագն եւ Աստղիկ: 2. Անահիտ, բուն ազգային դիք: 3. Անահտայ պաշտօնն ի Հայս: 4. Այս պաշտաման նմանութիւնն ընդ պաշտաման Ափրոդիտեայ: 5. Դիցապաշտութեան յունական ձեւն առ Արշակունեօք: 6. Բագ, Վան, Դիք—հին կրօնական բառեր: 7. Զանդիկ կրօնք առ Հայս: 8. Զանդիկ կրօնք ի Հայս առ Մարօք: 9. Հմայութիւն, ապացոյց ոգիներու հաւատոյ. Հայական սօսիք, Արմաւիր: 10. Այլ տեսակք հմայութեան ի Հայս հեթանոսութեան ժամանակէն: 11. Ոգիներու երեւոյթք ըստ նախնի Հայոց. Յուշկապարիկ, Պայ, Առլէզ, եւայլն: 12. Արտաւազդայ առասպելը: 13. Կրօնք արեւելեան եւ արեւմտեան Հայոց: 14. Պէսպէս կարծիք զծագմանէ Հայերէնի. Բիդդէր: 15. Հայերէնն հնդեւրոպական լեզուաց ցեղէն է: 16. Ապացոյց ի բառից եւ ի քերականական ձեւոց: 17. Հայերէնն իբրեւ ուրոյն արմենական ճիւղ յիւր վերջին կատարելութիւն հասած առ Թարգմանչօք:

1. Զհին կամ զնախնական կրօնից Հայոց չունիմք ինչ վկայութիւն ի պատմութենէ: Եթէ պարտ իցէ հաւատալ ընթերցուածոյ բեւեռագրաց՝ Հայք շատ հին ժամանակ ունէին կուռս: Սարեւաքինի արձանագրութեանց մէջ Օբէրդ կը կարդայ *Հալտի* եւ *Պակապարղու* անուն կուռք, զորս Սարեւաքին գերի առաւ Ուրարդուոյ (Արարատայ) Ուրսա թագաւորէն (տես էջ 44): Եթէ Օբէրդի ընթերցուածը շիտակ է՝ Հալտի շատ նմանութիւն ունի *Բաղդ* բառին: Բայց թողունք բեւեռագիրները. Անահիտ, Վահագն եւ Աստղիկ, զորս նախնի մատենագիրք մեր նոյն կը համարին ընդ Արտեմեայ, Հերակղի եւ Ափրոդիտեայ (բաղդատէ Ագաթ. ՃԺԳ. ընդ ԺԴ. գլխոյ Բ. դպր. Խոր.), ինչպէս անուններէն յայտնի է՝ բնիկ հայ աստուածներ էին, որոց պաշտօնը շատ հին էր ի մէջ Հայոց, մանաւանդ յարեւմտեան կամ ի ստորին գաւառս—ի Դարանաղի, յԵկեղեաց, ի Դերջան եւ ի Տարօն, յառաջագոյն իսկ քան զԱրշակունիս (տես Խոր. Բ.— ԺԴ.):

2. Ի մէջ այս երից կը թուի առաջին եւ գլխաւոր լինել Անահիտ, որում մեծ տիտղոսը կը տրուէր: Տրդատ ի մէջ այլ յորջորջա-

նաց կու տայ Անահտայ *տիկին*, այսինքն *Թագուհի* անունը, և կ'անուանէ զնա *փառք* ազգին և *կեցուցիչ*.—«Եթէ ոչ առնուցուս, ասէ զԳրիգոր, «յանձն դիցն պաշտօն մատուցանել, մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջ, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ» (Ագաթ. Ե.). և այլուր.—«Թշնամանես զմեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» (Անդ. Զ.)։ Մարթ է ասել, թէ Անահիտ էր բուն ազգային աստուած և պաշտպան Հայոց։ «Ամենայն աստուածք Պարսից, ասէ Ստրաբոն, կը պատուէին ի Մարաց և ի Հայոց, բայց ի Հայոց կը պատուէր մանաւանդ Անահիտ»։ Ուստի Տրդատ ի տալն այլ և այլ յատկութիւնս դիցն՝ Անահտայ կ'ընծայէ խնամակալութիւն, այսինքն տեսչութիւն կամ պահպանութիւն.—«Լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս» (Ագաթ. ԺԲ.)։

Յ. Անահիտ երեք մեհեան կամ պատկեր ունէր ի Հայս. մին յԵրիզա ի գաւառին Եկեղեաց։ Հոս Տրդատ ստիպեց առաջին անգամ զԳրիգոր «պսակս և թաւ ոստս ծառոց» տանել նուէր Անահտական պատկերին։ Այս Անահիտ է, որմէ Արտաշէս Բ. ըստ Խորենացւոյն խնդրեց բժշկութիւն ի վերջին հիւանդութեան իւրում։ Բայց այս կուռքը ոչ միայն Հայոց թագաւորք, այլ և հռոմայեցի կայսերք կը պատուէին մեծամեծ ընծաներով.—«Զոր թագաւորք ամենայն պատուեն, ասէ Տրդատ, մանաւանդ թագաւորն Յունաց» (Ագաթ. Ե.)։ Ստրաբոն յանուանէ կը յիշէ Հայոց այս մեհեանը.—«Հայք, ասէ, այլևայլ տեղեր կանգնած են մեհեան Անահտայ, մանաւանդ յԵկեղեաց»։ Յոյն և հռոմայեցի մատենագիրք Երիզայի Անահիտը կ'անուանեն Տաւրեան Անահիտ։ Կը պատմուի, թէ հին ատենն ի Տաւրիդ, յայժմուն Խրիմ, կար Անահտայ մեհեան, ուր քրմուհի էր Իփիգենիա դուստր Ագամեմնոնի, որ ընդ եղբօր իւրում Ովրեստեայ փախչելով ի Տաւրիտէ՝ բերաւ ընդ իւր Անահտայ պատկերն, որ յերկնից անկեալ կը կարծուէր։ Երկրորդ պատկեր Անահտայ էր յԱրմաւիր։ Բայց այս երկոքին պատկերք ևս բերուեցան ի Յունաց ի Հայս առ Արշակունեօք (Խոր. Բ. ԺԲ, ԺԴ.), ուստի և կրնան նորագոյն համարուիլ և օտար, քանզի էին Յունաց Արտեմիսն, որպէս անուանէ Խորենացին. Ագաթանգեղոսի հեղինակն հայացնելով կ'անուանէ Անահիտ։ Բուն Հայոց Անահիտն էր յԱշտիշատ Տարօնոյ, համակ ոսկի, ուստի և առ Ագաթանգեղեայ կը կոչուի Ոսկեմայր, Ոսկեծին, Ոսկեհատ։ Ղուկուղղոս հռոմայեցի զօրավարն, իբր կէս դար յառաջ քան զՔրիստոս, տեսաւ այս Անահտայ նուիրեալ արջառներ, որ ունենալով գիցուհւոյն

նշանը՝ կ'արածուէին աստ անդ, և ոչ ոք կ'իշխէր մերձենալ ի նոսա։ Ըստ Պլինիոսի՝ Հռոմայեցի զօրավարն Անտոնիոս, սակաւ ինչ յետոյ քան զԼուկուղղոս, Անահտայ այս ոսկի պատկերն տարաւ Հայաստանէն։ Թերևս յետոյ ուրիշ մը դրուեցաւ ի տեղի առաջնոյն, քանզի չորրորդ դարուն սկիզբը, Հայոց դարձին ժամանակ, կար յԱշտիշատ Անահտական ոսկի պատկեր, զոր Լուսաւորիչ կործանեց (Ագաթ. ՇԺԳ.)։

4. Անահտայ պաշտօնն ի Հայս կը թուի թէ էր նման Ափրոդիտեայն Յունաց։ Ստրաբոն, յետ ասելոյ թէ Հայք կը նուիրէին այր և կին գերիներ (hiérodule) Անահտայ՝ կը յաւելու. «Մինչև ցայս վայր չիք տեղի զարմանալոյ. բայց դիցապաշտութիւն Հայոց երթայ անդր ևս, զի սովորութիւն է առ նոսա արանց աւագաց ձօնել դիցն ըդդստերս իւրեանց կուսանս. այլ այս չէ ինչ արգել սոցա, յետ տալոյ զանձինս ի պոռնկութիւն ի մեհեանսն Անահտայ՝ գտանել դիւրաւ արս որ ոչ խղճիցեն առնուլ զնոսա ի կնութիւն։ Հերոդոտոս գրեթէ զնոյն օրինակ պատմէ զաղջկանց Լիւդացւոց։ Բայց դստերք Հայոց այնպէս իմն առատաձեռն են առ որս սիրենն զնոսա՝ մինչև տալ նոցա ոչ ասպնջականութիւն միայն, այլ և պարգևս աւելի քան զոր ի նոցանէն առնուցուն. և այսու յայտ իմն առնել կամին, թէ են յընչեղագոյն տանց՝ որ ոչ թողուն զնոսա կարօտանալ իւիք։ Սակայն ոչ եթէ ում և պատահիցէ շնորհեն նոքա զասպնջականութիւնն, այլ որչափ մարթ է՝ ընդունին զարս, որ հաւասարապատիւ իցեն նոցա» (Ստրաբ. ԺԱ. 15.)։

5. Բայց դիցապաշտութիւնն ըստ յունական ձևոյ ծաղկեցաւ մանաւանդ առ Արշակունեօք, երբ մեծին Տիգրանայ և Միհրդատայ արշաւանաց ժամանակ ի Փոքրն Ասիա և ի Յոյնս՝ ածան ի Հայս երևելիք աստուածոց Յունաց—Դիոս, Աթենաս, Արտեմիս, Հեփեստոս, Ապողոն, Հերակղէս, և զետեղեցան յերևելի քաղաքս և ի գիւղս, ինչպէս յԱրմաւիր, յԱնի, ի Թիլ, յԵրիզա, յԱշտիշատ, ի Բագայառիճ (Խոր. Բ. ԺԲ, ԺԴ.), յորս գտաւ զնոսա Լուսաւորիչն ի սկզբան դարձին Հայոց (Ագաթ. ՇԸ—ՇԺ, ՇԺԴ—ՇԺՋ.)։ Ջերմագոյնք ի դիցապաշտութեան ի թագաւորս Հայոց, որպէս Երուանդ, Արտաշէս, Վաղարշ, մի զմիով ելին յընդունել այս աստուածներն ի քաղաքս իւրեանց և կամ ի շինել և ի նուիրել նոցա քաղաքս և բագինս (Խոր. Բ. Խ, ԽԹ, ԿՋ.)։

6. Առ Արշակունեօք առին Հայք նաև բագ բառը, զոր Ագաթանգեղեայ հեղինակն պարթևարէն կը համարի, և որ ունէր հին հայերէն դիք բառին նշանակութիւնը։ Այս բագ բառէն կազմուած են, ինչպէս յայտնի է՝ բագին, բագարան, բագաւան. վերջինն հայերէն բառով կը կոչուի նաև Դիցաւան.—«Գայր հասանէր (Գը-

րեգոր) ի քաղաքագիւղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթեւական լեզուէն Դիցաւան» (Ագաթ. ՃԺԶ.)։ Եւ այլուր Բագայառիճ անուան համար ասէ նոյն Ագաթանգեղոս. «Գայր հասանէր ի Միհրական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ, ի գիւղն զոր Բագայառիճն կոչեն ըստ պարթեւարէն լեզուին» (Ագ. ՃԺ.)։ Ըստ մեզ՝ այս բագ բառին հայեցի ձեւն է *վահ*, որ կը տեսնուի յանուանս ինչ, որպէս Վահագն, Վահէվահեան, Վահունի, Վահան, և ի յատուկ անուանս ինչ, որպէս Վահրամ, Վահրիճ։ Վահագն, ինչպէս յայտնի է՝ Հայոց Հերակղէսը կամ Արամազդն էր։ Վահէվահեան կը կոչուէր Հայոց հին աստուածներուն—Վահագնի, Աստղկան և Անահտայ նուիրեալ հին երեւելի մեհեանն յԱշտիշատ։ Վահունիք էին քուրմ, և կը թուին այսպէս կոչուած իբրև նուիրական ցեղ։ Իսկ վահան կոչուած է ասպարն, հաւանականապէս վասրն զի յառաջ ժամանակաւ ասպարներուն վրայ կը գտնուէր ընդհանրապէս աստուծոյ կամ դից ուրուք պատկերը։ Այս վահ բառն է վեհ ածականը, զոր յետ անկման լեզուին կը գտնենք գործածուած առ Խորենացւոյն, իբր աստուածային կամ գերագոյն.—«Վեհ ինձ Արտաշէս քան զՄակեդոնացին Աղեքսանդր» (Խոր. Բ. ԺԳ.)։ «Ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն» (Անդ. Ա. Ա.)։

Ինչպէս վահ արեւելեան (Արիական) լեզուաց բագ բառին՝ նոյնպէս հաւանական կ'երեւի թէ *դիք* լծորդ է արեւմտեան (յոյն և լատին) լեզուաց *թէոս* և *տէուս* բառերուն։ Մեր հին մատենագրութեան մէջ, որ քրիստոնէական ժամանակին կը վերաբերի՝ դիք անունը կը տրուի հեթանոս աստուածոց միայն, և թէպէտ ունի անեզական ձեւ, որ կը ցուցնէ թէ բառը ծնունդ է բազմաստուածութեան ժամանակի, ինչպէս Տնոնդոց *էլոհիմը*՝ կը գործածուի նաև իբրև եզակի.—«Կործանեցին զբագինսն Աս *դիցն* Արամազդայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի» (Ագ. ՃԹ.)։ Ասի նոյնպէս «Անահտական դիք», այսինքն Անահիտ կոչուած աստուածուհին, «Տիւր դիք», իբր Ապողոն կամ Հերմէս, «Վանատուր դիք», այն է Արամազդ։ Աստուած բառը, որոյ ծագումն և ստուգաբանութիւն անյայտ է՝ է սակայն բուռ հայերէն, և մեր քրիստոնէական մատենագրութեան մէջ կը տրուի ճշմարիտ Աստուծոյ, թէպէտ, մանաւանդ յոգնակին, կը տրուի նաև հեթանոս աստուածոց կամ դից։ Քրիստոնեայ մատենագիրք մեր սովոր են երբեմն չ մասնկան յաւելուածով ասել չաստուած կամ չաստուածք՝ դիք նշանակութեամբ։

7. Զենք գիտեր սակայն, թէ դիցապաշտութիւն կամ կռապաշտութիւնն ի Հայս, ոչ միայն յունականն, այլև ազգայինն, այն է պաշտօն Վահագնի, Աստղկան և Անահտայ, էին բուն ազգային թէ

եկամուտ։ Կը թուի մանաւանդ, թէ հին Հայք ունէին զանդիկ կամ զրադաշտական կրօնից գլխաւոր վարդապետութիւնը։ Զանդիկ կամ զրադաշտական, այսինքն Արիական ցեղին նախնի կրօնից գլխաւոր վարդապետութիւնն էր՝ երկու սկիզբ դնել, մին՝ բարւոյ, և միւսն՝ չարի։ Բարի և չար ոգիներ դնել, և չարերն առանձին անուամբ *այս* կոչել՝ ըստ Եզնկայ էր ի վաղուց հետէ մին ի գլխաւոր կրօնանական վարդապետութեանց Հայոց.—«Ասի հրեշտակ ոգի . . . , ասի և դև ոգի, այլ ոգի չար . . . զոր ի մեր լեզու *այս* չար ասեմք, որպէս ի խորանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ» (Եզնիկ Ա. ԻԳ.)։ Աներևոյթ վիշապաց հաւատալ էր նոյնպէս, ըստ Եզնկայ (Ա. ԻԷ.), մին ի սնապաշտութեանց նախնի Հայոց, և կ՚ակնարկէ հաւանականապէս Արհմնի կամ Խարամանոյ, այսինքն չար սկզբան վարդապետութիւնը։ Նաև *քաջք* կը նշանակէ առ մեզ ոգիներ, բայց բարի կամ ազնիւ ոգիներ, իբր ռամկօրէն «մենէ աղէկները», և այս ի վաղուց, քանզի ի հին վիպասանս Հայոց կը գտնենք այսպէս գործածուած.—«Զսմանէ», այսինքն զԱրտաւազդայ (որդւոյ Արտաշիսի), ասէ Խորենացին, «երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս, եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցհայրն. Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ։ Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս, եթէ Դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին *քաջք*, տարցին յազատ ի վեր ի Մասիս. անդ կացցես, և զլոյս մի տեսցես» (Խոր. Բ. ԿԱ.)։ Քաջ բառը նաև հասարակ լեզուի մէջ սովոր ենք գործածել փոխանակ բարւոյ կամ ազնուի։ «Քաջ արանց» ասել սովորութիւն է առ մեզ թագաւորաց, իբրև լաւագոյն և պատուականագոյն մարդկան կամ դիւցազանց։ Նոյնպէս ասի «քաջ գիտել» իբրև բարւոք գիտել։ Նաև քաջութիւն բառը շատ անգամ կառնուի առ մեզ փոխանակ լաւութեան կամ առաքինութեան։

Ց. Բայց զանդիկ կամ զրադաշտական կրօնից բուն վարդապետութիւնն առին Հայք Մարաց և Պարսից ժամանակ, ինչպէս յայտնի է սա կրօնական բառերէն—*Արամազդ, Հրեշտակ, դեւ, դժոխք*, որ արիական լեզուէն տառադարձութեամբ առնուած են։ Թէ Հայք Պարսից ժամանակ զանդիկ կրօնքն ունէին՝ յայտնի է նաև Պերսեպոլիսի սեպագիր արձանագրութիւններէն, որ են Դարեհի Վշտասպեայ և Քսերքսի, և ուր Հայք զանդիկ կրօնք ունեցող ազգաց կարգը կը յիշուին։ Անծանօթ չէր Հայոց վիպասաններուն նաև ոչ միայն Պարսից գիրքը Զենտաւեստ, այլև Վետան—Հնդկացը, որոյ վէպե-

ըէն ոմանց պատմական ձև տրուած է ի պատմութեան Խորենա-ցւոյն, որպիսի են Արայի և Տիգրանայ պատերազմներուն պատմու-թիւններն, որպէս յիշեցաք վերագոյն (էջ 51 և 164)։

Գ. Թէ ոգիներու հաւատալ շատ հին էր առ Հայս՝ այսմ երե-ւելի ապացոյց է հմայութիւնն, զորոյ յիշատակութիւնը կը գտնենք ի հնագոյն աւանդութեան Արմենական սօսեաց, և որոյ նուիրական տեղին թուի լեալ Արմաւիր։ Խորենացին կու տայ մեզ այս աւան-դութիւնն ի խօսելն զԱնուշաւանայ, թէ Սօս կը կոչուէր, վասն զի ձօնեալ էր ի սօսիսն Արմաւրի, և կը յաւելու, թէ այս սօսեաց տե-րևներուն այլ և այլ շարժումներէն ըստ շնչելոյ հողմոյն՝ հին Հայք սովոր էին առնել հմայութիւն, այսինքն գուշակութիւն.—«Արայ-եանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմի, թողլով արու զաւակ ամենահարուստ և շատահանճար յիր և ի բան, զԱնուշա-ւանն, որ Սօս անուանէր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ, որ յԱրմաւիր, զորոց զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն ևեթ ուստ շարժումն՝ սովորեցան ի հմայս աշխարհիս Հայկազանց, և այս բազում ժամա-նակս» (Խոր. Ա. Ի.)։

Հոգի կամ ոգի բառն շատ լեզուներու մէջ նոյն է ընդ հողմոյ։ «Ոգւոյ և հողմոյ անուն եբրայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է. նա թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ՝ նոյնպէս գտանի. յորժամ տագնապեալ ոք յումեքէ իցէ՝ ասէ. Ձեռ ոգի կլանել, չետ ոգի առնուլ. և այնու զօդոյս, զոր միշտ ծծեմք՝ յայտ առնէ» (Եզն. Ա. ԻԳ.)։ Օդոյ շարժումն ոգիներու ազդեցութեան ընծայ-ելու օրինակներ ունինք ի պատմութեան ոչ միայն հեթանոս, այլ և աստուածապաշտ համարեալ ազգաց։ Եհօվա մեղմ օդով կը յայտ-նուի Եղիայի, և ի գործս առաքելոց Հոգւոյն սրբոյ գալուստն կը պատմուի լեալ սաստիկ հողմոյ շարժմամբ։ Ուստի բնական էր, ինչ-պէս Պեղասգացւոց Դոդոնայի կաղնւոյն (տես էջ 180)՝ նոյնպէս Հին Հայոց Արմաւրի սօսիներուն տերևոց շարժումն ընծայել ոգի-ներու, իբրև տեսակ մը օդոյ, և առնել գուշակութիւններ։ Հա-ւանականապէս ասոր ծագած է հայերէն *սօսաւիւն* բառը, որ կը նշ-շանակէ տերևներու շշիւն։

Արմաւրի սօսիներուն նուիրուիլ յայտնի է թէ կրօնական արա-րողութիւն էր Հին Հայոց մէջ, բայց թէ ինչ էր նուիրումն՝ այն չէ յայտ։ Արմաւրի սօսիներուն տեսակը կը թուի լինել յատուկ Հայ-աստանի, և թերևս յայն սակս էր նուիրական։ Խորենացին կ'ան-ուանէ այն սօսիներն Արամանեկայ, որով կ'իմանայ թերևս զԱրմե-նակ որդի Հայկայ, ըստ Մար Իբասայ։ Բայց ինչպէս Արմաւիր՝

նոյնպէս Հարկաւ սօսիներն յետոյ էին քան զԱրմենակ ըստ վկայութեան նորին իսկ Խորենացւոյ, քանզի զորդի Արմենակայ զԱրմայիս դնէ Խորենացին շինիչ Արմաւրի (Խոր. Ա. ԺԲ.)։ Թէ ուստի կ'առնու Խորենացին սօսիներուն պատմութիւնը՝ չենք գիտեր. յայտնի է սակայն, թէ *արմննիաքա*, արմենիական կամ հայկական, սխալմամբ կը կարդայ Արամանեկայ։ (Տես և էջ 180)։

10. Արմաւրի պատգամատեղին վաղ ուրեմն կը թուի խափանեալ, քանզի յետ այսր յիշատակութեան Խորենացւոյն ոչ ևս ուրեք կը գտնենք յիշուած ո՛չ սօսիները և ո՛չ զՀմայս։ Բայց Հմայութեան այս տեսակը միայն չէր, զոր կը գործածէին Հայք։ Յովհան Մանդակունի, կամ այլ ոք ի Հայ վարդապետաց ժամանակակից նըմա կամ մօտ ժամանակաւ, որպէս յայտնի է ոճէն, ի ճառին «Վասըն Հմայից դիւթականաց» յետ գանգատելոյ, թէ «մեծ մասն աշխարհիս ընդ յուռթիւք և ընդ Հմայիւք եմուտ . . . , թողին զԱստուած արարիչ, և առ դիւթս և առ յուռութս և առ թովիչս և առ պաՀարանս ընթանան»՝—կը յիշէ Հմայութեան այլևայլ տեսակներ, և ասէ թէ սպասաւորք եկեղեցւոյ և աբեղայք անգամ կը գրէին կախարդանաց գիրեր, զորս պաՀարան կ'անուանէ։ Հմայութեան սովորական տեսակներ էին, ըստ վերոյիշեալ ճառին, թովչութիւն, Հատահարցութիւն, ՀաւաՀմայութիւն, մաղաքախութիւն, քուէհարցութիւն, դիւաՀարցութիւն, որոց նշանակութիւնք բաւական յայտնի են անուններէն։ Յուռթելու եղանակը նկարագրելով ասէ. «Զարադիւթն ի մէջ գետին անցեալ յուռթէ, 'յօրանջէ, ի ձախ դիւթէ և ի յաջ թքթքէ . . . կոչէ զդևսն յաղ, յերկաթ, ի ջուր, ի նարօտս, յիւղս, ի գարի, յուլունս, ի մոմ և ի Հեր գլխոյ»։

Դիւթութիւնն ընդՀանրապէս արուեստ կը Համարուէր, և կային ի պաշտօնէ դիւթք. բայց շատերը նաև անձամբ կ'ուսանէին յուռթել.—«Դիւթս ի տունս ածեն առ ի յուռթել. և ոչ միայն արտաքին դիւթիւքն վարին, այլ և անձամբ ևս յուռութս ուսանին և գրեն պաՀարանս»։

Դիւթք կը Համարուէին նաև գիտակ ապագայից. ուստի ասէ ճառն. «Զառաջիկայ ինչ գիտութիւն դիւթք ոչ երբէք գիտեն։ Այլ ասես. Զոր դիւթքն ասեն՝ այնպէս լինի։ Եթէ երբէք պատաՀէ՝ մի խաբիր, ոչ եթէ ի դիւթէն եղև, այլ եթէ չերթայիր առ դիւթն՝ քեզ ի ժամուն այն այնպէս պատաՀէր։ . . . Եւ բազում անգամ չլինի . . . բայց մարդիկ ի չպատաՀելն չՀային, այլ եթէ զմին պատաՀեալ տեսանիցեն՝ զայն առեալ վերացուցանեն, և ի լսելիս ամենեցունց արկանեն»։

Դիւթք կը կարծուէին նաև բուժիչ ցաւոց։ «Եթէ ասիցես

ասէ ճառն, բժիշկ է (գիւթն)՝ գործ բժշկի այս է, խարել, կտրել և արիւն թափել և դարմանս ըստ ցաւոցն մատուցանել, ոչ թէ յուռութս յուռթել և սատանայական բարբանջս բարբանջել, կամ աղ և աճուխ կամ ասղանի առնուլ կարմիր, և ուլունս յուռթել, և կամ գիր պահարան ընդ անձն արկանել, և կամ զոսկերս ձկանց և սողնոց և գծրարս բժժանաց ի ձեռին և յական և ի պարանոցի կապել: Այլուր ասէ. «Յորժամ մի ի մարմնի խզեսցի, կամ ցաւ ինչ արագ անկանի՝ դիւթս ի տունս ածեն առ ի յուռթել և գրել պահարանս, և ի փոխ ցաւածիցն արկանեն»:

Ուրիշ տեսակ սնապաշտութիւն էր, ըստ վերոյիշեալ ճառին, օրահմայն և լուսնախտիրը, այսինքն ձախող կամ վնասակար համարել այս ինչ կամ այն ինչ օր, զորօրինակ շաբաթը կամ չորեքշաբաթին կամ զաւուրս լուսնոյ.—«Ընդէր, ասէ, յօրահմայս և ի խտիրս անկանիս: Ի՞ւ վնասակար է շաբաթն կամ չորեքշաբաթին, զի ի նոցանէ համարիս ինչ եղծանել խոտոյ, որթոյ և նիւթոց կալոյ, հնձանի և սերմանց . . . ընդէր ունիս զլուսինդ պատճառ եղծանելոյ, զի խտրես գործել յաւուրս նորա»:

Ի ճառին յիշուած է նաև բախտի և ճակատագրի կամ հրամանաց հաւատալու սնապաշտութիւնը: Թէպէտ քրիստոնէական ժամանակի պատմութիւն է այս՝ յայտնի է սակայն, թէ հեթանոսութեան մնացորդ էին այս սնապաշտութիւնք, որոց սկիզբն անծանօթ էր:

11. *Հին Հայք ոչ միայն կը հաւատային ոգիներու և նոցա բարի և չար ազդեցութեան, այլ և կը կարծէին թէ ոգիք կ'երևէին մարդկան, մարդոյ կամ գազանաց և ճիւաղաց կերպարանօք. հայերէն լեզուն այսպիսի առասպելեալ անուններ շատ ունի, ինչպէս յուշկապարիկ կամ պարիկ, պայ, ծովացուլ, առլէզ, նհանգ, շահապետ վայրաց: Եզնիկ յիշելով Հայոց այս սնապաշտ հաւատքը՝ կը ջանայ հերքել.—«Զծովացուլ ի կովէ ելեալ ասեն, և զպայն իմն ի մարդկանէ, և զառլեզն ի շանէ: . . . Ի մարմնաւորէ աներևոյթ ինչ ոչ ելանէ, որպէս ոչ յաներևութէ իմեքէ մարմնաւոր. ոչ երբէք ի մարդկանէ ելեալ (է) պայն՝ եթէ առ երես արարած իցէ, և ոչ ի կովուց ծովացուլն ելեալ՝ եթէ ի ծովակս բնակիցէ, և ոչ ի շանէ ինչ ելեալ, եթէ ընդ աներևոյթ զօրութիւնս ինչ կեցցէ, և յորժամ վիրաւոր ոք անկեալ ի պատերազմի գնիցի՝ թէ լիզիցէ և ողջացուցանիցէ, զոր առալէզն կոչեն: . . . Այլ և վիճեալ ևս ընդդէմ ի բանիցն վերայ. ին ասէ, թէ ի մերում գիւղ ծովացուլ ընդկով գործեաց, և գոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան: Եւ միւսն ասէ. Զպայն իսկ իմ աչօք տեսեալ է: Միթէ և զառալէզն ևս ոք կարիցէ ասել, թէ և զայն ուրուք տեսեալ իցէ. և թէ յա-*

ռաջին ժամանակսն արալէզք լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն. ո՞չ նոյն պատերազմունք են և նոյնպէս վիրաւորք անկանին: Այլ յայնժամ ասեն դիւցազունք էին» (Եզն. Ա. ԻԴ): Բայց այս հաւատքը կար նաև յետ քրիստոնէութեան, թէ արալէզք լիզելով կ'ողջացունէին պատերազմի մէջ անկեալները: Զսպարապետէն Մուշեղէ, զոր Վարազդատ յաջորդ Պապայ սպաննել տուաւ դաւով՝ Բուզանդ կը պատմէ այսպէս. «Իբրև տարան զմարմին սպարապետին Մուշեղի ի տուն իւր՝ ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի: Զի ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ. ոչ նետ մի դիպեցաւ երբէք, և ոչ այլոց զինու խոցեալ է զդա: Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եդին ի տանիսն աշտարակի միոյ, ասէին, թէ վասըն զի այր քաջ էր՝ առլէզք իջանեն և յարուցանեն զդա: Պահապան կային և ակն ունէին յառնել, մինչև նեխեցաւ մարմինն: Ապա իջուցին յաշտարակէ անտի և լացին թաղեցին զնա որպէս օրէն էր»:

Նհանգաց և վիշապաց և շահապետաց վրայ հետևեալ կերպով կը խօսի Եզնիկ. «Եւ ոչ այլ ինչ արարած գոյ որ կարիցէ ի կերպարանս կերպարանս լինել, որպէս զվիշապացն և զնհանգացն համբաւեն: . . . Վիշապք, ասեն, և նհանգք կեղծս ի կեղծս լինին»: Զվիշապաց մանաւանդ, ինչպէս կ'երևի ի բանից Եզնկայ՝ այլևայլ սնապաշտ կարծիս ունէին Հայք, զոր օրինակ թէ արտերէն ցորենը կը կրէին, թէ որսի կ'ելլէին և թէ ունէին տաճարներ, ուր կը պահէին զթագաւորազունս.—«Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց կրեն, և ոչ գրաստ գոյ նոցա եթէ զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն, և ի զուր է Կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս և ոչ Ա՛ռ ա՛ռ:... Եւ ոչ'որս երբէք որպէս մարդկան արարեալ են վիշապք կամ առնիցեն, և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւն, և ոչ զօք ի թագաւորազգեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի, . . . որպէս մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս»: Եզնիկ դիւաց կեղծիք կը համարի այս երևոյթները, որպէս թէ դևք կ'երևէին մարդոց այնպիսի կերպարանօք, որպէս զի զմարդիկ մոլորեցնելով ձգեն ի կռապաշտութիւն.—«Սատանայ, ասէ, մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երևեսցին ոմանց՝ առնուցուն զնոսա ի պաշտօն: Կարծեցուցանէ, թէ և նհանգք ինչ իցեն զետոց և շահապետք վայրաց. և յետ կարծե-

ցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս, կամ ի նշանգի իմն և ի շահապետի։ Զի եթէ էր ինչ նշանգն անձնաւոր՝ ո՛չ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ ոտս անկեալ հեղձուցանէր, այլ կամ կինն կին կայր կամ փոկն փոկ» (Եզն. Ա. ԻԵ.)։

12. Խորենացին կը հաստատէ Եզնկայ խօսքը զԱրտաւազդայ, յիշելով իւրոյ ժամանակին պառաւական զրոյցը, թէ յայրի ուրեք կապուած է Արտաւազդ երկաթի շղթաներով, զորս երկու շունք կը կրծեն, որպէս զի ելլէ Արտաւազդ և վախճան տայ աշխարհի. բայց դարբնաց կռաններու ձայնէն կը զօրանան շղթաները, ուստի և դարբիններէն շատերն, ասէ Խորենացին, հետևելով առասպելին՝ կիրակի օրեր երեք կամ չորս անգամ կը բախեն սալը, որպէս զի զօրանան շղթայք Արտաւազդայ. — «Զրուցեն զսմանէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ (Արտաւազդ) յայրի միում կապեալ երկաթի շղթայիւք, և երկու շունք հանապազ կրծեն զշղթայսն. ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն։ Վասնորոյ և առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց զհետ երթալով առասպելին՝ յաւուր միաշաբաթւոջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ» (Խոր. Բ. ԿԱ.)։

13. Զանդիկ կրօնք և կռապաշտութիւն շատ հակառակ են իրարու, և որովհետև երկոցունց ևս հետքը կը գտնենք ի վաղուց առ Հայս ըստ մեզ կը թուի թէ առաջինն էր բուն և նախագոյն կրօնք արևելեան Հայոց, մինչ կռապաշտութիւնն յարգի էր մանաւանդ յարևմտեան մասին, ի ստորին կոչուած գաւառս։ Այս կարծեաց համաձայն կու գայ սա դէպքը, որ դիցապաշտութեամբ անուանի տեղիք, ինչպէս Աշտիշատն և Երիզայ, յարևմտեան մասին էին. յարևելեան գաւառս երևելի պաշտօնատեղի մը ամենևին յիշուած չէ։

14. Կամելով խօսել համառօտիւ զՀայ լեզուէն՝ աւելորդ կը համարինք յիշել ոմանց պնդելը ժամանակաւ, թէ հայերէնն այն աստուածատուր լեզուն է, զոր խօսեցան նախ անուանեալ նախածնողք մեր յեդեմական դրախտին, և ապա սերունդք նոցա մինչև ի խառնակութիւն լեզուաց, և որ յետոյ Նոյայ միջոցաւ անցաւ ի նախնին մեր Հայկ։ Այսպիսի կարծիս պաշտպանել թերևս ներելի էր դար մի յառաջ, մինչդեռ լեզուաբանական ուսումը դեռ չկար։ Յորմէ հետէ ծնաւ լեզուաբանութիւնն, և ծանօթ լեզուք բաժանուեցան դաս դաս իբրև ուրոյն ընտանիք՝ գիտունք ջանացին որոշել զտեղի հայերէնին ի կարգս լեզուաց։ «Հայք, ասէ Րիգգէր, գիտնագոյնք անգամ ի նոսա, որպէս Ինճիճեան, Զամչեան և Աւգեր, հնա-

ցեալ հմտութեամբ, mit veralteter Gelehrsamkeit, կը ջանան ցուցընել, բայց ի զուր, թէ հայերէնը մարդկային ազգին նախկին լեզուն է։ Հնագոյնք յեւրոպացի քննչաց, յանուանէ Շրէօտէր և Ատելունկ, առ տգիտութեան չկրցան ծանօթ լեզուաց մէջ տեղ մը տալ հայերէնին, ուստի Պալլի կովկասեան ինքնագլուխ լեզու մը համարեցաւ հայերէնը։ Աւելի հնագոյնք, Ագոլութ և Դրոմլէր ազգակից համարեցան հայերէնը խալտերէնի, մինչ ինքեանք այս երկուց լեզուաց ևս անգէտ էին։ Վաղ ուրեմն Ստեփանոս Բիւզանդացի փռիւգերէնի նման կը համարէր այս լեզուն, հաւանականապէս, ասէ Բէդէրման, վասն զի Արարատ ի գիրս Սիբիլլայից սխալմամբ գրուած է ի Փռիւգիա։ Բայց որովհետև փռիւգերէնն այնպէս անծանօթ է ինչպէս նմին համացեղ կարծուած հին թրակերէնն, ընդ որում այլք ազգակից համարեցան հայերէնը՝ հայ լեզուին փռիւգերէնի հետ նմանութիւնն այնչափ անստոյգ է, որչափ կարծիք Ստրաբոնի, որ զՀայս և զԱրիս իսկ ոչ միայն բարուք, սովորութեամբ, մարմնոյ կազմութեամբ, այլ և լեզուաւ կը համարի նմանս ընդ Սեմականաց, Արաբացւոց և Ասորւոց, սա պատճառաւ միայն՝ զի գտանէր զնոսա խառն բնակեալս ի Միջագետս։ Պալլաս հայեցեալ յարգի հայերէնն միայն՝ դրաւ Հայոց լեզուն ի կարգս Դուրանեան լեզուաց, իբրև միջին իմն ի մէջ Թաթար կամ Թուրք բարբառոց և կովկասեան լեզուաց։ Լաքրոզ զհայերէնն համարելով նոյն ընդ հին լեզուին Մարաց՝ աւելի մօտեցաւ ճշմարտին, մանաւանդ զի ըստ Նայմանի մեծագոյն մասն բառից Մարաց, որ գտանին առ Հերոդոտեայ՝ կը մեկնուին հայերէնով։ Զարմանք չէ այսչափ հակառակ կարծիս տեսանել, զհայերէնէն, որ հարևանցի միայն ճանչցուած էր, մանաւանդ այնպիսի ժամանակ, մինչ Քլաբրոդ անգամ ձայներու արտաքին նմանութենէ միայն կը դատէր լեզուաց ազգականութիւնը, զոր գիտել՝ լեզուին բովանդակ քերականական կազմութենէն միայն հնար է։ Բէդէրման եղև առաջին, որ եցոյց հաւաստեաւ զազգականութիւն հայերէնին ընդ հնդեւրոպական լեզուաց։ Հմուտ լեզուաբանն Բոդդ կ՚ընդունի զայս, և Նայման կը համարի իբրև արդէն ապացուցեալ» (Րիդ. Արևմտ. Աս. Մասն Գ. 578)։ Բայց ինչպէս ճանչցան գիտունք թէ հայերէնն տոհմակից է լեզուաց հնդեւրոպական ցեղին։ Սեմական լեզու մը ճանչնալ, որպէս ասէ Րընան՝ դիւրին է քան հնդեւրոպական մը. բայց և այնպէս հնդեւրոպական լեզուք ևս ունին որոշ նշաններ, որ չեն կրնար վրիպել գիտնական մտադիր դիտողութենէ։ Հայերէնի ցեղակցութիւնն ուրիշ հնդեւրոպական լեզուաց, հնագունից և հեռաւո-

ըադունից հետ անգամ, որպիսի են սանսքրիդն, յոյնն և լատին, այնպէս յայտնի և ներքին է, զի նմանութիւնն որ կայ ի մէջ սոցա և հայերէնին՝ չկարէ լինել արդիւնք ոչ պատահման և ոչ փոխառութեան։

15. Հայերէնի այս նմանութիւնը կը տեսնուի հնդեւրոպական լեզուաց երկու գլխաւոր տարրներէն, այսինքն բառերէն և քերականական ձևերէն միանգամայն։ Թողունք բառերու, մանաւանդ թուականաց նմանութիւնը, որ յայտնի և որոշ է աւելի քան որչափ հարկաւոր էր՝ ի ճանաչել հայերէնի ազգականութիւնն ընդ հնդեւրոպական լեզուաց. քերականական ձևերու նմանութիւնը բոլորովին կը լուծէ խնդիրը։ Այսպէս մ, ս, ն, ղ, որ իբրև դիմորոշք մեծ դեր կը խաղան ի հայերէն դերանուանս և ի ձևս բայից՝ նոյն պաշտօններն ունին ի գլխաւորս հնդեւրոպական լեզուաց, որպիսի են սանսքրիդն, զանդիկն, յոյնն և լատինն։ Հայերէն սեռականի և տրականի նշաններն ի և մ (իմ, միում, որում, այդմ) կը գտնենք ի լատիներէնի. երեքին լծորդ ւ, վ, բ, իբրև նշանք հայերէն գործիականի՝ կը յիշեցունեն նոյնպէս լատիներէնի b(us)-ը. ի որ ընդհանուր նշան է մեր երկուց անցելոց, անկատարին և կատարելոյն, և ց՝ մեր ապառնւոյն՝ կը գտնուին, մին ի լատիներէնի (lego, legi), և միւսն՝ ի sy-ն սանսքրիդի (տա սյամի, տա-ցեմ կամ տա-ց)։

Հնդեւրոպական լեզուաց յատուկ նշաններէն, մին ըստ լեզուաբանից, այն է կատարելոյն նախորդ յաւելուածն anguement, ա կամ է, ինչպէս սանսքրիդերէն՝ ա-տամ, ա-տաս, ա-տադ և յունարէն է-գրաֆօն, է-գրափէ՝ կը գտնենք նոյնպէս ի հայերէնի. այսպէս, է-ած, ե-բաց, ե-թող. ունինք օրինակ յոմանս ի զարտուղի բայից, որպիսի են գամ, դնեմ, տամ, որոց խոնարհման ձևն թուի լինել համեմատութեամբ աւելի հին, և որ ունին ի կատարեալն նաև յապառնին յիշեալ նախորդ յաւելուածը ե.— եկի, եկից. եդի, եդից. եառ, այլովքն հանդերձ։ Իբրև յատուկ քերականական ձև հայերէնի կրնանք յիշել յոգնականացուցիչ ք գիրն, յոր կը փոխէ հայերէնն իւր համացեղ լեզուաց մեծ մասին ս-ն։

Քերականական ձևերու նմանութիւնն, զոր ունի հայերէնն ընդ հնդեւրոպական լեզուաց՝ աւելի մանր կրնայ ցուցուիլ համեմատեալ քերականութեան մը մէջ, քան յայսմ համառօտ ծանօթութեան, որոյ նպատակ է միայն երկբայութիւնը բառնալ՝ թէ մեր լեզուն, իւր բնութեան նայելով, չկարէ վերաբերիլ լեզուաց ուրիշ խմբի մը, բայց միայն հնդեւրոպականին։

17. Թէպէտ այսպէս բնութեամբ հնդեւրոպական՝ է սակայն հայերէնն այնպէս ուրոյն և անկախ, իբրև զսանսքրիտն, զյոյնն և

զայլս ի համացեղից իւրոց, մինչեւ յիրաւի է կոչել զնա յատուկ անուամբ երբեւ արմենական ճիւղ ի մէջ Հնդեւրոպական ցեղին։ Չունենալով հնագոյն դարերէ գրաւոր մնացորդներ՝ ենք եւ պիտի մնանք ի հարկէ անգէտ, թէ ինչ փոփոխութիւններէ անցաւ եւ ինչ ազդեցութիւններ կրեց Հայերէնն յընթացս, չէ յայտ, որչափ դարուց, մինչեւ հասաւ յայն աստիճան, յորում կը գտնենք զնա յանգին մնացորդս առաջին Հայ մատենագրութեան անուանեալ ոսկեդէն դարուն, որ է առաջին կէս հինգերորդ դարուն, իսկ եւ իսկ յետ գիւտի Հայերէն դպրութեան։ Նայելով սակայն գիտնական անաչառութեամբ մատենագրական յատկութեան վերոյիշեալ մնացորդաց լեզուին՝ անհնար է չսքանչանալ։ Հարստութիւն, մաքրութիւն եւ ընտրութիւն, բանաստեղծական զարդ, ճաշակ եւ փիլիսոփայութիւն, որ կը տեսնուին այն չքնաղ մնացորդաց լեզուին մէջ՝ կ'ենթադրեն ազգային քաղաքական եւ մտաւոր բարձր վիճակ մը, որչափ կրնայ մտածուիլ յայնպիսում հնութեան ժամանակի։

Հինգերորդ դարուն առաջին կիսուն Հայերէն մատենագրական լեզուն, զոր բառին անձկագոյն նշանակութեամբ, Թարգմանիչք մեր ոչ թէ հնարեցին, այլ ուսան, եւ որոյ օրինակն ունիմք յեւս հնագոյն հատակոտորս ինչ երգոց վիպասանաց մերոց, որ գէթ իբր երեք դար յառաջ էին քան զԹարգմանիչս մեր, թէեւ Հայու միայն զգալի է այս՝ է սակայն եթէ ոչ հրաշք՝ գէթ հրաշակերտ, եւ միմիայն նշան զոր թողած է Հայ ազգն իւր վաղեմի մեծութեան։ Անհնար էր լեզուին հասանել յայն չափ կատարելութեան՝ առանց մատենագրական մեծ շարժման։ Մատենագրական նշանաւոր շարժում մը դնել Հայոց մէջ յառաջ քան զգիւտ գրոյն, թէպէտ մատենագրական շարժումն լեզուի մը յանգիր ժամանակին չէ անօրինակ ըստ Մաքս Միւլլերի, եթէ դժուարին է՝ եւս աւելի դժուարին է դնել, թէ Հայերէն լեզուն, առանց ամենեւին այնպիսի շարժման, հասաւ յայն աստիճան՝ մինչեւ կարողացնել զԹարգմանիչս մեր թողուլ մեզ այն հրաշալի մատենագրութիւնը։ Իցի՜ւ, բախտը, որ յետ կորուսանելոյ մեր այն լեզուն տուաւ մեզ այն մատենագրութենէն առատ մնացորդներ՝ տայր մեզ յարգել ըստ արժանւոյն այն լեզուն, որոյ ազդեցութեամբ միայն հնար է որ եւ իցէ բարւոքումն յարգի լեզուի մերում։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ։

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Առաջին մասին։

ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . » Ե

ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . » Է

ՄՈՒՏՔ . . . . » 1

ԳԼՈՒԽ Ա. *Ծագումն Հայ ազգին* . . . . » 3

ԳԼՈՒԽ Բ. *Աշխարհագրութիւն Հայաստանի* . . . . . . » 9

ԳԼՈՒԽ Գ. *Պատմութիւն ժամանակակից ազգաց ի նախնական ժամանակի Հայոց.*

Ա. *Ասորեստանեայք* . . . . » 23

Բ. *Մարք և Պարսք.* 49

Գ. *Մակեդոնացիք* . . . . » 74

ԳԼՈՒԽ Դ. *Մար Իբաս կամ Խորենացին* . . . . » 88

ԳԼՈՒԽ Ե. *Քննադատութիւն Մարիբասեան պատմութեան* » 124

ԳԼՈՒԽ Զ. *Արշակունիք ըստ Խորենացւոյն* . . . . . » 203

ԳԼՈՒԽ Է. *Քննադատութիւն պատմութեան Արշակունեաց* » 220

ԳԼՈՒԽ Ը. *Կրօնք և լեզու նախնական ժամանակի Հայոց* » 266

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

	Ռ.	Կ.
32 Հաւատարիմ Սավիտրին, Վայլտների	—	10
33 Լինհարդ և Գերտրուդ, Պեստալոցցի	—	25
34 Յաւելուած ի գիրս պատմութեան Ասողկան	—	20
35 Նուէ փոքրաւորը, Մ. Ռոզենհայնի, թարգմ. Ի. Յ.	—	15
36 Ուռենց Յովսէփ, Ե. Սպիրի, թարգմ. Ի. Յ.	—	14
37 Մեծապատիւ Մուրացկաններ, Յ. Պարոնեանի	—	40
38 Ազգային ջոջեր, Յ. Պարոնեանի	1	—
39 Բը-ա-բա, Է. Օժէշկօյի	—	15
40 Ճնիկ, Կուլիկովայի, թարգմ. օր. Ա. Սահակեան	—	5
41 Ճչեգրինի երեք գրոյցներ	—	10
42 Տարասկոնցի Տարտարէնը Դօդէի, թարգմ. բժ. Թ. Զ.	—	40
43 Օրլէանի կոյսը, Օստրովսկու, թարգմ. Յ. Խ.	—	25
44 Յ. Արարատեանի կեանքը, թարգմ. Պ. Պ.	—	75
45 Գաղափարական քահանայ, Պոտապենկօի, թարգմ. Յ. Ս.	—	75
46 Ընտանիքի յոյսը, Աննենսկայա, թ. օր. Վ. Տ.-Յովսէփեանի	—	10
47 Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի	1	—
48 Քիմա Րօսկօյի, թարգմ. Ա. Մելիք-Ալլահվերդեանի	—	40
49 Ճչեգրինի երէք վէպիկ, թարգմ. Մ. Ղազարեանի	—	15
50 Սասմայ ծռեր, Գարեգին սարկաւագ	—	50
51 Ջաւախքի բուրմունք, Լալայեանցի	—	25
52 Դաստիարակութիւն, թարգմ. Մ. Ղ.	1	—
53 Մրռռան, Ի. Ցմիգա, թարգմ. Ա. Քալանթարի	—	20
54 Խան-Միրան, գրեց Սէյլան	—	20
55 Տարաս-Բուլբա, Ն. Գօգօլի, թարգմ. Մ. Աբեղեանի	—	40
56 Փշրանքներ Գ. սարկ. Յովսէփեանի	—	50
57 Երկու քոյր, Ղ. Աղայեանցի	—	25
58 Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ	—	20
59 Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50
60 Փորձանքների բժշկարան, Բրօքերի, թարգմ. Օհանեանի.	—	20
61 Մակբեթ, Շէկսպիրի, թարգմ. Ս. Մալխասեանցի.	—	50
62 Պաստեօր, Ս. Բալաղեանի և Ա. Քալանթարի	—	20
63 Խօլերա, բժ. Վ. Արծրունու.	—	5
64 Խարազի տղայ, Ս. Քամալեանի	—	40
65 Հանրամատչ. բնախօսութիւն, Վ. Լունկևիչի, թ. Կ. Գիւլն.	1	—
66 Փարաւոնի աղջիկը, Էբէրսի, թարգմ. Գ. Ճահրուգաղեանի	—	80
67 Խուն-խոր, Յ. Ղազարեանցի	—	60
68 Էլգուջա, վէպ, թարգմ. Տ. Փիրումեանի	—	45
69 Չորրորդ մոգ, Վան-Դէյկի	—	5
70 Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50

Հ Չո. 50կ.

Աջուլ
662

71 Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ

72 Ջրոյցներ հողի մասին, Ս. Բալաղեանի . .

73 Աստղաբաշխութիւն Ֆլամմարիոնի, թ. Տ. Յով[illegible] 1 —

74 Մանուկների հոգատարութիւնը, Պօկրօվսկիյ, թ. բժ. Թ. Ջ. — 20

75 Մուկուչի հաւիկը, Պ. Նեգվանովի . . . . — 15

76 Երկու հեքեաթ, Կարմէն Սիլ՛վայի թարգմ. Ստ. Մ. . — 10

77 Կովկասի գերին, Լ. Տոլստոյի, թարգմ. Պ. Պ.. . . . — 20

78 Անճոռնի բադիկը, Անդէրսէնի . . . . — 5

79 Վէպիկներ, Շիրվանզադէի . . . . — 40

80 Դարվինիզմ, Ս. Բալաղեանի . . . . — 40

81 Պետրոս Դուրեան, Արշակ Չոպանեանի . . . . . — 50

82 Շիլիօնի կալանաւորը, Մորից Հարտմանի, թ. Կ. Գիւլնազ. — 60

83 Համլէտ Շէկսպիրի. թ. անգլիեր. Յովհ.-խան Մասեհեանի — 75

84 Քննական պատմ. Հայոց, Ա. Մ. Գարագաշեանի, մասն Ա. 1 —

85 Նոյն, Մասն Բ. . . . . 1 —

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080173

Սփյուռ
662